



ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ ЕВРАЗИЯ
EURASIA INTERNATIONAL UNIVERSITY



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Գիտաժողովի նյութերի ժողովածու

**ПРИОРИТЕТНЫЕ И ПЕРВОСТЕПЕННЫЕ
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Сборник материалов конференции

**URGENT ISSUES AND PRIORITIES OF
SOCIO-ECONOMIC DEVELOPMENT
IN REPUBLIC OF ARMENIA**

Collection of Scientific Articles

Երևան

Ереван 2014 Yerevan

ՀՏԴ 332.1(479.25):06
ԳՄԴ 65.9 (2Հ)
Հ 247

*Հրատարակության է երաշխավորել
Եվրասիա միջազգային համալսարանի
գիտական խորհուրդը:*

Խմբագրական խորհուրդ՝

Աշոտ Մարկոսյան (գլխավոր խմբագիր), տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Սուրեն Օհանյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայկ Սարգսյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հովհաննես Հարությունյան, տնտեսագիտության թեկնածու

Աշոտ Մարդոյան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Լիլյա Ավետիսյան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Գառնիկ Սաֆարյան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Լիլիթ Տոնոյան, իրավաբանական գիտությունների թեկնածու

Աշոտ Ենգոյան, քաղաքական գիտությունների դոկտոր

Աննա Օհանյան, ԱՄՆ Ստոնհիլ համալսարանի փիլիսոփայական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հակոբ Հարությունյան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Արամ Բարլեզիզյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն Վեյլան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հ 247 **Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման
հիմնախնդիրները և առաջնահերթությունները:** Գիտաժողովի նյութերի
ժողովածու/խմբ. խորհուրդ. - Եր.: Եվրասիա միջազգային համալսարան,
Գիրք 4. 2014. - 416 էջ:

Գիտական նյութերի ժողովածուն ներկայացնում է Եվրասիա միջազգային համալսարանում 2014թ. դեկտեմբերի 13-ին կայացած ամենամյա գիտագործնական համաժողովի նյութերը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին և առաջնահերթություններին:

Ժողովածուում ընդգրկված նյութերը կարող են օգտակար լինել գիտական աշխատողների, դասախոսների, ասպիրանտների, ուսանողների, պետական կառավարման ապարատի, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 332.1(479.25):06
ԳՄԴ 65.9 (2Հ)

ISBN 978-9939-866-00-0

© Եվրասիա միջազգային համալսարան, 2014

ՀՏԴ 332.1(479.25):06
ԳՄԴ 65.9 (2Հ)
Հ 247

*Издается по рекомендации ученого совета
Международного университета Евразия*

Редакционная коллегия

Ашот Маркосян (главный редактор), доктор экономических наук, профессор
Сурен Оганян доктор географических наук, профессор
Айк Саркисян доктор экономических наук, профессор
Оганес Арытюнян кандидат экономических наук
Ашот Мардоян кандидат экономических наук, доцент
Лиля Аветисян кандидат экономических наук, доцент
Гарник Сафарян доктор юридических наук, профессор
Лилит Тоноян кандидат юридических наук
Ашот Енгоян доктор политических наук
Анна Оганян доктор философских наук Стонхиллского университета США,
профессор
Акоп Арутюнян кандидат философских наук, доцент
Арам Барлезиян доктор филологических наук, профессор
Карен Велян кандидат филологических наук, доцент

Հ 247

**Приоритетные и первостепенные социально-экономические
проблемы Республики Армения** /материалы научной
конференции/ ред. коллегия – Ер., Международный
университет Евразия, Книга 4. 2014. – 416 стр.

Сборник материалов научной конференции Международного университета Евразия включает материалы ежегодной научной конференции, которая была посвящена приоритетным и первостепенным социально-экономическим проблемам Республики Армения.

Опубликованные материалы могут быть полезны научным работникам, преподавателям, аспирантам, студентам, работникам государственного аппарата управления, а также широкому кругу читателей.

ՀՏԴ 332.1(479.25):06
ԳՄԴ 65.9 (2Հ)

ISBN 978-9939-866-00-0

© Международный университет Евразия, 2014

ՀՏԴ 332.1(479.25):06
ԳՄԴ 65.9 (2Հ)
Հ 247

*Recommended for publication by the Scientific Council
of Eurasia International University*

Editorial Board:

Ashot Markosyan (Chairman), Doctor of Economics, Professor
Suren Ohanyan, Doctor of Geographical Sciences, Professor
Hayk Sargsyan, Doctor of Economics, Professor
Hovanes Harutyunyan, Ph.D. in Economics
Ashot Mardoyan, Ph.D. in Economics, Associate Professor
Lilya Avetisyan, Ph.D. in Economics, Associate Professor
Garnik Safaryan, Doctor of Law, Professor
Lilit Tonoyan, Ph.D. in Law
Ashot Engoyan, Doctor of Political Sciences
Anna Ohanyan, Ph.D. in Political Sciences at Stonehill College, USA, Professor
Hakob Harutyunyan, Ph.D. in Philosophy, Associate Professor
Aram Barlezizyan, Doctor of Philology, Professor
Karen Velyan, Ph.D. in Philology, Associate Professor

Հ 247

Urgent Issues and Priorities of Socio-Economic
Development in RA/ Collection of papers presented
at the conference/editorial board. - Yerevan, Eurasia
international University, Volume 4, 2014. 416 pages.

The articles in this volume are the collection of papers presented at the annual conference at Eurasia International University on December 13, 2014. The conference was dedicated to the issues and priorities of socio-economic development in the Republic of Armenia.

The published papers can be useful to scientists, professors, governmental employees, as well as a wide range of readers.

ՀՏԴ 332.1(479.25):06
ԳՄԴ 65.9 (2Հ)

ISBN 978-9939-866-00-0

© Eurasia International University, 2014

ԱՌԱՋԱԲԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանում 2014 թ. դեկտեմբերի 13-ին տեղի ունեցավ ամենամյա գիտաժողով՝ նվիրված Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին և առաջնահերթություններին: Գիտաժողովն իր բնույթով միջհամալսարանական էր, որի ընթացքում ներկայացվեցին տնտեսական, սոցիալական, քաղաքագիտական, իրավական և կրթական ոլորտների վերաբերյալ հետազոտություններ, որոնք արտացոլում են մեր երկրի անկախության տարիների ձեռքբերումները ու բացթողումները, հետագա զարգացման հնարավորությունները և միտումները:

Գիտաժողովում զեկուցումներով հանդես եկան ինչպես Եվրասիա միջազգային համալսարանի, այնպես էլ այլ բուհերի, կրթական ու գիտական կազմակերպությունների դասախոսներ, գիտական աշխատողներ, ասպիրանտներ, ուսանողներ, տնտեսության տարբեր ոլորտներում աշխատող մասնագետներ:

Գիտաժողովի աշխատանքներն իրականացվեցին երեք բաժանմունքներում՝ տնտեսագիտության, իրավագիտության և օտար լեզուների:

Տնտեսագիտության բաժանմունքում տեղի ունեցավ մտքերի բուռն փոխանակում՝ մարքեթինգի զարգացման փուլերի, Հայաստանում վերազգային կորպորացիաների գործունեության, ՀՀ անշարժ գույքի շուկայի ձևավորման և զարգացման, ապրանքային և սպասարկման նշանների իրավական պահպանության միջազգային կոնվենցիաների ու ՀՀ օրենսդրական դաշտի մասին: Ներկայացվեցին նաև փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում:

Իրավագիտության բաժանմունքում անդրադարձ կատարեցին արդի դարաշրջանի հիմնական իրավական հայեցակարգերին, տեխնաձին քաղաքակրթության պարադոքսալ հետևանքներին, դատախազության լիազորություններին և այլ թեմաներին:

Օտար լեզուների և գրականության բաժանմունքում ներկայացված զեկույցներն առնչվում էին մանկավարժության և բանասիրության հարցերին: Զեկույցները հնչեցին հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Սույն գիտական ժողովածուն ներառում է գիտական նստաշրջանին ներկայացված այն զեկույցները, որոնք առանձնանում են պատշաճ մակարդակով և գիտահետազոտական տեսական և գործնական աշխատանքի խորությամբ:

ԲԱԺԻՆ 1. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Աշոտ Մարկոսյան

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Աննա Մարգարյան

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակից

Բանալի բառեր. Սեփականություն, օբյեկտ, սուբյեկտ, սեփականության իրավունք, պետական գույք, պետական գույքի կառավարում, պետական գույքի մասնավորեցում, պետական գույքի օտարում:

1. Պետական ընկերությունների տեղը շուկայական համակարգում

Ներկայումս «պետություն-շուկա» հարաբերությունների համակարգում շարունակում է բանավեճային մնալ (ինչպես տեսությունում, այնպես էլ գործնական կյանքում) պետության մասնակցության (ազդեցության) ձևերի ու եղանակների, ինչպես նաև տնտեսության առանձին ոլորտներում դրա մեխանիզմների ու աստիճանների հարցը: Այդպիսի ազդեցության միջոցներից է պետական գույքի կառավարման հիմնախնդիրն ընդհանրապես, և առանձին ոլորտներում պետական, պետական մասնակցությամբ և ոչ պետական կազմակերպություններում պետական մասնակցությունն ու դրա սոցիալ-տնտեսական արդյունավետությունը, մասնավորապես: Շատ հաճախ այս հիմնախնդիրների վերաբերյալ գոյություն ունեն ամենատարբեր մոտեցումներ, որոնք իրենց արտահայտությունն են ստանում ցանկացած երկրի կառավարության ծրագրերում և գործողություններում: Այսպես, օրինակ, 2014թ. սեպտեմբերին Ռուսաստանի Դաշնության վարչապետը գլխավոր դատախազությանը հանձնարարական տվեց ստուգելու պետական ընկերությունների (ՊԸ) արդյունավետությունը, իսկ 2014թ. հոկտեմբերի կեսին Դ.Մեդվեդևը կարծիք հայտնեց, որ ՊԸ-ից ընդհանրապես պետք է հրաժարվել: Այդ քաղաքականությանն առնչվող քայլ էր նաև ՌԴ Պետական Դումա ներկայացված օրինագիծը (2014թ. վերջին), որի համաձայն ՊԸ-երը պարտավոր են ամեն տարի հաշվետու լինել ՌԴ Դաշնային Խորհրդին¹:

¹ Данил Шестаков <Взлет и падение госкорпорации. Несостоявшаяся модернизация. <http://liberty.ru/layout/set/paint/Themer/Vrlet-i-fadenie-gosroforouj>- առկա է համացանցում 24.11.2014.

Իսկ ինչու՞ն էր ՊԸ-երի ստեղծման գաղափարը: Բանն այն է, որ յուրաքանչյուր ժամանակահատվածում տնտեսության մեջ կան զարգացման առաջնահերթ ոլորտներ, որոնք այս կամ այն պատճառով դեռևս գրավիչ չեն շուկայի (մասնավոր ներդրողների) համար: Եվ թեև դրանք ունեն ռազմավարական նշանակություն (օրինակ, ատոմային էներգետիկան, ռոռզման համակարգը և այլն), դրանց գործունեությունից հնարավոր չէ կարճ ժամանակահատվածում ստանալ արագ հատույց: Օրինակ, ֆունդամենտալ (հիմնարար) գիտության զարգացումը (կամ նանոտեխնոլոգիան) պահանջում է զգալի ներդրումներ և միջոցներ, սակայն ստացվող արդյունքը կարող է երևան գալ տասնամյակներ հետո կամ էլ ընդհանրապես արդյունք չստացվի: Այսինքն, ՊԸ-երի ստեղծման պատճառները բազմազան են: Մակայն, ի տարբերություն մասնավոր ընկերությունների, ավանդական բյուրոկրատական որոշումները ՊԸ-երի համար անարդյունավետ են: Կառավարման տեսանկյունից և պրակտիկայից հայտնի է, որ մեկ կենտրոնից դուրս եկած կանոնների օգնությամբ հասարակության և նրա առանձին օղակների (կազմակերպությունների) գործունեության կարգավորումը խիստ կոպիտ և անարդյունավետ գործիք է: ՊԸ-երի ստեղծման դեպքում անհրաժեշտաբար փորձ է արվում ստեղծել հիբրիդային կազմակերպական ձև, որն իր մեջ կմիավորի զարգացման պետական երկարատև ռազմավարությունը որոշումների արագ և ազատ ընդունումը, որը բնորոշ է ձեռնարկատիրությանը: Այս դեպքում ՊԸ-երի ղեկավարները որոշում ընդունելիս ազատ կլինեն՝ նրանք այլևս հաշվետու չեն լինի «վերադաս» մարմնին կամ մեկ այլ պետական հսկող մարմնի: Ըստ որում ՊԸ-երի կառավարումը և «վերադասին» հաշվետու լինելը պետք է կրի ժամանակավոր բնույթ, երբ ՊԸ-ն ձեռք է բերում զարգացման կայուն վիճակ, այն կարելի է մասնավորեցնել կամ մասնավորի հետ գնալ համագործակցության որևէ եղանակի:

Մակայն նման մտածողությունն ունի երկու հիմնախնդիր: Առաջինն այն է, որ մենք չգիտես ինչու վստահ ենք ՊԸ-երի ղեկավարների և նրանց կողմից մշակված կամ առաջարկված առաջարկությունների անսխալությանը: Ի վերջո, չէ որ նրանք էլ մարդիկ են և կարող են սխալվել կամ էլ պարզ չէ թե ինչից (կամ ում շահերից) ելնելով են նրանք կայացնում իրենց որոշումները: Միթե նրանք ավելի լավ գիտեն թե երբ և ինչի համար պետք է ծախսվեն պետական բյուջեից հատկացված փողերը, քան թե շուկան: Այստեղ կարևոր է հասկանալ, որ ողջ աշխարհում փորձարարական ուղղությունները ավելի լավ զարգանում են վենչուրային ներդրման օգնությամբ: Խոշոր ներդրումային նախագծերը (կամ ընդհանրապես ցանկացած խոշոր նախագծերը) կարող են ապահովել մասշտաբային իրական օգուտ, բայց և կարող են հաջողություն չունենալ: Երբ հանրությանը ներկայացվում է հաջող ՊԸ-երի օրինակ (ասենք «Մամուլնգի»), դրան պետք է հետևի այս հարցը. իսկ քանի ՊԸ են ձախողվել: Մակայն այս հարցի

կարճ պատասխանը հայտնի է, ոչ մի տեղ, բացի «ասիական վագրերից» այս ռազմավարությունը չի հանգեցրել տնտեսական աճի, իսկ Հարավ-արևելյան Ասիայում, հնարավոր է ՊԸ-երի հաջողությունները պայմանավորված են ավելի շատ ազգային առանձնահատկություններով, քան այլ պատճառներով, որի մասին շատ է գրվել:

Երկրորդ հիմնախնդրի լուծումն անհամեմատ ավելի դժվար է: ՊԸ-երի ստեղծման ժամանակ լռելյայն ենթադրվում է, որ նրանց գործունեությունը, թեև հասարակության համար թափանցիկ չէ, սակայն լավ էլ թափանցիկ է այն անձանց համար, որոնք որոշումներ են ընդունում (խոսքը պետական կառավարման տարրեր մակարդակների մասին է, ընդհուպ մինչև երկրի ղեկավարը): Սակայն աշխարհի գրեթե բոլոր երկրների փորձը վկայում է, որ կարճ ժամանակահատվածում ՊԸ-երի գործունեությունը «դուրս է մնում հսկողությունից»: Իսկ ՊԸ-երի գործունեության արդյունավետությունը չափելու կամ ստուգելու կոչերը և առաջադրանքները երևան են գալիս այն բանից հետո, երբ ՊԸ գործունեությունը դառնում է «անթափանց» բոլորի համար (այդ թվում նաև «ամենավերևի» որոշում կայացնողի համար նույնպես): Իսկ ՊԸ-երի գործունեության արդյունավետության հաշվարկման առանձին փորձերը խոսում են միանշանակորեն ոչ ՊԸ-երի օգտին:

Ինչպե՞ս վարվել ՊԸ-երի հետ այժմ: Սկզբի համար կարելի է մասնավորեցնել: Դժբախտաբար այդ ռազմավարությունը աշխատում է ոչ բոլոր ոլորտներում: Օրինակ, մասնավորեցնել ատոմային էներգետիկական հեշտ չի լինի, եթե դա ընդհանրապես խելամիտ է: Բացի այդ, դա ակնհայտորեն կնշանակի որ պետական կառավարման մարմինների ռազմավարությունը վերջին տարիներին ճիշտ չի եղել: Վերջապես առանց ձեռնարկության գործունեության արդյունավետությունը չափելու դրանց դիմաց դժվար կլինի ստանալ համապատասխան գին, որի վերաբերյալ պետք է կողմնորոշվեն դրա գնորդները:

Ասվածից հետևում է, որ ՊԸ-երի արդյունավետությունը պետք է չափել և մշակել միջոցառումների համակարգ այդ մակարդակը բարձրացնելու համար: ՊԸ-երի գործունեության բարելավման ուղիներից մեկը կարող է լինել անկախ կառավարիչներին դրանց ղեկավարներ նշանակելը: Սա անկասկած լավ գաղափար է, որը անպայման առնչվելու է բազմաթիվ ինստիտուցիոնալ արգելքների հետ՝ ճնշում է լինելու նրանց աշխատավարձերի և պարգևավճարների չափերի մեծության հաշվով, և, բացի այդ, դրանց կառավարման գործընթացը դժվար կլինի դարձնել թափանցիկ: Առավել ևս, որ դրական արդյունքը չի երաշխավորվում: Իրավիճակը չի փոխվում նաև այն դեպքերում, երբ ՊԸ-երի կառավարման մարմիններում ընդգրկված են լինում պետական կառավարման տարրեր մարմինների ներկայացուցիչներ: ՊԸ-երի պետությունը հաշվետվողականությունը կարելի է բարելավել նաև վարչական եղանակով:


Բազմաթիվ մասնագետներ հակված են այն կարծիքին, որ անհրաժեշտ է մեծացնել ՊԸ-երի դերը՝ վերացնելով դրանց գործունեության բացասական հետևանքները: Այդպիսի փաստարկ է, օրինակ, ճգնաժամը, որի դեպքում պետությունը պետք է մեծացնի իր ազդեցությունը շուկայի վրա, նպատակ ունենալով կայացնելու իրավիճակը և դրանով իսկ նվազեցնելու տնտեսության բացասական զարգացումները: Լինելով և ունենալով բավականին ընդհանուր բնույթ, այս փաստարկը միայն սահմանափակ չափով է կիրառելի այնպիսի երկրներում, որոնք ունեն խոշոր պետական հատված և հակված են սոցիալ-տնտեսական բարեփոխումների օգնությամբ կառուցել սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսություն: Սակայն այն երկրները, որոնք դեռևս 1980-ական թվականների սկզբից սկսած ձգտում էին մշակութային ինքնատիպության և տնտեսական կառավարման արևմտյան մեթոդներից հրաժարման (խոսքն ամենից առաջ, աֆրիկական և Միջին ու Մերձավոր Արևելքի երկրների մասին է), այսօր «խրված են» քաղաքացիական պատերազմի և սահմանային հակասությունների մեջ: Այդ երկրները պառակտված են մի քանի խմբավորումների (կլանների) մեջ և նրանց միջև ընթացող ընդհարումները հանգեցրել են տնտեսական աճի նվազեցման և բնակչության կենսամակարդակի էական անկման:

Տարածված է նաև այն կարծիքը, ըստ որի, հատկապես զարգացած երկրների ինտեգրումը համաշխարհային շուկային հանգեցնում է այդ երկրներում կյանքի ցածր ստանդարտների, աշխատանքի պաշտպանության միջոցների խնայման և սոցիալական թույլ պաշտպանության: Ուստի նման երևույթները կանխելու համար անհրաժեշտ է թույլ չտալ շուկայական տնտեսության «ծավալումը» և դրա միջուկը հանդիսացող կառավարման կորպորատիվ համակարգը: Դա նաև նշանակում է, որ համաշխարհային շուկան երկրների ազգային տնտեսություններից «պահանջում» է նվազեցնել ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման ծախսերը, իսկ բնակչության ձայների մեծ մասը ստացած երկրների կառավարությունները ապահովում են բնակչության սոցիալական պաշտպանվածությունը և կենսամակարդակի բարձրացումը:

Ակնհայտ է նաև, որ քանի դեռ ՊԸ-երը դեռևս շարունակում են գործել նախկին ձևերով և հասարակությունը տեղյակ չէ, թե դրանք ինչպիսի արդյունավետությամբ են աշխատում, ինչպիսին են դրանց գործունեության արդյունքները, ու՛մ են դրանք հաշվետու և ինչպիսի պատասխանատվություն են կրում, անհրաժեշտ է մշակել ՊԸ-երի համակարգի բարեփոխումների ռազմավարություն, որի առանցքը պետք է լինի դրանց գործունեության նկատմամբ ՊԸ-երի պատասխանատվության սահմանումն է:

2. Սեփականության հարաբերությունների շրջանակը

Ավելի մանրամասն քննարկենք սեփականության (սեփականատիրության) հարաբերությունները, որոնք ծագում են «սեփականության սուբյեկտ-սեփականության օբյեկտ» և «սեփականության սուբյեկտ-սեփականության սուբյեկտ» համակարգի շրջանակներում (զծապատկեր 1):



Գծապատկեր 1. Սեփականության սուբյեկտ-օբյեկտային և սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունների ընդհանուր սխեման²

Սեփականության սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների նկատմամբ ուշադրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ սեփականատիրական հարաբերություններում առանց սուբյեկտների հստակ կոնկրետացման և անձնավորման չի կարող կազմակերպվել տնտեսակարգի բնականոն աշխատանքը:

Այն դեպքում, երբ ձևականորեն հայտարարված իրավաբանական սեփականատերը չի ճանաչվում լիարժեք տնտեսվարող սուբյեկտ, սեփականության հարաբերություններում տեղի է ունենում միջամտություն, սեփականատիրական իրավունքների բռնազավթում՝ իշխող սուբյեկտների, քաղաքական կա-

² Управление Государственной собственностью: Учебник / Под ред. д.э.н., профессора В.И.Кошкина, к.э.н., доцента Б.М.Шупыро.- М.:ИНФРА-М, 1997, с. 10.

ռուցվածքների կողմից, ի դեմս նրանց կողմից նշանակված կազմակերպությունների տնօրենների: Այդ պատճառով էլ ցանկացած երկրի տնտեսության ռացիոնալ կառավարման հիմնական նախադրյալը և նախապայմանը սեփականության օբյեկտների և սուբյեկտների հստակ առանձնացումը և սահմանումն է, ինչպես նաև օրենսդրորեն սահմանված սեփականության իրավունք, կարգ, նորմ հասկացությունների ամրագրումն է, որպես նրանց միջև հարաբերությունների ձևավորման հիմք:

«Սեփականության սուբյեկտ-օբյեկտ» հարաբերությունները

Սեփականության ցանկացած հարաբերություններում միշտ էլ հանդես են գալիս ամենատարբեր, ոչ համարժեք օբյեկտներ: Մակայն դրանց շարքում կան առանցքային օբյեկտներ: Օրինակ, մարքսիստական տնտեսագիտության մեջ սեփականության այդպիսի օբյեկտներն արտադրության միջոցներն են: Մակայն դրանից չի հետևում, որ պարզունակ ձևով պատկերացնելով մարքսիստական այս դրույթը կարելի է ենթադրել, որ սեփականության հարաբերությունների համակարգում որոշիչ օբյեկտը, ոչ միայն եղել են, այլև կան, և կարևորը կլինեն արտադրության նյութական (առարկայական) միջոցները: Արտադրության նյութական (առարկայական) միջոցների դերի նվազեցման մասին են խոսում ինչպես նորագույն տնտեսագիտության տեսության մեջ, այնպես էլ գործնական կյանքում: Խոսքը ավելի շատ վերաբերում է արտադրության այնպիսի միջոցներին, ինչպիսիք են ձեռնարկատիրության կազմակերպումը, տեղեկատվությունը, կառավարումը, ապրանքային և սպասարկման նշանները, ոչ նյութական ակտիվները և այլն: Այսպես, “Coca-Cola” ընկերության ակտիվները ներկայումս գնահատվում են 120 մլրդ դոլար, որից նյութա-իրային (արտադրության առարկայական միջոցները) արժեքների մեծությունը (շենքեր և շինություններ, հոսքագծեր, փոխադրող միջոցները) կազմում են ընդամենը 10 մլրդ դոլար, մնացածը հայտնի ընկերության ապրանքային նշանի արժեքի մեծությունն է:

Խոսելով սեփականության օբյեկտների և սուբյեկտների միջև կապերի մասին անհրաժեշտ է տարբերել տիրապետման, օգտագործման և տնօրինման հասկացությունները, որոնք սեփականատիրական հարաբերությունների առանցքային կամ հենասյունային բառերերն են և որոնք միաժամանակ և՛ իրավաբանական, և՛ տնտեսագիտական կատեգորիաներ են: Բանն այն է, որ եթե տարբերություն չի դրվում սեփականատեր-տեր, սեփականատեր-օգտագործող և սեփականատեր-կարգադրիչ հասկացությունների միջև, հատկապես այն դեպքում, երբ դա նույն անձը չէ, շատ դժվար կլինի հասկանալ սեփականության հարաբերությունների էությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի հոդված 163-ի համաձայն, «Սեփականության իրավունքը սուբյեկտի օրենքով և այլ իրա-

վական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը»:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, գնաճի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրն որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է³:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մեկ այլ հոդվածով (166) սահմանված են սեփականության իրավունքի սուբյեկտները, «1, Գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո: 2, Գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով: 3, Օրենքներով սահմանվում են գույքի այն տեսակները, որոնք կարող են գտնվել միայն պետության կամ համայնքների սեփականության ներքո: 4, Բոլոր սեփականատերերի իրավունքները պաշտպանվում են հավասարապես⁴»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 168-ով սահմանված է «Պետական գույքի իրավունքը», ըստ որի, «1, Հայաստանի Հանրապետությունը սեփականության իրավունքով պատկանող գույքը պետական սեփականություն է: 2, Քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողը և բնական այլ պաշարները պետական սեփականություն են: 3, Պետական բյուջեի միջոցները Հայաստանի Հանրապետության սեփականություն են: 4, Հայաստանի Հանրապետության անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են սույն օրենսգրքի 129 հոդվածում նշված մարմինները և անձինք⁵»:

Սահմանված է նաև ՀՀ պարտավորությունների համար պատասխանատվությունը (հոդված 130), ըստ որի ՀՀ-ը իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով,

³ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրք, Եր., «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, 2012, էջ 72:

⁴ Նույն տեղը, էջ 73:

⁵ Նույն տեղը:

իսկ պետության սեփականության ներքո գտնվող հողի և այլ բնական պաշարների վրա բռնագանձում տարածել թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում⁶:

Պետական գույքի սուբյեկտների դաշտում կարևորվում են պետական մարմինները, որոնք ՀՀ անունից իրենց գործողություններով կարող են գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել, ինչպես նաև դատարանում հանդես գալ իրենց իրավասության շրջանակներում: Բացի այդ օրենքներով, ՀՀ Նախագահի հրամանագրերով, ՀՀ կառավարության որոշումներով և համայնքների իրավական ակտերով նախատեսված դեպքերում ու կարգով, նրանց հատուկ հանձնարարությամբ ու նրանց անունից կարող են հանդես գալ իրավաբանական անձինք և քաղաքացիները⁷:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 171-ի համաձայն պետությունը կարող է իր սեփականության ներքո գտնվող գույքը հանձնել քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությանը՝ պետական գույքի մասնավորեցման (ապապետականացման) մասին օրենքներով սահմանված կարգով⁸: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 279-ի համաձայն, «Պետական սեփականությանը պատկանող գույքն օտարվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց՝ մասնավորեցման (ապապետականացման) մասին օրենքներով սահմանված կարգով»⁹:

Սեփականատերերի, այսինքն «սեփականության սուբյեկտ-սեփականության սուբյեկտ» միջև ծագող հարաբերությունները կարելի է բաժանել երկու խմբի:

Առաջին խումբ հարաբերությունները ծագում են այնպիսի պայմաններում, երբ հարկ է լինում բաժանել արդեն նախկինում ստեղծված սեփականությունը՝ իրականացնելով սեփականության ժամանակավոր կամ վերջնական բաժանում: Ըստ նշանակության սեփականության օբյեկտի օգտագործումը հաճախ ուղեկցվում է սեփականատիրական գործառույթների բաշխման և վերաբաշխման համաձայնագրի հիման վրա ծագող երկու կամ ավելի սուբյեկտների միջև հարաբերություններով: Դա սովորաբար տեղի է ունենում, երբ սեփականության միևնույն օբյեկտն որոշակի հիմունքներով (ընտանեկան կամ կորպորատիվ այլ սեփականություն) պատկանում է մի քանի սուբյեկտների: Նման պայմաններում պարբերաբար հարկ է լինում որոշել, թե ինչը, որ մասն ում է պատկանում: Առաջանում է օբյեկտիվ անհրաժեշտություն փոխելու անցյալում ձևավորված

⁶ Նույն տեղը, էջ 63:

⁷ Նույն տեղը:

⁸ Նույն տեղը, էջ 74:

⁹ Նույն տեղը, էջ 118:

հարաբերությունները՝ վերաբաժանելով, խլելով, ժառանգություն ստանալով, վարձակալության կամ պարտք վերցնելով:

Սեփականության մեկ օբյեկտին տարբեր սուբյեկտների կամ դրան հավակնողների միջև հարաբերությունները հանգում են բաժանելու սեփականության գործառույթները, իրավունքը, յուրաքանչյուր սեփականատիրոջ պարտավորությունները սահմանելու օբյեկտի համատեղ օգտագործման պայմանները, նրանցից յուրաքանչյուրին պատկանող բաժնային սեփականության չափերը:

Սեփականության սուբյեկտների միջև հարաբերությունների երկրորդ խումբն արտահայտում է սեփականատերերի միջև եղած այն հարաբերությունները, որոնք առաջանում են նրանց կողմից նոր ստեղծված արժեքների համատեղ ձևավորմամբ, որոնք դառնում են սեփականության նոր օբյեկտ: Երկրորդ խումբ հարաբերությունների տիպիկ ձև է նախկինում գոյություն չունեցող ապրանքների և ծառայությունների համատեղ արտադրությունը և բաշխումը:

Այդ դեպքում սեփականության նոր օբյեկտի ստեղծման բոլոր մասնակիցները հիմքեր ունեն հավակնելու լինել նոր ստեղծված սեփականության իրավունքի սեփականատերեր՝ դրանց նկատմամբ ունենալով տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավասություններ: Այն չափով, որ նոր արդյունքի ստեղծումն ուղեկցվում է եկամտի և շահույթի ծագմամբ՝ դրա վաճառքի հետևանքով արդյունքի ստեղծման մասնակիցներն իրավունք ունեն իրենց դիտարկել որպես եկամտի և շահույթի պոտենցիալ սեփականատերեր և մասնակցել դրա բաշխմանը: Դրանով իսկ, ըստ էության, տեղի է ունենում սեփականության նոր օբյեկտի ձևավորումը և արժեքավորումը, որը հետագա հարաբերությունների համակարգում հանդես է գալիս, որպես սեփականության առանձին օբյեկտ, դրա շուրջ կազմավորվող և զարգացող հարաբերություններով: Սեփականության իրավունքի հանրայնացման աստիճանի ավելացմանը զուգահեռ ավելանում են սեփականության իրավունքի մասնակիցների (սուբյեկտների) թվաքանակը, դրանով իսկ այդ հարաբերություններում ընդգրկված ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց մասնակցությունն են բերում տվյալ կազմակերպության (ձեռնարկության) կառավարմանը և դրանով իսկ իրենց լուման և մասնակցությունը բերելով ազգային հարստության ձևավորման և բաշխման գործընթացին: Ասվածը նկատվում է ոչ միայն առանձին երկրների ազգային տնտեսությունների, այլ նաև համաշխարհային տնտեսության մասշտաբներով, ինչի հետևանքով ցանկացած երկրի քաղաքացի, ով առնչվում է հատկապես վերազգային կորպորացիաների գործունեությանը և որոշակի փայամասնակցություն ունի դրանց սեփականությանը, իր որոշումներով ազդում է այդ սեփականության կառավարմանը վերաբերող հարցերի վրա: Սեփականության իրավունքի ինչպես օբյեկտների, այնպես էլ սուբյեկտների միջազգայնացումը առաջ է բերում դրանց միջև հարաբերությունների նոր մա-

կարդակ, ինչն էլ որ պահանջում է կարգավորման նոր մոտեցումներ և մեխանիզմներ:

3. Պետական գույքի կառավարման օբյեկտները և սուբյեկտները

Անցումային տնտեսությամբ երկրների սոցիալ-տնտեսական զարգացումը ընթանում է ինչպես վերելքներով, այնպես էլ վայրէջքներով և նրանց մեծ մասը հաղթահարելով դժվարությունները, կարողացել է սոցիալ-տնտեսական վերափոխումների միջոցով հասնել բնակչության որոշակի կենսամակարդակի:

Ներկայումս, գրեթե առանց բացառության, աշխարհի բոլոր երկրներում պետական գույքի կառավարումը դարձել է տնտեսության պետական կարգավորման հիմնական ուղղություններից մեկը: Պետական գույքի կառավարման առաջնահերթ խնդիրներից են պետական գույքի կառուցվածքի և կազմի հստակեցումը, հաշվառումը, պետական սեփականության օգտագործման նպատակների և խնդիրների, գործունեության սկզբունքների սահմանումը:

Այդ ամենով հանդերձ յուրաքանչյուր երկրում, ելնելով նրա ամենից առաջ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկություններից և հասարակության գիտակցության մեջ սեփականության ձևավորված պատկերացումներից առանձնացվում է պետական գույքի կառավարման օբյեկտ և սուբյեկտը: Ընդհանուր սահմանմամբ պետական գույքի կառավարման օբյեկտը պետական սեփականությունն է իր տարատեսակներով և դրսևորման ձևերով, իսկ սուբյեկտը՝ բոլոր այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք առնչություն ունեն պետական գույքի և նրա առանձին մասերի տիրապետման, տնօրինման և օգտագործման հետ, մեզանում՝ ՀՀ նախագահը և նախագահի աշխատակազմը, Ազգային ժողովը և նրա աշխատակազմը, ՀՀ վարչապետը և կառավարությունը իր ստորաբաժանումներով, դատարանները, մարզպետարանները, տեղականա ինքնակառավարման մարմինները, ՀՀ Վերահսկիչ պալատը, ՀՀ դատախազությունը և այլն:

3.1 Պետական գույքի կառավարման օբյեկտը

Շուկայական տնտեսական պայմաններում պետական գույքի կառավարումը կարևոր և բարդ խնդիր է, որն այսօր հնարավոր չէ լուծել տնտեսության կառավարման ընդհանուր հայեցակարգից և համայնապատկերից դուրս: Մեր երկրի տնտեսությունը գնալով ձեռք է բերում շուկայական տնտեսության հիմնական բնութագրերը՝ անկախ դրանում սեփականության ձևերի հարաբերակցությունից: Նախ, տարեց –տարի տնտեսությունում կրճատվում է պետական ընկերությունների կազմակերպությունների թիվը, երկրորդ, պետական սեփականություն հանդիսացող ընկերությունները տարբերվում են պլանային տնտեսության պայմաններում գործող պետական ձեռնարկություններից, քանի

որ դրանք պետք է ոչ միայն սեփական ուժերով կազմակերպեն արտադրության ամբողջ գործընթացը, այլ նաև կարողանան մրցակցել պատրաստի արտադրանքի և ծառայությունների իրացման շուկաներում:

Պետական ընկերությունների (ձեռնարկությունների) գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է, որ պետությունը՝ ի դեմս լիազորված պետական կառավարման մարմնի կամ մարմինների, պետական սեփականության նկատմամբ կարողանա իրականացնել կառավարման իր գործառույթները:

Երկրորդ, դրան հասնելու համար անհրաժեշտ է կարգավորել օրենսդրական դաշտը:

Պետական սեփականության սոցիալ-տնտեսական բովանդակության տեսական իմաստավորումը, այդ սեփականության որպես պետական կարգավորման ինստիտուտի, ձևավորման և զարգացման սկզբունքները, պետական և ոչ պետական հատվածների գործունեության սկզբունքների մշակումը և պայմանների ստեղծումը, նրանց փոխադարձ կապերը, ժամանակակից տնտեսագիտության կարևորագույն հիմնախնդիրներից են:

Ինչպես մեթոդաբանական, այնպես էլ գիտա-գործնական իմաստով դեռևս բավականին ուսումնասիրված չեն տոտալիտարիզմի փլուզման պայմաններում հետխորհրդային երկրներում գույքային հարաբերությունների վերափոխումների արդյունքում կատարվող պետական սեփականության էական փոփոխությունների ըմբռնման, ինչպես նաև նոր մոտեցումների մշակման և իրացման հետ կապված շատ հարցեր, որոնք կապահովեն անցումային տնտեսություններում պետական հատվածի ձևավորումը և գործունեության կազմակերպումը: Խոսքը, նախ և առաջ, վերաբերում է պետական սեփականության վերափոխումների ընդհանուր հայեցակարգային հիմքերի ճշգրտմանն ու հետագա զարգացմանը՝ հաշվի առնելով սեփականության ապապետականացման արդյունքները բարեփոխումների տարիներին, այլ երկրներում պետական հատվածի զարգացման ժամանակակից միտումների ընդհանրացումները շուկայական սկզբունքներին համապատասխան ինստիտուցիոնալ հենքի և պետական հատվածի վերակառուցման մեխանիզմների ստեղծումը, երկարաժամկետ հեռանկարային զարգացման ռազմավարության մշակումը:

Տնտեսությունում կատարվող գործընթացների կարգավորման նպատակով, հաշվի առնելով սեփականության իրավունքները պետությունը ստեղծում է նաև սեփական տնտեսավարման համակարգը՝ տնտեսության պետական հատվածը, որի շրջանակներում էլ գործում է պետական սեփականությունը: Այդ պատճառով ներկայումս սեփականության հարաբերությունների բարեփոխումը պետք էնթադրի պետական հատվածի համապատասխան վերակառուցում նրա օպտիմալացման նպատակով, ինչը պահանջում է պետական սեփականության

ձևերի ողջ բազմազանության՝ պետական, պետական մասնակցությամբ և ոչ պետական ընկերությունների, կազմակերպությունների և այլ միավորումների կառավարման համակարգվածություն:

Շուկայական տնտեսությունում պետական հատվածի վերափոխումները ինքնանպատակ չեն, այլ ծառայում են որպես սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և բնակչության կենսամակարդակի բարձրացման առավել արդյունավետ միջոց: Այս տեսանկյունից կարևորվում է տնտեսության պետական հատվածի և նրա բաղկացուցիչ՝ վերափոխումների գործընթացում գտնվող պետական սեփականության բովանդակության բացահայտումը:

Պետական սեփականության գործունեության խնդիրների դիտարկման կարևորագույն տարրը սեփականության օբյեկտների հիմնական տեսակների ճշգրտված դասակարգումն է: Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել ազգային հարստության մաս կազմող պետական սեփականությունը (այդ թվում՝ տնտեսական շրջանառության մեջ գտնվողը) և այն դասակարգել պետական հատվածի կառուցվածքում հետևյալ կերպ՝ հող, բնական պաշարներ, գույք, սեփականության օբյեկտների նկատմամբ գույքային և ոչ գույքային իրավունքներ, Կենտրոնական բանկի դրամական և նյութական միջոցներ, պետական բյուջե, տեղեկատվական ռեսուրսներ, սեփականության այլ օբյեկտներ, պաշարներ և այլն:

Սեփականության օբյեկտների կառուցվածքը, նույնիսկ ընտրված մեթոդների և ձևերի շրջանակներում, զգալի ազդեցություն ունի դրանց գործունեության արդյունքների վրա, իր կնիքն է դնում գույքային հարաբերությունների կառավարման մեխանիզմի վրա:

Սեփականության ձևերի բաղադրիչների տարանջատումն իրականացվում է նաև հաշվի առնելով դրանց գործառնական նշանակության նմանությունը:

Չորը՝ պետական սեփականության կազմում կամ հողային սեփականությունը կարևորվում է հաշվի առնելով նրա նպատակային նշանակությունը երկրի տնտեսության համար:

Բնական պաշարները ընդգրկում են ընդերքի օգտակար հանածոները (այդ թվում ստորերկրյա), անտառային և կենսաբանական պաշարները (բուսական և կենդանական աշխարհը):

Գույքը, որպես պետական սեփականության օբյեկտ, հանդես է գալիս բաժնետոմսերի, տարբեր ընկերությունների կանոնադրական կապիտալներում մասնաբաժինների, ինչպես նաև պետական կազմակերպությունների և հիմնարկների տեսքով: Այս խմբի կազմում են պետական սեփականության օբյեկտների ակտիվները՝ հիմնական ֆոնդերը, շրջանառու միջոցները, ինչպես նաև անշարժ գույքը և այն օբյեկտները, որոնց գործունեությունը կրում է ոչ առևտրային բնույթ (պետական կազմակերպությունների, պետական ոչ առևտ-

բային կազմակերպությունների և հիմնադրամների, պետական կառավարման մարմինների և այլ գույքը):

Գույքային և ոչ գույքային իրավունքները տնտեսական գործունեության արդյունքների վրա ազդում են ինչպես քանակական չափանիշներով, այնպես էլ ըստ տեսակների բաշխվածության: Դրամական միջոցները պետության ֆինանսական ռեսուրսներն (պաշարներ) են, որոնք անհրաժեշտ են վերապահված գործառույթների իրականացման համար: Նյութական արտահայտությամբ դրանք պետության հրապարակային դրամական միջոցներն են (ներառյալ՝ սեփական կուտակումները), ինչպես նաև տարբեր մակարդակների բյուջեները (կառավարման պետական կառուցվածքին համապատասխան):

Տեղական ռեսուրսներն, ինչպես և արտադրական պաշարների ցանկացած այլ ձև, ժամանակակից հետարդյունաբերական տնտեսությունում սեփականության օբյեկտ է: Սակայն տեղեկատվությունը, ի տարբերություն արտադրական այլ ռեսուրսների տիրապետման, օգտագործման և տնօրինման օբյեկտ է: Ավելին, տեղեկատվական ռեսուրսները որակապես նոր՝ արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորման հիմք են ստեղծում, որի արդյունքում ծագում է արդյունաբերականին համանման տեղեկատվական տնտեսություն:

Տնտեսության պետական հատվածը կազմված է նաև այնպիսի տարրերից, որոնք միմյանց հետ կապված են ոչ միայն պետական սեփականության հարաբերություններով, այլ նաև կազմակերպական շրջաններով, որտեղ փոխներգործությունն ուղղված է պետական նպատակների իրագործմանը:

Պետության որպես սեփականատիրոջ, և նրա սեփականության օբյեկտների փոխհարաբերությունները շուկայական սուբյեկտների հետ իրենցից ներկայացնում են կապիտալի շրջանառության յուրահատուկ ձև, որը կարող է մշտապես տարբերվել իր սկզբնական ձևից: Դրա համար նպատակահարմար է ստեղծել համապատասխան ինքնուրույն կազմակերպական կառուցվածք, որի դերում, օրինական, կարող է լինել պետական գանձարանը: Այդպիսի հաստատության ստեղծման նպատակահարմարությունը հիմնավորվում է պետական սեփականության օբյեկտների և տնտեսության պետական հատվածի փոխներգործության անհրաժեշտությամբ նույն մասնակիցների հետ մրցակցության պայմաններում:

Պետական սեփականության տարրերի կառուցվածքի անմահասեռությունը պահանջում է դրանց գործունեության տարբեր ձևերի կիրառում: Այս գործընթացներում պետական գանձարանը հանդես է գալիս որպես պետական սեփականության օբյեկտների տնտեսական շրջանառության մեջ փոխանցման գործողություններ իրականացնող կողմ:

Տնտեսության պետական հատվածը՝ պետության կողմից դրված նպատակներին հասնելու համար որոշակի գործառույթներ կատարող փոխկապակցված

տարրերի կառուցվածքային, համակարգված համակցություն է: Պետության շահերի իրացումը դառնում է ժամանակակից շուկայական տնտեսության գործունեության կազմակերպման և կառավարման համակարգի կարևոր և նշանակալից բաղկացուցիչ մասը:

Պետք է նկատի ունենալ, որ շուկայի պայմաններում ձեռնարկատիրական հարաբերությունները իրականացվում են կամավորության հիմունքներով¹⁰: Այդ պատճառով էլ պետական միջամտությունը պետական և մասնավոր հատվածների հարաբերակցությունը շոշափող կազմակերպական կառուցվածքի (կառուցվածքայնության) ձևավորման նպատակով չի կարող դիտարկվել (որակվել) որպես շուկայական համակարգի զարգացման (եվոլյուցիայի) մեջ անկայունության տարր:

3.2. Պետական գույքի կառավարման սուբյեկտները

Պետական գույքի կառավարման սուբյեկտներն են՝ պետական գույքի կառավարման գործընթացի մեջ ընդգրկված բոլոր ֆիզիկական և իրավաբանական մարմինները:

Պետական գույքի կառավարման ոլորտի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ տարբեր երկրների կառավարությունների կողմից իրականացվում և օգտագործվում են տնտեսական քաղաքականության տարբեր գործիքներ և միջոցներ: Նման հանգամանքը պայմանավորված է կոնկրետ երկրում պետական սեփականության ծավալներով և մասշտաբներով, ինչպես նաև այդ գույքի նկատմամբ կառավարության կողմից վարվող քաղաքականությամբ:

ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) համաձայն պետական գույքի կառավարման իրավասությունը վերապահված է կառավարությանը: Պետական գույքի կառավարման սուբյեկտներից կառավարությունն է օժտված բազմաթիվ և բազմաբնույթ իրավասություններով:

«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2014թ. նոյեմբերի 20-ին) հոդված 5-ի համաձայն.

«1. Սույն օրենքի իմաստով պետական գույք է համարվում Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ եւ շարժական գույքը, այդ թվում.

1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող շենք, շինությունները (այդ թվում այլ պետություններում գտնվող) եւ դրանց

¹⁰ Այդ մասին տե՛ս, օրինակ՝ «Կապիտալիզմի բարոյափոխությունը. Ինչի մասին ձեզ չեն ասի ձեր պրոֆեսորները», Թոմ Գ. Պալմերի խմբագրությամբ (թարգմանություն անգլերենից), Եր., Էդիթ Պրինտ, 2012, էջ 50-63:

սպասարկման եւ օգտագործման համար հատկացված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը:

2. Առնտրային կազմակերպություններում պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը (բաժնեմասերը):

3. Սեփականության իրավունքով պետությանը պատկանող մտավոր սեփականության օբյեկտները եւ դրանց նկատմամբ իրավունքները:

4. Պետությանը պատկանող գույքային իրավունքները:»

Վերոնշյալ օրենքի հոդված 1-ի երկրորդ մասով օրենքի գործողությունը չի տարածվում՝

1) պետական սեփականություն հանդիսացող հողամասերի (բացառությամբ շենք, շինություններով զբաղեցրած եւ դրա սպասարկման համար հատկացված հողամասերի), ընդերքի, անտառների, մեկուսի ջրային օբյեկտների եւ պետությանը պատկանող այլ բնական պաշարների, պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գույքի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հիմնադրված կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասնակցությամբ կազմակերպությունների վրա,

2) պաշտպանական, սահմանային, քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաեւ ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի տիրապետմանը եւ օգտագործմանը հանձնված պետական գույքի վրա, որն իր նշանակությամբ նախատեսված է գաղտնի աշխատանքների կատարման համար:

Այսինքն «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքը վերաբերում է միայն պետական գույքի մի մասի կառավարմանը:

«Պետական գույքի կառավարման մասին» օրենքի հոդված 1-ի առաջին մասով սահմանված է պետական գույքի կառավարում հասկացությունը, ըստ որի՝

«Մույն օրենքով կարգավորվում են պետական գույքի նպատակային և ծրագրային կառավարման, այդ թվում հաշվառման, գնահատման, պետության սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների կազմակերպման, պետական գույքի շրջանառության, ինչպես նաեւ գույքի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները»:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքը (ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1997թ. դեկտեմբերի 17-ին) կարգավորում է պետական գույքի, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման՝ սեփականաշնորհման (այսուհետ՝ մասնավորեցում) հարաբերությունները: Ըստ որում նշված օրենքի գործողությունը չի տարած-

վում պետական գույքն այլ պետություններին և միջազգային կազմակերպություններին օտարելուց բխող այն հարաբերությունների վրա, որոնք կապված են Հայաստանի Հանրապետությունում դրանց ներկայացուցչական գործառույթները կատարելու հետ, ինչպես նաև պետական բնակարանային ֆոնդի օտարման հետ կապված հարաբերությունների վրա:

Հողի մասնավորեցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով:

Վերոնշյալ օրենքում կարգավորման օբյեկտների և սուբյեկտների հստակեցման առումով կարևորվում են օրենքում օգտագործվող որոշակի հասկացություններ (հոդված 2), որոնք ունեն հետևյալ իմաստները.

Պետական գույք՝ սեփականության իրավունքով պետությանը պատկանող գույք, այդ թվում՝ ընկերությունների՝ պետությանը պատկանող բաժնետոմսեր, ինչպես նաև գույքի առանձին տարրեր:

Անավարտ շինարարության օբյեկտ՝

ա) սահմանված կարգով հաստատված նախագիծ և հատկացված հողատարածություն ունեցող օբյեկտ, որտեղ շինմոնտաժային աշխատանքները սկսված չեն.

բ) օբյեկտ, որտեղ իրականացվել կամ իրականացվում են շինմոնտաժային աշխատանքներ, և որը սահմանված կարգով գործարկված կամ կոնսերվացված չէ.

գ) սահմանված կարգով կոնսերվացված օբյեկտ:

Պետական մասնակցությամբ ընկերություն՝ ընկերություն, որի բաժնետոմսերի 50 կամ ավելի տոկոսը պետական կամ համայնքի սեփականությունն է:

«Փոքր» օբյեկտ՝ հանրային սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և առևտրի ոլորտներում մասնագիտացված իրավաբանական անձինք կամ դրանց առանձնացված ստորաբաժանումները: «Փոքր» մասնավորեցում է համարվում այն «փոքր» օբյեկտների մասնավորեցումը, որոնց զբաղեցրած ընդհանուր տարածքը գնահատման պահին չի գերազանցում 200 քառակուսի մետրը: «Փոքր» մասնավորեցումն իրականացվում է «փոքր» օբյեկտների աշխատավորական կոլեկտիվի անդամներին դրանք ուղղակի վաճառքի միջոցով՝ օրենքով սահմանված կարգով:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ում տրված է մասնավորեցման հասկացությունը և օբյեկտները: Համաձայն որի մասնավորեցումը պետական գույքի նկատմամբ սեփականության կամ պետությանը պատկանող այլ գույքային իրավունքների փոխանցումն է մասնավորեցման սուբյեկտներին:

Պետական գույքի (բացառությամբ պետական հիմնարկներին ամրացված շարժական գույքի) մասնավորեցման մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Պետական հիմնարկներին ամրացված շարժական գույքի մասնավորեցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Մասնավորեցման օբյեկտ են՝

ա) պետական բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը, ոչ պետական և պետական մասնակցությամբ ընկերություններում պետությանը պատկանող բաժնետոմսերը.

բ) պետության մասնակցությամբ ընկերության լուծարումից հետո պետությանն անցած գույքը.

գ) օգտագործման իրավունքով տրված պետական գույքը, այդ թվում՝ անշարժ գույքը.

դ) բնակելի շենքերում պետական սեփականություն համարվող ընդհանուր օգտագործման տարածք չհամարվող ոչ բնակելի տարածքները.

ե) անավարտ շինարարության օբյեկտները.

զ) պետությանը պատկանող այլ գույքային իրավունքները.

է) բնակելի շենքերում համայնքային սեփականություն համարվող, այդ թվում՝ պետության կողմից համայնքին հայեցողական սեփականության իրավունքով հանձնված ընդհանուր օգտագործման տարածք չհամարվող ոչ բնակելի տարածքները, եթե դրանք՝

-տրամադրված են վարձակալության իրավաբանական կամ ֆիզիկական անձանց,

- տրամադրված են «փոքր» օբյեկտներին՝ վարձակալության կամ մշտական օգտագործման նպատակով:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի հոդված 5-ում տրված են մասնավորեցման սուբյեկտները: Ըստ որի՝

1. Մասնավորեցման սուբյեկտներն են՝ իրավաբանական և ֆիզիկական անձինք, իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև մասնավորեցվող ընկերության կամ «փոքր» օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամները, համայնքները:

2. Օտարերկրյա անձինք Հայաստանի Հանրապետության ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ունեն մասնավորեցմանը մասնակցելու հավասար իրավունքներ:

3. Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունները կարող են մասնակցել պետական գույքի առանձին տարրերի մասնավորեցմանը, եթե դա նախատեսված է այդ գույքի մասնավորեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

4. Ազգայնացված, բռնագրավված կամ այլ ձևով պետականացված ընկերությունների նախկին սեփականատերերը, նրանց ժառանգները կամ իրավա-

հաջորդներն այդ ձեռնարկությունների մասնավորեցմանը մասնակցում են ընդհանուր հիմունքներով:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում կառավարության գործունեության գերակա ուղղություններից մեկը մասնավոր և պետական հատվածների համագործակցության իրագործումն է այն հաշվով, որ երկու կողմերի համար ապահովվի առավելագույն ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական արդյունք:

Պետական սեփականության չափերի, դրա գործառույթների և շուկայական տնտեսության պայմաններում այդ հիմնախնդիրների հարցը, ինչպես նաև պետական և մասնավոր սեփականության լավագույն հարաբերակցության հասնելը տնտեսության առանձին ոլորտներում այդ առանձնահատկությունները հաշվի առնելը և տնտեսական քաղաքականության մեջ նկատի ունենալը շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության կառավարության ամենօրյա գործունեության հիմնական ուղղությունները:

Աշխարհի երկրների մեծ մասի կառավարությունների բացառիկ և լիարժեք պատասխանատվության շրջանակները նեղացվում են և տնտեսական գործունեության բազմաթիվ տեսակներ, որոնք ավանդաբար գտնվում էին պետության հովանու ներքո, փոխանցվում են մասնավոր սեփականատերերին, կամ, ինչն ավելի հաճախ է տեղի ունենում, փոխանցվում են մասնավոր ձեռնարկատիրության սուբյեկտների ժամանակավոր (երկարաժամկետ կամ միջին ժամկետով) տիրապետմանն ու կառավարմանը՝ պետությանը թողնելով կարգավորման և վերահսկողության (շատ դեպքերում՝ բավականաչափ կոշտ) գործառույթները: Նման պրակտիկա կիրառվում է հիմնականում բնական մենաշնորհ ոլորտների՝ գազի, էներգետիկայի, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում, տրանսպորտային, հեռահաղորդակցության և այլ համակարգերում¹¹:

Պետական գույքի մասնավորեցման ժամանակ կառավարությունները կարող են սահմանել մասնավորեցման ծրագրերի իրականացման ինչպես մեկ (կամ սահմանափակ թվով), այնպես էլ բազմաթիվ նպատակներ¹²: Կառավարությունները, սահմանելով բազմաթիվ և միմյանց հետ ոչ միշտ համատեղելի խնդիրներ (ինչպես, օրինակ՝ մասնավորեցման միջոցով միջին խավի ստեղծումը և պետական բյուջեի եկամտային մասի ավելացումը), բնական է, որ մասնավորեցման գործընթացների իրականացումը նույնպես կատարվում են բազմաթիվ գործիքներով, հետևաբար և փոխզիջումները, որոնք տեղի են ունենում

¹¹ Այդ մասին ավելի մանրամասն տեղ Ա.Մարկոսյան, Մ.Մկրտումյան, «Բնական մենաշնորհների պետական կարգավորումը», Եր., «ԱՌՏ», 2001թ.:

¹² ՀՀ-ում, որպես կանոն, պետական գույքի մասնավորեցման ծրագրերում սահմանվում են 5-7 նպատակներ: Տե՛ս մասնավորապես «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թթ. ծրագրի մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2006թ. մայիսի 31-ին:

մասնավորեցման նպատակներին հասնելու համար, սերտորեն կապված են միանման փոխզիջումների հետ, որոնք տեղի են ունենում մասնավորեցման խնդիրների լուծման մակարդակում:

Այսպիսով, պետական գույքի կառավարման սուբյեկտների, հատկապես կառավարության գործունեության հիմնական ուղղություններին են դասվում պետական սեփականության չափերի, դրա գործառույթների և շուկայական տնտեսության պայմաններում դրա հիմնախնդիրների հարցերը, ինչպես նաև պետական և մասնավոր սեփականության լավագույն հարաբերակցությանը հասնելը, տնտեսության առանձին ոլորտներում այդ առանձնահատկությունները նկատի ունենալը և տնտեսական քաղաքականության մեջ դրանք հաշվի առնելը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Անդրադառնալով պետական գույքի կառավարման արդի հիմնախնդիրներին և, մասնավորապես, օբյեկտներին և սուբյեկտներին միանշանակ անհրաժեշտ է փաստել, որ բացառապես դրանց փոխշաղկապված գործունեությամբ է պայմանավորված պետական գույքի կառավարման գործընթացը և դրա արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես անցած տարիների պետական գույքի մասնավորեցման փորձը, այնպես էլ պետական գույքի կառավարման ներկայիս պրակտիկան թույլ է տալիս եզրակացնել, որ պետական գույքի կառավարման սուբյեկտներից հիմնական դերը պատկանում է կառավարությանը, որն այս բնագավառում իրականացնում է բազմաթիվ և բազմաբնույթ գործառույթություններ, և հետևաբար, գլխավորապես նրա իրականացրած միջոցառումներից է կախված պետական գույքի կառավարման արդյունավետությունը և դրա ազդեցությունը տնտեսության վրա:

Պետական գույքի կառավարման օբյեկտների և սուբյեկտների գործառույթությունների ուսումնասիրություններից կարելի է գալ այն եզրահանգմանը, որ պետական գույքի կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է հարաբերությունների հավասարակշռված վիճակ, որն էլ ապահովում է կառավարման որոշակի մակարդակ և արդյունավետություն: Սակայն այն մարտահրավերները, որոնք կանգնած են այդ բնագավառի առջև, պահանջում են կատարելագործել և նոր մոտեցումներ մշակել ոլորտի բարեփոխումների իրականացման համար, ինչը ենթադրում է նոր ինստիտուցիոնալ և տնտեսական նորմերի և գործիքների կիրառում, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման էական բարելավում:

Կարևոր խնդիր է նաև պետական գույքի կառավարման բնագավառում վարչարարության բարելավումը, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների

որակի բարձրացման ճանապարհով, պետական բաժնետոմսերի և անշարժ գույքի հետ կապված գործարքների թափանցիկության ապահովումը, իրականացվող գործարքների նկատմամբ հսկողության և պատասխանատվության բարձրացումը:

4. Պետական գույքի կառավարման արդյունքները ՀՀ-ում

Պետական գույքի կառավարման արդյունքների ստացման տեսանկյունից աղյուսակ 1-ում բերված է ՀՀ միջին և խոշոր ձեռնարկությունների մասնավորեցման քանակական ցուցանիշները 01.01.2015 թվականի դրությամբ: Աղյուսակ 1-ի տվյալներից հետևում է, որ ՀՀ-ում մասնավորեցված 2037 միջին և խոշոր ձեռնարկությունների թվի 68.1%-ը (1388) մասնավորեցվել է հրապարակային սակարկություններով, որից 53.3%-ը (1075)՝ պետական բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ, 8.7%-ը (177)՝ մրցույթով, 3.0%-ը (62)՝ լոտային աճուրդով, 1-ը՝ մասնագիտացված շուկաներում պետական բաժնետոմսերի վաճառքից: Ուղղակի վաճառքով մասնավորեցվել է 649 միջին և խոշոր ձեռնարկություն, որը կազմում է մասնավորեցված միջին և խոշոր ձեռնարկությունների թվի 31.9%-ը: Եթե նկատի ունենանք, որ պետական գույքի վարձակալներն ունեն օրենքով նախատեսված կարգով գույքի ձեռքբերման առաջնահերթ իրավունք, ապա ստացվում է, որ առանց հրապարակային սակարկությունների են մասնավորեցվել 440 միջին և խոշոր ձեռնարկություն, որը կազմում է սեփականաշնորհված միջին և խոշոր ձեռնարկությունների ընդհանուր թվի 21.6%-ը:

Աղյուսակ 2-ում բերված են պետական գույքի օտարումից, մասնավորեցումից, վարձակալությունից և շենքերի ու շինությունների տանիքներին ու ձեռնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարից հավաքագրված գումարների վերաբերյալ տվյալները 2010-2014թ.թ.: Ընդամենը դրամական մուտքերի մեջ 2010-2014թ.թ.-ին գերակշռել են պետական գույքի օտարումից մուտքերը՝ 53.6%-ը: Պետական գույքի մասնավորեցումից ստացված մուտքերը կազմել են 25.1%-ը, գույքի վարձակալությունից մուտքերը՝ 16.9%, մնացած մուտքերը՝ 4,4%:

Հայաստանի Հանրապետությունում միջին և խոշոր ձեռնարկությունների մասնավորեցման արդյունքները, 01.01.2015թ. դրությամբ

N	Ձեռնարկությունների (ընկերությունների) մասնավորեցման ձևը	Մասնաորեցվել է	Այդ թվում՝ ըստ պետական կառավարման մարմինների								
		Ընդամենը	Էկոնոմիկայի Նախարարություն	Գյուղատնտեսության Նախարարություն	Քաղաքաշինության Նախարարություն	Մշակույթի Նախարարություն	Էներգետիկայի և բնական պաշարների Նախարարություն	Տրանսպորտի և կապի Նախարարություն	Առողջապահության նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության	Պետական կառավարման այլ մարմիններ
			Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը
1	Ուիդեոկադավր	649	168	74	44	30	9	31	20	222	51
	Այդ թվում՝ վարձակալին	209	84	29	29	12	6	9	7	11	22
2	Մրցույթ	177	24	27	20	7	10	10	1	68	10
3	Աճուրդ	63	9	13		1		1		37	2
4	Լոտային աճուրդ	62	26	27	6	2		1			
5	Պետական բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն	1085	394	337	186	59	15	46	1	27	20
6	Պետական բաժնետոմսերի վաճառք մասնագիտացված շուկաներում	1	-	-	-	-	-	1	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		2037	621	478	256	99	34	90	22	354	83

Այդ բոլորը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում :

Պետական գույքի օտարումից, մասնավորեցումից, վարձակալությունից, և շենքերի ու շինությունների տանիքների ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարներից հավաքագրված գումարները 2010-2014 թվականներին, հազ. դրամ

Վաճառքի ձևը						Ընդամենը մուտքեր՝
	2010 թվական	2011 թվական	2012 թվական	2013 թվական	2014 թվական	2010-2014թթ
1	2	3	4	5	6	7
Պետական գույքի օտարումից մուտքեր ընդամենը՝ արից	130268,0	265071,4	807437,0	1264788,0	1665604,0	4133168,4
այդ թվում՝ պետական բյուջե	99143,0	234126,8	589899,9	1015141,0	1488783,0	3427093,7
այդ թվում՝ համայնքային բյուջե	31125,0	30944,6	217537,1	249647,0	176821,0	706074,7
Պետական գույքի մասնավորեցումից մուտքեր ընդամենը՝	585724,2	365918,8	353329,0	455943,0	178352,0	1939267,0
այդ թվում՝ պետական բյուջե	433336,3	283076,3	273509,9	340250,0	144150,0	1474322,5
այդ թվում՝ համայնքային բյուջե	152387,9	82842,5	79819,1	115693,0	34202,0	464944,5
3, Պետական գույքի վարձակալությունից մուտքեր, ընդամենը պետական բյուջե	2004966,0	275875,8	241368,4	303440,6	277546,8	1303197,6
Շենքերի և շինությունների տանիքներին ու ծաղմահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարի մուտքեր ընդամենը՝	-	-	-	-	4414,4	4414,4
այդ թվում՝ պետական բյուջե	-	-	-	-	937,8	937,8
այդ թվում՝ ՊՈԱԿ-ներ	-	-	-	-	3476,6	3476,6
Պետական սեփականություն համարվող հողերի կադաստրային արժեքի վճարումից մուտքեր	-	-	-	277666,0	57465,0	335131,0
Ընդամենը՝ այդ թվում	920958,2	906866,0	1402134,4	2301837,6	2183382,2	7715178,4
պետական բյուջեի մուտքեր՝	737445,3	793078,9	1104778,2	1936497,6	1968882,6	6540682,6
համայնքային բյուջեի մուտքեր՝	183512,9	113787,1	297356,2	365340,0	211023,0	1171019,2
ՊՈԱԿ-ներին՝	-	-	-	-	3476,6	3476,6

Աղբյուրը. ՀՀ կառավարության առեթիբ պետական գույքի կառավարման վարչություն:

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННЫМ ИМУЩЕСТВОМ

Ашот Маркосян

*Заместитель начальника Управления по управлению
государственным имуществом при Правительстве РА,
доктор экономических наук, профессор*

Анна Маргарян

*Работник Управления по управлению
государственным имуществом при Правительстве РА*

Ключевые слова: Собственность, объект, субъект, право на собственность, государственная собственность, управление государственной собственностью, приватизация государственной собственности, отчуждение государственной собственности

В статье обсуждены проблемы, касающиеся управлению государственным имуществом, которые в настоящее время имеют как теоретическое, так и практическое важное значение.

Особое внимание было уделено следующим проблемам:

- 1) место государственных компаний на рынке,
- 2) спектр имущественных отношений,
- 3) объекты и субъекты управления государственной собственностью,
- 4) результаты управления государственным имуществом в РА.

В конце приведено краткое изложение результатов исследования.

CONTEMPORARY ISSUES IN THE MANAGEMENT OF STATE PROPERTY

Ashot Markosyan

*Deputy Head of State Property Management Department
by the Government of the Republic of Armenia*

Doctor of economics, professor

Anna Margaryan

*Employee of State Property Management Department
by the Government of the Republic of Armenia*

Key words: Property, object, subject, property right, state property, state property management, privatization of state property, state property expropriation

In the article are discussed the problems of State Property Management that currently have both theoretical and practical importance.

Particular attention was paid to the following issues:

- 1) the place of state companies in the market system,
- 2) the scope of property relationships,
- 3) the objects and subjects of State Property Management,
- 4) the results of State Property Management in the RA.

At the end of the article are given the results of survey.

**ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԺԵԶԱՓՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հայկ Սարգսյան

*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության
և կառավարման ֆակուլտետի դեկան
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ռուբեն Գևորգյան

Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

Նարինե Քոչինյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Սոնա Սարգսյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Անդրանիկ Բաղդասարյան

*Երևանի պետական համալսարանի
կառավարման և գործարարության ամբիոնի ասպիրանտ*

Լենա Հովհաննիսյան

*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության մեջ
մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդ*

Բանալի բառեր՝ գյուղատնտեսություն, ռեսուրսների օգտագործում, կառուցվածք, արժեչափում, մոդելավորում, տարածաշրջան, վերլուծություն, համեմատություններ

Նախաբան: Հայաստանում երկարատև կայուն տնտեսական աճի նախապայմաններից մեկը գյուղատնտեսության ու գյուղի զարգացման, բնօգտագործման ռացիոնալացման հիմնախնդիրների բացահայտումն ու լուծումների առաջադրումն է:

ՀՀ գյուղատնտեսությունը բնութագրվում է հողային ռեսուրսների գերաանափակությամբ: Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունը եվրասիական 49 երկրների շարքում 1 շնչին բաժին ընկնող վարելահողերով 38-րդ տեղում է (ընդամենը 0,14 հա)¹: Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման ինտենսիվության ցուցանիշը 2012թ. [վարելահողերի (448,4 հազ. հա) և բազմամյա տնկարկների գումարը, բաժանած գյուղնշանակության հողերի վրա (2052,4 հազ. հա)], կազմել է ընդամենը 23,5%:

¹ <http://databank.worldbank.org>

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2012թ. ՀՀ տնտեսությունում 1 միլիոն 172 հազ. զբաղվածներից գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակը 437,2 է կամ 37,3%, որը խնդրահարույց է 2 առումներով. առաջին՝ ցուցանիշի արժանահավաստություն, և երկրորդ՝ եթե ճիշտ է հաշվառումը, ապա անհանդուրժելի է ցածր արտադրողականությունը: Հայաստանի տնտեսությունը աշխատանքի արտադրողականության մակարդակով զգալիորեն զիջում է զարգացած և զարգացող երկրների մեծ մասին: Օրինակ, եթե ՀՀ-ում միջին աշխատողը արտադրում է 7,9 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ապրանքներ ու ծառայություններ, ապա Իսրայելում այդ ցուցանիշը կազմում է 68,4 հազ. ԱՄՆ դոլար²:

Հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և կառավարումը ՀՀ գյուղատնտեսության զարգացման կարևորագույն հիմնախնդիրներից են. դրանց զուգահեռ՝ անհրաժեշտ է լուծել նաև ջրային, էներգետիկ և մարդկային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խնդիրը: Մեր ուսումնասիրությունները բերում են այն եզրահանգմանը, որ ՀՀ տնտեսության կայուն առաջընթացի ապահովման գերակա առաջնահերթություններից մեկը գյուղատնտեսության ու գյուղի զարգացման, հողօգտագործման ազգային պետական ծրագրի կենսագործումն է լինելու³:

Գյուղատնտեսությունում ռեսուրսների օպտիմալ օգտագործումը բազմագործոն, բազմաչափանիշային խնդիր է: Անհրաժեշտ է հաշվի առնել ռիսկային ոլորտ լինելու հանգամանքը, տեղանքի առանձնահատկությունները, ռեսուրսների գոտիականությունն ու բնակլիմայական պայմանները, աղետների, հիվանդությունների կանխարգելման ու կառավարման հնարավորությունները, նոր գյուղատնտեսական տեխնոլոգիաների ի հայտ գալը, այդ տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև ռեսուրսների առավելագույնս ներգրավման ֆինանսական ապահովման հնարավորությունը և այլն: Գյուղատնտեսությունում ռեսուրսների օգտագործման օպտիմալացման խնդիրը չի կարող դիտարկվել առանց երկրի պարենային անվտանգության ապահովման: Այլ կերպ՝ վերը թվարկված պայմանները պետք է դառնան օպտիմալացման խնդրի լուծման հավելյալ սահմանափակումներ, որն ունի հետևյալ ընդհանրական ձևակերպումը. *տարբեր նշանակության բազմաֆունկցիոնալ ռեսուրսները (հողը, ջուրը, աշխատանքային ռեսուրսները, կապիտալը) այնպես ներգրավել տնտեսական շրջանառության մեջ, որ հնարավոր լինի տնտեսական արդյունավետության տարբեր չափանիշներով որոշվող ռեսուրսաօգտագործման ցուցանիշը հասցնել*

² Մանրամասն տե՛ս Վ. Սարգսյան, Խ. Հարությունյան, Վ. Մանասյան, Ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները: Ե., ԵՊՀ հրատ., 2011թ.

³ Մանրամասն տե՛ս Վ. Սարգսյան, Հողօգտագործման և ջրօգտագործման ազգային ծրագրի մշակման հարցի շուրջ, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի տարեգիրք 2013, Ե., ԵՊՀ հրատ., 2014թ.

առավելագույն մակարդակին: Այլ կերպ՝ ռեսուրսաօգտագործման շնորհիվ ապահովել բուսաբուծության ու անասնապահության առավելագույն արդյունք:

Եվրոպական մի շարք երկրներում հացահատիկի միջին բերքատվության դիտարկումը վկայում է, որ Հայաստանը այս ցուցանիշով զբաղեցնում է վերջին տեղերից մեկը, և կարելի է փաստել, որ միջազգային շուկաներում մրցակցության տեսանկյունից հացահատիկի արտադրությունը Հայաստանում արդյունավետ չէ, սակայն Հայաստանում վարելահողերի շուրջ 40% տրամադրվում է հացահատիկի արտադրությանը: Մյուս կողմից՝ որոշ երկրներում, որտեղ հացահատիկի արտադրողականությունը ավելի ցածր է, տրամադրվում է վարելահողերի առավել մեծ մաս: Հայաստանը այս համատեքստում միջին դիրք է զբաղեցնում:

Բերված օրինակը և երկրների կտրվածքով իրականացված համեմատական վերլուծությունները հարուստ տեղեկատվություն են տալիս ռեսուրսների օգտագործման արդյունավետության մասին: Տեղեկատվական այդ բազան հիմք է հանդիսացել կատարելու որակական վերլուծություն *գյուղատնտեսական արտադրության կառուցվածքային փոփոխությունների* վերաբերյալ:

ՀՀ տնտեսության երկճյուղ մոդելը: Դիտարկենք **փակ երկճյուղ** տնտեսություն: Սպառողների օգտակարության ֆունկցիան փակ տնտեսության համար տրվում է հետևյալ տեսքով⁴

$$U(AG_t, R_t) = \frac{R_t^{1-\theta}}{1-\theta} + AG_t \quad (1)$$

որտեղ $U(R_t, AG_t)$ -ն սպառողների օգտակարությունն է՝ կախված երկրում t պահին ընդհանուր արդյունքի մեջ գյուղատնտեսական արտադրանքի մասնաբաժնի՝ AG_t -ի պառումից և **մնացած տնտեսության** արտադրանքի մասնաբաժնի՝ R_t -ի սպառումից: Օգտակարության ֆունկցիայում կատարվում են հետևյալ հիմնարար ենթադրություններ՝

- դիտարկված է փակ, երկճյուղ տնտեսություն,
- մնացած տնտեսության արդյունքի սպառումը ներկայացված է CRRA⁵ հաստատուն հարաբերական ռիսկից խուսափելու ֆունկցիայի տեսքով:

Ստորև 2-7 հավասարումներով ներկայացվում է սպառողի կենսաժամանակաշրջանի օգտակարության օպտիմիզացիայի խնդիրը, որտեղ 2 հավասարումով ներկայացված է մոդելի նպատակային ֆունկցիան, իսկ 3-7 հավասարումներով՝ սահմանափակումները:

$$U(R_t, AG_t) = \sum_{t=1}^{\infty} \beta^{t-1} \left(\frac{R_t^{1-\theta}}{1-\theta} + AG_t \right), \quad (2)$$

⁴ Տե՛ս **Bah E., Brada J.**, Total Factor Productivity Growth and Structural Change in Transition Economies, The Fourteenth Dubrovnik Economic Conference, 2008, p. 6.

⁵ Տե՛ս **Romer D.**, Advanced Macroeconomics, McGraw-Hill Irwin, 4th edition, 2012, p. 50.

$$R_t + I_t = A_{Rt} K_{Rt}^\alpha L_{Rt}^{1-\alpha}, \quad (3)$$

$$A G_t = A_t K_{at}^\gamma H_t^\varphi L_{at}^{1-\gamma-\varphi}, \quad (4)$$

$$K_{t+1} = (1 - \delta)K_t + I_t, \quad (5)$$

$$K_{at} + K_{Rt} = K_t, \quad (6)$$

$$1 = L_{Rt} + L_{at}, \quad (7)$$

որտեղ I_t -ը ներդրումներն են, K_{Rt} -ը՝ մնացած տնտեսության ապրանքների արտադրության մեջ օգտագործվող կապիտալը, L_{Rt} -ը՝ մնացած տնտեսության⁸ ապրանքների արտադրության մեջ օգտագործված աշխատուժը, K_{at} -ը՝ գյուղատնտեսական ապրանքների արտադրության մեջ օգտագործվող կապիտալը, L_{at} -ը՝ գյուղատնտեսական ապրանքների արտադրության մեջ օգտագործվող աշխատուժը, H_t -ը՝ հողը, K_t -ը՝ կապիտալը: α , γ , φ գործակիցներով ներկայացվում են համապատասխան արտադրական ֆունկցիաների թողարկման առաձգականությունները արտադրական գործոնների նկատմամբ: β -ը դիսկոնտի գործակիցն է A_t, A_{Rt} -ը՝ համապատասխանաբար գյուղատնտեսության և մնացած տնտեսության տեխնոլոգիաները, δ -ը՝ տնտեսությունում մաշվածության դրույքը:

Օպտիմալության պայմանը գտնելու համար հաշվարկվում են K_{Rt}, K_{at}, L_{Rt} -ի առաջին կարգի դիֆերենցիալները, և վերջնական տեսքով պայմանը ներկայացվում է հետևյալ կերպ՝

$$\frac{K_{Rt} (1-\alpha)}{L_{Rt} \alpha} = \frac{K_{at} (1-\gamma-\varphi)}{L_{at} \gamma}. \quad (8)$$

Հայաստանի համար 2009-2012 թթ. հաշվենք (8) հավասարման աջ և ձախ կողմերը՝ A -ի և α , γ , φ պարամետրերի արժեքները որոշելու համար օգտագործելով այլ զարգացող երկրների կողմնորոշող ցուցանիշները:

Աղյուսակ 1. (8) հավասարման աջ և ձախ կողմերի արժեքները⁹:

	$\frac{K_{Rt} (1-\alpha)}{L_{Rt} \alpha}$	$\frac{K_{at} (1-\gamma-\varphi)}{L_{at} \gamma}$
2009	0.611241	1.794872
2010	0.611241	1.794872
2011	0.625293	1.435897
2012	0.612245	1.513514

⁶ Լուծման ընթացքում H_t -ն նորմալիզացվել և վերցվել է հավասար 1-ի:

⁷ Տե՛ս **Stokey N., Lucas R.**, Recursive Methods in Economic Dynamics, Cambridge, Harvard University Press, 1989, p.9.

⁸ Մնացած տնտեսության մեջ չի մտնում ՀՀ ԱՎԾ տնտեսական գործունեության տեսակների՝ Հայաստանի դասակարգչի <<Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն>> և <<Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովագրություն>> հոդվածները:

⁹ Օգտագործված բոլոր տվյալները վերցվել են ՀՀ ԱՎԾ կայքից՝ www.armstat.am :

Համաձայն աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների՝ $\frac{K_{Rt}(1-\alpha)}{L_{Rt}} < \frac{K_{at}(1-\gamma-\varphi)}{L_{at}} \gamma$, այսինքն՝ օպտիմալության պայմանը խախտվում է, և սպառողների օգտակարությունը չի հասնում իր առավելագույն արժեքին: Ընդ որում, դա տեղի ունի դիտարկվող բոլոր չորս տարիների համար: Եթե ենթադրենք, որ մոդելի պարամետրերը հաստատուն են և չեն փոխվում, ապա մեր տվյալների համաձայն՝ որպեսզի ապահովվի օպտիմալության պայմանը, պետք է տեղի ունենա ստորև նշված դեպքերից մեկը՝

- աշխատուժը մնացած տնտեսությունից պետք է հոսի գյուղատնտեսություն,
- կապիտալը գյուղատնտեսությունից պետք է հոսի մնացած տնտեսություն,
- պետք է աճի տնտեսությունում մնացած կապիտալը,
- վերոնշյալ դեպքերի կոմբինացիան:

Քանի որ գյուղատնտեսությունում օգտագործված կապիտալի տեսակարար կշիռը ընդհանուր տնտեսությունում հինգ տոկոս է, ապա օպտիմալության հասնելու այդ տարբերակը բացառվում է:

Պետք է հաշվի առնել, որ այս եզրահանգումը կատարելիս դիտարկված էր փակ տնտեսություն, այսինքն՝ երկրի ներսում պետք է արտադրվի սպառողների օգտակարությունը առավելագույնին հասցնելու համար անհրաժեշտ գյուղատնտեսական ողջ արտադրանքը: Միևնույն ժամանակ, մոդելի պարամետրերը, որոնք ենթադրվել են հաստատուն, ևս կարող են փոփոխվել: Այս երկու փաստերով էլ կարելի է մեկնաբանել ստացված տարբերակներից մեկը՝ աշխատուժի ներհոսքի անհրաժեշտությունը գյուղատնտեսություն: Սակայն փակ տնտեսության մոդելը կարող է վերլուծության ընդլայնման ելակետ հանդիսանալ դեպի բաց տնտեսություն:

Գյուղատնտեսական հողերի օգտագործման վիճակը և միտումները Հարավային Կովկասի տարածաշրջանում: Գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման համեմատական վերլուծությունները թույլ են տալիս գտնել այն հնարավորությունները, որոնք կարող են առաջընթաց ապահովել Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում, ինչպես նաև բացահայտել այդ զարգացումը խոչընդոտող գլխավոր գործոնները:


Այսպիսի հետազոտություններ իրականացնելիս կարևոր է համեմատվող երկրների ընտրությունը: Գյուղատնտեսության բնագավառի հետազոտությունների դեպքում ընտրություն կատարելիս չափազանց կարևոր է նմանատիպ բնակլիմայական և աշխարհագրական պայմաններ ունեցող տարածաշրջանի հետազոտությունը: Այս առումով Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրները որոշ վերապահումներով նման են մեր երկրի պայմաններին: Միևնույն ժամանակ, ավելի ընդհանուր պատկեր ստանալու նպատակով կարելի է համեմատական վերլուծությունները իրականացնել նաև ավելի մեծ ընտրանքի հիման վրա:

Հետազոտությունում համեմատվում են Հարավային Կովկասի հինգ երկրների՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Իրանի հողօգտագործման պատկերը, արդյունավետությունը և դրա զարգացման միտումները՝ օգտագործելով Համաշխարհային բանկի և Միացյալ ազգերի կազմակերպության Մանդի և գյուղատնտեսության կազմակերպության (UN FAO) տվյալները: Միջազգային աղբյուրներից տվյալների օգտագործումը թույլ է տալիս իրականացնել համեմատական վերլուծություններ՝ հիմնված միևնույն սկզբունքով հաշվարկված վիճակագրական տվյալների վրա:

Հողօգտագործման արդյունավետությունը անմիջական ազդեցություն է ունենում այս կամ այն երկրի տնտեսական զարգացման, մասնավորապես գյուղատնտեսության և սննդի արտադրության ոլորտների վրա:

Գյուղատնտեսական նշանակության հողեր: Որքան փոքր է գյուղատնտեսական հողերի մակերեսը, այնքան ավելի խնամքով և արդյունավետ պետք է լինի հողերի օգտագործման և մշակման պետական քաղաքականությունը, որպեսզի ապահովվեն ոչ միայն գյուղատնտեսության արդյունավետ զարգացումը, այլև տվյալ երկրի պարենային անվտանգությունը:

Տարածաշրջանային երկրներում գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսները իրարից խիստ տարբերվում են, որը երևում է ստորև բերված գծապատկերում:




Գծապատկեր 1. Գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը 2011թ., (աղբյուրը՝ World Bank, WDI)

Գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը Հայաստանում գրեթե 3 անգամ փոքր է Ադրբեջանի ցուցանիշից: Հետևաբար, Հայաստանի համար հողերի նպատակային օգտագործման քաղաքականությունը չափազանց կարևոր է արդյունավետ արտադրություն կազմակերպելու, տարածա-


շրջանային մրցակցությանը դիմակայելու և պարենային անվտանգությունը ապահովելու համար:

Գծապատկեր 2-ում պատկերված է հինգ երկրների գյուղատնտեսական հողերի հարաբերությունը հողերի ընդհանուր մակերեսին՝ 1992թ. և 2011թ.:




Գծապատկեր 2. Գյուղատնտեսական նշանակության հողերի տեսակարար կշիռը հողերի ընդհանուր մակերեսում, (աղբյուրը՝ World Bank, WDI.)

1992թ. Հայաստանի գյուղատնտեսական հողերի հարաբերությունը հողերի ընդհանուր մակերեսին Իրանից հետո ամենափոքրն էր տարածաշրջանում՝ մոտ 41%, մինչդեռ 2011թ. այն կազմել է շուրջ 60% և Հայաստանը տարածաշրջանում զբաղեցրել է առաջին տեղը: Այս փոփոխությունը ավելի լավ պատկերելու համար Գծապատկեր 3-ում դիտարկենք գյուղատնտեսական նշանակության հողերի և հողերի ընդհանուր մակերեսի հարաբերության դինամիկան տարածաշրջանի հինգ երկրների համար 1992թ. մինչև 2011թ. կտրվածքով:




Գծապատկեր 3. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հողերի ընդհանուր մակերես հարաբերակցության փոփոխությունը 1992-2011թթ., աղբյուրը՝ World Bank, WDI):

Ինչպես երևում է գծապատկերից, գյուղատնտեսական նշանակության հողերի աճը Հայաստանում տվյալ ժամանակահատվածում կազմել է շուրջ 50%: Ընդ որում՝ աճը հիմնականում տեղի է ունեցել 2001-2006թթ.: Տարածաշրջանի որևիցե այլ երկրում գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի այսպիսի կտրուկ աճ չի արձանագրվել: Ավելին՝ Վրաստանում և Իրանում գրեթե նույն ժամանակահատվածում գրանցվել է այս հարաբերակցության կտրուկ անկում: Եվ եթե այս փոփոխությունը չի բացատրվում պարզապես հաշվառում կատարելու նոր սկզբունքներով, ապա կարելի է պնդել, որ Հայաստանում նշված ժամանակահատվածում տեղի է ունեցել հողօգտագործման կառուցվածքային փոփոխություններ, ինչը կարող էր հանգեցնել գյուղատնտեսական արտադրության նկատելի աճի: Գծապատկեր 4-ում բերված է Հայաստանի գյուղատնտեսության համախառն արտադրանքի (ՀԱ) դինամիկան 1992-2011թթ.:



Գծապատկեր 4. Հայաստանի գյուղատնտեսության ՀԱ-ի փոփոխությունը, (աղբյուրը՝ World Bank, WDI):


Ինչպես երևում է գծապատկերից, 2001-2006թթ. Հայաստանում իսկապես արձանագրվել է գյուղատնտեսական արտադրանքի կայուն աճ, որը նաև պայմանավորված է եղել գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսների մեծացմամբ: Համաձայն հաջորդ գծապատկերի՝ գրանցվել է նաև սննդի արտադրության ինդեքսի աճ, որն ընդգրկում է ոչ միայն գյուղատնտեսությունը, այլ նաև գյուղատնտեսական արտադրանքի վերամշակումը և սննդի արդյունաբերությունը:




Գծապատկեր 5. Սննդի արտադրության ինդեքսի փոփոխությունը (2004-2006 թթ. = 100%) Հայաստանում, (աղբյուրը՝ World Bank, WDI):

Ինչպես երևում է պատկերից, այդ ժամանակահատվածում տեղի է ունեցել նաև այս ինդեքսի կտրուկ աճ: Այս ամենը վկայում է, որ գյուղատնտեսական նըշանակության հողերի աճը Հայաստանում կարող է դրականորեն ազդել ամբողջ տնտեսության վրա, քանի որ գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության կառուցվածքում ծառայություններից հետո զբաղեցնում է առանցքային տեղ:

Գյուղատնտեսական հողերի կառուցվածքը: Գլխավոր հարցը, այնուհանդերձ, այն է, թե արդյոք այս գործընթացները արդյունավետ են եղել, և թե գյուղատնտեսական ինչ տիպի հողերի աճ է գրանցվել Հայաստանում: Մասնավորապես, 2001թ. մինչև 2006թ. ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը Հայաստանում աճել է շուրջ 32%, իսկ ՀԱ-ն գյուղատնտեսության ոլորտում՝ միջինում տարեկան 9.3%: Այս նույն ցուցանիշները Ադրբեջանում կազմել են համապատասխանաբար 0.1% և 7.3%: Այս համեմատությունը առաջացնում է հարցեր Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերի ընդլայնման գործընթացների արդյունավետության վերաբերյալ: Այս առումով ուշագրավ է դիտարկել տարածաշրջանի երկրների 2011թ. գյուղատնտեսական հողերի կառուցվածքային տեղաշարժերը 1992թ. Համեմատությամբ: Հաջորդ գծապատկերում բերված են Հարավային Կովկասի երկրների գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքը 1992թ. և 2011թ.:



Նախ պետք է նկատել, որ գծապատկեր 6-ում պատկերված կառուցվածքային փոփոխությունները Հայաստանում և Ադրբեջանում տեղի են ունեցել գյուղատնտեսական նշանակության հողերի ընդլայնման, իսկ Վրաստանում, Թուրքիայում և Իրանում՝ ընդհակառակը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նվազեցման հաշվին: Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերի աճը պայմանավորված է եղել հիմնականում արոտավայրերի տարածքների ավելացմամբ, ինչը, բնականաբար, չէր կարող ուղեկցվել նոր տեխնոլոգիաների և մշակման մեթոդների ներդրմամբ: Կարելի է ենթադրել, որ այս պարագայում այն երկրներում, որտեղ նկատվել է արոտավայրերի տեսակարար կշռի աճ, պետք է աճեր անասնաբուծության արտադրանքի ինդեքսը. դա մասնավորապես վերաբերում է Հայաստանին և Վրաստանին: Հաջորդ պատկերում տրված է անասնաբուծության արտադրանքի ինդեքսի փոփոխությունը (2004-2006թթ. = 100%) Հարավային Կովկասի երկրներում:



Գծապատկեր 6. Անասնաբուծության արտադրանքի ինդեքսը (2004-2006 թթ. = 100%) Հարավային Կովկասի երկրներում, (աղբյուրը՝ World Bank, WDI):

Ինչպես երևում է գծապատկերից, Հայաստանը և Վրաստանը 2011 թ. Դրությամբ տարածաշրջանում զբաղեցնում են համապատասխանաբար 3-րդ և 5-րդ տեղերը: Հայաստանի համար այս ցուցանիշը 2011թ. 100-ից բարձր է, ինչը նշանակում է, որ 2004-2006թթ.-ի նկատմամբ արձանագրվել է աճ, իսկ Վրաստանի համար այս ցուցանիշը 2011թ. դրությամբ 100-ից ցածր է, հետևաբար գրանցվել է անկում: Այնուհանդերձ, մյուս երկրների օրինակը ցույց է տալիս, որ տարածաշրջանում հնարավոր է անասնաբուծության արտադրանքի ինդեքսի աճ առանց արոտավայրերն ընդարձակելու:


Կարելի է պնդել նաև, որ գյուղատնտեսական նշանակության հողերի աճը և կառուցվածքի փոփոխությունը Հայաստանում վկայում են գյուղատնտեսության

էքստենսիվ զարգացման մասին, ինչն իր հերթին կարող է նշանակել հողօգտագործման ցածր արդյունավետություն: Վրաստանում անշուշտ, վիճակը այս առումով ավելի վատ է, քանի որ արոտավայրերի տեսակարար կշռի ընդլայնման հետ մեկտեղ՝ գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսը նկատելիորեն փոքրացել է հիմնականում վարելահողերի և մշակաբույսերի հաշվին: Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործումը շատ ավելի է կարևորվում, քան տարածաշրջանի մյուս երկրներում, քանի որ Հայաստանում նշված հողատարածքների մակերեսը ամենափոքրն է տարածաշրջանում. օրինակ՝ Վրաստանի գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը գրեթե 45%-ով մեծ է, քան Հայաստանինը:

Գյուղատնտեսությունում աշխատուժի և կապիտալի օգտագործման որոշ միտումներ Հարավային Կովկասի տարածաշրջանում:


Գյուղատնտեսությունում ռեսուրսների օգտագործման բարելավման խնդիրը ամբողջական ներկայացնելու համար դիտարկվել է նաև տարածաշրջանային երկրներում գյուղատնտեսության ոլորտում աշխատուժի և կապիտալի օգտագործման համեմատական միտումները:

Գյուղական համայնքների բնակչություն: Տարածաշրջանային երկրներում գյուղաբնակների տեսակարար կշիռը միմյանցից էականորեն չի տարբերվում: 1992 թ.-ի դրությամբ Հայաստանում այդ ցուցանիշն ամենափոքրն էր, սակայն Թուրքիայում ու Իրանում 2011թ.-ին այդ ցուցանիշը նվազել է գրեթե 10 տոկոսային կետով, իսկ Հայաստանում, ընդեհակառակը, աճել է: Համեմատելով այդ ցուցանիշները՝ ստացվում է, որ Հայաստանում թե գյուղաբնակների և թե գյուղատնտեսական նշանակության հողերի տեսակարար կշիռներն աճել են: Սակայն գյուղաբնակների տեսակարար կշիռը գրանցել է ավելի քիչ աճ, քան նույն ժամանակահատվածում գյուղատնտեսական հողերի տեսակարար կշիռը:




Գծապատկեր 7. Գյուղական համայնքներում բնակչության տեսակարար կշիռը (աղբյուրը՝ World Bank, WDI):

Հաջորդ գծապատկերում բերված է գյուղատնտեսությունում տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակները: Հայաստանում գյուղատնտեսությամբ զբաղվածները թվաքանակով զիջում են հարևան երկրներին:




Գծապատկեր 8. Գյուղատնտեսությունում ակտիվ բնակչության թվաքանակը (աղբյուրը՝ FAOSTAT):


Գյուղատնտեսությունում կապիտալի մասին տվյալների սակավության պատճառով դիտարկվել են միայն 1992-2000թթ. տվյալները: Այս ցուցանիշով Հայաստանը զգալիորոն գերազանացում է հարևան Ադրբեջանին ու Վրաստանին: Մտահոգիչ է այն փաստը, որ, ի տարբերություն Թուրքիայի, որն արձանագրել է գյուղատնտեսական տեխնիկայի քանակի աճ, Հայաստանում այդ ցուցանիշը նվազել է, իսկ Վրաստանում, որտեղ այդ ցուցանիշը թեկուզ և զիջում է Հայաստանի մակարդակին, 1997թ.-ից սկսած սկսել է աճել:



Գծապատկեր 9. 100 կմ քառ. վարելահողերին բաժին ընկնող գյուղատնտեսական տեխնիկայի քանակը (տրակտորներ), (աղբյուրը՝ World Bank, WDI):



Գծապատկեր 10. Գյուղատնտեսությունում ստեղծված ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ (աղբյուրը՝ World Bank, WDI):




Գծապատկեր 11. Աշխատուժի մեկ շնչին ընկնող գյուղատնտեսության ավելացված արժեք (աղբյուրը՝ World Bank, WDI):

11-րդ ու 12-րդ գծապատկերներում ներկայացված են ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսության ավելացված արժեքի տեսակարար կշիռն ու մեկ աշխատողին բաժին ընկնող գյուղատնտեսական արտադրանքը: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ տարածաշրջանի երկրներում գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը նվազման միտում ունի, սակայն տարածաշրջանի երկրների համեմատությամբ Հայաստանում այդ ցուցանիշը ամենաբարձրն է: Նույնիսկ Թուրքիան, որը 1992թ.-ին գերազանցել է Հայաստանին, նվազեցրել է այդ ցուցանիշը: Սակայն աշխատողին բաժին ընկնող գյուղատնտեսական արտադրանքի չափով Հայաստանը գերազանցում է Թուրքիային և տարածաշրջանային մյուս երկրներին: Այս փաստը կարող է մեկնաբանվել նախորդ գծապատկերներում ներկայացված՝ գյուղատնտեսությունում հողային ռեսուրսների աճով, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկայի համեմատաբար բարձ մակարդակով, որը միննույն ժամանակ ուղեկցվել է աշխատուժի տեսակարար կշռի նվազումով:

Արդյունքերը ամփոփելիս իհարկե պետք է նաև հաշվի առնել, որ զարգացող երկրներում գյուղատնտեսությունում ավելացված արժեքը շատ դժվար է չափել. արտադրանքի զգալի մասը օգտագործվում է տնտեսության ներքին սպառման համար:

Գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքը: Ինչպես նշել ենք, տարածաշրջանի երկրներում տեղի է ունեցել գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքային փոփոխություններ, ինչը հանգեցրել է գյուղատնտեսական արտադրանքի որոշ տեսակների թվաքանակի աճի: Այնուհանդերձ կարևոր հարց է նաև՝ ինչպես է փոխվել գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքը, և որքանով է դա համահունչ գյուղատնտեսական հողերի կառուցվածքային փոփոխություններին:

Հաջորդ գծապատկերում բերված է տարածաշրջանի երկրների գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքը անցումային շրջանի սկզբում՝ 1994թ.:




Գծապատկեր 12. Գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքը տարածաշրջանի երկրներում 1994 թ. (աղբյուրը՝ FAOSTAT¹⁰):

Տարածաշրջանի երկրների գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքում այդ ժամանակահատվածում գլխավոր մասը կազմում է բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրությունը. բոլոր երկրներում այդ ցուցանիշը բարձր է 50%-ից: Այս հանգամանքը բացատրվում է նաև տարածաշրջանի բնակլիմայական առանձնահատկություններով:

Հայաստանը միակ երկիրն էր տարածաշրջանում, որն ուներ անասնաբուծության տեսակարար կշռի գրեթե 40% ցուցանիշ գյուղատնտեսության համախառն արտադրանքում: Մյուս երկրներում այս ցուցանիշը չէր գերազանցում 30%:

Հաջորդ նկարում բերված է գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքը տարածաշրջանի երկրներում 2011թ. համար:

¹⁰ Food and Agricultural Organization of United Nations, www.fao.org



Գծապատկեր 13. Գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքը տարածաշրջանի երկրներում 2011 թ. (Աղբյուրը՝ FAOSTAT):

Ինչպես երևում է գծապատկերից, Հայաստանը միակ երկիրն է տարածաշրջանում, որտեղ գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքային տեղաշարժեր գրեթե չեն գրանցվել և դա այն դեպքում, երբ գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքում նույն ժամանակատվածում Հայաստանում տեղի են ունեցել տարածաշրջանի ամենակտրուկ փոփոխությունները: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գյուղատնտեսական հողերի կառուցվածքի փոփոխությունը, մասնավորապես արոտավայրերի տեսակարար կշռի ավելացումը հանգեցրել են անասնաբուծության արտադրանքի ծավալների որոշակի աճի: Սակայն, ինչպես կարելի է տեսնել գծապատկերից, կառուցվածքային էական տեղաշարժ չի նկատվում, ինչը չենք կարող ասել մեր հարևանների պարագայում: Մասնավորապես, Իրանում և Թուրքիայում նկատելիորեն աճել է բանջարաբուստանային մշակաբույսերի, իսկ Վրաստանում և Ադրբեջանում՝ անասնաբուծության տեսակարար կշիռը:

Բերքատվություն: Հողօգտագործման արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է բերքատվության ցուցանիշներով: Գյուղատնտեսական արտադրանքի աճը ֆիզիկական ծավալով հնարավոր է ապահովել ինչպես հողատարածքների ընդլայնման հաշվին (էքստենսիվ աճ), այնպես էլ բերքատվության բարձրացման հաշվին (ինտենսիվ աճ):

Աղյուսակ 2-ում և 3-ում բերված են բերքատվության ցուցանիշները տարածաշրջանի երկրներում 1994թ. և 2011թ.՝ ըստ գյուղատնտեսական արտադրանքի տեսակների: Գյուղատնտեսական արտադրանքի այսպիսի դասակարգումը սահմանել է Սննդի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպությունը:

Աղյուսակ 2. Բերքատվություն 1994, կգ/հա, (Աղբյուրը՝ FAOSTAT):

	Հացահատիկ	Ցիտրուսներ	Կերի հացահատիկ	Պտուղ	Զիթաատու բույսեր	Լոբազգիներ	Արմատապտուղներ	Ընկուզենիներ	Բանջարեղեն
Հայաստան	1440	0	1032	5609	0	2333	13119	0	20238
Ադրբեջան	1633	16536	1639	3591	126	2614	8350	1133	13309
Վրաստան	2016	8133	2297	4428	170	765	12371	1823	13367
Իրան	1817	15261	1934	10217	269	662	21302	1414	17942
Թուրքիա	1912	23642	2167	9559	432	892	22882	1667	22972

Աղյուսակ 3. Բերքատվություն 2011, կգ/հա, (Աղբյուրը՝ FAOSTAT):

	Հացահատիկ	Ցիտրուսներ	Կերի հացահատիկ	Պտուղ	Զիթաատու բույսեր	Լոբազգիներ	Արմատապտուղներ	Ընկուզենիներ	Բանջարեղեն
Հայաստան	2649	0	2707	10365	0	2525	20715	3098	34978
Ադրբեջան	2660	13376	2757	7305	397	1923	14674	1421	15408
Վրաստան	2195	3929	2363	3706	239	1644	9641	1845	9759
Իրան	2188	17110	2270	11686	481	902	30000	2526	26785
Թուրքիա	2956	34118	3404	13580	630	1510	27626	1787	25024

Աղյուսակների համեմատությունից կարելի է տեսնել, որ Հայաստանը 1994թ. դրությամբ գյուղատնտեսական արտադրանքի որևիցե խմբում չուներ բերքատվության ամենաբարձր ցուցանիշ (ամեն սյունակում ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրին համապատասխանող վանդակը մզացված է): Մինչդեռ 2011թ. Հայաստանը երեք ապրանքատեսակների գծով բերքատվության ցուցանիշով գրավում է առաջատար դիրքեր: Միննույն ժամանակ, հարևան Վրաստանը և Ադրբեջանը որևիցե արտադրանքի գծով առաջատար դիրք չեն զբաղեցնում:

Աղյուսակ 3-ից երևում է, որ բերքատվության համախառն ցուցանիշով առաջատարը Թուրքիան է: Բերքատվության ցուցանիշով ինը ապրանքախմբերից հինգում Թուրքիան տարածաշրջանում առաջին տեղում է:

Հայաստանում, ինչպես և Իրանում և Թուրքիայում գյուղատնտեսական արտադրանքի բոլոր խմբերում տեղի է ունեցել բերքատվության աճ, այն դեպքում, երբ Ադրբեջանում և Վրաստանում որոշ ապրանքախմբերում տեղի է ունեցել բերքատվության նվազեցում:

Աղյուսակ 4-ում և 5-ում բերված են առանձին մշակաբույսերի ցանքատարածությունների տեսակարար կշիռները գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքում:

Աղյուսակ 2. Մշակվող տարածքներ/Գյուղատնտեսական հողեր, 1994 (Աղբյուրը՝ FAOSTAT)

	Հացահատիկ	Ցիտրուսներ	Կերի հացահատիկ	Միքզ	Զիթաատու բույսեր	Լոբազգիներ	Արմատապտուղներ	Ընկուզենիներ	Բանջարեղեն
Հայաստան	13,17%	0,00%	6,03%	5,05%	0,00%	0,17%	2,65%	0,00%	1,93%
Ադրբեջան	13,98%	0,03%	3,86%	3,79%	4,85%	0,13%	0,40%	0,51%	0,84%
Վրաստան	7,54%	0,39%	5,36%	5,19%	0,61%	0,43%	0,77%	0,41%	1,12%
Իրան	14,32%	0,31%	2,87%	1,57%	0,67%	1,47%	0,23%	0,47%	0,68%
Թուրքիա	35,20%	0,20%	10,69%	2,55%	4,70%	4,69%	0,47%	1,16%	2,12%

Աղյուսակ 3. Մշակվող տարածքներ/Գյուղատնտեսական հողեր, 2011 (Աղբյուրը՝ FAOSTAT)

	Հացահատիկ	Ցխորուսներ	Կերի հացահատիկ	Միրգ	Զիթաուրույսեր	Լոբազգիներ	Արմատապտուղներ	Շնկուզենիներ	Բանջարեղեն
Հայաստան	9.29%		4.74%	2.66%		0.11%	1.68%	0.09%	1.79%
Ադրբեջան	20.01%	0.04%	6.26%	2.61%	1.36%	0.27%	1.37%	0.63%	2.37%
Վրաստան	7.45%	0.53%	5.55%	4.02%	0.63%	0.24%	0.82%	0.83%	0.97%
Իրան	18.63%	0.27%	4.44%	2.04%	0.99%	1.68%	0.38%	0.84%	1.73%
Թուրքիա	31.11%	0.26%	9.69%	2.82%	5.64%	2.24%	0.38%	1.64%	2.95%

Աղյուսակում ներկայացված մշակաբույսերի կազմով Հայաստանը միայն արմատապտուղների ապրանքային խմբում ունի գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքում կշռի առավելություն՝ ինչպես անցումային շրջանի սկզբում, այնպես էլ 2011թ.: Համաձայն աղյուսակ 3-ի տվյալների՝ Հայաստանը այս ապրանքային խմբում չունի բերքատվության համեմատական առավելություն տարածաշրջանում:

Այսպիսի իրավիճակը վկայում է այն մասին, որ Հայաստանը արդյունավետորեն չի օգտագործում գյուղատնտեսության զարգացման ողջ ներուժը:

Գյուղատնտեսական ապրանքների գները¹¹: Տարածաշրջանում մշակաբույսերի բերքատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանը անցումային տարիներին համեմատաբար բարելավել է բերքատվության ցուցանիշները մի շարք ապրանքատեսակների խմբերում: Բերքատվության համեմատական առավելությունները կարող են տարածաշրջանում հանգեցնել գյուղատնտեսական ապրանքների գների հարաբերական առավելությունների և որպես հետևանք՝ այդ ապրանքների միջտարածաշրջանային առևտրի դրական բալանսի:

Նախ և առաջ դիտարկենք գյուղատնտեսական ապրանքների գների ինդեքսը, որը ներկայացված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Գյուղատնտեսական արտադրանքի գները 2011 (2004-2006=100%) (աղբյուրը՝ FAOSTAT):

	Հացահատիկ	Ցխորուսներ	Կերի հացահատիկ	Ձու	Միրգ	Միս	Կաթ	Զիթաուրույսեր	Լոբազգիներ	Արմատապտուղներ	Շնկուզենիներ	Բանջարեղեն
Հայաստան	146		142	123	142	188	159		223	203		168
Ադրբեջան	215	203	217	254	252	158	215	130	134	212	125	280
Վրաստան	132	138	137	135	117	193	126	106	130	127	90	100
Իրան	169	271	191	241	321	305	219	133	230	319	244	241
Թուրքիա	164	131	169	89	135	202	130	155	154	178	168	170

Ինչպես երևում է աղյուսակից, տարածաշրջանի երկրներում գների ընդհանուր մակարդակը աճել է մոտավորապես նույն կերպ: Իհարկե կան որոշակի

¹¹ Պարենի առանձին տնտեսների արտադրության, արտահանման և գնագոյացման միտումները համաշխարհային շուկայում, ինչպես նաև ներքին շուկայի պաշտպանության և մրցակցության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում մանրակրկիտ շարադրված են՝ Ն.Սարգսյան, Ա.Մարկոսյան «Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերնիքի հեռանկարները», Երևան, «Զանգակ», 2014թ. գրքում:

բացառություններ: Օրինակ՝ Վրաստանում բանջարեղենի գինը 2011թ. Համեմատած 2004-2006թթ. չի փոխվել, մինչդեռ տարածաշրջանի մյուս երկրներում այդ գները զգալիորեն աճել են:

Հարկ է նշել նաև, որ այն ապրանքատեսակները, որտեղ բերքատվությունը Հայաստանում ամենաբարձրն է տարածաշրջանում, ունեցել են գների զգալի աճ: Մասնավորապես լոբազգիների գները աճել են մոտ 2.23 անգամ, իսկ բանջարեղենինը՝ 1.68 անգամ:

Աղյուսակ 4. Տեղեկություններ ապրանքատեսակների գների վերաբերյալ

	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Թուրքիա
Արտադրվող ապրանքատեսակների ընդհանուր քանակը	36	27	59	81
Ամենացածր գին ունեցող ապրանքատեսակների քանակը	9	20	27	38
Ամենացածր գին ունեցող ապրանքատեսակների տեսակարար կշիռը բոլոր ապրանքատեսակներում	9.09%	20.20%	27.27%	38.38%
Ամենացածր գին ունեցող ապրանքատեսակների տեսակարար կշիռը տվյալ երկրում արտադրվող ապրանքատեսակներում	25.00%	74.07%	45.76%	46.91%

Ինչպես երևում է աղյուսակից, «տարածաշրջանում ամենացածր գին ունեցող ապրանքատեսակների տեսակարար կշիռ» ցուցանիշը համեմատած մյուս բոլոր երկրների հետ Հայաստանի համար փոքր է, Ընդ որում, այս հարաբերությունը փոքր է թե բոլոր ապրանքատեսակների, թե տվյալ երկրում արտադրվող ապրանքատեսակների հետ համեմատելիս:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ անցումային տարիներին Հայաստանը գյուղատնտեսության ոլորտում ունեցել է որոշակի տեղաշարժեր: Մասնավորապես, զգալիորեն ավելացել են գյուղատնտեսական նշանակության հողերը, ինչը կարող է պայմանավորված լինել գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհման ակտիվ քաղաքականությամբ: Սկսած 1997 թ.՝ զգալիորեն աճել է գյուղատնտեսության ՀՆԱ-ն, իսկ 2001թ. սկսած՝ սննդի արտադրության ինդեքսը: Բացի այդ՝ այս տարիներին զգալիորեն բարձրացել են բերքատվության ցուցանիշները, իսկ որոշ ապրանքատեսակների խմբերում Հայաստանը 2011թ. դրությամբ տարածաշրջանում ունի բերքատվության ամենաբարձր ցուցանիշները:

Այս ամենը խոսում է այն մասին, որ Հայաստանի գյուղատնտեսությունը ունի զարգացման մեծ հեռանկար: Եվ դա առաջին հերթին վերաբերում է արտահանմանը: Ընդ որում, Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերի այդպիսի զգալի աճը, ինչպիսին արձանագրվել է այդ տարիներին, միաժամանակ ապահովել է գյուղատնտեսության ՀՆԱ-ի համադրելի աճ՝ ի

հաշիվ գյուղատնտեսական նշանակության հողերի ավելի արդյունավետ օգտագործման:

Այս վարկածի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ չնայած գյուղատնտեսական նշանակության հողերի ավելացմանը և բերքատվության բարձրացմանը՝ Հայաստանի գյուղատնտեսական մթերքների արտադրողների գները միջինից բարձր են տարածաշրջանի մյուս երկրների համեմատ: Այս հանգամանքը հատկապես մտահոգիչ է, եթե հաշվի ենք առնում բերքատվության բարձր ցուցանիշները: Ավելին, Հայաստանի գյուղատնտեսության մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների աճը տարածաշրջանային գների բարենպաստ կառուցվածքի առումով մրցակցային առավելությունների չի հանգեցնում: Ուստի, մեր կարծիքով, ռեսուրսների (մասնավորապես հողի) ավելի արդյունավետ օգտագործումը կարող է շտկել այս իրավիճակը, որքան էլ որ նշվածը բացատրվում է նաև շուկայական ներկա բարդ իրավիճակով և առանձնահատկություններով:

ПРОБЛЕМИ СОИЗМЕРЕНИЯ И ИСПОЛЬЗОВАНИЯ ПРИРОДНЫХ РЕСУРСОВ В ЭКОНОМИКЕ РА

Гайк Саргсян

*Декан факультета экономики и менеджмента
Ереванского государственного университета,
доктор экономических наук, профессор*

Рубен Геворгян

Доктор экономических наук, доцент

Нарине Кочинян

Кандидат экономических наук, доцент

Сона Саргсян

Кандидат экономических наук, доцент

Андраник Багдасарян

*Аспирант кафедры менеджмента и бизнеса
Ереванского государственного университета*

Лена Оганесян

*Соискатель кафедры математического моделирования в экономике
Ереванского государственного университета*

Ключевые слова: сельское хозяйство, использование ресурсов, структура, соизмерение, моделирование, регион, анализ, сравнения:

В статье рассмотрены вопросы оптимального использования природных ресурсов. С помощью сравнительного анализа показано, что использование земельных ресурсов в Армении имеет потенциал роста. В переход-

ный период заметно увеличились площади используемых земель сельскохозяйственного назначения. повысилась также урожайность некоторых культур. Однако, эти положительные изменения не обеспечили конкурентные цены на региональном уровне.

THE PROBLEMS OF VALUATION AND USE OF THE NATURAL RESOURCES IN THE RA ECONOMY

Hayk Sargsyan

*Head of the Faculty of Economics
and Management at Yerevan State University
Doctor of economics, professor*

Ruben Gevorgyan

Doctor of economics, Associate professor

Narine Kochinyan

PhD in Economics, Associate professor

Sona Sargsyan

PhD in Economics, Associate professor

Andranik Bagdasaryan

*Ph.D. Student of the Management and Business Department
at Yerevan State University*

Lena Hovhannisyan

*Ph.D. Student of the Department of Mathematical Modeling in Economics
at Yerevan State University*

Keywords: agriculture, resource utilization, design, valuation, modeling, region, analysis, comparisons.

The paper deals with the problem of optimal use of resources. Using a comparative analysis, we show that the use of land resources in Armenia has potential for growth. During the transition period the area of land used for agricultural purposes has been significantly increased. Also, yields of some crops was increased. However, these positive changes have not provided competitive prices at the regional level.

**ՀԱՆՔԱՐԹՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Աշոտ Մարդոյան

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս,
Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և տեղեկատվական
տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Քանալի բառեր՝ հանքարդյունաբերություն, ընդերքօգտագործում, օրենսգիրք, կառավարում, արդունավետություն

Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է և կարող է տրվել օգտագործման իրավունքով: Մակայն պետությունն առայժմ չունի այդ սեփականության ռացիոնալ շահագործման համար հաստատված տեխնոլոգիական նախագծման նորմեր, հանքավայրերի շահագործման տեխնիկական կանոններ և նորմատիվներ: Դրանց բացակայությունը գործնականում անհնար է դարձնում տվյալ բնագավառում պետությանն ամրագրված խնդիրների իրականացումը, մասնավորապես՝ հանքային հումքի նկատմամբ տնտեսության պահանջների բավարարման նպատակով ընդերքի արդյունավետ, համալիր օգտագործման ու պահպանության, ընդերքն օգտագործելիս շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, ինչպես նաև աշխատանքների կատարման անվտանգության ապահովումը: Հետևյալս, բնական պաշարների ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկն էլ ընդերքի պահպանության և օգտագործման բնագավառի օրենսդրական հիմքերի ապահովումն է:¹

Ընդերքօգտագործմանն առնչվող իրավական բարեփոխումների անհրաժեշտությունը ՀՀ կառավարության կողմից հիմնականում բացահայտվել է 2008 թվականին՝ հիմք ընդունելով շրջակա միջավայրի հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և փորձագետների քննադատությունը այս ոլորտին առնչվող օրենսդրության անկատարության վերաբերյալ: Մատնանշված հիմնական հիմնախնդիրներն են եղել ընդերքի ռեսուրսների անարդյունավետ շահագործումը, պետության ընդերքօգտագործման քաղաքականության բացակայությունը, ընդերքօգտագործողներին ներկայացվող անբավարար պայմանները, շրջակա միջավայրի վրա ազդեցության ոչ պատշաճ գնահատումն ու աղտոտման դիմաց կատարվող վճարումների անհամապատասխանությունը, պետության այլ շահերի և սոցիալական խնդիրների անտեսումը, բնության առավել խոցելի տարածքների (օրինակ՝ անտառների) ոչնչա-

¹ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 2014-2016 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիր, 3 էջ

ցումը և այլն: Արդյունքում 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտան <<Ընդերքի մասին>> Հայաստանի Հանրապետության նոր օրենսգիրքը և <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> 2011 թվականի նոյեմբերի 28-ի օրենքը, ուժը կորցրած ճանաչվեցին <<Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին>> 2002 թվականի նոյեմբերի 5-ի օրենքը (որով սահմանված էին մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիները): <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով ռոյալթին սահմանվել է որպես արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար բնօգտագործման վճարի տեսակ², որը Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և (կամ) մետաղի խտանյութ արտադրողների համար փոխարինելու է եկել պինդ օգտակար հանածոների մարված պաշարների համար բնօգտագործման վճարին և մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիներին:

<<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13.6-րդ և 13.7-րդ հոդվածներին համապատասխան՝ ռոյալթիի հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր տարին (2012 թվականից սկսած): Ռոյալթի վճարողները յուրաքանչյուր հաշվետու տարվա (առաջին անգամ՝ 2012 թվականի) համար, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա՝ 2013 թվականի ապրիլի 15-ը ներառյալ, ռոյալթիների հաշվարկ-հաշվետվությունները պետք է ներկայացնեն հարկային մարմին:

<<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13.2-րդ հոդվածին համապատասխան, 2012 թվականի հունվարի 1-ից ռոյալթի վճարողներ են համարվում ոչ միայն Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործողները, այլև՝ մետաղի խտանյութ արտադրողները, որոնք մինչև այդ չեն հանդիսացել ո՛չ բնօգտագործման վճար և ո՛չ էլ ռոյալթի վճարողներ:

Գոյություն ունի կարծիք, որ այդ օրենսդրական փոփոխությունների արդյունքում ներդրված ռոյալթին չափազանց ցածր է և հիմնականում շահեկան է խոշոր ձեռնարկատերերի համար, իսկ կառավարությունը նշում է, որ համաձայն <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> Հայաս-

² <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> ՀՀ օրենք

տանի Հանրապետության օրենքի 13.4-րդ հոդվածով սահմանված թոյալթիի հաշվարկման բանաձևի ($R = 4 + [\mathcal{T}/(\mathcal{Z}\times 8)]\times 100$, որտեղ՝

R- թոյալթիի դրույքաչափն է տոկոսով,

Շ- շահույթն է նախքան հարկումը՝ դրամով: Այն որոշվում է որպես թոյալթիի հաշվարկման բազայի և «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական գործունեության գծով ծախսերի և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն,

Հ - արտադրանքի իրացումից հասույթն է՝ առանց ԱԱՀ-ի՝ դրամով:

Տարեկան արդյունքներով թոյալթիի հաշվարկման բազայի (իրացումից հասույթի) նկատմամբ կիրառվող թոյալթիի դրույքաչափը հաշվարկելու համար թոյալթիի նվազագույն 4 տոկոսդրույքաչափին գումարվում է շահույթի և իրացումից հասույթի ութապատիկի հարաբերության տոկոսային մեծությունը: Շահույթի և իրացումից հասույթի ութապատիկի հարաբերության տոկոսային մեծությունը սահմանվել է որպես թոյալթիի նվազագույն դրույքաչափին ավելացվող՝ շահութաբերությունը հաշվի առնող բաղադրիչ, որը միաժամանակ հավասարակշռելու է բարձր և ցածր շահութաբերություն ունեցող հանքավայրերի համար թոյալթիի բեռը: Այսպես, 10 տոկոս շահութաբերության դեպքում թոյալթիի դրույքաչափը կկազմի 5,25 տոկոս, 20 տոկոս շահութաբերության դեպքում՝ 6,5 տոկոս, 25 տոկոս շահութաբերության դեպքում՝ 7,1 տոկոս, 30 տոկոս շահութաբերության դեպքում՝ 7,75 տոկոս, իսկ 40 տոկոս շահութաբերության դեպքում՝ 9 տոկոս:

Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» 2002 թվականի նոյեմբերի 5-ի ՀՕ-440-Ն օրենքով սահմանված կարգով մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից թոյալթիներ վճարվում էին միայն 25 տոկոսը գերազանցող շահութաբերություն ունեցող արդյունահանողները, այն էլ՝ օգտակար հանածոյի համախառն հաշվարկային արժեքի 0.1 տոկոսի չափով՝ շահութաբերության նորմայի 25 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր 0.8 տոկոսի համար:

Միաժամանակ, թոյալթիի հաշվարկման բազան արտադրանքի իրացումից հասույթն է, որը որոշվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 29-ի «Թոյալթիների հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման կարգը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված կարգով:

Ինչ վերաբերում է միջազգային պրակտիկայում կիրառվող թոյալթիի դրույքաչափերին, հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ կիրառու-

թյան մեջ են ռոյալթիի հաշվարկման տարբեր եղանակներ (ադվալորային՝ վաճառված արտադրանքի արժեքից, հաստատագրված՝ արտադրանքի միավոր ծավալից կամ քաշից, շահույթից հաշվարկվող և այլն): Տարբեր երկրներում պինդ օգտակար հանածոների համար ռոյալթիի դրույքաչափերը տարբեր հանածոների համար սովորաբար տատանվում են մեկ տոկոսից (ածուխ) մինչև 24 տոկոսի (ադամանդ) սահմաններում: Ընդորում, օրինակ Ինդոնեզիայում 2012 թվականի դրությամբ ռոյալթիի դրույքաչափը սահմանված է՝ պղնձի համար՝ 4 տոկոս, ոսկու համար՝ 3,75 տոկոս, արծաթի համար՝ 3,25 տոկոս, Ռուսաստանում՝ պղնձի համար՝ 8 տոկոս, ոսկու համար՝ 6 տոկոս, Պերուում ռոյալթիի դրույքաչափերը սահմանված են 1-12 տոկոս, Ավստրալիայում՝ 2,7-7,5 տոկոս, Գանայում՝ 5 տոկոս և այլն:³

Այսպիսով, փոփոխությունների հիմնական դրույթները վերաբերում են ընդերքի օգտագործման մասով գանձվող պարտադիր վճարների հաշվարկման մեխանիզմի փոփոխություններին:

Նախկինում գանձվող բնօգտագործման վճարը հաշվարկվում էր մետաղական օգտակար հանածոների փաստացի մարված պաշարներից, այսինքն՝ գործող օրենսդրությունը հաշվի չէր առնում արդյունահանման և վերամշակման ընթացքում անխուսափելի կորուստները: Օրենսդրական փոփոխություններով արդյունահանված պաշարներից բնօգտագործման վճարի հաշվարկումից անցում է կատարվել իրացման հասույթից կախված ռոյալթիի հաշվարկմանը: Ստացվում է, որ փոփոխությունների արդյունքում բնօգտագործման վճարը և ռոյալթին միավորվել են միասնական հարկատեսակի մեջ:

Ըստ որոշ կարծիքների՝ կատարված փոփոխությունները որոշակիորեն հղկել են հարկային մեխանիզմները, սակայն չեն վերացրել դրանցում առկա անարդարացի մոտեցումները: Գործող օրենսդրության խնդրահարույց կողմերից մեկը, որը պահպանվել է նաև ներկայումս, վերաբերում է ծախսերի նվազեցումների մեխանիզմներին, որոնք սահմանված են ռոյալթիների հաշվարկման կարգով. Շահութաբերությունը որոշելիս հաշվի չեն առնվում հանքարդյունահանող ընկերության համար կենսական նշանակություն ունեցող ծախսերը, ինչպիսիք են, մասնավորապես, ամորտիզացիոն մասհանումները, ֆինանսական ծախսերը, նախորդ տարիների հարկային վնասները և այլն: Մյուս խնդրահարույց կողմն այն է, որ հասույթի որոշման ժամանակ պետությունը հիմք է ընդունում ոչ միայն հանքարդյունահանմամբ ուղղակիորեն պայմանավորված գործունեությունը. Եթե որևէ հանքարդյունահանող ձեռնարկություն իրականացնում է նաև հետագա վերամշակման բազմաթիվ

³ Анализ основных положений системы недропользования в зарубежных странах, подготовленный для Федерального собрания Государственной думы РФ ФГУ Центр «СРП-недра». – М. : Центр «СРП-недра». – Декабрь 2004 г., 167 ст.

փուլեր, ապա, որքան էլ դա տարօրինակ չհնչի, պետությունը ռոյալթիների հաշվարկման համար հիմք է ընդունում վերջնական արտադրանքի արժեքը: Ստացվում է, պետությունը պատժում է տնտեսվարողին՝ ավելի մեծ ավելացված արժեք ապահովելու համար, և դա, ըստ էության, խիստ անարդարացի է, քանի որ հետագա վերամշակման գործունեությունը բուն հանքարդյունահանման հետ ուղիղ առնչություն չունի, և չի կարելի, օրինակ, մետաղ ձուլելը, գտելը կամ վերամշակման խորացում ենթադրող այլ գործողությունները դիտել որպես ավելի մեծ չափերով բնօգտագործման վճար գանձելու հիմք: Պետության դիրքորոշումն այս հարցում, պետք է լինի հանքային հումքի հետագա վերամշակման խորացմանը հնարավորինս նպաստելը, ոչ թե հակառակը: Ըստ ֆինանսների նախարարության ներկայացուցչի՝ օրենսդրական փոփոխություններում պետությունն առաջնորդվել է 2 հիմնական փաստարկներով: <<Նախ և առաջ իրացման հասույթից ռոյալթիի հաշվարկումը կնպաստի ոլորտում նոր ներդրումների ներհոսքին, քանի որ, եթե ներկայումս կազմակերպությունից վճար է գանձվում անկախ իրացումից, ապա փոփոխությունների արդյունքում հանքարդյունահանողն այլևս չի կանգնի շրջանառու միջոցների անբավարարության ռիսկի առջև: Երկրորդ կարևոր փաստարկն այն է, որ մետաղների գները արագ են փոփոխվում միջազգային շուկայում, իսկ վերջին տարիներին գները հիմնականում աճի միտում են ունեցել, և մենք ուզում ենք ընդերքից գանձվող հարկերի չափը համահունչ դարձնել միջազգային գների աճին>>:⁴ Սակայն մասնագետների դիտարկմամբ այս փաստարկը միանշանակ չէ և ունի իր հակառակ կողմը. Դիտարկենք երկու հիպոթետիկ լրիվ նույնատիպ հանքավայրեր, որոնցից մեկում կա արդյունավետ աշխատող հանքարդյունահանող, որը կարողանում է բավականին մեծ արժեք կորզել և բարձր արժեքով իրացնել, իսկ մյուսում՝ ապաշնորհ հանքարդյունահանող, որը չի կարողանում արտադրություն կազմակերպել, ունի մեծ կորուստներ և ցածր արժեք արտադրանք: Գանձելով բնօգտագործման վճարը ընդերքում եղած մետաղի արժեքից՝ պետությունն անուղղակիորեն խրախուսում է արդյունավետ տնտեսվարումը, իսկ եթե կապենք վճարը իրացման արժեքի հետ, ստացվում է, որքան վատ կաշխատես, այնքան քիչ բնօգտագործման վճար կվճարես: Դա չի բխում արդյունավետ ընդերքօգտագործման շահերից: Մյուս կողմից, կան հանքավայրեր, որոնք շահագործելիս տնտեսվարողն ինչ առաջադեմ մեթոդներով էլ գործի, անհնար է կորզել այնքան, որքան կարելի էր տեսականորեն ակնկալել՝ նկատի ունենալով առկա պաշարների բացարձակ քանակությունը, և այս պայմաններում պահանջել, որ տնտեսվարողը վճարի ընդերքում եղած մետաղի մի-

⁴ <http://ekvator.ucoz.ru/00002/ROM/Page-1.html>

ջազգային գնի նկատմամբ որոշակի տոկոս, նույնպես անարդյունավետ է: Մակայն կառավարության համոզմամբ՝ փոփոխությունները համահունչ են միջազգային պրակտիկայի հետ, քանի որ միջազգային փորձում հարկման համար հիմք է ընդունվում հենց վաճառքի արժեքը: Գների բարձրացման դեպքում հարկի դրույքաչափը պրոգրեսիվ կերպով աճում է: Մինչդեռ, միջազգային լավագույն փորձից շեղումներ այդուհանդերձ ունենք: Ոլորտի առաջատար երկրներում, օրինակ, Ավստրալիայում՝ ռոյալթիները գանձվում են ընկերությունների շահույթից, այլ ոչ թե ընդերքում եղած մետաղի միջազգային գնից, որը հարկման հնարավոր ամենամեծ բազան է, այսինքն՝ Ավստրալիայում կիրառվում է շահույթի նկատմամբ, այլ ոչ թե ընդերքում եղած մետաղի, որը դեռ պետք է արդյունահանել, վերամշակել, ունենալ որոշակի կորուստներ, վաճառել, ի դեպ, բորսայականից ավելի ցածր գնով, որովհետև այն դեռևս վերջնական արտադրանք չէ, հանել բոլոր ծախսերը և վճարել պետությանը շահույթի 5-7%-ը: Այսուհանդերձ փոփոխության արդյունքում ավելացել է հարկերի հավաքագրումը ոլորտից, քանի որ նախկինում ոլորտից հավաքագրվող հարկերի ծավալը չէր համապատասխանում իրական ներուժին:

Բացի դրանից՝ ընդերքի նոր օրենսգիրքն առավել միտված է ընդերքօգտագործման ոլորտում ընթացակարգերի պարզեցմանն ու բարենպաստ գործարար միջավայրի ապահովմանը, ընդերքի շահագործման կարգն ու կանոնների, դրանք շահագործող իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների ու պարտականությունների կարգավորմանն, նաև հանքի փակման ընթացակարգերի հստակեցմանը, ինչի մասին շահագործողը պետք է հայտնի երկու տարի առաջ և համապատասխան ֆինանսական հաշվետվություններ կայացնի: Բացի այդ, հանքի փակումից հետո պետք է համապատասխան դիտարկում արվի: Այսպիսով՝ թեև ընդերքի մասին օրենսգիրքը որոշ չափով անդրադարձել է հասարակական կազմակերպությունների և փորձագետների կողմից հնչեցված մտահոգություններին, ուշադրությունից դուրս է թողել մի շարք կարևորագույն խնդիրներ: Օրինակ՝ օրենսգիրքը չի արտացոլել ընդերքի պաշարների հասարակության բոլոր անդամների համընդհանուր բարիք հանդիսանալու և դրանցից ստացվող եկամուտների նրկատմամբ բոլոր քաղաքացիների շահերը պաշտպանելու անհրաժեշտությունը: Այն շեղվել է ՀՀ կողմից որդեգրած կայուն զարգացման հայեցակարգից և անտեսել է բնական ռեսուրսների արդյունավետ շահագործման, շրջակա միջավայրի համար առավել բարենպաստ առաջադեմ տեխնոլոգիաների ընդերքօգտագործման արգելման, շրջակա միջավայրի աղտոտման և այլ հիմնահարցերը:⁵

⁵ <http://www.russobras.ru/constitution.php>

Օրենսգրքով չեն ամրագրվում ընդերքի պաշարների բանական և համալիր օգտագործման նախադրյալներ՝ հաշվի առնելով ինչպես ներկա, այնպես էլ ապագա սերունդների շահերը, սոցիալական արդարությունն ու մարդու իրավունքները: Ընդերքօգտագործման համար, ըստ էության, գրեթե նախատեսված չեն սահմանափակումներ և դրա հիմքում առկա չէ ազգային հարստության շահագործման և դրա արդյունքում ստացվող օգուտների բաշխման պետական ռազմավարություն: Չկան օգտակար հանածոների առավելագույն կորզումը և մշակումը, հանքավայրերի պաշարների համալիր օգտագործումը խրախուսող և առավել առաջադեմ (այդ թվում՝ նաև նվազագույն էկոլոգիական վնաս հասցնող) տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառումը խթանող դրույթներ: Այսպիսով՝ հնարավորություն է ընձեռվում յուրաքանչյուր՝ զուտ մի քանի չափանիշների բավարարող անձի ցանկացած ժամանակահատվածում, ցանկացած մեթոդով շահագործել կամ հետագա շահագործման ակնկալիքով ուսումնասիրել ցանկացած օգտակար հանածոյի հանքավայր:

Բնապահպաններին անհանգստացնում է այն հանգամանքը, որ նոր օրենսգրքը թույլ է տալիս հանքարդյունաբերության ոլորտի գործարարներին թափոնները և ոչ արդյունագործական նշանակության ապարները հարկային դաշտ չհանել: Նոր օրենսգրքում նաև քողարկված է թափոնների սահմանումը: Ճշգրիտ սահմանումների փոխարեն, ինչպես օրինակ՝ պոչամբարներ, մակաշերտի ապարներ, ոչ արդյունագործական նշանակության հանքանյութեր և այլն, օրենսգրքում կիրառվում է «հանքանյութի արդյունահանման և վերամշակման ընթացքում առաջացած ապարների կուտակումներ» ձևակերպումը: Եթե օգտագործվեր առաջին սահմանումը, ապա ընկերությունները թափոնների դեպքում կվճարեին՝ համաձայն <<Թափոնների մասին>> ՀՀ օրենքի: Իսկ ապարների կուտակման համար ընկերությունները չեն վճարում, քանի որ ոչ մի օրենքում նման պարտավորություն չկա: Մինչև նույն ժամանակ, անլուծելի է մնում <<ապարների կուտակման>> հետևանքով բնակչության առողջության և էկոլոգիական վիճակի վատթարացման փոխհատուցման խնդիրը:

Հանրապետության տարածքում առկա են օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման 15 պոչամբարներ, որոնց ծավալները անցնում են միքանի մլն. խոր. մ-ից զբաղեցնում են մոտ 700 հա ընդհանուր մակերես: Ներկայումս պոչամբարներում կուտակված օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքում առաջացած արտադրական թափոնները չեն օգտագործվում, չնայած դրանք պարունակում են մեծ քանակությամբ բազմամետաղներ: Բացի այդ օրենսգրքում թվարկվում է, թե որտեղ չի կարելի ընդերքօգտագործմամբ զբաղվել, և այդ ցուցակում անտառը չի նշվում, թեև, ինչպես հայտ-

նի է, հանքարդյունաբերության մեծ մասը կապված է հենց անտառային տարածքների հետ: Այլ կերպ ասած՝ հնարավորություն է ստեղծվում <<քողարկելու>> անտառներն այլ կատեգորիայի տակ, ինչը նույնպես լի է էկոլոգիական հետևանքներով, և այլն:

ՀՀ կառավարությունը սահմանել է հանքարդյունաբերության ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկման իրականացման և այդ նպատակով վճարի չափերի հաշվարկման և վճարման կարգերը: Նպատակն է Հայաստանի ընդերքօգտագործումը <<Ընդերքի մասին>> ՀՀ օրենսգրքի նոր պահանջներին համապատասխանեցնել: Ինչպես նշված է կառավարության այս որոշման փաստաթղթերում, մշտադիտարկումների իրականացումը հնարավորություն կընձեռի ստեղծել տեղեկատվական հենք՝ հանքերի փակումից հետո շրջակա միջավայրի և բնակչության առողջության ու անվտանգության վրա օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի ազդեցությունը նվազեցնելու համար:

ЗАКОНОДАТЕЛЬНАЯ БАЗА ГОРНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В РА

Ашот Мардоян

Преподаватель Армянского государственного экономического университета, заведующий кафедрой управления и информационных технологий международного университета Евразия, кандидат экономических наук, доцент

Ключевые слова: горное промышленность, недропользование, законодательство, менеджмент, эффективность.

В пределах статьи представлены несовершенства в законодательстве горнопромышленной сферы РА, выявлены имеющиеся недостатки и представлен пакет предложений для урегулирования этой сферы.

THE LAWS FOR MINING INDUSTRY IN REPUBLIC of ARMENIA

Ashot Mardoyan

Lecturer at Armenian State University of Economics, Head of Management and Information Technology Department at Eurasia International University, PhD in Economics, Associate professor

Keywords: mining, soil, legislation, management, effectiveness.

The article covers the legislative deficiencies in mining industry in Armenia, as well as the reasons for the deficiencies. The article offers a number of ways as to how to improve the situation in this respect.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Աշուտ Մարդոյան

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս,
Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և տեղեկատվական
տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Բանալի բառեր` ընդերքօգտագործում, ռեսուրսներ, արդյունավետություն, հիմնախնդիրներ, զարգացում:

Հանքարդյունաբերությունը, լինելով ՀՀ արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկը, էական դեր է խաղում ինչպես ոլորտի, այնպես էլ ողջ տնտեսության զարգացման գործում` կազմելով 2013 թվականին ՀՆԱ-ի շուրջ 4.7%-ը, իսկ արդյունաբերության մեջ` 15.8%-ը: Փաստենք նաև, որ 2013 թվականին վերամշակող արդյունաբերությունը կազմել է ոլորտի 62.6%-ը¹: Արդյունաբերական ներուժը յուրաքանչյուր երկրի` ներքին ռեսուրսներով ապահովվածության կարևորագույն ցուցանիշներից մեկն է, այդ իսկ պատճառով այժմ մեծ նշանակություն է տրվում արդյունաբերության ոլորտի հատկապես որակական զարգացման հեռանկարին (շեշտը դնելով հանքարդյունաբերական արտադրանքի մշակման որակի բարձրացման և սկզբնական սպառման շղթայի ապահովման վրա), ինչը թույլ կտա ապահովել առկա ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրաստիճան, հետևաբար` լրացուցիչ եկամուտներ:

Հատկանշական է, որ 2011թ. արդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալի 13.9% աճը, 2012 թվականին դարձել է 8.8%, իսկ 2013 թվականին 6.9%: Այս բացասական միտումն իհարկե մտահոգիչ է, և դրա հիմնական պատճառ կարող ենք համարել երկրում օտարերկրյա ուղղարկի ներդրումների նվազման միտումը, այսպես օրինակ, 2009 թ.-ին ՀՀ ՕՈՒՆ-երը կազմել է 828 մլն ԱՄՆ դոլար, 2010թ.-ին 536 մլն ԱՄՆ դոլար, 2011թ.-ին 703 մլն, իսկ 2012թ. այն կազմել է ընդամենը 599 մլն ԱՄՆ դոլար²: Այս թվերն խոսքում են այն մասին, որ ներդրումային դաշտն այնքան էլ հրապուրիչ չէ օտարերկրյա ներդրողների համար և այստեղ ՀՀ կառավարությունը բավականին գործ ունի անելու:

Հենց այս նկատառումներով է, որ հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը կարևորվում է պետական մակարդակով, ինչն առավել ակնհայտ դարձավ ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում հանքարդյունաբերության ոլորտին ցուցաբերած պետական մեծ աջակցու-

¹ <http://armstat.am/file/doc/99489228.pdf>

² <http://armstat.am/file/doc/99489293.pdf>

թյամբ. ՀՀ Կառավարությունը 2009 թվականին մոտ 40 մլն դոլարի վարկ տրամադրեց այս ոլորտի 4 խոշոր ընկերությունների, ինչը հնարավորություն տվեց վերջիններիս հաղթահարելու ժամանակաշրջանի խնդիրները և շարունակելու արտադրությունը՝ ապահովելով կայուն աճ³:

Հանքարդյունաբերության ոլորտի նշանակությունը մեծ է նաև պետական բյուջեի եկամտային մասի լրացման առումով: Խոշոր հարկատուների ցանկում առանձնանում են հատկապես այս ոլորտի ընկերությունները. Որպես օրինակ կարելի է նշել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը», որը 2014 թվականի երրորդ եռամսյակի կտրվածքով 1000 խոշոր հարկատուների ցանկում զբաղեցրել է 5-րդ տեղը՝ 12.8 մլրդ-ի չափով վճարված հարկերով, իսկ մինչ ճգնաժամային տարիներին երկրի ամենախոշոր հարկատու ընկերությունն էր⁴:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի դերը հատկապես զգալի է արտաքին առևտրում, ինչն արտահայտվում է նաև այս բնագավառի արտահանման և ներմուծման ցուցանիշների տարեցտարի մեծացմամբ: Արտահանման մեջ մեծ տեղ է գրավում թանկարժեք մետաղների և քարերի արտահանումը, ընդորում, անհրաժեշտ է նշել, որ հանքարդյունաբերական արտադրանքը, որպես կանոն, արտահանվում է մշակման ցածր մակարդակով, հետևաբար՝ ցածր որակ է ու միջազգային շուկայում սպառվում է ցածր գնով: Այլ կերպ ասած՝ արտահանման մեծ գումարային ծավալներն ապահովվում են քանակական և ոչ թե որակական ցուցանիշների բարելավման հիման վրա:

Հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող արտաքին առևտրի սալդոն թույլ է տալիս եզրակացնել նաև, որ արտահանվող որոշ ապրանքային խմբեր ոչ թե արտահանման, այլ ներքին շուկայում սպառման և որպես սպառողական արտադրանք ձևավորվելու խնդիր ունեն: Հետևաբար՝ անհրաժեշտ է երկրի ներքում զարգացնել սեփական հումքի օգտագործման հնարավորությունները:

Հանքարդյունաբերության հնարավորությունները, բացի տեխնոլոգիական և մարդկային ռեսուրսների անհրաժեշտությունից, հազեցվածությունից և որակից, նախևառաջ կախված են երկրի հանքահումքային ռեսուրսների առկայությունից, այլ կերպ ասած՝ երկրի ընդերքում առկա հումքից և դրա քանակից: Ուստի, ոլորտի զարգացման հեռանկարները դիտարկելիս, նախևառաջ անհրաժեշտ է ուսումնասիրել առկա հանքերի օգտագործման աստիճանը, ընդերքօգտագործման ներկա վիճակը, զարգացման հնարավոր ուղիները:

Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած տվյալների՝ ՀՀ ընդերքի հետազոտության արդյունքում հայտնաբերվել է օգտակար հա-

³ ՀՀ 2014-2015թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, 6 էջ

⁴ http://www.taxinfo.am/upload/KB%20488_1415021758777.pdf

նաճոնների ավելի քան 670 հանքավայր: Երկրի տարածքում հայտնաբերվել է մետաղների ավելի քան 38 տեսակ, սակայն պաշարների պետական հաշվեկշռում հաշվառվել, հետազոտվել և նախնական գնահատման են ենթարկվել միայն 18 տեսակ մետաղների պաշարներ:

Նույն աղբյուրի համաձայն՝ երկաթի հանքաքարի արդյունաբերական պաշարները հաշվվում են մոտ մի քանի հարյուր միլիոն տոննա, պղինձի, կապարի և ցինկի պաշարները՝ մի քանի միլիոն տոննա, մոլիբդենինը՝ մի քանի հարյուր հազար տոննա, ոսկունն ու արծաթինը միասին՝ մի քանի հազար տոննա: Երկաթի հանքավայրերում հանքաքարում երկաթի միջին պարունակությունը կազմում է 30%, պղնձինը պղինձ-պիրիտային հանքավայրերում՝ 3,5%, իսկ պղինձ-մոլիբդենային և ոսկի-բազմամետաղային համալիր հանքավայրերում՝ 0,3%: Կապարի և ցինկի միջին պարունակությունը բազմամետաղային հանքավայրերում, համապատասխանաբար, կազմում է 1,1% և 2,8%: Ոսկու միջին պարունակությունը ոսկու հանքավայրերում կազմում է 7 գ/տ, իսկ արծաթինը՝ 13,5գ/տ:

Մետաղական հանքավայրերում կան նաև կադմիումի, բիսմութի, գալիումի, թալիումի, թելուրի ու մի և ծծմբի զգալի պաշարներ: Այդ իսկ պատճառով այժմ հանքավայրերի վերադիտարկման և վերագնահատման անհրաժեշտություն կա: Նշված հանքավայրերից շատերը հնարավոր չէ օգտագործել նույն արդյունավետությամբ, որոշներում անհրաժեշտ է իրականացնել ներդրումներ վերազինման և հետազոտություններ սկսելու ու վերսկսելու նպատակով⁵:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքի շահագործման ծախսերը մի քանի անգամ փոքր են, քան շահագործումից ստացված մասնավոր եկամուտները և տնտեսական արդյունքը՝ վերոնշյալ ներդրումները և պետական լրահատկացումն ավելի քան արդարացված կարելի է համարել:

Հարկ է նշել, որ Հայաստանի տարածքում հայտնաբերվել են գունավոր, ազնիվ, ռադիոակտիվ և սև մետաղների մոտ 300 երևակումներ: Դրանցից շատերը համարվում են հեռանկարային: Ներկայումս առանձնահատուկ նշանակություն են ձեռքբերում հանքաքարի բարձրորակով և տնտեսաաշխարհագրական, ինչպես նաև լեռնաերկրաբանական բարենպաստ պայմաններով աչքի ընկնող փոքր հանքավայրերը: Շուրջ 150 այդպիսի հանքավայրերի առկայություն է ենթադրվում սև և գունավոր մետաղների բազմաթիվ երևակումներում:

Սակայն մյուս կողմից ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի մասնագետները, ներկայացնելով «ՀՀ գյուղմթերքների ծանր մե-

⁵ <http://www.minenergy.am/page/472>

տաղներով աղտոտման ռիսկի գնահատում>> ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքները, նշելեն, որ հանրապետության տարբեր շրջաններում հողագրունտի ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ հանքարդյունահանման հետևանքներն այսօր արդեն անթույլատրելի են և անվերահսկելի⁶:

Այս խնդրի շրջանակներում նպատակային է նաև դիտարկել երկրի ներդրումային քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականությամբ, ինչը հաստատված է ինչպես երկրի ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներով, այնպես էլ արտահայտված է օրենսդրական աջակցությամբ:

Ոլորտում ներդրումների պասիվությունը, բացի ընդհանուր ՀՀ ներդրումային ոլորտին հատուկ ռիսկայնության, կառավարման, ենթակառուցվածքային և այլ թերություններից, պայմանավորված է հետևյալ բացասական գործոններով.

- Ոլորտի հագեցվածություն,
- Նոր գործունեություն սկսելու հետ կապված մեծ ծախսեր,
- Արդյունաբերության ոլորտում՝ միկրոմակարդակում հետազոտությունների և վերլուծությունների պակաս, տեղեկատվական բազայի բացակայություն,
- Ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգերի կայացման ոչ պատշաճ մակարդակ,
- Հայաստանում հումքային արտադրատեսակների՝ վերջնական արտադրանքի վերածման շղթայի բացակայություն,
- արտադրություն-գիտություն-կրթություն կապի սերտ համագործակցության բացակայություն և հետադարձ թույլ կապ,
- պետական աջակցության մեխանիզմների և գործիքների սահմանափակություն:

Հարկ է նշել, որ նման պարագայում առավել նպատակահարմար է ոչ թե նոր ընկերություն ստեղծելու միջոցով ներդրումների իրականացումը, այլ գործող ընկերություններում ներդրումների կատարումը: Նման ներդրումները կարող են ուղղվել հատկապես արտադրական և տեխնոլոգիական վերազինմանը, որը կհանգեցնի արտահանվող հանքարդյունաբերական արտադրանքի որակական բարելավմանը, իրական դրամական ծավալի մեծացմանը, երկրում ներքին դրամաշրջանառության աճին՝ իր բոլոր տնտեսական դրական հետևանքներով: Այսպիսով՝ մետաղական օգտակար հանածոների հան-

⁶ <http://ecocentre.am/general-information/>

քավայրերի շահագործման արդյունավետության բարձրացման նպատակով կարելի է.

- 1) հանքաքարի վերամշակման և պոչամբարներում կուտակված օգտակար հանածոների կորզման ժամանակ կիրառել նորագույն տեխնոլոգիաներ, ինչպես նաև ապահովել ապրանքային տեսք ստացած մետաղյա ձուլածոների արտադրության կազմակերպում՝ դրանց իրացումից ավելի մեծ ՀՆԱ-ի աճ ապահովելու համար,
- 2) նշված խնդիրը իրականացնելու, ոլորտում մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով անհրաժեշտ է մշակել և կիրառել ներդրողների համար առավել գրավիչ իրավական և տնտեսական մեխանիզմներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացնել վարկային և ֆինկալ ճկուն քաղաքականություն՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և ապրանքային տեսք ստացած մետաղյա ձուլածոների արտադրություն կազմակերպելու համար:
Իսկ ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման զարգացումն ապահովելու նպատակով կարելի է.

- 1) ընտրել առավել շահութաբեր և տնտեսության համար կարևոր արտադրատեսակները, պահպանված գործարաններից մի քանիսը դասակարգել ըստ այդ արտադրատեսակների արտադրության համար կարևորություն ունեցող առաջնայնության և կազմակերպել ընտրված արտադրատեսակների արտադրությունը: Դրանով կապահովվի ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման միջազգային նոր տեխնոլոգիաների ներմուծումը Հայաստան և առաջնահերթ մի շարք արտադրատեսակների արտադրությունը՝ ներքին շուկայի պահանջարկներից ելնելով: Այդպիսով, այդ գործարաններն ու արտադրատեսակները կստանան նաև ոլորտի զարգացման «լոկոմոտիվի» դերը՝ միևնույն ժամանակ ուղի հարթելով դեպի միջազգային շուկա,
- 2) պետական աջակցություն ցուցաբերել ձեռնարկությունների և արտադրատեսակների համար բանկերի համար ընդունելի բիզնես-ծրագրերի մշակման խնդրում,
- 3) պետականորեն աջակցել հայրենական շահագրգիռ խմբերին իրենց բիզնես-ծրագրերի՝ միջազգային ֆինանսական կազմակերպություններին և առանձին ներդրողներին ներկայացման հարցում,
- 4) շահագրգիռ խմբերի և համապատասխան գործարանների սեփականատերերի հետ քննարկել ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման «Հոլդինգի» ստեղծման հնարավորությունը՝ որպես տարբերակ դիտարկելով նաև պետության մասնակցության հնարավորությունը,

- 5) հավանության արժանացած նախագծերի իրականացումն ու արտադրությունների հետագա շահագործումը կառավարելու նպատակով յուրաքանչյուր նախագծում պետական մասնակցության աստիճանի վերաբերյալ սահմանել.
- ա. սեփականության կառուցվածքը, պետական մասնաբաժնի մեծությունը,
- բ. պետական բաժնետոմսերի հետագայում վերավաճառելու քաղաքականությունը և ժամկետները,
- գ. կառավարության աջակցությամբ վարկային միջոցների ներգրավման նպատակահարմարությունը,
- դ. ֆինանսական այլ աղբյուրներից վարկային միջոցների ներգրավման նպատակահարմարությունը,
- ե. արտոնությունների տրամադրման նպատակահարմարություն (ներմուծված սարքավորումների համար ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգում և այլն):

Հանքահումքային հենքի վերարտադրության ապահովման նպատակով կարելի է.

- 1) ընդերքօգտագործման ոլորտի նոր օրենսդրության համաձայն վճարվող գումարների հաշվին ստեղծել կուտակային ֆոնդ և կուտակված միջոցներն ուղղել հանքահումքային հենքի վերարտադրությանը՝ ֆոնդում կուտակվող հավելյալ միջոցները, որոնք կարող են առաջանալ միջազգային շուկայում իրացվող ընդերքօգտագործման պատրաստի արտադրանքի գների աճի արդյունքում, կարող են ուղղվել տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանը, հանրապետության սոցիալական ապահովության և կրթական համակարգի հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև հանրապետության պաշտպանունակության ամրապնդմանը (նման մոտեցում կիրառվում է օրգանական վառելիքների պաշարներով հարուստ և դրանք միջազգային շուկաներում իրացնող պետությունների կողմից),
- 2) նախկինում կատարված որոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերված, Պետական հաշվեկշռում գրանցված և նախնական գնահատված (երկաթի՝ 278855 հազ. տ, պղնձի՝ 162 հազ. տ, ցինկի՝ 238,68 հազ.տ, մանգանի՝ 8770,36 հազ. տ և կապարի՝ 74,44 հազ. տ) երևակումների տարածքներում երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով մասնավոր ընկերություններ ներգրավելու համար անհրաժեշտ է իրականացնել լայնածավալ գովազդային արշավ՝ նախապատվություն չտալով որևէ օգտակար հանածոյին, քանի որ դրանցից յուրաքանչյուրի մանրակրկիտ ուսումնասիրությունը, պաշարների հաստատումը և հետագա շահագործումը հավասարաչափ կնպաստի պետության տնտեսության զարգացմանը:

- 3) Մետաղների միջազգային գների տատանումներից անկախ ազնիվ, գունավոր և հազվագույտ մետաղների պահանջարկը շուկայում գնալով մեծանում է, որն իր հերթին կնպաստի մետաղական օգտակար հանածոների առկա պաշարների ավելի արագ սպառմանը, քան կանխատեսվում է պետական հաշվեկշռում գրանցված թվերով: Պաշարների վերջնական սպառումը կանխելու նպատակով անհրաժեշտ է դրանց առաջանցիկ աճի և վերարտադրության ապահովում՝ երկրաբանական ուսումնասիրությունների միջոցով: Այդ ուսումնասիրությունները պարունակում են բարձր ռիսկային գործոն ներդրողների համար, քանի որ, ըստ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների, 10 երևակումներից երկրաբանական երկարատև աշխատանքների արդյունքում միայն մեկն է դառնում հանքավայր,
- 4) մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու համար տրամադրված 51 տեղամասերից, առավելագույն դեպքում հանքավայր կդառնան 5-10-ը: Առաջիկա 20 տարիների ընթացքում նոր մետաղական օգտակար հանածոների (հատկապես ոսկի բազմամետաղային) հանքավայրեր չհայտնաբերելու դեպքում հանրապետությունում կնկատվի պաշարների վերջնական սպառում: Հետևաբար հանքահումքային հենքի վերարտադրությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մեկ օր շուտ սկսել որոնողահետախուզական աշխատանքների իրականացումը
- 5) ներկայումս հանրապետությունում ավանդաբար արդյունահանվող մետաղական օգտակար հանածոների՝ ոսկի, արծաթ, մոլիբդեն և այլն, Պետական հաշվեկշռում գրանցված և նախնական ուսումնասիրված պաշարներ չկան: Ոլորտի զարգացման ռազմավարական քաղաքականության հիմնաքար պետք է ընդունել ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների նորանոր պաշարների հայտնաբերումը, որի նպատակով անհրաժեշտ է պետական միջոցների հաշվին իրականացնել ընդերքի առավել խորը հորիզոնների նախնական երկրաբանական ուսումնասիրություններ՝ նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ, որի արդյունքում հնարավոր կլինի բացահայտել օգտակար հանածոների նոր երևակումներ և գնահատել դրանց կանխատեսումային ռեսուրսները,
- 6) հին մեթոդներով նավթի ու գազի որոնողական աշխատանքները պահանջում են մեծածավալ ներդրումներ, ինչի համար հանրապետության տարածքում նավթի ու գազի որոնողական աշխատանքներում ներգրավված են մասնավոր կազմակերպություններ: Ժամանակակից եղանակների (արբանյակային, սպեկտրալ, հեռակառավարման և այլն) կիրառումը

կնվազեցնի նախնական ուսումնասիրությունների համար պահանջվող ծախսերը,

- 7) տեղական և օտարերկրյա ներդրումների համար ավելի գրավիչ պայմաններ ստեղծելու նպատակով առաջարկվում է նավթի ու գազի որոնողական աշխատանքների նախնական փուլը կատարվի պետության կողմից, նորագույն ավելի պակաս ծախսատար եղանակների կիրառմամբ, հետագայում հայտնաբերված հեռանկարային տարածքների մասին գովազդային արշավի կազմակերպման և մասնագիտացված ընկերություններին հետախուզական աշխատանքների իրականացմանը, պետության համար ավելի բարենպաստ պայմաններով ներգրավման նպատակով,
- 8) վառելիքաէներգետիկ հումքի լրացուցիչ աղբյուր ստեղծելու նպատակով այրվող թերթաքարերի վերամշակումից բնական գազի ստացման համար ներկայումս համաշխարհային պրակտիկայում կիրառվում են նորագույն տեխնոլոգիաներ: Հանրապետությունում այրվող թերթաքարերի նախնական գնահատաված պաշարները կազմում են նվազագույնը 212145,5 հազ. տ, որոնց վերոնշյալ տեխնոլոգիաներում օգտագործելու նպատակով առաջարկվում է մշակել համապատասխան պետական ծրագրեր՝ ԱՄՆ-ի մասնագիտացված կազմակերպությունների աջակցությամբ մանրակրկիտ ուսումնասիրություններ իրականացնելու և պարզելու առկա վառելիքաէներգետիկ հումքի պաշարների քանակական ու որակական հատկանիշները, բնական լեռնատեխնիկական պայմանները, ինչպես նաև դրանց կիրառելիությունը միջազգային պրակտիկայում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորություններին:

Իսկ ինչ վերաբերում է երկրաջերմային էներգիայի աղբյուրների հեռանկարային տեղամասերի հայտնաբերմանը, դրա համար հետազոտություններն արդեն իսկ իրականացվել և շարունակում են իրականացվել պետության աջակցությամբ ներգրաված միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջոցների հաշվին: Առաջարկվում է շարունակել այդ տարածքների ուսումնասիրությունները իրականացնել առավելագույնս նման կազմակերպությունների կողմից տրամադրվող տեխնիկական աջակցությունների հաշվին և դրական արդյունքների դեպքում պետության համար ավելի շահութաբեր պայմաններով վերջիններս վաճառել մասնավոր ընկերություններին:

ПЕРСПЕКТИВИ НЕДРОПОЛЬЗОВАНИЯ В РА

Ашот Мардоян

*Преподаватель Армянского государственного экономического университета,
заведующий кафедрой управления и информационных технологий
международного университета Евразия, кандидат экономических наук, доцент*

Ключевые слова: недропользование, ресурсы, эффективность, проблемы, развитие.

В статье представлены настоящее состояние недропользования в РА, имеющиеся недостатки в сфере государственного управления, и на основе этих выводов сделаны соответствующие предложения для урегулирования этой сферы.

THE PERSPECTIVES IN MINERAL RESOURCES USE IN REPUBLIC of ARMENIA

Ashot Mardoyan

*Lecturer at Armenian State University of Economics,
Head of Management and Information Technology Department
at Eurasia International University, PhD in Economics, Associate professor*

Keywords: soil, resources, effectiveness, problems, development.

The article presents the current situation in the use of mineral resources in Republic of Armenia, as well as the current deficiencies and negligences in the area of state management. Based on this, the author of the article draws relevant conclusions and offers some ways as to how to regulate the situation in this area.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Աշոտ Մարկոսյան

*Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Արտաշես Եղիազարով

*«Ռոսգոսստրախ Արմենիա» ընկերություն,
Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանի հայցորդ*

Բանալի բառեր՝ շինարարություն, շինարարական կազմակերպություն, շինարարության ցուցանիշներ, շինարարության ծավալներ, շինարարության ֆինանսավորման աղբյուրներ, վարկեր, շինարարական կազմակերպությունների պարտքեր

Ցանկացած երկրում շինարարությունը տնտեսության հիմնական ճյուղերից մեկն է: Այդ հանգամանքը բացատրվում է շինարարության կարևորությամբ և այն վերարտադրական գործառույթներով, որն ունի միայն շինարարությունը: Տնտեսության այս ոլորտում կատարված ծախսերը հետագայում ձևավորում են ամբողջ երկրի ինչպես բնականոն գործունեության, տնտեսության, այնպես էլ նրա քաղաքացիների ապրելու և աշխատելու համար պայմանները (ինչը պայմանավորված է շինարարության ժամանակի հետաձգված (լազի) ազդեցության մեծությամբ), առանց որոնց չի կարող կազմակերպվել կյանքի վերարտադրության անհրաժեշտ սոցիալ-տնտեսական միջավայրը: Շինարարության միջոցով երկրի քաղաքացիներն ապահովվում են բնակարաններով և ժամանակավոր կացարաններով, որոնք համարվում են մարդու առաջնահերթ կամ կենսական նախապայմանները (թերևս ուտելիքից և ջրից հետո): Յուրաքանչյուր քաղաքի կամ գյուղի ներսում, ինչպես նաև դրանց միջև հաղորդակցությունը ապահովվում է սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների միջոցով (ճանապարհներ, թունելներ, կամուրջներ և այլն), որոնք նույնպես լայնածավալ շինարարության արդյունք են: Հաղորդակցական ժամանակակից ուղիների (հեռախոսային, համացանցի և այլն), այդ թվում՝ միջազգային կապի գործարկումը նույնպես անհնար է առանց նախնական շինարարական գործունեության: Գյուղատնտեսության մեջ, հատկապես Հայաստանի Հանրապետության պայմաններում, որն աչքի է ընկնում չոր և ցամաքային բնակլիմայական պայմաններով, առանց ոռոգման համակարգի չի կարելի ակնկալել բարձր բերքատվություն և մթերատվություն: Թե՛ ներհամայնքային և թե՛ միջհամայն-

քային ոռոգման համակարգի, պահեստների, սառցարանների, շտեմարանների (որտեղ պահվում է աճեցված և հավաքված բերքը) ստեղծումը նույնպես շինարարության արդյունք է: Արդյունաբերական ձեռնարկությունները մինչև չկառուցվեն և վերակառուցվեն չեն կարող մարդկանց ապահովել աշխատատեղերով: Մինչև որևէ երկրում չկառուցվեն բարձրորակ և արագընթաց ճանապարհներ, հյուրանոցներ, հանգստի և զվարճանքի օբյեկտներ ու կառույցներ, այդ երկրում չի կարող զարգանալ տուրիզմը: Ընդերքի յուրացումը նույնպես առանց շինարարության չի կարող իրականացվել:

Այսինքն, առանց շինարարության արտադրանքի չի կարող գոյատևել և ոչ մի երկիր, կամ այլ կերպ ասած շինարարական գործունեության արդյունքում ձևավորվում է տվյալ երկրի և նրա հասարակության զարգացումն ապահովող հիմնակմախքը: Դա այն հիմնաքարն է, որը պայմաններ և միջավայր է ձևավորում մարդկանց ապրելու, աշխատելու և հանգստի համար: Վերջ ի վերջո շինարարական գործունեությունը ավարտուն տեսք է ընդունում հիմնական միջոցների ձևով, որոնք կազմում են ցանկացած երկրի, այդ թվում Հայաստանի Հանրապետության, ազգային հարստության կարևորագույն մասը: Դասական առումով շինարարությունը արդյունաբերության և գյուղատնտեսության հետ միասին կազմում է տնտեսության իրական հատվածը, որը ստեղծում է նյութական արժեքներ և բարիքներ:

Շինարարության հիմնական ցուցանիշները և ոլորտի կազմակերպությունների հիմնական միջոցները: Աղյուսակ 1-ում բերված են Հայաստանի Հանրապետության շինարարության հիմնական ցուցանիշները: Այդ ցուցանիշների շարքում առաջին հերթին առանձնանում է շինարարության, որպես տնտեսական գործունեության տեսակի, գործունեության արդյունավետությունն, այն է՝ հիմնական միջոցների գործարկումը: 2000-2013թթ.-ին հիմնական միջոցների գործարկման ծավալներն ավելացել են 335,8%-ով, թեև պետք է նկատել, որ 2011թ.-ին 2010թ.-ի համեմատ այդ ցուցանիշն ունեցել է նվազման միտում (10,8%-ով), ինչը բացատրվում է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքներով, իսկ նշված ժամանակահատվածում հիմնական միջոցների գործարկման ցուցանիշն իր գագաթնակետին է հասել 2008թ.-ին (կազմելով 666750,3 մլն դրամ, առանց ԱԱՀ-ի), որը 2000թ.-ի ցուցանիշը գերազանցում է շուրջ 7,5 անգամ: Նշված տարիների ընթացքում 499,9%-ով ավելացել են շինարարության ծավալները (2011թ.-ը 2000թ.-ի նկատմամբ), իսկ շինարարության ծավալների ամենաբարձր ցուցանիշը նույնպես գրանցվել է 2008թ.-ին, որը 2000թ.-ի համեմատ ավելացել է 8,5 անգամ:

Կարևոր է նկատել, որ շինարարության կազմում շինմոնտաժային աշխատանքները 2013թ.-ին 2000թ.-ի համեմատ ավելացել են 448,4%-ով, սարքավորումների, գործիքների և գույքի արժեքը 736,9%-ով, այլ կապիտալ ծախսերինը՝

274,0%-ով: 2010թ.-ին բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի գործարկումը 2000թ.-ի ցուցանիշին գերազանցել է 276,9%-ով, 2013թ.-ին՝ 165,1%: Այսինքն, անցած տասնամյակի ընթացքում հանրապետությունում էապես բարելավվել են շինարարության հիմնական ցուցանիշները, ինչը ուղորտում կատարված ճիշտ ներդրումային քաղաքականության հետևանք է, ինչպես նաև պայմանավորված է շինարարության արդյունաբերության առանցքը կազմող սարքավորումների, գործիքների և գույքի առաջանցիկ աճով, ինչպես շինարարության ծավալների, շինմոնտաժային աշխատանքների, այնպես էլ այլ կապիտալ ծախսերի համեմատությամբ: Կարելի է նաև եզրակացնել, որ շինարարության արդյունաբերությունը անցած տարիներին ամրապնդել է իր նյութատեխնիկական բազան և, առանձնապես, դրա ակտիվ մասը, ինչը լուրջ երաշխիք է առաջիկայում շինարարության հնարավորությունների, առաջին հերթին, շինմոնտաժային աշխատանքների, ինչպես նաև հիմնական միջոցների գործարկման ծավալների ընդլայնման համար:

Աղյուսակ 1

ՀՀ շինարարության հիմնական ցուցանիշները
2000-2013 թվականներին (ընթացիկ գներով, մլն դրամ)

Ցուցանիշը	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հիմնական միջոցների գործարկումը	89514	309683.3	515089.0	666750.3	365830.2	368767.5	328635.0	566973.2	300564.8
Շինարարության ծավալը, ընդամենը, այդ թվում՝	100990	435124.8	671029.0	858680.1	579740.7	588807.7	504824.5	479415.6	453449.3
շինմոնտաժային աշխատանքներ	88211	396852.0	609712.4	785472.3	469199.6	504150.7	405705.8	417046.3	395572.8
սարքավորումներ, գործիքներ, գույք	4940	22783.5	25993.1	25548.2	85018.9	38413.9	77407.6	42250.1	36400.5
այլ կապիտալ ծախսեր	7839	15489.3	35323.5	47659.6	25522.2	46243.1	21711.1	20119.2	21476.0
Բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի գործարկումը, հազ. մ ²	194	353.3	480.5	521.1	435.0	520.3	571.2	425.2	320.2

Աղբյուրը. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, էջ 320, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, էջ 317, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, էջ 310, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, էջ 316, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, էջ 312:

Աղյուսակ 2-ում ներկայացված են շինարարության հիմնական ցուցանիշների ինդեքսները (համաթվերը) 2000-2013 թվականներին: Նշված ժամանակահատվածի՝ 2000-2008թթ.-ին հիմնական ցուցանիշների ինդեքսներն ունեցել են աճի միտում, սկսած 2009թ.-ից՝ նվազում, որի պատճառը համաշխարհային տնտեսական ճգնաժամն է, ինչի հետևանքով նվազել է շինարարության արտադրանքի նկատմամբ պահանջարկը: Էապես նվազել է հատկապես բնակչու-

թյան կողմից բնակելի շենքերի գործարկման ցուցանիշը, ինչը և՛ տնտեսական ճգնաժամի, և՛ երկրից բնակչության արտագաղթի արդյունք է:

Աղյուսակներ 3 և 4-ում բերված են 2012թ.-ին և 2013թ.-ին ՀՀ-ում իրականացված շինարարության ծավալների մասին տեղեկատվությունը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների: Աղյուսակ 3-ի տվյալները վկայում են, որ շինարարության 49,2%-ը, այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքների 45,3%-ը, կատարվել են կազմակերպությունների, համապատասխանաբար՝ 20,6%-ը և 22,0%-ը բնակչության, իսկ 15,7%-ը և 17,3%-ը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: 2013թ.-ին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 42,6%, 31,3%, 29,6%, 31,3%, 15,3% և 16,8% (աղյուսակ 4):

Աղյուսակ 2

ՀՀ շինարարության հիմնական ցուցանիշների ինդեքսները
2000-2013 թվականներին
(համադրելի գներով, նախորդ տարվա նկատմամբ, %)

Ցուցանիշը	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Շինարարության ծավալը, ընդամենը, այդ թվում՝	127	141.1	119.7	103.1	62.6	97.5	91.1	97.4	92.3
շինմոնտաժային աշխատանքներ	128	149.4	121.9	108.7	56.8	103.3	84.9	104.9	92.5
սարքավորումներ, գործիքներ, գույք	-	-	54.3	79.1	308.1	43.4	208.8	56.0	84.1
այլ կապիտալ ծախսեր	-	-	147.3	108.6	49.6	173.9	48.7	95.0	104.1
Բնակելի շենքերի գործարկումը, դրանից՝	97	120.2	124.6	108.4	83.5	119.6	109.8	74.4	75.3
բնակչության կողմից	7.0	103.6	124.1	116.6	28.6	61.5	67.6	-	-
Հանրակրթական դպրոցների գործարկումը	196	480.9	-	-	-	-	-	-	-

Աղբյուրը. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, էջ 321, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, էջ 317-318, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, էջ 310-311, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, էջ 316, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, էջ 312:

Հայաստանի Հանրապետությունում իրականացված շինարարության ծավալներն
ըստ ֆինանսավորման աղբյուրների 2012թ.-ի հունվար-դեկտեմբերին

Ֆինանսավորման Աղբյուրներ	Շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	այդ թվում՝ շինմոն- տաժային աշխա- տանքներ	Ընդհանուրի նկատմամբ, %		2011թ. համապատասխան ծամանակաշրջանի նկատմամբ, %	
			շինարարություն	այդ թվում՝ շինմոնտա- ժային աշ- խատանք- ներ	շինարարություն	այդ թվում՝ շինմոնտա- ժային աշ- խատանքներ
Ընդամենը ՀՀ	469 668.9	413 352.1	100	100	100.2	104.6
այդ թվում ի հաշիվ՝						
պետական բյուջեի	73 790.5	71 463.6	15.7	17.3	100.2	100.2
համայնքների միջոցների	21 752.2	21 534.5	4.6	5.2	112.2	111.3
միջազգային վարկերի այդ թվում՝	37 977.1	34 407.4	8.1	8.3	116.0	119.0
Համաշխարհային բանկի վարկի	15 931.6	14 260.2	3.4	3.4	73.7	75.6
Զարգացման և վերակա- ռուցման եվրոպական բանկի վարկի	4 747.5	4 369.1	1.0	1.1	3.6 անգամ	3.8 անգամ
Ասիական Զարգացման բանկի վարկի	1 915.7	1 603.8	0.4	0.4	32.2	31.5
Միջազգային համագոր- ծակցության ճապոնիայի բանկի վարկի	2 931.7	2 575.4	0.6	0.6	-	-
Գերմանիայի զարգաց- ման բանկի վարկի	10 501.0	9 694.6	2.2	2.3	4.1 անգամ	3.7 անգամ
Ռուսաստանի Դաշնության վարկի	828.4	821.3	0.2	0.2	-	-
այլ	1 121.2	1 083.0	0.3	0.3	94.9	94.9
մարդասիրական օգնության միջոցների այդ թվում՝	8 242.5	7 804.8	1.8	1.9	24.5	25.4
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	629.3	629.3	0.2	0.1	99.2	98.9
ՄԱԿ-ի միջոցների	22.6	22.6	0.0	0.0	115.9	115.9
Հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	2 738.8	2 738.8	0.6	0.7	79.6	79.5
այլ մարդասիրական օգնության միջոցների	4 851.8	4 414.1	1.0	1.1	16.5	16.6
կազմակերպությունների միջոցների	231 217.1	187 239.7	49.2	45.3	98.3	106.7
բնակչության միջոցների	96 689.5	90 902.1	20.6	22.0	126.7	128.1

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-դեկտեմբերին,
Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 26-27:

Հայաստանի Հանրապետությունում իրականացված շինարարության ծավալներն ըստ ֆինանսավորման աղբյուրների 2013թ.-ի հունվար-դեկտեմբերին

Ֆինանսավորման Աղբյուրներ	Շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	այդ թվում՝ շինմոն- տաժային աշխա- տանքներ	Ընդհանուրի նկատմամբ, %		2012թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %	
			շինարարություն	այդ թվում՝ շինմոնտա- ժային աշ- խատանք- ներ	շինարարություն	այդ թվում՝ շինմոնտա- ժային աշ- խատանքներ
Ընդամենը ՀՀ	442 283.9	391 997.5	100	100	91.9	92.5
այդ թվում ի հաշիվ՝						
պետական բյուջեի	67 510.5	65 937.7	15.3	16.8	92.2	93.2
համայնքների միջոցների	11 980.8	11 918.0	2.7	3.1	53.5	53.9
միջազգային վարկերի	34 163.1	31 867.2	7.7	8.1	87.7	90.4
այդ թվում՝						
Համաշխարհային բանկի վարկի	11 398.5	9 823.6	2.6	2.5	69.7	67.2
Զարգացման և վերակա- ռուցման Եվրոպական բանկի վարկի	2 491.1	2 265.0	0.5	0.6	51.1	50.5
Ասիական Զարգացման բանկի վարկի	11 364.5	11 056.7	2.6	2.8	5.8 անգամ	6.7 անգամ
Գերմանիայի զարգացման բանկի վարկի	6 751.3	6 633.5	1.5	1.7	62.7	66.8
այլ	2 157.7	2 088.4	0.5	0.5	187.3	187.8
մարդասիրական օգնության միջոցների	9 211.8	8 926.8	2.1	2.3	109.1	111.7
այդ թվում՝						
«Հայաստան» համահայ- կական հիմնադրամի միջոցների	643.0	643.0	0.2	0.2	99.4	99.6
Հայ Առաքելական Եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	2 759.7	2 538.7	0.6	0.6	98.3	90.5
այլ մարդասիրական օգնության միջոցների	5 809.1	5 745.1	1.3	1.5	116.9	127.2
կազմակերպությունների միջոցների	188 446.6	150 672.3	42.6	38.4	78.6	77.5
բնակչության միջոցների	130 971.1	122 675.5	29.6	31.3	131.9	131.6

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 25:

2013թ.-ին կատարված շինարարության ծավալում մեծ են եղել անշարժ գույքի հետ կապված գործունեությունը (ամբողջի 29,1%), տրանսպորտի (12,4%), էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը (8,7%) (տե'ս աղյուսակ 5-ը):

Աղյուսակ 5

Շինարարության ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների 2013թ.-ի հունվար-դեկտեմբերին

Ծածկագիրն ըստ SOST կոդի	Շինարարություն, մին.դրամ (ընթացիկ գներով)	այդ թվում՝ շինման աշխատանքներ	Ընդհանուր նկատմամբ, %		2012թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %		
			շինարարություն	այդ թվում՝ շինման աշխատանքներ	շինարարություն	այդ թվում՝ շինման աշխատանքներ	
Ընդամենը ՀՀ	442 283.9	391 997.5	100	100	91.9	92.5	
	այդ թվում ի հաշիվ՝						
A	գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	6 984.2	6 418.6	1.6	1.6	49.5	47.8
B	հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	22 720.9	15 510.7	5.1	4.0	140.7	2.6 անգամ
C	մշակող արդյունաբերություն	15 192.5	9 338.4	3.4	2.4	65.7	57.1
D	էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	38 442.7	33 268.7	8.7	8.5	85.1	87.1
E	ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	18 539.6	17 342.7	4.2	4.4	85.9	84.3
F	Շինարարություն	9.5	9.5	0.0	0.0	35.1	35.0
G	մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	19 568.7	16 537.5	4.4	4.2	124.7	124.4
H	Տրանսպորտ	55 058.2	53 548.3	12.4	13.7	85.6	84.2
I	կացության և հանրային սննդի կազմակերպում	14 882.4	14 158.3	3.4	3.6	45.9	50.1
J	տեղեկատվություն և կապ	23 422.0	7 506.7	5.3	1.9	114.8	96.5
K	ֆինանսական և ապահովագրական գործունեություն	11 848.3	10 458.7	2.7	2.7	47.8	44.7
L	անշարժ գույքի հետ կապված գործունեություն	128 651.0	125 996.1	29.1	32.1	104.0	105.4
M	մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	4.8	4.8	0.0	0.0	0.0	0.0
N	վարչարարական և օժանդակ գործունեություն	3 984.7	3 984.7	0.9	1.0	102.6	102.7
O	պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	23 840.5	23 480.5	5.4	6.0	127.0	129.8
P	Կրթություն	23 059.4	22 308.5	5.2	5.7	121.1	118.5
Q	առողջապահություն և բնակչության սոցիալական ապաստարկում	7 089.7	5 397.2	1.6	1.4	122.1	123.5
R	մշակույթ, զվարճություններ և հանգիստ	12 221.4	11 731.0	2.8	3.0	66.2	72.1
S	սպասարկման այլ ծառայություններ	16 763.4	14 996.6	3.8	3.8	112.1	118.4

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 27:

Անցած տարիներին զգալիորեն բարելավվել են շինարարական կազմակերպությունների գործունեության հիմնական ցուցանիշները: Այսպես, 2011թ.-ին 2000թ.-ի համեմատ, կապալային աշխատանքների ծավալը, ընթացիկ գներով, ավելացել է շուրջ 422.6%-ով, իսկ կապալային շինարարական կազմակերպությունների քանակը՝ 221,8%-ով, շինարարությունում աշխատողների միջին ցուցակային թվաքանակը նվազել է 20.7%-ով, ինչն այս ոլորտում աշխատանքի արտադրողականության զգալի բարձրացման հետևանք է: Այսպես, եթե 2000թ.-ին միջին ցուցակային մեկ աշխատողի հաշվով կատարվել են 2164,8 հազ. Դրամի կապալային աշխատանքներ, ապա 2011թ.-ին՝ 11536.5 հազ դրամի, այսինքն՝ աշխատանքի արտադրողականության ցուցանիշն ավելացել է 532.9%-ով, որը վկայությունն է այն բանի, որ շինարարական կազմակերպությունների գործունեության հիմնական ցուցանիշները ձեռք են բերվել աճի ոչ թե էքստենսիվ, այլ ինտենսիվ գործոնների շնորհիվ, որի հետևանքով բարձրացել է ոլորտի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը: Հատկապես բարձր է եղել շինարարության ոլորտում միջին ամսական աշխատավարձի հավելաճը 2005-2008 թվականներին (տե՛ս աղյուսակ 6-ը):

Աղյուսակ 6

ՀՀ շինարարական կազմակերպությունների գործունեության հիմնական ցուցանիշները 2000-2013 թվականներին

Ցուցանիշը	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Կապալային աշխատանքների ծավալը, ընթացիկ գներով, մլն դրամ	49142.0	69222.1	158175.0	170450.5	184189.2	214476.2	207656.8	201418.9	193094.4
Կապալային շինարարական կազմակերպությունների քանակը	362	620	841	794	805	805	803	830	824
Միջին ամսական աշխատավարձի հավելաճը, %	2.0	17.6	14.9	22.2	2.6	12.0	0.5	-1.7	-1.3
Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը շինարարությունում, ընդամենը, 1000 մարդ	22.7	13.7	17.7	17.6	19.0	20.4	18.0	18.6	15.4

Աղբյուրը. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, էջ 330-331,

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, էջ 325, Հայաստանի վիճակագրական

տարեգիրք 2012, էջ 318, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, էջ 324,

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, էջ 320:

Աղյուսակ 7-ի տվյալները վկայում են, որ շինարարական կազմակերպությունների մեծ մասը գերփոքր (մինչև 5 մարդ) և փոքր (6-25 մարդ) կազմակերպություններ են: Գերփոքր կազմակերպությունները կազմում են ընդհանուր քանակի 40,4%-ը, իսկ փոքր կազմակերպությունների բաժինը կազմում է 41,9%: Միջին չափի (26-50 մարդ) կազմակերպությունների բաժինը 7.5% է, իսկ խոշորներինը (51 մարդ և ավելի)՝ 10.2%: Մինչդեռ խոշոր շինարարական կազմակերպությունների կողմից իրականացվում է շինմոնտաժային աշխատանքների 50%-ից ավելի մասը:

Աղյուսակ 7

ՀՀ-ում շինարարական աշխատանքների ծավալներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2012-2013թթ. հունվար-դեկտեմբերին

	Շինարարական կազմակերպությունների քանակը, միավոր		Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ		Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ*	
	2012	2013	2012	2013	2012	2013
Ընդամենը	830	824	18556	15436	201418.9	193185.8
այդ թվում՝						
մինչև 5 մարդ (գերփոքր)	335	351	864	881	36829.0	12892.3
6-25 մարդ (փոքր)	348	326	4141	3812	40001.1	36599.7
26-50 մարդ (միջին)	62	72	2191	2 527	20611.4	21377.5
51 և ավելի մարդ (խոշոր)	85	75	11360	8216	103977.4	122316.3

* Ըստ շինարարական կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների: Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 30, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 28:

Շինարարության ապահովման ռեսուրսները: Ցանկացած մասշտաբի շինարարության իրականացման համար անհրաժեշտ են ինչպես արտադրատեխնոլոգիական, այնպես էլ ֆինանսական ռեսուրսներ: Ըստ էության, շինարարության ապահովման ռեսուրսները ձևավորում են շինարարության արտադրանքի նկատմամբ պահանջարկը և հասարակական հնարավորությունները (ներուժը) ավելացնելու դրա նկատմամբ ռեսուրսները: Աղյուսակ 8-ի տվյալներից հետևում է, որ ՀՀ-ում շինարարությունն իրականացվում է երկու պետական և ոչ պետական միջոցների հաշվին:

ՀՀ-ում շինարարության ծավալները (մլն. դրամով, ընթացիկ գներով)

Ցուցանիշը	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Շինարարության ծավալը, ընդամենը	100990.0	435124.8	671029.0	858680.1	579740.7	588807.7	504824.5	479415.6	453449.3
այդ թվում ի հաշիվ միջոցների՝									
պետական	17339.0	33630.1	67563.0	62878.0	76178.3	78794.8	87086.8	84994.5	80421.3
ոչ պետական	83651.0	401494.7	603466.0	795802.1	503562.4	510012.9	417737.7	394421.1	373028.0
դրանից՝									
բնակչության	18485.0	265281.2	413808.9	599055.9	184986.6	118487.6	77293.1	98029.5	130975.7
Նախորդ տարվա նկատմամբ, % (համադրելի գներով)									
Շինարարության ծավալը, ընդամենը	127.0	141.1	119.7	103.1	62.6	97.5	91.1	97.4	92.3
այդ թվում ի հաշիվ միջոցների՝									
պետական	12.0	154.5	163.0	74.9	112.2	99.3	115.2	100.1	92.3
ոչ պետական	12.9	140.0	116.3	106.2	58.6	97.2	84.9	96.8	92.3
դրանցից՝									
բնակչության	81.0	147.5	124.1	116.6	28.6	61.5	67.6	130.1	130.3

Աղբյուրը. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, էջ 321-322, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, էջ 318, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, էջ 311, , Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, էջ 317, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, էջ 313:

Վերջին 13 տարիներին հանրապետությունում շինարարության ծավալների գերակշռող մասն ապահովվել է ոչ պետական միջոցների հաշվին, ինչպես 2000թ.-ին, այնպես էլ 2011թ.-ին շինարարության ծավալների 17,2%-ն իրականացվել է պետական, իսկ 82,8%-ը՝ ոչ պետական միջոցների հաշվին: Վերջիններիս կազմում բնակչության մասնակցության աստիճանը կազմել է 2000թ.-ին՝ 22,1%, 2011թ.-ին՝ 18,5%: 2005թ., 2007թ. և 2008թ.-ին բնակչության բաժինը շինարարության ոչ պետական միջոցների մեջ կազմել է համապատասխանաբար՝ 64,6%, 68,6%, 75,3%: Սկսած 2009թ.-ից այդ բաժինը զգալիորեն նվազել է՝ 2009թ.-ին կազմելով 36,7%, 2010թ.-ին՝ 23,2% և 2011թ.-ին՝ 18,5%: Նման իրավիճակը պայմանավորված է բնակչության եկամուտների զգալի նվազմամբ, որը տնտեսական ճգնաժամի հետևանքներից է, ինչպես նաև դրսից հանրապետության բնակչությանն ուղարկվող դրամական փոխանցումների ծավալների կրճատմամբ (տե՛ս աղյուսակ 8-ը):

Աղյուսակ 9-ում բերված են հանրապետությունում շինարարության ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց կառուցվածքը (տոկոսներով):

Շինարարության ծավալների կառուցվածքը
ըստ ֆինանսավորման աղբյուրների (ընդամենի նկատմամբ, %)

Ցուցանիշը	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Շինարարության ծավալը, ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
պետական բյուջեի	18.0	7.7	10.1	7.3	13.1	13.4	17.2	17.7	17.7
կազմակերպությունների միջոցների	48.0	28.3	25.0	19.5	34.3	48.1	49.9	47.6	42.5
բնակչության միջոցների	29.0	61.0	61.6	69.8	31.9	20.1	15.3	20.4	28.9
օտարերկրյա ներդրումների	16.0	2.9	3.2	3.3	20.5	17.5	13.5	9.8	8.5
Այլ	0.0	0.1	0.1	0.1	0.2	0.9	4.1	4.5	2.4

Աղբյուրը. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, էջ 321-322, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, էջ 319, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, էջ 312, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, էջ 318, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, էջ 314:

Եթե 2000թ.-ին շինարարության աղբյուրների զգալի բաժին են կազմել կազմակերպությունների միջոցները (48%), ապա 2005-2008թթ.-ին մեծացել է բնակչության միջոցների բաժինը (2008թ.-ին այն հասել է շուրջ 70%-ի), իսկ 2009-2011թթ.-ին նորից բարձր է եղել կազմակերպությունների միջոցների բաժինը (համապատասխանաբար 34,3%, 48,1% և 49,9%), իսկ 2012-2013թթ.-ին այն նվազել է՝ հասնելով 42.5%-ի: Օտարերկրյա ներդրումների բաժինը շինարարության ֆինանսավորման գործում 2009թ.-ի 20,5%-ի փոխարեն 2011թ.-ին կազմել է 13,5%, 2013թ.-ին՝ 8,5%, ինչը վկայում է ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ներդրողների զգուշավորության մասին:

Շինարարության ֆինանսական արդյունքները և ցուցանիշները: Աղյուսակ 10-ում բերված են ՀՀ շինարարության պարտքերը 2010-2013 թվականներին: Տվյալներից հետևում է, որ 2011թ.-ին 2010թ.-ի համեմատ դեբիտորական պարտքերն ավելացել են 23 մլրդ դրամով՝ հասնելով շուրջ 91 մլրդ դրամի, մինչդեռ այդ նույն ժամանակահատվածում կրեդիտորական պարտքերն ավելացել են շուրջ 16,6 մլրդ դրամով՝ 2010թ.-ի 103,8 մլրդ դրամից 2011թ.-ին հասնելով 120,4 մլրդ դրամի, 2012-2013թթ.-ին նկատվել է այդ պարտքերի ծավալների զգալի նվազում: Նշենք, որ դեբիտորական պարտքը կազմակերպությանը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից (դեբիտորներից) վճարման ենթակա պարտքի գումարն է, որը ձևավորվել է վերջիններիս միջև տնտեսական փոխհարաբերությունների արդյունքում, իսկ կրեդիտորականը՝ կազմակերպությունների կողմից ժամանակավորապես ներգրավված միջոցներն են, որոնք

ենթակա են վերադարձման համապատասխան իրավաբանական կամ ֆիզիկական անձանց (կրեդիտորներին):

Աղյուսակ 11-ում ներկայացված է ՀՀ-ում կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) արտադրության և շինարարության ծախսերի կառուցվածքը տոկոսներով ընդամենի նկատմամբ: Բերված տվյալներից հետևում է, որ ՀՀ տնտեսության և շինարարության նյութական ծախսերը էապես միմյանցից տարբերվում են: Շինարարությունում փոքր-ինչ բարձր է եղել աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարների (ներառյալ՝ խթանող և փոխհատուցող վճարները) բաժինը: Բացի այդ, շինարարությունում մեծ է նաև նյութական ծախսերի բաժինը (2013թ.-ին՝ 55,4% տնտեսության 45,9%-ի փոխարեն):

Այսպիսով, ՀՀ-ում շինարարության ծավալները 2000-2008թթ.-ին ավելացան աննախադեպ չափերով: Բավական է նշել, որ 2008թ.-ին 2000թ.-ի համեմատ շինարարության հիմնական միջոցների գործարկման չափերն ավելացել են 7,4 անգամ (որը շուրջ 90 մլրդ դրամից հասավ 667 մլրդ դրամի), շինարարության ծավալները՝ 8,5 անգամ (101 մլրդ դրամից հասնելով 858,7 մլրդ դրամի), բնակելի շենքերի ընդհանուր մակերեսների գործարկումը՝ 2,7 անգամ (194 հազար մ³-ից հասնելով 521,1 հազար մ³-ի), սակայն 2008թ.-ին շինարարության ծավալների 37,4%-անոց անկումը (ինչը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքն էր) պայմանավորեց ոլորտի զարգացման հետագա ցուցանիշների անկումը. բավական է նշել, որ 2013թ.-ին իրականացված շինարարության ծավալը կազմել է 2008թ.-ի ծավալի 52,8%-ը (ընթացիկ գներով): Իսկ դա նշանակում է, որ շինարարության ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ է ունենալ նոր ռազմավարություն և քաղաքականություն:

Աղյուսակ 10

ՀՀ շինարարական կազմակերպությունների պարտքերը, մլն դրամ

Հ/Հ	Ցուցանիշը	Ընդամենը				որից ըստ խոշոր և միջին կազմակերպությունների			
		2010	2011	2012	2013	2010	2011	2012	2013
1.	Պարտքեր բանկերի վարկերի և փոխառությունների գծով	37 260.7	125 741.2	56 612.5	50 837.6	33 321.4	52 932.5	54 508.2	43 456.0
	որից՝ ոչ ռեզիդենտներին	6 389.6	13 697.3	5 038.6	4 295.6	6 389.6	13 631.6	5 038.6	4 022.1
	տոկոսով ընդամենի նկատմամբ	17.1	10.9	8.9	8.4	19.2	25.8	9.2	9.3
2.	Դեբիտորական պարտքեր	68 107.5	91 960.0	40 736.1	36 202.2	81 860.9	82 312.1	38 117.1	27 177.3
	որից՝ ժամկետանց	1 056.9	111.7	350.0	389.0	111.7	151.5	348.4	386.3
3.	Կրեդիտորական պարտքեր	103 817.9	120 441.8	64 866.0	68 001.0	112 919.7	113 870.2	57 823.9	62 026.8
	որից՝ ժամկետանց	55.1	3.4	3.2	2.6	3.4	45.6	2.3	0.0
4.	Կրեդիտորական պարտքերի գերազանցումը դեբիտորականին	35 710.4	29 351.8	24 129.9	31 798.7	31 052.8	31 558.1	19 706.9	34 849.5
	որից՝ ժամկետանց	-1 001.8	-108.3	-346.8	-386.4	-108.3	-105.9	-346.0	-386.3

Աղբյուրը. Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2006- 2011, Վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 22, 24, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2007- 2012, Վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 22, 25, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2014, Վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 22, 25:

Կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) արտադրության և իրացման վրա կատարված ծախսերի կառուցվածքն և շինարարության ծախսերի կառուցվածքը (%-ով ընդամենի նկատմամբ)

Հ/Հ	Ցուցանիշը	Ընդամենը				որից՝ ըստ խոշոր և միջին կազմակերպությունների			
		2010	2011	2012	2013	2010	2011	2012	2013
Կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքը									
	Ծախսեր, ընդամենը, այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
1	Նյութական ծախսեր	36.9	37.1	42.1	45.9	38.9	42.3	42.7	46.9
2	Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ (ներառյալ խթանող և փոխհատուցող վճարները)	18.0	14.4	15.2	20.0*	16.4	15.5	15.0	18.9*
3	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	2.9	2.4	2.3	-	2.6	2.3	2.2	-
4	Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ	7.5	7.4	8.7	9.3	8.0	8.7	9.8	10.0
5	Այլ ծախսեր	34.8	38.7	31.7	24.9	34.1	31.2	30.3	24.3
Շինարարություն									
	Ծախսեր, ընդամենը, այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
1	Նյութական ծախսեր	61.5	56.8	54.6	55.4	60.1	53.5	52.8	55.8
2	Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ (ներառյալ խթանող և փոխհատուցող վճարները)	17.3	14.5	15.8	23.1*	17.2	15.5	15.8	22.2*
3	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	2.5	2.2	2.4	-	2.4	2.2	2.4	-
4	Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ	3.6	5.3	4.6	3.6	4.0	4.3	4.9	4.1
5	Այլ ծախսեր	15.0	21.2	22.6	17.9	16.3	24.5	24.0	17.9

* Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների ցուցանիշում ներառված է նաև եկամտային հարկը:

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ СТРОИТЕЛЬНОГО СЕКТОРА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ашот Маркосян

*Заместитель начальника Управления по управлению
государственным имуществом при Правительстве РА,
доктор экономических наук, профессор*

Артасес Егнизаров

*Компания Росгосстрах Армения,
Соискатель Армянского национального университета
архитектуры и строительства*

Ключевые слова: строительство, строительная организация, показатели строительства, объемы строительства, источники финансирования строительства, кредиты, долги строительных организаций.

Статья посвящена развитию строительного сектора экономики РА, в котором создается значительная прибавочная стоимость и который обеспечивает экономику значительными благами.

Авторы рассматривают основные показатели развития отрасли строительства РА, большое внимание уделяя следующим из них:

- а) деятельности строительных организаций;
- б) ресурсам, обеспечивающим строительный сектор;
- в) объемам строительства в разных сферах экономической деятельности и динамике их изменений;
- г) жилищному и социально-культурному строительству;
- д) финансовым результатам строительства и источникам дальнейшего финансирования.

Отмечается, что значительное увеличение объемов строительства в РА в 2000-2008 годах было обеспечено за счет привлечения иностранных инвестиций. Достаточно отметить, что за данный период времени только 7%-ов от общих инвестиций было предоставлено посредством банковского кредитования. Последующий в результате финансово-экономического кризиса отток инвестиций в 2008-2009 годах привел к резкому сокращению объемов строительства и, следовательно, стал причиной ухудшения показателей отрасли.

MODERN PROBLEMS OF CONSTRUCTION SECTOR DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Ashot Markosyan

Deputy Head of State Property Management Department

by the Government of the Republic of Armenia

Doctor of economics, professor

Artashes Yegiazarov

“Rusgosstrax-Armenia” company,

PhD student of State University of Architecture and Construction

Keywords: construction, construction companies, building performance, volume of construction, the sources of financing of construction, credits, debts of construction companies.

Article is devoted to the development of the construction sector of the Armenian economy, which creates significant added value and provides significant economic benefits.

The authors examine the main indicators of construction sector of Armenia, paying more attention to the following ones:

- a) activities of construction companies;
- b) resources provided by the construction sector;
- c) volume of construction by different areas of economic activity and the dynamics of their changes;
- g) housing and objects of socio-cultural construction;
- e) financial results of construction and sources of funding.

It is noted that a significant increase of volume of construction in Armenia in 2000-2008 was achieved by attracting foreign investments. Suffice it to note that during mention period of time only 7% of the total investments were granted by a bank credits. Following to the financial and economic crisis outflows in 2008-2009 led to a drastic reduction of the volumes of construction, and hence caused the deterioration of the construction indicators.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԻՂՐՈՒՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Աշոտ Մարկոսյան

*Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Մենիկ Զուլհալյան

*Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանի հայցորդ*

Բանալի բառեր՝ էներգետիկայի համակարգ, հիդրոէներգետիկա, հիդրո-
էլեկտրակայան, մասնավորեցում, ներդրումներ, էլեկտրաէներգիայի արտադ-
րություն, էլեկտրաէներգիայի սպառում, էլեկտրահաշվեկշիռ

ՀՀ-ում հիդրոէներգետիկայի ոլորտի զարգացումը սկսած 1990-ական թվա-
կանների երկրորդ կեսից, որպես էներգետիկայի համակարգի անբաժանելի մաս,
կապված է եղել ոլորտում իրականացվող բարեփոխումների հետ, որոնց շար-
քում հատկանշականը համակարգի ընկերությունների մասնավորեցումն էր:

Էներգետիկայի ոլորտի ընկերությունների մասնավորեցման անհրաժեշ-
տությունը պայմանավորված էր, առաջին հերթին, համակարգի անխափան
գործունեության և արդիականացման համար անհրաժեշտ զգալի ներդրումնե-
րով: Մասնավոր կապիտալի ներգրավումը թույլ տվեց կրճատել պետության
կողմից կատարվող ծախսերը էներգահամակարգում, ներդրումներ ներգրավել
այդ ընկերություններում, բարձրացնել էլեկտրաէներգիայի մատակարարումնե-
րի դիմաց վճարների հավաքագրման աստիճանը: Մյուս կողմից, պետությունն
ակնկալում էր էներգահամակարգի ընկերությունների մասնավորեցումից
զգալի մուտքեր ապահովել պետական բյուջեում:

Էներգետիկայի ընկերությունների մասնավորեցմանը նախորդեցին
հետևյալ քայլերը՝

- համաձայն ՀՀ կառավարության 08.05.1998թ. N 280 որոշման իրականաց-
վեց էներգահամակարգի ընկերությունների հիմնական միջոցների վերազնա-
հատման գործընթացը (մինչև 1998թ. դեկտեմբերի 1-ը), որից հետո նախաձեռ-
նվեց էներգահամակարգի ռազմավարական նշանակություն ունեցող ընկերու-
թյունների աստիճանական մասնավորեցման գործընթացը,

- համաձայն ՀՀ կառավարության 20.07.1998թ. N 450 որոշման, ՀՀ էներ-
գահամակարգի մարզային էլեկտրացանցերը միաձուլման ճանապարհով
վերակազմավորվեցին <<Հարավային>>, <<Հյուսիսային>>, և <<Կենտրոնա-
կան>> էլեկտրացանցեր ՊՓԲԸ-ները, որոնց մասնավորեցման գործընթացը

սկսվեց 1999թ.-ին: Էնսարգահամակարգի բաշխիչ ընկերությունների մասնավորեցման գործընթացը միջազգայնորեն ընդունված պրակտիկայի պահպանմամբ անցկացնելու, ճիշտ և հավասարակշռված կազմակերպելու, վրիպումներից և թերություններից խուսափելու նպատակով Համաշխարհային բանկի SATAC-2 վարկի հաշվին հրավիրվեցին միջազգային խորհրդատվական կազմակերպություններ,

- ԱՄՆ ՄԶԳ կողմից տրամադրված օգնության շրջանակներում հրավիրվեցին փորձագետներ, որոնք խորհրդատվական ծառայություններ մատուցեցին ՋԷԿ-երի, «Սևան-Հրազդանյան կասկադ» և «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ» ՊՓԲ-ների մասնավորեցման ռազմավարության մշակման վերաբերյալ, իսկ «Հրազդան ՋԷԿ» ՊՓԲ-ի 5-րդ բլոկի մասնավորեցման ռազմավարությունը մշակվեց Եվրոպական Բանկի փորձագետների մասնակցությամբ,

- «Հայգազարդ» ՊԿ-ը, «Հայտրանսգազ» և «Հայգազ» ՊՓԲ-ները ընդգրկվեցին «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կազմում:

Մասնավորեցման առաջին ծրագրերով սեփականաշնորհվեցին բոլոր «փոքր» ՀԷԿ-երը, որոնք սակայն, երկրի մասշտաբով չեն ապահովում էլեկտրաէներգիայի արտադրության զգալի ծավալ: Հաջորդ փուլում մասնավորեցվեցին էլեկտրաէներգիայի բաշխիչ ընկերությունները, ինչպես նաև էներգիա արտադրող խոշոր ընկերությունները (Հրազդանի ՋԷԿ, Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադ, Որոտանի ՀԷԿ-երի կասկադ)՝ ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների համար մշակված սկզբունքներին համապատասխան և ոլորտի մի շարք նախագծային ինստիտուտները:

Փոքր ՀԷԿ-երի մասնավորեցումը: Մասնավորեցման ծրագրերին համապատասխան սեփականաշնորհվել են 15 փոքր ՀԷԿ-եր, որոնք սակայն, երկրի մասշտաբով չեն ապահովում էլեկտրաէներգիայի արտադրության զգալի ծավալ: Փոքր ՀԷԿ-երից 9-ը, օրենքով սահմանված կարգով, հանվել են մասնավորեցման ենթակա օբյեկտների ցանկից՝ տարբեր պատճառաբանություններով:

Մասնավորեցման գործընթացի սկզբից մասնավորեցման ծրագրում ընդգրկվել են հետևյալ փոքր ՀԷԿ-երը (աղյուսակ 1):

Աղյուսակ 2-ում ներկայացված է փոքր ՀԷԿ-երի մասնավորեցման վերաբերյալ տեղեկատվությունը: Պետք է նշել, որ մասնավորեցված բոլոր փոքր ՀԷԿ-երի գնորդները կատարել են իրենց պարտավորությունները գնված գույքի դիմաց վճարումների մասով:

Անցած տարիների ընթացքում ՀՀ-ում ձևավորված էներգետիկ համակարգի (էլեկտրահաշվեկշիռը, էլեկտրաէներգիայի և ջերմաէներգիայի արտադրության ծավալները, էլեկտրաէներգիայի հզորությունները) բնութագիրը և հիմնական ցուցանիշները բերված են աղյուսակներ 3 և 5-ում:

1994 (1995) թվականի մասնավորեցման ծրագրում ընդգրկված փոքր ՀԷԿ-երը

Ծածկագիրը՝ ըստ ծրագրի	ՀԷԿ-երի անվանումները	Հասցեն
301	Այրումի ՀԷԿ	Նոյեմբերյան, Այրում կայարան
302	Արմավիրի ՀԷԿ	Արմավիր, գյուղ Շենավան
303	Հայկական ՀԷԿ (փակ)	Արմավիր, Սարդարապատ
304	Ողջի-2 ՀԷԿ	ք. Կապան
305	Ողջի-3 ՀԷԿ	ք. Կապան
306	Մեղրիի ՀԷԿ	ք. Մեղրի
307	Գորիսի ՀԷԿ (փակ)	ք. Գորիս
308	Սիսիանի ՀԷԿ	Սիսիան, գյուղ Շաքի
309	Ագարակի ՀԷԿ (փակ)	ք. Սպեփանավան
310	Իջևանի ՀԷԿ	ք. Իջևան
311	Ծաղկավանի ՀԷԿ (չի աշխատում)	Տավուշ, գյուղ Ծաղկավան
312	Այգեձորի ՀԷԿ	Տավուշ, գյուղ Այգեձոր
313	Կամոյի ՀԷԿ (փակ)	ք. Կամո
314	Մարտունու ՀԷԿ	Մարտունի, գյուղ Մադինա
315	Վարդենիսի ՀԷԿ (փակ)	ք. Վարդենիս
316	Զովաշենի ՀԷԿ	Արտաշատ, գյուղ Զովաշեն
317	Եղեգնաձորի ՀԷԿ (փակ)	Վայք, գ. Գլաձոր
318	Արենիի ՀԷԿ	ք. Եղեգնաձոր
319	Ագատեկի ՀԷԿ	ք. Վայք
320	Ջերմուկի ՀԷԿ	ք. Ջերմուկ
321	Գյումրիի ՀԷԿ	ք. Գյումրի
322	Թալինի ՀԷԿ	ք. Թալին
323	Երևան ՀԷԿ-2 (չի աշխատում)	ք. Երևան
324	Երևան ՀԷԿ-3	ք. Երևան
325	Զորա ՀԷԿ	Թումանյան

Աղբյուրը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տվյալներով:

Տեղեկություններ փոքր ՀէԿ-երի մասնավորեցման վերաբերյալ

ՀՀ	Անվանումը	ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Գնահատված արժեքը (հազ. դրամ)	Մասնավորեցման ձևը	Վաճառքի գինը (դրամ)	Պայմանագրի կնքման տարեթիվը, պայմանագրի համարը
1	2	3	4	5	6	7
1	<<Ողջի-2>> ՀէԿ	N 321, 30.09.1996թ.	171850	Մրցույթ	90 000 000	պայմանագիր՝ 05.11.1997թ., N 39-Մ
2	<<Ողջի-3>> ՀէԿ	N 321, 30.09.1996թ.	151592	Մրցույթ	160 000 000	պայմանագիր՝ 05.11.1997թ., N 40-Մ
3	Այրումի ՀէԿ	N 321, 30.09.1996թ.	129273	Մրցույթ	66 000 000	պայմանագիր՝ 12.06.1997թ., N 35-Մ
4	Գյուրիի ՀէԿ	N 321, 30.09.1996թ.	85577	Մրցույթ	106 200 000	պայմանագիր՝ 30.04.1997թ., N 29-Մ
5	Ագատեկի ՀէԿ	N 321, 30.09.1996թ.	25893	Մրցույթ	18 105 000	պայմանագիր՝ 15.05.1997թ., N 31-Մ
6	Սիսիանի ՀէԿ	N 321, 30.09.1996թ.	21445	Մրցույթ	84 000 000	պայմանագիր՝ 16.10.1997թ., N 37-Մ
7	Մեղրիի ՀէԿ	N 321, 30.09.1996թ.	19803	Մրցույթ	24 500 000	պայմանագիր՝ 29.05.1997թ., N 34-Մ
8	Արենիի ՀէԿ	N 321, 30.09.1996թ.	9327	Մրցույթ	15 120 000	պայմանագիր՝ 16.05.1997թ., N 32-Մ
9	Մարտունու ՀէԿ	N 321, 30.09.1996թ.	8796	Մրցույթ	10 800 000	պայմանագիր՝ 20.05.1997թ., N 33-Մ
10	<<Զովաշենի ՀէԿ>>-ի գույք	N 105, 17.02.2001թ.	5886	Ուղղակի վաճառք	5 886 000	պայմանագիր՝ 05.06.2001թ., N 146-ՈԻ
11	<<Եղեգնաձորի ՀէԿ>>-ի գույք	N 2119-Ն, 13.12.2002թ.	3024	Ուղղակի վաճառք	3 024 000	պայմանագիր՝ 15.04. 2003թ., N 508-ՈԻ
12	Ագարակի ՀէԿ	N 287, 21.07.1997թ.	28654	Ուղղակի վաճառք վարձակալին	28 654 000	պայմանագիր՝ 09.03.1998թ., N 158-ՎԶ
13	Զերմուկի ՀէԿ	N 287, 21.07.1997թ.	54342	Ուղղակի վաճառք վարձակալին	54 342 000	
14	Արմավիրի ՀէԿ	N 287, 21.07.1997թ.	90574	Ուղղակի վաճառք վարձակալին	90 574 000	
15	<<Իջևանի ՀէԿ>> ՊԶ	N 623, 30.12.1997թ.	59870	Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն		պայմանագիր՝ 13.04.1998թ., N 883-2

Աղբյուրը՝ ՀՀ կառավարության որոշումներ պետական գույքի կառավարման վարչության տվյալներով:

Էլեկտրահաշվեկշիռ, մլն կՎտ/ժամ

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Արտադրվել է էլեկտրաէներգիա	5500.9	6030.0	6316.9	5941.3	5897.6	6114.4	5671.5	6491.4	7432.7	8036.2	7710.0
Ներմուծվել է էլեկտրաէներգիա	306.7	259.7	337.6	354.9	418.7	343.4	291.1	246.2	301.2	98.1	197.7
Օգտագործվել է էլեկտրաէներգիա, ընդամենը, այդ թվում՝	5224.5	5277.4	5503.4	5541.7	5865.0	6098.2	5626.6	5676.4	6351.0	6438.2	6682.0
Արդյունաբերությունում	1107.8	1250.2	1393.9	1378.4	1535.2	1506.6	1304.2	1326.2	1410.0	1517.0	1537.6
Գյուղատնտեսությունում	222.8	260.8	228.6	226.9	180.5	22.8	124.3	125.5	121.1	138.1	151.4
տրանսպորտում	119.6	118.8	113.1	115.1	123.0	120.0	119.0	118.7	119.6	127.0	124.4
բնակչության կողմից	1345.4	1436.9	1498.1	1530.9	1585.3	1609.4	1533.6	1611.4	1808.1	1901.7	1950.0
այլ ճնշերում	1188.9	1251.6	1490.8	1615.5	1665.6	1779.3	1682.3	1764.6	1988.1	1773.0	1969.9
կորուստներն ընդհանուր օգտագործման ցանցերում	1240.0	959.1	778.9	674.9	775.4	860.1	843.2	730.0	904.1	981.4	948.7
Արտահանվել է էլեկտրաէներգիա	583.1	1012.3	1151.1	754.5	451.3	359.6	336.0	1061.2	1382.9	1696.1	1225.7

Աղբյուրը՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008» Եր., ՀՀ ԱՎԾ, 2008, էջ 264,
 «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013» Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 287,
 «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014» Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 283:

Էլեկտրաէներգիայի արտադրությունը, մլն կՎտ/ժ

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Բոլոր էլեկտրակայանները, այդ թվում՝	5500.9	6030.0	6316.9	5941.3	5897.6	6114.4	5671.5	6491.4	7432.7	8036.2	7710.0
ջերմային	1521.5	1613.6	1827.7	1475.7	1488.8	1853.9	1154.1	1438.3	2390.3	3399.1	3173.1
Հիդրոէլեկտրակայաններ	1981.9	2013.6	1772.9	1822.7	1852.5	1797.0	2019.4	2556.1	2488.7	2311.0	2173.4
ատոմային	1997.5	2402.8	2716.3	2640.3	2553.4	2461.6	2493.7	2490.0	2548.1	2322.0	2359.7
հողմային	-	-	-	2.6	2.9	1.9	4.3	7.0	5.6	4.1	3.8

Աղբյուրը՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008» Եր., ՀՀ ԱՎԾ, 2008, էջ 265,
 «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013» Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 287,
 «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014» Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 283:

Էլեկտրակայանների հզորությունը, 1000 կՎտ

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Բոլոր էլեկտրակայանները, այդ թվում՝	3351.7	3205.6	3208.7	3237.2	3180.1	3192.7	3204.7	3504.5	3508.7	4054.6	4094.4
ջերմային	1774.4	1774.4	1774.5	1775.0	1702.0	1702.5	1692.1	1931.1	1906.0	2394.0	2394.0
Հիդրոէլեկտրակայաններ	1169.8	1023.7	1026.7	1052.1	1068.0	1080.0	1102.4	1162.0	1191.2	1249.2	1289.0
ատոմային	407.5	407.5	407.5	407.5	407.5	407.5	407.5	407.5	407.5	407.5	407.5
հողմային	-	-	-	2.6	2.9	2.7	2.7	3.9	4.0	3.9	3.9

Աղբյուրը՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008» Եր., ՀՀ ԱՎԾ, 2008, էջ 265,
 «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013» Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 288,
 «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014» Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 284:

Աղյուսակ 3-ի տվյալներից հետևում է, որ 2003-2012 թվականներին արտադրված էլեկտրաէներգիայի ծավալներն ավելացել են 146.1%-ով (2003-2013թթ.-ին՝ 140.2%-ով), իսկ ներմուծված էլեկտրաէներգիայի ծավալները 2003-2011թ.թ. չեն տատանվել լայն միջակայքում և գտնվել են տարեկան 246.2-418.7 մլն կՎտ/ժ սահմաններում: Մինչդեռ 2012թ.-ին նկատվել է ներմուծված էլեկտրաէներգիայի (98.1 մլն կՎտ/ժ) շեշտակի անկում նախորդ տարիների համեմատությամբ, 2013թ.-ին այն կազմել է 197.7 մլն կՎտ/ժ: 2012թ.-ի տվյալներով ՀՀ-ում էլեկտրաէներգիայի ամենամեծ սպառողը եղել են բնակչությունը (օգտագործված էլեկտրաէներգիայի 29.5%-ը), այլ ճյուղերը (27.5%), արդյունաբերությունը (23.6%), իսկ 2013թ.-ին համապատասխանաբար՝ 25.3%-ը, 25.5%-ը 19.9%-ը: Գյուղատնտեսության և տրանսպորտի սպառման չափերը եղել են բավականին համեստ՝ 2012թ.-ին համապատասխանաբար 2.1% և 2.0%, իսկ 2013թ.-ին՝ 2.0% և 1.6%: Եթե 2003թ.-ին օգտագործված էլեկտրաէներգիայի 22.5%-ը ընդհանուր օգտագործման ցանցերում «կորել» է, ապա այդ ցուցանիշը 2012թ.-ին կազմել է 12.2%, իսկ 2013թ.-ին՝ 12.3%՝ շարունակելով մնալ բավականին բարձր: Եթե 2003թ.-ին արտադրված էլեկտրաէներգիայի 10.6%-ն արտահանվել է, ապա 2012թ.-ին այդ ցուցանիշը կազմել է 21.1% (բացարձակ մեծությամբ ավելացել է 290.9%-ով՝ 583.1 մլն կՎտ/ժ-ից հասնելով 1696.1 մլն կՎտ/ժ-ի, 2013թ.-ին համապատասխանաբար՝ 15.9%, (210.2%-ով, 583.1 մլն կՎտ/ժ-ից հասնելով 1225.7 մլն կՎտ/ժ-ի):

ՀԷԿ-երի արտադրության բաժինը 2003թ.-ին կազմել է էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրության 36.0%-ը, 2004թ.-ին՝ 33.4%-ը, 2013թ.-ին՝ 28.2%-ը: ՀԷԿ-երի բաժինը էլեկտրաէներգիայի արտադրության մեջ համեմատելի է Հայկական ատոմակայանի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժնի հետ (որը 2013թ.-ին կազմել է 30.6%) (աղյուսակ 3 և 6): Էլեկտրաէներգիայի ընդհանուր հզորության մեջ եթե ջերմային կայանների բաժինը 2003թ.-ին

կազմել է 52.9%, ՀԷԿ-երինը 34.9%, ատոմային կայանինը՝ 12.2%, ապա 2013թ.-ին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 58.5%, 31.5% և 9.9%, իսկ 0.1%-ը բաժին է ընկել հողմային կայաններին (աղյուսակ 5):

Հայաստանում փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) կառուցումը համարվում է վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման առաջատար ուղղություն: ՓՀԷԿ-երի կառուցումն իրականացվում է «Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեմային» համապատասխան, որը հաստատվել է 2009 թվականի հունվարի 22-ին՝ ՀՀ կառավարության նիստի N 3 արձանագրային որոշմամբ: Սխեմայով նախատեսվում է 115 ՓՀԷԿ-ի կառուցում:

ՀՀ փոքր ՀԷԿ-երի վերաբերյալ ամփոփ ցուցանիշները՝ ըստ գետավազանների, ներկայացված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 6

Էլեկտրաէներգիայի և ջերմաէներգիայի արտադրության ծավալները Հայաստանի Հանրապետությունում
2004-2013 թվականներին, մլն կՎտ. Ժամով

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	Փոփոխությունը, 2013թ. 2004թ.-ի նկատմամբ
Էլեկտրաէներգիա, ընդամենը, մլն կՎտ. ժամ, այդ թվում՝	6029.8	6316.5	5940.8	5897.4	6114.3	5671.2	6491.3	7432.7	8036.2	7710.0	127.9
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	-
ՋԷԿ	1613.3	1827.3	1475.2	1488.6	1831.9	1128.5	1413.2	2371.7	3399.1	3173.1	196.7
%-ով ընդամենի նկատմամբ	26.8	28.9	24.8	25.2	30.0	19.9	21.8	31.9	42.3	41.2	14.4
ՀԷԿ	2013.7	1772.9	1822.7	1852.5	1818.9	2044.7	2584.0	2510.0	2321.9	2173.4	107.9
%-ով ընդամենի նկատմամբ	33.4	28.1	30.7	31.4	29.7	36.1	39.8	33.8	28.9	28.2	-5.2
ՀԱԷԿ	2402.8	2716.3	2640.3	2553.4	2461.6	2493.7	2490.0	2548.0	2311.0	2359.7	98.2
%-ով ընդամենի նկատմամբ	39.8	43.0	44.4	43.3	40.3	44.0	38.4	34.3	28.8	30.6	-9.2
Հողմային էլեկտրակայաններ	-	-	2.6	2.9	1.9	4.3	4.1	3.0	4.2	3.8	-
%-ով ընդամենի նկատմամբ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.1	0.0	0.1	0.0	-
Ջերմային էներգիա, հազ. ԳՋ	292.2	382.1	381.4	460.7	1593.8	980.5	493.6	185.7	90.0	126.8	43.4

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվար-դեկտեմբերին», Եր., ՀՀ ԱՎԾ, 2005թ., էջ 31-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թվականի հունվար-դեկտեմբերին», Եր., ՀՀ ԱՎԾ, 2006թ., էջ 24-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006 թվականի հունվար-դեկտեմբերին», Եր., ՀՀ ԱՎԾ, 2007թ., էջ 23-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թվականի հունվար-դեկտեմբերին», Եր., ՀՀ ԱՎԾ, 2008թ., էջ 21-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թվականի հունվար-դեկտեմբերին», Եր., ՀՀ ԱՎԾ, 2010թ., էջ 19-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-դեկտեմբերին», Եր., ՀՀ ԱՎԾ, 2012թ., էջ 18-ի և «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին», Եր., ՀՀ ԱՎԾ, 2014թ., էջ 17-ի տվյալներով:

Փոքր շէնքերի հիմնական ցուցանիշները

N	ՀՀ գետերի ավազանների անվանումը	ՓՇԿ-երի քանակը ավազանում	Տեղակայված գումարային հզորություն ՄՎտ	Միջին տարեկան արտադրանք մլն. ԿՎտժ	Աշխատածա մերի քանակը ծամ/տարի	ՓՇԿ գործակից
1.	Դերեղ	33	25	91	3670	42
2.	Աղստև	23	34	130	3843	44
3.	Ախուրյան	4	11	28	2521	29
4.	Քասախ	4	3	12	3570	41
5.	Հրազդան	4	4	13	3089	35
6.	Սևանա լիճ	11	10	43	4466	51
7.	Ազատ և Վեդի	5	5	19	3728	43
8.	Արփա	4	12	35	2908	33
9.	Որոտան	5	10	43	4131	47
10.	Ողջի	14	20	76	4009	46
11.	Մեղրի	8	13	50	3724	43
Ընդամենը		115	147	540	3677	42.0

Աղբյուրը՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի պաշտոնական կայք www.re2e2.am

2014 թվականի հունիսի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի արտադրության և կառուցման համար լիցենզիա է տրվել 150 փոքր շէնքերի:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տվյալներով 2013թ.-ին Հայաստանում արտադրվել է ընդհանուր 8.036.200.000 կվտ/ժ էլեկտրաէներգիա, որից փոքր շէնքերի բաժինը կազմել է 570.000.000 կվտ/ժ (6.5%):

Փոքր շէնքերի շահագործման լիցենզիան վավեր է 15 տարի: Արտադրողը վաճառում է էլեկտրաէներգիան «Հայկական էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին հստակ սահմանված սակագնով: Բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր շէնքերի համար սակագինը հավասար է 20.0 դրամ/կՎտժ (4.9 ցենտ), ոռոգման համակարգերի վրա՝ 13.5 դրամ / կՎտժ (3.3 ցենտ), խմելու ջրի ջրակայանների վրա՝ 9 դրամ / կՎտժ (2.3 ցենտ): ՀՀ կառավարության 2011 թ. սեպտեմբերի 8-ի «Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու վերաբերյալ առաջարկության մասին» 1300-Ա որոշմամբ փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորության չափն ավելացավ 3 անգամ՝ 10 ՄՎտ-ից հասնելով մինչև 30 ՄՎտ¹:

Այսպիսով, նկատվում է նաև փոքր շէնքերի թվի, և՛ նրանց հզորությունների չափի աճ:

Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի (ՄԶՄ) շրջանակ-

¹ ՀՀ կառավարության պաշտոնական կայք, <https://www.e-gov.am/gov-decrees/itrm/20207/>

ներում խրախուսվում է փոքր ՀԷԿ-երի կառուցումը, քանի որ փոքր ՀԷԿ-երը ջերմոցային գազեր չեն արտանետում մթնոլորտ²:

ՄՁՄ-ն ծրագրային մեխանիզմ է, որը նախատեսված է զարգացած երկրներում ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման կամ կլանման նախագծերում ներդրումների խթանման համար: ՄՁՄ-ի նպատակներից են՝ «Նպաստել «Կլիմայի փոփոխության մասին» կոնվենցիայի վերջնական նպատակի իրագործմանը, այն է՝ մթնոլորտում ջերմոցային գազերի կոնցենտրացիան կարգավորել այնպիսի մակարդակով, որով հնարավոր կլինի կանխարգելել կլիմայական համակարգում վտանգավոր մարդածին ազդեցությունները, աջակցել զարգացած երկրներին Կիոտոյի արձանագրության 3 հոդվածով սահմանված՝ արտանետումների սահմանափակման և նվազեցման իրենց պարտավորությունները կատարելու հարցում»³:

«Կիոտոյի արձանագրությունը և Մաքուր զարգացման մեխանիզմները էկոլոգիական հովանոցն են միջազգային զարգացման ֆինանսական ինստիտուտների համար: Զարգացող երկրները, ինչպիսին է Հայաստանը, միջազգային շուկայում վաճառում են CO₂ արտանետումների քվոտաները փոքր ՀԷԿ-երի արտադրած, այսպես կոչված, «մաքուր» էներգիայի հաշվին: Ընդ որում, կնքվում է պայմանագիր սերտիֆիկացված արտանետումների առք և վաճառքի մասին: Դա շահավետ բիզնես է, քանի որ քվոտաները վերավաճառվում են միջազգային շուկայում նույն միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից ստեղծված միջնորդների միջոցով»⁴:

Հայաստանում փոքր ՀԷԿ-երի ֆինանսավորումը գրավիչ է նաև նրանով, որ ապահովվում է վարկի 100 տոկոսանոց մարում, էլեկտրաէներգիայի սպառման շուկայում մրցակցություն չկա, գործունեությունը շարունակական բնույթ է կրում, առկա է էլեկտրաէներգիայի համար բարձր սակագին: Հայաստանում փոքր ՀԷԿ-երի համար վարկեր են տրամադրում՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD), Զարգացման գերմանական բանկը (KfW), Համաշխարհային բանկը, Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC): 2006 թվականին 25 փոքր ՀԷԿ-երի Կասկադ կրեդիտ բանկի միջոցով EBRD-ն տրամադրել է 7 միլիոն դոլար վարկ, Համաշխարհային բանկը՝ 5 միլիոն դոլար: Ամերիկաբանկի միջոցով Միջազգային Ֆինանսական կորպորացիան 2010թ.-ին 15 միլիոն դոլարի վարկ է տրամադրել 12 փոքր ՀԷԿ-երի համար: 2004թ.-ին KfW

² Բաց հասարակական հիմնադրամներ-Հայաստան «Փոքր ՀԷԿ-երի սոցիալ-էկոլոգիական ազդեցության վերլուծություն» հեղինակներ՝ Վիկտորիա Բուռնազյան, Տաթևիկ Գրիգորյան, Մոնիկա Երիցյան, փորձագետ՝ Ինգա Զարաֆյան էջեր 6-7:

³ Հայաստանի կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնի պաշտոնական կայք՝ <http://www.nature-ic.am/hy/>

⁴ Չեկույց՝ «Փոքր ՀԷԿ-երը միջազգային ֆինանսական ինստիտուտների հովանու ներքո», էկոԼուր, Երևան 2013թ.

բանկը փոքր ՀԵԿ-երի համար տրամադրել է 6 միլիոն եվրո, 2010թ.-ին՝ 18 միլիոն եվրո, 2012թ.-ին՝ 40 միլիոն եվրո: KFW բանկի միջոցներով ֆինանսավորվել է 26 փոքր ՀԵԿ-ի նախագիծ:

Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիայով խրախուսվում է փոքր ՀԵԿ-երի կառուցումը, սակայն շատ դեպքերում Հայաստանում փոքր ՀԵԿ-երը նպաստում են կլիմայի փոփոխության բացասական գործընթացների արագացմանը, էկոհամակարգերի հավասարակշռության խախտմանը, անտառների, ջրային ռեսուրսների կորստին, սողանքային գործընթացների խթանմանը, կենսաբազմազանության վերացմանը: <<Կլիմայի համամոլորակային փոփոխությունը և Հայաստանի տարածքում ներքին միկրոկլիմայական փոփոխությունները կարող են հանգեցնել հետևյալ հետևանքների.

- կանխատեսվող ջերմաստիճանի բարձրացման և տեղումների նվազման դեպքում պետք է սպասել կլիմայի չորացման աճ և անապատացման պրոցեսների արագացում,

- սպասվում է գետերի տարեկան հոսքի նվազում 15 տոկոս և Սևանա լճի մակերեսից գոլորշիացման ավելացում 13-14%,...>⁵:

Ըստ Հայաստանի կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնի պաշտոնական կայքի՝ ՄՁՄ խորհրդի կողմից Հայաստանում գրանցված են՝ <<Արգիճի>>, <<Եղեգիս>>, <<Ջրածոր>>, փոքր ՀԵԿ-երի ծրագրերը: ՄՁՄ լիազորված ազգային մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից հաստատվել է <<Եղվաղ-2>>, <<Հանքավար-1>>, <<Սարավան>>, և <<Հեր-Հեր>>, <<Գեղարոտ>> փոքր ՀԵԿ-երի ծրագրերը, Ամբերդ Կասկատ ՄՁՄ ծրագիրը, որը ներառում է <<Ամբերդ 1, 2, 3>> փոքր ՀԵԿ-երի կառուցումը, Կասկադ Կրեդիդ փոքրամասշտաբ ՀԵԿ-երի միավորված ծրագիրը, որով կառուցվել են <<Այգեձոր-2>>, <<Այրի>>, <<Այգեգարդ>>, <<Աղստև-1>>, <<Լեռնապատ>>, <<Վահագնի>>, <<Չանախչի>>., <<Լեռ էքս կասկադ>> (1, 3, 4, 5, 6), <<Բովաձոր>>, <<Ապրես>> փոքր ՀԵԿ-երը, էներգոկոր փոքրածավալ համակցված ծրագիրը, որի շրջանակներում կառուցվել են <<Այրք-1>>, <<Այրք-2>>, <<Ավազան>>, <<Էրիկ>>, <<Ջերմուկ-2>> փոքր ՀԵԿ-երը: Հաստատման փուլում են <<Սեդվի 1>> և <<Սեդվի 2>> փոքր ՀԵԿ-երի նախագծերը, որոնք կառուցվել են Լոռու մարզում հոսող Կաճաճուկ գետի վրա:

ՀՀ կառավարության 30.06.2011թ. N 927-Ն որոշմամբ Հայաստանում փոքր ՀԵԿ-երի համար թույլատրվում է գետից դերիվացիոն խողովակների մեջ վերցնել 90%-ից ավելի ջուր: Սակայն էկոլոգիական ստանդարտների համաձայն՝ գետից 20%-ից ավելի ջրառը բերում է գետի ճգնաժամային վիճակի, իսկ 40%-ից ավելին՝ աղետալի վիճակի: Սրանից ելնելով կարող ենք որոշել գետի վիճակը՝

⁵ Հայաստանի կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնի պաշտոնական կայք՝ <http://www.nature-ic.am/hy/>

հաշվելով, թե գետի երկարության որ տոկոսն է վերցված փոքր ՀԵԿ-ի խողովակների մեջ:

<<ԷկոԼուր>> տեղեկատվական ՀԿ-ի <<Էկոլոգիական ռիսկերի վերլուծության ինտերակտիվ մոդել>>-ով⁶ որոշվեց 47 գետի վրա 100-ի փոքր ՀԵԿ-երի ազդեցությունը: Արդյունքում պարզվեց, որ փոքր ՀԵԿ-երի շահագործման հետևանքով 28 գետերի ծանրաբեռնվածությունը նորմայի սահմանում է, 16-ը ձգնաժամային, 3-ը աղետալի վիճակում են:

Հայաստանում փոքր հզորության ՀԵԿ-երի կառուցման գործընթացը համարվում է վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման առաջատար ուղղություն:

ՀՀ կառավարությունը 2001 թվականից փոքր հիդրոէներգետիկայի զարգացումը խթանելու քաղաքականություն է վարում, ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր և իրականացվել վարկային և խորհրդատվական ծրագրեր՝ համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ:

- 2001թ. մարտի 7-ին ընդունված էներգետիկայի մասին ՀՀ օրենքի հոդված 59-ով սահմանվել է, որ տասնհինգ տարվա ընթացքում փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան (հզորությունը) ենթակա է գնման՝ շուկայի կանոններով սահմանված կարգով:

- Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին 2004թ. նոյեմբերի 9-ին ՀՀ օրենքի հոդված 20-ի համաձայն.

գ) կառավարությունը էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում է Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեման և ընդունում համապատասխան որոշում՝ ուղղված հողահատկացումների և այլ անհրաժեշտ թույլատրությունների գործընթացի պարզեցմանը:

- ՀՀ կառավարության 2009թ. հունվարի 22-ի N 3 արձանագրային որոշմամբ հաստատվել է <<Փոքր ՀԵԿ-ների զարգացման սխեման>>, ըստ որի, նախատեսվում է կառուցել ևս 108 փոքր ՀԵԿ-եր՝ մոտ 134 ՄՎտ նախագծային գումարային դրվածքային հզորությամբ (2011թ. հունվարի 1-ի դրությամբ):

- 2011թ. սեպտեմբերի 8-ի ՀՀ կառավարության նիստի N 35 արձանագրությամբ հաստատվել է ՀՀ հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը:

Հանրապետությունում նախագծվող, կառուցվող և շահագործվող փոքր ՀԵԿ-երի մեծ մասը բնական ջրահոսքերի վրա տեղակայված դերիվացիոն տիպի կայաններ են:

⁶ Էկոլոգիական ռիսկերի վերլուծության ինտերակտիվ մոդել՝ տե՛ս <http://www.ecolur.org/hy/an/?Page=1>

2012թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ՀՀ ՀՕԿՀ-ի կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցվող փոքր ՀԷԿ-երի թիվը կազմում է 75, որից 12-ը՝ ոռոգման, իսկ 1-ը՝ ջրամատակարարման համակարգի վրա փոքր ՀԷԿ-երի հզորությունը կազմում է 161045.1 կՎտ, իսկ տարեկան արտադրանքը՝ 564.3 մլն կՎտ/ժ: Գոյություն ունեն 129 գործող փոքր ՀԷԿ-եր՝ 209 502.0 կՎտ/ժ տարեկան արտադրանքով: Գործող փոքր ՀԷԿ-երից 29-ը գտնվում են ոռոգման, իսկ 1-ը՝ ջրամատակարարման համակարգի վրա:

Շահագործվող և կառուցվող փոքր ՀԷԿ-երի բաշխվածությունն ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի ներկայացված է ստորև բերված աղյուսակ 8-ում:


Գծանկար 1-ից ակնհայտ է, որ փոքր հիդրոէներգետիկան առավել զարգացած է և զարգանում է Սյունիքի (52 փոքր ՀԷԿ/ 79561.9 կՎտ), Լոռու (35 փոքր ՀԷԿ/ 69722 կՎտ) և Վայոց ձորի (33 փոքր ՀԷԿ/ 66714.2 կՎտ) և վերջին երկու տարվա ընթացքում՝ Գեղարքունիքի (19 փոքր ՀԷԿ/ 39456 կՎտ) մարզերում:

Աղյուսակ 8

Շահագործվող և կառուցվող փոքր ՀԷԿ-երի բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի

Մարզ	Փոքր ՀԷԿ		Հզորությունը		Ընդհանուր հզորությունը, կՎտ
	Գործող	Կառուցվող	Գործող, կՎտ	Կառուցվող, կՎտ	
Լոռի	24	11	58100	11622	69722
Շիրակ	6	5	15262	9358	24620
Տավուշ	11	6	11478	9484	20962
Արագածոտն	4	6	8098	14932	23030
Գեղարքունիք	11	8	13930	25526	39456
Երևան	1	-	750	-	750
Արմավիր	4	3	9940	10308	20248
Կոտայք	14	3	13465	3559	17024
Վայոց ձոր	19	14	39256	27458.2	66714.2
Արարատ	2	-	3520	-	3520
Սյունիք	33	19	35703	43858.9	79561.9
Ընդամենը	129	75	209502	156106.1	365608.1

Աղբյուրը՝ կազմվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական <http://www.psrc.am> կայքում տեղադրված տեղեկատվության հիման վրա:



Գծանկար 1. Շահագործվող և կառուցվող փոքր ՀԷԿ-երի տեղադրման գրաֆիկը
01.01.2014թ. դրությամբ

Որո՞նք են փոքր ՀԷԿ-երի օգուտները գյուղական համայնքների համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գյուղական վայրերի էլեկտրաֆիկացիան փոքր ՀԷԿ-երի միջոցով կարող է մի շարք դրական արդյունքներ տալ: Ավանդական վառելիքներից հրաժարվելը, որոնք բեռ են հանդիսանում թե՛ շրջակա միջավայրի, թե՛ առողջության և թե՛ սոցիալական առումներով և փոքր հիդրոէներգետիկայի արդյունավետ կիրառումը ռոտզման, սննդի վերամշակման և սննդամթերքի պահպանման կամ պահածոյացման համար տալիս է ուղղակի տնտեսական օգուտ: Այն հնարավորություն է ստեղծում համայնքներում տարբեր ձեռնարկությունների կազմակերպման և աշխատատեղերի ստեղծման և ֆինանսական խնայողությունների համար: Ազգային մակարդակում նույնպես հնարավոր են ֆինանսական խնայողություններ՝ ներկրվող վառելիքի կրճատման հաշվին: Այն վայրերում, ուր էլեկտրականությունը խթանում է գյուղատնտեսությանը, առևտրին և արդյունաբերությանը, անուղղակի տնտեսական օգուտները գրանցվել են որպես նշանակալի արդյունքներ՝ ավելացված արժեքի և աշխատատեղերի ստեղծման առումով:

Աղյուսակ 9-ում բերված են ըստ մարզերի էլեկտրաէներգիա արտադրող փոքր ՀԷԿ-երի հզորությունները և էլեկտրաէներգիայի փաստացի առաքումները 01.01.2014թ.-ի դրությամբ, իսկ աղյուսակներ 10-ում և 11-ում համապատասխանաբար՝ արդեն կառուցվող և կառուցման փուլում գտնվող փոքր ՀԷԿ-երի ցուցանիշները:

Ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի էլեկտրաէներգիա արտադրող փոքր ձեռք-երի հզորությունները և էլեկտրաէներգիայի փաստացի օգտակար առաքումը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Հ/Հ	Մարզերը	Փոքր ձեռք-երի թիվը	Հզորությունը, կՎտ	Էլեկտրական էներգիայի փաստացի օգտակար առաքումը, մլն կվտ/ժ
1.	Արարատ	2	3520	5.8
2.	Արմավիր	4	9940	22.1
3.	Արագածոտն	6	15747	50.2
4.	Գեղարքունիք	13	29820	93.5
5.	Լոռի	26	61120	189.6
6.	Կոտայք	14	13465	44.1
7.	Շիրակ	8	19275	44.6
8.	Սյունիք	41	46148	170.8
9.	Վայոց ձոր	24	50193	141.5
10.	Տավուշ	11	12606	28.6
	Երևան	1	750	2.8
	Ընդամենը	150	262584	793.6

Աղբյուրը՝ կազմվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական՝ <http://www.psrc.am> կայքում տեղադրված «Արտադրող և կառուցվող ՓՀԷԿ-երի մանրամասն տեղեկանք»-ի տվյալների հիման վրա:

Ըստ ՀՀ մարզերի էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա ստացած՝ կառուցման փուլում գտնվող փոքր ձեռք-երի հզորությունները, տարեկան արտադրանքը և ներդրումների ծավալը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Հ/Հ	Մարզերը	Փոքր ձեռք-երի թիվը	Հզորությունը, կՎտ	Տարեկան արտադրանքը, մլն կվտ/ժ	Ներդրումների ծավալը, մլն դրամ
1.	Արմավիր	2	998	5.1	423.1
2.	Արագածոտն	2	2831	8.1	966.4
3.	Գեղարքունիք	2	421	1.8	852.1
4.	Լոռի	3	4479	18.8	1980.3
5.	Կոտայք	1	1663	8.0	1583.3
6.	Սյունիք	4	7582	31.3	3320.8
7.	Վայոց ձոր	3	5794	17.4	1422.2
8.	Տավուշ	1	1292	5.1	596.0
	Ընդամենը	18	25060	95.6	11144.2

Աղբյուրը՝ կազմվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական՝ <http://www.psrc.am> կայքում տեղադրված «Արտադրող և կառուցվող ՓՀԷԿ-երի մանրամասն տեղեկանք»-ի տվյալների հիման վրա:

Ըստ ՀՀ մարզերի էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա ստացած՝ նոր կառուցվող փոքր ՀԷԿ-երի հզորությունները, տարեկան արտադրանքը և ներդրումների ծավալը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Հ/Հ	Մարզերը	Փոքր ՀԷԿ-երի թիվը	Հզորությունը, կՎտ	Տարեկան արտադրանքը, մլն կվտ/ժ	Ներդրումների ծավալը, մլն դրամ
1.	Արագածոտն	2	12380	38.2	2174
2.	Գեղարքունիք	4	10617	32.5	1223
3.	Լոռի	11	10039	42.2	6317
4.	Կոտայք	3	2821	9.5	1033
5.	Շիրակ	2	5945	21.2	3129
6.	Սյունիք	10	30818	111.3	12252
7.	Վայոց ձոր	16	39518	127.7	14726
8.	Տավուշ	5	8620	35.8	3760
	Ընդամենը	53	120758	418.4	44614

Աղբյուրը՝ կազմվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական <http://www.psrc.am> կայքում տեղադրված <<Արտադրող և կառուցվող ՓՀԷԿ-երի մանրամասն տեղեկանք>>-ի տվյալների հիման վրա:

Այսպիսով, փոքր էներգետիկայի զարգացման հիմնական դրական կողմը վնասակար նյութերի և ջերմոցային գազերի մթնոլորտ արտանետման նվազեցումն է, էներգիայի տեղի աղբյուրների օգտագործումը, սակայն փոքր ՀԷԿ-երն ունեն նաև բացասական կողմեր, որոնք հետագա զարգացման տեսանկյունից որոշակի հիմնախնդիրներ են առաջացրել, ուստի և պահանջում են դրանց լուծումներ: Դրանցից հիմնականներն են՝ ջրային ռեսուրսների օգտագործման ոլորտում կարգավորող և վերահսկող մեխանիզմների անբավարարությունը, գետային էկոհամակարգերի՝ ջերմային և վիբրացիոն ցնցումների ենթարկումը, համայնքների բնակիչներին խմելու և ոռոգման ջրի չբավարարելու հանգամանքը, ափամերձ անտառների և կանաչ տարածքների չորացումը, գետերի էկոհամակարգերի խափանումը:

Փոքր ՀԷԿ-երին առնչվող բիզնեսն ընդլայնման միտում ունի, քանի որ ունի բարձր շահութաբերություն (ապահովվում է մարդկանց մի խմբ(եր)ի շահերը, որից տուժում է հանրային (պետական) շահը): Հաշվի առնելով այս հանգամանքն անհրաժեշտ է.

1. Ժամանակավորապես դադարեցնել փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզիաների տրամադրումը մինչև իրավական հիմքով խնդրի լիարժեք կարգավորումը

2. պետական տեսչական մարմինների մասնակցությամբ անցկացնել գործող փոքր ՀԷԿ-երի հասարակական մոնիտորինգ

3. վերանայել էներգետիկ քաղաքականությունը փոքր ՀԷԿ-երի նկատմամբ,

4. առավել մեծ ուշադրություն դարձնել փոքր ՀԷԿ-երի կառուցման հետևանքով առաջացած բնապահպանական բացասական հետևանքների կանխարգելմանը, ինչպես նաև դրանց կառուցման վայրերի բնակչության շահերի պաշտպանությանը:

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ГИДРОЭНЕРГЕТИЧЕСКОГО СЕКТОРА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ашот Маркосян

*Заместитель начальника Управления по управлению
государственным имуществом при Правительстве РА,
доктор экономических наук, профессор*

Сеник Джулакян

*Соискатель Армянского национального университета
архитектуры и строительства*

Ключевые слова: энергетический комплекс, гидроэнергетика, гидроэлектростанция, приватизация, инвестиции, производство электроэнергии, потребление электроэнергии, электробаланс.

В статье обсуждается процесс развития гидроэнергетического сектора Республики Армения, успехи достигнутые в результате развития этого сектора, а также его отрицательные стороны, связанные в основном с экологическими проблемами.

Отмечается, что в 90-ых годах прошлого столетия в РА была осуществлена приватизация гидроэнергетического сектора (в основном она коснулась малых ГЭС), которая сыграла положительную роль в улучшении электробаланса РА. В подтверждение приводится тот факт, что уже в 2004 году доля гидроэлектростанций в общем объеме произведенной электроэнергии составила 33.4% (а в 2013 году – 28.2%), что сопоставимо с объемами производства электроэнергии Армянской АЭС.

Значительное внимание уделено обсуждению основных показателей деятельности малых ГЭС (по данным различных речных бассейнов), распределению эксплуатируемых и строящихся малых ГЭС по марзам РА, а также другим аспектам и условиям их развития.

В статье обсуждены насущные проблемы, связанные с развитием гидроэнергетического комплекса и даны предложения по решению данных проблем.

**MODERN PROBLEMS OF HYDROPOWER SECTOR DEVELOPMENT
IN THE REPUBLIC OF ARMENIA**

Ashot Markosyan

*Deputy Head of State Property Management Department
by the Government of the Republic of Armenia
Doctor of economics, professor*

Senik Julhakyan

PhD student of State University of Architecture and Construction

Keywords: energy sector, hydropower, hydroelectric plant, privatization, investments, power generation, power consumption, electric power balance.

The article discusses the development of hydropower sector in the Republic of Armenia, the successes achieved as a result of the development of this sector, as well as its negative aspects, mainly related to environmental issues.

It is noted that in the 90s of the last century in Armenia was carried out privatization of hydropower sector (mainly concerned the small hydropower plants), which has played a positive role in improving of electricity power balance of the RA. In support given the fact that in 2004 the share of hydropower plants in the total volume of electricity produced was 33.4% (in 2013 - 28.2%), which is comparable with the volume of electricity produced in Armenian Nuclear Power Plant.

Considerable attention is devoted to discussing the key economic activity indicators of small hydropower plants (according to the different river basins of Armenia), the distribution of operating and construction of small hydropower plants by marzes of Armenia, as well as other aspects of the terms and conditions of their development.

The article discussed the urgent problems associated with the development of hydropower complex and presents proposals addressed to these issues.

СТАНОВЛЕНИЕ РЫНКА ПЛАСТИКОВЫХ КАРТ В АРМЕНИИ

Нарине Мелкумян

Доцент финансово-учетной кафедры

Арцахского государственного университета,

кандидат экономических наук

Ключевые слова: процессинг, эквайринг, транзакция, национальная платежная система.

Сегодня применение безналичных расчетов с использованием пластиковых карт позволяет создать качественно новый более высокий уровень обслуживания клиентов непосредственно в банках, в торговых и в сервисных организациях, а также дома и на рабочем месте посредством использования компьютерных сетей

Банковские карты стали универсальным международным средством платежа, так как принимаются к оплате независимо от того, в какой валюте открыт карточный счет. Они освобождают своих владельцев от издержек и неудобств, связанных с хранением, перемещением, конвертацией наличных денег, позволяют быстро и безопасно производить расчеты и снимать наличные деньги со счета, находясь в различных точках планеты. Обслуживание банками клиентов с помощью пластиковых карточек является источником получения дохода, который образуется благодаря привлечению на карточные счета дополнительных ресурсов, а также из платежей за расчетно-карточное обслуживание и комиссионных сборов за межбанковские услуги в связи с оборотом денег по карточным счетам.

Начало активному развитию рынка банковских карт в Армении было положено в марте 2000г. созданием национальной Единой платежной системы (ЕПС) Armenian Card (ArCa). Организатором данной инициативы выступил ЦБ РА, пригласивший банки страны, развивающие карточный бизнес, стать членами ЕПС, и взявший под прямой контроль развитие нового рынка. Несмотря на добровольный характер данной инициативы, за отсутствием на тот момент какого-либо альтернативного варианта к ней присоединились практически все «карточные» банки Армении. Уже в декабре 2000г. ЗАО «Armenian Card» стало принципиальным членом международной платежной системы MasterCard Worldwide (на тот момент - Europay International). С 2001г. Armenian Card выступает в качестве процессингового центра, обеспечивающего, в том числе, эмиссию и эквайринг карт MasterCard Worldwide, эквайринг карт Visa Int., и имея статус Member Service Provider (MasterCard) и Third Party Processor (Visa Int.). Сегодня акционерами ЗАО «Armenian Card» являются Центробанк Армении, а также 17 ком-

мерческих банков Армении, при этом членство в платежной системе ArCa имеют практически все банки страны, осуществляющие эмиссию и/или эквайринг платежных карт. Отметим, что 15 банков - участников системы ArCa, являются членами MasterCard, 10 - Visa International. С 2010 года ЗАО "Армениян Кард" выступает в качестве процессингового центра международной платежной системы AmEx, эксклюзивным партнером которой в Армении выступает АСВА-Credit Agricole Bank. Эквайринг (с 2012-го года) и эмиссию (с декабря 2013 года) международных карт Diners Club в Армении осуществляет "Араратбанк"¹.




Исследование рынка пластиковых карт Армении на основе статистических данных ЦБ РА (рис.1)² показало, что темп роста количества пластиковых на рынке за 13 лет составил почти 99,5%. В период особо кризисного для Армении и банковской системы 2009 года актуальность развития карточного рынка приобрела довольно высокую степень в связи со свертыванием программ кредитной розницы и существенного падения процентных доходов. Дебетовые зарплатные проекты стали активно дополняться предоставлением гарантированных клиентами-юрлицами овердрафтов, размер которых в некоторых случаях в три раза превышает размер заработной платы работника. Предоставление кросс-услуг своим юридическим клиентам, в том числе и в первую очередь по зарплатным карточным проектам, стало одним из важнейших направлений деятельности первой десятки банков, вступивших в условиях кризиса в жесткую борьбу за каждое платежеспособное предприятие.

¹ Бюллетень «Армянские банки в карточном бизнесе» N1

² <http://www.cba.am/>

Рис.2 Динамика инфраструктуры рынка пластиковых карт в Армении



Из рисунка, представленного выше (рис.2), можно сделать вывод, что клиенты банков предпочитают карты Visa. В тоже время темпы роста инфраструктуры рынка пластиковых карт в Армении за последние 5 лет (2008-2013гг) соответственно по видам пластиковых карт составляют: ArCa- 64,5%, Visa -74,5%, MasterCard-84%, другие международные пластиковые карты³-12%. Продолжающийся значительный рост более доступных в ценовом плане и не менее универсальных в плане обслуживания MasterCard говорит о том, что через некоторое время именно карты этой платежной системы могут стать более востребованными на “пластиковом” рынке Армении.


Количественные и качественные показатели операций по картам, выпущенным банками в рассматриваемом периоде, могут быть оценены неоднозначно: количество операций в 2013 году по отношению к 2007 году увеличилось в 4,6 раза, а объем операций в 5,2 раза, в то время как, за тот же период количество карт увеличилось в 4,7 раза. На это так же повлияло расширение эквайринговой сети банков, т.е. увеличение за тоже время количества банкоматов и терминалов почти в 3,4 раз (рис 4). Надо отметить, что на безналичные платежи в настоящий момент приходится порядка 20% от общего объема транзакций, что является неплохим показателем для армянского рынка, ведь данный показатель поступательно растет, а с появлением и развитием цивилизованных торговых сетей количество безналичных платежей будет расти и дальше. Определенный толчок развитию безналичных платежей дают и платежи в виртуальной (интернет) среде.

³ AMEX, HSBC debit, Diners Club

Таб.1 Ключевые показатели развития карточного бизнеса в РА


	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Количество банковских карт(шт)	13781	22412	61110	108865	137186	209113	327852	454357	579431	729298	974911	1318010	1562735
Количество операций по картам	392122	616988	1005981	1763090	2184492	3029569	4428550	6586134	8848052	11292931	14565936	18800105	20540950
Объем операций(в млн.др)	25874	35731	59543	98771	90136	90136	213634	326371	428248	558350	740015	986106	1108032

Рис.4 Динамика роста банкоматов и POS-терминалов Армении



Быстрый рост числа банкоматов обусловлен возрастанием эмиссии карточных продуктов банка в связи с ростом спроса на них, а также объективной необходимостью расширения сети обслуживания пластиковых банковских карт. Количество банкоматов, установленных банком, является важным фактором увеличения оборота по банковским картам, однако рост данного показателя пока что большей частью влияет на рост объемов снятия денежной наличности с карт.

Рис.5 Количество карт на душу населения в Армении⁴



Характеризует активность банков на рынке, показатель количества банковских карт на душу населения, который на 2013 год составил 0,5. Отметим, что тот же показатель для развитых стран равен 1–3. Оценку инфраструктуры рынка пластиковых карт на 2013г. нам дадут следующие показатели: отношение количества POS-терминалов к численности населения, которое составляет 2,2 (в развитых странах он равен 100-200) и отношение количества банкоматов к населению, которое равно 0,4 (в развитых странах 8-10).

Таким образом, карточный рынок Армении на сегодняшний день пока еще является развивающимся. Развитие рынка банковских карт в Армении, несмотря на высокую динамику роста, носит на данный момент скорее

⁴ <http://www.armstat.am/> , <http://www.cba.am/>

насыщенный, нежели расширенный характер, в целом соответствуя темпам развития сегмента данного вида банковских услуг.

Переходу от традиционных и пока еще недостаточно развитых с точки зрения качества обслуживания зарплатных дебетовых проектов к более сложным программам, в том числе кредитным, препятствуют такие макроэкономические факторы, как высокая доля теневых оборотов в экономике страны, низкий уровень доходов населения, острый дефицит квалифицированных кадров и низкая степень осведомленности населения о предлагаемых услугах. Масштабы карточного бизнеса в стране пока не велики, и поэтому требующее серьезных инвестиций инновационно-технологическое развитие рынка осуществляется ограничено в рамках проектов, реализуемых под эгидой созданной по инициативе Центробанка Армении Единой платежной системы (ЕПС) Armenian Card. На наш взгляд дальнейшее развитие рынка банковских карт в Армении должно проходить на основе анализа и адаптации зарубежного опыта, что позволит улучшить выше упомянутые показатели.

ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Նարինե Մելքումյան

Արցախի պետական համալսարանի ֆինանսա-հաշվարկային ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

Բանալի քառեր` պրոցեսինգ, էկվայրինգ, տրանզակցիա, ազգային վճարային համակարգ:

Բանկային քարտերի շուկայի ակտիվ զարգացման սկիզբը ՀՀ-ում դրվեց 2000թ. մարտ ամսից՝ Արքա միասնական ազգային վճարային համակարգի ներդրմամբ: ՀՀ ԿԲ կողմից ներկայացված վիճակագրական տվյալների հիման վրա իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ 13 տարիների ընթացքում ասպլտիկ քարտերի քանակի աճի տեմպը կազմել է մոտ 99,5 տոկոս: Համենայնդեպս՝ ՀՀ-ում պլաստիկ քարտերի շուկան ներկայումս գտնվում է զարգացման փուլում: Չնայած աճի բարձր տեմպերին, պլաստիկ քարտերի շուկայի զարգացումն ունի ավելի ինտենսիվ բնույթ, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է այդ բանկային ծառայությունների տեսակի հատվածի զարգացման մակարդակին:

THE ESTABLISHMENT OF PLASTIC CARDS' MARKET IN ARMENIA

Narine Melqumyan

*Associate professor of the Department of Finance and Accounting at Artsakh State
University,
PhD in Economics*

Keywords: processing, acquiring, transaction, the national payment system.

The bank cards' market began to develop in Armenia in March 2000 by the formation of the national single payment system – Armenian Card(ArCa). The analysis of the plastic cards' market in Armenia, the basis of which are statistical data of the central bank of Armenia, has shown that the rate of growth of plastic cards' quantity is approximately 99,5% for 13 years (2000-2013). However the card market of Armenia is still developing. The development of the bank cards' market in Armenia, despite the high dynamic growth, is rather intensive than extensive and corresponds to the development rate of the given banking services.

ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ: ՆԵՅՐՈՍԱՐՔԵԹԻՆԳԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Անի Կյուրեղյան

*Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման
և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի ասպիրանտ,
«ԷՄ ՋԵՅ ՄԱՐԿԵՏ» ՄՊԸ-ի հիմնադիր, տնօրեն*

Բանալի բառեր` գովազդ, ՋԼՄ-ներ, հաճախորդի վարքագիծ, որոշումների կայացման գործընթաց, մարքեթինգային հետազոտություններ, ներդրարքետինգ:

ԽՄՀՄ-ի փլուզումից հետո, ՀՀ տնտեսությունը թևակոխեց զարգացման նոր ժամանակաշրջան: Բնական էր, որ անցումը շուկայական տնտեսության, ինչպես ամեն նորի սկիզբ, սահուն չէր լինելու: Շուկայական ինքնակարգավորման մեխանիզմի անկատարության պատճառով ի հայտ եկան բազում խնդիրներ, օրինակ աշխատաշուկայի ապակենտրոնացումն և ազատականացումը, մենաշնորհային երևույթները և հասարակության զարգացման սոցիալական բնույթի խնդիրները: Անհրաժեշտություն առաջացավ մշակել նոր տնտեսական էթիկա, կազմակերպելու և վերահսկելու համար տնտեսության կառավարման պլանային մոդելից անցում դեպի շուկայական հարաբերությունների:

Գնագոյացման վարչական մեթոդից անցումը դեպի առաջարկ-պահանջարկ մոդելի հանգեցրեց նրան, որ ժամանակակից շուկան վերափոխվեց թե՛ իր ձևով, և թե՛ իր բովանդակությամբ: Առաջարկի նոր ալիք բարձրացավ, և առաջ եկավ շուկայում մրցակցային լինելու անհրաժեշտությունը: Ծնվեցին նոր ապրանքանիշներ և “մրցակցության մշակույթը” աստճանաբար ներխուժեց տնտեսական կյանք: Արտադրատեսակների, ապրանքանիշների բազմազան հոսքը կառավարելու, ապրանքաշրջանառությունը կազմակերպելու և վերահսկելու նպատակով, լայն տարածում գտավ մեր շուկայի համար նոր պրակտիկա հանդիսացող մարքեթինգը:

Մարքեթինգի մուտքը մեղիա ոլորտ: Ըստ ոլորտի փորձագետների¹ 1985թ.-ից մինչ ժամանակակից ՋԼՄ-ների ձևավորման գործընթացը, բաժանվում է 6 ժամանակաշրջանների: Նրանց ձևակերպմամբ, 1996թ.-2001թ. համարվում է զարգացման 4-րդ` ՀՀ ՋԼՄ-ների ճգնաժամի հաղթահարման փուլը: Անկախացումից հետո` մինչ 1995թ.-ը, Հայաստանի պատմության մեջ, հիշատակվում է որպես էներգետիկ ճգնաժամի ժամանակաշրջան, որի աստիճանական

¹ Նորավանք Հիմնադրամ, “ՀՀ ԼՐԱՏՎՎԱՆ ԴԱՇՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԸՍՏ ՈՒՈՐՏԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ”, 22.03.2012թ.:
http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=6369

հաղթահարման արդյունքում, 1996թ-ից ՁԼՄ-ների համար աշխատանքային նոր հնարավորություններ ստեղծվեցին: Վերաբացվեցին և հիմնադրվեցին ռադիոկայանները, վերականգնվեց տպագիր մամուլը, իսկ հեռուստատեսային ոլորտում շատացան հեռարձակողները՝ դառնալով արդեն շուրջօրյա էլեկտրա-էներգիա ունեցող հասարակության համար հիմնական տեղեկատվական աղբյուր: Այդ տարիները համարվում են հեռուստատեսության առաջխաղացման և զարգացման կարևորագույն շրջան: Բացվեցին այնպիսի հեռուստաընկերություններ² ինչպիսին են՝ **Ա1+** («Մելտեքս» ՄՊԸ, Երևան, լրատվական – հասարակական, 1993թ. – 2002թ.), **Շանթ** («Շանթ» ՓԲԸ, Գյումրի, տեղեկատվական-ժամանցային՝ 1994թ.), **Մայր Հայրենիք ՀԸ** («Մայր Հայրենիք» ՄՊԸ, Երևան, ժամանցային, 1994թ. – 1999թ., որ հետագայում վերանվանվեց Հայ TV, իսկ այժմ՝ ԼԱՅՄ), **Նոյան Տապան** (Երևան, լրատվական, 1996թ. – 2001թ.), **Ավետիս** («Good News Network», Երևան, կրոնական 1995 – 2007թ.), **Արմենիա** («CS Media» Երևան, հանրային ունիվերսալ, 1997թ.), և այլն:

ՁԼՄ-երի գործունեության այս նոր թափը, թարմ շունչ հաղողրեց մարքեթինգի զարգացմանը, և հնարավորություն տվեց ընկերություններին և կազմակերպություններին իրենց ապրանքի, արտադրանքի կամ ծառայությունների մասին տեղեկացնել ավելի մեծ լսարանների: Ստեղծվեց մրցակցության համար նոր հարթակներ:

Տնտեսական նոր մշակույթ ձևավորվեց, ըստ որի ընկերությունները իրենց տարեկան բյուջեի զգալի հատված սկսեցին ուղղել դեպի մարքեթինգային հնարքների և գործիքների կիրառությանը: Հիմնադրվեցին գովազդաին գործակալություններ որոնք զբաղվում էին Հանրային Հեռուստատեսությամբ և մյուս հեռուստաալիքներով գովազդների տեղակայմամբ: (օրինակ «ԿԱՅՄ» հեռուստաընկերությունը)

Հետագայում՝ 2007թ.-ից, ուղիղ գովազդից բացի, առավել լայն տարածում գտան մարքեթինգային այնպիսի հնարքներ, ինչպիսին են PR-ը, բարեգործության միջոցով ընկերության մատուցած ծառայությունները կամ արտադրանքը անուղղակիորեն գովազդելը, հովանավորչական գործունեությունը, BUZZ մարքեթինգը և այլն³: Մարքեթինգը Մեդիա ոլորտից տեղափոխվեց այլ դաշտեր: Դասական դարձած այս մեթոդներ լայն կիրառություն ունեն նաև մեր օրերում և համարվում են շատ արդյունավետ:

Ավելի ուշ, ինտերնետի հասանելիության մակարդակի հետ մեկտեղ, առաջ եկավ և լայն տարածում գտավ ինտերնետային մարքեթինգը: Սոցիալական ցանցերի հասանելիությունն և լայն կիրառման շնորհիվ, մարքեթինգի գործածմանը տեղական ընկերություններում նոր թափ ստացավ: *Սոցիալական*

² Հանրային Հեռուստատեսության և մյուս հեռուստաընկերությունների պաշտոնական էջերը:

³ <http://guides.emich.edu/marketing>

մարքեթինգ, որոնողական համակարգերի մարքեթինգ, էլեկտրոնային մարքեթինգ, մեկ “քլիքի” մարքեթինգ, վիդեո մարքեթինգ և այլն, սրանք այն նոր տերմիններն են որոնք ներխուժեցին այս ոլորտ և դարձան ամենակիրառելիներից մեկը, ոչ միայն իրենց էֆեկտիվության բարձր աստիճանի այլ նաև մատչելիության պատճառով:

Այս տեխնոլոգիաները համաշխարհային շուկայում գործնականում շատ ավելի վախուց են ձևավորվել և գտել իրենց կիրառությունները, ուստի միջազգային փորձը շատ օգնեց ՀՀ կազմակերպություններին և մասնագետներին արագ ինտեգրվելու դեպի միջազգային փորձ և տիրապետել մարքեթինգային այս հմտություններին: Պատկերը լրիվ այլ է, երբ առաջ է գալիս համաշխարհային նորույթներին համահունչ քայլելու անհրաժեշտությունը: Շատ արզվեքներ են առաջանում, երբ կարիք է լինում մեր տնտեսական կյանք ներմուծել այնպիսի մեթոդներ և մեխանիզմներ, որոնք կարելի է ասել նոր են նույնիսկ միջազգային շուկայում և գտնվում են իրենց զարգացման ակտիվ շրջանում:

Հաճախորդի վարքագիծը և նեյրոմարքեթինգը: Գաղտնիք չէ, որ շուկայագետները շարունակաբար փնտրում են նոր ուղղիներ ընկերությունների ապարնքները կամ ծառայությունները շուկա հանելու և դրանց վաճառքը առաջ մղելու համար: Այդ ուղղիների որոնման գործում զգալի դեր են խաղում թե՛ արդեն հանրահայտ դարձած մարքեթինգային մեխանիզմներն ու միջոցները, և թե՛ այս բնագավառի նորագույն գործիքները: Ցանկացած կազմակերպության, ֆիրմայի կամ ձեռնարկության համը շատ կարևոր խնդիր է ճիշտ ընտրված մարքեթինգային ռազմավարությունը: Ուստի ընկերություններում այդ գործով զբաղվող խմբերի գլխավոր նպատակն է՝ ընտրել այն մեթոդները, որոնց միջոցով իրենք կարող են հասցնել ապրանքի կամ ծառայության մասին ամենանպատակահարմար և գրավիչ հաղորդագրությունը իրենց սպառողներին կամ հաճախորդներին: Անհերքելի է, որ ավանդական մարքեթինգը արդեն երկար ժամանակ գոյություն ունի և դեռ համարվում է արդյունավետ, սակայն նորագույն տեխնոլոգիաները և ինտերնետը այնքան մեծ դեր են խաղում մարդկանց կյանքում, որ մարքեթինգի մասնագետները անընդհատ մտածում են և փորձում են ստեղծել նոր միջոցներ իրենց ընկերությունների ապրանքները և ծառայությունները շուկա հանելու համար:

Համաշխարհային միտումներին համընթաց քայլելով, վերջին տարիներին շուկայագիտությունը հայաստանում նույպես համարվում է «հաճախորդակենտրոն», այլ ոչ «ապրանքակենտրոն»: Այսինքն՝ ավելի կարևոր ձեռքբերում է համարվում հաճախորդների շրջանում ապրանքի կամ ծառայությունների մասին ձևավորված ընկալումը, քան այն, թե ինչ ապրանք կամ ծառայություն էս մատուցում իրականում: Ուստի հաճախորդների վարքագիծի ուսումնասի-

րությունները, մեր իրականությունում, ևս դարձան կարևորագույն հետազոտման թեմա:

Սպառողի վարքագծի ուսումնասիրությունների արդյունքում առաջ եկավ նոր մոտեցում, որը շատ ավելի ճշգրիտ պատասխաններ է տալիս մասնագետների այն հարցին, թե “ի՞նչ է հարկավոր մերօրյա գնորդին”: Այս ոլորտում կատարված բազում ուսումնասիրությունները հանգեցրեցին այն փաստին, որ մենք շատ հաճախ առաջնորդվում ենք ենթագիտակցությամբ՝ այսինքն այն ինչ մարդիկ ասում են, միշտ չէ, որ համընկնում նրանց հետագա գործողությունների հետ: Մարքեթինգային հետազոտության մի նոր տեսակ, որը հիմնվելով մարդու ենթագիտակցության հետազոտումից ստացվող արդյունքների վրա, տալիս է այն հարցի պատասխանը, թե ի՞նչ է ցանկանում սպառողը, հայտնի է որպես *նեյրոմարքեթինգային*⁴ հետազոտություններ անվանմամբ:

Նեյրոմարքեթինգը հնարավորություն է տալիս ուսումնասիրելով մարդու գլխուղեղը հասկանալ թե՞ ինչպես կարելի է կառավարել գնորդի որոշում կայացնելու գործընթացը: Այն հնարավորություն է տալիս շուկայագետներին “մուտք գործել” իրենց սպառողների ենթագիտակցություն, և ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները: Նեյրոմարքեթինգի միջոցով հնարավորություն է ընձեռնվում, որ մեր գլխուղեղը պատասխանի մեր փոխարեն թե՛ ապրանքանիշների, ապրանքների փաթեթավորման, դրանց գովազդի, բաներների կամ այլ մարքեթինգային տարրերի ընտրության համար, ո՞ր ձևը մեզ վրա կթողնի կայուն և համոզիչ տպավորություն: Այն ուսումնասիրում է, թե՛ ինչպես է մարդկանց ենթագիտակցությունը արձագանքում գովազդային և այլ մարքեթինգային հաղորդագրություններին, գիտական մոնիտորինգի ենթարկելով մարդու գլխուղեղի ալիքները, աչքի վերահսկողությունը և մաշկի արձագանքները:

Նեյրոմարքեթինգի կիրառությունը ՀՀ-ում: Նեյրոմարքեթինգը միջազգային ընկերությունների աշխատանքային գործընթացի մասն է կազմում դեռ 1991թ-ից⁵, սակայն այդ ընկերությունների մասին տվյալներ հրապարակվում են միայն վերջին տարիներին, այն էլ շատ վերապահումներով: Նեյրոմարքեթինգը համարվում է կոնֆիդենցիալ մեթոդ և այս մեթոդով ստացված ցանկացած արդյունք հանդիսանում է ընկերության կոմերցիոն գաղտնիք: Ինֆորմացիա այս կամ այն ընկերության մասին, որը կիրառել է նեյրոմարքեթինգային հետազոտություն, իր որևէ գովազդային արշավի շրջանակներում, սովորաբար հանրությանը հայտին է դառնում շատ ուշ՝ տարիներ հետո, կամ ընդհանրապես այդպես էլ ոչ ոք չի իմանում: Նեյրոմարքեթինգի կիրառման գաղտնիության համար կան և՛ օբյեկտիվ , և՛ սուբյեկտիվ պատճառներ:

⁴ Merel van der , *thesis on subject "Neuromarketing-A contribution to new product launching"* .

⁵ http://www.itchannel.ro/faa/119_pdfsam_ICEA_FAA_2009.pdf

Նեյրոմարքեթինգի կիրառումը ենթադրում է նեյրոգիտական հետազոտությունների արդյունքների օգտագործում մարքեթինգային ռազմավարությունների մշակման համար, ուստի դրա արդյունքում նախատեսվում է, որ ընկերության ապրանքանշանները ավելի խորը և երկարատև հիմունքներով կկապվեն սպառողներին: Հենց սա էլ հանդիսանում է այս մոտեցմանը հակադրվող մարմիններին ամենամատառագող խնդիրներից մեկը: Համաձայն նրանց, այս միջոցով արտադրվում են այնպիսի հնարքներ, որոնք մեծացնում են առանց այն էլ անընդհատ աճող սպառողական խաբեությունը և քայքայում են գաղտնիության իրավունքները: Այս հանգամանքը հաշվի առնելով շատ երկրներում նեյրեմարքեթինգի կիրառությունը պետականորեն անթուլատրելի է, ընդգծելով որ այն մարդու իրավունքների ոտնահարման և սպառողների ազատ ընտրությունը խոչընդոտող գիտություն է⁶:

Մարքեթինգային ժամանակակից գործիքներից այս մեկը դեռ նոր է ՀՀ-ում և դեռ չի գտել իր գործնական կիրառությունը, սակայն ակնհայտ է, որ վաղ թե ուշ, այն կներթափանցի նաև մեր տնտեսական կյանք: Հայաստանում դեռ չկան լաբարատորիաներ, որոնք կատարում են այնպիսի նեյրո հետազոտություններ, որոնց արդյունքները կօգտագործվեն մարքեթինգի մեջ: Այդ ուսումնասիրությունների համար նախատեսված սարքավորումներից և գործիքներից միայն մագնիսառեզնանսային տոմոգրաֆիա իրականացնելու հնարավորություն կա ՀՀ-ում, այն էլ միայն հիվանդանոցներում կամ մասնավոր կլինիկաներում, ուստի մարքեթինգային հետազոտություն իրականացնելու համար, տեղական ընկերությունները պետք է ժամավճարով վարձակալեն այդ սարքավորումներից օգտվելու հնարավորությունը, և հենց հիվանդանոցներում կատարեն գլխուղեղի հետազոտություններ, իրենց մարքեթինգային արշավի արդյունավետությունը հասկանալու համար:

ՀՀ-ում գործող սպառողների իրավունքների պաշտպանության օրենքներում⁷ դեռ չկա հատուկ կետ, որը արգելում կամ սահմանափակում է ընկերություններին օգտագործել նեյրոմարքեթինգային հետազոտություններ իրենց ապրանքների կամ ծառայությունների բարելավման համար: Չնայած իրավական և էթիկական նորմերի կարգավորման սահմանումների բացակայությանը, կա մի արգելք, որը կարող է հանդիսանալ մեծ խոչընդոտ տեղական ընկերություններում նեյրոմարքեթինգ իրականացնելուն՝ դա սեփական լաբարատորիաներ հիմնադրելու և մասնագետներ վերապատրաստելու թանկարժեքությունն է: Այն ընկերությունները որոնք հետաքրքրված են նման ուսումնասիրություններ կատարելու համար կամ պետք է վարձակալեն բավականին թանկ սարքավոր-

⁶ Theodore V., PR Newswire US., WASHINGTON, April 18, 2013, «Neuromarketing's Legal and Policy Issues»

⁷ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1506&lang=arm#4>

րումներ արտերկյա ընկերություններից (որը ինքնին շատ բաղ գործընթաց է, քանի որ այդ հետազոտությունները կատարելու լուրջ հիմնավորող միջոցառումներ և փաստաթղթեր են հարկավոր) կամ ձեռք բերեն իրենց սեփական սարքավորումները և հիմնեն լաբարատորիաներ: Ակնհայտ է, որ շատ ընկերություններ կխուսափեն այդ ծախսերը կատարելուց, սակայն եթե հստակ գիտակցեն ներդրաբեթինգի մատուցած՝ ծառայությունների՝ շահավետությունը, չեն խուսափի այդ ներդրումներից: Միջազգային փորձը ցույց է տվել, որ ներդրաբեթինգի կիրառումը գործնականում զգալիորեն կրճատում է ընկերությունների մարքեթինգային բյուջեի ծախսերը, քանի որ ցանկացած ներդրաբեթինգի ենթարկված հնարք, շատ ավելի արդյունավետ է լինում, և կարիք չի լինում անընդհատ այն վերաթողարկել սահմանված նպատակներին հասնելու համար⁸: Սովորաբար, համաշխարհային պրակտիկայում այս մեթոդին դիմում են մարքեթինգային մեծ բյուջե ունեցող ընկերությունները (*Hyundai, Google and Walt Disney Co. ; EmSense of San Francisco, Microsoft, PepsiCo's Frito-Lay, Yahoo*)⁹, որոնք ունեն իրացման մի քանի շուկաներ (ԱՄՆ, Եվրոպա, Ասիական երկրներ և այլն), բայց բացառված չէ, որ այն ավելի մեծ տարածում ունի, ուղղակի դրա մասին հանրությունը իրազեկված չէ՝ այս մեթոդի գաղտնիության պատճառով: Ներդրաբեթինգը կարող է հանդիսանալ մեծ խթան ՀՀ ընկերություններին արտադրել այնպիսի ապրանք, որը նախատեսված չի լինի միայն հայաստանյան շուկայում իրացման համար, այլ իր սպառումը կգտնի հարևան երկրների շուկաներում ևս (օրինակ Վրաստան, Պարսկաստան, Ռուսաստան և այլն):

ՀՀ-ում գործող փոքր և միջին ձեռնարկությունների համար, որոնք գրեթե չեն արտահանում իրենց արտադրանքը միջազգային շուկա, դժվար է պատկերացնել, որ կարող են կատարել ներդրումներ նման հետազոտությունների մեջ, քանի որ փոքր շուկայի համար աշխատելով չեն ակնկալում այքան մեծ եկամուտներ, որոնք կարդարացնեն հետազոտությունների համար ծախսվող գումարները: Սակայն հաշվի առնելով, որ ներդրաբեթինգի կիրառման նպատակներից է նաև մարքեթինգային բյուջեի օպտիմալ օգտագործումը, հետագա աննպատակ ծախսերից խուսափելը և սահմանված նպատակների իրագործման հասնելը, ապա հնարավոր է, որ այն կիրառելի դառնա ցանկացած մեծության ընկերություններում, որոնք ներդրումներ կանեն իրենց ապրանքների շրջանառության բարձացման և արտահանման ցուցանիշների բարելավման նպատակով:

⁸ Morin C. " Neuromarketing: the new science of customer behavior" , 14. January, 2011, Springer Science and Business Media

⁹ <http://www.forbes.com/forbes/2009/1116/marketing-hyundai-neurofocus-brain-waves-battle-for-the-brain.html>

Այսօր տնտեսության զարգացման գործընթացը թվում է պարզ է բոլորին, և ուրվագծված են բոլոր այն ուղիները, որոնցով պետք է առաջնորդվի ՀՀ տնտեսությունը: Բայց միևնույն է, հաշվի առնելով մեր աշխարհաքաղաքական դիրքը, չենք կարող ասել, թե՞ որ ուղղությամբ կարող է զարգանալ մեր տնտեսությունը մի քանի տասնամյակ հետո, և ի՞նչ նոր հնարավորություններ կըձեռնվեն տեղական արտադրողներին իրացնելու համար իրենց արտադրանքը: Ուստի տնտեսագետների և ոլորտի այլ մասնագետների առաջնային խնդիրներից մեկը այսօր, պետք է լինի այնպիսի նոր տնտեսական գործիքների մշակումը, որոնք հայկական որոշ մրցունակ արտադրատեսակներ և ծառայություններ կդարձնեն մեր երկրի այցեքարտը միջազգային շուկաներում:

ЭТАПЫ РАЗВИТИЯ МАРКЕТИНГА: ПРИМЕНЕНИЕ НЕЙРОМАРКЕТИНГА В РА

Ани Кюрегян

*Аспирант кафедры управления и информационных технологий
международного университета Евразия,
основатель и директор ООО «ЭС ДЖЕЙ МАРКЕТ»*

Ключевые слова: реклама, СМИ, поведение клиентов, процесс принятия решений, маркетинговые исследования, нейромаркетинг, неврология.

В течение двух последних десятилетий экономика РА переживает несколько этапов своего развития, и в течение этого процесса понятие “рыночная экономика” получает разные толкования. В условиях организации рыночной экономики появляются новые маркетинговые инструменты, которые обеспечивают атмосферу конкуренции. Параллельно развитию деятельности от телевизионной рекламы к интернетному маркетингу, появляется необходимость включить в экономическую жизнь новое понятие “нейромаркетинг”, которое во всемирной практике удостоилось большого внимания со стороны крупных корпораций еще с 1990г.

Нейромаркетинг- это наука, дающая ответы на такие вопросы, которые на протяжении десятилетий беспокоили маркетологов.

В настоящее время такие вопросы как “чего хочет потребитель?” или “какое представление лучше из всех уловок маркетинга?” уже не являются спорными. Во всемирной практике внедреное нейромаркетинга и его использование в хозяйстве, дало возможность зарегистрировать отличные

результаты товара и в деятельности реализации служб, предлагая потребителям тот самый товар или услуг каторый будет реализован ими.

Так как результаты исследований,полученные путем нейромаркетинга имеют научное основание, то это дает возможность компаниям получить точные результаты насчет начатой деятельности, гарантируя обеспечение доходов.

Деятельность осуществления исследований нейромаркетинга не обходится и без проблем, особенно в такой стране как Армения, у каторой малий рынок и проблемы, связанные с экспортом. Для организации этих исследований необходимо не только преодолеть госюридические, социальные и психологические препятствия, но и приобрести большой рынок для реализации исследовательского материала, так как в противном случае эти результаты потеряют свою выгодность из-за 2 простых причин: во-первых, нецелесообразно инвестировать в такие проекты от которых не ожидается соответственные доходы и, во-вторых, что при всем желании, отсутствие маркетингового бюджета также может являться серьезной проблемой.

И так , есть еще много непреодоленных этапов, чтобы нейромаркетинг в РА стал применяться в практике маркетинговых исследованиях, но основываясь на научном потенциале нашей страны и осознав, насколько необходимо увеличить рыночную реализацию производственных товаров, можно полагать, что в ближайшем будущем эта наука будет удостоена большого внимания со стороны компаний и специалистов.

MARKETING DEVELOPMENT STAGES: APPLICATION OF NEUROMARKETING IN RA

Ani Kyureghyan

*PhD student of Management and Information Technology Department
at Eurasia International University,*

Founder and Director of the «SJ MARKET» LTD

Keywords: advertising, Mass Media, customer behavior, decision making process, marketing research, neuromarketing, neuroscience.

Over the past two decades, the economy of RA is going through several stages of its development. In differant stages of this process the concept of « market economy» gets different interpretations. During the regulation of market new marketing skilles were emerged, through which the business entities permeated into an atmosphere of competition. Parallel to the growth of TV commercials and internet marketing, a new concept of neuromarketing was introduced. Over that time,

neuromarketing researches have received a great attention of the large corporations in the globe .

Neuromarketing is a science that gives answers to the questions that market specialists are concerned about for decades. Now the question «What the consumer wants?», or «What is the best performance of a marketing skill?» are not a contentious issues for the marketers. The introduction and implementation of neuromarketing in global economies, gave them an opportunity to register an outstanding sales results. In the case of using neuromarketing, they received the ability to offer their consumers the right product or service that will be truly realized by them. As neuromarketing researches are based on the results obtained through scientific methods, they allow companies to find reliable and measurable results that are ensuring income security for any marketing campaign.

Neuromarketing researches are not exempt from issues too. Particularly in those countries, which have a small trade markets and huge problems with export. In the case of RA, the companies have to overcome not only the legal, social and psychological obstacles, but also realize their researched products or services in a large amounts to cover the expenses done for it. Otherwise these results of these will lose their effectiveness because of the high costs. One thing is clear, small companies that do not have a lot of large product circulation and big revenues, can not invest money in neuromarketing researches for two simple reasons. First,

- It is not convincing to make such expenses without expectations of large income,
- and second, in a small companies the absence of large marketing budget can be a serious issue.

Thus, there are still many stages that Neuromarketing has to overcome in Republic of Armeniato to become a common practice for all local companies, but based on the country's scientific potential and the fact that the necessity to increase the sales and exports of manufactured products in RA is formidable , it can be assumed that this science will receive a great attention of our researchers, professionals and marketers.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԻԶԻՆԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Արաքսյա Թաղամազյան
ՀՀ էկոնոմիկայի նախարարության փորձագետ

Բանալի բառեր՝ լիզինգ, լիզինգատու, լիզինգառու, պայմանագիր, ֆինանսավորում, սպառող, պորտֆել, արտոնություն

Յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման հիմնական գրավականը համարվում է ներդրումների ֆինանսավորման իրական և հասանելի աղբյուրների առկայությունը, քանի որ տնտեսական գործունեություն ծավալող յուրաքանչյուր առևտրային կազմակերպություն պետք է ունենա կամ անհրաժեշտ մեծության սեփական ելակետային կապիտալ, կամ էլ դրա բացակայության դեպքում՝ փոխառության միջոցով ձեռք բերված անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ներդրումներ կատարի կազմակերպության զարգացումը երկարատև ժամանակաշրջանի ընթացքում ապահովելու համար: Բնական է, որ ելակետային սեփական կապիտալի բացակայության դեպքում արտադրության զարգացման, բիզնեսի ընդլայնման, շուկա նոր արտադրանք հանելու և, վերջին հաշվով, տնտեսական կայուն գործունեության ապահովման կարևոր գործոններից մեկը դառնում է փոխառությունը, տվյալ դեպքում նաև ֆինանսական վարձակալությունը (լիզինգը): Լիզինգը գործիք է, որը լիզինգառուին հնարավորություն է տալիս կնքված պայմանագրի համաձայն ժամանակավոր օգտագործման իրավունքով ձեռք բերել անհրաժեշտ նյութական միջոցներ: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 677-րդ հոդվածի առաջին մասի համաձայն «վարձատուն պարտավորվում է վարձակալի նշված գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնակատիրական նպատակներով օգտագործելու համար»: Ընդ որում, գործող օրենսդրության համաձայն լիզինգի պայմանագրում կարող է նախատեսվել դրույթ, որի համաձայն վարձակալված գույքը վարձակալության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը, դառնում է վարձակալի սեփականությունը: Իհարկե միայն պայմանագրային պարտավորությունների կատարման դեպքում: Հարկ է նշել, որ լիզինգը բազմաթիվ երկրներում, անկախ վերջիններիս զարգացման մակարդակից, հանդիսանում է տնտեսվարող սուբյեկտների կարճաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման կարևորագույն աղբյուր:

Զարգացած լիզինգային տնտեսություն ունեցող երկրներում լիզինգը այսօր հանդիսանում է հիմնական միջոցների ձեռքբերման խնդրի լուծման ուղի, որն էլ տնտեսապես ձեռնտու է լիզինգային պայմանագրի բոլոր կողմերի համար: Լիզինգը կարևորագույն նշանակություն ունի հատկապես մանր և միջին

ձեռնարկատիրության, ինչպես նաև շուկա առաջին անգամ մուտք գործող տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական ապահովման համար: Լիզինգը հսկայական դեր ունի նաև նոր տեխնոլոգիաների ներդրման, տնտեսական մրցակցության ապահովման և նոր աշխատատեղերի ստեղծման գործում: Բացի այդ լիզինգը նպաստում է նյութական միջոցների վաճառքի խթանմանը, իսկ անշարժ գույքի լիզինգի դեպքում այն նպաստում է նաև անշարժ գույքի շուկայի զարգացմանը: Այդ տեսանկյունից լիզինգը պետք է դիտարկել ոչ միայն որպես վարձակալություն, այլ ավելի շատ որպես գնումների ֆինանսավորում: Լիզինգային կազմակերպությունների ծառայություններին դիմելու հիմնական պատճառը դա վարկի համեմատությամբ լիզինգի ճկուն լինելն է. ավելի մեղմ պահանջները լիզինգի լրացուցիչ ապահովման և երաշխիքի հարցում, ֆինանսավորման երկարաժամկետ լինելը, բյուրոկրատական ավելի քիչ խոչընդոտները, հարկային արտոնությունները և այլն:

Բազմաթիվ ձեռնարկատերերի համար լիզինգին դիմելու պատճառ է նաև բանկային վարկերի անհասանելիությունը, քանի որ վարկ ստանալու համար վարկառուն պետք է ունենա գրավի առարկա և երաշխիք: Լիզինգը դրանք չի պահանջում՝ բավարար է միայն գործարքի առարկան: Չնայած այն բանին, որ լիզինգային ծառայությունները 2-3 տոկոսով ավելի թանկ են բանկային ծառայություններից, պրակտիկայում, վարկերի հետ համեմատած, հարկային սահմանված արտոնությունների հաշվին տնտեսումը կազմում է 15-20 տոկոս: Սա վկայում է լիզինգի ևս մեկ կարևոր բնութագրիչ գծի մասին: Շատ դեպքերում լիզինգը հանդիսանում է ֆինանսավորման այլընտրանքային աղբյուր՝ ուղղակիորեն չմրցակցելով բանկային վարկավորման հետ:

Հայտնի է, որ տնտեսական աճի արագացման կարևորագույն աղբյուրներից մեկը համարվում է փոքր և միջին բիզնեսի ոլորտը: Ներկայումս միջազգային պրակտիկայում ավելի ու ավելի շատ լիզինգատուներ իրենց գործունեության մեջ առավելություն են տալիս փոքր և միջին կազմակերպություններին, որոնք էլ հանդիսանում են լիզինգային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների հիմնական սպառողները: Ներկայումս լիզինգային բիզնեսը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեության բարդ ձևերից մեկը: Այսպես, նրանում գործում են վարձակալական հարաբերությունները, գրավի դիմաց տրվող վարկային ֆինանսավորման տարրերը, կրեդիտորական պարտավորությունների հաշվարկները և այլ ֆինանսական մեխանիզմներ: Լիզինգային կազմակերպությունները բնութագրվում են վերլուծական, մարկետինգային, ապահովագրական և իրավաբանական ստորաբաժանումների ապահովվածությամբ: Ցանկացած շուկայի, այդ թվում նաև լիզինգային ծառայությունների շուկայի զարգացվածության կարևորագույն ցուցանիշներից մեկն է հանդիսանում մրցակցության առկայությունը: Մրցակցու-

թյունը, առաջին հերթին, նպաստում է մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և բնական է, որ մեծաքանակ կազմակերպությունների ընդգրկումը այդ ոլորտ, վերջին հաշվով, կնպաստի լիզինգի զարգացմանը: ՀՀ լիզինգային ծառայությունների շուկայում արդեն գործում են բազմաթիվ լիզինգային կազմակերպություններ, որոնք ֆինանսական ռեսուրսների դեֆիցիտի պայմաններում ունակ են բազմաթիվ կազմակերպություններին օգնել գոյատևելու՝ ապահովելով արտադրության տեխնիկական նորացումը և ապագա տնտեսական աճը: Լիզինգային կազմակերպությունների մեծ մասը, որպես կանոն, ստեղծվում են բավականին խոշոր կապիտալ ունեցող վարկային կազմակերպությունների կողմից, որոնք, որպես կանոն, նույնպես հանդիսանում են լիզինգային ծառայությունների շուկայի կայունության երաշխիքներից մեկը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության լիզինգի շուկայում լիզինգային ծառայություններ մատուցող հայտնի ընկերություններն են «Ակբա լիզինգը», «Ամերիաբանկը», «Ագրոլիզինգը», «Յունիլիզինգը» և այլն: Ըստ Միջազգային ֆինանսական կազմակերպության 2010 թվականին հրապարակած հաշվետվության «Ակբա լիզինգ» ընկերության կողմից մատուցվող լիզինգային ծառայությունների ծավալը կազմում է տասներեք միլիոն ԱՄՆ դոլլար: Ընդ որում այդ ծառայությունների ծավալը ներկայումս կազմում է ՀՀ լիզինգային ծառայությունների շուկայի գերակշռող մասը: Սա նշանակում է, որ «Ակբա լիզինգը» առաջիկա տարիներին ՀՀ լիզինգի շուկայում գերակշռող տեղ է զբաղեցնելու և կատարելու է լոկոմոտիվի դեր: Այսօր «Ակբա լիզինգը» փորձում է զարգացնել կոմերցիոն ոչ շարժական գույքի լիզինգը ՀՀ-ում: Այդ ուղղությամբ աշխատանքները կատարվում են ֆրանսիացի գործընկերների հետ համատեղ: Նպատակը բիզնես տարածքների ձեռքբերման ֆինանսավորումն է: «Ակբա լիզինգի» կարևոր աշխատանքներից է նաև աջակցությունը փոքր և միջին բիզնեսին: Ընկերությունը շեշտը չի դնում խոշոր կամ շատ խոշոր ծրագրերի ֆինանսավորման վրա: Ամենամեծ ծրագրերի ֆինանսավորումը չի գերազանցում երկու հարյուր հազարից մինչև երեք հարյուր հազար ԱՄՆ դոլլարը, ընդ որում գերակշռող մասը մինչև վաթսուհինգ հազար ԱՄՆ դոլլար արժողությամբ ծրագրերն են: Ընկերությունը շատ փոքր բիզնեսը նույնպես չի ֆինանսավորում, մասնավորապես՝ մինչև երկու հազար ԱՄՆ դոլլար:

Ամերիաբանկը լիզինգային շուկա մուտք է գործել ավելի ուշ, սակայն նրա պորտֆելը 2013 թվականի հաշվետվության համաձայն կազմել է 2,7 միլիարդ ՀՀ դրամ կամ 6,7 միլիոն ԱՄՆ դոլլար, ընդ որում պորտֆելի գերակշռող մասը բաժին է ընկնում շինարարության, սննդի արդյունաբերության, հանքարդյունաբերության, առողջապահության, ինչպես նաև առևտրի և ծառայություն-

ների ոլորտներին: Հարկ է նշել, որ վերոհիշյալ լիզինգային ընկերությունները լիզինգային ծառայություններ մատուցում են առանց լրացուցիչ երաշխիքների:

Հայաստանում գործող «Յունիլիզինգ»-ը և «Ագրոլիզինգ»-ը լիզինգային վարկային կազմակերպություններ են, որոնք լիցենզավորված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, ընդ որում դրանց լիզինգի ընդհանուր պորտֆելը Հայաստանյան լիզինգի շուկայում կազմում է զգալի մեծություն:

«Ագրոլիզինգ» կազմակերպության առաքելությունն է վարկավորման և ֆինանսական վարձակալության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության ոլորտում փոքր և միջին բիզնեսի խթանումը: Ստեղծման օրվանից կազմակերպությունը իրականացրել է բազմաթիվ լիզինգային և վարկային ծրագրեր՝ ֆինանսավորելով հիմնականում գյուղատնտեսական մթերքներ արտադրող և վերամշակող փոքր և միջին բիզնեսի ձեռնարկություններին:

Հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրության համաձայն լիզինգի առարկա կարող է հանդես գալ պրակտիկորեն ցանկացած չսպառվող գույք¹: Ներկայումս լիզինգային կազմակերպությունների մեծամասնությունը մասնագիտացել է ցանկացած տիպի տրանսպորտային միջոցների, արդյունաբերական սարքավորումների, շինարարական և ճանապարհաշինարարական տեխնիկայի լիզինգային ծառայությունների մատուցման մեջ: Միևնույն ժամանակ, ՀՀ-ում լիզինգային կազմակերպությունների գործունեության մեջ անշարժ գույքի լիզինգը նկատելի տեղ չի գրավում: 2013-2014 թթ ընթացքում անշարժ գույքի լիզինգի ոչ մի գործարք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրում չի գրանցվել: Հիմնականում նման ծառայություններ մատուցում են խոշոր լիզինգային կազմակերպությունները, ընդ որում դրանցից շատերը մատուցում են ոչ թե մաքուր լիզինգային ծառայություններ, այլ նախագծային ֆինանսավորման ծրագրեր²:

ՀՀ լիզինգի շուկայի կառուցվածքը սկսած 2006 թվականից մինչ այսօր էական փոփոխությունների չի ենթարկվել և ըստ ոլորտների այն ունի հետևյալ պատկերը՝ արդյունաբերություն՝ 32,6%, տրանսպորտ՝ 31,5%, առևտուր՝ 17,4%, գյուղատնտեսություն՝ 7,2%, ծառայություններ՝ 5,3%, ֆինանսական ոլորտ՝ 3,1%, առողջապահություն՝ 2,6% և այլ ոլորտներ՝ 0,3%³:

Հարկ է նշել, որ լիզինգային գործունեությունը մինչ օրս ծավալվել է միայն շարժական գույքի ոլորտում: Հատկապես մեծ հետաքրքրություն է դրսևորվել տրանսպորտի ոլորտում լիզինգի տրամադրման նկատմամբ: Ինչ վերաբերում է

¹ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 680

² օրինակ՝ կոմերցիոն նշանակություն ունեցող բիզնես տարածքների ֆինանսական վարձակալության ծրագրերը

³ Financial sector Deepening project, page 28

անշարժ գույքի լիզինգին, պետք է փաստել, որ այն ՀՀ-ում դեռևս բավարար չափով զարգացած չէ:

Ընդհանրապես, այս կամ այն երկրում լիզինգի զարգացման մակարդակի մասին պատկերացում են տալիս հետևյալ ցուցանիշները՝ լիզինգային ծառայությունների մատուցման ծավալի և համախառն ներքին արդյունքի հարաբերության գործակիցը և լիզինգային ծառայությունների մատուցման ծավալի և կապիտալ ներդրումների ծավալի հարաբերության գործակիցը: Առաջինը ՀՀ-ում կազմում է 0,06 տոկոսից ցածր, իսկ երկրորդը՝ 0,2 տոկոսից ցածր: Մինչդեռ զարգացող երկրներում այդ գործակիցները առաջինի դեպքում տատանվում են 2-5 տոկոսի սահմաններում, զարգացած երկրներում՝ հասնում են 10 տոկոսի, իսկ երկրորդի դեպքում՝ զարգացած երկրներում տատանվում են 15-30 տոկոսի սահմաններում: Հայաստանի Հանրապետության համեմատությամբ այդ ցուցանիշները ավելի բարձր են հետխորհրդային այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանի Դաշնությունը, Էստոնիայի, Լիտվիայի, Լատվիայի և Ղազախստանի Հանրապետությունները: Լիզինգային գործունեություն իրականացնող ՀՀ առևտրային բանկերի վարկավորման ընդհանուր պրոֆիլում լիզինգային գործարքների մասնաբաժինը կազմում է ոչ նկատելի մեծություն: Բերված փաստերը վկայում են այն մասին, որ ՀՀ-ում լիզինգային հարաբերությունների զարգացման բնագավառում առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ: Ընդ որում այդ չլուծված խնդիրների շարքին առաջնահերթ դասվում են ՀՀ լիզինգային հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի և այլ փոխկապակցված իրավական ակտերի միջև գոյություն ունեցող հակասությունները, որոնք արհեստական խոչընդոտներ են ստեղծում լիզինգի զարգացման ճանապարհին:

ՀՀ-ում լիզինգային ծառայությունների մատուցման ընթացակարգը, ինչպես նշվեց, կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Ֆինանսական վարձակալության կանոնակարգման վերաբերյալ նորմեր են պարունակվում նաև «Վարկային կազմակերպությունների մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքներում և ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներում⁴: Լիզինգին տրամադրվող հարկային արտոնությունները նախատեսված են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում⁵: Լիզինգի կարգավորման ուղղությամբ այլ իրավական ակտեր դեռևս չեն ընդունվել:

ՀՀ-ում լիզինգային ծառայություններ մատուցող ընկերությունների ներկայացուցիչները այն կարծիքին են, որ գործող իրավական դաշտը ամբողջությամբ հստակ չի կանոնակարգում լիզինգային գործարքի իրականացման ողջ գործընթացը: Այդ տեսանկյունից, հաշվի առնելով լիզինգի միջազգային փորձը և

⁴ Հաշվապահական թիվ տասնյոթ ստանդարտ

⁵ ՀՀ օրենքը ավելացված արժեքի հարկի մասին, հոդված 15 կետ 17

լիզինգային գործընթացը հստակ և ամբողջական կանոնակարգելու անհրաժեշտությունը, դեռևս 2012 թվականից ՀՀ կենտրոնական բանկի կողմից նախատեսվում էր ՀՀ-ում ընդունել «Լիզինգի մասին» ՀՀ օրենք: Նշենք, որ օրենքի նախագիծը մշակվել և ներկայացվել էր քննարկման: Օրենքի նախագծով նախատեսվում էր կանոնակարգել լիզինգային գործարքի իրականացման ամբողջ գործընթացը՝ ներառյալ հաշվապահական հաշվառման, հարկման և վերահսկողության հարցերը: Սակայն, հարկ է նշել, որ միջազգային փորձագետները, ուսումնասիրելով ՀՀ-ում առկա գործնական և տեսական փորձը, հանգել էին այն եզրակացությանը, որ ՀՀ-ում հնարավոր չէ կիրառել լիզինգի իրավական կարգավորման մեկ միասնական օրենք, որը սպառնիչ կերպով կներառի իրավական, հարկային, դատավարական և վարչական նորմեր⁶: Հիմնավորումը կայանում էր նրանում, որ լիզինգի կանոնակարգման նման իրավական լուծման տարբերակը հանգեցնում է տաարբեր իրավական ակտերի միջև հակասությունների առաջացմանը, օրինակ՝ լիզինգի մասին ՀՀ օրենքի նախագծում նախատեսված հարկային արտոնությունները չեն ընդունվում հարկային մարմինների կողմից, մինչև դրանք դեռևս նախատեսված չեն յուրաքանչյուր հարկատեսակին վերաբերող համապատասխան օրենքներում: Այլ կերպ, օրենսդրական դաշտի յուրաքանչյուր փոփոխություն պետք է համակողմանիորեն ներառվի տվյալ ոլորտը կարգավորող բոլոր իրավական ակտերում՝ ապահովելով դրանց միասնական կիրառումը և բացառելով հակասությունները: Մեր կարծիքով ՀՀ-ում լիզինգային հարաբերությունների զարգացումը ներկա փուլում անհրաժեշտ է ապահովել ոչ թե մեկ կանոնակարգող օրենքի ընդունման ճանապարհով, այլ անհրաժեշտ է գործող օրենսդրական դաշտում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք կնպաստեն լիզինգի զարգացմանը: Մասնավորապես՝ անշարժ գույքի ոլորտում լիզինգի զարգացմանը խոչընդոտում են ՀՀ քաղաքացիական և ՀՀ հողային օրենսգրքերի միջև առկա հակասությունները: Այսպես, ըստ գործող օրենսդրության շենքերը և շինությունները կարող են հանդիսանալ լիզինգի առարկա, իսկ դրանց տակ գտնվող հողը՝ ոչ: Դա առաջացնում է իրավական հակասություն, անշարժ գույքի լիզինգի իրականացման արդյունքում հողի սեփականության իրավունքը և շենք, շինությունների սեփականության իրավունքը կարող են պատկանել տարբեր սուբյեկտների: Տվյալ հակասությունը վերացնելու համար առաջարկվում է ՀՀ հողային օրենսգրքում կատարել լրացում՝ հողի լիզինգը նախատեսելու և կանոնակարգելու վերաբերյալ:

Լիզինգային գործարքները հատկապես կարևոր նշանակություն ունեն գյուղատնտեսության զարգացման ոլորտում, մասնավորապես՝ համապատաս-

⁶ Report by John B. Grimmert commissioned by International Finance Corporation for the Ministry of Economy of the Republic of Armenia, October 25, 2010

խան գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման բնագավառում, որը ներկայումս համարվում է պետական քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը: Քանի որ լիզինգային ընկերությունների առջև ծառայած խնդիրները կապված են նաև հարկային և մաքսային դաշտի հետ, քննարկենք նաև լիզինգի առարկայի եկամտահարկով հարկման և լիզինգի առարկայի ներմուծման ժամանակ մաքսային արժեքի որոշման հետ կապված պրակտիկայում առաջացող խնդիրները:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ֆիզիկական անձի կողմից մեկ այլ ֆիզիկական անձի գույք օտարվելու դեպքում եկամտահարկ չի առաջանում, մասնավորապես՝ օրենքի համաձայն հարկվող եկամուտը որոշելիս հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից հարկային գործակալ չհանդիսացողներից ֆիզիկական անձանց ստացած գումարները, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով գույքի վաճառքից ստացված գումարների⁷: Մինչդեռ այն դեպքում, երբ գույքը ձեռք բերող է հանդիսանում իրավաբանական անձը, ապա նա տվյալ գործարքում հանդես է գալիս որպես հարկային գործակալ և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն պարտավոր է հաշվարկել ու պահել եկամտահարկի գումարը:

Այսպիսով, լիզինգային ծառայությունների մատուցման ժամանակ լիզինգատու իրավաբանական անձը հանդես է գալիս որպես հարկային գործակալ և առաջանում է եկամտահարկի մուծման պարտավորություն: Նման հանգամանքը «անհավասար» պայմաններ է ստեղծում լիզինգային և վարկային գործարքների իրականացման ժամանակ: Այսպես, անհրաժեշտ գույքի ձեռքբերումը առավել ձեռնտու է իրականացնել վարկային միջոցների հաշվին, քանի որ տվյալ դեպքում եկամտահարկի պարտավորություն չի առաջանում: Իսկ երբ լիզինգի միջոցով գույքի ձեռքբերումը միջնորդավորվում է լիզինգատու իրավաբանական անձի կողմից, առաջանում է եկամտահարկի պարտավորություն: Արդյունքում լիզինգի դեպքում գույքի արժեքին ավելանում է նաև եկամտահարկի գումարը:

Ակնհայտ է, որ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում վերացնելու այդ «անհավասարությունը» ծնող պատճառները. լիզինգային գործարքների ժամանակ անհրաժեշտ է բացառել եկամտահարկի մուծումը: Հետևաբար պետք է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ, մասնավորապես՝ կարելի է որպես համախառն եկամտից նվազեցվող եկամուտ համարել նաև գույքի օտարումից ֆիզիկական անձանց

⁷ <<ՀՀ օրենքը եկամտահարկի մասին>> հոդված 9

ստացած գումարները, եթե այդ գույքը բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ձեռք է բերվել ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալի տիրապետմանը հանձնելու նպատակով: Ըստ էության նպատակահարմար է նաև բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից գույքի իրացման՝ ֆինանսական վարձակալության տրամադրելու ժամկետ սահմանել, օրինակ, գույքը բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ձեռք բերվելու կամ, այլ կերպ ասած, բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությանն անցնելու պահից՝ մեկ տարվա ընթացքում: Տվյալ դեպքում բանկը կամ վարկային կազմակերպությունը գույքը ձեռք են բերում ոչ թե իրենց կարիքները բավարարելու, այլ մեկ այլ անձի լիզինգով տրամադրելու նպատակով, հետևաբար ոչ մի խոսք չի կարող լինել մյուս հարկային գործակալների հետ անհավասար դրության մեջ դնելու մասին: Հակառակը, լիզինգային գործարքների դեպքում եկամտահարկի մուծման բացառումը կոչված է վերացնել այն անհավասարությունը, որը գործող օրենսդրության պայմաններում առկա է ֆինանսական տարբեր գործիքների՝ վարկի և լիզինգի միջև՝ չեզոքացնելով միջնորդ հանդիսացող լիզինգատուի առկայության ազդեցությունը ֆիզիկական անձից ձեռք բերվող գույքի գնի վրա:

Լիզինգի առարկաների ներմուծման ժամանակ մաքսային արժեքի որոշման հետ կապված խնդրի էությունը կայանում է նրանում, որ լիզինգային կազմակերպությունները, ունենալով երկարատև հաստատված գործնական կապեր մատակարարների հետ, նրանցից ապրանքները հաճախ ստանում են ձեռքբերման զեղչված գներով, որոնք բավականին ցածր են գործող շուկայական գներից: Սակայն այդ հանգամանքը հաշվի չի առնվում գույքի մաքսազերծման ժամանակ և մաքսազերծումն իրականացվում է ոչ թե կատարված գործարքի գնով, այլ մաքսային մարմինների կողմից որոշված գնով: Այս հանգամանքը խոչընդոտում է լիզինգային հարաբերությունների զարգացմանը, քանի որ գործող կարգը արհեստականորեն բարձրացնում է լիզինգի առարկա համարվող գույքի արժեքը: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում 2001 թվականից գործող ՀՀ մաքսային օրենսգիրքը նախատեսում է կիրառել մաքսային արժեքի որոշման հետևյալ մեթոդները՝ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդը, մաքսային արժեքի որոշումն ըստ նույն ապրանքների գործարքի գնի, մաքսային արժեքի որոշումն ըստ համանման ապրանքների գործարքի գնի, Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնի հիման վրա Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշումը, մաքսային արժեքի որոշումն ըստ հաշվարկային արժեքի, մաքսային արժեքի որոշման պահուստային մեթոդը: Հարկ է նշել, որ մաքսային արժեքի որոշման վերոհիշյալ մեթոդները կիրառվում են ըստ հերթականության, բացառությամբ

օրենքով նախատեսված դեպքերի: Այլ կերպ, եթե մաքսագերծման ենթակա ապրանքը չի բավարարում առաջին մեթոդով սահմանված պայմանները, ապա մաքսային արժեքի գնահատումը կատարվում է երկրորդ մեթոդով և այսպես շարունակ՝ մինչև վերջին մեթոդը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածը սահմանում է, որ մաքսագերծման ենթակա ապրանքների մաքսային արժեքը առաջին հերթին որոշվում է գործարքի գնի մեթոդով, եթե բավարարվում են օրենքով սահմանված պահանջները: Օրինակ, մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է գործարքի գնի մեթոդով, եթե՝ ա) մաքսային մարմինները չունեն բավարար հիմքեր սույն հոդվածի 1-ին կետով սահմանված փաստաթուղթն անարժանահավատ ճանաչելու համար. (սույն հոդվածի առաջին կետի համաձայն՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու համար հայտարարատուի կողմից մաքսային հայտարարագրի հետ միասին պետք է ներկայացվի ապրանքների ձեռքբերման համար արտահանման երկրում վճարման փաստաթուղթը, որը իր հերթին պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկություններ): Նույն հոդվածի գ) ենթակետի համաձայն՝ ապրանքի գինը կհաշվարկվի գործարքի գնի մեթոդով, եթե հայտարարագրված մաքսային արժեքն էականորեն ցածր կամ բարձր չէ նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից ընդունված նույն կամ համանման ապրանքների համար գործարքի գնի մեթոդով որոշված համապատասխանաբար ամենացածր կամ ամենաբարձր մաքսային արժեքից: Այստեղից հետևում է, որ եթե ապրանքը ձեռք է բերվել վաճառողից էական ցածր գնով գործարքի գնի մեթոդը չի կիրառվի:

Ֆինանսական ընկերությունների ներկայացուցիչների հետ կազմակերպված հանդիպումները վկայեցին այն մասին, որ պրակտիկայում այս խնդիրը հաճախ է առաջանում և արդյունքում արհեստականորեն բարձրանում է ապրանքի գինը, քանի որ պրակտիկայում մաքսագերծման ժամանակ (հատկապես տրանսպորտային միջոցների) կիրառվում է մաքսային արժեքի որոշման հաշվարկային արժեքի մեթոդը: Որպես խնդրի լուծում ըստ էության կարելի է առաջարկել, որ լիզինգային ընկերությունների համար այս սահմանափակումը վերացվի, այսինքն՝ որպեսզի ներմուծվող՝ լիզինգի առարկա համարվող գույքը մաքսագերծելիս, բոլոր դեպքերում մաքսային արժեքը որոշվի ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի մեթոդով՝ հիմք ընդունելով ապրանքի ձեռքբերման համար ներկայացված հաշիվ-ապրանքագրում արտացոլված գինը: Այդ նպատակով ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի երկրորդ մասի <<ա>> և <<գ>> ենթա-

կետերում անհրաժեշտ է լրացում կատարել, ըստ որի տվյալ ենթակետերով նախատեսվածը չպետք է կիրառվի լիզինգի առարկա համարվող ապրանքների մաքսագերծման դեպքում:

Այս սահմանափակումը կարող է վերացվել, միննույն ժամանակ, նաև հաշվի առնելով ՀՀ-ում ռիսկայնության վրա հիմնված մաքսագերծման քաղաքականությունը և այն հանգամանքը, որ բանկերը և վարկային կազմակերպությունները կայացած կազմակերպություններ են և գտնվում են ՀՀ Կենտրոնական բանկի մշտական վերահսկողության ներքո, ուստի առկա է նրանց ձեռք բերած լիզինգի առարկա հանդիսացող գույքի արժեքի հետմաքսային ստուգման իրական հնարավորություն: Ի վերջո ՀՀ մաքսային օրենսգրքով մաքսային արժեքի որոշման կանոնների նպատակը ներմուծվող ապրանքի ձեռք բերման իրական արժեքի բացահայտումն է:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

Առաջին, լիզինգի շուկայի զարգացումը խթանում են սպառողները, քանի որ վերջիններիս պահանջարկի հիման վրա է ձևավորվում և իրացվում լիզինգի առարկա հանդիսացող այս կամ այն ապրանքը: Հաշվի առնելով այդ հանգամանքը անհրաժեշտ է բարձրացնել լիզինգի, որպես ֆինանսական գործիքի, էության վերաբերյալ հաճախորդների (հատկապես փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում, ինչպես նաև պոտենցիալ լիզինգառուների շրջանում) իրազեկվածության աստիճանը: Այսպիսով, անհրաժեշտ է նախապատրաստել հաճախորդին, իրազեկել, որ դա ոչ թե վարկ է, այլ որոշակի նախագիծ, որի իրականացմանը նա պետք է պատրաստ լինի: Դա նշանակում է, որ մարքեթինգը կամ, այլ կերպ ասած, PR-ռազմավարությունը լիզինգային ընկերությունում այսօր պետք է կարևոր տեղ զբաղեցնի:

Երկրորդ, ՀՀ-ում լիզինգի զարգացման ճանապարհին հիմնական խոչընդոտ է հանդիսանում լիզինգային ծառայությունների մատուցման իրավական կարգավորման դաշտի անկատարությունը: Գործող իրավական դաշտը ամբողջությամբ և հստակ չի կարգավորում լիզինգային գործարքի իրականացման ողջ գործընթացը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է փոփոխություններ կատարել լիզինգի դաշտը կանոնակարգող հետևյալ օրենսդրական ակտերում. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում, ՀՀ մաքսային օրենսգրքում, ինչպես նաև ՀՀ հողային օրենսգրքում, վերացնելու համար վերջինիս և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի միջև առկա հակասությունը:

Այսպես, «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է համախառն էկամտից նվազեցվող գումար համարել գույքի օտարումից ֆիզիկական անձանց ստացած եկամուտները, եթե այդ գույքը հարկային գործակալ համարվող բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ձեռք է բերվել

լիզինգի պայմանագրով վարձակալի տիրապետմանը հանձնելու նպատակով: Գործող կարգի համաձայն, երբ լիզինգի միջոցով գույքի ձեռքբերումը միջնորդավորվում է լիզինգատու իրավաբանական անձի կողմից, առաջանում է եկամտահարկի պարտավորություն: Արդյունքում գույքի արժեքին ավելանում է նաև եկամտահարկի գումարը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» և «գ» ենթակետերում անհրաժեշտ է լրացում կատարել, ըստ որի տվյալ ենթակետերով նախատեսված սահմանափակումները չպետք է կիրառվեն լիզինգի առարկա համարվող ապրանքների մաքսագերծման դեպքում: Գործող կարգի համաձայն այդ սահմանափակումները կիրառելու դեպքում լիզինգի առարկա համարվող ապրանքները կնքված գործարքի գնից էականորեն բարձր արժեքով են մաքսագերծվում:

ПРЕПЯТСТВИЯ НА ПУТИ РАЗВИТИЯ ЛИЗИНГА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И СПОСОБЫ ИХ УСТРАНЕНИЯ

Արակս Թարլամաչյան

Эксперт Министерства Экономики РА

Ключевие слова: лизинг, арендатор, арендодатель, договор, финансирование, потребитель, портфель, льгота

В работе были изучены и выявлены препятствия на пути развития лизинга в Республике Армения (РА), в частности, в качестве основного препятствия была выделена несовершенство законодательства РА. Имея цель соблюдать мировые тенденции развития лизинга в РА предлагается предоставление некоторых льгот как во время налогообложения лизинговых операций, так и при таможенном оформлении импортируемых объектов лизинга.

В законе о подоходном налоге и в таможенном кодексе РА предлагаются такие изменения, которые сыграют стимулирующую роль в деле роста числа лизинговых сделок.

Развитию лизинга стимулируют также потребители, так, как на основе их спроса формируются и реализуются те или иные товары, являющиеся предметами лизинга. С этой точки зрения предлагается повысить уровень осведомленность потребителей о лизинге.

**THE OBSTACLES TO THE DEVELOPMENT OF LEASING IN THE REPUBLIC OF
ARMENIA AND THE WAYS TO ELIMINATE THEM**

Araksya Tarlamazyan

Expert at Ministry of Economy of RA

Key words: leasing, tenant, lessor, agreement, financing, consumer, portfolio, privilege

In the work were studied and revealed the obstacles to the development of leasing in the Republic of Armenia (RA), in particular as a principal obstacle was revealed the imperfection of legislative field of leasing in RA.

Having an aim to meet the international trends of development of leasing in RA, is offered to give certain privileges not only during the taxation of results of leasing agreements but also during the custom clearance of imported leased goods. Certain changes are offered in the law on Income tax and in Tax code of RA which will play a role in stimulating the growth of the number of leasing transactions. The consumers also stimulate the development of leasing, because the goods which are considered as objects of leasing, are formulated and sold based on the demand of consumers. In this point of view is offered to increase customer awareness about leasing.

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՀՀ
ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Գրիգոր Ժամակոչյան

*Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի ասպիրանտ,
«Արդշինբանկ» ՓԲԸ «Շենգավիթ» մասնաճյուղի իրավաբանական
անձանց ֆինանսական խորհրդատու*

Բանալի բառեր՝ ապրանքային նշան, մտավոր սեփականություն, արդյունաբերական սեփականություն, միջազգային համաձայնագիր, իրավական պաշտպանություն, մրցակցություն, ազգային օրենսդրություն

Մտավոր սեփականության միջազգային պահպանության անհրաժեշտությունը ակնհայտ դարձավ, երբ 1873 թվականին Վիենայում տեղի ունեցած նորությունների միջազգային ցուցահանդեսին հրավիրված օտարերկրյա մասնակիցները հրաժարվեցին մասնակցել միջոցառմանը: Նրանք իրենց այդ քայլը պատճառաբանեցին նորությունների կրկնօրինակման վտանգի առկայությամբ:

Ազատ շուկայական տնտեսության կարևոր բնութագրիչներից մեկը շուկայում տարաբնույթ ապրանքների և ծառայությունների առկայությունն է: Բնականաբար, առաջանում է օբյեկտիվ անհրաժեշտություն տարբերակել շուկան հեղեղած ապրանքները և ծառայությունները: Այդ նպատակով արտասահմանյան երկրների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված են «ապրանքային նշանի» և «սպասարկման նշանի» ինստիտուտները:

Արդի միջազգային տնտեսական հարաբերությունների պայմաններում, երբ միջազգային գիտատեխնիկական համագործակցությունը դարձել է համաշխարհային տնտեսության կարևորագույն բնորոշիչներից մեկը, ապրանքային և սպասարկման նշանների իրավական պաշտպանությունը էապես մեծացրել է իր տնտեսական նշանակությունը:

Միջազգային համաձայնագրերի գերակշռող մասն ուղղված են արդյունաբերական սեփականության՝ մասնավորապես ապրանքանիշերի պահպանությանը, դրանք են՝

- «Ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին մադրիդյան համաձայնագիր»՝ 1891թ.,
- «Արդյունաբերական սեփականության պահպանման փարիզյան կոնվենցիա»՝ 1883թ.,
- «Նշանների պատկերային տարրերի միջազգային դասակարգումը հիմնադրող Վիեննայի համաձայնագիր»՝ 1973թ.,

- «Նշանների գրանցման համար ապրանքների ու ծառայությունների դասակարգման Նիցցայի համաձայնագիր» 1957 թ,

և մի շարք տարածաշրջանային բնույթ կրող համաձայնագրեր:

Փարիզյան կոնվենցիան համարվում է այս ոլորտը կանոնակարգող ամենավաղ և ամենաընդգրկուն համաձայնագիրը¹: Այն ամբողջովին բաց միջազգային համաձայնագիր է: Փարիզյան կոնվենցիային անդամակցությունը համարվում է պարտադիր պայման արդյունաբերական սեփականության պաշտպանությանը ուղղված այլ համաձայնագրերին անդամակցելու համար: Փարիզյան կոնվենցիայի կարևորագույն դրույթներից մեկը ազգային ռեժիմի սկզբունքն է՝ համաձայն որի կոնվենցիայի անդամ պետությունները պարտավորվում են համաձայնագրի այլ անդամ երկրների քաղաքացիներին տրամադրել, սեփական քաղաքացիներին համարժեք իրավունքներ արդյունաբերական սեփականության պաշտպանության ոլորտում: Համաձայնագրի չորրորդ հոդվածը բովանդակում է փարիզյան կոնվենցիայի մյուս հիմնապայմաններից՝ առաջնահերթության սկզբունքը: Կոնվենցիայի անդամ երկրներից մեկում, օրենքին համապատասխանող հայտ ներկայացնող անձը անդամ մյուս երկրներում ստանում է վեցամսյա առաջնահերթության իրավունք ապրանքային նշանի համար:

Փարիզյան կոնվենցիայի ստորագրմանը 1891 թվականին հաջորդեց նշանների միջազգային գրանցման Մադրիդյան համաձայնագրի կնքումը²: Մադրիդյան համաձայնագիրը համարվում է փարիզյան կոնվենցիայի շրջանակներում կնքված առաջնային համաձայնագիրը: Մադրիդյան համաձայնագրի օգնությամբ տեղի է ունենում ծագման երկրում գրանցված ապրանքային նշանների իրավական պաշտպանությունը համաձայնագրի անդամ երկրներում: Մադրիդյան համաձայնագրի առավելությունը կայանում է նրանում, որ հայտը ներկայացվում է միայն ազգային արտոնագրային մարմինների միջոցով, որի հետևանքով բազմաբնույթ միջնորդական ծառայությունների կարիքը չի զգացվում³: Չնայած այն հանգամանքին որ Մադրիդյան համաձայնագիրը ընձեռում է մի շարք առավելություններ՝ այնպիսի երկրներ ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ճապոնիան, Կանադան, Մեծ Բրիտանիան չեն շտապում ստորագրել այդ համաձայնագրի տակ:

¹ Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիա 1883թ

² Мадридское соглашение о международной регистрации знаков. Женева: ВОИС, 1984 год. М.: Роспатент «Международные договоры и соглашения в области охраны промышленной собственности» 1995 г

³ Международные договоры и соглашения в области охраны интеллектуальной собственности, Москва 1997г

1989 թվականին ստորագրված մադրիդյան համաձայնագրի արձանագրությունը վերացնում է մի շարք իրավական պատնեշներ հնարավորություն է ընձեռում երկրիների լայն շրջանակի համար իրենց համար ընդունելի պայմաններով դառնալ նշանների միջազգային գրանցման համակարգի մասնակիցներ: Արձանագրության պայմանները թույլ են տալիս նաև տարածաշրջանային համակարգերին, որոնք ունեն նշանների գրանցման հատուկ մարմիններ՝ օրինակ Եվրոպական համակարգը, դառնալ համաձայնագրի սուբյեկտներ: Այս քայլերը իրականացվում են մադրիդյան միության հովանու տակ հնարավորինս մեծ թվով երկրների ներգրավումն ապահովելու համար: Մինևույն ժամանակ արձանագրությունը հնարավորություն է տալիս նշանը միաժամանակ գրանցել մադրիդյան համաձայնագիրը, մադրիդյան համաձայնագրի արձանագրությունը ստորագրած երկրներում և ԵՄ երկրներում:

Ապրանքանիշերի իրավական պաշտպանությանն ուղղված կարևորագույն համաձայնագրերից է Նիցցայի համաձայնագիրը: Կնքումից ի վեր այն փոփոխությունների է ենթարկվել՝ 1967 - 1977թ.թ. - ին: Նիցցայի համաձայնագրով նախատեսված է համաձայնագիրը ստորագրած երկրների կողմից ապրանիշերի գրանցման համար ապրանքների և ծառայությունների միասնական դասակարգման իրականացում⁴:

Համաձայնագիրը բաց է փարիզյան կոնվենցիայի անդամ երկրների համար: Ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման համաձայնագիրը միջազգային համագործակցության արդյունքների՝ մեկ միասնական համակարգի մեջ բերման վառ օրինակ է: Համաձայնագրով ամրագրված դասակարգումը օգտագործվում 95 երկրների ապրանքանիշերի գործակալությունների կողմից: Համաձայնագրի համաձայն երկրները նշանները գրանցելու համար օգտագործում են միասնական դասակարգում, որպեսզի հեշտացնեն ապրանքանիշերի պաշտպանությունը անդամ երկրների համար: Դասակարգումը մշակվել է անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, սակայն դասակարգման նկատմամբ հետաքրքրություն ներկայացնող երկրներին Մտավոր սեփականության միջազգային կազմակերպությունը օժանդակում է այն՝ իրենց լեզուներով թարգմանելու համար:

Ընդհանուր առմամբ կարելի է գրականացնել, որ միջազգային բոլոր համաձայնագրերը ուղղված են ապրանքանիշերի գրանցման չափորոշիչների նույնականացմանը, որը հանդիսանում է դրանց իրավական պաշտպանության կարևորագույն նախադրյալներից մեկը:

⁴ Նշանների գրանցման համար ապրանքների և ծառայությունների դասակարգման Նիցցայի համաձայնագիր, 1957թ.

Միջազգային համակարգերի և ազգային ընթացակարգերի համահունչ գործունեությունը, միանման մոտեցումների որդեգրումը՝ գլոբալիզացիայի արդի պայմաններում դարձել է ուղղակի անհրաժեշտություն: Դրա վառ ապացույցը հանդիսացավ ռուսական «Վիմպելկոմ» ընկերությանը պատկանող «Beeline» ապրանքանիշի Հայաստանում գրանցվելու հետ ծագած անախորժությունները, երբ այդ անվանումը վիճարկվեց երկու տնտեսվարողների միջև: 1996թ-ից սկսած, առանց որևէ խոչնդոտների տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն է ծավալում «Բի Լայն» ընկերությունը: Ընկերության անվանման հնչողությունը շփոթվելու աստիճանման է Վիմպելկոմի «Beeline» ապրանքային նշանի հնչողությանը:

2006 թվականին «Beeline» ապրանքանիշի մուտքը հայաստանյան հեռահաղորդակցության շուկա և հայկական «Բի Լայն» ընկերության գործունեության ոլորտի ընդլայնումը հանգեցրեցին անհամաձայնությունների և դատական գործընթացների:

Մտավոր սեփականության պահպանության համակարգը Հայաստանի Հանրապետությունում սկսվել է ձևավորվել անկախության առաջին տարիներից:

1993 թվականից ՀՀ-ն հանդիսանում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, իսկ 1995 թվականից՝ Եվրոպական արտոնագրային կազմակերպության անդամ:

1992թ-ին հիմնադրվեց ՀՀ կառավարությանը կից արտոնագրային գործակալությունը, մեկ տարի անց՝ 1993 թվականի դեկտեմբեր ամսին ձևավորվեց հեղինակային իրավունքի ազգային գործակալությունը: Ավելի ուշ՝ 2002 թվականին ՀՀ կառավարությունը նշված կառույցները միավորեց մեկ կառույցի մեջ, որը անվանվեց մտավոր սեփականության գործակալություն: Նորաստեղծ կառույցը օժտված է ինքնուրույնությամբ, սակայն գործում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կից:

Ապրանքանիշերի, ծագման տեղանունների և աշխարհագրական նշումների իրավական պահպանությանն ուղղված օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում սկսել է ձևավորվել 1995 թվականից: Ձևավարման ընթացքում կրած փոփոխությունների պատճառներից են միջազգային համաձայնագրերի պահանջները: Ընդունված օրենքները ավելի կատարյալ են դարձել դրանց պրակտիկ կիրառության հետևանքով առաջացած խնդիրների լուծման միջոցով:

1997 թվականի մայիսի 12-ին ընդունվեց և նույն թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ «Ապրանքային և սպասարկաման նշանների, ապրանքի

ծագման տեղանունների մասին»>> ՀՀ օրենքը, այնուհետև, 2000 թվականի մարտի 20-ին ընդունվեց և նույն թվականի ապրիլի 15-ին ուժի մեջ մտավ մեկ այլ համանուն օրենք:

2010 թվականի ապրիլի 29-ին ընդունվեց և նույն թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ Ապրանքային նշանների մասին ՀՀ օրենքը, որը մինչ այժմ գործում է: Համաձայն հիշյալ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի՝ ապրանքային նշանը (սպասարկման նշանը) նիշ է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար:

Նույն բովանդակությամբ հոդվածներ են պարունակում նաև Ֆրանսիայի Հանրապետության՝ 1992 թվականի Մտավոր սեփականության օրենսգիրքը, Միացյալ Թագավորության՝ 1994թ.-ի Ապրանքային նշանների ակտը և ԱՄՆ-ի՝ 1946թ.-ի Լենհամի ակտը ապրանքային նշանների մասին: Մասնավորապես՝ Ֆրանսիայի Հանրապետության Մտավոր սեփականության օրենսգրքի Լ711-1 հոդվածը սահմանում է. Ապրանքային նշանը կամ սպասարկման նշանը գրաֆիկորեն պատկերման հնարավորություն ունեցող նիշ է, որը ծառայում է ֆիզիկական և իրավաբանական անձանց ապրանքները և ծառայությունները տարբերակելու համար:

<<Ապրանքային նշանների մասին»>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է՝

- օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման հիման վրա,
- օրենքով սահմանված կարգով ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու հիման վրա,
- Մադրիդյան համաձայնագրի կամ Մադրիդյան համաձայնագրի արձանագրության համաձայն՝ միջազգային գրանցման հիման վրա:

Ապրանքային նշանին իրավական պահպանության տրամադրման իրավական հիմքը հանդիսանում է դրա պետական գրանցումը, որը իրականացվում է պետական լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մտավոր սեփականության հարցերով լիազորված գործադիր իշխանության հանրապետական մարմինը՝ Մտավոր սեփականության գործակալությունը:

Քանի որ շուկայում առկա այլ ապրանքային նշանին շփոթելու աստիճան ապրանքային նշանի օգտագործումը Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի ուժող համարվում է անբարեխիղճ մրցակցություն, ապա հարց է ծագում. արդյոք Տնտեսական մրցակցության պաշտպանության

հանձնաժողովը իրավունք ունի որոշելու ապրանքային նշանիմեկ այլ ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման լինելու հանգամանքը:

<<Ապրանքային նշանի մասին>> օրենքի ուժով՝ ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման նաև, եթե այն՝

1) տրվել է Փարիզյան կոնվենցիայի մասնակից կամ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ որևէ երկրում ապրանքային նշանի իրավատեր հանդիսացող անձի գործակալի կամ ներկայացուցչի կողմից առանց իրավատիրոջ թույլտվության, բացառությամբ այն դեպքերի, երբ գործակալը կամ ներկայացուցիչը կապացուցեն իրենց գործողությունների արդարացված լինելը.

2) նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, որը գրանցվել է նույն կամ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների համար, և չերկարաձգման պատճառով այդ գրանցման գործողությունը դադարեցվել է ապրանքային նշանի հայտի ներկայացման թվականին նախորդող երկամյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ավելի վաղ ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնությունը, կամ վերջինս չի օգտագործում իր ապրանքային նշանը.

3) կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ նաև, եթե ապրանքային նշանի գրանցման նպատակներով հայտատուն ներկայացրել է այնպիսի կեղծ և անհիմն փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, առանց որոնց հնարավոր չէ ապրանքային նշանի գրանցումը:

Այս ոլորտում ազգայի օրենսդրության ձևավորումը, ժամանակային առումով համապատասխանեց երկրում տնտեսական աճի արձանագրման հետ: Սա կարևորվում է այն պատճառով, որ նոր ապրանքային նշանների գրանցման հայտերի ներկայացումը անմիջականորեն կապված է տնտեսական ակտիվության հետ: Հայտերի ներկայացման թե քանակը, թե ներկայացնողների ազգային պատկանելությունը հստակորեն մատնանշում է Հայաստանի Հանրապետությունում արձանագրված տնտեսական աճը: Եթե 1997 թվականին

ազգային ընթացակարգով եղել է միայն 65 հայտ⁵, ապա 2013 թվականին համանուն ցուցամիշը կազմել է 1796⁶:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ ապրանքային և սպասարկման նշանները կարգավորող միջազգային կոնվենցիաները ուղված են արդի գլոբալացման պայմաններում միասնական համակարգի ձևավոմանը, որը հնարավորություն կտա խուսափել տարատեսակ մեկնաբանումներից և ազգային օրենսդրություններում առկա տարբերությունների պատճառով առաջացող խնդիրներից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ օրենսդրական դաշտը ընդհանուր առմամբ համապատասխանում է միջազգային ստանդարտներին և վերոնշյալ կոնվենցիաների հիմնադրույթներին: Հայաստանի Հանրապետությունում ապրանքային և սպասարկման նշանների իրավական պահպանության հիմնական գրավականը արդեն իսկ առկա օրենսդրական դաշտի գործնականում կիրառումն է, որը այսօր իրականացվում է ոչ պատշաճ մակարդակով:

МЕЖДУНАРОДНЫЕ КОНВЕНЦИИ И АРМЯНСКАЯ ЗАКОНОДАТЕЛЬНОЕ БАЗА ПО ЗАЩИТЕ ТОРГОВЫХ ЗНАКОВ И ЗНАКОВ ОБСЛУЖИВАНИЯ

Григор Жамакочян

*Аспирант Европейской региональной академии образования,
Финансовый консультант в АРДШИНБАНК*

Ключевые понятия: товарный знак, интеллектуальная собственность, промышленная собственность, международные соглашения, правовая защита, конкуренция, национальное законодательство.

Анализируя результаты исследований можно сказать, что международные конвенции по защите товарных знаков и знаков обслуживания направлены на строительство единой системы директив, направленных на регулирование этой отрасли в условиях современной глобализации. Единая система позволит избежать различных проблем, возникающих из-за различий в национальном законодательстве.

Исследования показывают, что законодательная база Армении в целом соответствует международным стандартам.

⁵ www.apia.am (Մտավոր սեփականության գործակալություն)

⁶ http://www.armstat.am/file/article/soc_13_50.pdf

Главная задача соответствующих органов власти- гарантировать реализацию уже существующей нормативно-правовой базы на практике, которая сейчас не выполняется должным образом.

INTERNATIONAL CONVENTIONS AND ARMENIAN LEGISLATIVE FRAMEWORK FOR THE PROTECTION OF TRADEMARKS AND SERVICE

Grigor Zhamakochyan

*Ph.D. Student at European Educational Regional Academy,
Finance Consultant of Ardshinbank*

Key words: the trademark, intellectual property, industrial property, international agreements, legal protection, competition, national legislation.

Analyzing the results of the research can be said that international conventions on the protection of trademarks and service marks are aimed at the construction of a unified system of directives aimed at regulating the industry in today's globalization. Unified system to avoid various problems arising from differences in national legislation.

Studies show that the legislative framework in Armenia is generally consistent with international standards.

The main task of the relevant authorities to ensure implementation of the power-existing legal framework in practice, which is not performed properly.

ԼՈՂԻՍՏԻԿԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լիդա Աղաջանյան

*Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ասպիրանտ,
<<Ինտեր Մերվիս ՄՊԸ>>-ի հաշվապահ*

Բանալի բառեր՝ լոգիստիկա, լոգիստիկական մոտեցում, հոսքերի կառավարում, զարգացում, նախադրյալ

ՀՀ տնտեսության զարգացման ներկա պայմաններում առավել հրատապ են դառնում այն գործընթացները, որոնք կողմնորոշվում են շուկայի բազմաբնույթ պահանջմունքների բավարարման ուղղությամբ: Այդպիսի գործընթացների արդյունավետ իրականացումը կարող է ապահովել լոգիստիկական մեթոդաբանությունը, որը թույլ է տալիս լավարկելու ապրանքային մատակարարումների ամբողջ շղթան՝ նյութատեխնիկական ապահովումից մինչև պատրաստի արտադրանքի բաշխումը:

Լոգիստիկան պահանջում է, որ նյութերի գնումը, արտադրանքի արտադրությունը և այն սպառողին հասցնելը կատարվի ճիշտ ժամանակին, այսինքն՝ անհրաժեշտ ապրանքները անհրաժեշտ քանակությամբ և անհրաժեշտ պահին լինեն անհրաժեշտ վայրում: Լոգիստիկական մոտեցումը առանձնանում է նրանով, որ կառավարման օբյեկտ են հանդիսանում նյութական, ֆինանսական, տեղեկատվական հոսքերը՝ որպես միասնական ամբողջություններ և դիտարկվում են մշտական գործընթացի մեջ, որոշակի ժամանակային միջակայքում:

Լոգիստիկան ներկայումս լայնորեն օգտագործվում է ամբողջ աշխարհում և, ինչպես նշում են շատ տնտեսագետներ, առանց լուծելու լոգիստիկական խնդիրները դժվար է հաղթել մրցակցային պայքարում:

Լոգիստիկական մոտեցման հիմնական նպատակը նյութական հոսքերի համալիր կառավարումն է: Լոգիստիկայի գլխավոր խնդիրը նյութական և տեղեկատվական հոսքերի կարգավորման և վերահսկողության ամբողջական արդյունավետ համակարգի ստեղծումն է, որը կապահովի սպառողներին բարձր որակի պատրաստի արտադրանքի մատակարարումը, փոփոխվող շուկայական պայմաններին նվազագույն ծախսերով առավելագույն հնարավոր հարմարեցումը, շուկայական մասնաբաժնի պահպանումն ու ավելացումը, մրցակիցների նկատմամբ առավելությունների ձեռքբերումը:

Ինչպես ցույց է տալիս արտասահմանյան փորձը, լոգիստիկական կառավարման որոշակի տեսական դրույթների և գործնական լծակների պահանջը կախված է ժամանակի որոշակի հատվածում ձևավորված մի շարք պայմաններից, որոնք բնութագրում են արտադրողական ուժերի զարգացման

մակարդակը և շուկայական հարաբերությունների հասունության աստիճանն այս կամ այն պատմական փուլերում¹: Այդ պայմաններին են վերաբերում.

- արտադրության միջոցների զարգացման մակարդակը,
- տեխնոլոգիական զարգացման մակարդակը,
- աշխատանքային ռեսուրսների զարգացման մակարդակը,
- շուկայական հարաբերությունների զարգացման մակարդակը,
- քաղաքական իրավիճակը:

Հայրենական գործարարության մեջ լոգիստիկական մոտեցումների զարգացման հնարավորությունները և տեմպերը անհրաժեշտ է դիտարկել Հայաստանում տնտեսական ներկա իրավիճակի և բարեփոխումների ընթացքի կանխատեսման համատեքստում: Տնտեսական վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայաստանում լոգիստիկական հայեցակարգերի զարգացմանը խոչընդոտող սկզբունքային դժվարությունները հետևյալն են.

- ընդհանուր տնտեսական ծանր իրավիճակը և սոցիալական լարվածությունը հասարակության բոլոր շերտերում;
- շրջանառության ոլորտի (մատակարարում և իրացում) նշանակության թերագնահատումը, որն արտասահմանյան երկրներում առանցքային դիրք է գրավում լոգիստիկայում;
- ժամանակակից էլեկտրոնային հաղորդակցման համակարգերի, էլեկտրոնային ցանցերի, կապի և հեռահաղորդակցման համակարգերի զարգացման ցածր մակարդակը;
- հնացած տրանսպորտային ենթակառուցվածքը, հատկապես ավտոմոբիլային ճանապարհների ոչ բարվոք վիճակը, բեռների համար նախատեսված տերմինալների անբավարար քանակությունը և տեխնիկական ցածր մակարդակը;
- համաշխարհային չափորոշիչներին համապատասխանող ժամանակակից տրանսպորտային միջոցների բացակայությունը, տրանսպորտի շարժակազմի ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր աստիճանը;
- արտադրանքի բեռնային մշակման համար նախատեսված ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումների սակավությունը, պահեստային աշխատանքների մեքենայացման և ավտոմատացման միջոցների խիստ ցածր տեսակարար կշիռը;
- պահեստային տնտեսության արտադրական-տեխնիկական և տեխնոլոգիական հիմքի զարգացման ցածր մակարդակը;
- տարայի և արտադրանքի փաթեթավորման ցածր աստիճանը և այլն:

¹ Щербачков В. Основы Логистики: Учебник для вузов. – Питер, 2009, стр. 77.

Նշված գործոնները և բացասական երևույթները շոշափելի հետք են թողնում Հայաստանում լոգիստիկայի ձևավորման վրա, արգելակում հայրենական տնտեսության մեջ լոգիստիկական հայեցակարգի ներդրման գործընթացը: Իսկ միջազգային փորձը վկայում է, որ վերը նշված բոլոր դժվարությունների հաղթահարումը կարճ ժամկետներում ուղղակի անհնար է:

Լոգիստիկայի գիտական մոտեցումների և գործնական մեթոդների մշակման անհրաժեշտությունը Հայաստանում համընկավ շուկայական տնտեսական հարաբերություններին անցման շրջանին:

Ընդհանուր տնտեսական ծանր իրավիճակն ու սոցիալական լարվածությունը չէին կարող նպաստել հայրենական ձեռնարկատիրության մեջ լոգիստիկական գաղափարների տարածմանը, քանի որ ձեռնարկատերերի, մենեջերների, ինժեներատեխնիկական աշխատողների մեծ մասի համար լոգիստիկական սկզբունքորեն նոր և դեռևս չփորձարկված բնագավառ էր: Մյուս կողմից, տնտեսական համակարգի տարբեր հատվածներում ֆինանսական, կառուցվածքային, կազմակերպչական բնույթի հիմնախնդիրները, շուկայում մենաշնորհային դիրք զբաղեցնող մի խումբ տնտեսավարող սուբյեկտների առկայությունը, հակամենաշնորհային օրենսդրության անկատարությունը, ժողովրդի կենսամակարդակի անկումը, մասնավորեցման գործընթացի ցածր արդյունավետությունը և բազմաթիվ այլ գործոններ նույնպես բացասաբար անդրադարձան Հայաստանում լոգիստիկայի ձևավորման ու զարգացման վրա²:

Հաջորդ կարևոր խնդիրը կայանում է նրանում, որ հանրապետությունը ներկայումս էականորեն հետ է մնացել տնտեսության ենթակառուցվածների (հատկապես ապրանքների շրջանառության ոլորտում) զարգացման աստիճանով:

Սակայն Հայաստանում լոգիստիկայի զարգացման խոչընդոտներից, թերևս, գլխավորը կազմակերպական բիզնես-գործընթացների և գործառույթների ոչ արդյունավետ ընթացքն է, որը, որպես կանոն, պայմանավորված է լինում կազմակերպական կառուցվածքների բացակայությամբ:

Բիզնես-գործընթացների ոչ հստակ կազմակերպումը բերում է ինչպես առանձին անհատների, այնպես էլ ամբողջ ստորաբաժանումների անհամաձայնեցված գործողությունների: Ներկայումս շատ կազմակերպություններում, ինչպես բնորոշ էր խորհրդային ժամանակներին, բնութագրական է այն իրավիճակը, երբ մի քանի ստորաբաժանումների գործառույթները մեծամասամբ ծածկում են միմյանց: Ընդ որում յուրաքանչյուր ստորաբաժանում

² Պետրոսյան Վ. Տ. Ջարգացման տնտեսական գերակայությունները: «Էկոնոմիկա» հանդես ՓԲԸ, 2000, N2, էջ 6:

հետապնդում է իր նպատակը: Արդյունքում առաջանում է տեղեկատվական խառնաշփոթ, անկազմակերպվածություն և քաոս:

Մակայն լոգիստիկայի զարգացումը Հայաստանում առավելապես կապված է տնտեսության զարգացման, ինչպես նաև սահմանների բացման հետ, որը թույլ կտա ներգրավվել տարածաշրջանային տրանսպորտային համակարգում: Համաշխարհային բանկի տվյալներով 2009թ. Լոգիստիկական արդյունավետության ինդեքսով, որը հաշվարկված է 155 երկրի համար, Հայաստանը գրավում է 111-րդ տեղը: Տարածաշրջանի երկրներից Թուրքիան գտնվում է 39-րդ տեղը, Ադրբեջանը՝ 89-րդ, Վրաստանը՝ 93-րդ, Իրանը՝ 103-րդ տեղը³:

Նյութական, տեղեկատվական և ֆինանսական հոսքերի լոգիստիկական կառավարումը և համակարգումը ներկայումս էլ ավելի են արժեքավորում Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի ընդլայնման տեսանկյունից: Անվիճելի է, որ վերջին տարիների ձեռքբերումներից աչքի է ընկնում հատկապես այս ոլորտը, քանի որ ակտիվ ինտեգրացման քաղաքականության արդյունքում Հայաստանը 2002 թվականից անդամակցում է Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը, իսկ 2015թ. հունվարի 1-ից՝ Եվրասիական տնտեսական միավորմանը, ինչը լայն ասպարեզ է բացում արտասահմանյան գործընկերության սահմանների ընդլայնման, հայրենական արտադրության ապրանքների և ծառայությունների շուկաների ավելացման, փոխադրումների ծավալների ավելացման, տեղեկատվական հոսքերի ակտիվացման, ինչպես նաև օտարերկրյա կապիտալի ներգրավման և հայրենական տնտեսության իրական հատվածում դրանց արդյունավետ օգտագործման համար:

Արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը ընթացիկ ժամանակահատվածում միտված է Եվրասիական տնտեսական միավորման հետ փոխգործակցության ամրապնդմանը, որի իրագործումը բարենպաստ ազդեցություն կունենա հանրապետության տնտեսության զարգացման կայուն տեմպերի ապահովման, արտադրության և մատուցվող ծառայությունների ծավալների հետագա ավելացման, արտահանման և ներմուծման գործընթացների աշխուժացման վրա:

Այս ամենը կնպաստի մատակարարում - արտադրություն - պահեստավորում - իրացում շղթայում նյութական, տեղեկատվական և ֆինանսական հոսքերի ակտիվացմանը և, հետևաբար, կարելի է ենթադրել, որ Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականության զարգացումը նախադրյալներ կստեղծի լոգիստիկական կառավարման ձևերի ու մեթոդների յուրացման և դրանց առավել նպատակամետ կիրառման համար:

³ Деловой экспресс. Экономическая газета N07, 26 февраля - 5 марта 2010г.

Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտներում լոգիստիկայի ներդրման համար անհրաժեշտ է ձևավորվել լոգիստիկական գաղափարների զարգացման գիտա-տեսական և արտադրական-տեխնիկական նախադրյալներ:

Գիտա-տեսական նախադրյալները կապված են այնպիսի դասընթացների լայն շրջանակի գծով մասնագետների բուհական նախապատրաստման հետ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կապված են լոգիստիկայի հետ, ինչպես նաև գիտական աշխատանքների և մեթոդական մշակումների մեծ քանակների հետ, որոնք այս կամ այն չափով շոշափում են լոգիստիկայի խնդիրները և կազմում են դրա տեսական և գիտա-մեթոդական հիմքը:

Արտադրական-տեխնիկական նախադրյալները կապված են արդյունաբերական արտադրության տարբեր ճյուղերում նյութական հոսքերի կառավարման համակարգերի ներդրման հետ: Առաջին հերթին դա վերաբերում է ավտոմատ համալիրների, պահեստային տնտեսության և տեխնոլոգիական տրանսպորտի աշխատանքի ներարտադրական համակարգերին, ինչպես նաև միկրոլոգիստիկական և օպերատիվ-արտադրական պլանավորման ու նյութական ռեսուրսների պաշարների կառավարման արտասահմանյան Ճիշտ ժամանակին՝ Վտիտ արտադրություն, Կանբան՝ համակարգերի ներդրմանը:

Դիտարկվող նախադրյալները կարող են ամուր հիմք են ստեղծել Հայաստանի տնտեսության արտադրության և շրջանառության ոլորտներում կառավարման լոգիստիկական հայեցակարգերի արդյունավետ ներդրման համար: Սակայն դրանք դեռևս ձևավորման փուլում են և պահանջում են հետևողական աշխատանք տնտեսության տարբեր բնագավառներում լոգիստիկայի արտադրական, տեխնոլոգիական և տեխնիկական բազայի, ապրանքափոխադրող կառույցների, միկրո- և մակրոլոգիստիկական համակարգերի զարգացման ու կատարելագործման ուղղությամբ: Ընդ որում, հանրապետությունում հաջողությամբ կարող է կիրառվել արտասահմանյան երկրների փորձը, եթե հայրենական ձեռնարկատիրության համապատասխան կառույցներում հմտորեն ներդրվեն դեպի շուկա կողմնորոշված ժամանակակից լոգիստիկայի մոտեցումներն ու համակարգերը:

Դիտարկելով լոգիստիկական մոտեցումների զարգացման խնդիրները Հայաստանում, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ դրանցից շատերը կապված են ոչ այնքան անհրաժեշտ տեխնիկայի, պահեստների և սարքավորումների բացակայության, որքան լոգիստիկական գործընթացների կազմակերպման թերությունների հետ: Ընդ որում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համանման իրավիճակ է նաև նախկին ԽՍՀՄ երկրներում: Զգացնել է տալիս ուժեղ լոգիստիկայի դպրոցի բացակայությունը: Միաժամանակ, լոգիստիկական պահանջում է խստիվ կարգապահություն և կազմակերպվածություն, ինչում մեր հանրապետությունում դեռ շատ անելիքներ կան:

ПРЕДПОСЫЛКИ И ЗАДАЧИ ВНЕДРЕНИЯ ЛОГИСТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Лида Агаджанян

*Государственный инженерный (политехнический) университет
Армении, бухгалтер ООО <<Интер Сервис>>*

Ключевые слова: логистика, логистический подход, управление потоками, развитие, предпосылка

Рассматриваются основные характеристики и условия развития логистики. Выявлены трудности внедрения логистических подходов в Армении и отмечены предпосылки, теоретические и практические возможности их развития.

THE PERMISES AND OBJECTIVES OF LOGISTICS IMPLIMENTATION IN ARMENIA

Lida Aghajanyan

*State Engineering University of Armenia (Polytechnic),
Accountant at << Inter Service>> Ltd*

Keywords: logistics, logistic approach, flow management, development, implication

The basic properties and conditions of logistics development are considered. The difficulties of logistic approach implementations in Armenia are revealed. The implication, theoretical and practical possibilities of their development are mentioned.

**ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ԵՄ ԵՎ ԱՊՉ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Լիլյա Ավետիսյան

*Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի դասախոս,
Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և տեղեկատվական
տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու*

Բանալի բառեր՝ ֆակտորինգային գործառնություններ, առևտրային բանկեր, առևտրային վարկ, դեբիտորական պարտք, ֆակտորինգային շուկա, ֆակտորինգային ծառայություններ, ֆակտորինգային ընկերություններ, ֆակտորինգ ռեգրեսի իրավունքով, առանց ռեգրեսի իրավունքի ֆակտորինգ, ներքին ֆակտորինգ, միջազգային ֆակտորինգ, ֆակտորինգային ասոցիացիա, ներմուծման ֆակտորինգ, արտահանման ֆակտորինգ, դասական ֆակտորինգ, ֆակտորինգային ռիսկ, ֆակտորինգային ենթակառուցվածք

Ի սկզբանե ֆակտորինգը առաջացել է որպես մասնագիտացված ապրանքային միջնորդների, իսկ ավելի ուշ՝ առևտրային բանկերի կողմից իրականացվող գործառնություն: Ֆակտորինգը արագ տեմպերով զարգացում է ապրել Անգլիայում 14-րդ դարում, ինչը սերտորեն կապված էր տեքստիլ արդյունաբերության հետ: Բանը նրանում է, որ արտադրության վայրերը և իրացման շուկաները հեռացված էին միմյանցից, դրա համար էլ ֆակտորները խաղում էին արտադրական ձեռնարկությունները և վերջնական սպառման շուկաները միմյանց հետ կապող շղթայի դեր: 20-րդ դարի 60-ական թթ. ֆակտորինգային գործառնություններն եկան փոխարինելու մուրհակի ձևով առևտրային վարկին և սկսեցին կիրառվել ապրանքի իրացման գործընթացի սպասարկման համար: Շուկայական տնտեսությունում լայնորեն կիրառվող հաշիվների մուրհակային ձևն ոչ միշտ է երաշխավորում միջոցների ստացումը ճիշտ ժամանակին, այդ պատճառով դեբիտորական պարտքերի խնդիրը ստացավ առաջնահերթ բնույթ: Ֆակտորինգային գործառնությունների դեպքում արտահանողը իրացված ապրանքի դիմաց ստանում է կանխիկ վճարում, իսկ առևտրային վարկի պարագայում՝ մուրհակ, որը հետո հաշվառվում է արտահանողին սպասարկող բանկում: Ընդ որում՝ գումարը, որն արտահանողը ստանում է մուրհակը հաշվառելիս, ավելի քիչ է քան հաշիվ-ապրանքագիրը վաճառելիս¹:

Ֆակտորինգային շուկան ունեցել է զարգացման երկու ավիք. 60-ական թթ. շուկա են մուտք գործել խոշորագույն եվրոպական երկրներ, իսկ 90-ականներին վերջիններիս են միացել ԵՄ նոր անդամ երկրները: Եվրամիությունում

¹ Международный менеджмент / Под ред. Пивоварова С. Э., Тарасевича Л. С., Майзеля А. И. — СПб: Питер, 2001, с. 282

Ֆակտորինգային ծառայությունների մատուցման հնագույն երկրներ են համարվում Գերմանիան և Ֆինլանդիան (1959թ), իսկ տվյալ շուկա վերջերս մուտք գործած երկիր է Մալթան (2006թ.):

ԵՄ անդամ 16 երկրներում գործում է ֆակտորինգային ընկերությունների ազգային ասոցիացիա, ընդ որում որոշ երկրներում այն հանդիսանում է լիզինգային ընկերությունների ասոցիացիայի մաս: ԵՄ ֆակտորինգային շուկայի մասնակիցների քանակը հաշվարկելիս հաշվի են առնվում միայն ազգային ֆակտորինգային ասոցիացիաների անդամ ֆակտոր ընկերությունները: Միջին հաշվարկով մեկ երկրում ֆակտորինգային ընկերությունների քանակը հասնում է 13-ի: ԵՄ երկրներում ֆակտորինգային կազմակերպությունների ընդհանուր թվաքանակը 2010թ. կազմել 320 և գնալով վերջիններիս թիվը ավելանում է: Ներկայումս ԵՄ երկրների ֆակտորինգային շուկայում սպասվում է զարգացման հետևյալ ընթացքը. 11 երկրներում մոտակա տարիներին նախատեսվում է նոր մասնակիցների մուտք շուկա (Ավստրիա, Կիպրոս, Էստոնիա, Գերմանիա, Հունաստան, Լիտվիա, Լատվիա, Մալթա, Սլովակիա, Բուլղարիա, Ռումինիա), 5 երկրներում ակնկալվում են միաձուլումներ՝ համապատասխանաբար նվազեցնելով ֆակտորների թիվը (Ֆրանսիա, Հունգարիա, Իտալիա, Հոլանդիա, Պորտուգալիա), մնացած 9 երկրներում ֆակտորինգային շուկայի մասնակիցների քանակական փոփոխություններ չեն սպասվում:

Միջին հաշվարկով ԵՄ երկրների ֆակտորինգային շուկայում դիտարկվում է շահաբաժինների հետևյալ բաշխվածությունը հիմնական մասնակիցների միջև՝ առաջատար 48%, 2-րդ մասնակից 20%, 3-րդ մասնակից 14%: Երեք խոշոր մասնակիցների ընդհանուր շահաբաժինը կազմում է 82%: Շուկայի ավելի շատ մասնակիցների քանակով երկրներն են Գերմանիան (47%), Ֆրանսիան (51%), Մեծ Բրիտանիան (53%): 9 երկրներում գրեթե շուկայի 100%-ը զբաղեցնում են 3 կամ ավելի քիչ թվով մասնակիցներ (Ավստրիա, Բելգիա, Կիպրոս, Էստոնիա, Լատվիա, Լիտվիա, Մալթա, Սլովենիա, Բուլղարիա):

ԵՄ երկրների ֆակտորինգային շուկայի առաջատարների (78.5%) շարքին են պատկանում բանկերի դուստր ընկերությունները, 12.5%-ը բանկերի մասնաճյուղեր են, 9%՝ առանձին կազմակերպություններ: Շուկայում հստակ նկատվում է բանկային ֆակտորների գերակայությունը: Ֆակտորինգային բիզնեսի իրականացման ժամանակ բանկերը նախընտրում են կիրառել սեփական դուստր ֆակտորինգային կազմակերպությունները:


ԵՄ երկրների միջև կան տարբերություններ մատուցվող ֆակտորինգային ծառայությունների տեսակների շրջանում: Կան երկրներ որտեղ գերակշռում է ֆակտորինգի հաշիվ-ապրանքագրով տեսակը (Շվեդիա, Մեծ Բրիտանիա, Հոլանդիա, Կիպրոս, Գերմանիա): Որոշ երկրներում առավել մեծ թվով ֆակտոր-

րինգային գործառնություններ իրականացվում են առանց ռեզրեսի իրավունքի (Գերմանիա, Բուլղարիա, Դանիա): Պորտուգալիայում, Ավստրիայում, Հունգարիայում գործառնությունների 90%-ը կազմում է ֆակտորինգը ռեզրեսի իրավունքով: Իսպանիայում ֆակտորինգային գործառնությունների 38%-ն իրականացվում է հակադարձ ֆակտորինգի միջոցով:

ԵՄ երկրներում ֆակտորինգային գործառնությունների շրջանառությունը 2013թ. կազմել է 1259343 միլիոն եվրո, որի 77%-ը բաժին է ընկնում ԵՄ անդամ 5 առաջատար երկրներին՝ Ֆրանսիա (15.92%), Գերմանիա (13.60%), Իտալիա (14.13%), Իսպանիա (9.25%), Մեծ Բրիտանիա (24.46%): ԵՄ երկրների ֆակտորինգային շրջանառության դինամիկան 2003-2012թթ. ներկայացված է գծանկար 1-ում: ԵՄ երկրներում 2013թ. ՀՆԱ-ի միջինը 7.36%-ը բաժին է ընկել ֆակտորինգային գործառնություններին²:

ԵՄ 28 երկրներում ֆակտորինգային շուկայի շրջանառության 69% բաժին է ընկնում փոքր և միջին բիզնեսին, ֆակտորինգային ծառայություններից օգտվողների 80%-ը համարվում են փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներ: Սակայն ԵՄ առանձին երկրներում այդ ցուցանիշը տարբեր է. Իսպանիայում ֆակտորինգային շրջանառության 40%-ն է պատկանում միջին և փոքր բիզնեսին, իսկ Գերմանիայում՝ 20%-ը: Հստակ նշել, թե քանի կազմակերպություն է օգտվում ֆակտորինգային ծառայություններից ԵՄ երկրներում անխոս դժվար է, սակայն հիմք ընդունելով մի շարք վերլուծություններ, կարելի է ասել, որ դրանց թիվը գերազանցում է 100000-ը: Մեկ հաճախորդի գծով միջին շրջանառությունը ԵՄ երկրներում կազմում է 2181809 եվրո: ԵՄ երկրներում շրջանառության 78% իրականացվում է ներքին ֆակտորինգի, իսկ 22%-ը՝ միջազգային ֆակտորինգի հաշվին:

Գծանկար 1. ԵՄ երկրների ֆակտորինգային գործառնությունների շրջանառություն 2003-2012թթ. (մլն եվրո)³



² <http://euf.eu.com/total-factoring-volume.html>

³ http://www.euf.eu.com/index.php?option=com_phocadownload&view=category&id=4&download=165&Itemid=1

Միայն 6 երկրներում է, որ ֆակտորինգային ծառայություններն ուղղակիորեն կարգավորվում են պետության կողմից, համաձայն սահմանված օրենքի կամ բանկային կանոնադրության (Ավստրիա, Ֆրանսիա, Հունաստան, Իտալիա, Պորտուգալիա, Իսպանիա), Մայթայում և Բուլղարիայում գործում է հատուկ սահմանված կարգ: Ընդհանուր առմամբ (հաշվի չառած որոշ բացասական երևույթներ կապված չվճարման հետ) ԵՄ երկրներում օրենսդրական սահմանափակումներ ֆակտորինգային գործառնությունների իրականացման համար չեն գործում:

Ներկայումս միջազգային պրակտիկայում կան 4 հիմնական ֆակտորինգային կազմակերպությունների ասոցիացիաներ, որոնց անդամ են հանդիսանում աշխարհի տարբեր երկրների ֆակտորինգային ծառայություններ մատուցող ընկերություններ⁴:

1. Միջազգային ֆակտորինգային խումբը (**IFG**) առաջին միջազգային ֆակտորինգային ասոցիացիան է (1963թ), իր գործունեությունն իրականացնում է ամբողջ աշխարհում: Իր կազմում ներառում է 150 անդամ 60 երկրներից: Ներկայումս IFG-ն գլոբալ առևտրային ասոցացիայի ձևավորման գործընթացում է, ներառյալ իր գործունեության զարգացման արևելաեվրոպական և ասիական ուղիները:

2. Միջազգային Ֆակտորինգի շղթան (**FCI**) իր գործունեությունը սկսել է 1968թ՝ նպատակ ունենալով միավորել աշխարհում գործող ֆակտորինգային ընկերություններին: Այսօր FCI-ին անդամակցում են 275 բանկեր և ֆակտորինգային կազմակերպություններ աշխարհի 76 երկրներից, որոնք ձևավորում են միջազգային ֆակտորինգի շուկայի մոտ 80%⁵: **FCI-ն համարվում է միջազգային խոշորագույն ֆակտորինգային ասոցիացիա:** FCI-ը սահմանում և շրջանառության մեջ է դնում միջազգային ֆակտորինգի ստանդարտներ և, համագործակցության շրջանակներում աջակցելով իր անդամներին, հնարավորություն է տալիս ունենալ մի շարք մրցակցային առավելություններ:

3. Արևելաեվրոպական ֆակտորինգային ասոցիացիան (EEFA) ստեղծվել է 2001թ. և միավորում է տարածաշրջանի ֆակտորինգային կազմակերպություններին, որի նպատակն է ֆակտորինգի զարգացումը և որակյան ֆակտորինգային ծառայությունների մատուցումը: 2001թ. ասոցիացիան անցկացրել է 8 միջազգային ֆակտորինգային գիտաժողովներ, որին մասնակցել են ավելի քան 500 ֆակտոր կազմակերպություններ 35 երկրներից:

4. Ֆակտորինգային ընկերությունների ասոցիացիան (AFC) 2007թ. ստեղծվեց Մոսկվայում, որը այժմ միավորում է 18 բանկեր և ֆակտորինգային կազմակերպություններ՝ 1.5 տրլն ռուբլուց ավելի ֆակտորինգի համախառն

⁴ <http://www.factorings.ru/static/associations/>

⁵ <http://www.fci.nl/home>

շրջանառությամբ (01.01.2014թ դրությամբ)⁶: AFC-ի անդամները տրամադրում են ֆակտորինգային ծառայություններ ավելի քան ՌԴ 70 շրջաններում, ԱՊՀ և մաքսային միության երկրներում: AFC-ի գործունեությունն ուղղված է ԱՊՀ-ում ֆակտորինգային գործառնությունների իրականացման միասնական սկզբունքների և մոտեցումների ձևավորմանը՝ ներառյալ ֆակտորինգային բիզնեսի մեթոդոլոգիական, նորմատիվաիրավական և էթիկական հիմքերը:

Ֆակտորինգի իրականացման առաջին քայլերը կատարվել են դեռևս ԽՍՀՄ ժամանակաշրջանում՝ 1988թ. Պրոմստրոյբանկի և Ժիլսոցբանկի կողմից: Բնականաբար այդ տարիներին մատուցվող ֆակտորինգային ծառայությունների բովանդակությունը չէր համապատասխանում միջազգային պրակտիկային և ոչ էլ այն ֆակտորինգային գործառնություններին, որոք այժմ մատուցվում են ԱՊՀ երկրներում: 1989 թ-ին ԽՍՀՄ Գոսբանկում սահմանվեց կարգ՝ մատակարարի կողմից վճարման ստացման իրավունքի զիջումը բանկին, աշխատանքների իրականացման ծառայությունների մատուցման և գործարքի կատարման հերթականության մասին: 1992 թ-ին «Բանկերի և բանկային գործունեության մասին» ֆեդերալ օրենքում ֆակտորինգը սահմանվեց որպես բանկային ծառայության տեսակ:

Հետագայում ԱՊՀ երկրներում ֆակտորինգային ծառայությունները սկսեցին մատուցվել առևտրային բանկերի կողմից: Այդ տարիներին ԱՊՀ-ում ֆակտորինգային ծառայությունների մատուցման գծով առաջատար էր համարվում «Միջազգային Մոսկովյան բանկը»:

1998թ. ձգնաժամից հետո ֆակտորինգի շուկան վերածնվեց երկրորդ անգամ: 10 տարիների ընթացքում (1998-2008թթ.) ֆակտորինգային շուկան օրեցօր զարգանում էր ավելի արագ տեմպերով: 2008 թ-ին ֆակտորինգային ծառայություններ մատուցում էին 60-ից ավելի կազմակերպություններ, որոնց շարքին էին դասվում առևտրային բանկերը և մասնագիտացված ֆակտորինգային կազմակերպությունները:

2014թ. առաջին եռամսյակում AFC-ի անդամների ֆակտորինգի համախառն շրջանառությունը կազմել է 314 մլրդ ռուբլի, 2014թ-ի ապրիլի 1-ի դրությամբ համախառն պորտֆելը կազմել է 210 մլրդ ռուբլի: 2013թ. առաջին եռամսյակի հետ համեմատած համախառն շրջանառության աճը կազմել է 13%: 2013թ. տվյալներով ռուսական ֆակտորինգային շուկայի շրջանառության 80%-ը բաժին է ընկել AFC-ի անդամներին:

Որպես ԱՊՀ-ում ֆակտորինգային ծառայությունների մատուցման առավել մեծ շրջանառություն ունեցող երկիր անդրադառնանք Ռուսաստանին: Ներկայումս ՌԴ-ում գործում են ֆակտորինգային ծառայություններ մատուցող 82


⁶ <http://www.factoringpro.ru/index.php/statistics/3569-oborot-uchastnikov-afk-1-quarter-2014>

կազմակերպություն, սակայն ներքոնշյալ վերլուծության մեջ կիրառվել են 32 կազմակերպության տվյալներ, որոնցից 17-ը բանկեր են, 12-ը՝ ֆակտորինգային կազմակերպություններ, 3-ը՝ խմբեր, որոնք միավորում են բանկերը և կազմակերպությունները: 2014թ. առաջին եռամսյակում ՌԴ ֆակտորինգային շրջանառությունը կազմել է 450 մլրդ ռուբլի, հունվար-մարտ ամիսներին ավելացել է 21%-ով նախորդ տարվա տվյալ ժամանակահատվածի հետ համեմատած, այսինքն 2013թ. առաջին եռամսյակի նկատմամբ ֆակտորինգային գործառնությունների շրջանառությունն աճել է 77 մլրդ ռուբլիով:

2014թ. հունվարի-մարտ ամիսներին ռուսական ֆակտորինգը ֆինանսավորել է 362 մլրդ ռուբլու ապրանքաշրջանառություն, որը 19%-ով գերազանցում է նախորդ տարվա տվյալ ժամանակահատվածի ցուցանիշը: Ֆինանսավորման ծավալի հարաբերությունը զիջված դրամական պահանջի ծավալներին 86%-ից ավելի է, շնորհիվ առանց ռեզրեսի իրավունքի ֆակտորինգի անընդատ աճին: Ֆակտորինգային ծառայություններից օգտվել են 6.5 հազարից ավելի կազմակերպություններ, որոնց համար հաշվարկվում է 16.5 հազարից ավելի գնորդ-դեբիտորներ, ընդ որում 2014թ հունվար-մարտ ամիսներին հաճախորդների թիվը աճել է 700-ով, գնորդ-դեբիտորների թիվը՝ 1800-ով:

Ինչպես ԵՄ երկրներում, այնպես էլ ԱՊՀ-ում, մասնավորապես ՌԴ-ում առավել տարածված է ֆակտորինգը ռեզրեսի իրավունքով (2014թ. առաջին եռամսյակում ֆակտորինգային շրջանառության 60.7%), մինչդեռ ֆակտորինգն առանց ռեզրեսի իրավունքի կազմում է 31.2%: Բացի այդ կարող ենք ասել, որ սակավ կիրառելի է միջազգային ֆակտորինգը (ֆակտորինգային շրջանառության 1.8%):

Որպեսզի ամբողջական պատկերացում կազմենք ՌԴ-ում ֆակտորինգի շրջանառության մասին, ներկայացնենք ֆակտորինգային գործառնությունների ծավալը 2012-2014թթ. եռամսյակային կտրվածքով (զծանկար 2.): Ըստ այս տվյալների յուրաքանչյուր տարվա համապատասխան եռամսյակի շրջանառությունը գերազանցում է նախորդ տարվա տվյալ եռամսյակի շրջանառությանը. 2014թ. առաջին եռամսյակի շրջանառությունը գերազանցում է 2012թ. առաջին եռամսյակին 63.4%-ով, իսկ 2013թ. առաջին եռամսյակին՝ 20.8%-ով, միննույն ժամանակ 2013թ. առաջին եռամսյակի շրջանառությունը 2012թ. առաջին եռամսյակին գերազանցում է 35%-ով:



Գծանկար 2. ՌԴ-ում ֆակտորինգի եռամսյակային շրջանառության դինամիկան, մլն. ռուբլի⁷

Ներկայումս շատ ԱՊՀ երկրներում, այդ թվում և ՌԴ-ում արտաքին առևտրում մեծ տեղ է գրավում ներմուծումը, այդ իսկ պատճառով միջազգային ֆակտորինգային գործառնությունների մեջ զգալի է ներմուծման ֆակտորինգի մասնաբաժինը (82%): Ընդ որում 2014թ. առաջին եռամսյակում արտահանման ֆակտորինգի ծավալը կազմել է 1421.10 մլն. ռուբլի, իսկ ներմուծման ֆակտորինգի՝ 6426.27 մլն ռուբլի:

ՀՀ-ում ներկայումս առանձնացված ֆակտորինգային կազմակերպություններ չեն գործում և ֆակտորինգային ծառայություններ հիմնականում մատուցվում են բանկերի միջոցով, որոնց շարքին են դասվում Ամերիաբանկը, Արմսվիսբանկը, Կոնվերսբանկը, Հայբիզնեսբանկը, ՎՏԲ Հայաստան բանկը և այլն⁸:

Արմսվիսբանկ-ը Հայաստանում գործող ֆինանսական հաստատություններից մեկն է, որը մասնագիտացած է դասական ֆակտորինգային ծառայությունների մատուցման մեջ: Արմսվիսբանկ-ն իր հաճախորդներին առաջարկում է ֆակտորինգի հետևյալ տարատեսակները.

- Տեղական ֆակտորինգ, այդ թվում՝
 - ռեզրեսային ֆակտորինգ (հետպահանջի իրավունքով),
 - ոչ ռեզրեսային ֆակտորինգ (առանց հետպահանջի իրավունքի),
 - փակ ֆակտորինգ (դեբիտորական պարտքի ֆինանսավորում),
 - ֆակտորինգ-երաշխիք:
 - Միջազգային ֆակտորինգ⁹:

Արմսվիսբանկ-ը տարածաշրջանում առաջին ֆինանսական հաստատությունն է, որն անդամակցել է FCI-ին, ինչը Բանկին հնարավորություն է տալիս

⁷ <http://www.factoringpro.ru/index.php/statistics/3569-оборот-uchastnikov-afk-1-quarter-2014>

⁸ http://varker.am/am/loan_types/type/10

⁹ <http://www.armswissbank.am/am/corporate-clients/corp-financing/corp-factoring/>

հաճախորդներին առաջարկել միջազգային ֆակտորինգային ծառայություններ 76 երկրում տեղակայված 275 անդամ կազմակերպությունների միջոցով:

Ամերիաբանկը 2013թ. արդյունքներով ճանաչվել է «Հայաստանի տարվա լավագույն բանկ ֆակտորինգային ծառայությունների մատուցման գծով» միջազգային ճանաչում ունեցող 2014թ. Քորփորեյթ Ինթերնեշնլ Մեգազին (Corporate Intl Magazine) ամսագրի կողմից¹⁰: Հաշվետու տարվա վերջին Ամերիաբանկի ֆակտորինգային գործառնությունների ծավալը կազմել է շուկայի 47,3%-ը, որով բանկը զբաղեցնում է առաջատարի դիրքը հայաստանյան բանկերի շարքում: 2013թ. գործունեության արդյունքները վկայում են, որ Ամերիաբանկն ունեցել է ֆակտորինգային գործառնությունների ծավալների զգալի աճ ինչպես Հայաստանի ֆինանսական շուկայում, այնպես էլ միջազգային ֆակտորինգային շուկայում:

Արդեն մեկ տարի է, ինչ Ամերիաբանկն անդամակցում է FCI միջազգային ֆակտորինգային միությանը, ինչը Բանկի հաճախորդներին հնարավորություն է ընձեռում ձեռք բերել նոր գործընկերներ աշխարհի շուրջ 80 երկրներից և դուրս գալ նոր շուկաներ: Անդամակցությունը FCI-ին թույլ է տալիս ֆակտորինգային ծառայությունների նորանոր հնարավորություններ ընձեռել հաճախորդներին՝ ընդլայնելով առաջարկվող ծառայությունների փաթեթը¹¹:

Բանկի ֆակտորինգային գործարքների 77%-ը բաժին է ընկնում ներքին շուկայում իրականացված գործարքներին, իսկ 23%-ը՝ միջազգային ֆակտորինգի գործարքներին: Ամերիաբանկին ֆակտորինգով զիջված դրամական պահանջի ընդհանուր ծավալը 2013թ. տարեկան արդյունքներով կազմում է շուրջ 12,5 մլրդ ՀՀ դրամ, ինչը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը 41%-ով: Հաշվետու ժամանակահատվածում Բանկի կողմից իրականացված ընդհանուր ֆակտորինգային գործարքների 58%-ը բաժին է ընկնում առանց ռեգրեսի ֆակտորինգային գործառնություններին, իսկ ռեգրեսով ֆակտորինգային գործարքներին՝ 42%: Նշենք, որ 2013թ. ռեգրեսով գործարքների ծավալը 2012թ. համեմատությամբ աճել է 6,5%-ով, իսկ առանց ռեգրեսի գործարքների ծավալը՝ շուրջ 2,1 անգամ: 2013թ.-ին աճի զգալի տեմպեր են գրանցվել նաև Ամերիաբանկի կողմից առաջարկվող առանց ռեգրեսի դասական ֆակտորինգային գործարքների մասով, և նախորդ տարվա համեմատությամբ Բանկի կողմից ֆինանսավորված դասական ֆակտորինգի գործարքների ծավալն աճել է 27%-ով:

Ամերիաբանկը ֆակտորինգային գործառնությունների գծով ակտիվորեն համագործակցում է մեծածախ առևտրով զբաղվող ցանցերի, խոշոր արդյու-

¹⁰ <http://www.panarmenian.net/arm/news/175208/>

¹¹ <http://www.lragir.am/index.php/arm/0/economy/view/82337#sthash.y9U0cWBX.dpuf>

նաբերական, շինարարական, հանրային ծառայություններ մատուցող և տեքստիլ արդյունաբերությամբ զբաղվող ընկերությունների հետ:

ՎՏԲ-Հայաստան բանկը առաջարկում է դասական ֆակտորինգ. Կազմակերպությունը զիջում է դեբիտորական պարտքերը՝ ստանալով դիմացը ֆինանսավորում: Ֆակտորինգը բաղկացած է հետևյալ տեսակի ծառայություններից.

- Ֆինանսավորում՝ բանկ ներկայացնելով դեռևս չվճարված հաշիվ-ապրանքագիրը, ստանալ չվճարված գումարի մինչ 90%, իսկ մնացած 10% ստանալ գնորդից գումարը ստանալու պահին:
- Դեբիտորական պարտքի հաշվառում և վարում՝ կազմակերպության կողմից ստացված բոլոր հաշիվ-ապրանքագրերը, հաստատված գնորդի գծով, հաշվառվում են հատուկ ռեեստրով, որտեղ վարվում է այդ Գնորդի գծով կազմակերպության ամբողջ ապրանքաշրջանառությունը և իրականացվում է Գնորդի վճարումների մոնիտորինգ:
- Հավաքագրման ծառայություն՝ մատուցվում է նաև դեբիտորական պարտքերի հավաքագրման ծառայությունը, համաձայն գնորդի վճարումների ժամանակացույցի¹²:

ՎՏԲ-Հայաստան Բանկը 2013թ. արդյունքներով հայաստանյան բանկային շուկայի առաջատարն է զիջված դրամական պահանջի ծավալով, ինչպես նաև միջազգային ֆակտորինգային գործարքների ծավալով, և շարունակում է ընդլայնել իր ֆակտորինգային ծառայությունների շրջանակը:

Ըստ Հայաստանի բանկերի ֆինանսական վերլուծության տվյալների՝ 2013 թվականի արդյունքներով ՎՏԲ-Հայաստան Բանկը գտնվում է Հայաստանի առաջատար բանկերի եռյակում, ընդ որում, ինչպես վարկային ընդհանուր ներդրումներով, այնպես էլ կորպորատիվ վարկավորումով: Բանկն առաջատար դիրքեր է զբաղեցնում նաև այլ հիմնական հաշվեկշռային ցուցանիշներով: 2012թ-ի վերջին ամիսներին նկատվում էր ֆակտորինգային ծառայություններից օգտվող հաճախորդների քանակի ակտիվ աճ, ինչպես նաև ֆակտորինգային շրջանառության նշանակալի ավելացում: 2013թ. 3-րդ եռամսյակի տվյալներով ֆակտորինգային ֆինանսավորման ընդհանուր ծավալները կազմում են 709 մլն ՀՀ դրամ, Բանկը զբաղեցնում է 2-րդ տեղը ՀՀ բանկային համակարգում դասական ֆակտորինգ տրամադրող բանկերի միջև:

2014թ. ՎՏԲ-Հայաստան բանկը հետևողականորեն ընդլայնել է ֆինանսավորման ոլորտների ցանկը և մեծացնել ֆակտորինգային գործառնությունների ծավալները, ինչպես նաև զարգացրել է ծառայությունների տեսականին՝

¹² <http://www.vtb.am/corp/factoring/>

առաջարկելով ֆակտորինգի նոր տեսակներ, այդ թվում միջազգային ֆակտորինգ, որն ունի մեծ հեռանկարներ Հայաստանյան շուկայում:

Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը տրամադրում է ֆակտորինգի հետևյալ տեսակները.

- տեղական ֆակտորինգ,
- արտահանման ֆակտորինգ,
- ռեգրեսային (հետպահանջի իրավունքով) ֆակտորինգ,
- ոչ ռեգրեսային ֆակտորինգ (առանց հետպահանջի իրավունքի):
Բանկի կողմից ֆակտորինգի տրամադրման հիմնական պայմանները.
- Բանկը տրամադրում է ֆակտորինգ Բանկի հաճախորդ հանդիսացող ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին,
- Բանկը տրամադրում է տեղական ֆակտորինգ՝ ՀՀ դրամով և արտահանման ֆակտորինգ՝ արտարժույթով՝ կախված գործարքի արժույթից,
- հաճախորդի ֆակտորինգային ֆինանսավորման առավելագույն սահմանաչափի գործողության ժամկետը կազմում է 18 ամիս,
- ֆակտորինգի գումարի առավելագույն չափը կազմում է հաշիվ-ապրանքագրի գումարի 90%-ը՝ տեղական ֆակտորինգի և հաշիվ-ապրանքագրի գումարի 80%-ը՝ արտահանման ֆակտորինգի դեպքում,
- ֆակտորինգի առավելագույն տևողությունը կազմում է 180 օրացուցային օր¹³:

ՀՀ-ում ֆակտորինգային գործառնությունների շրջանառության ծավալն ըստ առանձնացված բանկերի 2011թ-ին կազմել է 5 438 600 հազ. դրամ, 2012 թ-ին՝ 7,602,785 հազ. դրամ, 2013 թ-ին՝ 13 695 243 հազ. դրամ: Ընդ որում 2013 թ-ին ֆակտորինգային շրջանառության ծավալը համեմատած նախորդ տարվա հետ ավելացել է 6,092,458 հազ. դրամով, որը կազմում է 80.13%: Այսինքն վերջին երեք տարիներին ՀՀ-ում ավելացել են ֆակտորինգային գործառնությունները (աղյուսակ 1.):

¹³ <http://www.acba.am>

Աղյուսակ 1. ՀՀ-ում ֆակտորինգային գործառնությունների
չրջանառությունն ըստ առանձին բանկերի 2011-2013թթ. (հազ. դրամ)¹⁴

N	Բանկեր	2011թ.	2012թ.	2013թ.
1	Ակբա-Կրեդիտ Ազրեգոլ Բանկ	41 112	398,117	4 311 253
2	Ամերիաբանկ	569 743	1,692,447	3 575 063
3	ՎՏԲ-Հայաստան բանկ	1 237 914	475,133	3 265 344
4	Արցախբանկ	1 828 686	1,916,518	1 444 340
5	Կոնվերսբանկ	89 267	23,293	-
5	Հայէկոնոմբանկ	78 691	-	-
7	Հայկական զարգացման բանկ	9 448	7,135	-
8	Արմավիաբանկ	1 583 739	3,090,142	1 099 243
Ընդհանուր		5 438 600	7,602,785	13 695 243
Միջին բանկային		247 209	345,581	622 511
Ըստ բանկի խմբի, որոնց ակտիվները		31/12/11 - դրությամբ	31/12/12 - դրությամբ	31/12/13- դրությամբ
- բարձր 50 մլրդ. դր		242 255	366,528	1 393 958
- 20-ից 50 մլրդ. դր		436 390	457,917	282 620
- ցածր 20 մլրդ. դր		1 890	0	0

Հայաստանում գնալով աճում է հաճախորդների պահանջարկը ֆակտորինգային գործառնությունների նկատմամբ: Ֆակտորինգի առավելությունները, մասնավորապես մատակարարի ուղիղ ֆինանսավորումը, առանց գրավի ֆինանսավորումը, ֆակտորինգային գործարքի շրջանակում այս կամ այն մատակարարի և գնորդի գծով որոշման կայացման ճկուն ընթացակարգը նպաստում են այս ծառայության նկատմամբ պահանջարկի աճին: Միջազգային ֆակտորինգի շուկան ևս Հայաստանում զարգացման հեռանկարներ ունի: Հայաստանի տնտեսության համար արտահանման զարգացման նպատակով անհրաժեշտ է հենց միջազգային ֆակտորինգը, որպես արտահանման ռիսկերի ծածկման և միևնույն ժամանակ, որպես առանց գրավի ֆինանսավորման մեխանիզմ:

Լինելով համեմատաբար նոր բանկային ծառայություն՝ ֆակտորինգը Հայաստանում դեռևս չի կիրառվում իր ողջ ներուժով: Քանակական ցուցանիշների գծով որոշակի աճ գրանցվում է, ինչը չի կարելի ասել որակական ցուցանիշների մասին: Որակական ցուցանիշների առավել բարձր մակարդակ ապահովելու համար նախևառաջ անհրաժեշտ է համապատասխան ենթակառուցվածքների առկայությունը՝ հատկապես վարկային ռեգիստրի տեղեկատվությունից և ապահովագրական ընկերությունների ծառայություններից օգտվելու հնարավորություն: Ֆակտորինգային ռիսկի փոխանցումն ապահովագրական ընկերություններին հանդիսանում է ֆակտորինգի զարգացման

¹⁴ «ԱՌԿԱ» գործակալության 2011-2013թթ. ֆինանսատնտեսական անկետայի տվյալներ

հեռանկարային գործիք վիճակագրական տվյալների և վարկային պատմությունների դեֆիցիտի պատճառով: Սակայն նշենք, որ այս գործիքի կիրառումը ածանցյալ է նախևառաջ ապահովագրական շուկայի զարգացումից: Բանկային ծառայությունների հետ մեկտեղ առանձին ֆակտորինգային կազմակերպությունների ձևավորումը կնպաստեն զարգացած ֆակտորինգային ենթակառուցվածքի ստեղծմանը:

Ֆակտորինգային ծառայությունները չեն սահմանափակվում առանց գրավի ֆինանսավորում ցուցաբերելով՝ դեբիտորական պարտքերի զիջմամբ: Դասական ֆակտորինգը բացի ֆինանսավորումից իր մեջ ներառում է նաև հաճախորդների դեբիտորական պարտավորության կառավարումը, ժամկետանց պարտավորությունների վերահսկողությունը և ստացումը, վարկային ռիսկի ստանձնումը: Հայաստանում ֆակտորինգի շուկայի որակական զարգացման համար անհրաժեշտ են նաև օրենսդրական կարգավորումներ, խթանումներ և շուկայի մասնակիցների ձգտումն իրավիճակը բարելավելու համար:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ФАКТОРИНГА В СТРАНАХ ЕС И СНГ

Лилия Аветисян

*Преподаватель Европейской региональной академии образования,
доцент кафедры управления и информационных технологий
международного университета Евразия, кандидат экономических наук*

Ключевые слова: факторинговые операции, коммерческие банки, коммерческий кредит, дебиторская задолженность, факторинговый рынок, факторинговые услуги, факторинговые компании, факторинг с регрессом, факторинг без регресса, внутренний факторинг, международный факторинг, факторинговая ассоциация, импортный факторинг, экспортный факторинг, классический факторинг, факторинговый риск, факторинговая инфраструктура

В статье проанализирована динамика развития факторинга, выявлены особенности осуществления факторинговых операций в странах ЕС и СНГ, рассмотрены препятствия и перспективы развития рынка факторинговых услуг в Армении.

TENDENCIES OF FACTORING DEVELOPMENT IN EU AND CIS COUNTRIES

Lilya Avetisyan

Lecturer at European Regional Educational Academy

Associate professor of Management and Information Technology Department

at Eurasia International University, PhD in Economics

Key concepts: factoring operations, commercial banks, commercial credit, accounts receivable, factoring market, factoring services, factoring companies, recourse factoring, non recourse factoring, internal factoring, international factoring, factoring association, import factoring, export factoring, classical factoring, factoring risk, factoring infrastructure

In the article dynamics of factoring development is analysed, features of implementation of factoring operations in EU and CIS countries are revealed, obstacles and prospects of development of factoring services market in Armenia are considered.

**ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ**

Հովհաննես Երիցյան

*Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայի
Տնտեսագիտության ամբիոնի հայցորդ, դասախոս*

Բանալի բառեր` համաշխարհային շուկա, գլոբալացում, վերագրահին կորպորացիաներ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, տնտեսության ճյուղեր, ֆինանսատնտեսական ճգնաժամ, պետական բյուջե, հարկային եկամուտներ, արտաքին տնտեսական քաղաքականություն:

20-րդ դարի վերջին տասնամյակը հղի էր գեոտնտեսական և գեոքաղաքական իրադարձությունների անկանխատեսելի զարգացումներով և դրսևորումներով: Խորհրդային Միության փլուզումը, Եվրամիության գոտու ընդլայնումը, տնտեսական ու քաղաքական ինտեգրացիոն նոր կառույցների ձևավորումը հիմք նախապատրաստեցին աշխարհի երկրների համար վերանայելու և վերակառուցելու իրենց տնտեսական ու քաղաքական ռազմավարությունները: Հատկապես կարևոր ընտրության առջև կանգնեցին նախկին խորհրդային երկրները, որոնք տասնամյակներ շարունակ մեկուսացված էին արտաքին աշխարհից, գործում էին մեկ համակարգի ներսում, իսկ այդ համակարգի փլուզումից հետո յուրաքանչյուրը հանձն առավ նոր տնտեսական բարեփոխումների իրագործումը: Եվ ինչպես ցույց տվեց փորձը, այդ երկրների գերակշիռ մասը, այդ թվում և Հայաստանը, որդեգրեց տնտեսության վերակառուցման շուկային թերապիայի ուղին, ինչը թերևս դրականորեն չանդրադարձավ տնտեսության հետագա զարգացման վրա: Նորանկախ Հայաստանի առջև ծառայած էին ոչ միայն սոցիալ-տնտեսական խնդիրներ, այլ նաև օրհասական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին շրջափակումը, քաղաքական անկայուն իրավիճակը տարածաշրջանում և այլն: Անշուշտ, այս իրավիճակում Հայաստանին հարկավոր էր ակտիվացնել իր արտաքին տնտեսական քաղաքականությունը, ստեղծել նոր տնտեսական և քաղաքական կապեր, որոնք, վերջին հաշվով, կնպաստեին տնտեսության վերակառուցմանը և որոշակի հիմնախնդիրների լուծմանը: Այս համատեքստում շատ կարևոր էին օտարերկրյա ուղղակի ներդրումների, (այսուհետ` ՕՈՆ-ներ) ներգրավումը, որոնց հիմնական իրականացնողներն, ինչպես գիտենք, վերագրային կորպորացիաներն (այսուհետ` ՎԱԿ-եր) են:

Այդ ժամանակահատվածում ՕՈՆ-ների էական ներհոսք չէր կարող լինել: Միայն 1998թ.-ից հետո սկսվեց որոշակի տեղաշարժ. այսպես, 1998թ.-ին ՀՀ-ում

կատարված ՕՈւՆ-ները կազմեցին մոտ 232 մլն ԱՄՆ դոլար¹: Նշենք, որ 1998թ.-ին ֆրանսիական Պեոնո Ռիկար խումբը 28 մլն ԱՄՆ դոլարով գնեց Երևանի Կոնյակի Գործարանը: Հաջորդ տարիների համար երկրում գրանցվեց ՕՈւՆ-ների հաստատուն աճ:

Այսպես, 2008-2012թթ-ին ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում ՕՈւՆ-ների ներհոսքը ներկայացնենք հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 1

ՕՈւՆ-ների ներհոսքը դեպի ՀՀ /2008-2012թթ.,մլն ԱՄՆ դոլար/²


Տարի	2008	2009	2010	2011	2012
Մլն ԱՄՆ դոլար	925	732	483	631	567

Աղյուսակից երևում է, որ ՀՀ-ում ՕՈՒՆ-ների ներհոսքի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2008թ.-ին (925 մլն ԱՄՆ դոլար): Արդեն իսկ 2009թ.-ից սկսած նկատվում են ՕՈւՆ-ների զգալի նվազում: Այսպես, 2009թ.-ին դրանք կազմել են ավելի քան 732 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 21%-ով: Հարկ է նշել, որ 2009թ.-ի վերջից ՀՀ հեռահաղորդակցության ոլորտում լուրջ ներդրումներ իրականացրեց Orange Խրմբի անդամ Օրանժ Արմենիան, որը մինչ օրս ՀՀ-ում կատարել է մոտ 268 մլն եվրոյի ներդրումներ³: ՕՈւՆ-ների ներհոսքի զգալի անկում գրանցվել է 2010թ.-ին, որն, անշուշտ, պայմանավորված էր ֆինանսատնտեսական ճգնաժամով: Այսպես, 2010թ.-ին ՕՈւՆ-ները կազմել են 483 մլն ԱՄՆ դոլար, ինչը 34%-ով ավելի քիչ է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: ՕՈւՆ-ների աճ սկսվեց գրանցվել 2011թ.-ից, սակայն, ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, այդ աճը ոչ միայն հաստատուն չէր, այլև զիջում էր նախաձգնաժամային ցուցանիշներին: Ստորև ներկայացված գծապատկերը լավագույնս արտացոլում է 2008-2012թթ.-ն ընկած ժամանակահատվածում ՕՈւՆ-ների ներհոսքի տատանումները Հայաստանի Հանրապետությունում:

¹ European Bank for Reconstruction and Development: <Transition Repon 1999: Ten Years of Transition> London: EBRD, pp. 181-285.

² <http://168.am/2014/02/06/326973.html> վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.11.2014թ.

³ <http://www.orangearmenia.am/about-orange-armenia/> վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.11.2014թ.



**Գծապատկեր 1. ՀՀ ՕՈՆՆ-ների ներհոսքը
/2008-2012թթ., մլն ԱՄՆ դոլար/⁴**

Այսպես, 2011թ.-ին ՕՈՆՆ-ների ներհոսքի ցուցանիշը կազմեց 631 մլն ԱՄՆ դոլար՝ ապահովելով 30% աճ նախորդ տարվա համեմատ: Սակայն այս դինամիկան չպահպանվեց, և հաջորդ տարի կրկին գրանցվեց ՕՈՆՆ-ների ծավալների կրճատում: 2012թ.-ին դրանք կազմեցին 567 մլն ԱՄՆ դոլար, ինչը 10%-ով ավելի քիչ էր նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ:

Կարծես թե, արտաքուստ, ՀՀ փոքր տնտեսության համար գրանցված ցուցանիշները գոհացուցիչ էին, սակայն երկրի տնտեսության մեջ ՕՈՆՆ-ների դերակատարումը լավագույնս գնահատելու համար ներկայացնենք, թե ՕՈՆՆ-ները ՀՀ ՀՆԱ-ի որ մասն են կազմել: Այսպես, ստորև բերված աղյուսակում մեր կողմից հաշվարկված ցուցանիշները հետևյալներն են.

Աղյուսակ 2

ՕՈՆՆ-ների մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ում 2008-2012թթ-ին՝
արտահայված տոկոսով⁵

Տարի	2008	2009	2010	2011	2012
Տոկոս	7.9	8.4	5.2	6.4	5.7

Աղյուսակի տվյալները փաստում են, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՕՈՆՆ-ները կազմել են ՀՆԱ-ի առավելագույնը 8.4%-ը (2009թ.) և երբեք չեն գերազանցել 10%-ը: Սա խոսում է նաև այն մասին, որ ՕՈՆՆ-ները ՀՀ տնտեսության վրա էական ազդեցություն չեն ունեցել:

⁴ Գծապատկերը մշակվել է հեղինակի կողմից:

⁵ ՕՈՆՆ-ների մասնաբաժինը ՀՆԱ-ում հաշվարկվել է՝ համապատասխան տարվա ՕՈՆՆ-ները բաժանելով նույն տարվա ՀՆԱ-ի վրա: ՀՆԱ-ն վեր է ածվել ԱՄՆ դոլարի՝ հաշվի առնելով համապատասխան տարվա համար ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքը: Տվյալների համար հիմք են ծառայել www.armstat.am և www.cba.am կայքերում հրապարակված պաշտոնական վերլուծություններն ու հաշվետվությունները:

Այս առնչությամբ հետաքրքիր կլինեն դիտարկել ՀՀ-ում ՎԱԿ-երի գործունեությունը և դրանց կողմից իրականացված ՕՈՆ-ները ոչ միայն ըստ ոլորտների, այլ նաև դրանց աշխարհագրական կառուցվածքը:

Այսպիսով, եթե վերլուծելու լինենք ՕՈՆ-ներն ըստ ոլորտների, ապա դժվար չէ նկատել, որ դրանք հիմնականում ուղղված են եղել **Փոխադրումներ և Պահեստային Տնտեսություն, Տեղեկատվություն և Կապ** ոլորտ (2009թ.՝ ընդհանուր ՕՈՆ-ների 60.6%, 2010թ.՝ 53.1%, 2011թ.՝ 30.4%, 2012թ.՝ 53.3%): Թեև այս ոլորտում 2011թ.-ին ՕՈՆ-ները կազմել են գրեթե 192 մլն ԱՄՆ դոլար՝ ապահովելով ընդհանուր ՕՈՆ-ների ներհոսքի 30.4%-ը, այսուհանդերձ այդ ցուցանիշը վկայում է մյուս ոլորտների համեմատությամբ վերոնշյալ ոլորտի առաջընթաց զարգացման մասին: Այս նույն ժամանակահատվածում երկրորդ հորիզոնականում հայտնվեց **Մշակող արդյունաբերության** ոլորտը, որտեղ վերջինիս համար աննախադեպ 181 մլն ԱՄՆ դոլարի ներդրում կատարվեց, ինչը և կազմեց ընդհանուր ներդրումների մոտ 28%-ը:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում էական ներդրումներ են կատարվել նաև **Էլեկտրականության, Գազի, Գոլորշու և Լավորակ Օդի Մատակարարման** ոլորտում: Այսպես, 2009-2011թթ.-ին դրանք կազմել են ՕՈՆ-ների 16-21%-ը, ընդ որում ներդրումները տատանվել են 98-151 մլն ԱՄՆ դոլարի սահմաններում, իսկ 2012թ.-ին նկատվել է դրանց կտրուկ նվազում՝ կազմելով մոտ 26 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ՕՈՆ-ների ներհոսքի 4.5%-ը): Հաջորդ ոլորտը, որտեղ նկատվեցին զգալի ներդրումներ, **Հանքագործական Արդյունաբերության և Բացահանքերի Շահագործման** ոլորտն է: Այստեղ 2009-2011թթ.-ն ներդրումները տատանվում են 21-37 մլն ԱՄՆ դոլարի միջակայքում (ընդհանուր ՕՈՆ-ների ներհոսքի 3-7%-ը), և միայն 2012թ.-ին նկատվեց ՕՈՆ-ների կտրուկ աճ այ ոլորտում՝ կազմելով մոտ 94 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ՕՈՆ-ների 16.5 %-ը):

Ինչ վերաբերում է **Գյուղատնտեսությանը**, ապա այստեղ ներդրումներն էական չեն, 2009-2011թթ.-ին դրանք անգամ չեն կազմել ընդհանուր ՕՈՆ-ների 1%-ը (տատանվելով 3-7 մլն ԱՄՆ դոլարի շրջանակներում), և միայն 2012թ.-ին այս ոլորտում ուղղակի ներդրումները գերազանցեցին 36 մլն ԱՄՆ դոլարը (ընդհանուր ՕՈՆ-ների ներհոսքի 6.4%-ը): Նույնը կարելի է ասել **Շինարարության** ոլորտի վերաբերյալ, որտեղ էական ներդրումներ նկատելի են միայն 2012թ.-ին, երբ դրանք գերազանցեցին 17 մլն ԱՄՆ դոլարի շեմը (ընդհանուր ՕՈՆ-ների ներհոսքի 3%-ը):

Ի հակակշիռ այս ամենի, շատ **աննշան են կամ գրեթե բացակայում են ներդրումները** այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են **Կրթությունը, Առողջապահությունը և սոցիալական սպասարկումը, Մշակույթը, Սպասարկման այլ ծառայությունները** և այլն:

Իսկ եթե վերլուծելու լինենք ՕՈւՆ-ների ներհոսքն ըստ աշխարհագրական կառուցվածքի, ապա դժվար չէ նկատել, որ 2009-2011թթ.-ն ընկած ժամանակահատվածում բացարձակ առաջատար է **Ռուսաստանի Դաշնությունը**, որի կողմից կատարված ներդրումները կազմում են 195-385 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ՕՈւՆ-ների ներհոսքի՝ 40-54%), ընդ որում ներդրումները կատարվել են հիմնականում **Էներգիայի և Գազի ոլորտում**: Սակայն 2012թ.-ից սկսած նկատվում է ՌԴ-ի կողմից ներդրումների կտրուկ նվազում. այսպես այդ նույն թվականին դրանք կազմեցին 88 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ՕՈւՆ-ների ներհոսքի գրեթե 16%-ը)՝ նախորդ տարվա համեմատ փաստացի նվազելով գրեթե 74%-ով:

ՕՈւՆ-ների տեսանկյունից ՀՀ կարևոր գործընկեր երկրներից է **Ֆրանսիան**: Վերջինիս կողմից կատարվող ներդրումների անընդհատ աճի միտումներ են նկատվում (101-197 մլն ԱՄՆ դոլար 2009-2011թթ. ընկած ժամանակատվածում): Պետք է նշել, որ ներդրումներն ուղղված են եղել հիմնականում **Հեռահաղորդակցմանը և Մանրարդյունաբերությանը**: Հատկանշական է այն, որ 2012թ.-ից Ֆրանսիան դարձավ առաջատարը ՕՈւՆ-ների իրականացման ցուցանիշով: Այսպես, այդ նույն թվականին դրանք կազմեցին ավելի քան 230 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ՕՈւՆ-ների ներհոսքի 41%-ը)՝ առաջ անցնելով ՌԴ-ին:

Հաջորդ կարևոր ներդրող երկրներից է **Արգենտինան**, որի կողմից կատարվող ներդրումները հիմնականում կենտրոնացած են **Գյուղատնտեսության և Օդային տրանսպորտի** ոլորտներում: Արգենտինան՝ որպես ներդրող, հետաքրքիր է այնքանով, որ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով կրճատված ՕՈւՆ-ները 2012թ.-ին բազմապատկվեցին գրեթե հնգակի՝ գերազանցելով անգամ նախաճգնաժամային ցուցանիշներին: Այսպես, 2012թ.-ին դրանք կազմեցին ավելի քան 51 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ՕՈւՆ-ների ներհոսքի 9%-ը), մինչդեռ ՕՈւՆ-ները 2011թ.-ին կազմում էին 8.7 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ տնտեսության մեջ էական ներդրումներ է իրականացնում նաև **Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը**: Վերջինիս կողմից իրականացվող ներդրումները հիմնականում ուղղված են **Հանքարդյունաբերությանն ու մասամբ Էլեկտրասարքավորումներին**: 2010թ.-ից նկատվում է ԳԴՀ-ի կողմից կատարվող ՕՈւՆ-ների աճ: 2012թ.-ին դրանք կազմեցին ավելի քան 48 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ՕՈւՆ-ների ներհոսքի 8.5%-ը)՝ նախորդ տարվա համեմատ ապահովելով կրկնակի աճ:

Ինչ վերաբերում է **Լիաբանանին**, ապա այս երկրի կողմից իրականացվող ՕՈւՆ-ները տատանվել են 13-13.5 մլն ԱՄՆ դոլարի միջակայքում (ընդհանուր ՕՈւՆ-ների ներհոսքի 1.9-2.3%-ը): ՕՈՒՆ-ների ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է 2009թ.-ին՝ կազմելով 13.5 մլն ԱՄՆ դոլար: Այս երկրի կողմից

ներդրումները կատարվել են հիմնականում **Հեռահաղորդակցման և Մանրարդյունաբերության** ոլորտներում:

ԱՄՆ-ն՝ որպես ներդրող, առանձնապես ակտիվություն չի ցուցաբերում ՀՀ-ի նկատմամբ: 2009թ-ին ՕՈՆ-ների ներհոսքը կազմել են մոտ 13 մլն ԱՄՆ դոլար, 2011թ-ին՝ ավելի քան 23 մլն ԱՄՆ դոլար, սակայն արդեն 2012թ-ին դրանք կտրուկ նվազել են՝ հասնելով 4 մլն ԱՄՆ դոլարի (ընդհանուրի 0.7%-ը): Այս երկիրը ներդրումներ կատարում է առավելապես **Ծրագրային ապահովման** ոլորտում:

ՕՈՒՆ-երի ներհոսքի դինամիկան հուսադրող չէ նաև 2013թվականին: Այդ տարի **ՕՈՆ-ների ներհոսքը կազմեց ավելի քան 271 մլն ԱՄՆ դոլար:** Այսպես, նախորդ տարվա համեմատ դրանք կտրուկ նվազեցին գրեթե 2 անգամ՝ չնայած այն հանգամանքին, որ պետության կողմից իրականացվում են ՕՈՆ-ների ներգրավման և տնտեսության խթանմանն ուղղված բազմաթիվ քայլեր և բարեփոխումներ:

2013թ.-ին ՕՈՆ-ների ներհոսքն ըստ ոլորտների կարելի է ներկայացնել ստորև բերված աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 3

ՀՀ-ում ՕՈՆ-ների ներհոսքն ըստ ոլորտների/ 2013թ.⁶

Ոլորտ	ՕՈՒՆ (հազ.ԱՄՆ դոլար)	%
Ընդամենը	271160.4	100
Հաղորդակցություն	113083.4	41.70
Անշարժ գույքի գործարք	45981.2	16.96
Հանքարդյունաբերություն	30272.6	11.16
Մանրարդյունաբերություն	29369.4	10.83
Ցամ. տրանսպորտ	10801	3.98
Էլեկտրաէներգիա	7312.6	2.70
Գյուղատնտեսություն	7171	2.64
Օդային տրանսպորտ	4869.4	1.80
Շինարարություն	2547.4	0.94
Հյուրանոցային ծառ.	1475.2	0.54
Հետազոտություն	1333	0.49
Այլ	16944.2	6.25

Աղյուսակից երևում է, որ ՕՈՆ-ների գերակշիռ մասը շարունակվում է ուղղվել դեպի Հաղորդակցության և Կապի ոլորտ: 2013թ.-ի ցուցանիշներով այդ ոլորտին է ուղղվել ՕՈՆ-ների 41.7%-ը՝ ավելի քան 113 մլն ԱՄՆ դոլար: Անշարժ գույքի գործարքներին հատկացվող ՕՈՆ-ները կազմել են մոտ 46 մլն ԱՄՆ դոլար, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ՕՈՆ-ների ներհոսքի մեջ կազմել է գրեթե 17%: Ինչ վերաբերում է Հանքարդյունաբերությանը, ապա այս

⁶ <http://www.ada.am/arm/for-investors/fdi-statistics/foreign-direct-investments-by-sectors/> վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.11.2014թ.

ուրտին ուղղված ՕՈՒՆ-ները կազմել են մոտ 30 մլն ԱՄՆ դոլար: Ներդրումների ծավալով այս ոլորտից քիչ է ետ մնում սննդարդյունաբերության ոլորտը՝ ավելի քան 29 մլն ԱՄՆ դոլար: Ներդրումային ծավալով քիչ են միմյանց զիջում նաև Էլեկտրաէներգիայի և գյուղատնտեսության ոլորտները, որոնց դեպքում ՕՈՒՆ-ները հասել են 7 մլն ԱՄՆ դոլարի շեմը: Մինչդեռ պետք է նշել, որ 2012թ.-ին մոտ 17 մլն ԱՄՆ դոլարի ՕՈՒՆ-ների ներհոսք ապահոված Շինարարության ոլորտում հաջորդ տարի ներդրումները կազմեցին միայն 2.5 մլն ԱՄՆ դոլար: Հյուրանոցային ծառայություններին ուղղված ՕՈՒՆ-ները կազմել են մոտ 1.5 մլն ԱՄՆ դոլար, սակայն եթե հաշվի առնենք, որ այն Տուրիզմին հարող ոլորտներից է, իսկ վերջինս էլ ՀՀ տնտեսության գերակա ճյուղերից մեկն է, ապա ներդրումներն այս ոլորտում տպավորիչ չեն, ինչպես որ Ծառայությունների մյուս ոլորտներում:

Հաջորդ աղյուսակն իր մեջ ամփոփում է 2013թ.-ի ընթացքում ՀՀ տնտեսության մեջ իրականացված ՕՈՒՆ-ների աշխարհագրական կառուցվածքը:

Աղյուսակ 4

ՕՈՒՆ-ների աշխարհագրական կառուցվածքը ՀՀ-ում /2013թ./⁷

Երկիր	ՕՈՒՆ (<i>հազ. ԱՄՆ դոլար</i>)	%
Ընդամենը	271160.4	100
Ֆրանսիա	99116.8	36.55
Ռուսաստան	58614.8	21.62
Պերսիա	22129.6	8.16
Արգենտինա	12605.4	4.65
Շվեյցարիա	10266.4	3.79
Լիբանան	6350	2.34
Այլ	62076.9	22.89

Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, 2012թ.-ից սկսած ՕՈՒՆ-ների ծավալով Ֆրանսիան առաջ անցավ մինչ այդ բացարձակ առաջատար համարվող Ռուսաստանի Դաշնությանը, որի ներդրումները գերազանցում էին ընդհանուրի 50%-ը: Սակայն 2013թ.-ին ևս առաջին հորիզոնականում հայտնվեց Ֆրանսիան, որի կատարած ՕՈՒՆ-ները կազմեցին ավելի քան 99 մլն ԱՄՆ դոլար՝ ընդհանուրի 36.5%-ը: Սա խոսում է այն մասին, որ ակտիվացել է հայ-ֆրանսիական գործարար համագործակցությունը, և Ֆրանսիայի տնտեսվարող սուբյեկտները ցուցաբերում են փոքրիշատե հետաքրքրություն հայկական շուկայի հանդեպ: Ֆրանսիային իր ցուցանիշներով զիջում է ՌԴ-ն, որի իրականացրած ՕՈՒՆ-ները 2013թ.ին կազմել են մոտ 57 մլն ԱՄՆ դոլար: 2012թ.-ի համեմատ այս երկրի կողմից իրականացվող ՕՈՒՆ-ների ներհոսքը նվազել է 29,7 մլն ԱՄՆ դոլարով՝ այսպիսով նվազելով գրեթե 34%-ով:

⁷ <http://www.ada.am/arm/for-investors/fdi-statistics/foreign-direct-investments-by-countries/> վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.11.2014թ.

Փաստորեն 2013թ.ին Ֆրանսիան և ՌԴ-ն ապահովել են ՀՀ ՕՈՒՆ-ների ներհոսքի 58.17%-ը: Ֆրանսիային և ՌԴ-ին են զիջում Գերմանիան (22.1 մլն ԱՄՆ դոլար), Արգենտինան (12.6 մլն ԱՄՆ դոլար), Շվեյցարիան (10.2 մլն ԱՄՆ դոլար) և Լիբանանը (6.3 մլն ԱՄՆ դոլար):

Իսկ որո՞նք են այն հիմնական ՎԱԿ-երը, որոնք իրենց գործունեությունն են ծավալում ՀՀ-ում: Վերևում հայանցիկ նշեցինք այն հիմնական ՎԱԿ-ը, որոնք ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում իրականացրել են և շարունակում են իրականացնել ներդրումներ: Առավել հանգամանորեն անդրադառնանք այն ֆիրմաների գործունեությանը, որոնք հետաքրքրված են հայկական շուկայով:

Էներգետիկ ոլորտում գործող խոշորագույն կազմակերպություններից է **«Գազպրոմ Արմենիա»**: «Գազպրոմ» ռուսական բաժնետիրական ընկերության և ՀՀ կառավարության միջև 1997թ.-ի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրի հիման վրա հիմնադրվեց «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն: 2013թ.-ի դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին» համաձայնագրով՝ «Գազպրոմ» ԲԲԸ ձեռք բերեց «ՀայՌուսգազարդ» ընկերությունում ՀՀ կառավարության 20% բաժնեմասը: «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն, դառնալով «Գազպրոմ» ԲԲԸ 100 % դուստր ընկերություն, վերանվանվեց «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ⁸: Վերջին մի քանի տարիների ընթացքում հանրապետության գազաէներգետիկ ոլորտում ընկերությունն իրականացրել է 900 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով ներդրումներ: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է հանրապետության խոշոր գործատուներից մեկը՝ ապահովելով ավելի քան **7000 աշխատատեղ**: «Գազպրոմ Արմենիան» Հայաստանի խոշորագույն ընկերություններից է և տարիներ շարունակ առաջատար դիրքեր է զբաղեցնում հանրապետության խոշոր հարկատուների ցանկում: **Յուրաքանչյուր օր ՀՀ պետությունը է վճարվում ավելի քան 100 մլն դրամ**⁹:

Նեոահաղորդակցման ոլորտում գործում է «**ԱրմենՏել**» ՓԲԸ-ն, որը հանդես է գալիս Beeline ապրանքանիշով և պատկանում է **Vimpelcom** Խմբին¹⁰: 2013թ.-ի տվյալներով «ԱրմենՏել» ՓԲԸ-ն **գործատու է 2494 մարդկանց համար**¹¹: «**Արմենիա Տելեֆոն Կոմպանի**» ՓԲԸ-ն Հայաստանի խոշորագույն հեռահաղորդակցության ընկերությունն է: Ընկերությունը հիմնադրվել է 1995թ. մարտ ամսին ամերիկյան Trans-World Telecom ընկերության հետ համատեղ՝ Հայաս-

⁸ <http://www.gazpromarmenia.am/am/home/arg/> վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.11.2014թ.

⁹ <http://www.gazpromarmenia.am/am/company/> վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.11.2014թ.

¹⁰ <http://www.vimpelcom.com/#Profile/Understanding-VimpelCom/Brands/> վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.11.2014թ.

¹¹ Vimpelcom LTD, Corporate Responsibility Report 2013, p.3.

2011թ.-ին Հայաստանում բացվեց PepsiCo գործարանը: Այն այժմ ունի ավելի քան **200 աշխատողներ**¹⁸:

Աղյուսակ 5

ՀՀ գործող խոշոր ՎԱԿ-երը՝ որպես գործատուներ¹⁹

Կազմակերպություն	Աշխատատեղերի քանակ
Գազպրոմ Արմենիան	7000
«ԱրմենՏել» ՓԲԸ	2494
Շարունակություն	
Օրանժ Արմենիա	800
Զանգեզուրի Պղնձամուլիբդենային Կոմբինատ	3200
Սինոփսիս Արմենիա	570
Կոկա-Կոլա Հելլենիկ	330
Բոթլինգ Քամփնի Արմենիա	
Jermuk International Pepsi-Cola Bottler LLC	200
Ընդհանուր	14594

Կարևոր վերլուծություն է ներկայացնում ոչ միայն ՀՀ-ում կատարվող ՕՈՍՆ-ների վերլուծությունն ըստ ոլորտների, աշխարհագրական կառուցվածքի և ապահովված աշխատատեղերի, այլև գործող մի շարք ՎԱԿ-երի՝ որպես ծանրակշիռ հարկատուների, ուսումնասիրումը: Այսպես, եթե 2013թ.-ի վերջին տվյալներով դիտարկենք առաջին խոշոր 110 հարկատուների ցանկը²⁰, ապա 2013թ.-ի պետեկամուտների²¹ **876,670.9 մլն ՀՀ դրամից 157,500.3 մլն ՀՀ դրամն ապահովել են 14 ՎԱԿ-եր**, որոնց կողմից կատարված հարկային վճարումները ներկայացված են Աղյուսակ 6-ում: Փաստորեն, **15 խոշոր կազմակերպություններ ապահովել են պետբյուջե հարկային եկամուտների մոտ 18%-ը**:

¹⁸ <http://www.jermukgroup.am/am/history/> վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.11.2014թ.

¹⁹ Աղյուսակը մշակվել է հեղինակի կողմից:

²⁰ <http://www.taxservice.am/Content.aspx?itn=TILists> 2013թ. հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունների, վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.11.2014թ.

²¹ <http://www.taxservice.am/Content.aspx?itn=TIY2013> 2013 թվականի դեկտեմբեր ամսվա ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ աղյուսակը և գրաֆիկական պատկերները, վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.11.2014թ.

2013թ.-ի ՀՀ խոշոր հարկ վճարող ՎԱԿ-երը²²

ՀՀ	Զբաղեցրած տեղը խոշոր հարկատուների ցանկում	ՎԱԿ-երի անվանումը	Վճարված հարկերի ընդհանուր գումարը (մլն. դրամ)
1	1	Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ	37,862.2
2	2	Հայ-Ռուսական Հայրուսագաբրդ	36,079.5
3	6	Ղ-Տելեկոմ	30,101.5
4	5	Արմենիա Տելեֆոն Կոմպանի	15,475.9
5	10	Գեո Պրո Մայնինգ Գոլդ	7,260.9
		Շարունակություն	
6	14	Դանդի Փրիշու Մեթալս Կապան ՓԲԸ	5,337.5
7	16	Արմենիա Միջազգային Օդանավակայաններ	5,099.8
8	20	Երևանի Կոնյակի Գործարան	4,685.1
9	34	Ագարակի Պղնձա-Մոլիբդենային Կոմբինատ	3,498.6
10	35	Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամ.Արմեն.	3,439.7
11	37	Օրանժ Արմենիա	3,214.6
12	66	Թեղուտ	1,614.8
13	84	Պեռնո Ռիկար Արմենիա	1,411.3
14	99	Սինոփսիս Արմենիա	1,222.9
15	103	Ջերմուկ Գրուպ	1,186.9
		Ընդամենը	157,500.3

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ ՀՀ-ում ՎԱԿ-երն իրենց գործունեությունը ծավալում են՝ փնտրելով հիմնականում ռեսուրսներ և սպառողական շուկաներ, ապահովում են աշխատատեղեր և հարկային եկամուտներ պետրոլե, սակայն ասել է թե այսքանով սահմանափակվում է դրանց գործունեության շրջանակը: Մինչդեռ ՎԱԿ-երի գործունեությունն առավել կարևորվում է տեխնոլոգիաների միջազգային փոխանցման, բաժր տեխնոլոգիական տնտեսության կառուցման, ձեռնարկատիրական փորձի, մտավոր սեփականության օբյեկտների համաշխարհային շարժի տեսանկյունից, և այս համատեքստում, ցավոք ՎԱԿ-երը ՀՀ-ում էական ցուցանիշներ և արդյունքներ չեն ապահովում: Գուցե իսկապես ՀՀ-ն ՎԱԿ-երին հետաքրքրում է քաղաքական շարժառիթների տեսանկյունից... Սակայն, զարգացող երկրների՝ ի դեմս Հարավային, Հարավ-Արևելյան և Արևելյան Ասիայի երկրների միջազգային փորձը վերլուծելիս նկատում ենք, որ դրանց հաջողությունը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ այս երկրներն, ի տարբերություն ՀՀ-ի, կարողացել են օգտվել

²² Աղյուսակը մշակվել է հեղինակի կողմից:

գլոբալացման ընձեռած հնարավորություններից, մասնավորապես՝ իրենց տնտեսության մեջ ՎԱԿ-երի գործունեությունն ուղղորդել են առավել շահութաբեր ոլորտներ:

Այստեղ է, որ ծագում է մի շատ կարևոր հարց. *«Որտե՞ղ են վրիպումները, որանք արդյո՞ք պայմանավորված են օրենսդրական դաշտի բացթողումներով կամ արտաքին տնտեսական քաղաքականությամբ, թե մի շարք այլ սոցիալ-տնտեսական գործոններով: Կա՞մ միգրացիոն շճ-ին պակասում է ՎԱԿ-երի գործունեության միջազգային փորձի տեղայնացման նոսր-հատն»:*

ДЕЯТЕЛЬНОСТЬ ТРАНСНАЦИОНАЛЬНЫХ КОРПОРАЦИЙ В АРМЕНИИ

Оганес Ерицян

*Соискатель и преподаватель кафедры Экономики
Европейской региональной академии образования*

Ключевые слова: мировой рынок, глобализация, транснациональные корпорации, прямые иностранные инвестиции, секторы экономики, финансовый кризис, бюджет, налоговые поступления, внешнеэкономическая политика.

В Армении, транснациональные корпорации, прежде всего, осуществляют свою деятельность в поиске ресурсов и потребительского рынка, создают рабочие места и обеспечивают налоговые поступления в государственный бюджет. Важность деятельности транснациональных корпораций состоит в международном трансфере технологий, в строительстве хай-тек индустрии, бизнес-практики и в всемирном движении интеллектуальной собственности. В отличие от многих других развивающихся стран, Армения не смогла принять возможности, предоставляемые глобализацией, в частности, привести деятельность транснациональных корпораций в самые прибыльные сферы экономики.

THE ACTIVITY OF TRANSNATIONAL CORPORATIONS IN ARMENIA

Hovhannes Yeritsyan

*Ph.D. Student and Lecturer of the Economic Department
at European Educational Regional Academy*

Keywords: global market, globalization, transnational corporation, foreign direct investments, economic sectors, financial crisis, state budget, tax revenues, foreign economic policy.

In Armenia, the transnational corporations primarily perform their activities in searching of resources and consumer markets, providing jobs and tax revenues to the state budget. The importance of the activities of transnational corporations is in the international transfer of technologies, in the construction of high-tech industry, the business practices and in the global movement of intellectual property. In contrast to many other developing countries, Armenia was not able to take the opportunities provided by globalization, particularly to lead the activities of transnational corporations in the most profitable areas of the economic.

**ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԵՐՈՒՄ**

Անուշ Պետրոսյան

Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայի հայցորդ

Բանալի բառեր՝ ներդրումային միջավայր, կրկնակի հարկում, հավասարակշռված հարկային քաղաքականություն, օտարերկրյա ներդրումների կարգավորում

Ներդրումները հանդիսանում են տնտեսության շարժիչ ուժը՝ ապահովելով դրա շարժը դեպի առաջ: Տնտեսական աճը և ներդրումները ուղիղ համեմատական կապի մեջ են: Տնտեսական աճը կարելի է սահմանել, որպես իրական արդյունքի և ազգային եկամտի երկարաժամկետ աճի արդյունք: Տնտեսական աճը համարվում է արդյունավետ, եթե այն լրացուցիչ ռեսուրսների արդյունք է և ոչ թե արտադրողականության մակարդակի կամ ներդրված կապիտալի չափի փոփոխության հետևանք: Արդյունավետ տնտեսական աճը կապված է այնպիսի կատարյալ գործոնների հետ ինչպիսիք են արտադրությունը և տեխնոլոգիան, այն իրականացվում է ոչ թե տնտեսությունում արտադրության գործոնների քանակական փոփոխությամբ այլ դրանց օգտագործման արդյունավետության բարձրացմամբ:

Օտարերկրյա ներդրումները ցանկացած երկրի տնտեսական գործունեության կարևորագույն բաղադրիչներից են, որոնք նպաստում են առաջավոր տեխնոլոգիաների, կառավարչական ունակությունների և գիտելիքների ներգրավմանը, բիզնես միջավայրի բարելավմանը, ներքին առողջ մրցակցային դաշտի և աշխատատեղերի ստեղծմանը և այլն¹: Ներդրումային ծրագրերի իրականացումը հնարավորություն է տալիս ավելացնել արտադրության ծավալները, կատարելագործել տեխնիկական և տեխնոլոգիան, թողարկել որակյալ և միջազգային ստանդարտներին համապատասխանող արտադրանք, ստեղծել նոր աշխատատեղեր, նվազեցնել գործազրկությունը և, վերջին հաշվով, բարձրացնել ազգաբնակչության կենսամակարդակը²:

Ներդրումները կարևոր դեր են խաղում ցանկացած երկրի տնտեսության զարգացման, սոցիալական հիմնախնդիրների լուծման, երկրի պաշտպանության ամրապնդման և ազգային անվտանգության ապահովման գործում: Իրական և ֆինանսական: Ներդրումների թե իրական, և թե ֆինանսական ուղղությունները էլ ունեն մի շարք ընդհանուր հատկանիշներ և գործառույթներ:

¹ Инвестиции: Учебник / Андрианов А.Ю., Валдаев С.В. — М.: ТК1. Велби, 2008. 538

² Инвестиции в вопросах и ответах: Учебное пособие / Под ред. Евсенок О.С. М.: ТК Велби, Издательство Проспект, 2004. стр. 98

Ցանկացած տնտեսական համակարգում իրական ներդրումներն ազդում են տնտեսական աճի վրա՝ նախապայման հանդիսանալով ազգային եկամուտների աճին:

ՕՈՒՆ-ների ներգրավման հարցում լուրջ մակրոտնտեսական մարտահրավեր է հանդիսանում նաև հարկային մուտքերի ավելացումները: ՕՈՒՆ-ների ակտիվացմամբ, ընդունող երկրում արձանագրվող տնտեսական աճը հանգեցնում է լրացուցիչ հարկող եկամուտների աճի մի շարք հարկատեսակների գծով, ինչպիսիք են.

- շահութահարկը, քանի որ ձևավորվում են նոր արտադրություններ, ծառայությունների մատուցման ոլորտներ, որոնց գործունեությունը ուղեկցվում է հարկային հետևանքներով,
- եկամտային հարկը, քանի որ ներդրումների հետևանքով ձևավորվում են նոր աշխատատեղեր և վճարվող աշխատավարձի հավելած,
- անուղղակի հարկեր (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ), քանի որ ներդրումների արդյունքում աճում է ապրանքաշրջանառությունը, աճում են արտադրանքի վաճառքի և ծառայությունների մատուցման ծավալները³:

Հետևաբար, ՕՈՒՆ-ների ներգրավման հարցում ընդունող երկիրը ունենում է նաև հարկային մուտքերի ավելացման մակրոտնտեսական շարժառիթներ: Սակայն դրան գուզահեռ, կրկնակի հարկման կանխարգելման գործընթացում ընդունող երկիրը ունենում է նաև հարկային մուտքերի կորուստներ, քանի որ օտարերկրյա ներդրողը ունենալով իր օտարերկրյա գործունեության արդյունքներից եկամուտներ և դրա դիմաց հարկվելով իր երկրում, իրավունք է ձեռքբերում հայրենի երկրում իր հարկային պարտավորությունները հաշվանցելու ներդրում կատարած երկրում ձևավորված հարկային մուծումների հետ: Չնայած “հարկային մուտքերի” կրճատման վերոնշյալ արդյունքի, այնուամենայնիվ ընդունող երկիրը գնում է կրկնակի հարկման կարգավորման գործընթացին, քանի որ դրանք ի վերջո հետ են մնում ներդրումներից ստացվող տնտեսական օգուտների աճից⁴:

Մյուս կողմից, ընդունող երկրում ստանալով եկամուտներ, օտարերկրյա ներդրողը վճարելով հարկեր հենց այդ երկրում, կարող է խուսափել իր հայրենի երկրի օրենսդրությամբ սահմանված հարկային պարտավորություններից: Հետևաբար, կրկնակի հարկման կարգավորման միջազգային պայմանագրերը.

³ Мельникова Н. Иностранные инвестиции в экономике России //Экономист. 2003. № 4. С.39


⁴ Биргулиева Г. Ф. Инвестиции в моделях экономического роста // Управление экономикой: методы, модели, технологии. Материалы III . Всероссийской научно-методической конференции с международным участием. Уфа: УГАТУ, 2003. С. 60 - 62.

- փոխզիջումային դաշտ են ստեղծում օտարերկրյա կապիտալը ընդունող և արտահանող երկրների միջև, փոխհամաձայնեցված կարգով երկկողմ վերաբաշխելով կապիտալի օգտագործումից բխող հարկային պարտավորությունները,
- վերահսկողական համակարգ են ձևավորում օտարերկրյա կապիտալի օգտագործումից բխող հարկային պարտավորություններից խուսափման կանխարգելման համար, թե ընդունող երկրում, և թե կապիտալը արտահանող երկրում⁵:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորման գործընթացում լուրջ դերակատարում ունի կրկնակի հարկման հիմնախնդրի լուծումը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 5-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 38-րդ հոդվածների պահանջները հաշվի առնելով, ՀՀ-ում ձևավորվել է օտարերկրյա ներդրումների ոլորտում կրկնակի հարկման կանխարգելման իրավական դաշտ:

Միջազգային վիճակագրությունը վկայում է, որ համաշխարհային պրակտիկայում առավել տարածում են գտնում կրկնակի հարկման կարգավորման երկկողմ պայմանագրերի կնքումը զարգացած երկրների միջև, իսկ առավել սակավ՝ զարգացող երկրների միջև (տես գծապատկեր 1): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՕՈԻՆ-ների գծով կրկնակի հարկման կարգավորման հիմնախնդիրները առավել սուր են դրված հենց զարգացած երկրներում, որոնք օտարերկրյա ներդրումները առաջին հերթին դիտարկում են հարկային եկամուտների ավելացման տեսանկյունից: Իսկ զարգացող երկրները, առավելապես ՕՈԻՆ-ներ են ձգտում ներգրավել տնտեսական աճի նկատառումներով, և առաջնահերթ են համարում դրնաց տնտեսական արդյունավետության հիմնախնդիրների շրջանակը:

⁵ Елизветин М.Е. Иностранный капитал в экономике России - М.: Международные отношения, 2004., стр. 26



Գծապատկեր 1 Կրկնակի հարկման կանխարգելման միջազգային պայմանագրերի բաշխումը երկրների երկկողմ փոխհարաբերություններում⁶

Կրկնակի հարկման կանխարգելման գործընթացը այնքան էլ հարթ չի ընթանում միջազգային պրակտիկայում: Հետզհետ հաճախակի են դառնում վիճահարույց խնդիրները երկրների միջև, որոնք անգամ միջազգային դատական լուծումներ են պահանջում: Այսպես, եթե 1998 թ. միջազգային պրակտիկայում ընդամենը արձանագրվել էր ՕՈԻՆ-ների հետևանքով հարկային պարտավորությունների կատարման ընդամենը 14 վիճահարույց խնդիր, ապա 2011 թ. դրանց թիվը գերազանցեց 300-ը⁷: Այս միտումը կարելի է մեկնաբանել մի քանի տեսանկյունից:

Նախ և առաջ, գնալով ավելի և ավելի մեծ ծավալների են հասնում միջազգային համաձայնագրերը ներդրումների գծով, որոնք պահանջում են իրավական և նորմատիվային անընդհատ բարելավումներ ու կարգավորումներ՝ արդյունքում ձևավորելով վիճահարույց մոտեցումներ երկրների միջև ՕՈԻՆ-ների գծով հարկային բեռի վերաբաշխման ոլորտում:

Երկրորդ, օտարերկրյա ներդրողները հաճախ իրենց կապիտալը արտահանում են այնպիսի երկրներ, որտեղ ի տարբերություն իրենց հայրենիքի, հարկային բեռի առավել թեթև և բարենպաստ պայմաններ են ստեղծված, պայմանավորված կրկնակի հարկման գործող ոչ կատարյալ մեխանիզմի հետ:


Եվ վերջապես, կրկնակի հարկման կանխարգելման նորմերին տարբեր երկրներ, տարբեր մոտեցումներ են ցուցաբերում, դրանով իսկ երբեմն վիճահարույց դարձնելով հարկման պայմանները որոշակի երկրների համար: Այս առումով, միջազգային պրակտիկայում ներկայումս հիմնախնդիր է

⁶ Комаров В.В., Литвина Н.И., Мировая экономика: прямые и индустриальные инвестиции, ФГБОУ, ВПО, М., 2012, стр. 32

⁷ United Nations Conference on Trade and Development, «World Investment Report», 2000-2011. - N.Y. and Geneva

դառնում համընդհանուրնորմերով կրկնակաի հարկման կանխարգելման գործընթացի կարգավորումը⁸:

Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Հայաստանի Հանրապետության գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու վերաբերյալ ՀՀ կառավարությունը դեռևս 2004թ. ընդունել է որոշում⁹, որի համաձայն հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտը ՀՀ-ում հարկումից ազատված լինելու դեպքում օտարերկրյա գործարարը կապիտալը ընդունող երկրի հարկային գործակալին իր պետության ռեզիդենտ հանդիսանալու մասին տեղեկանք:



Գծապատկեր 2. Կրկնակի հարկման կանխարգելման սխեման ՕՈՒՆ-ների բնագավառում¹⁰

⁸ Banga, Rashmi «Impact of Government Policies and Investment Agreements on FDI Inflows», Indian Council

⁹ ՀՀ կառավարության 2004թ. 7 հոկտեմբերի 1398-Ն որոշումը «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին ՀՀ գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու մասին»

¹⁰ Կազմված է հեղինակի կողմից:

Օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված շահութահարկի գումարը ՀՀ-ում ենթարկվում է հաշվանցման: Մանսավորապես, ՀՀ-ում, հարկատուի եկամտի գումարից գանձվող շահութահարկը հաշվանցվում է շահութահարկի այն գումարի մասով, որը գանձվել է ռեզիդենտից՝ արտասահմանում: Մինևույն ժամանակ, հաշվանցվող շահութահարկի գումարը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամտից՝ ՀՀ օրենսդրության համապատասխան վճարվող շահութահարկի պարտավորության մեծությանը¹¹:

Օտարերկրյա ներդրումների գծով “Շահութահարկի մասին” ՀՀ օրենքում նախատեսված էին արտոնություններ (տես հավելված 4) հարկի նվազեցման 50 կամ 100 %-ի չափով, եթե ռեզիդենտի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրման սահմանված չափաքանակը գերազանցում էր 500 մլն դրամը: Սակայն, փորձագետների գնահատականներով, շահութահարկի գծով նշված արտոնությունները բավարար չէին ՕՈՒՆ-ների գրավչության բարձր մակարդակ ապահովելու գործում, և առավել արդյունավետ համարվեց ՀՀ-ի կողմից կրկնակի հարկման կանխարգելման գործիքակազմը¹²:

Կրկնակի հարկման բացառման նորմ է պարունակում նաև ՀՀ Եկամտային հարկի մասին օրենքը, համաձայն որի ՀՀ-ում հաշվարկվող եկամտային հարկը հաշվանցվում է այն չափով, որ չափով որ ռեզիդենտից պահվել է եկամտային հարկ արտասահմանում: Ընդ որում, հաշվանցվող հարկի գումարի չափը չի կարող գերազանցել արտասահմանում ստացված եկամտից ՀՀ-ում գործող օրենքների դրույթներին համապատասխան վճարման ենթակա հարկային պարտավորությանը¹³:

Վերջին շրջանում ներդրումային միջազգային համաձայնագրերում նկատվում է նախապատվությունների տրամադրման միտումներ (տես գծապատկեր 2): Նախապատվությունների վրա հիմնված համաձայնագրերը ավանդական ՄՆՀ-ներից տարբերվում է նրանով, որ ներառում են երկկողմ հարկային, մաքսային, գործարարության վարման այլ արտոնություններ: Այս միտումները հատկապես վառ են դրսևորում տնտեսական միևնույն ալիանսում գտնվող երկրների ներդրումային փոխահարաբերություններում: Արդեն իսկ 2008թ. միջազգային պրակտիկայում կնքվել էին նախապատվությունների հիման վրա 254 միջազգային համաձայնագրեր, որոնք ընդգրկում էին 63 երկիր: Չնայած, այդ համաձայնագրերը չէին գերազանցում գործող ավանդական ՄՆՀ-

¹¹ “Շահութահարկի մասին” ՀՀ օրենք, հոդված 52, Եր., 1997թ.

¹² Global SPC- Invest in Armenia, www/Investinarmenia.am

¹³ “Եկամտային հարկի մասին” ՀՀ օրենք, 24 հոդված, Եր., 2010 թ.

րի 10%-ը, սակայն որոշից դերակատարում ունեցան այդ երկրների գծով ներդրումային շուկայում մրցակցային դիրքեր գրավելիս¹⁴:

Նախապատվությունների վրա հիմնված ներդրումային միջազգային համաձայնագրերը հատկապես բարձր արդյունավետությամբ դրսևորվեցին Ճապոնիայի և Տաիլանդի միջև 2007թ. կնքված “Տնտեսական գործընկերության համաձայնագրի”, ինչպես նաև Հարավ Կորեական Հանրապետության և Միացյալ Նահանգների միջև կնքված “Ներդրումների խթանման և պաշտպանվածության” միջպետական պայմանագրերի շրջանակներում¹⁵:

Այս առումով, արդիական ենք համարում Հայաստանի Հանրապետության կողմից նախապատվությունների վրա հիմնված ներդրումային միջազգային ներդրումային համաձայնագրերի մշակումը ավանդական գործընկերային կապեր ունեցող ինչպես տարածաշրջանային, այնպես էլ արևսյան երկրների հետ: Հատկապես նման միջազգային պայմանագրերը ՀՀ-ի համար կկգործեն արդյունավետ Եվրասիական Տնտեսական Միության շրջանակում, երբ այդ ակնհասում ընդգրկված երկրները միմյանց նկատմամբ կարող են ցուցաբերել հարկային, մաքսային արտոնություններ, զեղչված տոկոսադրույքներով միջազգային վարկերի տրամադրումներ:

ПУТИ УРЕГУЛИРОВАНИЯ ДВОЙНОГО НАЛОГООБЛОЖЕНИЯ В ИНВЕСТИЦИОННЫХ ПРОЕКТАХ

Ануш Петросян

Соискатель Европейской региональной академии образования

Ключевые слова: инвестиционный климат, двойное налогообложение, уравновешенная налоговая политика, урегулирование иностранных инвестиций

Одним из важных предпосылок повышения привлекательности международных инвестиций является эффективное урегулирование двойного налогообложения. В статье рассматриваются пути улучшения механизма двойного налогообложения в Армении. В частности предлагаются пути ведения гибкой системы налогообложения иностранных инвестиций, становления уравновешенной налоговой политики между Арменией и иностранными инвесторами.

¹⁴ Комаров В.В., Литвина Н.И., Мировая экономика: прямые иностранные инвестиции, ФГБОУ, ВПО, М., 2012, стр. 32

¹⁵ Мировая экономика: Учебник / Под ред. Ломакина В.К. 3-е. изд., перераб. и доп. М.: Инфра-М, 2010. стр. 23.

THE WAYS OF DEVELOPMENT DOUBLE TAXATION
REGULATION IN INVESTING PROJECTS

Anush Petrosyan

PhD student at European Regional Educational Academy

Key words: investing climate, double taxation, balanced taxation policy, regulation of foreign investment

The one is important preconditions of rising investing climate for international investments, it is efficient regulation of double taxation. In the article is discussed development ways of double taxation system in Armenia. Particularly, is suggested approaches for making up flexible systems for international investment taxation, also arrangement of the balanced taxation policy between Armenia and international investors.

**ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Մերի Մուրադյան

Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի 4րդ կուրսի ուսանողուհի

Գևորգ Գրիգորյան

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի դասախոս, Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր` ֆինանսական, դրամավարկային, բանկային, տնտեսական ազատ միջավայրի ձևավորում, ներդրումային գրավչության բարձրացում, հարկային բեռի հավասարաչափ բաշխում, հարկային քաղաքականություն, օրենսդրաիրավական ապահովվածություն, ծախսերի նախահաշիվ, բյուջետային դեֆիցիտ, բյուջետային կարգապահություն, մաքսային քաղաքականության արդյունավետություն, սովերային տնտեսություն

Շուկայական հարաբերություններին անցումը ենթադրում է բազմաթիվ հիմնախնդիրների լուծում, որի դեպքում միայն հնարավոր կլինի ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման համար: Որպես այդպիսիք հանդիսանում են երկրի ֆինանսական, դրամավարկային, բանկային, հարկաբյուջետային, սոցիալական, կառուցվածքային և այլ համակարգերում արմատական վերափոխումների իրականացումը: Ընդ որում, այդ գործընթացի իրականացման հիմնական կողմնորոշիչ պետք է դառնա նոր պահանջների բավարարումը, որոնք հաճախ կարող են տրամագծորեն տարբերվել կենտրոնացված կառավարման համակարգի կողմից ներկայացվող պահանջներից:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այս ուղղությամբ վարվող քաղաքականությունն անցման սկզբնական փուլերում պետք է բացառի կտրուկ և հեղափոխական քայլերի իրականացումը, քանի որ վերջինս, որպես կանոն, չի հանգեցնում ցանկալի արդյունքների, այլ, ավելի է խորացնում առկա հիմնահարցերը և ծնում նորերը: Այդ իսկ պատճառով, տնտեսական նոր հարաբերություններին անցումը պետք է իրականացվի համապատասխան նախադրյալների ստեղծման, պետական միջամտության շրջանակների աստիճանաբար նեղացման, շուկայական հարաբերությունների ձևավորման համար բարենպաստ դաշտի ընդլայնման, անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման ճանապարհով:

Ընդհանուր տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործում խիստ կարևորվում է այնպիսի հիմնախնդիրների լուծմանն ուղղված մոտեցումների մշակումը, ինչպիսիք են տնտեսական ազատ միջավայրի ձևավորման, մրցակցության հաստատման, սոցիալական ապահովության համակարգի ստեղծման, ներդրումային գրավչության բարձրացման, հարկային բեռի հավասարաչափ բաշխման, բյուջետային գերակայությունների սահմանման հարցերը: Բնականաբար, դրանցից յուրաքանչյուրի լուծման հարցում առանցքային է պետությանը դերը, որն իր տրամադրության տակ ունեցած լծակներով կարող է համապատասխան փոփոխություններ կատարելու ճանապարհով ստեղծել առավել նպաստավոր պայմաններ:

Տնտեսության կայունացման, առաջընթացի ապահովման, տարաբնույթ խնդիրների լուծման գործում չափազանց կարևոր դեր ունի երկրի հարկաբյուջետային համակարգը: Դա, բնականաբար, ենթադրում է հարկաբյուջետային այնպիսի քաղաքականության մշակում և իրականացում, որը կնպաստի ձեռնարկատիրական ակտիվության բարձրացմանը, ներդրումային գործընթացի աշխուժացմանը, ազատ մրցակցության հաստատմանը, և, վերջին հաշվով, տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը: Այն պետք է առավել բարենպաստ պայմաններ ստեղծի երկրում տնտեսավարող սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնման, ներդրումային գործընթացների ակտիվացման, հավասար մրցակցային դաշտի ձևավորման և ընդլայնված վերարտադրության ապահովման համար: Այլ խոսքով, նշված նպատակների համախումբը իրենից ներկայացնում է պետական կառավարման այն ամբողջությունը, որի համակարգված և հետևողական իրականացման արդյունքում միայն կարելի է ապահովել պետական կարգավորման կարևոր լծակների գործադրման նպատակամետությունն ու արդյունավետությունը: Տնտեսական նոր, առավել ազատական հարաբերություններին անցման գործընթացով պայմանավորված հիմնախնդիրների լուծումը ստանում է ընդգծված բնույթ հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում, քանի որ դրանցում, որպես կանոն, ֆինանսական միջոցների անբավարարությունը, պետական կառավարման համակարգի անկատարությունը, օրենսդրական համապատասխան դաշտի բացակայությունը ստեղծում են լուրջ դժվարություններ: Դա, իր հերթին, օբյեկտիվ անհրաժեշտություն է ստեղծում ինչպես ընդհանուր տնտեսական, այնպես էլ հարկաբյուջետային համակարգերում արմատական վերափոխումների իրականացման համար: Ակնհայտորեն, շուկայական տնտեսությանն անցումը ենթադրում է տնտեսական ազատական հարաբերություններով պայմանավորված կառուցվածքային փոփոխությունների իրականացում տնտեսության տարբեր ճյուղերում և ոլորտներում: Բնականաբար, նշված գործընթացներից անմասն չի կարող մնալ նաև երկրի հարկաբյուջե-

տային համակարգը, քանի որ տնտեսական վերափոխումների համալիրությունը տնտեսական զարգացման համար կարևոր նախադրյալ է հանդիսանում: Այս խնդիրը առավել կարևորվում է այնպիսի երկրների համար, որոնք հարկային և բյուջետային քաղաքականության առումով նախկինում չեն ունեցել ձևավորված մոտեցումներ ու ավանդույթներ:

Հարկային քաղաքականությունը, հանդիսանալով տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը, պետք է բխի մակրոտնտեսական հավասարակշռության, ազատ մրցակցության և այլ տնտեսական օրենքներից: Միաժամանակ, այդ քաղաքականությունը էապես առանձնանում է տնտեսական քաղաքականության այլ բնագավառներից՝ պահպանելով դրանց հետ սերտ փոխկապակցվածություն: Տնտեսական գործունեության համար հարկաբյուջետային բարենպաստ դաշտի ստեղծման, հարկման օբյեկտների ու սուբյեկտների սահմանման, հարկերի դրույքաչափերի, դրանց կարգավորման, հարկային կարգապահության, պատասխանատվության և վերահսկողության հետ կապված խնդիրների լուծումը, ըստ էության, երկրում արդյունավետ հարկաբյուջետային համակարգի կառուցման հիմնական նախադրյալներն են:

Հայաստանի Հանրապետությունում հարկաբյուջետային քաղաքականության ձևավորման առանձնահատկությունների բացահայտմանը, դրա վրա ազդող բազմաբնույթ գործոնների գնահատմանը, դրանցով պայմանավորված հիմնահարցերի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները զգալիորեն նպաստեցին տվյալ բնագավառում առկա հարաբերությունների կանոնակարգման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մեթոդաբանական և մեթոդական հիմքերի ստեղծմանը: Այդուհանդերձ, տնտեսական գործընթացների շարունակվող փոփոխականությունը և հանրապետության սոցիալ-տնտեսական անկայուն վիճակը, ակնհայտորեն, պահանջում են մշակվող և իրականացվող հարկային քաղաքականության կատարելագործում, այդ ուղղությամբ արդյունավետ տնտեսական քաղաքականության իրականացում:

Ընդհանրապես, շուկայական հարաբերությունների դեպքում պետության կողմից լուծման ենթակա խնդիրները պայմանավորում են պետության ֆունկցիաները: Նշված խնդիրների լուծման հարցում առանձնահատուկ է հարկային քաղաքականության դերը, որը բյուջետային միջոցների ձևավորման ու օգտագործման բնագավառում պետության նպատակաուղղված գործունեությունն է: Այն կարևոր գործիք է տնտեսության մակրոտնտեսական հավասարակշռության ձեռք բերման համար, քանի որ հարկերի և պետական ծախսերի միջոցով պետությունը հնարավորություն է ստանում խթանել գործարարակտիվությունը, ազդել զբաղվածության և ինֆլյացիայի վրա: Ընդհանուր տնտեսական զարգացման գործում խիստ կարևոր է հարկաբյուջետային

այնպիսի քաղաքականության մշակումն ու իրականացումը, որն առավել բարենպաստ պայմաններ կստեղծի երկրում տնտեսավարող սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնման, ներդրումային գործընթացների ակտիվացման, հավասար մրցակցային դաշտի ձևավորման և ընդլայնված վերարտադրության ապահովման համար: Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ այդ քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման առումով հանդիսանում է խիստ կարևոր լծակ, որի նպատակամետ և արդյունավետ օգտագործումը թույլ կտա տնտեսական զարգացման առումով ապահովել ցանկալի արդյունքներ: Հարկաբյուջետային քաղաքականությունը, հանդիսանալով տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը, պետք է բխի մակրոտնտեսական հավասարակշռության, ազատ մրցակցության և այլ տնտեսական օրենքներից: Միաժամանակ, այդ քաղաքականությունը էապես առանձնանում է տնտեսական քաղաքականության այլ բնագավառներից՝ պահպանելով դրանց հետ սերտ փոխկապակցվածություն: Տնտեսական գործունեության համար հարկային բարենպաստ դաշտի ստեղծման, հարկման օբյեկտների ու սուբյեկտների սահմանման, հարկերի դրույքաչափերի, դրանց կարգավորման, հարկային կարգապահության, պատասխանատվության և վերահսկողության հետ կապված խնդիրների լուծումը, ըստ էության, երկրում արդյունավետ հարկային համակարգի կառուցման հիմնական նախադրյալներն են:

Ըստ էության, հարկաբյուջետային քաղաքականությունը իրենից ներկայացնում է տնտեսական գործունեության տարբեր բնագավառներում հարկ վճարողների և հարկման ենթակա եկամուտների որոշման, հարկատեսակների, դրանց դրույքաչափերի սահմանման, հարկերի գանձման ու վճարումների կանոնակարգման, դրանց օրենսդրաիրավական ապահովվածության, ինչպես նաև այդ գործընթացների ներքին և արտաքին կապերի ու բյուջեի եկամտային մասի ձևավորման հիմնական աղբյուրների մի ամբողջական համակարգ: Կախված տնտեսական բազիսից և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակից՝ տարբեր երկրներ տարբեր լուծումներ են տալիս վերոհիշյալ խնդիրներին: Տնտեսության և հարկման համակարգի համարժեքությունը բնութագրվում է դրանց միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապով, քանի որ մեկի անկատարությունը անխուսափելիորեն հանգեցնում է մյուսի անկանոն զարգացմանը: Այդ առումով էական նշանակություն ունի հարկային համակարգի որակական կազմի և կառուցվածքի հստակ սահմանումը: Ընդհանուր առմամբ, բյուջեն որոշակի ժամանակահատվածի համար եկամուտների և ծախսերի նախահաշիվ է: Ընդհանուր բնութագրմամբ, այն ձևավորվում է ձեռնարկությունների կողմից համապատասխան բյուջեներ մուծվող հարկերից և այլ պարտադիր վճարումներից: Բյուջեներում կուտակված գումարները

ծախսվում են տարբեր նպատակների համար, օրինակ, մեծ ծրագրերի՝ ինչպիսին է միջնակարգ կրթության տրամադրումը, փոքր և համեմատաբար քիչ հայտնի գործարքների՝ ինչպիսին է ավտոմեքենաների համար պետական համարանիշերի սալիկների գնումը:

Անշուշտ, բյուջետային համակարգի վերլուծությանն ուղղված յուրաքանչյուր աշխատանքում պետք է արտացոլվեն վերը նշված հիմնախնդիրները, ինչը կարևոր նշանակություն ունի Հայաստանի տնտեսության վերաբերյալ ամբողջական գնահատականներ տալու, տնտեսության զարգացման ընթացքը և միտումները առավել հստակ պատկերելու համար, ոչ միայն տնտեսավարող առանձին սուբյեկտների, այլև ինստիտուցիոնալ օղակների կողմից: Այսինքն, բյուջեն, հանդես գալով որպես առաջիկա ժամանակահատվածի համար պետության գործունեության հիմնական սոցիալ-տնտեսական ծրագիր, պետք է մշտապես լինի յուրաքանչյուր կազմակերպության քննության առարկա, քանի որ դրանով է պայմանավորված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը, որի մի մասնիկը և հանդիսանում է կազմակերպությունը:

Բյուջետային հարաբերությունների առանցքը, բնականորեն, կազմում է հարկային քաղաքականությունը: Դա տրամաբանական է, քանի որ ցանկացած ծախսերի կատարման կարևորագույն պայմանը համապատասխան ծավալով եկամուտների առկայությունն է: Իր հերթին, եկամուտների ավելացման խնդիրը կարող է լուծվել հարկային համապատասխան քաղաքականության իրականացման դեպքում: Այդ քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի հարկերի ֆիսկալ և կարգավորիչ ֆունկցիաների զուգակցումը: Այլապես, դրանց միջև հաշվեկշռվածության բացակայությունը կտանի տնտեսության զարգացման արգելակմանը: Հարկային քաղաքականությունը պետք է ելնի հասարակության և տնտեսության զարգացման գերակայությունների ու շահերի ներդաշնակեցումից:

Այլ խոսքով, տնտեսության պետական կարգավորման գործում չափազանց մեծ է պետական բյուջեի դերը, որը հիմնավորված տնտեսական քաղաքականության դեպքում դառնում է տնտեսության զարգացման գլխավոր գործիք:

Տնտեսության կայուն զարգացման կարևորագույն նախադրյալներից մեկն է արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականությունը, որի կիրառման դեպքում պետական բյուջեի եկամուտները ծածկում են փաստացի ծախսերը, կամ այնքան մոտ են դրանց, որ բյուջետային դեֆիցիտը կազմում է ՀՆԱ-ի թույլատրելի սոկոսը:

Ակնհայտորեն, նշված խնդիրների լուծմանը պետք է ուղղված լինի տնտեսության հարկաբյուջետային կարգավորումը, որն իրենից ներկայացնում է կառավարության կողմից իրականացվող միջոցառումների մի համալիր՝ ուղղված պետական եկամուտների և ծախսերի կառավարմանը, առավելագույն

գրադվածության ապահովմանը, սղաճի ծրագրային մակարդակի ձեռք բերմանը, ՀՆԱ-ի և տնտեսական աճի խթանմանը: Կատարելով հարկային մուտքերի և պետության կողմից պահանջվող ֆինանսական ռեսուրսների քանակական համադրում, կարելի է գնահատել հարկաբյուջետային համակարգի աշխատանքի արդյունավետությունը, ինչպես նաև կանխատեսել տնտեսական գործընթացների ուղղություններն ու համապատասխան փոփոխություններ և ճշգրտումներ կատարել այդ ոլորտում իրականացվող քաղաքականության մեջ: Հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը պետք է միտված լինի տնտեսության աշխուժացմանը և ենթադրի այնպիսի մոտեցումների կիրառում, որոնց առկայությունը կհանգեցնի տվյալ քաղաքականությամբ պայմանավորված գործունեության արդյունավետության բարձրացմանը: Հարկային հավասարակշռված քաղաքականության իրականացման ժամանակ կարևոր գործոն է հանդիսանում հարկային դրույքաչափերի և հարկման օբյեկտների մեծությունների փոխկապվածությունը: Որպես կանոն, հարկման օբյեկտների նվազեցման քաղաքականությունը զուգակցվում է հարկադրույքների բարձրացմամբ, իսկ ընդլայնումը՝ իջեցմամբ: Այդ առումով, հարկային քաղաքականության կողմից լուծման ենթակա կարևորագույն խնդիրներից է հանդիսանում առանձին հարկատեսակների գծով հարկման օբյեկտների և համապատասխան դրույքաչափերի այնպիսի համամասնությունների սահմանում, որոնց առկայության պայմաններում հարկման օբյեկտների և հարկային դրույքաչափերի ընդհանուր մակարդակների հարաբերակցությունը չի հանգեցնի արտադրության ծավալների անկմանը և պետական բյուջեի մուտքային մասի կրճատմանը:

Հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացումը տեղի է ունենում միջնաժամկետ, տարեկան, եռամսյակային, ամսական և շաբաթական ծրագրերի մշակման, ճշգրտման և իրականացման գործընթացում: Կենտրոնական բանկը ՀՀ կառավարության հետ համատեղ մշակում է տնտեսական և ֆինանսական ծրագրեր, ինչպես նաև աջակցում դրանց իրագործմանը, եթե դա չի հակասում Կենտրոնական բանկի նպատակներին: Հարկաբյուջետային քաղաքականության կոորդինացման հիմքը ՀՀ ԿԲ և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համատեղ մշակված և ընդունված կանոնակարգն է¹:

Ժամանակակից գրականության մեջ հարկերը դիտարկվում են որպես օրենսդրությամբ սահմանված կարգով պետական և այլ մակարդակների բյուջեներ (կախված պետության կառուցվածքից) պարտադիր, անվերադարձ, համապատասխան ժամկետներում և դրույքաչափերով գանձվող վճարներ: Ընդհանրապես, տեսության շարունակական զարգացումը՝ կապված հասարա-

¹ «ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև փոխհարաբերությունների վերաբերյալ» կանոնակարգ

կության տնտեսական, քաղաքական և սոցիալական հարաբերությունների անընդհատ փոփոխման հետ, թույլ չի տալիս <հարկ> տնտեսական կատեգորիային տալ կոնկրետ սահմանում: Հնարավոր է միայն բացահայտել ժամանակի կոնկրետ պայմաններում դրանց բնորոշ գծերն ու բնութագրիչները: Մասնավորապես, որպես այդպիսիք կարելի է նշել այն, որ հարկերը կրում են պարտադիր բնույթ, սահմանվում են օրենքով, կատարում են պետական ծախսերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ապահովողի դեր և այլն:

Հարկերը պետք է խթանեն արտադրողներին թողարկել շուկայական պահանջարկ ունեցող արտադրանք՝ բարձր որակով և ռեսուրսների նվազագույն ծախսերով:

Քաղաքատնտեսության դասականներից Ա.Սմիթը և Դ.Ռիկարդոն բացասաբար էին վերաբերվում հարկերի՝ որպես ակտիվ տնտեսական քաղաքականության գործիքի օգտագործմանը, նշելով, որ այն միայն ֆիսկալ գործիք է: Մինչդեռ, քեյնսյան դպրոցի ներկայացուցիչները հակված էին հակառակին, ինչի արդյունքում էլ ձևավորվեցին արևմտյան տնտեսական մտքի երկու հիմնական ուղղությունները: Սակայն պետք է նշել, որ նշված երկու ուղղությունների միջև տարաձայնություններն ավելի շուտ վերաբերում էին տնտեսական գործընթացներին պետության միջամտության հարցին:

Բյուջետային եկամուտների հնարավոր կրճատման փոխհատուցման նպատակով, անհրաժեշտ է.

- բարձրացնել բյուջետային կարգապահությունը, սահմանել պետական պատվերների իրականացման մրցութային արդյունավետ կարգ,
- բարձրացնել մաքսային քաղաքականության արդյունավետությունը, բնական մենաշնորհի ոլորտներում, ինչպես նաև խոշոր հարկատուների նկատմամբ իրականացնել արդյունավետ հարկային քաղաքականություն,
- ուժեղացնել ստվերային տնտեսության դեմ պայքարը, բարձրացնել բյուջետային միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը,
- բարձրացնել պետական սեփականության կառավարման արդյունավետության աստիճանը և այլն:

РОЛЬ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ В ПРОЦЕССЕ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ЭКОНОМИКИ.

Мери Мурадян

Студентка 4-ого курса международного университета Евразия

Геворг Григорян

Преподаватель Европейской региональной академии образования,
доцент кафедры управления и информационных технологий
международного университета Евразия, кандидат экономических наук

Ключевые слова: экономическая свободная среда, повышение инвестиционной привлекательности, равномерное распределение налогового бремени, налоговая политика, законодательное обеспечение прав, смета расходов, дефицит бюджета, бюджетная дисциплина, эффективность таможенной политики, теневая экономика.

В процессе идентификации особенностей налоговой политики Республики Армении, оценивание различных факторов, влияющих на это, исследования, посвященные изучению этих вопросов значительно, способствовали развитию необходимого методологического и методического базы для регулирования и эффективного управления. Тем не менее, продолжающийся процесс экономической нестабильности и социально-экономическая нестабильность республики, естественно, требуют улучшение обработанной и осуществленной налоговой политики, реализация экономической политики в этом направлении.

THE ROLE OF FISCAL POLICY IN THE SYSTEM OF GOVERNMENT REGULATION OF ECONOMY

Meri Muradyan

4th year student at Eurasia International University

Gevorg Grigoryan

Lecturer at European Regional Educational Academy
Associate professor of Management and Information Technology Department
at Eurasia International University, PhD in Economics

Keywords: economic free environment, increasing of the investment attractiveness, equitable distribution of the tax burden, tax policy, legislative support of rights, estimate of expenses, fiscal deficit, fiscal discipline, effectiveness of customs policy, shadow economy.

In the process of identification of the features of fiscal policy of RA, assessment of various factors affecting it, researches devoted to the study of these issues considerably contributed to the development of the necessary methodological and methodical basis for the regulation and effective management. Still, the ongoing process of economic volatility and socio-economic instability of the republic obviously require improvement of processed and implemented tax policy, realization of economic policy in that direction.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հասմիկ Ասլանյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

Բանալի բառեր՝ աշխատանքային հարաբերություններ, աշխատանքային իրավունք, իրավախախտումներ

Յուրաքանչյուր քաղաքացու աշխատանք ունենալու և դրա հետ կապված աշխատանքային իրավունքը Հայաստանի Հանրապետության սոցիալական և իրավական համակարգերի կարևոր ոլորտն են: Աշխատանքը մարդու արժանավայել կյանքի միակ և անփոխարինելի պայմանն է, միաժամանակ նրա իրավունքն ու պարտականությունը: Այս իրավունքն իր ամրագրումն է ստացել ինչպես ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ, այնպես էլ աշխարհի շատ երկրների սահմանադրություններում: Պատճառն այն է, որ աշխատանքի իրավունքը ոչ պակաս կարևոր է, քան մարդու կյանքի իրավունքը, որովհետև եթե չկա կյանք առանց գոյության միջոցների, ապա առանց աշխատանքի չեն կարող լինել գոյության միջոցներ: Ավելին, աշխատանքի իրավունքի իրականացումը և աշխատանքի արդարացի պայմանները կարևոր նշանակություն ունեն հասարակական հարաբերությունների ներդաշնակության և սոցիալական խաղաղության ամրապնդման համար¹: Ներկայումս՝ հիմնականում 2008թ. սկսած համաշխարային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հետևանքով, երբ օրինակ ԵՄ երկրներում գործազրկության աստիճանը կազմում է 12,2% (առանձին երկրներում, օրինակ Իսպանիայում այդ ցուցանիշը 3-3,5 անգամ ավելի բարձր է), ինչը վերջին 30 տարվա մասշտաբով ամենաբարձր ցուցանիշն է: Մեր հանրապետությունում գործազրկության ցուցանիշը 2012թ. 3-րդ եռամսյակում կազմել է 16,0 %:²

Աշխատողների իրավունքների պաշտպանությունը ներկայումս Հայաստանում կարևոր սոցիալական խնդիրներից է հանդիսանում: Աշխատանքային հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները բազմաթիվ են և բազմաբնույթ, սակայն անհնար է մեկ հոդվածի շրջանակներում խոսել բոլոր խնդիրների մասին, այդ պատճառով սույն հոդվածում անդրադարձել են մի քանի հիմնախնդրի: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք կարևոր նշանակություն ունեն աշխատողների իրավունքների պաշտպանության հարցում: Դրանց թվում կարելի է առանձնացնել Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան,

¹ Տես՝ Ն. Այվազյան, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Երևանի պետական հասարակարան, հրատ., 2008, 279-280 էջերը

² Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. Հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2013, էջ. 80

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ինչպես նաև՝ բազմաթիվ երկկողմ համաձայնագրեր:

Աշխատանքային հարաբերություններ կարգավորող եվրոպական իրավական ակտերի համակարգում կարևոր տեղ է գրավում Եվրոպական սոցիալական խարտիան: ՀՀ 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգիրքը, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերություններ կարգավորող հիմնական նորմատիվ իրավական ակտը, շարադրված է նաև Խարտիայի հիմնադրույթների հաշվառմամբ:

Պետք է նշել, որ վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի օրենսդրության բաղկացուցիչ մասը համարվելու մասին սահմանադրական դրույթը պատշաճ արտացոլում չունի ՀՀ աշխատանքային օրենսգրքում: Նկատի ունենք այն, որ Օրենսգրքում թվարկվում է³ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության կազմը, սակայն առանձին նշում չի պարունակում վավերացված միջազգային պայմանագրերի մասին: Օրենսգիրքը բավարարվում է միայն աշխատանքային հարաբերությունները կարգավորող ներպետական և միջազգային իրավական ակտերի մրցակցության խնդիրը հայտնի եղանակով (այն է՝ հոգուտ միջազգային իրավական ակտերի իրավական ուժի գերակայության) լուծելուն: Խարտիան աշխատանքային հարաբերություններ կարգավորող կարևոր փաստաթուղթ է: Դրանում ամրագրված դրույթների կիրառումն ապահովում է աշխատանքային հարաբերությունների ներդաշնակ զարգացումը և, ամենից առաջ, վարձու աշխատողի օրինական շահերի պաշտպանությունը: Խարտիայի՝ աշխատանքային հարաբերություններ կարգավորող նորմերի զգալի մեծամասնությունն արտացոլված է Աշխատանքային օրենսգրքում: Որոշ դրույթներ, այնուամենայնիվ, չեն ներառվել Օրենսգիրք: Դրանցից են, օրինակ, «աշխատանքային պայմանագիրը օրինական հիմքով լուծվելու իրավունքը» (Խարտիայի 24 հոդված), «գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների (հայցերի) պաշտպանվածության իրավունքը» (Խարտիայի 25 հոդված), «աշխատանքի ժամանակ արժանապատիվ վերաբերմունքի իրավունքը» (Խարտիայի 26 հոդվ.) և այլն: Հիշյալ դրույթների կարևորությունը կայանում է նրանում, որ դրանք մի դեպքում պայմանավորում են Օրենսգրքի մյուս դրույթների կիրառումը, մեկ այլ դեպքում նպաստում են դրանց ճիշտ մեկնաբանմանը: Ընդ որում, Խարտիայի դրույթների կիրառումը բխում է ինչպես աշխատողների, այնպես էլ գործատուների օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից:

³ Եվրոպական սոցիալական խարտիա 1996, հոդված 4

Այսպես, աշխատանքային հարաբերություններ կարգավորող ներպետական իրավական ակտերում, այդ թվում՝ նաև Օրենսգրքում, անպատասխան է այն հարցը, թե աշխատողին առանց օրինական հիմքի կամ օրենքով սահմանված կարգի խախտումով աշխատանքից ազատելու դեպքում աշխատողի որ իրավունքն է խախտվում, որի պաշտպանության համար նա դիմում է իրավասու մարմինների (դատարանների) օգնությանը:

Հիմք ընդունելով Խարտիայի 24-րդ հոդվածը՝ կարող ենք նշել, որ աշխատողին ապօրինաբար աշխատանքից ազատելու դեպքում խախտվում է նրա՝ աշխատանքից օրինական (հիմնավորված) պատճառներով ազատվելու իրավունքը: Խարտիայի 24 հոդվածը սահմանում է, որ աշխատանքից ազատվելու դեպքում աշխատողների պաշտպանվածության իրավունքի ապահովման նպատակով Խարտիան վավերացնող պետությունները պարտավորվում են ճանաչել բոլոր աշխատողների իրավունքը, որ նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագիրը չպետք է դադարեցվի առանց նման դադարման համար հիմնավորված պատճառների, որոնք կապված են նրանց ընդունակության կամ վարքի հետ կամ հիմնված են գործատուի ծառայությունների գործնական պահանջների վրա:

Աշխատանքային իրավունքների լիարժեք իրացման և պաշտպանվածության ապահովման անհրաժեշտությունը պահանջ է առաջադրում հաղթահարել աշխատանքային օրենսգրքում առկա օրենսդրական բացերը, ինչը ՀՀ օրենսդիր մարմնի իրավասությունն է: Այս համատեքստում ՀՀ աշխատանքային օրենսգրքում համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարումը դառնում է խիստ արդիական և օրակարգային:

Առանձնակի կարևորվում է աշխատանքային հարաբերությունների դադարեցման գործընթացը, քանի որ այդ ժամանակ առավել շատ են թե՛ աշխատողների, թե՛ գործատուների իրավունքների խախտման հնարավորությունը: Այստեղ աշխատողի իրավունքների պաշտպանվածության մեխանիզմները առավել շատ են, քանի որ, եթե աշխատողը իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը, երբ ցանկանա՝ սահմանափակված լինելով միայն գործատուին գրավոր ծանուցման ձևով, երեսուն օր առաջ իր ցանկության մասին հայտնելու պահանջով (Հոդված 112), եթե իհարկե տվյալ աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ելնելով աշխատանքային պայմանագրի տեսակից: Իսկ գործատուի կողմից աշխատանքային հարաբերությունների դադարեցումն առավել խիստ է դնում ԱՕ-ը՝ հստակորեն նշելով հիմքերը (Հոդված 113) և դեպքերը (Հոդված 116-128), ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքները (Հոդված 114):

Պետք է նկատել, որ վարձու աշխատանքի կազմակերպման ու կատարման ոլորտում քիչ չեն նաև այն խնդիրները, որոնց կարգավորումը հիմնականում

թողնվում է կողմերի հայեցողությանը, օրինակ՝ աշխատավարձի չափը որոշելը, լրացուցիչ վարձատրություն նախատեսելը, փոխհատուցումային վճարների չափը որոշելը, որոշակի ժամկետով կնքված պայմանագրի ժամկետի երկարաձգումը և այլն: Այս հարցերի լուծմանը պետության մասնակցությունը խիստ սահմանափակ է, քանի որ անհարկի միջամտությունը կարող է էական վնաս հասցնել աշխատանքային հարաբերությունների ներդաշնակ զարգացմանը, խախտել ինչպես գործատուի, այնպես էլ վարձու աշխատողի օրինական շահերը:

Այսպիսով, աշխատանքային հարաբերությունների կարգավորման ժամանակ համադրվում են հրամայական (նորմատիվային) և դիսպոզիտիվ (պայմանագրային) մեթոդները, այսինքն՝ ***աշխատանքային իրավունքի մեթոդը կրում է համալիր բնույթ⁴***:

Պետք է նշել, որ տնտեսական ու սոցիալական զարգացման, մարդու իրավունքների արմատական պաշտպանության և ազատության ամրապնդման համար անհրաժեշտ է անցնել կառուցողական բարեփոխումների:

Այսպես՝ չենք կարող չնկատել, որ Արհեստակցական միությունների մասին ՀՀ օրենքը թերի է: Օրենքում կան անհարկի կրկնություններ: Օրենքում նշված է որ անգամ երեք մարդ կարող է գրանցվել, ստեղծել արհմիություն: Այս կետը թերի է այնքանով, որ երեք հոգանոց կառույցը ունի նույն իրավունքները, ինչ երեք հազար հոգանոցը, այսինքն բոլորի ձայները հավասար են դուրս գալիս: Նշենք, որ օրենքում սահմանափակումներ չկան, բացառությամբ այն հանգամանքի, որ արհմիության անդամ չեն կարող դառնալ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի եւ իրավապահ մարմինների ծառայողները: Ի տարբերություն եվրոպական երկրների՝ նույն օրենքը ունի մեկ առավելություն, մեր արհմիությունները միավորված են մեկ կառույցի՝ կոնֆեդերացիայի մեջ, այլ երկրներում այդպես չէ, նրանք ունեն մեկից ավելի գլխավոր կառույցներ, օրինակ Մոլդովան, իսկ մեկ կառույցի մեջ գտնվելը հնարավորություն է տալիս ավելի միասնական գործելու, բայց դրա հետ մեկտեղ, պետք է փաստել, որ Արհեստակցական միությունները սահմանափակ լիազորություններ ունեն և վերջինիս դերակատարումը այդքան էլ մեծ չէ, այսինքն արհմիությունները այդքան էլ կայացած չեն:

Պետք է անդրադառնալ ևս մեկ արդիական խնդրի, օրինակ, որ տաքսիների վարորդներն աշխատում են առանց հանգստյան օրերի, նույն ձևով աշխատում են նաև խանութների վաճառողուհիները, սակայն նրանց իրավունքները պաշտպանող ոչ մի կառույց չկա, կամ էլ արհմիությունների դերն հենց այստեղ պետք է երևար, նրանք պետք է գործատուներին պահանջ ներ-

⁴ Ст. Трудовое право России, Учебник. Отв. ред. Р. Лившиц и Ю. Орловский. 1978, с 36.

կայացնեին, որ օրենքով չի թույլատրվում 8 ժամից ավելի մարդուն աշխատացնել: Իսկ եթե աշխատեցնում են, ապա պետք է համապատասխան վճարեն:

Նաև պետք է նկատել, որ թեև, «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում օրենսգրքի որոշ դրույթներ համապատասխանեցվել են Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին, իսկ որոշ փոփոխություններ էլ ուղղված են եղել գործարար միջավայրի բարելավմանը, այդուհանդերձ, չլուծված են մնացել մի շարք օրենսդրական բացեր, որոնք հանգեցնում են աշխատողների իրավունքների խախտումների:

Ուղղակիորեն անհրաժեշտ է, ստեղծել բոլոր հիմքերը, որպեսզի ՀՀ-ում իրականություն դառնան այն դրույթները, որոնք նշված են Եվրոպական սոցիալական խարտիայում, իսկ Եվրոպական սոցիալական խարտիան նախատեսում է մի շարք կարևոր երաշխիքներ, այդ թվում՝ անվտանգ, առողջարար աշխատանքային պայմանների, արդար վարձատրության, աշխատանքից ազատվելու դեպքում պաշտպանվածության իրավունքը:

ПРОБЛЕМА РЕГУЛИРОВАНИЯ ТРУДОВЫХ ОТНОШЕНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Асмик Асланян

Соискатель Академии государственного управления РА

Ключевые слова: трудовые отношения, трудовые права, правонарушения.

Считаем необходимым отметить, что, несмотря на многочисленные законодательные изменения, которые направлены на улучшение уровня защиты интересов работников, очень часто имеют место грубые нарушения их прав.

Как правило, самой распространенной проблемой этой сферы является отказ регистрации работников, указывание неполной суммы окладов работников в трудовом договоре. В таких случаях, при неуплате заработной платы, работник оказывается в безвыходной ситуации.

Как бы это ни было парадоксальным, однако, до сих пор нет действенных механизмов для защиты в подобных ситуациях.

Само собой понятно, что, если работник не согласится с такими условиями или обратится за реализацией своих прав, возникнут натянутые отношения, которые сделают невозможным дальнейший трудовой процесс. Именно это и побуждает работников смириться с нарушениями их прав. В этом смысле можно дать единственный уместный совет: не смириться с нарушениями своих прав и поднять вопрос при каждом подобном случае.

Естественно, проблеме необходимо рассматривать также с других точек зрения: работодатели совершают подобные правонарушения из-за предусмотренных законом высоких налогов и иных обязательных платежей.

Соответственно, решением проблемы может стать снижение уровня подобных платежей.

Естественно, уже было отмечено, что ситуация, царящая на нынешнем рынке труда, высокий уровень безработицы также в свою очередь создают благоприятную почву для совершения таких нарушений со стороны работодателей, как например, сверхурочная неоплачиваемая работа сотрудников, увеличение количества рабочего времени и т.д.

Что же касается международных механизмов защиты трудовых прав, то необходимо отметить, что они будут иметь существенное значение и обеспечат новое качество защиты трудовых прав.

THE PROBLEM OF THE REGULATION OF THE LABOR RELATIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

Hasmik Aslanyan

PhD student of the Public Administration Academy of RA

Keywords: labor relations, labor rights, offenses.

We consider that despite numerous legislative changes aimed at improving the level of protection of the rights of workers, very often rough violations are committed.

As a rule, the most common problems in this sphere are the refusal of registration of workers and false (lower) sum of wages in the labor contract. In such cases if wages are not paid, the employee gets in a desperate situation. Paradoxically, there are no mechanisms to prevent this situation yet.

It goes without saying that if the employee does not agree with these terms and conditions or appeal his rights, the relationship between the employer and the employee will turn strained, which will block the future business relationships. This is what makes workers stand abuses of their rights. Therefore, we can only give the following advice: do not stand violation of your rights and to raise every single case you come across.

Actually, the problem needs to be considered from another point of view as well: the employers commit such offenses due to high taxes and other obligatory payments required by the laws. Accordingly, the solution may come by reducing the volumes of such payments.

Surely, it was already mentioned that high unemployment level and the current situation of labor market create conditions for such violations by employers, such as unpaid overtime work, increasing of working hours, etc.

As for the international mechanisms for the protection of labor rights, it should be underlined that they will influence the situation much and will provide a new quality to the protection of the labor rights.

ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գայանե Թովմասյան

Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր՝ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջություն, առողջարան, ներդրումներ, զբոսաշրջային հարկ:

Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը մարդկանց մշտական բնակության վայրից ժամանակավոր ելքն է առողջարանային-վերականգնողական նպատակներով: Այս դեպքում մարդիկ ճանապարհորդում են բուժառողջարանային, վերականգնողական և հանգստի իրենց պահանջ-մունքները բավարարելու նպատակով, ինչի համար էլ այցելում են առողջարաններ: Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության կազմակերպման հիմքում ընկած են կուրորտները և բնական բուժիչ ռեսուրսները:


ՀՀ-ն ունի առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության կազմակերպման համար զգալի ներուժ: ՀՀ Առողջապահության նախարարության «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ը Հայաստանում առանձնացրել է 10 կուրորտային գոտիներ, որոնք ունեն առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ բոլոր բնական բուժիչ ռեսուրսները՝ հանքային ջրեր, բուժիչ ցեխեր, բուժիչ տորֆեր, կլիմայաբուժության կազմակերպման համար բարենպաստ կլիմայական պայմաններ: Այդ կուրորտային գոտիներն են՝ Արզնի, Դիլիջան, Հանքավան-Մարմարիկ, Բջնի-Արզական-Աղվերան, Ծաղկաձոր, Ստեփանավան-Գյուլագարակ, Սյունիք, Լոռի, Սևան, Ջերմուկ¹: Սակայն պետք է նշել, որ այս կուրորտային գոտիներից ոչ բոլորում կան առողջարաններ: ՀՀ առողջապահության նախարարության՝ առողջարանային ծառայություններ մատուցելու լիցենզիա ունի 13 առողջարան՝ Ջերմուկի Օլիմպիա, Արարատ մոր և մանկան, Ջերմուկ աշխարհ, Գլաձոր, Արմենիա, Ջերմուկ N 1, Ծաղկաձորի Ռիպա, Սևանի Արևիկ, Արզնիի Արզնի, Հանքավանի Խոտորջուր, Արզականի Գանձաղբյուր, Դիլիջանի Իմպուլս, ինչպես նաև Վանաձորի հյուրանոցային և առողջարանային-վերականգնողական համալիրը²: Նշվածներից բացի գործում է նաև Դիլիջանի Լեռնային Հայաստան առողջարանը, որը պատկանում է ՀՀ պաշտպանության նախարարությանը: Բացի այդ, նախկին-

¹ Атлас-климат и природные лечебно-оздоровительные ресурсы Армении / Под гл. ред. Б. Арутюняна. Ереван, 2010, с. 124–133

² Աղբյուրը՝ ՀՀ առողջապահության նախարարության լիցենզավորման վարչության տրամադրած տվյալներ, www.moh.am

նում գործունեության լիցենզիա են ունեցել ևս 6 առողջարան, որոնք ներկայումս չեն գործում:

Ըստ Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի իրականացրած վերլուծության արդյունքների՝ ՀՀ զբոսաշրջության ոլորտում ներդրումները 2012թ. կազմել են 29.6 մլրդ դրամ, 2011թ.-ի 28.9 մլրդ դրամի դիմաց, կամ աճը կազմել է 2.4%: Ըստ Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի կանխատեսումների 2023թ. Ջբոսաշրջության ոլորտում ներդրումները կկազմեն 66.3 մլրդ դրամ (գծապատկեր 1):




Գծապատկեր 1. Կապիտալ ներդրումները զբոսաշրջության ոլորտում (մլրդ դրամ), 2007-2023թթ³.

Ըստ Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի իրականացրած վերլուծության արդյունքների՝ ՀՀ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում 2012թ. կազմել է 336.9 մլրդ դրամ (ՀՆԱ-ի 8.2%-ը)⁴, 2011թ.-ի 308.9 մլրդ դրամի դիմաց, կամ աճը կազմել է 9.0%: Ըստ կանխատեսումների 2023թ. զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում կկազմի 682.2 մլրդ դրամ: Ջբոսաշրջության մեջ զբաղվածների թիվը 2012թ. կազմել է 86.9 հազար մարդ (ընդհանուր զբաղվածների 7.3%-ը)⁵, 2011թ.-ի 85.3 հազար մարդու դիմաց, աճը կազմել է 1.9% (գծապատկեր 2): Ինչպես տեսնում ենք՝ զբոսաշրջությունը էական տեղ է զբաղեցնում մեր տնտեսության մեջ:

³ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Armenia, p. 13
http://www.wttc.org/site_media/uploads/downloads/armenia2013.pdf

⁴ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Armenia, p. 3
http://www.wttc.org/site_media/uploads/downloads/armenia2013.pdf

⁵ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Armenia, p. 4
http://www.wttc.org/site_media/uploads/downloads/armenia2013.pdf



Գծապատկեր 2. Ձրոսաշրջության ցուցանիշների դինամիկա,
2007-2023թթ⁶.


Նշենք, որ այս ցուցանիշները առանձին առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության համար չեն հաշվարկվում:

Ըստ «Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ զբոսաշրջության ոլորտին 2012թ. հատկացվել է 50 մլն դրամ:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տրամադրած տվյալների՝ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջիկների թիվը 2012թ. Կազմել է 18032 մարդ (նախորդ տարվա 14916-ի փոխարեն), որում միջազգային զբոսաշրջիկների թիվը կազմել է 592 մարդ կամ ընդհանուրի 3.3%-ը, իսկ ներքին զբոսաշրջիկների թիվը՝ 17440 մարդ կամ 96.7% (նախորդ տարվա համապատասխանաբար 8% և 92%-ի դիմաց) (գծապատկեր 3)⁷:

⁶ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Armenia, p. 13
http://www.wttc.org/site_media/uploads/downloads/armenia2013.pdf

⁷ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Միջազգային և ներքին զբոսաշրջություն, Ձև 1 - զբոսաշրջություն» հաշվետվություն



Գծապատկեր 3. ՀՀ զբոսաշրջիկների թիվը, 2008-2012թթ. (մարդ)

ՀՀ-ում առկա են առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման մի շարք խոչընդոտներ: Ինչպես արդեն նշեցինք, ՀՀ ոչ բոլոր կուրորտներում կան առողջարաններ, եղած առողջարանների մի մասը գործում է միայն ամռան ամիսներին, առողջարանների մեծ մասը իրենց վերանորոգման պայմաններով չի բավարարում միջազգային ստանդարտներին, առողջարանները աշխատում են թերբեռնված, պահանջվում են զգալի ներդրումներ և այլն⁸:

Եթե նորից գործարկվեն 6 առողջարանները, որոնք, ինչպես նշել ենք, ներկայումս չեն գործում, ապա գործող առողջարանների թիվը կլինի 20: Բացի այդ, առաջարկում ենք նաև կառուցել նոր առողջարաններ հետևյալ կուրորտային գոտիներում՝ Հանքավան-Մարմարիկ գոտում՝ 1, Բջնի-Արզական-Աղվերանում՝ 1, Ստեփանավան-Գյուլագարակում՝ 1, Ծաղկաձորում՝ 1, Սյունիքում՝ 2, Լոռիում՝ 1, Սևանում՝ 1 առողջարան: Այս դեպքում հնարավոր կլինի զարգացնել առողջարանային զբոսաշրջությունը բոլոր կուրորտներում: Նշենք, որ մեր հաշվարկները կատարվել են՝ հաշվի առնելով այն, որ յուրաքանչյուր կուրորտային գոտում լինի գոնե նվազագույնը 2 առողջարան, ինչն անհրաժեշտ է բոլոր կուրորտներում առողջարանային զբոսաշրջության զարգացման համար: Փաստորեն, եթե կառուցվեն այս 8 նոր առողջարանները, գործարկվեն այժմ չգործող 6 առողջարանները, կստացվի 14 նոր առողջարան: Նշենք նաև, որ մեր կարծիքով անհրաժեշտ է կառուցել ոչ միայն բարձրակարգ, այլ նաև միջին դասի և արժողության առողջարաններ՝ բնակչության ավելի լայն զանգվածներին առողջարանային հանգիստն ու բուժումը մատչելի դարձնելու նպատակով: Ընդ որում, տարբեր կուրորտային գոտիներում առող-

⁸ Թովմասյան Գ., Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները (Գիտաժողովի նյութերի ժողովածու) / Եր.: Եվրասիա միջազգային համալսարան, Գիրք 1. 2012., էջ 42-51:

ջարանների կառուցու-մը կնպաստի նաև այդ բնակավայրերում մշտական և ժամանակավոր աշխատատեղերի ստեղծմանը, տեղանքների զարգացմանը:

Ըստ շինարարական կազմակերպություններում («Մոսի 97» ՍՊԸ, «Բիդեք» ՍՊԸ, «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ) մեր իրականացրած հարցման արդյունքների (հարցազրույցի միջոցով)՝ 1 առողջարանի շինարարության ծախսերը միջին հաշվարկներով կազմում են մոտ 1.5 մլն դոլար (աղյուսակ 1)⁹: Հաշվարկները կատարվել են 100 սենյակ ունեցող (200 մահճակալ-տեղ) առողջարանի օրինակով:

Աղյուսակ 1.

1 առողջարանի շինարարության ծախսերի հաշվարկ

Ծախսի տեսակը	Արժեքը (1 հատի, 1 տոննայի, 1 անձի կամ 1 մ ² -ի համար)	Ընդհանուր արժեքը
Շենքի կառուցում, այդ թվում՝		410.000.000
բետոն (2000 մ ³)	26.032,9	52.065.800
մետաղ (240 տոննա)	420.000	100.800.000
աշխատավարձ (100 հոգի, հաշվարկը 2012թ. միջին աշխատավարձով)	121.342	12.134.200
այլ ծախսեր (տեխնիկա, դիզելային վառելիք, ներկ, գիպսաբետոնային պանելներ, միջնորմներ, պեմզաբլոկ, և այլն)	-	195.000.000
սանհանգույցի ծախսեր	-	25.000.000
ջեռուցման համակարգ	-	25.000.000
Կահավորում, այդ թվում՝		205.000.000
մահճակալ 1 տեղանի	130.000	100 հատ՝ 13.000.000
մահճակալ 2 տեղանի	200.000	50 հատ՝ 10.000.000
պահարան 2 դռնանի	200.000	100 հատ՝ 20.000.000
բազմոց	400.000	60 հատ՝ 24.000.000
հեռուստացույց	50.000	100 հատ՝ 5.000.000
հեռուստացույցի տակդիր	30.000	100 հատ՝ 3.000.000
սեղան, ճաթոռ	180.000	35 հատ՝ 6.300.000
գրասեղան	80.000	50 հատ՝ 40.000.000
գազօջախ /90 չափսի/	249.000	2 հատ՝ 498.000
լվացքի մեքենա /10կգ/	439.000	5 հատ՝ 2.195.000
սպասք լվացող մեքենա /14 կոմպլեկտ/	249.000	5 հատ՝ 1.245.000
օդորակիչ	175.000	100 հատ՝ 17.500.000
սառնարան /660 լիտր/	430.000	5 հատ՝ 2.150.000
սպիտակեղեն /մեկտեղանոց և երկտեղանոց/	10.000, 20.000	100 հատ՝ 1.000.000 50 հատ՝ 1.000.000
անկողնային պարագա	30.000	100 հատ՝ 3.000.000
տնտեսական ապրանքներ (լվացքի փոշի, օձառ, և այլն)	-	62.000
ջահ	10.000	120 հատ՝ 1.200.000
փոշեկուլ	30.000	5 հատ՝ 150.000
արդուկ	20.000	5 հատ՝ 100.000
գորգ	30.000	110 հատ՝ 3.300.000
վարագույր	30.000	110 հատ՝ 3.300.000
վարսահարդարիչ	10.000	100 հատ՝ 1.000.000
այլ ծախսեր (այդ թվում՝ բժշկական տեխնիկա)	-	46.000.000

⁹ Ծախսերի հաշվարկները կատարվել են նշված ընկերությունների կողմից՝ հաշվի առնելով շուկայական միջին գները: Նշենք սակայն, որ ծախսերը կայուն չեն, կարող են փոփոխվել՝ կախված գնաճից:

Ըստ այս կազմակերպությունների հաշվարկների՝ 1 առողջարանի կառուցումը կստեղծի մոտ 100 ժամանակավոր և նույնքան էլ մշտական աշխատատեղ շահագործումից հետո: Այսինքն 8 առողջարանի շինարարությունը կստեղծի մոտ 800 ժամանակավոր և նույնքան էլ մշտական աշխատատեղեր: Նշենք նաև, որ առողջարանների կառուցման շինարարական աշխատանքները կտևեն մոտ 2-3 տարի:

Ստացվում է, որ 8 նոր առողջարան կառուցելու համար անհրաժեշտ է մոտ 12 մլն դոլար կամ 4 մլրդ 920 մլն դրամ ($8 \cdot 1.5$ մլն դոլար = 12 մլն դոլար):

Արտասահմանյան պրակտիկայում զբոսաշրջության ոլորտում ներդրումների իրականացման համար միջոցներ հատկացվում են զբոսաշրջության հարկից հավաքված գումարներից: Այն ուղղվում է զբոսաշրջության ոլորտի զարգացմանը, կուրորտային ենթակառուցվածքներում ներդրումների իրականացմանը: Կարծում ենք՝ ՀՀ-ում ևս պետք է կիրառել այս հարկատեսակը՝ «զբոսաշրջային հարկը», որը կվճարվի հյուրանոցային տնտեսության օբյեկտներում իրականացրած մեկ գիշերակացի դիմաց: Տարբեր երկրներում այս հարկի չափը տարբեր է և կախված է հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման դասից, աստղերից: Այսպես՝ Ուկրաինայում այն կազմում է կեցության մեկ օրվա արժեքի 0.5%-1%-ը¹⁰, Իտալիայում՝ օրական 1-5 եվրո¹¹, Ռուսաստանում՝ ուղեգրի արժեքի 3%-ը¹², Գերմանիայում՝ մեկ օրվա արժեքի 5%-ը, Ֆրանսիայում՝ օրական 0.20-1.50 եվրո¹³:

Ընդ որում, տարբեր երկրների փորձը այս ոլորտում ցույց է տվել, որ զբոսաշրջիկները, վճարելով զբոսաշրջային հարկը, գիտակցում են իրենց ունեցած ներդրումը տվյալ երկրի զբոսաշրջության զարգացման գործում և իրենց հաճելիորեն պատասխանատու են զգում զբոսաշրջության և ծառայությունների մատուցման զարգացման համար:

Առաջարկում ենք ՀՀ-ում կիրառել այս հարկատեսակը հետևյալ կերպ՝ կախված հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգից, ինչպես նաև սենյակների տեսակներից (ստանդարտ, կիսալյուքս, լյուքս), սահմանել 1-3% դրույքաչափ օրավարձի նկատմամբ: Այսպես՝ քանի որ ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգստի 1 օրվա արժեքը տատանվում է 8000-300000 դրամի սահմաններում¹⁴, ապա առաջարկում ենք 8000-100000 դրամի դիմաց սահմանել օրական 1%, 100000-200000 դրամի դիմաց՝ 2%, և 200000 դրամից ավելի բարձր արժեքի դեպքում՝ 3% դրույքաչափ:

¹⁰ <http://www.interfax.ru/tourism/tourisminf.asp?sec=1466&id=259111>

¹¹ http://www.mirtravel.com/geo/italija/poleznaja_informatsija/turisticheskie_nalogi_v_italii

¹² http://www.infox.ru/tourism/russia/2012/08/09/Turisticheskiy_nalo.phtml

¹³ <http://www.km.ru/turizm/2011/12/12/novosti-turizma-i-turisticheskoi-otrasli/vse-bolshe-gorodov-evropy-planiruyut-vved>

¹⁴ <http://www.armhotels.am/EN/Hotels/Index>

Հաշվենք 154000 դրամ միջին գնի դեպքում $((8000+300000)/2=154000$ դրամ) 2% դրույքաչափով զբոսաշրջային հարկի գումարը 1 օրվա համար.

$$154000 * 2 / 100 \% = 3080 \text{ դրամ}$$

Հաշվենք նաև, թե 2012թ. ՀՀ ներքին ու ներգնա զբոսաշրջիկների կողմից այս հարկատեսակը վճարելու դեպքում ինչքան գումար կհավաքվի: Քանի որ ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների 2012թ. հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած ներգնա զբոսաշրջիկների թիվը կազմել է 136644 մարդ, իսկ ներքին զբոսաշրջիկների թիվը՝ 514771, ապա կարող ենք ասել, որ 2012թ. ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանել են ընդհանուր առմամբ 651415 զբոսաշրջիկ (ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվերի գումարը): Քանի որ ԱՎԾ-ն չի հաշվարկում հյուրանոցային տնտեսության օբյեկտներում զբոսաշրջիկների գիշերելու օրերի միջին թիվը, ապա մենք մեր հաշվարկներում կընդունենք առողջարաններում հանգստի օրերի միջին թիվը՝ օգտվելով ԱՎԾ-ի տրամադրած տվյալներից, և կստանանք 3,1 $(55969/18032=3,1)$:

ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում մահճակալ-օրերի թիվը կկազմի՝

$$651415 * 3,1 = 2019386,5$$

Այս թիվը բազմապատկելով մեր հաշվարկած 3080 դրամ զբոսաշրջային հարկի գումարին, կստանանք զբոսաշրջային հարկի կիրառման դեպքում հավաքագրվելիք հնարավոր գումարը, որը կկազմի.


$$2019386,5 * 3080 = 6.219.710.420 \text{ դրամ}$$

Այսպիսով, 8 նոր առողջարանների կառուցման համար անհրաժեշտ էր նվազագույնը 4.9 մլրդ դրամ, իսկ մեր կատարած միջին հաշվարկներով հավաքագրվում է ավելի շատ՝ 6.2 մլրդ դրամ: Ընդ որում նշենք, որ մեր հաշվարկները կատարել ենք միջին 154000 դրամ գնով (քանի որ չկա վիճակագրական տեղեկատվություն հյուրանոցային տնտեսության օբյեկտների սենյակների՝ ըստ գների բեռնվածության մասին): Այսպիսով այս հարկատեսակի կիրառման դեպքում հնարավոր կլինի հավաքագրել գումար, որը կուղղվի երկրում զբոսաշրջության զարգացման նպատակով ներդրումների իրականացմանը, տարբեր միջոցառումների ֆինանսավորմանը, և այլն:

Նշված հարկատեսակի կիրառությունը պետությունը պետք է կարգավորի համապատասխան օրենքով՝ սահմանելով վճարման կարգը, սկզբունքները, ժամկետները: Կարծում ենք՝ ավելի նպատակահարմար կլինի, որ հարկի գումարը ներառվի հյուրանոցային տնտեսության օբյեկտի սենյակի 1 օրվա արժեքի մեջ, սակայն այս դեպքում պետությունը պետք է հսկի, որ դրանից սենյակների արժեքները չբարձրանան և զբոսաշրջիկները չտուժեն:


Բնակչության շրջանում իրականացրել ենք սոցիոլոգիական հարցում՝ պարզելու համար նրանց վերաբերմունքը նշված հարկատեսակի հանդեպ և արձագանքը՝ դրա կիրառման արդյունքում 1-3%-ով սենյակների արժեքի հնարավոր թանկացման դեպքում¹⁵: Հարցման արդյունքները վկայում են, որ մարդկանց մեծ մասը կողմ է զբոսաշրջային հարկի կիրառմանը (55%), իսկ մյուս մասը պատասխանել է ոչ (25%) կամ չգիտեմ (20%) (հարցվողների մեծ մասը, զուտ տեսնելով կամ լսելով հարկ բառը, բացասաբար էր վերաբերում դրան, իսկ երբ նրանց բացատրում էինք նշված հարկի կարևորությունը զբոսաշրջության զարգացման գործում, նրանց վերաբերմունքը փոխվում էր՝ միաժամանակ բոլորը կարևորում էին այս հարկի կիրառման հասցեականությունը և հավաքված գումարների նպատակային օգտագործումը):

Այն հարցին, թե եթե ՀՀ-ում կիրառվի նշված հարկատեսակը, և մինչև 100000 դրամանոց սենյակների արժեքը 1%-ով բարձրանա (օրինակ՝ 10000 դրամանոց սենյակի գինը դառնա 10100 դրամ, 20000 դրամանոց սենյակի գինը՝ 20200 դրամ, 50000 դրամանոցինը՝ 50500 դրամ), կշարունակե՞ք օգտվել հյուրանոցային տնտեսության օբյեկտների ծառայություններից, հարցվողները պատասխանել են հետևյալ կերպ.



¹⁵ Հարցումն իրականացվել է հարցաթերթիկի միջոցով (մի մասը համացանցով, մյուս մասն էլ բանավոր հարցազրույցի և հարցաթերթիկների օգնությամբ): Հարցման ընտրանքը կազմել է 900 մարդ, որպես գլխավոր համախմբություն ընդունվել է ՀՀ մշտական բնակչության թիվը ըստ 2011թ. Մարդահամարի արդյունքների՝ 3018854 մարդ, իսկ վստահելիության աստիճանը ընդունել ենք 99,7%: Հարցումն իրականացվել է 2013թ. հուլիս-օգոստոս ամիսներին:

Այն հարցին, թե եթե ՀՀ-ում նշված հարկատեսակի կիրառման դեպքում 100000 – 200000 դրամանոց սենյակների արժեքը 2%-ով բարձրանա (օրինակ՝ 150000 դրամանոց սենյակի գինը դառնա 153000 դրամ), իսկ 200000 դրամից բարձր սենյակների արժեքը՝ 3%-ով (օրինակ՝ 250000 դրամանոց սենյակի գինը դառնա 257500 դրամ), կշարունակե՞ք օգտվել հյուրանոցային տնտեսության օբյեկտների ծառայություններից, հարցվողները պատասխանել են հետևյալ կերպ.



Գծապատկեր 5. Ջրոսաշրջային հարկի մասին հարցման արդյունքներ

Նշենք նաև, որ հարցվողների մեծ մասը նշում էր, որ հարկի 1-3% դրույքաչափի դեպքում գնի նույնքանով թանկանալը խնդիր չէ, խնդիրը հյուրանոցային տնտեսության օբյեկտների մատուցած ծառայությունների բարձր որակի, և գնի ու որակի համապատասխանության ապահովումն է, ինչը, ըստ նրանց, ներկայումս էլ խիստ կարևոր հարց է:

Այսպիսով, կարող ենք ասել, որ զբոսաշրջային հարկի նպատակային ու հասցեական կիրառումը կնպաստի զբոսաշրջության ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացմանը, ենթակառուցվածքների բարելավմանը և ոլորտի մի շարք խնդիրների լուծմանը:

Նշենք, որ 2009թ. ՀՀ Համայնքների ֆինանսիստների միավորման կողմից մշակվեց «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ըստ որի այն պետք է լիներ տեղական հարկ, և որի նպատակն էր՝ ընդլայնել համայնքի ֆինանսական կարողությունները ու նպաստել համայնքներում զբոսաշրջության զարգացմանը: Ըստ օրենքի նախագծի՝ հարկման ենթական օբյեկտներն ու դրույքաչափը պետք է լինեին.

1. հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, որոնց նկատմամբ պետական հարկային պարտականությունները սահմանված է ընդհանուր կարգով

(ավելացված արժեքի հարկ և շահութահարկ (եկամտահարկ)), դրույքաչափը՝ հյուրանոցային ծառայության դիմաց փաստացի ձևավորված հասույթի 2-10 տոկոսի չափով,

2. հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, որոնց նկատմամբ պետական հարկային պարտականությունները սահմանված է որպես հաստատագրված վճար, դրույքաչափը՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտի մակերեսի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի հաշվարկով եռամսյակի համար՝ 150 - 600 դրամ¹⁶:

Հյուրանոցային հարկի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի տարածքում պետք է սահմաներ այդ համայնքի ավագանին՝ վերը նշված դրույքաչափերի միջակայքում:

Նշենք սակայն, որ այս օրենքը չընդունվեց: Նախ կարծում ենք՝ ճիշտ չէր այն սահմանել որպես համայնքի ֆինանսական կարողություններն ընդլայնող ու համայնքներում զբոսաշրջության զարգացմանը նպաստող տեղական հարկ, քանի որ հյուրանոցային տնտեսության օբյեկտները հավասարաչափ չեն բաշխված համայնքներում, այսինքն՝ հնարավոր է մի համայնքում հավաքվեր ավելի շատ գումար, մյուսում՝ ավելի քիչ: Բացի այդ դրույքաչափերի սահմանումը թողնվում էր յուրաքանչյուր համայնքի ավագանու հայեցողությանը: Այս առումով կարծում ենք, որ մեր առաջարկած զբոսաշրջային հարկն ավելի արդյունավետ կարող է լինել, քանի որ նախ տեղական հարկ չէ, այլ պետական և հավաքված գումարները կուղղվեն ամբողջ երկրի մասշտաբով զբոսաշրջության զարգացմանը, և բացի այդ մեր առաջարկած դրույքաչափերը կգործեն օրավարձի նկատմամբ ու կախվածության մեջ կլինեն մահճակալ/օրերի քանակից (ինչպես որ ընդունված է աշխարհի մի շարք երկրներում):

Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով պետությունը պետք է ձևավորի բարենպաստ ներդրումային միջավայր զբոսաշրջության ոլորտում՝ հայրենական և օտարերկրյա ներդրումները խթանելու համար: Այդ նպատակին կծառայի «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտում ներդրումային գործունեության մասին» օրենքի ընդունումը, որով պետությունը կսահմանի այս ոլորտում ներդրումների իրականացման համար տրվող արտոնությունները: Առողջարանային զբոսաշրջության ոլորտում բարենպաստ ներդրումային միջավայր ձևավորելու համար անհրաժեշտ են օրենքով սահմանվող համապատասխան խթաններ, ինչպիսիք են՝ սարքավորումների ներմուծման մաքսերից ազատում, վարկեր արտոնյալ պայմաններով, վարկերի երաշխավորում, հողի, կառույցների, տրանսպորտի օգտագործում՝ շուկայականից ցածր գնե-

¹⁶ «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, 2009թ., Հոդված 6 և 8, http://cfoa.am/Orensdrutjun/Naxagcher/Hotel%20tax_final_arm.pdf

րով, և այլն: Համոզված ենք, որ նման արտոնությունները կխթանեն ՀՀ կուրորտներում առողջարանային համալիրների զարգացմանը, ինչը կնպաստի առողջարանային զբոսաշրջության զարգացմանը:

Բնականաբար ներկայիս 14 առողջարաններով անհնար է Հայաստանում զարգացնել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը միջազգային մակարդակին համապատասխան (հաշվի առնելով նաև այն, որ մեր 14 առողջարաններից միայն մի քանիսն են իրենց վերանորոգման պայմաններով համապատասխանում միջազգային ստանդարտներին): Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ ենք համարում երկրում կառուցել նոր առողջարաններ՝ բոլոր կուրորտներում զբոսաշրջության այս տեսակը զարգացնելու նպատակով: Իհարկե, մեր նշած 14 նոր առողջարանների և ընդհանուր առմամբ 28 առողջարանների թիվը պետք է լինի գոնե այն սկզբնական նվազագույն թիվը, որը թույլ կտա Հայաստանում զարգացնել առողջարանային զբոսաշրջությունը միջազգային մակարդակին համապատասխան՝ ձգտելով Հայաստանը դարձնել տարածաշրջանային և համաշխարհային ճանաչում ունեցող կուրորտային երկիր: Նոր առողջարանների առկայությունը կսրի մրցակցությունը դրանց միջև, ինչի արդյունքում կբարձրանա նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակը, սպասարկման մակարդակը, և այլն: Համաշխարհային ճանաչում ունեցող կուրորտների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բոլոր երկրներում կան հարյուրավոր և հազարավոր առողջարաններ, այնինչ ՀՀ-ում, որն ունի 10 կուրորտային գոտիներ և բնական բուժիչ կուրորտային ռեսուրսներ, կա ընդամենը 14 առողջարան: Բացի այդ, տեղի կուրորտային ռեսուրսները համեմատվում են համաշխարհային ճանաչում ունեցող կուրորտային ռեսուրսների հետ: Հետևաբար այստեղ խնդիրը լրացուցիչ ներդրումներ ներգրավելն ու միջազգային ստանդարտներին համապատասխան առողջարաններ կառուցելն է, ինչի արդյունքում հնարավոր կլինի ՀՀ-ում զարգացնել առողջարանային զբոսաշրջությունը միջազգային մակարդակին համապատասխան:

ИНВЕСТИЦИОННЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ САНАТОРНО-КУРОРТНОГО ТУРИЗМА В РА

Гаяне Товмасын

*Преподаватель кафедры управления и информационных технологий
международного университета Евразия, кандидат экономических наук*

Ключевые слова: санаторно-курортный туризм, санаторий, инвестиции, туристический налог.

Основная специфика санаторно-курортного туризма является в том, что люди посещают санатории для лечения, оздоровления и отдыха.

Армения имеет большой потенциал для организации санаторно-курортного туризма. Однако есть много проблем для развития. В статье обсуждается инвестиционная деятельность в этой сфере и так же отмечаются пути для возможных инвестиций.

INVESTMENT ISSUES OF SPA-RESORT TOURISM DEVELOPMENT IN THE RA

Gayane Tovmasyan

*Lecturer of Management and Information Technology Department
at Eurasia International University, PhD in Economics*

Keywords: spa-resort tourism, sanatorium, investments, tourist tax.

The aim of spa-resort tourism is to recover the vital forces of the body, that's why people visit sanatoriums.

Armenia has a great potential to develop spa-resort tourism. However, today there are many problems for spa-resort tourism development in Armenia. In the article the investment issues are discussed and some means are suggested.

**ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

Գայանե Թովմասյան

Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր` առողջարանային-վերականգնողական զբոսաշրջություն, ներդրումներ, զբոսաշրջային հարկ, մարքեթինգային գործունեություն

Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման միջազգային փորձի վերլուծությունը չափազանց կարևոր է մեր կուրորտների մրցունակության բարձրացման և առողջարանային զբոսաշրջությունը միջազգային մակարդակին համապատասխան զարգացնելու համար: Նախ նշենք, որ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով մի շարք երկրներ իրականացնում են հետևյալ հիմնական քայլերը` մարքեթինգային գործունեություն պետական մակարդակով (երկրի առողջարանային զբոսաշրջության դրական կերպարի ստեղծման ու տարածման, միջազգային զբոսաշրջիկների ներգրավման նպատակով, բացի այդ` մարքեթինգային լայն միջոցառումներ են իրականացնում նաև առողջարանները), ոլորտի զարգացման պետական ծրագրերի մշակում և իրականացում, ոլորտի մրցակցային միջավայրի ապահովման և մենաշնորհի թույլ չտալու նպատակով երկրներն իրականացնում են շուկայի իրավական կարգավորում, ուժեղացնում զբոսաշրջիկների անվտանգության ապահովման պահանջները, և այլն: Աշխարհի մի շարք երկրներում հյուրանոցային տնտեսության օբյեկտները կիրառում են գնային ձևում գեղջերի քաղաքականություն: Այսպես, օրինակ Մեծ Բրիտանիայում որոշ հյուրանոցային տնտեսության օբյեկտներ առաջարկում են 15% գեղջ 2 գիշերակացի և 20% գեղջ 3 գիշերակացի դեպքում¹, ԱՄՆ-ում և Կանադայում` 15% գեղջ 2 գիշերակացի դեպքում², Ավստրիայում` 14% գեղջ 2 գիշերակացի դեպքում³, Շվեդիայում, Հունգարիայում` 10% գեղջ 2 գիշերակացի դեպքում⁴, Լեհաստանում, Լիտվայում, Լատվիայում` 20% գեղջ 2 գիշերակացի և 30% գեղջ 3 գիշերակացի դեպքում⁵, Wyndham Hotels and Resorts հյուրանոցների և առողջարանների ցանցը, որը գործում է աշխարհի մի շարք

¹ <http://www.discounts4hotels.co.uk/15-off-2-nights-and-20-off-3-night-stay-bookings-bestwestern-co-uk/>

² <http://www.travelodge.com/deals-discounts/featured-offers/stay-2-save-15>

³ <http://www.vi-hotels.com/en/angelo-katowice/special-offers/offer-details/offer/stay-2-nights-and-get-14-off/>

⁴ <http://www.boutiquehotelbudapest.com/en/offers/stay-2-nights-get-10-off/>

⁵ <http://www.bestwesterndeals.com/hotel-deals/special-offer.aspx?offer=137&affiliate=26&AspxAutoDetectCookieSupport=1>

երկրներում, առաջարկում է 30% զեղչ՝ նվազագույնը 3 հաջորդական գիշերակացի դեպքում⁶, և այլն: Կարծում ենք՝ նշված գնային քաղաքականությունը արդյունավետ միջոց է հանգիստը խթանելու համար: Ոլորտի զարգացման քայլերից է նաև ներդրումների իրականացումը՝ պետական կամ մասնավոր հատվածի կողմից: Ոլորտում մասնավոր ներդրումների խթանման նպատակով տարբեր երկրներ տրամադրում են հարկային լայն արտոնություններ, վարկեր արտոնյալ պայմաններով, սուբսիդիաներ և դոտացիաներ⁷:

Աշխարհի մի շարք երկրներում գոյություն ունի զբոսաշրջության հարկ, որի հիմնական նպատակը երկրների զբոսաշրջության զարգացմանը նպաստելն է: Հավաքագրված միջոցներն ուղղվում են զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը, ներդրումների իրականացմանը (օրինակ՝ Իտալիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Ռուսաստանում, Ուկրաինայում, և այլն, որտեղ հավաքագրված միջոցներն ուղղվում են կուրորտային ենթակառուցվածքներում ներդրումների իրականացմանը՝ դրանց զարգացման ու կատարելագործման նպատակով): Տարբեր երկրներում այս հարկի չափը տարբեր է և կախված է հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման դասից, աստղերից: Այսպես՝ Ուկրաինայում այն կազմում է կեցության մեկ օրվա արժեքի 0.5%-1%-ը⁸, Իտալիայում՝ օրական 1-5 եվրո⁹, Ռուսաստանում՝ ուղեգրի արժեքի 3%-ը¹⁰, Գերմանիայում՝ մեկ օրվա արժեքի 5%-ը, Ֆրանսիայում՝ օրական 0.20-1.50 եվրո¹¹: Ընդ որում, տարբեր երկրների փորձը այս ոլորտում ցույց է տվել, որ զբոսաշրջիկները, վճարելով զբոսաշրջային հարկը, գիտակցում են իրենց ունեցած ներդրումը սովյալ երկրի զբոսաշրջության զարգացման գործում և իրենց հաճելիորեն պատասխանատու են զգում զբոսաշրջության և ծառայությունների մատուցման զարգացման համար: Նշենք նաև, որ որոշ երկրներում այս հարկը վճարում են զբոսաշրջիկները, որոշ երկրներում էլ՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտները (այսինքն ծառայության արժեքի մեջ հաշվի է առնված նշված հարկի չափը): Փաստորեն աշխարհի մի շարք երկրներում զբոսաշրջային հարկը կիրառվում է որպես ոլորտի զարգացման համար անհրաժեշտ ներդրումների, միջոցառումների իրականացմանն ուղղված ֆինանսավորման աղբյուր:

Ֆրանսիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացմամբ զբաղվում է Տրանսպորտի և հասարակական աշխատանքների

⁶ http://www.wyndham.com/deals-discounts/featured-offers/stay-3-save-30?EID=WYN_Stay3_06172013_SL2

⁷ http://tourlib.net/books_tourism/senin08.htm

⁸ <http://www.interfax.ru/tourism/tourisminf.asp?sec=1466&id=259111>

⁹ http://www.mirtravel.com/geo/italija/poleznaja_informatsija/turisticheskie_nalogi_v_italii

¹⁰ http://www.infox.ru/tourism/russia/2012/08/09/Turisticheskij_nalo.phtml

¹¹ <http://www.km.ru/turizm/2011/12/12/novosti-turizma-i-turisticheskoi-otrasli/vse-bolshe-gorodov-evropy-planiruyut-vved>

նախարարության կազմում գործող Զբոսաշրջության կառավարման պետական քարտուղարությունը, որը զբաղվում է ոլորտի կառավարման և կարգավորման, ներդրումների և միջազգային հարաբերությունների հարցերով: Ֆրանսիայի՝ որպես առողջարանային-վերականգնողական զբոսաշրջային կենտրոնի առաջնորդման հարցերով միջազգային շուկայում զբաղվում է «Maison de la France» միավորումը (գործունեության 60%-ը ֆինանսավորվում է ՊԲ-ից)¹²: Ֆրանսիայում շատ են համաշխարհային ճանաչում ունեցող կուրորտները (Էնգել, Վիշի, Էվիան, Միրամար, Լուրդ և այլն)¹³: Ֆրանսիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով կուրորտներն անընդհատ բարելավում են իրենց ծառայությունները, առաջարկում նոր ծառայություններ, իրականացնում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջային ծառայությունների առաջնորդման մարքեթինգային միջոցառումներ: 2012թ. Ֆրանսիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 9.7%-ը, և ապահովել զբաղվածության 10.9%-ը (2924500 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 21.4 մլրդ եվրո, կամ ընդհանուր ներդրումների 5.2%-ը¹⁴:

Իսպանիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության հարցերով զբաղվում է Էկոնոմիկայի նախարարությանը ենթակա Առևտրի, զբոսաշրջության և փոքր բիզնեսի հարցերով զբաղվող պետական քարտուղարությունը: Զբոսաշրջության իսպանական ինստիտուտ Turesspara-ն զբաղվում է օտարերկրյա զբոսաշրջիկների ներգրավմամբ՝ իրականացնելով գովազդային և իսպանական կուրորտների առաջնորդման գործունեություն արտասահմանում (գործունեությունը ֆինանսավորվում է ՊԲ-ից և ունի տեղեկատվական գրասենյակների մեծ ցանց Իսպանիայում և աշխարհի 21 երկրներում)¹⁵: Իսպանիան գրավում է զբոսաշրջիկներին իր մերձծովյան կլիմայական կուրորտներով, որոնք ավելի շատ հայտնի են որպես հանգստի ու զվարճանքի գոտիներ: Իսպանիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով առողջարաններն առաջարկում են առողջարանային լայն ծառայություններ, պետությունը ներդրումների ներգրավման նպատակով տրամադրում է հարկային արտոնություններ: 2012թ. Իսպանիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 15,2%-ը, և ապահովել զբաղվածության 15,5%-ը (2691000 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության

¹² <http://www.tourvest.ru/articles/article0009/>

¹³ Глушко А.А., Сазыкин А.М. - География туризма, Издательство Дальневосточного университета 2002, Владивосток, 2002 г., стр. 93

¹⁴ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 France, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/france2013.pdf

¹⁵ Акопян М. - Международный опыт регулирования въездного туризма, Белорусский журнал международного права и международных отношений 2004 - № 4

ուրրտում կազմել են 14,8 մլրդ եվրո, կամ ընդհանուր ներդրումների 7,4%-ը¹⁶:

Մեծ Բրիտանիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտը ղեկավարում է Մշակույթի և Սպորտի նախարարության կազմում գործող մարմինը (British Tourist Authority), որը զբաղվում է օտարերկրյա զբոսաշրջիկների ներգրավման և ներքին զբոսաշրջության զարգացման հարցերով: Այն տրամադրում է խորհրդատվական և մարքեթինգային ծառայություններ, կազմակերպում ցուցահանդեսներ և սեմինարներ, թողարկում ուղեցույցներ¹⁷: Մեծ Բրիտանիայում հիմնական բուժիչ կուրորտները գտնվում են Հեմփշիրում, ուր կան հանքային ջրերի աղբյուրներ: Շատ առողջարաններ տրամադրում են սպա կենտրոնների ծառայություններ՝ ջրաբուժություն, ծովային և հանքային ջրերով բուժումներ, արոմաթերապիա, և այլն: Հայտնի կուրորտներ են նաև Բատը, Չելտենը, Լեմինգտոնը, Հարոգիտը, Բաքստոնը¹⁸: Բրիտանական կուրորտները համատեղում են բուժումը հանգստի հետ, և այսօր շատ կուրորտներ դարձել են ընտանեկան հանգստի կենտրոններ: Մեծ Բրիտանիայում պետությունը առողջարանային զբոսաշրջության զարգացման համար տրամադրում է պետական սուբսիդիաներ ոլորտի կազմակերպություններին, իրականացնում մարքեթինգային միջոցառումներ: 2012թ. այստեղ զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 6,8%-ը, և ապահովել զբաղվածության 7,6%-ը (2420000 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 8,9 մլրդ ֆունտ ստեռլինգ, կամ ընդհանուր ներդրումների 4,1%-ը¹⁹:

Իտալիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացմամբ զբաղվում է զբոսաշրջության զարգացման դեպարտամենտը, որի հիմնական գործառնություններն են՝ ազգային բնության նորմատիվ-իրավական փաստաթղթերի, վիճակագրական տվյալների մշակում, միջազգային գործունեություն²⁰: Իտալիայի հայտնի կուրորտներն են՝ Չերվիան, Պունտա Մարինա Տերմեն, Ռիչչոնեն և Ռիմինին, Աբանո Տերմեն, Սալտոմաջորեն, Սոնտեկատինի Տերմեն, և այլն²¹: Իտալիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման գործում մեծ դեր ունի պետական աջակցությունը, որն իրականացվում է Զբոսաշրջության ազգային կառավարման ENIT մարմնի կողմից, բացի այդ, տեղի առողջարանները տրամադրում են առողջարանային ծառայությունների լայն ցանկ, որով էլ զբաղվում են զբոսա-

¹⁶ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Spain, p. 1,

¹⁷ <http://www.tourvest.ru/articles/article0009/>

¹⁸ <http://www.traveltours.ru/spb/articles/countries/uk/resorts/>

¹⁹ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 United Kingdom, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/united_kingdom2013.pdf

²⁰ OECD Tourism trends and policies 2010, OECD 2010, p. 188

²¹ Бабкин А. В. - Специальные виды туризма, учебное пособие, Ростов-на-Дону, Феникс, 2008, стр. 79

շրջիկներին և մրցակցում միջազգային մասշտաբով: 2012թ. Իտալիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 10.3%-ը, և ապահովել զբաղվածության 11.7%-ը (2681000 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 11.4 մլրդ եվրո, կամ ընդհանուր ներդրումների 4.0%-ը²²:

Գերմանիան համարվում է Եվրոպայում առողջարանային զբոսաշրջության առաջատարներից մեկը՝ ավելի քան 300 առողջարանային կենտրոններով, հանքային ջրերի բազում աղբյուրներով: Հայտնի կուրորտներն են՝ Բադեն-Բադենը, Վիսբադենը, Կվեդլինբուրգը, Օբերխոլը, Ֆյուսեն, Վանգերգոլեն, Դամեն, Տրավեմյունդեն, և այլն: Գերմանիայի կուրորտներն ընդունում են տարեկան 1 մլն-ից ավելի մարդ: Պրոֆիլակտիկ և ռեաբիլիտացիոն ծրագրերը, որոնք տրամադրվում են գերմանական կլիմայական և բալնոլոգիական կուրորտների կողմից, պահանջարկ են վայելում Ավստրիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Լյուքսեմբուրգի, ԱՄՆ-ի և Կանադայի բնակիչների շրջանում²³: Գերմանիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության հարցերով զբաղվում է Էկոնոմիկայի և տեխնոլոգիայի նախարարության Ազգային զբոսաշրջային կոմիտեն, որը պատասխանատու է Գերմանիայում զբոսաշրջության զարգացման և զբոսաշրջիկների հոսքի մեծացման համար²⁴: Այստեղ առողջարանային զբոսաշրջության զարգացման նպատակով ոլորտի ձեռնարկություններին տրամադրվում են հարկային զեղչեր և արտոնություններ, պետությունը իրականացնում է մարքեթինգային միջոցառումներ, կազմակերպում ոլորտի կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ, և այլն: 2012թ. Գերմանիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 4.5%-ը, և ապահովել զբաղվածության 4.8%-ը (1985500 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 18.6 մլրդ եվրո, կամ ընդհանուր ներդրումների 4.0%-ը²⁵: Ինչպես տեսնում ենք, Գերմանիան, բացի այն, որ Իսպանիայի նման ոլորտի ձեռնարկություններին տրամադրում է հարկային արտոնություններ, մեծ տեղ է հատկացնում նաև ոլորտի կադրերի պատրաստմանն ու որակավորման բարձրացմանը:

Ավստրիան համարվում է Եվրոպայի ամենաճանաչված առողջարանային ու կազդուրիչ զբոսաշրջության կենտրոններից մեկը՝ իր հանքաջրաբուժական և լեռնադահուկային կուրորտներով: Հայտնի կուրորտներն են՝ Բադգայտայնը (հանքային ջրերի 18 աղբյուրներով), Բադենը (հանքային ջրերի 15 աղբյուրներ-

²² WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Italy, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/italy2013_1.pdf

²³ Бабкин А. В. - Специальные виды туризма, учебное пособие, Ростов-на-Дону, Феникс, 2008, стр. 77

²⁴ Акопян М. - Международный опыт регулирования въездного туризма, Белорусский журнал международного права и международных отношений 2004 - № 4

²⁵ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Germany, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/germany2013_1.pdf

րով), լեռնադահուկային Կիտցբյուել, Ջեֆելդ, Ջելդին, Վենտ և այլ կուրորտները²⁶:

Ավստրիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտը կառավարում է Էկոնոմիկայի նախարարությունը, իսկ գովազդով զբաղվում է Ավստրիայի ազգային զբոսաշրջային գրասենյակը: Ոլորտի զարգացման նպատակով տրամադրվում են արտոնյալ վարկեր: 2012թ. Ավստրիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 12.8%-ը, և ապահովել զբաղվածության 13.6%-ը (569000 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 2.2 մլրդ եվրո, կամ ընդհանուր ներդրումների 3.4%-ը²⁷:

Շվեյցարիան շատ հայտնի է որպես առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության կենտրոն: Հայտնի կուրորտներից են՝ Բադենը, Արոզան, Դավոսը, Սանկտ-Մորիցը, Ցերմատը, Կրան-Մոնտանան, Էնգելբերգը, Վիլլարսը և այլն²⁸: Շվեյցարիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հարցերով զբաղվում է Զբոսաշրջության կենտրոնական գրասենյակը (ազգային խոշոր գովազդային գործակալություն), որն իրականացնում է կուրորտների առաջնության, մարքեթինգային, և այլ միջոցառումներ: Շվեյցարիայում առողջարանային զբոսաշրջությունը զարգանում է՝ շնորհիվ առողջարանային ծառայությունների լայն ցանկի, բարձր որակի, սպասարկման բարձր մակարդակի: 2012թ. Շվեյցարիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 8.0%-ը, և ապահովել զբաղվածության 9.9%-ը (474500 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 2.8 մլրդ շվեյցարական ֆրանկ, կամ ընդհանուր ներդրումների 2.4%-ը²⁹:

Չեխիան համարվում է սանատոր-կուրորտային բուժման նպատակներով ժամանող զբոսաշրջիկների թվով առաջատար երկիրը Եվրոպայում: Չեխական ամենամեծ և հայտնի առողջարանը Կարլովի Վարին է: Ըստ Չեխիայի զբոսաշրջության ազգային կառավարման տվյալների՝ տարեկան այնտեղ են այցելում 50000 մարդ ավելի քան 70 երկրներից՝ բուժման նպատակով և շուրջ 2 մլն զբոսաշրջիկ: Հայտնի կուրորտներ են նաև Ֆրանտիշկովի Լազնեն և Մարինսկե Լազնեն, Տեպլիցեն, Յախիմովը, Լուգաչեվիցեն, Յանսկե Լազնեն, Պոդերբրադին, Կինժվարտը, Եսենիկը, Դոլնի Լիպովան, Կարլովա Ստուդանկան³⁰: Բոլոր չեխական կուրորտները, բացի բուժիչ և վերականգնողական

²⁶ Глушко А. А., Сазыкин А. М. - География туризма, Издательство Дальневосточного университета 2002, Владивосток, 2002 г., стр. 172

²⁷ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Austria, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/austria2013.pdf

²⁸ <http://www.travel-switzerland.ru/page/74/>

²⁹ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Switzerland, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/switzerland2013.pdf

³⁰ Ветитнев А.М., Журавлева Л.Б. - Курортное дело: учебное пособие -М.: КНОРУС, 2006. стр. 380-381

ծրագրերից, առաջարկում են նաև մշակութային, զվարճանքի և սպորտային ծրագրեր: Չեխիայում առողջարանային զբոսաշրջային արդյունաբերությունը կառավարվում է Տարածքային զարգացման նախարարության կազմում գործող Զբոսաշրջության դեպարտամենտի կողմից, որը մասնակցում է համապատասխան օրենսդրության մշակմանը, իրականացնում է միջոցառումներ՝ ուղղված այս ոլորտում միջազգային համագործակցության մեծացմանը, վիճակագրական տեղեկատվության վերլուծությանը, տարածաշրջաններում առողջարանային զբոսաշրջության զարգացմանը³¹: Չեխիայում առողջարանային զբոսաշրջության զարգացման նպատակով իրականացվում են մարքեթինգային լայն միջոցառումներ (նաև էլեկտրոնային մարքեթինգ), երկրի զբոսաշրջային արդյունքը ներկայացվում է միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում, առողջարանները քայլեր են ձեռնարկում ոլորտի զարգացման միջազգային լավագույն փորձի ներդրման ուղղությամբ: 2012թ. Չեխիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 8.7%-ը, և ապահովել զբաղվածության 10.9%-ը (534000 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 40 մլրդ չեխական կրոն, կամ ընդհանուր ներդրումների 4.4%-ը³²:

Հունաստանն ունի բազում առողջարանային կենտրոններ: Հունաստանում առողջարանային զբոսաշրջության զարգացմամբ զբաղվում է Զբոսաշրջության նախարարությունը: Դրա հիմնական խնդիրներն են՝ մարքեթինգային ծրագրերի իրականացումն ու առողջարանների, հյուրանոցների և զբոսաշրջային կազմակերպությունների լիցենզավորումը, զբոսաշրջային քաղաքականության մշակումն ու իրականացումը, և այլն³³: Հունաստանում առողջարանային զբոսաշրջության զարգացման նպատակով պետությունը օժանդակում է ոլորտի կազմակերպություններին, տրամադրում արտոնություններ, դոտացիաներ, որոնք սահմանվում են համապատասխան օրենքով³⁴: Բացի այդ մեծ դեր է խաղում նաև առողջարանային զբոսաշրջային արդյունքի գովազդումը՝ միջազգային զբոսաշրջիկների ներգրավման նպատակով: 2012թ. Հունաստանում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 16.4%-ը, և ապահովել զբաղվածության 18.3%-ը (689000 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 3.1 մլրդ եվրո կամ ընդհանուր ներդրումների 13.8%-ը³⁵:

Սլովակիան հարուստ է համաշխարհային ճանաչում ունեցող կուրորտային տեղանքներով: Այդպիսի կուրորտներից է Պիեշտյանին, Տրենչանսկե

³¹ OECD Tourism trends and policies 2010, OECD 2010, p. 138

³² WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Czech Republic, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/czech_republic2013.pdf

³³ OECD Tourism trends and policies 2010, OECD 2010, p. 167

³⁴ <http://www.glaros.ru/typ1.php?poz=352>

³⁵ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Greece, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/greece2013_1.pdf

Տեպլիցեն, Նովի Սմոկովեցը, Գորնի Սմոկովեցը, Շտրեբսկե Պլեան, Բրայդեյովը, Դուբնիցեն, Սլիաչը, Տուրչանսկե Տեպլիցեն, Բոյնիցեն, Բրունոն, Լյուչկին և այլն³⁶: Սլովակիայում առողջարանային զբոսաշրջության պետական կառավարման ու զարգացման համար պատասխանատու է Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության բաժինը, որի հիմնական խնդիրներն են՝ ազգային զբոսաշրջային քաղաքականության մշակումը, ռազմավարությունների մշակումը, վիճակագրական տվյալների հավաքագրումը, ոլորտի մանր ու միջին ձեռնարկություններին համապատասխան օգնության ցուցաբերումը, երկրի շահերը միջազգային զբոսաշրջային կազմակերպություններում ներկայացնելը, միջազգային համագործակցության իրականացումը, և այլն: Մարքեթինգային գործունեությամբ զբաղվում է Սլովակիայի զբոսաշրջության խորհուրդը, որը ներկայացնում է երկիրը՝ որպես առողջարանային զբոսաշրջության կենտրոն՝ միջազգային զբոսաշրջիկների ներգրավման նպատակով³⁷: 2012թ. Սլովակիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 5.8%-ը, և ապահովել զբաղվածության 5.7%-ը (131500 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 0.4 մլրդ եվրո կամ ընդհանուր ներդրումների 2.6%-ը³⁸: Հունգարիան, որին երբեմն անվանում են ջերմային բաղնիքների երկիր, ճանաչված է մասնավորապես իր առողջարանային զբոսաշրջության արդյունաբերության շնորհիվ: Շուրջ 0.5 մլն մ³ ջերմային ջրեր մեկ օրվա մեջ տալիս են բնական աղբյուրները և հորանցքերը, չնայած դրանցից ոչ բոլորն են օգտագործվում բժշկության մեջ: Զբոսաշրջիկների հոսքը հիմնականում ուղղվում է Բուդապեշտ և Բալատոն լիճ: Առավել հայտնի են ածխաթթվային աղբյուրներ ունեցող կուրորտները՝ Բալատոնֆելդվարը, Բալատոնֆյուրեդը, Հեվիսի բալնեոկուրորտը³⁹:

Հունգարիայում առողջարանային զբոսաշրջության զարգացմամբ զբաղվում է Ազգային զբոսաշրջության նախարարությունը, որն իրականացնում է զարգացման ծրագրեր: Երկրում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով առողջարանները համատեղում են սպասարկման բարձր որակը գնի հետ, առաջարկում ընտանեկան և խմբային զբոսաշրջային փաթեթներ⁴⁰: 2012թ. Հունգարիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 10.8%-ը, և ապահովել զբաղվածության 10.1%-ը (392500 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 182.3

³⁶ Бабкин А. В. - Специальные виды туризма, учебное пособие, Ростов-на-Дону, Феникс , 2008, стр. 75

³⁷ [OECD Tourism trends and policies 2010, OECD 2010, p. 242](#)

³⁸ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Slovakia, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/slovakia2013_2.pdf

³⁹ Бабкин А. В. - Специальные виды туризма, учебное пособие, Ростов-на-Дону, Феникс , 2008, стр. 76

⁴⁰ http://www.eski.hu/new3/gyogyturizmus/zip_doc_2009/Gyogyturizmus%20Magyarorszagon-orosz.pdf

հունգարական ֆորինտ կամ ընդհանուր ներդրումների 3.9%-ը⁴¹:

Սլովենիան ամբողջ աշխարհում հայտնի է իր բուժիչ կուրորտներով՝ Տոպոլշիցա, Չատեժ, Ռոզաշկա Սլատինա, Բլեդ և այլն⁴²: Սլովենիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացմամբ զբաղվում է Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեն: Մարքեթինգային գործունեությունն իրականացնում է Սլովենական զբոսաշրջության խորհուրդը (կիսաառևտրային, պետական կազմակերպություն), որը ներկայացնում է երկիրը որպես առողջարանային զբոսաշրջության գրավիչ կենտրոն⁴³: Երկրում առողջարանային զբոսաշրջության զարգացումը հենվում է բնական բուժիչ ռեսուրսների վրա՝ առաջարկելով առողջարանային բուժական ծառայությունների լայն ցանկ, ակտիվ հանգիստ, սպա, վելնես և երիտասարդացման նոր ծրագրեր⁴⁴: 2012թ. Սլովենիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 12.8%-ը, և ապահովել զբաղվածության 13.1%-ը (105500 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 818,5 մլն եվրո կամ ընդհանուր ներդրումների 13,1%-ը⁴⁵:

Ռուսաստանում հանրահայտ հանքային ջրերի առողջարանները սեղակայված են Պյատիգորսկում, Կիսլովոդսկում, Ժելեզնովոդսկում (Կովկասում), Վլադիվոստոկում, Կամչատկայի և Կարելիայի շրջաններում, Ուրալում, Միբիբում, Սև ծովի մերձակայքում: Այստեղ կա ավելի քան 2100 առողջարան: Ռուսական կուրորտների այցելուների թիվը տարեկան անցնում է 5 մլն-ը⁴⁶: Ռուսաստանում առողջարանային զբոսաշրջության կառավարման պետական լիազոր մարմինը Մպորտի, զբոսաշրջության և երիտասարդության նախարարությունն է, ինչպես նաև Զբոսաշրջության պետական գործակալությունը: Ռուսաստանում առողջարանային զբոսաշրջության զարգացման նպատակով կառավարման պետական մարմինների գործառույթներից են՝ կուրորտային գործի դրույթների, ստանդարտացման և լիցենզավորման կանոնների մշակում, Ռուսաստանի կուրորտային ֆոնդի պետական ռեեստրի վարում, կուրորտների զարգացման պետական ծրագրերի մշակում և իրականացում, կուրորտային ապրանքի առաջմղման պետական մարքեթինգային քաղաքականություն, և այլն: Կառավարման միջին մակարդակի գործառույթներն են՝ տարածաշրջանային կուրորտային ծրագրերի մշակում, առողջարանային ոլորտի կազմակեր-

⁴¹ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Hungary, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/hungary2013_1.pdf

⁴² Бабкин А. В. - Специальные виды туризма, учебное пособие, Ростов-на-Дону, Феникс, 2008, стр. 76-77

⁴³ OECD Tourism trends and policies 2010, OECD 2010, p. 330

⁴⁴ http://all-slovenia.com/kurort_in_slovenia/

⁴⁵ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Slovenia, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/slovenia2013_2.pdf

⁴⁶ <http://www.sankurtur.ru/russia/land/564/>

պությունների գործունեության կորոդինացում, համապատասխան կադրերի պատրաստման գործընթացի կարգավորում, տարածաշրջանային կուրորտային ապրանքի առաջնություն: Իսկ միկրոմակարդակը ներառում է առողջարանային ոլորտի կազմակերպությունների գործունեությունը⁴⁷: 2012թ. Ռուսաստանում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 5.9%-ը, և ապահովել զբաղվածության 5.5%-ը (3931500 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 355.8 մլրդ ռուբլի կամ ընդհանուր ներդրումների 2,7%-ը⁴⁸:

ԱՄՆ-ն իր ավելի քան 20000 կուրորտներով համարվում է առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության շուկայում անվիճելի առաջատար: Այս երկրի ձեռքբերումները առողջարանային զբոսաշրջության ոլորտում համաշխարհային ճանաչում ունեն: ԱՄՆ-ն տարեկան ընդունում է ավելի քան 150 մլն առողջարանային զբոսաշրջիկ: Հյուսիսամերիկյան կուրորտների մեծամասնությունը բալնեոլոգիական են: Մերձծովյան կլիմայական կուրորտներից կարելի է նշել Լոնգ-Բիչը Նյու-Յորքում, Խատերասը Ատլանտյան օվկիանոսի ափին Հյուսիսային Կարոլինայում և Մայամի-Բիչը Ֆլորիդայում: ԱՄՆ-ում ֆեդերալ մակարդակով որպես զբոսաշրջության, այդ թվում նաև առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության կարգավորման Ազգային մարմին յուրաքանչյուր նահանգում գործում է համապատասխան ծառայություն՝ Առևտրի և զբոսաշրջության գործակալությունը, որի խնդիրներն են՝ ներգնա և արտագնա զբոսաշրջության հավասարաչափ աճի և բազմակողմ գարգացումը, գովազդային տեղեկատվական ծրագրերի անցկացումը, հետազոտությունների իրականացումը: Քաղաքներում իշխանության տեղական մարմիններում կան զբոսաշրջության հատուկ բյուրոներ, որոնց հիմնական գործառույթը զբոսաշրջիկ ներգրավելն է: Բյուրոյի կազմի մեջ են մտնում քաղաքական իշխանությունների, տրանսպորտային կազմակերպությունների, հյուրանոցների, ռեստորանների, զվարճանքի կազմակերպությունների ներկայացուցիչներ: Բյուրոների բյուջեները ձևավորվում են անդամավճարներից, գովազդից ստացվող եկամուտներից և այլն: ԱՄՆ-ում զբոսաշրջային արդյունաբերությունը համարվում է երկրորդ խոշոր գործատուն առողջապահության համակարգից հետո⁴⁹: Առողջարանային զբոսաշրջությունն այստեղ զարգանում է ենթակառուցվածքների զարգացվածության բարձր մակարդակի, առողջարանային ծառայությունների բարձր որակի շնորհիվ: 2012թ. ԱՄՆ-ում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 8,6%-ը, և ապահովել զբաղվածության 10,0%-ը (14261000 աշխատատեղ): Ներդրումները

⁴⁷ Журавлева Л.Б, «Курортное дело с основами курортологии», Сочи, 2008, стр. 483

⁴⁸ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Russian Federation, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/russian_federation2013_2.pdf

⁴⁹ <http://www.tourvest.ru/articles/article0009/>

զբոսաշրջության ոլորտում կազմել են 156,9 մլրդ դոլար կամ ընդհանուր ներդրումների 6,4%-ը⁵⁰:

Մերձավոր Արևելքում առողջարանային-վերականգնողական նպատակներով զբոսաշրջիկների հոսքն ուղղվում է Իսրայել՝ Մեռյալ ծով, որը գտնվում է Մոդոմ բիրլիական քաղաքի մոտակայքում: Այս վայրի բացառիկությունը կայանում է բուժիչ ցեխերի, ծովային աղերի և հատուկ կենսաօդերևութաբանական պայմանների համադրության մեջ: Մեռյալ ծովի ափին են գտնվում Էյն-Քուկեկը, Նեվ-Ջոխարը, Էյն-Գեդին⁵¹: Իսրայելում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հարցերով զբաղվում է Զբոսաշրջության նախարարությունը, որն իրականացնում է թե՛ կառավարման, և թե՛ մարքեթինգային գործունեություն⁵²: 2012թ. Իսրայելում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 7.8%-ը, և ապահովել է զբաղվածության 8.2%-ը (252000 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 2.3 մլրդ դոլար կամ ընդհանուր ներդրումների 4.8%-ը⁵³:

Ավստրալիան ունի բոլոր անհրաժեշտ ռեսուրսները առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար: Խոշոր կուրորտներ Մորկը, Սպրինգվուդը, Դեյդրիմ Այլենդը, Կերնսը համարվում են հանգստի և բուժման համար իդեալական տեղեր: Ավստրալիայի հեռու գտնվելը Եվրոպայի և Ամերիկայի հիմնական շրջաններից, որոնք կենտրոնացնում են զբոսաշրջային պահանջարկը, խանգարում է ներգնա զբոսաշրջային հոսքի մեծացմանը: Դրա համար էլ ավստրալիական կուրորտները կողմնորոշված են դեպի ներքին զբոսաշրջիկների ընդունմանը⁵⁴: Ավստրալիայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար պատասխանատու է Ավստրալիայի զբոսաշրջություն մարմինը, որը զբաղվում է ոլորտի զարգացման մարքեթինգային գործունեությամբ, իրականացնում շուկայի հետազոտություններ, կանխատեսումներ և ոլորտի վիճակագրական հաշվառում⁵⁵: 2012թ. Ավստրալիայում զբոսաշրջության ոլորտը կազմել է ՀՆԱ-ի 9.8%-ը, և ապահովել զբաղվածության 12.0%-ը (1378500 աշխատատեղ): Ներդրումները զբոսաշրջության ոլորտում կազմել են 2.4 մլրդ դոլար կամ ընդհանուր ներդրումների 5.7%-ը⁵⁶:

⁵⁰ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 United States, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/united_states2013.pdf

⁵¹ Александрова А. Ю. - Международный туризм, Москва 2002, стр. 156

⁵² <http://www.tourvest.ru/articles/article0009/>

⁵³ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Israel, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/israel2013_1.pdf

⁵⁴ Александрова А. Ю. - Международный туризм, Москва 2002, стр. 157

⁵⁵ OECD Tourism trends and policies 2010, OECD 2010, p. 114

⁵⁶ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Australia, p. 1, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/australia2013.pdf

Այսպիսով, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ զբոսաշրջության զարգացմամբ զբաղվում են և՞ պետական, և՞ մասնավոր մարմինները, որոշ երկրներում նույնիսկ կան առանձին նախարարություններ, որոնք զբաղվում են զբոսաշրջության կառավարման ու զարգացման հարցերով (օրինակ՝ Հունաստանում, Հունգարիայում, Իսրայելում): Ընդ որում՝ պետական մակարդակով իրականացվում են նաև մարքեթինգային միջոցառումներ՝ ոլորտի զարգացման և զբոսաշրջիկների ներգրավման նպատակով (օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Սլովենիայում, Ռուսաստանում, Իսրայելում, և այլն): Պետք է նշել նաև, որ տարբեր երկրներում առողջարանները ձգտում են ընդլայնել առողջարանային ծառայությունները, տրամադրել նոր, ավելի որակյալ ծառայություններ՝ զբոսաշրջիկների հոսքը մեծացնելու համար: Շատ երկրներում (Իսպանիա, Գերմանիա, Հունաստան, Մեծ Բրիտանիա) պետությունը ոլորտի ձեռնարկություններին տրամադրում է սուբսիդիաներ, հարկային արտոնություններ: Յուրաքանչյուր երկրում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացմամբ զբաղվում են նաև առողջարանների միավորումները (սպա ասոցիացիաները), որոնք նպաստում են երկրների առողջարանային արդյունաբերության զարգացմանը, ապահովում առողջարանային ծառայությունների բարձր մակարդակ, զբաղվում մարքեթինգային գործունեությամբ, կրթության և անձնակազմի կառավարման, և այլ հարցերով (օրինակ Մեծ Բրիտանիայի, Չեխիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Սլովենիայի, Ավստրալիայի, Շվեյցարիայի, Սլովակիայի, Ռուսաստանի առողջարանների միությունները, և այլն)⁵⁷:

Մրանցից բացի սպա արդյունաբերության զարգացմամբ զբաղվում են նաև Միջազգային սպա ասոցիացիան (ISPA) և Եվրոպական սպա ասոցիացիան (ESPA): Միջազգային սպա ասոցիացիան (ISPA) հիմնադրվել է 1991թ. և ամբողջ աշխարհում ճանաչված է որպես սպա արդյունաբերության մասնագիտացված կազմակերպություն՝ ներկայացնելով ավելի քան 70 երկրների սպա կենտրոններ և առողջարաններ⁵⁸: Միջազգային սպա ասոցիացիայի առաքելությունն է՝ ISPA-ն առաջ է մղում սպա արդյունաբերությունը՝ ապահովելով անզնահատելի կրթական և ցանցային հնարավորություններ, առաջ մղում սպա կենտրոնների փորձի արժեքը, որպես հեղինակավոր ձայն՝ արագացնելու պրոֆեսիոնալիզմն ու աճը: ISPA-ի տեսլականն է՝ լինել առաջատարը սպա արդյունաբերության և ժողովրդի բարեկեցության գործում⁵⁹:

⁵⁷ <http://www.globalspaandwellnesssummit.org/index.php/spa-industry-resource/associations>

⁵⁸ www.experienceispa.com

⁵⁹ <http://www.experienceispa.com/ISPAFoundation/>

Եվրոպական սպա ասոցիացիան (ESPA)-ն հիմնադրվել է 1995թ. Բրյուսելում, ոչ առևտրային, ոչ պետական կազմակերպություն է, ներկայացնում է եվրոպական սպա կենտրոնների և առողջարանների շահերը: ESPA-ն ունի 20 անդամներ Եվրոպական 19 երկրներից⁶⁰: ESPA-ի առաքելությունն է.

1. Եվրոպական առողջապահության շուկայում ապահովել առողջարանների հավասար իրավունքները,
2. արդարություն որակի մրցակցության մեջ,
3. հստակ սահմանազատում դնել առողջարանային բուժման և հանգստի ծառայությունների միջև:

ESPA-ի նպատակն է՝ խթանել սպա կենտրոնների զարգացումը Եվրոպայում և հետևել, որ բնական բուժիչ միջոցները՝ կլիման, լանդշաֆտն ու հանքային ջրերը, հասանելի լինեն ավելի շատ քաղաքացիների:

ESPA-ի հիմնական նպատակներն են.

1. վերլուծել ԵՄ անդամ երկրների սպա կենտրոնների և առողջարանների վիճակը,
2. խթանել լավագույն փորձի և նոու-հաուսների փոխանակմանը,
3. մշակել և զարգացնել ծրագրեր հանուն առողջության,
4. ստեղծել և բարելավել Եվրոպայի բոլոր սպա կենտրոնների և առողջարանների ստանդարտները,
5. սահմանել և ներդաշնակեցնել ընդհանուր վերապատրաստման ծրագրերը և դասընթացները և սահմանել մասնագիտական կառույց Եվրոպական սպա արդյունաբերության համար,
6. ստեղծել հիմք՝ ESPA անդամ երկրների համագործակցային մարքեթինգային հնարավորությունների համար⁶¹:

Կարող ենք ասել, որ նման կառույցների գործունեությունը նպաստում է անդամ երկրների առողջարանային զբոսաշրջային արդյունաբերության և առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացմանը:

Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման միջազգային փորձի վերլուծությունից երևում է, որ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով տարբեր երկրներ իրականացնում են միջոցառումներ մի շարք ուղղություններով՝ մարքեթինգային գործունեություն՝ թե՛ պետական, և թե՛ առանձին առողջարանների մակարդակով, ոլորտի իրավական կարգավորում և կառավարում, ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում և իրականացում, առողջարանային ծառայությունների ընդլայնում, կատարելագործում և սպասարկման որակի բարձրացում (շատ կուրորտներ բուժիչ-վերականգնողական ծառայություն-

⁶⁰ www.espa-ehv.com

⁶¹ http://espa-ehv.com/index.php?option=com_content&view=article&id=173&Itemid=288

ներից բացի առաջարկում են նաև մշակութային, սպորտային, էքսկուրսիոն ծրագրեր), ընտանեկան և խմբային զբոսաշրջային փաթեթների մշակում, ոլորտի կառավարման կադրերի պատրաստում, ոլորտում ներդրումների ներգրավման համար հարկային, վարկային արտոնությունների տրամադրում, գնային ձևում գեղչերի քաղաքականություն, և այլն: Կարծում ենք՝ ՀՀ-ում ևս առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել բարեփոխումներ մի շարք ոլորտային-ներով՝ այսինքն կիրառել միջազգային առաջավոր փորձը:

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ РАЗВИТИЯ САНАТОРНО-КУРОРТНОГО ТУРИЗМА

Գայանե Կոմասյան

*Преподаватель кафедры управления и информационных технологий
международного университета Евразия, кандидат экономических наук*

Ключевые слова: санаторно-курортный туризм, инвестиции, туристический налог, маркетинговая деятельность.

В статье проанализирован международный опыт развития санаторно-курортного туризма. Для развития туризма в разных странах реализуют ряд мероприятий маркетинговой деятельности, совершенствование правового регулирования и управления, разработки и реализации стратегических план, расширения, совершенствования и улучшения качества обслуживания санаторных услуг, подготовки управленческих кадров, налоговые и кредитные льготы для привлечения инвестиций, гибкая ценовая политика скидок и т.д.

INTERNATIONAL EXPERIENCE OF SPA-RESORT TOURISM DEVELOPMENT

Gayane Tovmasyan

*Lecturer of Managment and Information Technology Department
at Eurasia International University, PhD in Economics*

Key words: spa-resort tourism, investment, tourist tax, marketing activities.

The article analyzes the international experience of the development of spa-resort tourism. For the development of tourism different countries implement a number of measures of marketing activities, improvement of legal regulation and management, development and implementation of strategic plans, expansion and improvement of the quality of sanatorium services, management training, tax and credit incentives to attract investment, flexible pricing discounts, etc.

**ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՐՊԵՄ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ**

Վեներա Ոսկանյան

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
Տիզդաստիարակության, ԱԻ և ՔՊ ամբիոնի դոցենտ*

Բանալի բառեր՝ բժշկական ապահովագրություն, պարտադիր ապահովագրություն, սոցիալական ապահովագրություն, սոցիալական պաշտպանություն, պետական սոցիալական ապահովագրություն:

Յուրաքանչյուր պետություն իր քաղաքացիների սոցիալական պաշտպանության խնդիրների լուծումն իրականացնում է զանազան մեխանիզմների միջոցով, որոնք միմյանց փոխլրացնող, սակայն կազմակերպման, կառավարման մեթոդներով, կիրառման մեխանիզմներով ու սկզբունքներով էականորեն տարբեր համակարգերի ամբողջություն են: Բժշկական ապահովագրությունը հանդիսանալով սոցիալական ապահովագրության տարատեսակներից մեկը, ապահովում է բժշկական օգնության և դեղամիջոցների ստացման համընդհանուր հասանելիություն հասարակության ամենալայն շերտերի համար¹: Բժշկական ապահովագրության ցանկացած տիպի համակարգում ապահովագրական կազմակերպությունները պայմանագրային հարաբերություններ են հաստատում բժշկական հաստատությունների հետ՝ անկախ վերջիններիս սեփականության ձևից: Ապահովադրի, ապահովագրողի և բժշկական հաստատությունների հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքվող պայմանագրերով, որոնք պետք է բովանդակեն բժշկական ծառայությունների տեսակները, դրանց արժեքը և հաշվարկման կարգը, բուժօգնության որակի նկատմամբ հսկողության և ապահովագրական միջոցների օգտագործման կարգը, կողմերի իրավունքները, պարտականությունները և օրենքին չհակասող այլ պայմաններ:

Ինչպես ցանկացած տեսակի ապահովագրության մեջ, այնպես էլ բժշկական ապահովագրությունում կարևորագույն սկզբունք է հանդիսանում ֆինանսական միջոցների և ապահովագրական պատահարներից առաջացող վնասների վերաբաշխումն ու համահարթեցումը ժամանակի և տարածության մեջ: Այսինքն ապահովագրական ընկերությունները համապարտ պատասխանատվություն են կրում ապահովադիրների նկատմամբ՝ ապահովագրական պատահարների դեպքում նրանց մատուցվող բժշկական ծառայությունների ֆինանսավորման հետ կապված վնասը բաշխելով հիմնադրամի բոլոր անդամների միջև:

¹ Феодорова Т.А., Страхование /Т.А. Феодорова, С.Б. Богаявленский, Ю.В. Дюжев и др.-Изд.2-е. М: Экономист, 2004.

Հասարակության անդամներին մատուցվող առողջապահական ծառայությունների որակի բարձրացումը բժշկական ապահովագրության պայմաններում իրագործվում է ի հաշիվ՝

- բժշկական անձնակազմի՝ սեփական աշխատանքի արդյունքների նկատմամբ տնտեսական շահագրգռվածության և պատասխանատվության բարձրացման,
- առողջապահական համակարգի ֆինանսավորման արմատական ավելացման,
- վարձու աշխատողների առողջության պահպանման գործում գործատուների մասնակցության և այլն:

Բժշկական ապահովագրությունը իրականացվում է պարտադիր և կամավոր սկզբունքներով: Պարտադիր բժշկական ապահովագրությունը (ՊԲԱ), հանդիսանալով սոցիալական ապահովագրության բաղադրիչներից մեկը, ապահովում է բժշկական օգնության համընդհանուր հասանելիություն՝ պետության կողմից սահմանված ծրագրերին համապատասխան ծավալով և պայմաններով: Պետությունը կազմում է պարտադիր բժշկական ապահովագրության ազգային ծրագիր, որը սահմանում է երաշխավորվող բժշկական ծառայությունների ցանկը, ապահովագրական հատկացումների ծավալները և այլն: Պարտադիր բժշկական ապահովագրությունը սովորաբար չի նախատեսում հիվանդների խնամքի, պրոֆիլակտիկ միջոցառումների և թանկարժեք բուժման հետ կապված ծախսերի փոխհատուցում²: Պարտադիր բժշկական ապահովագրության սկզբունքներն են՝

- նվազագույն առողջապահական երաշխիքների տրամադրում,
- բնակչության հնարավորինս լայն շերտերի ընդգրկում ՊԲԱ ծրագրերում,
- ապահովադրի կողմից ապահովագրական կազմակերպության և բժշկական հաստատության ազատ ընտրության հնարավորություն:

Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգում ապահովագրավճարների սահմանման ամենատարածված ձևերից են համարվում գործատուների և վարձու աշխատողների եկամուտներից տրվող մասհանումները: Դրանց ծավալները սահմանվում են օրենսդրորեն, և տարբերվում են՝ կախված քաղաքացիների վճարունակությունից: ՊԲԱ առավելությունների թվին կարելի է դասել հավաքագրվող միջոցների խիստ նպատակային օգտագործումը, ի տարբերություն բյուջետային ֆինանսավորմանը հատուկ՝ ընդհանուր հարկային մուտքերին բնորոշ անհասցեականության: ՊԲԱ դասական մոդելում առողջապահության ոլորտի ֆինանսավորման հիմնական աղբյուրը ընդհանուր աշխատավարձի ֆոնդից արվող մասհանումներն են,

² Шахов В.В., Страхование: учебник для вузов /В.В. Шахов. М.ЮНИТИ, 2003.

ուստի դրանց ծավալի կախվածությունն ընդհանուր բյուջետային մուտքերից փոքր է, և վերջինիս նվազեցման դեպքում ոլորտը մեծապես չի տուժում: Առողջապահության ոլորտի ֆինանսավորման մասով պետության դերը սահմանափակվում է ոչ մեծ սուբսիդների տրամադրմամբ: ՊԲԱ ֆոնդին արվող հատկացումները սահմանվում են այնպես, որ ծածկի բուժօժանայությունների՝ պետության կողմից երաշխավորվող փաթեթի գծով ենթադրվող ծախսերի հիմնական մասը՝ անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ ապահովելով ոչ միայն բնակչության աշխատող հատվածի, այլև անաշխատունակ կամ չաշխատող բնակչության մի մասի համար: Տարբերում են պարտադիր բժշկական ապահովագրության երկու մոդել՝ մրցակցային և մենաշնորհային: Մրցակցային մոդելի դեպքում շուկայում առկա են մեծ թվով ապահովագրական ընկերություններ, որոնք մրցակցում են միմյանց հետ հաճախորդներին ներգրավելու նպատակով: Ակնհայտ է, որ այս մոդելի հիմնական սկզբունքները բխում են հասարակության անդամների՝ իրենց ապահովագրողին ընտրելու ազատ իրավունքից: Երկրորդ մոդելը ենթադրում է բնակչության որոշակի հատվածի կամ տարածաշրջանի սպասարկում մեկ ապահովագրական ընկերության կողմից: Սակայն բժշկական ապահովագրության շուկայում ապահովագրողների թիվը ոչ միշտ է որոշում շուկայում առկա մրցակցության աստիճանը: Շուկայում կարող են գործել մի քանի ապահովագրական ընկերություններ, որոնք կարող են կարտելային համաձայնության գալ ապահովագրական դաշտի բաժանման շուրջ: Եվ հակառակը՝ երկու խոշոր ապահովագրողներ կարող են մտնել սուր մրցակցության մեջ: Մոնոպոլ մոդելը բացառում է անբարենպաստ ընտրանքի ռիսկը, ապահովում է ֆինանսական կայունության բարձր մակարդակ և պահանջում է համեմատաբար փոքր վարչական ծախսեր: Մրցակցային մոդելն ունի իր առավելություններն ու թերությունները: Հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ մրցակցությունը դրդում է ապահովագրողներին առավելագույնս պաշտպանել հիվանդների շահերը, հսկողություն սահմանել բուժօժանայությունների որակի նկատմամբ և այլն:

Ապահովագրական ընկերությունները փորձում են մի կողմից բացառել բարձր ռիսկային խմբերի պատկանող անձանց ներգրավումը, մյուս կողմից մանրակրկիտ ուսումնասիրություն են իրականացնում յուրաքանչյուր ապահովադրի նկատմամբ՝ սահմանելով վերջիններիս՝ այս կամ այն ռիսկային խմբի պատկանելուն համապատասխան ապահովագրական վճարներ: Սովորաբար բարձր ռիսկային խմբերի քաղաքացիներին բացահայտելու գործընթացը կապված է զգալի նյութական և ադմինիստրատիվ ծախսերի հետ: Այսպիսով առաջանում է արդարության սկզբունքներին հակասող իրավիճակ, քանի որ առողջական խնդիրներ ունեցող բազմաթիվ քաղաքացիներ չեն

կարողանում ստանալ բժշկական ապահովագրություն, որի կարիքն իրենք ունեն առավել քան ուրիշները: Մինչդեռ ՊԲԱ հակառակ նպատակն ունի, օգտագործել առողջ և բարեկեցիկ բնակչության միջոցները անապահով և հիվանդ անձանց բժշկական սպասարկման կազմակերպման նպատակով: Հաջորդ խնդիրը բարոյական ռիսկի (չարաշահումների) հիմնահարցն է, որը հավասարապես բնորոշ է թե՛ ՊԲԱ-ին և թե՛ ԿԲԱ-ին: Այս երևույթն արտահայտվում է ապահովագրված քաղաքացիների կողմից հատուցվող բժշկական ծառայություններից գերօգտվելու կամ դրանք չարաշահելու պրակտիկայով: Այսինդրի լուծման նպատակով բժշկական ծառայությունների վճարների որոշակի (հաճախ սիմվոլիկ) մասը այնուամենայնիվ թողնվում է քաղաքացիների վրա: Բացի դրանից երաշխավորվող ծառայությունների ցանկից հաճախ բացառվում են պրոֆիլակտիկ բնույթի ծառայությունները, որոնցից անհարկի հաճախ օգտվելու հավանականությունն ավելի մեծ է: Ընդհանուր առմամբ ԿԲԱ ծրագրերը չեն կարող փոխարինել ոչ ՊԲԱ ոչ էլ առողջապահության հանրային ֆինանսավորման համակարգին, քանի որ չեն ընդգրկում բուժօգնության բոլոր ձևերն ու բնակչության բոլոր խավերը: ԿԲԱ նշանակությունն այս կամ այն երկրում աճանցվում է առողջապահության ոլորտի ֆինանսավորման պատմականորեն ձևավորված մոդելից, իսկ դրա զարգացման լավագույն հնարավորություններն առաջանում են այն երկրներում, որտեղ հստակորեն որոշված են անվճար բուժօգնության ցուցաբերման պետական երաշխիքների սահմանները:

Բժշկական ապահովագրության մեխանիզմների կիրառման միջազգային փորձի ուսումնասիրությունը միանշանակ ցույց չի տալիս, թե ապահովագրական ո՞ր մոդելն է նախընտրելի, քանի որ դրանք փխկապակցված են: Օրինակ Ֆրանսիայում գործում է ՊԲԱ համակարգ, որն ամբողջությամբ գտնվում է պետական վերահսկողության ներքո և ԵՄ երկրների շարքում հանդիսանում է ամենաառաջնակարգ և էտալոնային մոդելը: ԲԱ Ֆրանսիայում հանդիսանում է պետական սոցիալական ապահովագրության բաղկացուցիչ մաս, որը պարտադիր է բոլոր վարձու աշխատողների համար: Գործատուները և վարձու աշխատողները իրենց եկամուտներից մասհանումներ են կատարում առողջապահության պետական հիմնադրամին, որը ֆինանսավորում է բնակչության 99%-ի բուժման հիմնական ծախսերը: Ապահովագրավճարների հիմնական ծանրությունն ընկնում է (մոտ 90%) գործատուների վրա, իսկ մնացած մասը վճարում են վարձու աշխատողները: Ֆրանսիայում առողջապահության ոլորտի ֆինանսավորման համար տարեկան ծախսվում է ՀՆԱ-ի 12%-ը:

Գերմանիան աշխարհի առաջին երկրներից է, որտեղ ներդրվել է ՊԲԱ համակարգ: Դրա հիմքերը դրվել են դեռևս 1884թ. Օտտո Բիսմարկի կառավարության օրոք ընդունված օրենսդրական ակտերի շնորհիվ, որի պատվին

գերմանական առողջապահական համակարգն անվանվում է նաև բիսմարկյան մոդել: Գերմանիայում գործում է շուրջ 600 ապահովագրական հիմնադրամներ, որոնց գործունեությունը խստորեն կարգավորվում է պետության կողմից: Գերմանիայի առողջապահական համակարգի ֆինանսավորման 60%-ը կազմում է պարտադիր, 7 կամավոր ապահովագրավճարները, 20%-ը պետական բյուջեի միջոցները, 13%-ը՝ ուղղակի վճարները: Բնակչության 92%-ը օգտվում է պարտադիր, 8%-ը՝ կամավոր ապահովագրությունից: Գերմանիայում ապահովագրական վճարները սահմանվում են բնակչության կամուտներին համապատասխան՝ որոշակի տոկոսի չափով, իսկ սահմանված գծից բարձր եկամուտներ ստացողներն իրենց եկամտի՝ նշված սահմանը գերազանցող մասով ազատվում են ապահովագրական վճարներ կատարելու պարտավորությունից: Բնակչության բարձր եկամուտներ ստացող շերտերին թույլ է տրվում չմասնակցել ՊԲԱ ծրագրերին, և օգտվել միայն ԿԲԱ-ից, որին մասնակից քաղաքացիները նախ պարտավոր են վճարել ստացած բուժման դիմաց, և ապա փոխհատուցման պահանջ ներկայացնել ապահովագրական ընկերություններին, որոնք իրենց հերթին հատուցում են կատարված ծախսերի 70-90%-ը: Գերմանիայում առողջապահության ոլորտի ֆինանսավորման համար տարեկան ծախսվում է ՀՆԱ-ի 11,3%-ը:

Մեծ Բրիտանիայում գործում է ազգային առողջապահական ծրագիր, որից օգտվում է ամբողջ բնակչությունը: Այստեղ առողջապահական համակարգի ֆինանսավորման 85%-ն ընդգրկում է ազգային առողջապահական ծրագիրը (որից 75%-ը պետական բյուջեի եկամուտները, 12%-ը պարտադիր ապահովագրավճարները), 10%-ը ուղղակի վճարները, իսկ 5%-ը մասնավոր ապահովագրությունը: Մեծ Բրիտանիայում առկա է նաև ապահովագրության մասնավոր հատված՝ 6%, որի ծառայություններից օգտվում է բնակչության 10%-ը: Մեծ Բրիտանիայում առողջապահության ոլորտի ֆինանսավորման համար տարեկան ծախսվում է ՀՆԱ-ի 9,5%-ը:

ԱՄՆ-ում գործում է խառը տիպի առողջապահական համակարգ, իսկ հիմնական շեշտը դրված է ԿԲԱ վրա, որն ընդգրկում է բնակչության շուրջ 60%-ը: ԱՄՆ-ում գործում են բժշկական ապահովագրությամբ զբաղվող 1200 մասնավոր կազմակերպություններ, իսկ ապահովագրավճարները որոշվում են շուկայում՝ խիստ մրցակցության պայմաններում, և յուրաքանչյուր ապահովադրի համար սահմանվում են անհատական կարգով՝ ըստ վերջինիս պատկանելիության՝ այս կամ այն ոիսկային խմբին: ԱՄՆ-ում գործում են երկու պետական ծրագրեր՝ «Medicare» և «Medicaid», որոնք ընդգրկում են բնակչության 25%-ը: «Medicaid» ծրագիրն իրականացվում է նահանգային միջոցների հաշվին և նախատեսված է գործազուրկների և սոցիալական անապահով խավերի բուժապասարկման համար: «Medicare» ծրագիրն իրա-

կանացվում է ԱՄՆ դաշնային կառավարության կողմից՝ պետական բյուջեի հաշվին, և կոչված է աջակցելու հաշմանդամների և 65 տարին լրացած քաղաքացիներին: Ապահովագրական գործունեությունն ԱՄՆ-ում առանձնա-նում է վիթխարի ծավալներով և չունի իրեն հավասար ամբողջ աշխարհում: Ամերիկյան ապահովագրական հսկաները վերահսկում են զարգացած երկրների ապահովագրական շուկաների շուրջ 50%-ը³: Առողջապահության վրա կատարվող ծախսերը ԱՄՆ-ում հասնում են ՀՆԱ-ի 17%-ը:

Շվեցարիայում նույապես գործում է ՊԲԱ համակարգ: Այստեղ բոլոր քաղաքացիներն ունեն առողջության ապահովագրություն, իսկ ապահովագրա-վճարները բոլորի համար նույնն են՝ անկախ նրանցից յուրաքանչյուրի հիվանդանալու հավանականության: ՊԲԱ իրականացվում է 109 պետական ապահովագրական ընկերությունների կողմից, որոնք պարտավոր են ապահո-վել պետության կողմից սահմանված բուժճառայությունների ծածկույթը: Շվե-ցարիայում նաև գործում է կամավոր ծածկույթ, որն ընդգրկում է պարտադիր ապահովագրության փաթեթում ընդգրկված ճառայությունների մատուցման ծախսերը: Շվեցարիայում բժշկական ապահովագրություն ունենալը պարտա-դիր է ոչ միայն բոլոր քաղաքացիների, այլև երեք ամսից ավելի երկրի տարած-քում գտնվող բոլոր անձանց համար:

ՀՀ-ում քաղաքացիներին երաշխավորվում է անվճար օգտվել որոշակի բժշկական ճառայություններից, սակայն առողջապահական հայրենական համակարգը ի վիճակի չէ բավարարել բնակչության բոլոր առողջապահական կարիքները, քանի որ տրամադրված դրամական միջոցները չափազանց սուղ են և օգտագործվում են ոչ ռացիոնալ կերպով: ՀՀ-ում ՊԲԱ ներդրման հարցը շրջանառվում է շուրջ 15 տարի, որի ընթացքում մի շարք փորձեր են կատարվել ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի և այլ շահագրգիռ կառույցների կողմից, որոնք, սակայն առայժմ դրական արդյունք չեն արձանագրել: Մեծ հաջողությունների չեն հասել նաև կամավոր բժշկական ապահովագրությամբ զբաղվող սակավաթիվ ընկերություններ, որոնց մեծ մասը ժամանակի ընթաց-քում աստիճանաբար հրաժարվել է այս ոլորտում շարունակել գործունեու-թյունը: Ցավոք ՀՀ-ում չկա բժշկական ապահովագրությանը վերաբերող առան-ձին օրենք, և այս ոլորտն առաջնորդվում է ընդհանուր ապահովագրական օրենսդրությամբ:

Վերջին տարիների տվյալները վկայում են, որ կամավոր բժշկական ապահովագրության ծրագրերից մեր երկրում հիմնականում օգտվում են միջինից բարձր եկամուտ ունեցող և գործատուի կողմից ապահովագրված քաղաքացիները, որոնց մեծ մասն այս կամ այն ձևով առնչվում է միջազգային

³ Экономика и управление здравоохранение /Л.Ю. Трушкина, Л.М. Демьянова, Ростов на Дону: Феникс, 2003.

կառույցների հետ, որոնք էլ նման ապահովագրության պատվիրատուն են: Ցավոք, այս խավը կազմում է երկրի ընդհանուր բնակչության մոտ 0,5%-ը: Այդ պատճառով էլ ԿԲԱ էական դեր չի խաղում առողջապահության համակարգի ֆինանսավորման մեջ: Կարևորագույն խոչընդոտներից է նաև բժշկական ապահովագրության սկզբունքների և առավելությունների վերաբերյալ հանրային իրազեկության խիստ ցածր մակարդակը: ՀՀ-ում պետական ծառայողները սոցիալական փաթեթ են ստանում, որի շրջանակներում հնարավոր է ստանալ նաև բժշկական ապահովագրություն: Սակայն, ինչպես արդեն փորձը ցույց է տվել, դրանից օգտվելն այնքան էլ հեշտ չէ, երբեմն նույնիսկ անհնար: Սակայն կարևոր կետերից չէ նաև այն փաստը, որ ապահովագրողների և բուժօգնության հարաբերությունները չունեն հստակ կանոնակարգում, իսկ ԿԲԱ լայն ներդրման ամենակարևոր սահմանափակումն այն է, որ այդ կարգի ապահովագրությունը մատչելի է բնակչության միայն 25-30%-ին:

Ապահովագրական բժշկության մեխանիզմների կիրառությունը հաշվում է շուրջ 150 տարիների պատմություն⁴: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, շուկայական տնտեսության պայմաններում անցումը դեպի ապահովագրական բժշկությունն անշրջելի է և վճռական նշանակություն ունի առողջապահական ծառայությունների շուկայի զարգացման համար: Սա պայմանավորված է այն համգամանքով, որ հասարակության լայն հատվածների համար ապահովվում են որոկյալ բժշկական ծառայություններ ստանալու երաշխիքները, լուծվում է դեպի առողջապահության համակարգ մեծ ֆինանսական միջոցների ներգրավման խնդիրը և այլն: ՀՀ առողջապահական համակարգը ֆինանսավորվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Ներքին աղբյուրներն են ՀՀ պետական բյուջեն, մասնավոր առողջապահական վճարները, համավճարները, բրժրշկական ապահովագրությունը, իսկ ներքին աղբյուրներն են՝ միջազգային դրամաշնորհները և դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը: Վերջին տարիներին ՀՀ առողջապահության համակարգի պետական ֆինանսավորման բացարձակ մեծությունները աճել են, սակայն առողջապահական ծախսերի մեծությունը որպես ՀՆԱ տոկոս և որպես պետական բյուջեի ծախսերի մասը շարունակում է փոքր մնալ (ՀՆԱ-ի նկատմամբ ընդամենը՝ 4,4%):

ՀՀ-ում առողջապահության պետական ֆինանսավորումն իրականացվում է ըստ 5 դասերի՝

- բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ,
- արտահիվանդանոցային ծառայություններ,
- հիվանդանոցային ծառայություններ,

⁴ Лисецин Ю.П., Общественное здоровье и здравоохранение: учебник, 2-е изд., М., ГЕТАР-Медиа, 2010.

- հանրային առողջապահական ծառայություններ,
- այլ դասերի պատկանող

Դրանցում մեծ կշիռ ունեն հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայությունները, որոնց ուղղվում են առողջապահության բյուջեի համապատասխանաբար 38% և 33%: Բժշկական ապրանքները, սարքերը և սարքավորումները կազմում են 5,1%, հանրային առողջապահական ծառայությունները՝ 4,4%:

Առողջապահական բնագավառի ծախսերը 2014թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված են՝ 80,659.9 մլն դրամ: Ծախսերի աճը 2013թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ 8,676.1 մլն դրամ՝ 12,0%:

ВЛИЯНИЕ СИСТЕМЫ МЕДИЦИНСКОГО СТРОХОВАНИЯ КАК МЕХАНИЗМА СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ

Венера Восканян

Доцент кафедры физвоспитания, чрезвычайных ситуации и гражданской обороны (ЧС и ГО) Армянского государственного экономического университета

Ключевые слова: медицинское страхование, обязательное страхование, социальное обеспечение, социальная защита, система государственного социального страхования.

Статья посвящена понятию медицинского страхования, методам, принципам и видам организации медицинского страхования.

В статье рассматривается экономическое содержание, условия применения и методы механизмов решения задач социального обеспечения общества со стороны государства. Представлены основные определяющие в системах социального обеспечения и государственного социального страхования. В решении проблем социальной защиты подчеркнута важность медицинского страхования. Подробно обсуждается роль и значение системы медицинского обязательного страхования. Отмечено, что различные типы медицинского обязательного страхования являются гарантией решения различных социальных проблем и обеспечения экономического развития в странах переходной экономикой. Подчеркнуто, что медицинское обязательное страхование часто успешно заменяет или дополняет прямое вмешательство государства в сферу социальной защиты, что позволяет уменьшить государственные финансовые расходы по программам социальной защиты.

Исследуя опыт зарубежных стран по внедрению медицинского страхования, в статье предлагается обращать большое внимание на вопрос о внедрении

медицинского страхования в Республике Армения, что будет способствовать получению более доступной медицинской помощи населением целевому использованию финансовых ресурсов и повышению эффективности медицинской помощи.

INTRODUCING OBLIGATORY MEDICAL INSURANCE AS A MECHANISM FOR SOCIAL DEFENSE

Venera Voskanyan

*Associate Professor of Physical Training, Emergency and Civil Defense Department
at Armenian State University of Economics*

Keywords: private insurance, obligatory insurance, social security, social protection system of the state social insurance.

The article is devoted to the idea of medical insurance, to its ways of organization, methods and principles.

This article illustrates economic essence of mechanism, methods and ways in practice and theory to solve problems of social defense of the society by a state. Main determinations of social protection and state social insurance systems have been presented.

A detailed review was done for a role and importance of an obligatory medical insurance in this regard.

An importance of private insurance in solving social protection problems has been emphasized. A detailed review was done for a role and importance of an obligatory insurance in this regard. It has been stated that introducing various types of obligatory insurance especially in countries with developing economy is one of the guarantees for solving different social problems and providing economic development. It has been noted that often an obligatory insurance stands instead of direct state involvement for social protection of a population this providing a chance for reducing state expenses for social protection programs.

Investigating the experience of foreign countries concerning the medical insurance, it is suggested to pay a great attention on the problem of investment of the medical insurance in the Republic of Armenia, which will assist to make the medical aid for the population more available, to use financial resource more purposefully and to raise the efficiency of medical aid.

**ՔԱՂԱՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Արա Մադոյան

*Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանի հայցորդ*

Բանալի բառեր՝ մեթոդ, քաղաք, ներդրում, գնահատական, զարգացում, ներդրումային գրավչություն, ակտիվություն, ներդրումային միջավայր

Հայտնի է, որ կարճաժամկետ ներդրումները, ձեռնարկությունների, տնտեսության առանձին ոլորտների և տարածքների զարգացման աղբյուրներն են, իսկ երկարաժամկետ ներդրումների հիման վար են ձևավորվում ինչպես ձեռնարկատիրական, սոցիալ-տնտեսական, այնպես էլ նորարարական ծրագրեր, որոնք ապահովում են որոշակի սոցիալ-տնտեսական արդյունքներ, որպես կանոն, այն բանից հետո, երբ ներդրումները իրացվում են և անցնում է տվյալ տեսակի արտադրանքի թողարկման կամ ծառայության մատուցման համար անհրաժեշտ ժամանակը: Հասարակական վերարտադրության տեսանկյունից բնակչության խնայողությունները յուրահատուկ ներդրումային ռեսուրսներ են, քանի որ դրանց ներգրավման և օգտագործման ներուժը վերջին հաշվով որոշվում է էլնելով ոչ այնքան ֆինանսական ցուցանիշներից, որքան որ պետական և մասնավոր ֆինանսական համակարգերի նկատմամբ ներդրողների վստահության աստիճանով: Բնակչության դրամական եկամուտների և տնային տնտեսությունների վերջնական սպառման փաստացի տարբերությունն էլ ձևավորում է ներդրումային ներուժը, դրա մասշտաբներն ու աճի տեմպը:

Այդ մեծությունը ձևավորում է բնակչության պաշտոնապես չգրանցված ներդրումներից, առկա դրամական միջոցներից, այլ եկամուտներից և սպառողական ծախսերից, որոնք կատարվում են ճանապարհորդության, տրանսպորտային ծառայությունների, ապրանքների և արժույթների, ինչպես նաև այլ գնումներից: Հետևաբար, բնակչության եկամուտների զգալի մասը դուրս է գալիս քաղաքացու ապրելավայրի, մեր դեպքում՝ քաղաքի ֆինանսական հոսքերից: Սա խոսում է այն զգալի պաշարների առկայության մասին, որոնք գտնվում են բնակչության խնայողությունների արդյունավետ վերափոխման ճանապարհով ֆինանսական միջոցների համակարգում: Դրանք այն ներդրումներն են, որոնք ուղղվում են դեպի տնտեսության իրական հատված¹:

Քաղաքի ավելի ընդհանուր ներդրումային քաղաքականությունը իր մեջ ներառում է հետևյալ հիմնական տարրերը.

¹ Makolov, V.I. Dominants of the investment policy of the region during the post crisis period / V.I. Makolov // Economic analysis: the theory and practice. – 2010. – №36. – p. 19–24.

- ✓ օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի մշակում և ընդունում, որը կարգավորում է ներդրումային գործընթացը,
- ✓ մասնավոր կապիտալի անվտանգությունը ապահովող երաշխիքներ, հարկային և այլ արտոնություններ, հարկային և վարձակալության վճարների հետաձգում (արտոնություն), ֆինանսական խթաններ,
- ✓ ներդրումային գործունեության կազմակերպական կառույցների աջակցության ստեղծում,
- ✓ զարգացման աջակցություն, փորձաքննության և ներդրումային ծրագրերի աջակցության իրականացում,
- ✓ առևտրային բանկերին երաշխիքների տրամադրում, որոնք ֆինանսավորում են ներդրումային ծրագրեր,
- ✓ բնակչության միջոցների համակենտրոնացում քաղաքային արժեթղթերի թողարկման միջոցով,
- ✓ տարածաշրջանային ներդրումային ենթակառուցվածքների ինստիտուտների կայացման խրախուսում:

Քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը հիմնականում որոշվում է նորարարությամբ, տեղեկատվության և գիտության գործոնների առկայությամբ և դրանց ներդրման հնարավորությամբ: Քաղաքի նորարարական զարգացումը ենթադրում է դրա համապատասխան արտացոլումը սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում և քաղաքի արդյունավետ զարգացման համակարգի ստեղծումը:

Նման մոտեցման դեպքում, ՀՀ քաղաքների կառուցվածքային փոփոխությունների և հետագա տնտեսական աճի կարևորագույն պայմաններից է դառնում ուշադրությունը <<նոր տիպի>> զարգացմանը: Գիտահետազոտական աշխատանքների ձևավորումը և դրանց ինտեգրումը արդյունաբերական համալիրներում իրականացվում է տարբեր պայմաններում, շուկայական տարբեր միջավայրերում և սեփականության տարբեր ձևերի զուգակցմամբ: <<Ներդրումային միջավայր>> հասկացությունը արտացոլում է բարենպաստության այն աստիճանը, ինչը առկա է այս կամ այն երկրում (քաղաք, արդյունաբերական հանգույց) ներդրումների նկատմամբ, որոնք կարող են իրականացվել:

<<Ներդրումային միջավայրի>> գնահատումը հիմնված է որոշակի գործոնների վերլուծության վրա, որոնք բնորոշում են ներդրումային միջավայրը, և խթանում են տնտեսական աճը: Սովորաբար օգտագործվում են ներդրումային միջավայրի էլքային տարրերը (կապիտալի ներհոսք և արտահոսք, գնաճի և տոկոսադրույքների մակարդակ, ՀՆԱ-ում խնայողությունների մասնաբաժին), ինչպես նաև մուտքային տարրերը, որոնք բնութագրում են տվյալ երկրի

ներուժը ներդրումների ներգրավման և դրանց իրականացման ռիսկի համատեքստում:

Դրանցից հիմնականներն են.

- ❖ բնական ռեսուրսները և շրջակա միջավայրի վիճակը,
- ❖ աշխատուժի որակը,
- ❖ ենթակառուցվածքների զարգացման մակարդակը,
- ❖ քաղաքական կայունությունը և կանխատեսելիությունը,
- ❖ պետական բյուջեն, արտաքին պարտքը,
- ❖ պետական կառավարման որակը,
- ❖ օրենսդրության, տնտեսական կյանքի կարգավորման ամբողջականությունը և որակը,
- ❖ օրենքի պահպանման մակարդակը,
- ❖ սեփականության իրավունքի պաշտպանությունը,
- ❖ հարկային համակարգի որակը:

Տարածաշրջանային մակարդակով այլ տնտեսական հարաբերությունների համակարգում ներդրումային միջավայրը դրսևորվում է ձեռնարկող համակարգերի միջոցով՝ բանկեր, արհմիություններ²:

Այս մակարդակում, քանի որ տեղի է ունենում ներդրումային միջավայրի ընդհանրական գնահատում այն համադրվում է՝ տնտեսական, իրավական, մշակութային կապերի համատեքստում ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայրենական ներդրողների միջավայրի հետ: Ներդրումային միջավայրը վայր է, որտեղ տեղի են ունենում ներդրումային գործընթացներ: Այն ձևավորվում է մի շարք օրենսդրական, սոցիալ-քաղաքական փոխկապակցվածության ազդեցության ներքո, որոնք որոշում են առանձին երկրի, քաղաքի, շրջանի) ներդրումային գործունեության պայմանները: Ներդրումային միջավայրի գնահատականները սկսում են տատանվել բարենպաստ և ոչ բարենպաստ սահմաններում: Բարենպաստ է այն միջավայրը, որը նպաստում է ներդրողների ակտիվ գործունեությունը և խթանում կապիտալի ներհոսքը:

Ոչ բարենպաստ միջավայրը մեծացնում է ռիսկը ներդրողների համար, ինչը հանգեցնում է կապիտալի արտահոսքին և ներդրումային գործունեության նվազեցմանը:

Մեր երկրում օտարերկրյա ներդրումների խնդիրը համեմատաբար նոր է, և հետևաբար, բարդ է, և ոչ բավարար մշակված:

² Алешина, А.А. Привлекательный климат: разработка методики выбора приоритетов для создания привлекательного инвестиционного климата регионов // Российское предпринимательство. – 2008. – №4. – выпуск 2. – 44 с.

Հասկանալի է, որ բարենպաստ ներդրումային միջավայրի աստիճանը կարևոր է, եթե ոչ որոշիչ գործոն, երբ, հաշվի է առնվում այս կամ այն քաղաքի ներդրումային միջոցները:

Խնդրի ավելի խորը ուսումնասիրությունը և գոյություն ունեցող մոտեցումները տնտեսական համակարգի համատեքստում պետք է համակարգվի՝ ելնելով ներդրումային գնահատականի պոտենցիալից և ներդրումային միջավայրից, հաշվի առնելով գոյություն ունեցող մեթոդի առավելություններն ու թերությունները: Այն գործոնները, որոնք ազդում են ներդրումային միջավայրի վրա, դասակարգվում են ըստ հասարակության կողմից հնարավոր ազդեցությունների.

- ✓ օբյեկտիվ (կախված է բնակլիմայական պայմաններից, աշխարհագրական դիրքից, հազեցած էներգետիկ և հումքային աղբյուրներից և այլն),
- ✓ սուբյեկտիվ (կախված մարդկային գործունեության կառավարումից):

Ներդրումային միջավայրը կապված է ներդրումային քաղաքականության հետ: Ներդրումային քաղաքականությունը ներկայացնում է մի շարք համակարգերի կազմակերպչական և տնտեսական ազդեցություն երկրի, քաղաքի, շրջանի կամ կազմակերպության մակարդակներում, որի նպատակն է ստեղծել օպտիմալ պայմաններ ներդրումների համար:

Այսպիսով, ներդրումային միջավայրը հանդես է գալիս որպես ներդրումային քաղաքականության օբյեկտ: Մի կողմից, այն սահմանում է ներդրումային քաղաքականության զարգացման պայմանները, իսկ մյուս կողմից, այն հանդիսանում է դրա արդյունքը³:

Այսպիսով ներդրումային միջավայրի առավել բարենպաստ վիճակը ազդում է ներդրումային քաղաքականության վրա, նրա հետագա կատարելագործման իմաստով: Գոյություն ունեն տարբեր մեթոդներ գնահատելու ներդրումային միջավայրը: Դրանք հիմնված են տնտեսական, քաղաքական և ֆինանսական ցուցանիշների վրա: Ներդրումային վարկանիշը տրվում է երկրին, քաղաքին կամ շրջանին, որն ունի համապատասխան ցուցանիշների փաթեթ: Վարկանիշի բարձրացումը շատ կարևոր ցուցանիշ է ներդրողների համար: Բայց, շատ ներդրողներ չեն կարող ինքնուրույն իրականացնել վերլուծություններ, այդ պատճառով ներդրողները սկսում են կողմնորոշվել վարկանիշային գործակալությունների միջոցով: Բարձր ցուցանիշը միշտ կապված է ներդրումների ներհոսքի հետ, որոնք անհրաժեշտ են տնտեսական աճի ապահովման նպատակով⁴:

³ Сошников, И.В. Классификация инвестиций и формирование инвестиционного рынка в регионах России / И.В. Сошников // Региональная экономика: теория и практика. – 2007. – №3. – С. 20–24.

⁴ Bulgakova, L.N. Methods of an estimation of the investment appeal of enterprises and regions / L.N.Bulgakova // Finance and credit. – 2009. – №15. – P. 57–62.

Քաղաքի ներդրումային միջավայրը պահանջում է ապահովել որոշակի պայմաններ ներդրումային գործընթացը հաջողությամբ իրականացնելու համար:

- Քաղաքի ներդրումային միջավայրի վրա ազդում են հետևյալ գործոնները.
- ✓ մակրոտնտեսական (ՀՆԱ-ի դինամիկան, գնաճի և տոկոսադրույքների մակարդակը, խնայողությունները ՀՆԱ-ի մեջ),
 - ✓ նորմատիվ իրավական (իրավական դաշտի որակը, կայունությունը և քաղաքային օրենսդրությունը, կենտրոնական և տեղական իշխանության քաղաքականությունը, սեփականության իրավունքի պաշտպանվածության աստիճանը, ներդրողների իրավունքների պաշտպանությունը, մենաշնորհների առկայությունը տնտեսության մեջ, կորպորատիվ կառավարման աստիճանը),
 - ✓ հարկային (հարկային համակարգի որակը, հարկային բեռի մակարդակը),
 - ✓ տեղեկատվական աջակցություն (տեղեկատվական համակարգերի ձևավորման ապահովում, ամբողջ քաղաքում ներդրումային հնարավորության տեղեկատվության մատչելիություն, ընկերությունների վերաբերյալ տեղեկատվություն, տեղեկատվության համապատասխանություն, տեղեկատվության աղբյուրի վստահելիություն, ՁԼՄ-ների գովազդատեղեկատվական արշավների իրականացում, ներդրումային ցուցահանդեսների, սեմինարների, դասախոսությունների, ներդրումային առաքելությունների կազմակերպում),
 - ✓ երկրի անկանխատեսելիությունը և անթափանցիկությունը ներդրողների հանդեպ (երկրի անթափանցիկությունը ներդրողների հանդեպ ընկալվում է, որպես ամբողջ երկրի համար ընդունված ֆորմալ գործոնների բացակայություն դեպի համաշխարհային և ազգային կապիտալի գործունեություն),
 - ✓ միջազգային տնտեսական և ֆինանսական կազմակերպությունների վճարման արտաքին պարտքը, այս գործոնը կարևոր դեր է խաղում երկրում ներդրումային միջավայրի համատեքստում:

Նշված գործոնները ներդրումային գործունեության ժամանակ կարող են ունենալ ինչպես խթանող, այնպես էլ դանդաղեցնող ազդեցություն: Այսպիսով համախառն քաղաքային արդյունքի (ՀՔԱ) կրճատումը արտացոլվում է արդյունաբերական արտադրության վրա, այն, որպես կանոն, դրա անկման և երկրի (քաղաքի) տնտեսական անկայունության աստիճանի դրսևորումն է⁵: Բարձր գնաճը բացասաբար է անդրադառնում ձեռնարկությունների ներդրումային կարողությունների վրա, այսինքն տեղի է ունենում ամորտիզացիայի

⁵ Ройзман, И.Н. Оценка эффективности инвестиционных проектов: учет региональных рисков, Инвестиции в России. – 2009. – №10. – С. 34–46.

արժեզրկում, եկամուտի հարկային դրույքաչափերի իրական աճի ավելացում: Գնաճը հանգեցնում է նրան, որ անհրաժեշտ է դառնում բարձրացնել աշխատողների աշխատավարձերը և հանգեցնում է շրջանառու միջոցների պահանջի աճին: Արդյունքում նվազում են ներդրումային հնարավորությունները, հատկապես ձեռնարկությունների սեփական միջոցների հաշվին կատարվող ներդրումները:

Բարձր բանկային տոկոսադրույքները և հարկային դրույքաչափերը վատացնում են ներդրումային պայմաններն իրական հատվածում:

Քաղաքում ներդրումային գործունեությունը ակտիվանում է համախառն քաղաքային արդյունքի աճի, ցածր գնաճի, ինչպես նաև բանկային ցածր տոկոսադրույքների և բնակչության խնայողությունների ավելացման դեպքում:

Եթե ներդրումային մթնոլորտը երկրում անբարենպաստ է, ապա բարձրանում է ներդրումային ռիսկը, երկրները կամ քաղաքները որոնք ներդրումների կարիք ունեն պետք է իրականացնեն զգալի ծախսեր օտարերկրյա կապիտալի ներգրավման համար, քան այն երկրները որոնք ունեն բարենպաստ ներդրումային միջավայր⁶:

Ներդրումային գործունեությունը խոչընդոտող գործոնները (անբարենպաստ ներդրումային միջավայր), իր մեջ ներառում է.

- ✓ երկրում քաղաքական անկայունությունը,
- ✓ սոցիալական լարվածությունը (էթնիկ և կրոնական անկարգությունները, գործադուլները, կոռուպցիայի մակարդակը, կազմակերպված հանցագործ խմբերի առկայությունը, բյուրոկրատիան, կյանքի որակի իջեցումը հասարակության մեծամասնության մոտ),

Բարենպաստ ներդրումային միջավայրի համար առանձնահատուկ տեղ է զբաղեցնում սոցիալ-տնտեսական զարգացման կայունության մակարդակը: Բազմաթիվ երկրներում իրավական ակտերի անկատարությունը և դրանց հաճախակի փոփոխությունները խոչընդոտում են ներդրումային գործընթացը կամ վատացնում են դրանց իրականացման պայմանները:

Անբարենպաստ ներդրումային միջավայր ունեցող քաղաքն ունի դրամական հոսքերի, ներդրումների ներգրավման, օտարերկրյա գործընկերների հետ աշխատելու ցածր մակարդակ: Քաղաքի ներդրումային գրավչության կարևոր գնահատական է ներդրումային որոշման ընդունումը: Գնահատման իրականացման կոռեկտությունից են կախված այն հետևանքները, որը կրում է ներդրողը, քաղաքը և երկրի տնտեսությունը: Յուրաքանչյուր ներդրումային օբյեկտ գտնվում է քաղաքի որոշակի շրջանում և գործում է որոշակի պայմաններով: Ներդրումներ կատարելու որոշումներ կայացնելու տեսանկյու-

⁶ Батищева, Г.А. Методика определения инвестиционной привлекательности регионов, Экономический анализ: теория и практика. – 2009. – №19. – С. 56–61.

նից որքան բարդ է իրավիճակը, այնքան ներդրողները պետք է հիմնվեն տվյալ քաղաքի ներդրումային միջավայրի փորձագիտական գնահատականների վրա: Քաղաքի գոյություն ունեցող ներդրումային գրավչության գնահատման մոտեցումների շրջանակներում կարելի է առանձնացնել մի շարք մեթոդներ, որոնք օգտագործվում են բացահայտելու այդ գնահատականները և պայմանները: Դրանք կարելի է առանձնացնել երեք մեծ խմբերի.

1. Տնտեսամաթեմատիկական մեթոդներ:
2. Գործոնային վերլուծության մեթոդներ:
3. Փորձագիտական գնահատականների մեթոդներ:

Առաջին խումբը ներառում է՝ կորեկյացիոն և դիսպերսիայի վերլուծությունները, մաթեմատիկական և օպտիմալացման մեթոդները, միջճյուղային ներդրումային հավասարակշռության տարբեր մեթոդներ:

Գործոնային վերլուծությունը անհրաժեշտ է, երբ գոյություն ունեն մեծ թվով տարբեր տեսակի ցուցանիշներ: Մեթոդի իմաստը կայանում է նրանում, որպեսզի հնարավոր դառնա կազմելու համախմբված ֆինանսական խմբեր: Հետագա աշխատանքները իրականացվում են ոչ թե առանձին ցուցանիշներով, այլ ընդլայնված գործոնային խմբերով:

Փորձագիտական գնահատականների մեթոդը ամենատարածված մեթոդներից մեկն է: Այս մեթոդի գլխավոր առավելությունը մյուս մեթոդների համեմատությամբ կայանում է նրանում, որ փորձագետը կարող է օգտվել ոչ միայն ժամանակային վիճակագրական տվյալների վրա հիմնված տեղեկատվությունից, այլ անկանոն, մեկանգամյա տեղեկատվությունից, ինչը կրում է զուտ որակական բնույթ: Տվյալ պարագայում քաղաքի ներդրումային գրավչությունը ենթադրում է բազմակողմանի վերլուծություն՝ հիմնված ոչ միայն քաղաքի քանակական բնութագրերի վրա, այլ նաև ղեկավարների և մասնագետների փաստարկված դատողությունների վրա, ովքեր ծանոթ են իրավիճակին և զարգացման հեռանկարներին: Այս մեթոդի վերլուծության բարդությունը կայանում է չափանիշների սուբյեկտիվ գնահատման և գործոնների կշիռների որոշման մեջ:

Գործոնային վերլուծության և փորձագիտական գնահատականների մեթոդները թույլ են տալիս դասակարգել քաղաքներն ըստ խմբերի. որոնք ունեն նմանատիպ ներդրումային գործունեության պայմաններ: Որպես այս գործունեության հետևանք կազմվում է վարկանիշ, որոնք քաղաքների ցուցանիշներից ելնելով դասվում են մեկ խմբի մեջ կամ միևնույն հարթության վրա: Նրանցից յուրաքանչյուրին տրվում է որոշակի աստիճան, առավել գերադասներին տրվում է առաջին աստիճան:

Վարկանիշի և բացարձակ արժեքների հիման վրա իրականացվում է քաղաքների խմբավորումը: Այսպիսով, ներդրումային գործունեության իրա-

կանացման որոշումը այս կամ այն քաղաքում ընդունվում է ներդրողների կողմից, ինչը հիմնված է լինում քաղաքին տրված ներդրումային գրավչության վարկանիշի աստիճանի վրա⁷:

Առանձին մասնագետների կարծիքով վերը թվարկված մեթոդների ընդհանուր թերություններն են.

- ✓ <<ներդրումային գրավչության>> հայեցակարգի մեկնաբանության հակասությունները,
- ✓ ներառված փոփոխականների բազմազանությունը, որոնք բնութագրում են ներդրումային գրավչության աստիճանը,
- ✓ մեթոդական վերլուծության դրույքների վերաբերյալ գիտական հիմնավորվածության բացակայությունը և քաղաքի ներդրումային գրավչության կանխատեսման բացակայությունը,
- ✓ գնահատման համար հավաքագրված ցուցանիշների չհիմնավորվածությունը,
- ✓ օգտագործվող մեթոդների չափանիշների հիմնավորման դժվարությունը,
- ✓ անկանոն գնահատման իրականացումը⁸:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում քաղաքի ներդրումային գրավչության համակարգային մոտեցման հետագա հետազոտման և զարգացման ուղղությամբ:

Քաղաքի ներդրումային գրավչության տարբեր ցուցանիշներից անհրաժեշտ է ընտրել այնպիսի ցուցանիշներ, որոնք համապատասխանում են ամբողջական գնահատման պահանջներին, քանի որ ձևավորված ցուցանիշների ամբողջականությունը արտացոլվում է ամբողջ ներդրումային գործընթացի վրա: Քաղաքի ներդրումային գրավչության վրա ազդում են՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, բնապահպանական, ենթակառուցվածքային, օրենսդրական, նորարարական, արտադրական, զբաղվածության և ֆինանսական գործոնները: Բոլոր վերը նշված գործոնները կարող են վերլուծել ներդրումային վտանգավորության (ռիսկի) աստիճանը տարածքային մակարդակում: Ներդրումային վտանգավորությունը ճյուղային մակարդակում բացառում է քաղաքական, սոցիալական, ենթակառուցվածքային, օրենսդրական և նորարարական գործոնները, ինչը բացատրվում է դրանց չնչին ազդեցությամբ գնահատված ցուցանիշների վրա: Բացի այդ, միևնույն ցուցանիշների ներառումը գործոնների կազմում ինչպես տարածքային, այնպես էլ ոլորտային ներդրումային գրավչության իմաստով արդարացված չէ:

⁷ Naryshkin, S.E. Essence and criteria of the estimation of investment climate of the country and its regions / S.E. Naryshkin // Legislation and economy. - 2010. - №4. - P. 5-12.

⁸ Նույն տեղը, էջ 7:

ИНВЕСТИЦИОННАЯ ПРИВЛЕКАТЕЛЬНОСТЬ ГОРОДА И МЕТОДЫ ЕЕ ОЦЕНКИ

Ара Садоян

*Соискатель Армянского национального университета
архитектуры и строительства*

Ключевые слова: метод, город, инвестиции, оценка, развитие, инвестиционная привлекательность, активность, инвестиционная среда

Автор рассматриваются методы исследования условий, определяющих характер инвестиционной активности города, которые приобретают особое значение как для экономической науки, так и в практике управления региональными системами различных уровней, в связи с тем, что высокий уровень инвестиционной активности является необходимым фактором устойчивого социально-экономического развития города и обеспечения его жителей соответствующими местами работы.

INVESTMENT APPEAL OF THE CITY AND METHODS OF ITS ESTIMATION

Ara Sadoyan

PhD student of State University of Architecture and Construction

Key words: a method, a city, investments, an estimation, a development, investment attraction, activity, investment environment

Author consider methods of research of the conditions defining the character of the investment activity of regions of the Russian Federation which take on special significance, both for economics, and for the practice of management of regional systems of various levels because high level of investment activity is the necessary factor of steady social and economic development and the employment of inhabitants of cities.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՆԱ-Ի ՀԱՇՎԱՐԿՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Արա Մադոյան

*Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանի հայցորդ*

Բանալի բառեր` համախառն ներքին արդյունք, տնտեսական աճի տեմպ, արդյունաբերություն, շինարարություն, առևտուր, ծառայություններ

Քանի որ ՀՀ ԱՎԾ-ն չի հաշվարկում ՀՀ առանձին մարզերի կամ քաղաքների ՀՆԱ-ն, մեր կողմից փորձ է արվել մոդելավորել Երևան քաղաքի ՀՆԱ-ի հաշվարկման գործընթացը:

Երևան քաղաքի ՀՆԱ-ի մեծության որոշման համար հաշվարկվել է ՀՀ տնտեսության համար հետևյալ գծային ֆունկցիան`

ՀՆԱ=F(արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, առևտուր, ծառայություններ, զուտ արտահանում), որտեղ

ՀՆԱ-ն – ՀՀ ՀՆԱ-ի մեծությունն է, մլն դրամ,

Արդյունաբերություն` ՀՀ արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալն է, մլն դրամ,

Գյուղատնտեսություն` ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի թողարկման ծավալն է, մլն դրամ,

Շինարարություն` ՀՀ շինարարության ոլորտի թողարկման ծավալն է, մլն դրամ,

Առևտուր` ՀՀ առևտրի ոլորտի ծավալն է, մլն դրամ,

Ծառայություններ` ՀՀ ծառայությունների ոլորտի ծավալն է, մլն դրամ,

Զուտ արտահանում` ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների տարբերությունն է, մլն դրամ:

Նշված մոդելի մեջ տեղադրելով Երևան քաղաքի համապատասխան ցուցանիշները հաշվարկելու ենք Երևան քաղաքի ՀՆԱ-ն:

Հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների բազան ընդգրկում է 2003-2013թթ.:

Հաշվարկներն իրականացվել են Eviews 8.1 ծրագրային փաթեթի օգնությամբ:

Հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների բազան ներկայացված է աղյուսակ 1-ում:

ՀՀ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, առևտրի, ծառայությունների, զուտ արտահանման ծավալները 2003-2013թթ., մլն դրամ¹

Տարիները	Արտահանում	Ներմուծում	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Ծառայություններ
2003	522,366	812,890	349,504	365,875	254,780	184,675	340,435.10
2004	567,324	864,345	430,824	423,312	296,610	220,943	400,539.70
2005	646,157	969,591	427,256	489,406	440,254	255,161	464,181.90
2006	620,459	1,042,560	495,450	458,607	628,592	301,999	574,169.20
2007	604,210	1,232,970	573,210	473,002	772,787	342,717	716,410.10
2008	536,915	1,450,690	574,848	481,421	903,038	413,071	845,580.10
2009	486,154	1,351,048	524,482	428,208	584,436	399,811	922,739.90
2010	720,764	1,568,067	580,069	542,431	599,495	446,611	966,700.00
2011	897,521	1,789,009	767,881	647,806	491,082	476,695	1,078,344
2012	983,174	1,974,185	763,941	679,515	497,985	508,630	1,201,429
2013	1,153,245	2,052,984	826,292	735,442	450,267	546,247	1,331,942

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից դիտարկվող ժամանակահատվածում արդյունաբերության ծավալն աճել է 2.01 անգամ, գյուղատնտեսության ծավալը՝ 2.36 անգամ, շինարարությանը՝ ոլորտն աճել է 1.76 անգամ, առևտրինը՝ 2.95 անգամ, ծառայություններինը՝ 3.91 անգամ:

Մոդելի հաշվարկային արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

ՀՆԱ-ի հաշվարկման մոդելի հաշվարկային արդյունքները²

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ սխալ	t-վիճ	Հավանականություն
Արդյունաբերություն	1.250868	0.184857	6.766690	0.0066
Առևտուր	1.151247	0.554141	2.077536	0.1293
Ծառայություններ	0.900282	0.190259	4.731879	0.0179
Գյուղատնտեսություն	0.916740	0.132215	6.933704	0.0062
Շինարարություն	1.097287	0.047724	22.99220	0.0002
Զուտ արտահանում	-0.277382	0.088229	-3.143893	0.0515
Ազատ անդամ	-38695.12	30372.39	-1.274023	0.2924
R ² = 0.98				

Աղյուսակ 2-ից ակնհայտ է դառնում, որ բոլոր փոփոխականները վիճակագրորեն նշանակալի են բացի մոդելի ազատ անդամից: Մոդելի ազատ

¹ Տվյալները վերցված են www.armstat.am կայքից

² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից

անդամի ազդեցությունը ՀՆԱ-ի մեծության հաշվարկի մեջ ունի զրոյական ազդեցություն:

Երևան քաղաքի ՀՆԱ-ի հաշվարկման համար անհրաժեշտ է ստացված հաշվարկային գործակիցները բազմապատկել Երևան քաղաքի արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, առևտրի, ծառայությունների, զուտ արտահանման ծավալների հետ:

Աղյուսակ 3

Երևան քաղաքի արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, առևտրի, ծառայությունների, զուտ արտահանման ծավալները 2003-2013թթ., մլն դրամ³

Տարիները	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Ծառայություն	Զուտ արտահանում
2003	209633.8	5700	140532	590960.6	190708.9	-314082
2004	239126	6500	165834	688632.7	243937.3	-282621
2005	307688.8	5900	266418	739155.9	306796.5	-286879
2006	287529.9	5500	419432	706078.4	427532.1	-419520
2007	347399.6	5700	467095	792478.2	522905.3	-597156
2008	362535.7	6600	595089.5	894902.2	636278.3	-856067
2009	302657.9	4900	308552	896198.4	644214.6	-815725
2010	354502.7	5400	228402.9	976756.2	685846.9	-884265
2011	423435.9	6500	232983.3	1091077.5	746268.1	-980999
2012	450104.9	8200	266865.4	1165925.8	845633.8	-1101059
2013	506816.1	8500	262353.5	1218052.3	898662.8	-1109909

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից դիտարկվող ժամանակահատվածում Երևան քաղաքի արդյունաբերության ծավալն աճել է 2.41 անգամ, գյուղատնտեսությանը՝ 1.49 անգամ, շինարարությանը՝ 1.86 անգամ, առևտրինը՝ 2.06 անգամ, ծառայություններինը՝ 4.71 անգամ:

Համադրելով ստացված արդյունքները կարող ենք փաստել, որ 2003-2013թթ. ընթացքում տնտեսության հիմնական ոլորտներից միայն առևտրի և գյուղատնտեսության ոլորտներն են աճի տեմպով ետ մնացել ՀՀ տնտեսության աճի տեմպից, մյուս ոլորտների հետ կապված առկա է նշանակալի աճ:

Երևան քաղաքի ՀՆԱ-ի հաշվարկն իրականացվել է վատատեսական, ընթացիկ և լավատեսական սցենարների հիման վրա:

Ստացված արդյունքները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

³ Տվյալները վերցված են www.armstat.am կայքից


Երևան քաղաքի հաշվարկային ՀՆԱ-ն ըստ վատատեսական, ընթացիկ, լավատեսական սցենարների 2003-2013թթ., մլն դրամ⁴

Տարիները	Վատատեսական	Ընթացիկ	Լավատեսական
2003	144,282.72	1,360,807.78	2,577,333.44
2004	126,469.45	1,577,834.12	3,029,199.48
2005	256,665.11	1,889,353.24	3,522,042.13
2006	517,650.60	2,139,078.61	3,760,507.34
2007	676,844.07	2,501,054.55	4,325,265.83
2008	923,550.45	2,953,059.57	4,982,569.61
2009	591,168.11	2,559,635.14	4,528,103.08
2010	551,199.37	2,686,232.44	4,821,266.51
2011	603,557.73	2,991,333.76	5,379,110.89
2012	704,580.82	3,272,358.35	5,840,137.07
2013	726,695.87	3,448,827.17	6,170,959.70

Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ դիտարկվող ժամանակահատվածում Երևան քաղաքի ՀՆԱ-ն այլ հավասար պայմաններում իր առավելագույն արժեքի ընդամենը 55-60%-ն է կարողացել գեներացնել:

Համեմատելով ընթացիկ սցենարով հաշվարկված Երևան քաղաքի ՀՆԱ-ն ՀՀ ՀՆԱ-ի հետ ստանում ենք որ Երևան քաղաքի ՀՆԱ-ի մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ի մեջ վերջին 10 տարիների ընթացքում նվազել է 83.76%-ից մինչև 80.71%:

Դիտարկենք Երևան քաղաքի և ՀՀ-ի տնտեսական աճի տեմպերը 2004-2013թթ. համար:



Գծապատկեր 1. ՀՀ և Երևան քաղաքի ՀՆԱ-ների փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, տոկոսներով 2004-2013թթ.⁵

⁴ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից

⁵ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից արված հաշվարկների հիման վրա:

Գծապատկեր 1-ից երևում է, որ Երևանի ՀՆԱ-ի աճի տեմպերը գրեթե հավասար են եղել ՀՀ ՀՆԱ-ի աճի տեմպերին դիտարկվող ժամանակահատվածում: Մասնավորապես, 2004-2013թթ. համար Երևանի ՀՆԱ-ի աճի միջին տեմպը կազմել է 10.53%, իսկ ՀՀ ՀՆԱ-ի աճի տեմպը 10.16%: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ ճգնաժամային համարվող 2009թ.-ին երբ ՀՀ տնտեսական անկումը կազմել է -14.1%, Երևան քաղաքի ՀՆԱ-ի անկումը կազմել է ընդամենը -11.9%:

Ամփոփելով ստացված հաշվարկները կարող ենք փաստել, որ Երևանի տնտեսական աճի տեմպը 0.4%-ով ավելի բարձր է ՀՀ տնտեսական աճի տեմպից: Տնտեսության հիմնական ոլորտները ևս Երևան քաղաքում աճում են ավելի արագ տեմպերով քան ՀՀ-ում, բացառությամբ առևտրի ու գյուղատնտեսության ոլորտի: Հաշվարկները ցույց են տալիս նաև, որ աճի նման միտումները բավարար չեն քանի որ Երևան քաղաքի ՀՆԱ-ն կազմում է իր պոտենցիալ (առավելագույն մակարդակի) 55-60%-ը: Երևան քաղաքի ՀՆԱ-ի իր պոտենցիալ (առավելագույն մակարդակը) լիարժեք օգտագործելու համար անհրաժեշտ է ըստ քաղաքային տնտեսության ոլորտների ներդրման գերակայությունների մշակել համապատասխան ներդրումային քաղաքականության ծրագիր:

МЕТОДОЛОГИЯ И ОЦЕНКА ВВП ГОРОДА ЕРЕВАНА

Արա Տադոյան

*Соискатель Армянского национального университета
архитектуры и строительства*

Ключевые слова: валовый внутренний продукт, темп экономического роста, промышленность, строительство, торговля, услуги.

Целью данной статьи является определения четкой методологии для оценки ВВП города Еревана. В данной статье были рассчитаны ВВП города Еревана по трем сценариям- пессимистический, текущий, оптимистический.

METHODOLOGY AND ASSESSMENT OF GDP OF COUNTRY YEREVAN

Ara Sadoyan

PhD student of State University of Architecture and Construction

Key words: Gross domestic product, rate of economic growth, industry, construction, trade, service.

The main purpose of this article is to construct the main methodology for assessment of GDP of the Yerevan. In this article we calculate GDP of Yerevan by 3 scenarios: pessimistic, current and optimistic. On the base of this assessment we can construct investment strategy to include new investments in the city.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Վարդուհի Գաբրիելյան
*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության
տեսության ամբիոնի դասախոս*

Բանալի բառեր պետական ձեռնարկություն, մասնավոր ընկերություն, ազգայնացում, ապապետականացում, սեփականություն, ֆինանսական և իրական ակտիվներ, հասույթ մասնավորեցումից, տնտեսական աճ, արդյունավետություն


21-րդ դարի առաջին տասնամյակի վերջի գլոբալ ճգնաժամը բերեց սոցիալ-տնտեսական փոփոխությունների: Այսօր արդեն ակնհայտ է, որ արևմտյան աշխարհի շուկայական ինստիտուտների գործունեության երկու առաջատար համակարգերն էլ՝ ԱՄՆ-ի համակարգը, որը հիմնված է ազատ շուկայական մրցակցության գաղափարախոսության վրա, և Եվրոպայի սոցիալապես կողմնորոշված համակարգը, չկարողացան ճգնաժամային երեվոլյուցիաների սկզբնական փուլում առաջարկել հակազդեցության համապատասխան միջոցներ: Այնուամենայնիվ, տնտեսության վրա ներգործելու հզոր լծակներ ունեցող պետություններն, ըստ էության, ճգնաժամի պայմաններում դարձան միակ գործուն խոչընդոտը ֆինանսա-տնտեսական փլուզման ճանապարհին:

Ճգնաժամի փուլում տնտեսությանը պետական լայնածավալ միջամտության դրական էֆեկտը դառնում է բացասական կայուն երկարաժամկետ տնտեսական աճի փուլում: Ընդ որում, դեռևս չեն գտնվել համոզիչ փաստարկներ, անկախ տնտեսական դինամիկայի փուլից, մասնավոր սեփականության իրավունքների պաշտպանության, որպես արդյունավետության, երկարաժամկետ ներդրումների և տնտեսական աճի ինստիտուցիոնալ միջավայրի հիմքի, նշանակության վերաբերյալ հիմնադրույթի դեմ:

Տնտեսագիտական տեսությունում մանրամասն քննարկվում են պետությունների կողմից մասնավոր բարիքների (ապրանքների և ծառայությունների) արտադրության և առևտրային հիմունքներով դրանց իրացման պատճառները: Այսպես, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային շուկաներում սրված մրցակցությունը, ինչպես նաև սոցիալիստական և ձախ վերափոխական կուսակցությունների իշխանության գլուխ գալը, որոնց ծրագրերում այդ տարիներին որպես առաջնահերթ խնդիր դրված էր պետական ակտիվության ոլորտի ընդլայնումը, շատ եվրոպական երկրների կառավարություններին մղեցին ազգայնացնել տնտեսության կարևոր ոլորտների մի շարք ընկերություններ՝ դրանց արմատական արդիականացման, տեխնիկական հիմքի նորոգման և մրցունակության էական բարձրացման նպատակով: Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո

Մեծ Բրիտանիայում լեյբորիստական կառավարության կողմից անցկացված ազգայնացումը բերեց տնտեսությունում պետական հատվածի բաժնի 20%-ից ավելի աճի, որը մնաց բավականին բարձր մակարդակի վրա ավելի քան երեք տասնամյակների ընթացքում¹:

Մեփականության ապապետականացման միտում դրսևորվեց հատկապես 1970-1980-ական թթ.: 1980-ական թթ. սկզբին արդյունաբերական զարգացած երկրներում պետական հատվածի միջին տեսակարար կշիռը ՀՆԱ-ում հասնում էր մոտ 9%-ի, իսկ 1997թ. նվազեց մինչև մինչև 5%: Զարգացող առավել աղքատ երկրների խմբում նշված բաժինը նվազեց 15%-ից 1980թ. մինչև 7% 1997թ.: Արևմտյան Եվրոպայի երկրներում անցումը տնտեսության որոշ ճյուղերի ազգայնացումից մասնավորեցման մեծապես պայմանավորված էր ընտրություններում առավել պահպանողական («լիբերալ») քաղաքական կուսակցությունների հաղթանակով: 2000թթ. սկզբներից մասնավորեցվում են պետությանը պատկանող օգտակար հանածոների, առաջին հերթին նավթի և գազի, հանքավայրերը, այդ թվում մասնակիորեն իրականացվել է «Ստատոյլ» նորվեգական պետական ընկերության մասնավորեցումը, մշակվել են երկաթուղային տրանսպորտի, Ճապոնիայում աշխարհի խոշորագույն փոստային բանկերի համակարգի մասնավորեցման նախագծերը: Նման միտումներ նկատվեցին նաև շատ զարգացող երկրներում: Նշված փոփոխությունների մասշտաբները չի կարելի թերագնահատել (նկ. 1):



Նկար 1. Հասույթը մասնավորեցումից: Աշխարհը և ԵՄ-ը (25 երկրներ),

մլրդ. դոլ., 1988-2014թթ.*:

*Տվյալները՝ 30.11.2014թ. դրությամբ:

Աղբյուրը՝ The Privatization Barometer Report 2013, p. 8.

Միաժամանակ, Մերձավոր և Միջին Արևելքի, Աֆրիկայի մի շարք երկրներում ազդեցիկ քաղաքական կուսակցությունների ծրագրերը ենթադրում են

¹ Sté u Megginson W. D. The Financial Economics of Privatization. Oxford: Oxford University Press, 2005. P.12.

պետական սեփականության պահպանում և ամրապնդում տնտեսության կարևոր ճյուղերում:

2013թ. և 2014թ. առաջին տասնմեկ ամիսներին աշխարհում իրականացվել են մասնավորեցման խոշոր գործարքներ: 2013թ. մասնավորեցման վաճառքները կառավարություններին ապահովել են 193,7 մլրդ. դոլ. (146,2 մլրդ. եվրո) համախառն մուտքեր ամբողջ աշխարհում, որն ավելի բարձր է 2012թ. 189,4 մլրդ. դոլ. (145,7 մլրդ. եվրո) ցուցանիշի համեմատ: Մասնավորեցման 163,2 մլրդ. դոլ. (116,9 մլրդ. եվրո) գլոբալ արժեքը 2014թ. սկզբից մինչև դեկտեմբերը ենթադրում է, որ 2014թ. ընդհանուր մուտքերի արժեքը կդարձնի այն չորրորդ կամ հինգերորդ ամենաբարձր ռեկորդային տարին, իսկ 2014թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման խոշոր գործարքների արագացումը կշարունակվի ամբողջ աշխարհում 2015թ.: Բաժնետոմսերի թողարկման միջոցով մասնավորեցմանը բաժին է ընկնում 2013թ. հասույթի ընդհանուր արժեքի ավելի քան երեք քառորդը (77%) և 2014թ. հասույթի ընդհանուր արժեքի գրեթե 90%-ը, մինչդեռ մնացածը բաժին է ընկնում աճուրդներին, նպատակային վաճառքներին, բաժնետոմսերի հետգնումներին և ակտիվների վաճառքին:

2013թ. և 2014թ. որպես առաջատար մասնավորեցնող երկիր հանդես է եկել Չինաստանը, որն ապահովել է ավելի քան \$ 40 մլրդ. դոլ. (մոտ 30 մլրդ. եվրո) հասույթ յուրաքանչյուր տարում: 2013թ. և 2014թ. առաջին տասնմեկ ամիսներին ԵՄ երկրների կառավարությունների, համապատասխանաբար, 67,4 մլրդ. դոլ. (50,1 մլրդ. եվրո) և 59,7 մլրդ. դոլ. (43,64 մլրդ. եվրո) դրամական մուտքերը մասնավորեցումից ներկայացնում են գլոբալ ընդհանուր ցուցանիշի, համապատասխանաբար, 34,8%-ը և 36,6%-ը (աղյուսակ 1):

2014թ. հուլիսից նոյեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում իրականացված մեծ թվով (128) և արժողությամբ [50,8 մլրդ. դոլ. (39,6 մլրդ. եվրո)] մասնավորեցումները զուգորդված մի շարք զանգվածային ծրագրվող վաճառքի հայտարարություններով ենթադրում են, որ ձևավորվում է մասնավորեցման նոր գլոբալ ալիք: Երեք տարիների ժամանակահատվածում՝ 2012թ. հունվարից մինչև 2014թ. նոյեմբերը ներառյալ ամբողջ աշխարհի կառավարությունները ուղղակիորեն կամ անուղղակիորեն օտարել են ավելի քան կես տրիլիոն դոլար (544 մլրդ. դոլ.) արժողությամբ ակտիվներ: 2009թ. հունվարից ի վեր գլոբալ մասնավորեցման ընդհանուր արժեքը գերազանցում է 1,1 տրիլիոն դոլարը, որը շատ ավելին է, քան 1979 թ. Մարգարետ Թետչերի կողմից մեկնարկած մասնավորեցման նոր դարաշրջանի որևէ համեմատելի ժամանակահատվածում: Բացի այդ, այս գլոբալ ալիքը թափ է ստանում, քանի որ մի շարք երկրներ՝ Չինաստանը, Ավստրալիան, Թուրքիան, Հունաստանը, Պորտուգալիան, Իտալիան և Մեծ Բրիտանիան մեկնարկում են նոր խոշոր օտարման ծրագրեր (աղյուսակ 2):

Աղյուսակ 1. ԵՄ երկրների դասակարգումն ըստ մասնավորեցումից ստացված հասույթի, 2013թ. և 2014*թ.:							
2013թ. Երկիրը	Գործարքների թիվը	Արժեք (մլն. եվրո)	Արժեք (մլն. դոլ.)	2014*թ. Երկիրը	Գործարքների թիվը	Արժեք (մլն. եվրո)	Արժեք (մլն. դոլ.)
Միացյալ Թագավորություն	12	12.199	16.277	Միացյալ Թագավորություն	11	8.452	11.650
Հունաստան	4	8.133	11.190	Հունաստան	4	8.314	11.482
Շվեդիա	9	5.612	7.480	Իսպանիա	5	5.272	7.189
Ֆրանսիա	10	4.204	5.664	Իտալիա	4	4.984	6.711
Բելգիա	4	4.185	5.543	Ֆրանսիա	13	4.206	5.729
Պորտուգալիա	6	4.060	5.445	Ֆինլանդիա	4	3.830	5.290
Գերմանիա	5	3.030	4.074	Նիդեռլանդներ	2	1.627	2.204
Իսպանիա	11	2.865	3.861	Պորտուգալիա	3	1.534	2.075
Լեհաստան	13	2.677	3.648	Դանիա	1	1.466	2.007
Դանիա	2	1.492	2.008	Կիպրոս	1	1.083	1.469
Իռլանդիա	1	1.301	1.738	Լեհաստան	7	825	1.097
6 այլ երկրներ	7	369	488	6 այլ երկրներ	8	2.024	2.757
ԵՄ 2013թ. ընդամենը	84	50.128	67.414	ԵՄ 2014*թ. ընդամենը	63	43.618	59.659

* Տվյալները՝ 30.11.2014թ. դրությամբ:

Աղբյուրը՝ Securities Data Corporation (SDC) New Issues and Mergers and Acquisitions database, 2013 and 2014*.

2013թ. ընթացքում մասնավորեցման 193,7 մլրդ. դոլ. (146,2 մլրդ. եվրո) ամբողջական արժեքը «Ճշմարիտ մասնավորեցման» թերևս ամենաբարձր տարեկան մակարդակն է, որն ուղղված չէր 2008-2009 թթ. գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում կառավարությունների կողմից ձախողված ընկերություններին օգնելու նպատակով ձեռքբերած բաժնետոմսերի հետ գնմանը:

Աղյուսակ 2. Ոչ ԵՄ երկրների դասակարգումն ըստ մասնավորեցումից ստացված հասույթի, 2013թ. և 2014*թ.:							
2013թ. Երկիրը	Գործարքների թիվը	Արժեք (մլն. եվրո)	Արժեք (մլն. դոլ.)	2014*թ. Երկիրը	Գործարքների թիվը	Արժեք (մլն. եվրո)	Արժեք (մլն. դոլ.)
Չինաստան	115	31.301	41.308	Չինաստան	124	29.799	40.640
Թուրքիա	4	9.496	12.400	Հոնգ Կոնգ	13	9.275	12.514
Հնդկաստան	49	8.037	10.689	Ավստրալիա	17	7.857	10.304
Ռուսաստանի Դաշնություն	26	8.057	10.543	Թուրքիա	4	7.332	10.000
Ավստրալիա	9	7.479	9.731	Միացյալ Նահանգներ	6	5.557	7.478
Ճապոնիա	3	7.152	8.044	Ռուսաստանի Դաշնություն	17	4.751	6.474
Բրազիլիա	12	5.159	6.793	Սաուդյան Արաբիա	3	4.909	6.125
Միացյալ Նահանգներ	10	4.897	6.415	Հնդկաստան	18	2.843	3.893
Մինգապուր	10	3.238	4.636	Ճապոնիա	3	2.705	3.525
Մալզալիա	11	3.097	3.715	Հարավային Կորեա	7	1.509	2.004
Նոր Զելանդիա	3	2.486	3.267	Մալզալիա	8	1.335	1.821

Հարավային Կորեա	14	2.071	2.748	Կանադա	8	1.096	1.459
Նիգերիա	1	1.911	2.500	Նոր Զելանդիա	2	629	871
Հոնգ Կոնգ	13	1.802	2.378	13 այլ երկրներ	25	1.902	2.602
Ինդոնեզիա	1	998	1.304				
Իրաք	1	978	1.277				
Ֆիլիպիններ	3	859	1.125				
12 այլ երկրներ	37	1.760	2.329				
Ոչ ԵՄ 2013թ. ընդամենը	322	96.032	126.301	Ոչ ԵՄ 2014*թ. ընդամենը	255	73.269	103.512
Աշխարհը 2013թ. ընդամենը	406	146.160	193.715	Աշխարհը 2014*թ. ընդամենը	318	116.886	163.171

* Տվյալները՝ 30.11.2014թ. դրությամբ:

Աղբյուրը՝ Securities Data Corporation (SDC) New Issues and Mergers and Acquisitions database, 2013 and 2014*.

Վերջին տարիներին պետական կապիտալիզմի վերելքը կարևորել է պետության դերը տնտեսությունում: Պարսից ծոցի համագործակցության խորհրդի (GCC, որի կազմում են Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Օմանը, Բահրեյնը, Կատարը և Միացյալ Արաբական Էմիրությունները) երկրներում պետության գլխավոր գործառույթը նավթի և գազի արտահանումից ստացված գերշահույթի վերաբաշխումն է տնտեսությունում: Այդ երկրներում պետությունը հարկադրված չէ հարկել տեղական տնտեսությունը իր գործունեությունը ֆինանսավորելու համար: Նավթարդյունաբերությունը միակ ոլորտը չէ, որ բնութագրվում է պետական գերիշխանությամբ: Պետական սեփականությունը ընդգրկում է նաև տնտեսության այլ ոլորտներ՝ անշարժ գույքի, հեռահաղորդակցության, շինարարության, էլեկտրաէներգետիկայի, տրանսպորտի, ագրոբիզնեսի, կրթական և առողջապահական համակարգերը: Կառավարությունները և պետության կողմից հովանավորվող ներդրումային ֆոնդերը ունեն մասնաբաժիններ տարածաշրջանի բոլոր ընկերությունների ավելի քան մեկ երրորդում: Պետական մարմինների ունեցած մասնաբաժինները տատանվում են 13%-ից (Քուվեյթ) մինչև 35% (Սաուդյան Արաբիա), միջինում՝ 29%: Ծառայությունների ոլորտում մեծամասամբ տիրապետում է մասնավոր սեփականությունը:

Չնայած այն հանգամանքին, որ Պարսից ծոցի տարածաշրջանի երկրներում պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունները, ընդհանուր առմամբ, համարվում են դինամիկ, շահութաբեր և արագ զարգացող, տնտեսական դիվերսիֆիկացման անհրաժեշտություն է առաջանում, քանի որ ըստ գործող պետական վերաբաշխման մոդելը նպաստում է տեղական բնակչության համեմատաբար փոքր մասի ներգրավմանը տնտեսական գործունեությունում: Այս նպատակով անհրաժեշտ է պետության ավելի

քիչ մասնակցություն և մասնավոր հատվածի ավելի մեծ ավանդ տնտեսությունում, ինչին կարելի է հասնել մասնավորեցման միջոցով: Մասնավորեցման նախաձեռնություններ են նկատվում Աբու Դաբիում՝ կոմունալ ծառայությունների մասնավորեցմամբ, Քուվեյթում՝ էներգետիկ ոլորտի մասնավորեցմամբ: Բահրեյնում մասնավորեցման գործընթացը կառավարելու նպատակով ստեղծվել է Սեփականաշնորհման Գերագույն Խորհուրդ: Օմանում կառավարությանը հնարավորություն է տրվում ունենալ «ոսկե մասնաբաժին» մասնավորեցվող ընկերությունում: Ներկայումս ընթացքի մեջ են Սաուդյան Արաբիայի Ավիաուղիների մասնավորեցման ծրագրերը: Մասնավորեցման գործընթացը հիմնականում խոչընդոտվում է բարեփոխումների համար անհրաժեշտ նախադրյալների բացակայության պատճառով, ինչպիսիք են զարգացած ֆոնդային շուկան, օրենսդրական ենթակառուցվածքը, կատարելագործված ֆինանսական ծառայությունների համակարգը և այլն: Ակտիվորեն իրականացվում են իրավական բարեփոխումներ կապված արժեթղթերի շուկայի զարգացման հետ, վերացվել են որոշ կարգավորիչ և վարչական խոչընդոտներ ոչ նավթային արդյունաբերությունը խթանելու նպատակով, բայց պետության դերը տնտեսությունում շարունակում է մնալ վճռորոշ: Հաշվի առնելով պետության բարեկեցության ապահովման դերը, այս երկրներում մասնավորեցումը չի համարվում որպես անհրաժեշտություն, ոչ էլ դիտվում է որպես բարեփոխում, այլ ընդամենը որպես որոշակի ընկերությունների վերակազմավորում:

1990-ական թթ. արդյունաբերական 15 զարգացած և 10 զարգացող երկրներում 78 խոշորագույն ընկերությունների մասնավորեցման վերլուծության ընթացքում հետազոտողները համեմատել են ընկերությունների՝ մինչև մասնավորեցումը և դրանից հետո 3 տարիների գործունեության վիճակագրական ցուցանիշները: Հետազոտության հեղինակների կարծիքով մասնավոր ձեռնարկատիրությանը անցման շնորհիվ հաջողվել է ապահովել աշխատանքի և կապիտալի տեսակարար ծախսերի կրճատում: Բոլոր հաշվարկները վկայում են վիճակագրորեն նշանակալի դրական էֆեկտի առկայության մասին²:

Ավելի կարճ ժամանակահատվածներում տնտեսության մասնավոր և պետական հատվածների հարաբերակցության վրա ազդում են նաև գործարար պարբերաշրջանի զարգացման առանձնահատկությունները: Օրինակ, 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում շատ երկրներում պետությունը մի շարք խոշոր մասնավոր ընկերությունների տրամադրեց զգալի ֆինանսական օգնություն, ընդ որում ստանալով դրանց բաժնետոմսերի «ծանրակշիռ» փաթեթը: Ավելին, շատ երկրներ իրականաց-

² St' u D'Souza J., Megginson W. The Financial and Operating Performance of Newly Privatized Firms in the 1990s // Journal of Finance. 1999. Vol. 54. P. 1397-1438.

րեցին ազգայնացման հակաճգնաժամային միջոցառումներ: 2008թ. վերջին հակաճգնաժամային աջակցության միջոցառումների շրջանակներում տարբեր երկրներ ծախսեցին մոտ 1,4 տրլն. դոլ. Ընկերությունների կապիտալացման և մոտ 880 մլրդ. դոլ. նոր ակտիվների ձեռքբերման վրա:

2010-2011թթ. շատ երկրների կառավարություններ վերադառնում են պետական հատվածի չափերի սահմանափակման ծրագրերին (նկ. 1): Այսօր շատ ընկերություններում, որոնք «փրկվել են» պաշտոնապես սնանկ հայտարարվելուց, ինտեսիվորեն փոխվում են դեկավարման մեթոդները և դեկավարների կազմը, իսկ կառավարությունները մշակում են ընկերությունների հետագա մասնավորեցման ծրագրեր՝ դրանց գործունեության արդյունավետության էական բարձրացման համար:

Անցումը պետական սեփականությանը թույլ է տալիս ընդլայնել բյուջետային սահմանափակումների շրջանակները և տեխնիկական վերազինման պայմաններ ստեղծել ճյուղի ձեռնարկությունների համար: Այդուհանդերձ, ինչպես վկայում է շատ երկրների փորձը պետական ընկերությունների երկարաժամկետ գործունեությունը շատ դեպքերում ի հայտ է բերում վատնողականության ուժգնացում ըստ շուկայական արդյունավետության չափանիշների: Հանրային հատվածում, որպես կանոն, կենտրոնացած են ազգային անվտանգության տեսանկյունից ռազմավարական համարվող ճյուղերը: Դրանով իսկ նախապես ենթադրվում է այդ ճյուղերի կարգավորման այլ նկատառումների (օրինակ, ռազմավարական, ռազմա-քաղաքական) գերակայություն: Դա հատկապես հստակ դրսևորվում է երկկողմանի մոնոպոլիստական իրավիճակում, երբ պետությանը պատկանող ընկերությունն արտադրանք է թողարկում կառավարության գերատեսչությունների պատվերով:

Պետական խոշոր ձեռնարկությունների «արտոնյալ» վիճակը, մրցակցային ուժերի ճնշումից պաշտպանվածությունը թուլացնում են ոչ միայն դրանց զգայունությունը շուկայական ազդանշանների և կարգապահության հանդեպ, այլև ծախքերի կրճատման խթանները՝ ուժեղացնելով կառավարիչների հակվածությունը պետական ձեռնարկությունների կողմից մասնավոր օգուտների տրամադրման շրջանակի ընդլայնմանը և ռենտա-որոնողական վարքին: Մրցակցության սահմանափակումը ոչ լիարժեք պայմանագրային հարաբերությունների դեպքում հանգեցնում է նրան, որ պետական ֆիրմաներում կառավարող անձնակազմի (մասնավոր ընկերությունների կառավարիչների համեմատ) օպտիմալ ռազմավարությունը հաճախ կապված է ոչ ստեղծագործ, միօրինակ որոշումների ընդունման հետ: Նման ֆիրմաների կառավարիչները համեմատաբար քիչ ուշադրություն են դարձնում արտադրության ծախքերը կրճատող նորարարություններին:

Պետական ընկերությունների գործունեությունը ռազմավարական ճյուղերում բնութագրվում է դրանց գործունեության իրական արդյունքների մասին տեղեկատվության մոնոպոլացմամբ: Մ. Ֆիչիոն ուսումնասիրել է այն ընկերությունների գործունեության առանձնահատկությունները, որտեղ թոփ-մենեջերների թվում են խոշոր քաղաքական գործիչներ (նախարարներ, պատգամավորներ և այլն): Նա դրանց անվանում է «ֆիրմաներ, որոնք ունեն քաղաքական կապեր»: Հեղինակի հաշվարկներով պետություններում, որտեղ մեծ է քաղաքական կապեր ունեցող ֆիրմաների տեսակարար կշիռը, նվազ թափանցիկ են տնտեսական գործառնությունները և համեմատաբար բարձր է կոռուպցիայի մակարդակը³: Պետական հատվածը, որպես կանոն, առաջացնում է մրցակցության պայմանների անհավասարություն և ոչ շուկայական հարաբերություններ:

Պետական և մասնավոր ընկերությունների արդյունավետության համադրումը և համեմատական վերլուծությունը հնարավոր է, եթե դրանք թողարկում են համասեռ արտադրանք, և բարդանում է մի շարք գործոնների (արտադրանքի տարբեր տեսականի, շուկայական պահանջարկի ոչ միատեսակ կառուցվածք, ծախսերի հաշվարկի անհամատեղելի մեթոդներ և այլն) պատճառով: Դրա հետ մեկտեղ վերջին տասնամյակների ընթացքում էմպիրիկ հետազոտությունների են ենթարկվել մի շարք ճյուղեր, և այդ հաշվարկների արդյունքները թույլ են տալիս եզրակացնել մասնավոր ձեռնարկությունների համեմատաբար ավելի բարձր արդյունավետության մասին:

Է. Բորդմենը և Է. Վայնինգը համադրելով մասնավոր և պետական ընկերությունների գործունեության արդյունավետության ավելի քան 50 տարբեր հետազոտությունների և սեփական հաշվարկների արդյունքները, եկել են այն եզրակացության, որ տնտեսական գործառնությունների արդյունավետության գործոնների լայն շրջանակի հաշվառման դեպքում խառը սեփականությամբ խոշոր արդյունաբերական ֆիրմաները և ամբողջությամբ պետությանը պատկանող ֆիրմաները ունեն էականորեն ավելի ցածր արդյունավետություն, քան նմանատիպ մասնավոր ընկերությունները⁴:

Խոսքն այն մասին չէ, որ պետության ցանկացած գործունեություն կրում է ոչ արտադրողական բնույթ և մասնավոր ձեռնարկատիրությունը պետք է ամբողջությամբ դուրս մղի այն տնտեսական կյանքից: Չէ որ որոշ հանրային բարիքներ կարող է ապահովել միայն պետությունը: Բացի այդ, պետությունը, օգտվելով կենտրոնացված կառավարման առավելությունից բավարարում է

³ St' u Ficcio M. Politically Connected Firms // American Economic Review. 2006. Vol. 96. P. 369-386.

⁴ St' u Boardman A., Vining A. Ownership and Performance in Competitive Environments: a Comparison of the Performance of Private, Mixed, and State-owned Enterprises // Journal of Law and Economics. 1989. Vol. 32. P. 1-33.

հասարակության պահանջմունքները նյութական և աշխատանքային ռեսուրսների համեմատաբար ցածր ծախսերով: Ժամանակակից տնտեսագիտական տեսությունը ելնում է այն ենթադրությունից, ըստ որի գոյություն չունի սեփականության «համընդհանուր» ձև, որը կգերազանցի սեփականության այլ ձևերին ցանկացած երկրում տնտեսության բոլոր ճյուղերում: Այսպես, եթե ձևավորված չէ կարգավորման և վերահսկողության համապատասխան համակարգ, ապա հանրային հատվածում ծառայություններ մատուցող ձեռնարկությունների և բնական մենաշնորհների մասնավորեցումը կարող է վնաս հասցնել սպառողներին:

Խորհրդային Միությունում ամբողջ տնտեսությունը պետական սեփականություն էր: Նախքան ԽՍՀՄ-ից անջատվելը Հայաստանը սկսել է ստեղծել իր սեփական տնտեսությունը: 1990թ. նոյեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը որոշում ընդունեց «Արդյունաբերական և ոչ արդյունաբերական օբյեկտների սեփականաշնորհման մասին», որը նշանավորեց պետական գույքի լայնածավալ սեփականաշնորհման սկիզբը: Հողի մասնավորեցումը և դրա բաշխումը գյուղացիներին սկսվեց 1991թ. մարտին:

1991թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնց միջոցով կանոնակարգվում էին առևտրի, հասարակական սննդի, կենցաղային սպասարկման և վճարովի ծառայությունների «փոքր» օբյեկտների ու անավարտ շինարարության օբյեկտների ապապետականացման գործընթացները: 1991-1992թթ. ապապետականացվեցին 335 «փոքր» օբյեկտներ, որից 202-ը առևտրի, 95-ը կենցաղսպասարկման, 38-ը հասարակական սննդի ոլորտներից⁵: Դրանց ապապետականացումից ստացվեց 191.2 մլն. ռուբլու հասույթ: 1992թ. կեսերին ընդունվեց «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» օրենքը: 1994-1995թթ. Ապապետականացվեցին «փոքր» օբյեկտների, սննդի, թեթև, տեղական և փայտամշակման արդյունաբերության ձեռնարկությունների և շինարարական համալիրի մեծ մասը, լայն սպառման ապրանքներ թողարկող մեքենաշինական և քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները և անավարտ շինարարության օբյեկտները: Այդ գործընթացը շարունակվեց նաև 1996-1997թթ.: Երկրորդ փուլում (սկսած 1998թ. -ից, երբ շրջանառությունից հիմնականում դուրս եկան նախկինում բաշխված ապապետականացման սերտիֆիկատները), ապապետականացման տեմպերը ավելի չափավոր էին, սուբյեկտների շրջանակը՝ ավելի լայն (օտարերկրյա ներդրողների ավելի լայն ներգրավման հաշվին): Այդ փուլում ապապետա-

⁵ Տե՛ս Մարկոսյան Ա. Պետական ձեռնարկությունների ապապետականացման կառավարում. մեթոդաբանություն, ռազմավարություն և արդյունքներ, Եր.: «Լույս» հրատ., 1997, 150-202 էջեր:

կանացվեցին առաջին փուլում չապապետականացված մեքենաշինական, քիմիական, մետաղագործական ձեռնարկությունները, արդյունաբերության մյուս ճյուղերի միջին և խոշոր ձեռնարկությունները, ինչպես նաև արտադրական (հատկապես տրանպորտը և կապը) և սոցիալական (առողջապահության, կրթության համակարգերը) ենթակառուցվածքները: Պետական գույքի ապապետականացման գործընթացին բնակչությանը մասնակից դարձնելու նպատակով 1994թ.-ից շրջանառության մեջ դրվեցին սեփականաշնորհման սերտիֆիկատներ, որոնք ծառայեցին որպես միջոց ՀՀ քաղաքացիներին ապապետականացվող պետական գույքի անվճար փոխանցման համար: Հանրապետությունում ձեռնարկությունների սեփականաշնորհումը տեղի էր ունենում բաժնետոմսերի բաց բաժանորդագրման միջոցով, որը հանդիսացավ ձեռնարկությունների սեփականաշնորհման հիմնական տեսակը: 1999թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում ավարտվեց 1460 ձեռնարկությունների սեփականաշնորհումը, որոնցից 1085-ը բաց բաժնետիրական ընկերություններ էին⁶: Հանրապետությունում ազատական տնտեսական հարաբերությունների կայացման ժամանակաշրջանում մասնավոր հատվածի զարգացման դինամիկան բնութագրվում է ստորև:

Աղյուսակ 3.

ՀՀ մասնավոր հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում,
1990-1998թթ. (տոկոսներով):

	1990	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998
Ընդամենը ՀՆԱ	100	100	100	100	100	100	100	100	100
Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում	11.7	32.7	36.7	46.2	49.7	51.7	63.3	67.9	74.5

Աղբյուրը՝ Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում 1991-1998թթ.,
ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 1999, էջ 5:

Բերված տվյալները վկայում են, որ 1990-1998թթ. մասնավոր հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում աճել է 6.3 անգամ: Միաժամանակ, հարկ է նշել, որ 1998թ. մասնավոր հատվածի բաժինը գյուղատնտեսության և առևտրի ոլորտներում կազմել է համապատասխանաբար՝ 98 և 97%, իսկ առանց այդ ոլորտների, մասնավոր հատվածը կազմել է ՀՆԱ-ի 57%-ը: Մասնավոր հատվածի տեսակարար կշիռն արդյունաբերության մեջ կազմել է 45%:

⁶ Տե՛ս Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում 1991-1998թթ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 1999, էջ 4:

Մասնավորեցումը գործնականում ավարտին է հասել 2004թ., երբ մասնավոր հատվածի բաժինը ՀՀ տնտեսությունում կազմել է 84% (2002թ.՝ 81%, 2003թ.՝ 83%) և հետագայում համարյա փոփոխության չի ենթարկվել: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ այլ նախկին խորհրդային հանրապետություններում տնտեսության հանրային հատվածի մասնաբաժինը շատ ավելի բարձր է: Վրաստանում և Ադրբեջանում մասնավոր հատվածի բաժինը տնտեսությունում 2008թ. կազմել է 75%: Վրաստանում հիմնական սեփականաշնորհումը տեղի է ունեցել 2005-2008թթ., իսկ Ռուսաստանում շատ խոշոր ձեռնարկություններ դեռևս պատկանում են պետությանը⁷:

Ըստ Համաշխարհային բանկի խմբի կողմից անցկացված ձեռնարկությունների ուսումնասիրությունների, 2009թ. Հայաստանում մասնավոր հատվածի ֆիրմաների սեփականությունում պետության մասնակցությունը եղել է շատ ցածր՝ 0.7%, ֆիրմաների 99%-ը չի ունեցել սեփականությունում պետական մասնակցություն: Մինչդեռ, ֆիրմաների մոտ 11%-ը ունեցել է որևէ օտարերկրյա մասնակցություն սեփականությունում, իսկ ֆիրմաների 5%-ը ամբողջությամբ օտարերկրյա սեփականություն էր⁸:

Ինչպես արդյունաբերության, առևտրի և ծառայությունների ոլորտի, այնպես էլ հողի սեփականաշնորհման արդյունքում ձևավորվեցին ոչ բարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ ՀՀ անցումային տնտեսությունում արտադրության զարգացման համար: 1991-1994թթ. շուկայական տնտեսական համակարգին անցնելիս հանրապետության ՀՆԱ-ն կրճատվեց ավելի քան 53%-ով և միայն 1994թ. գրանցվեց ՀՆԱ-ի աճ: 1994-1998թթ. ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 131.7% կամ միջին տարեկան՝ 6.4%: Սակայն հարկ է նշել, որ ՀՆԱ-ի մակարդակը 1998թ. հասել է 1990թ. մակարդակի ընդամենը 61%-ին: ՀՆԱ-ի ծավալի ամենամեծ անկումը գրանցվել է 1992թ. (42 տոկոսային կետով), որը ԱՊՀ երկրների համանման ցուցանիշը գերազանցել է ավելի քան 6 անգամ⁹:

Պլանային տնտեսության հիմքերի շուտափույթ վերացման նպատակով մասնավորեցման առաջին փուլը ընթացավ շատ արագ տեմպերով: Հետխորհրդային պետությունների շարքում Հայաստանն առաջինը իրականացրեց հողի սեփականաշնորհումը: Արդյունքում ձևավորված շուրջ 320 հազար գյուղացիական մասնավոր տնտեսությունները գրկվեցին պետական աջակցությունից, արտադրանքի իրացման մեխանիզմներից, գյուղատնտեսական տեխ-

⁷ Տե՛ս Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2007-2009թթ., Երևան, 2010, 43-46 էջեր:

⁸ Տե՛ս World Bank Group, Enterprise Surveys Country Series, Armenia, Rev. 7/2011. P.2.

⁹ Տե՛ս Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում 1991-1998թթ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 1999, էջ 3:

նիկայից և մնացին ձեռքի աշխատանքի հույսին: Մյուս կողմից, խնայողությունների արժեզրկման հետևանքով բնակչության մեծ մասը սեփականաշնորհման գործընթացին չմասնակցեց: Սեփականաշնորհման սերտիֆիկատները անվանականից ավելի ցածր արժեքով վաճառվեցին և չվերածվեցին ներդրումների նույնիսկ փոքր և միջին բիզնեսում:

Հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորմանը «արագ անցման» քաղաքականության արդյունքում մի քանի ամիսների ընթացքում հանրապետության բնակչության շուրջ 550 հազար ընտանիքներ դարձան հողի սեփականատերեր, սակայն տարիներով երկարաձգվեց «սեփականության ինստիտուտի» ստեղծումը, որը հնարավորություն կտար սեփականատիրոջ հայեցողությամբ իրականացնելու տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքները: Մինչև 1995թ. առկա էին հողի առք ու վաճառքի նկատմամբ կիրառվող սահմանափակումները, ինչը վկայում է, որ գործուն չէր սեփականության իրավական ինստիտուտը¹⁰:

Նախաճգնաժամային ժամանակահատվածում՝ 2003-2008թթ. ՀՀ-ում արձանագրվել է միջինում տարեկան 12% տնտեսական աճ՝ որին մասնակցել են տնտեսության բոլոր հիմնական ճյուղերը, սակայն հիմնական նպաստը ՀՆԱ-ին բերել են տնտեսության ոչ արտահանելի հատվածը՝ շինարարության և ծառայությունների ոլորտները: Վերջինիս հիմնական պատճառը եղել է արտերկրից դրամական փոխանցումների և բնակչության խնայողությունների աճը: Բնականաբար, 2009թ. դրամական փոխանցումների էական կրճատման ազդեցությամբ շինարարության ճյուղը 41.6% անկում արձանագրեց: 2009թ. արձանագրվեց Հայաստանի տնտեսության աննախադեպ բարձր՝ 14.1% անկում, իսկ այնուհետև՝ 2010-2013թթ. տնտեսությունում արձանագրվեցին աճի ցուցանիշներ՝ միջինում 4.4%, որը լինելով համեստ՝ բնութագրվում էր տնտեսության կառուցվածքի համեմատաբար բարձր բազմազանեցմամբ: Աճը հիմնականում տեղի է ունեցել ծառայությունների (ներառյալ առևտուրը), գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտների հաշվին: Շինարարության մասնաբաժինը ՀՆԱ-ում 2013թ. կազմել է 10.3%:

Միևնույն ժամանակ, տնտեսական ճգնաժամը ի հայտ է բերել նոր գլոբալ մարտահրավերներ, որոնց պայմաններում առաջ է գալիս երկրի երկարաժամկետ զարգացման ռազմավարության վերանայման անհրաժեշտություն: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտաքին ֆինանսավորման (օտարերկրյա ուղղակի ներդրումների, մասնավոր տրանսֆերտների և պաշտոնական տրանսֆերտների զուտ հոսքի հանրագումար) և դրանով պայմանավորված ներքին պահանջարկի աճի վրա հիմնված տնտեսական աճը

¹⁰ Տե՛ս Սարգսյան Հ., Մարկոսյան Ա. Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները: Եր.: «Զանգակ» հրատ., 2014, էջ 179:

չի կարող պահպանվել երկարաժամկետ հեռանկարում, անհրաժեշտ է աստիճանական անցում կատարել ապրանքների և ծառայությունների արտահանման աճի վրա հիմնված տնտեսական զարգացման, որի արդյունքում աստիճանաբար կնվազի երկրի կախվածությունը արտաքին ֆինանսավորումից:

2014թ. ՀՀ կառավարությունը մշակել է Հայաստանի 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր (ՀԶԾ): Մինչ այդ, տնտեսական քաղաքականության նպատակը մասնավոր հատվածի զարգացման համար առավելապես բարենպաստ պայմանների ստեղծումն էր: Սակայն տնտեսությունում առկա խորը կառուցվածքային հիմնախնդիրները, տնտեսական աճի և արտահանման սահմանափակումները, գործարարության զարգացման և նորարարության ցածր մակարդակը, անհրաժեշտ են դարձնում պետության ակտիվ դերը «շուկայի թերացումների» հաղթահարման ուղղությամբ: Նոր քաղաքականությունը պետք է համապատասխան միջավայր ստեղծի ինովացիոն և գիտելիքահենք տնտեսության զարգացման համար: Դեպի արտահանումը կողմնորոշված և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը խթանող քաղաքականությունը ենթադրում է ինովացիոն միջոցառումների խրախուսում ողջ տնտեսության կտրվածքով:

ГОСУДАРСТВО И РАЗГОСУДАРСТВЛЕНИЕ

Вардуи Габриелян

*Преподаватель кафедры экономической теории
Ереванского государственного университета*

Ключевые слова: государственное предприятие, частная компания, национализация, разгосударствление, собственность, финансовые и реальные активы, выручка от приватизации, экономический рост, эффективность

Эффект масштабной государственной интервенции в экономику, позитивный в фазе кризиса, становится негативным в фазе стабильного долгосрочного экономического роста. Тенденция к разгосударствлению собственности особенно проявилась в 1970-1980-х годах. На более коротких промежутках времени на соотношение между частным и государственным секторами экономики влияют также особенности развития делового цикла. В период мирового экономического кризиса 2008-2009 гг. многие страны провели антикризисные мероприятия по национализации. В 2010-2014 гг. правительства многих стран возвращаются к программам ограничения размеров государственного сектора и разрабатывают проекты последующей приватизации компаний, чтобы существенно повысить эффективность их деятельности.

STATE AND DENATIONALIZATION

Varduhi Gabrielyan

Lecturer of the Economic Theory Department at Yerevan State University

Key Words: state-owned enterprise, private company, nationalization, denationalization, property, financial and real assets, revenue from privatization, economic growth, efficiency

The effect of large-scale government intervention in the economy, being positive in the phase of the crisis, becomes negative in the phase of stable long-term economic growth. The trend towards denationalization of property was particularly apparent in the 1970-1980's. In the shorter run, the relationship between the private and public sectors of the economy is also influenced by peculiarities of the business cycle development. During the global economic crisis of 2008-2009, many countries implemented anti-crisis measures of nationalization. In the 2010-2014, many governments have returned to programs of size limitation of the state sector and are developing projects of further privatization of companies to significantly improve the efficiency of their operations.

**ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՕՐԵՆՄԱՐԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ**

Աստղիկ Մարտիրոսյան

Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի ասպիրանտ,

ՀՀ բնապահպանության նախարարության <<Թափոնների ուսումնասիրության կենտրոն>> ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ

Բանալի բառեր՝ մասնավորեցում, օտարում, պետական գույք, սեփականություն

Մինչև ՀՀ անկախացումը պետական գույքի մասնավորեցում հասկացությունը ընդհանրապես բացակայում էր, քանի որ հանրապետության տարածքում գտնվող անշարժ գույքը, այդ թվում հողամասերը հանդիսանում էին պետության բացառիկ սեփականությունը: Անկախացումից հետո առաջնահերթ խնդիր դարձավ պետական գույքի մասնավորեցման գործընթացի իրականացումը: 1990-1995 թվականներին տվյալ ոլորտը կանոնակարգելու համար ընդունվեցին բազմաթիվ իրավական ակտեր, որը սկիզբ դրեց պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման և մասնավորեցման գործընթացին:

Պետական սեփականության կառավարումը տնտեսության պետական կարգավորման կարևորագույն գործառույթներից մեկն է, որի հիմնական նպատակը հասարակության և պետության սոցիալ-տնտեսական շահերի իրականացումն է: 1990 թվականի սեպտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդը որոշում է ընդունում, ըստ որի Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների, միավորումների, հիմնարկների և կազմակերպությունների ունեցվածքը համարվեց Հայաստանի Հանրապետության սեփականություն:

Պետական գույք է համարվում Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ եւ շարժական գույքը, այդ թվում.

1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող շենք, շինությունները, այդ թվում այլ պետություններում գտնվող, եւ դրանց սպասարկման եւ օգտագործման համար հատկացված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը:
2. Պետական, պետական մասնակցությամբ և մինչև 50 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասը կամ բաժնետոմսերը:
3. Սեփականության իրավունքով պետությանը պատկանող մտավոր սեփականության օբյեկտները և դրանց նկատմամբ իրավունքները:

4. Պետությանը պատկանող գույքային իրավունքները¹:

Օտարում է կոչվում պետական գույքի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքի փոխանցումն է իրավաբանական անձանց, համայնքներին, քաղաքացիներին ինչպես նաև օտարերկրյա անձանց,

Պետական գույքի օտարման եղանակներ են.

- 1) հրապարակային սակարկություն,
- 2) ուղղակի վաճառք,
- 3) նվիրատվություն կամ նվիրաբերություն,
- 4) փոխանակություն²,

Մասնավորեցումը պետական գույքի նկատմամբ սեփականության կամ պետությանը պատկանող այլ գույքային իրավունքների փոխանցումն է մասնավորեցման սուբյեկտներին:

Մասնավորեցման սուբյեկտներն են՝ իրավաբանական և ֆիզիկական անձինք, իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև մասնավորեցվող ընկերության կամ «փոքր» օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամները, համայնքները³:

Պետական գույքի կառավարման, մասնավորեցման ծրագրի և ընդհանրապես մասնավորեցման գործընթացի իրականացման հետազոտությունները ցույց են տալիս, որ անհրաժեշտ է որոշակի փոփոխություններ մտցնել պետական գույքի մասնավորեցման ոլորտում, առկա խնդիրների լուծման, նոր մտքերի և գաղափարների ներդրման նպատակով, ընդհանրապես կանոնակարգելու և նոր լուծումներ առաջարկելու գործառույթը էլ ավելի թափանցիկ դարձնելու նպատակով: Ելնելով վերոգրյալից ձեր քննարկմանն եմ ներկայացնում.

1. Անշարժ գույքի շուկայի զարգացման, այդ թվում պետական գույքի մասնավորեցման աշխատանքների խթանման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում նաև ֆինանսական լիզինգի ինստիտուտի զարգացումը: Մասնավորեցման լիզինգ չկատարելու դեպքում գույքը տալ լիազորված մարմնին, ընդհուպ մինչև չեղյալ համարելով : Քաղաքացիական օրենսգրքի 677 հոդվածի 4-րդ կետով⁴ նախատեսված է առանձնացնել սակայն առ այսօր նման օրենք գոյություն չունի ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է պետական գույքի ֆինանսական լիզինգին

¹ Պետական գույքի կառավարման մասին ՀՀ օրենք (ՀՕ-158-Ն), ընդունվել է ԱԺ-ի կողմից 20.11.2014թ.ին, վավերացվել է ՀՀ նախագահի կողմից 09.12.2014թ.-ին

² Տես պետական գույքի կառավարման մասին ՀՀ օրենք

³ Տես պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին օրենքը (ՀՕ-188), ընդունվել է ԱԺ-ի կողմից 17.12.1992թ.-ին, վավերացվել է ՀՀ նախագահի կողմից 13.01.1998թ.-ին

⁴ Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին օրենքը

- մեծ տեղ հատկացնել և ընդունենք անհրաժեշտ իրավական ակտեր նշված ոլորտը կանոնակարգելու համար:
2. Մասնավորեցման պայմանների մեջ նշել պայմաններ, որով ոչ միայն կսահմանվի ժամանակացույց գումարների վճարման (տարածամկետ վճարումներ) այլ նաև կողմին (լիազոր մարմնին) իրավունք վերապահվի գնորդի կողմից պայմանագրի ժամկետների կատարման աշխատանքների փուլերի ուշացման կամ չկատարելու դեպքում վերանայել պայմանագիրը՝ ընդհուպ այն լուծելու պայմանը:
 3. Գտնում ենք, որ պետք է հստակ հաշվառում իրականացվի և կանոնակարգվի, թե որոնք են պետական գույքի օտարման ենթակա անշարժ գույքի օբյեկտները, որովհետև առկա են դեպքեր, երբ նույն գույքը հաշվառված է եղել, որպես պետական սեփականություն, սակայն համայնքների կողմից տվյալ գույքը ներկայացվել է ՀՀ կառավարության 42 և 51 որոշումներով² իրենց հատկացված համայնքային սեփականություն, որի հիման վրա կադաստրի կողմից ստացել է պետական գրանցում, որի արդյունքում հարցը կարգավորվել է դատական կարգով: Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի լիարժեք հաշվառման և պետական գրանցման իրականացումը հնարավորություն կտա բացառելու նման երևույթները:
 4. Ճիշտ կլիներ օտարման միջոցով պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարումը իրականացվի մասնավորեցման եղանակով ծրագրային դրույթներին համապատասխան նկատի ունենալով, որ մասնավորեցման եղանակով օտարման դեպքում պետության կողմից կարող են սահմանվել և սահմանվում են որոշակի պայմաններ, որոնք խթանում են տվյալ օբյեկտի հետագա գործունեության արդյունավետությանը միաժամանակ խթան են հանդիսանում նոր աշխատատեղերի ստեղծման համար:

ГОСУДАРСТВЕННЫЙ ПРИОБРЕТЕНИЕ НЕДВИЖИМОСТИ
И ПРИВАТИЗАЦИИ СОВЕРШЕНСТВОВАНИЮ
ЗАКОНОДАТЕЛЬСТВА

Астгик Мартиросян

*Аспирант кафедры управления и информационных технологий
международного университета Евразия,
ведущий специалист ГНО "Центр по изучению отходов"*

Ключевые слова: приватизация, отчуждение, государственная собственность, свойство.

Армения одна из первых республик бывшего Советского Союза начала реформирование государственной собственности. 26 февраля 1991г. Верховный Совет принял соответствующее постановление. В нем говорилось, что переход к рыночным отношениям должен осуществляться путем приватизации государственной собственности.

Стартовые условия, при которых те или иные страны начинают движение к рынку, неизменно влияют на результаты преобразований и в конечном счете на экономический рост. В этом смысле Армения унаследовала сходные с другими бывшими союзными республиками предпосылки развития. Однако у нас имелись и некоторые особенности, среди которых отметим прежде всего сверхиндустриализацию экономики, а также высокие научно-технический потенциал, энергоемкость производства, степень кооперации с партнерами в рамках СССР и уровень сбережений населения.

STATE PROPERTY ACQUISITION AND PRIVATIZATION OF THE LEGISLATIVE
IMPROVEMENT

Astghik Martirosyan

*PhD student of Management and Information Technology Department
at Eurasia International University,
Leader specialist at SNCO "Waste Research Center"*

Keywords: privatization, alienation, state property, property.

Enterprise privatization in Armenia began in 1994, and has been mostly voucher-based, selling enterprises through both closed and open auctions and open subscriptions. The focus of the Government's reform program has been on stimulation of the private sector. Almost all agricultural land was privatized in 1991, nearly all state and collective farms have been broken up, and over 300,000 private farms have been created. By the end of 1997, about 60 percent (around 6,000) of all small enterprises, and about 60 percent (around 1,250) of all medium and large enterprises had been privatized.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Սևակ Թորգոմյան

Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր՝ բնակարանային ֆոնդ, հիփոթեքային շուկա, գյուղատնտեսական նշանակության հողեր, անշարժ գույքի շուկա, անշարժ գույքի գներ, օտարման գործարքներ

Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարական ուղղությունը շուկայական տնտեսության ստեղծումն է, որը միանգամայն բարդ և բազմակողմանի խնդիր է, որի լուծումն իր մեջ ներառում է ազատ մրցակցության զարգացում, սեփականատիրական հարաբերությունների ձևափոխում և համապատասխան շուկայական մեխանիզմի ստեղծում: Բնականաբար, այս խնդրի լուծման նպատակով, հատուկ ուշադրության են արժանանում այն ուղղությունները, որոնց զարգացումը վճռական նախապայման է ամբողջ տնտեսական համակարգի բարեփոխման համար: Նման ուղղություն է համարվում անշարժ գույքի շուկայի զարգացումը:

Ուսումնասիրելով անշարժ գույքի շուկան բազմաթիվ զարգացած տնտեսություն ունեցող երկրներում՝ կարելի է նշել հետևյալ միտումները.¹

- Անշարժ գույքը կազմում է ազգային հարստության հիմքը: Հենց անշարժ գույքի օբյեկտներում է (շենքեր, շինություններ, կառուցապատված տարածքներ) հաջորդաբար կուտակվում նախորդ սերունդների աշխատանքը՝ ապահովելով կյանքի պատշաճ մակարդակ ինչպես ներկայում, այնպես էլ ապագայում:
- Անշարժ գույքի շուկան երկրի տնտեսական աճը խթանող յուրահատուկ մեխանիզմ է: Հենց տարբեր նշանակության անշարժ գույքի օբյեկտներում է կատարվում միջոցների զգալի մասի նախնական ներդրումը, որը, ի վերջո, բերում է առաջարկի և պահանջարկի որակական փոփոխությունների և ապահովում է զարգացման դրական մակրոտնտեսական դինամիկա:
- Անշարժ գույքը, լինելով մարդու և հասարակության կենսագործունեության հիմքը, իրենից ներկայացնում է շուկայական շրջանառության, սեփականության և կառավարման հատուկ օբյեկտ: Հաշվի առնելով այս տեսակետը՝ պետությունն իր կողմից ապահովում է անշարժ գույքի

¹ Ստեփանյան Ս. Շ., Վարդանյան Ա. Ա., Անշարժ գույքի կենսացիկլի կառավարում, Երևան, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, 2009, էջ 4

կյանքի տևողության բոլոր փուլերում նրա արդյունավետ օգտագործման հսկման համակարգի ստեղծում:

Չի կարելի անտեսել նաև անշարժ գույքի նշանակալի սոցիալական դերը: Մի կողմից, անշարժ գույքի շուկայի նորմալ գործունեությունը միշտ տալիս է դրական սոցիալական արդյունք և, առաջին հերթին, անշարժ գույքի օբյեկտների այնպիսի ձևի շնորհիվ, ինչպիսին բնակելի տներն են, որոնք առաջնային են սպառողական տեսանկյունից: Մյուս կողմից, նորմատիվային-իրավական, ֆինանսատնտեսական և կառավարչական մեխանիզմներ ներառող արդյունավետ պետական համակարգի բացակայությունը կարող է կտրուկ նվազեցնել անշարժ գույքի շուկայական պոտենցիալը և բերել անցանկալի սոցիալական հետևանքների:

Պլանային տնտեսությունից շուկայականին անցնելով՝ սկսեց զարգանալ Հայաստանի տնտեսության մի նոր հատված՝ անշարժ գույքի շուկան: Շուկայի նյութական հիմքը ձևավորվել է երկու աղբյուրներից.

I. քաղաքացիների կողմից բնակարանների անվճար սեփականաշնորհումն է, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների և հողակտորների (անշարժ գույքի սեփականաշնորհման առաջնային շուկա) անվճար և վճարովի սեփականաշնորհումը:

II. շինարարության ոլորտում և դրանից դուրս առևտրային շինարարության և օբյեկտների վաճառքի սեզմենտի ձևավորումն է (շինարարության և անշարժ գույքի վաճառքի առաջնային շուկա):

Վերոնշյալները բերեցին անշարժ գույքի երկրորդային շուկայի ձևավորմանը՝ նախկինում սեփականաշնորհված կամ առաջին անգամ վաճառված նոր օբյեկտների վերավաճառքի շուկան:

ՀՀ անկախացումից հետո հողային բարեփոխումը ամենամեծ փոփոխություններից մեկն է եղել, որը կոլեկտիվ տնտեսությունից շուկայականին անցման հիմնական տարրերից մեկն էր: Գյուղատնտեսական նշանակության հողերը բաժանվեցին ավելի քան 310000 տնտեսությունների: Հողերի բաժանումը կատարվեց ընտանիքի անդամների թվից կախված՝ մոտավորապես 366000 հա (վերջինս կազմում է գյուղատնտեսական նշանակության հողերի 26%-ը): Այդուհանդերձ հողօգտագործումը անարդյունավետ էր, քանզի չկար համապատասխան գյուղտեխնիկա²:

ՀՀ-ում ձևավորվեց անշարժ գույքի գրանցման պետական կադաստրի ինստիտուտը: Համաշխարհային բանկը մշակեց ծրագիր՝ ՀՀ-ում անշարժ գույքի հետ կապված գործարքների իրականացման ենթակառուցվածքի ստեղծման համար: Ծրագրի արժեքը 10 մլն ԱՄՆ դոլար էր: Գործողությունները

² The World bank, Agricultural & Rural Development Notes ISSUE 39, Feb. 2008, page 1

մանրամասն ծրագրավորել էին՝ հիմք ընդունելով տվյալների առկա բազան: Ծրագիրը բաղկացած էր երեք հիմնական բաղադրիչից³.

- ✓ համընդհանուր տեղեկատվական ցանցի ստեղծում,
- ✓ կադաստրային քարտեզագրում,
- ✓ ծրագրի շահագործում և իրականացում:


Ընդհանուր առմամբ, ՀՀ անշարժ գույքի շուկայում տեղի ունեցող զարգացումները պատմականորեն պայմանավորված են եղել երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակով: Այսպես, երկրի տնտեսական աճը, մակրոտնտեսական կայունությունը, բնակչության եկամուտների աճը, քաղաքական իրավիճակի կայունացումը, իրականացվող շինարարական և ներդրումային ծրագրերը ինչպես նաև իրականացման օրենսդրական դաշտի որոշակի կարգավորումը և հիփոթեքային շուկայի զարգացումը հանգեցրին անշարժ գույքի շուկայի կտրուկ զարգացմանը սկսած 2000թթ. սկզբից, ինչը արտահայտվեց թե անշարժ գույքի գների, թե իրականացվող գործարքների քանակական աճով: Աճի միտումները շարունակվեցին մինչև 2008թ. վերջ, երբ համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը հասավ ՀՀ:

Որպես արդյունք, տնտեսությունում արձանագրվեց խորը անկում և տնտեսության մնացած ճյուղերի հետ անկում ապրեց նաև անշարժ գույքի շուկան: 2009 թվականի անկումից հետո այնուամենայնիվ 2010-ին ՀՆԱ իրական աճ գրանցվեց 2.2%-ով, այնուհետև 4.6 %-ով 2011-ին, 7.2%-ով 2012-ին և 3.5%-ով 2013-ին: Համաձայն ՀՀ 2014 պետական բյուջեի նախագծի ՀՆԱ աճը 2014 թվականին ակնկալվում է, որ կկազմի 5.2%⁴: Այս ամենը վկայում է որ տնտեսությունում առկա է կայունացում և դրական աճի միտումներ: Ներկայումս ՀՀ անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակը կարելի է բնութագրել որպես կայուն-վերականգնվող:

2004թ-ից մինչև 2008թ-ը ընկած ժամանակահատվածում անշարժ գույքի գները Հայաստանում հասան իրենց գագաթնակետին: Միևնույն ժամանակահատվածում անշարժ գույքի գործարքների քանակը աճել է գրեթե 62%-ով, և 2008թ. արդյունքներով կազմել 159,367 գործարք: Ստորև ներկայացված են անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական փոփոխման շարժընթացը 2007-2013թթ-ների ընթացքում:

³ The World bank, Title Registration Project (P057560), Sep. 30, 2004. Page 19

⁴ URL:http://www.parliament.am/committee_docs_5/FV/2014_Byuje_Ampop_Nkaragir.pdf, էջ 3




* 2014 թվականի ցուցանիշը ներառում է հունվար – սեպտեմբեր ամիսները

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2012 - ին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը կազմել է 1733713 միավոր, որը 2011թ. համեմատ նվազել է 7.6%-ով, ընդ որում, Երևան քաղաքում աճել է 1.7%-ով, իսկ մարզերում՝ նվազել 12.1%-ով: 2013 թվականին հանրապետության անշարժ գույքի շուկայում արձանագրվել է գործարքների քանակական աճ 2012թ. համեմատ 9.8%-ով և կազմել 190690 գործարք: Հատկանշական է, որ Երեվան քաղաքում գործարքները աճել են 9.3%-ով, իսկ մարզերում՝ 10.0%-ով:

2013թ. անշարժ գույքի օտարման գործարքների քանակը 2012թ. Համեմատ աճել է 3.6%-ով: Անշարժ գույքի նկատմամբ իրականացված 48716 օտարման գործարքների 73.3%-ը կազմել են առուվաճառքները, և 14677 գործարքների 60.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2012թ. համեմատ բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6.9%-ով: 2013թ. ՀՀ-ում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն ըստ տեսակների ներկայացված է գծապատկեր 2-ում:

⁵ URL:http://www.armstat.am/file/article/bf_2014_3,4.pdf, էջ 91

Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն ըստ տեսակների, 2013թ.



Երևան քաղաքում 2011թ. բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քառ. մ մակերեսի շուկայական միջին գները 2010թ. համեմատ նվազել են 5.5%-ով և մնացել անփոփոխ նաև 2012թ. ընթացքում, իսկ ահա 2013թ. Բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քառ. մ մակերեսի հաշվարկով 5.5%-ով շուկայական միջին գների աճ է արձանագրվել: 2014թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քառ. մ մակերեսի հաշվարկով շուկայական միջին գները 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 1.0%-ով: Գոյություն ունեցող գների վարքագծի տարբերությունը Երևանում և մարզերում բացատրվում է նրանով, որ որոշ մարզերում անշարժ գույքի առաջարկը խիստ սահմանափակ է:


Մեկ բնակչին բաժին ընկնող բնակարանային ֆոնդը 2008-2013թթ. ընթացքում անընդհատ աճել է, ինչը վկայում է, որ բնակարանային ֆոնդը բարելավվել է և անընդհատ աճի միտում ունի⁷:

Հատկանշական է այն փաստը, որ քաղաքներում և գյուղերում մեկ բնակչի հաշվով բնակարանային ֆոնդի աճի միտումները գրեթե հավասար են, չնայած այն հանգամանքին, որ գյուղական համայնքներում 1 շնչին բաժին ընկնող բնակարանային ֆոնդը անհամեմատ գերազանցում է քաղաքներում ապրող բնակչության 1 շնչին բաժին ընկնող բնակարանային ֆոնդին (գծապատկեր 3):

⁶ URL:http://www.cadastre.am/storage/files/news/news_9118215255_shuka_2013_Tari.pdf, էջ3

⁷ URL:http://www.armstat.am/file/article/armenia_14_5.pdf, էջ 43

Բնակարանային ֆոնդով բնակչության միջին ապահովվածությունը մեկ բնակչի հաշվով (քմ ընդհանուր մակերես) ըստ քաղաքների և գյուղերի



2010թ. կեսերից սկսեց կրկին աշխուժանալ 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով դժվար պայմաններում հայտնված հիփոթեքային շուկան: Այսպես, 2010-ին ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների հիփոթեքային վարկերի պորտֆելն աճեց մոտ 7%-ով, 2011-ին՝ 20%-ով, 2012-ին՝ 18%-ով և 2013-ին՝ ավելի քան 12.6%-ով⁹:

Անշարժ գույքի շուկայի զարգացման և աշխուժացման մեջ մեծ դերակատարում ունեցավ պետական սուբսիդիաների կիրառումը հիփոթեքային վարկավորման գործարքների մեջ՝ առավելապես նախատեսված նորապսակների համար (քանզի վերջինների շրջանում նկատվում է նոր բնակարան ձեռք բերելու և առանձին ապրելու աճող տենդենցիա), ինչպես նաև 2009թ. կենտրոնական բանկի կողմից հիմնադրված «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունը:

Անշարժ գույքի շուկայի հետազոտությունները ցույց են տալիս, որ սկսած 2002թ.-ից անշարժ գույքի շուկայի զարգացման և անշարժ գույքի քաղաքացիական շրջանառության ակտիվացման վրա ազդող էական գործոններ են հանդիսանում՝

⁸ URL: http://www.armstat.am/file/article/armenia_14_5.pdf, էջ 43

⁹ URL: <http://www.nmc.am/datas/zissue/121bd8173a9913798ba19351840c4553.pdf>, էջ 12

- Պետական գրանցման համար վճարվող պետական տուրքի հաստատագրված դրույքաչափերի սահմանումը և տրամադրվող ծառայությունների դիմաց վճարների իջեցումը
- Օրենսդրական դաշտի էական կարգավորումը, մասնավորապես ՀՀ նոր հողային օրենսգրքի և դրան համապատասխան նորմատիվ ակտերի ընդունումը,
- Անշարժ գույքի շուկայի մասնակիցների, մասնավորապես գնահատողների, ռիելթորների և կադաստրային քարտեզագրում իրականացնողների լիցենզավորումը,
- Անդամագրումը և համագործակցումը միջազգային կազմակերպությունների հետ ինչպիսիք են՝ Եվրոգեոգրաֆիկսը, CEREAN, ՄԱԿ-ի ԵՏՀ հողային ռեսուրսների կառավարման աշխատանքային խումբը (ՀԿԱԽ), Համաշխարհային բանկը և այլն,
- Նախկին շրջանների տարածքներում գործող գույքի հետ առնչվող բոլոր գործառնություններն իրականացնող 50 գրասենյակների (9-ը՝ Երևանում) փոխարինումը ընդամենը 11 տարածքային ստորաբաժանումների (1-ը Երևանում), որով վերացվեց դիմումները կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմիններին ըստ գույքի գտնվելու վայրի ներկայացնելու և նույն վայրից վկայականները, տեղեկատվությունը կամ այլ փաստաթղթերը ստանալու անհրաժեշտությունը
- Հիփոթեքային շուկայի ձևավորումը և աճը:
- Հարկային ճկուն քաղաքականությունը՝ կապված անշարժ գույքի տեսակից և կիրառման նպատակից:
- Գործարքներում մեկ միջանկյալ օղակի՝ նոտարի, պակասեցումը: 2012 թվականի հունվարի 1-ից վերացվել է անշարժ գույքի գործարքների պարտադիր նոտարական վավերացման պահանջը, որի այլընտրանքն է հանդիսանում ստորագրությունների իսկության ճանաչմամբ գործարքների անվճար կնքումը կադաստրի համակարգում
- 2010-2011թթ տեղեկատվական ողջ բազայի թվայնացումը, կադաստրի միասնական համակարգի ստեղծումը, իսկ 2011-ից նաև e-cadastre համակարգի ստեղծումը, որը թույլ տվեց անշարժ գույքի գրանցումը կատարել էլեկտրոնային եղանակով:

ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ РЫНКА НЕДВИЖИМОСТИ В РА

Севак Торгомян

*Аспирант кафедры управления и информационных технологий
международного университета Евразия*

Ключевые слова: Жилищный фонд, ипотечный рынок, земли сельскохозяйственного назначения, рынок недвижимости, цены на недвижимость, сделки с отчуждением

В статье анализируются становление, формирование и развитие рынка недвижимости в РА после распада СССР, а также состояние рынка недвижимости РА во время и после финансово-экономического кризиса.

Особое внимание было уделено выявлению факторов, которые способствовали развитию рынка недвижимости в РА.

THE PROBLEMS OF FORMATION AND DEVELOPMENT OF REAL ESTATE MARKET IN RA

Sevak Torgomyan

*PhD student of Management and Information Technology Department
at Eurasia International University*

Keywords: housing stock, mortgage market, agricultural lands, real estate market, real estate prices, transactions on alienation.

The formation and development of real estate market in RA after dissolution USSR as well as its condition during and after financial-economical crisis were observed. Particular attention was paid to identifying the factors that contributed to the development of real estate market in Armenia.

ԻՆՉՊԻՄԻՆ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լուսինե Մարգարյան

*Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայի
Տնտեսագիտության ամբիոնի հայցորդ, դասախոս*

Բանալի բառեր՝ տեխնոլոգիաներ, ազգային ինովացիոն համակարգ, մրցունակ ազգային ինովացիոն համակարգ, համաշխարհային տնտեսություն, տեխնոլոգիաների միջազգայնացում

Ներկայումս համաշխարհային շուկայում առաջավոր տեխնոլոգիաների փոխանակության հիմնախնդիրները հիմնականում կապված են երկրների միջև մրցակցային առավելությունների դրսևորման յուրահատկությունների հետ, հետևաբար և այժմեական և հրատապ են այդպիսի տեխնոլոգիաների ներգրավմանն ուղղված ուսումնասիրությունները:

Ցանկացած երկրում առաջավոր տեխնոլոգիաների ներմուծումը բավականին դրական ազդեցություն է թողնում ազգային տնտեսության վրա հաճախ նույնիսկ արմատական փոփոխություններ մտցնելով տնտեսական համակարգում: Այս է պատճառը, որ համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում մրցունակ ազգային ինովացիոն համակարգը պատկերացնել առանց տեխնոլոգիաների միջազգայնացման գրեթե անհնար է: Հարցադրումը բավականին ընդգրկուն է իր բովանդակությամբ, քանի որ կարելի է ասել պարունակում է երեք խոշոր ենթահարցեր, որոնք արտաքուստ միմյանց հետ այնքան էլ փոխկապակցված չեն, սակայն իրականում դրանք մեկը մյուսով են պայմանավորված: Ինչու ենք մենք տարանջատում <<ազգային ինովացիոն համակարգ>> և <<մրցունակ ազգային ինովացիոն համակարգ>> կատեգորիաները: Խնդիրը նրանում է, որ համաշխարհային տնտեսության զարգացման առաջանցիկ տեմպերի, ինչպես նաև տեխնոլոգիաների և տարբեր երկրների տնտեսությունների մրցունակության բարձրացման համատեքստում ազգային ինովացիոն համակարգի ձևավորումը անհրաժեշտ, բայց միևնույն ժամանակ բավարար պայման չէ: Դա բացատրվում է նրանով, որ հնարավոր է փորձ արվի և ձևավորվի որոշակի մեխանիզմների կամ մոդելների վրա գործող ինովացիոն համակարգ, սակայն կասկածի տակ կարող է դրվել վերջինիս մրցունակ լինելու հանգամանքը: Մենք հակված ենք այն մտքին, որ ազգային ինովացիան համակարգն իր ինստիտուտների գործունեության մեխանիզմներով պետք է ևս լինի մրցունակ, որպեսզի հնարավորություն ստեղծի նաև ինտեգրվել տարբեր երկրների, իսկ գուցե նաև տարածաշրջանային ինովացիոն համակարգերի:

Այս գաղափարը ևս լուրջ մտորումների տեղիք է տալիս, իսկ ո՞ր պարագայում է հնարավոր ազգային ինովացիոն համակարգը ինտեգրել այլ երկրների

կամ տարածաշրջանային ինովացիոն համակարգերին: Խնդրի լուծման տարբերակն ունի կարծում ենք մոդելային լուծում: Ահա և այս հարցադրման հաջորդ բաղադրիչը, այն է՝ ինչպիսի՞ ազգային ինովացիոն մոդել պետք է ունենա Հայաստանը, որպեսզի կարողանա ինտեգրվել այլ ինովացիոն համակարգերի: Մենք, իհարկե, հարցադրումը բարձրացնում ենք Հայաստանի համար, սակայն հարցը նրանում է, որ այս հարցադրումը կարող է դրված լինել նաև այլ երկրների առջև, որոնք չեն ցանկանում կորցնել իրենց մրցունակ դիրքերը և ամեն ինչ անում են համաշխարհային տնտեսության մեջ առաջատարների շարքում մնալու, ինչպես նաև մրցունակ ազգային ինովացիոն համակարգ ունենալու համար:

Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման մոդելի ընտրությունը նման համակարգ կամ ինստիտուտների ամբողջություն չունեցող երկրի համար շատ կարևոր է: Այստեղ, բնականաբար, կարող է հարց առաջանալ. ինչքան՞ վ է մտահոգիչ, որ չունենք ձևավորված ազգային ինովացիոն համակարգ և երկրորդ՝ կան արդյոք դրա մեջ դրական կողմեր:

Միանգամից նշենք, որ ազգային ինովացիոն համակարգ չունենալը խիստ բացասական ազդեցություն ունի տնտեսության հետագա զարգացման գործում: Վերջինիս բացասական կողմերից մեկն այն է, որ տնտեսությունը գտնվում է դեռևս հումք արդյունահանող երկրից, ռեսուրսախնայող և ռեսուրսերն արդյունավետ օգտագործող երկրի կարգավիճակի փոփոխություն արձանագրելու փուլում և դեռևս բավականին երկար ճանապարհ պետք է անցնի ինովացիոն տնտեսություն, ինչպես նաև լուրջ և գործող ինովացիոն համակարգ ունենալու համար: Այսինքն՝ տնտեսության թերզարգացվածության կամ բնակչության բարեկեցության ցածր մակարդակի նախապայմանն ազգային ինովացիոն զարգացած համակարգ չունենալու հանգամանքով կարելի է բացատրել: Այսինքն՝ տնտեսությունն առաջ տանելու համար ինովացիոն համակարգի ձևավորումը կարելի է ասել այն ինստիտուցիոնալ տնտեսության և երկրի զարգացման առաջանցիկ հենասյուներն են, որոնք կարող են տնտեսությունը տեղափոխել զարգացման սկզբունքորեն նոր մակարդակի վրա: Սակայն իրատեսական լինելու համար նշենք, որ դա բավականին աշխատատար և մեծ ջանքեր պահանջող գործընթաց է, որի հաջողությամբ պսակվելու համար թերևս պահանջվում է ՀՀ և Մփյուռքի համատեղ գիտական և արտադրական ողջ ներուժի լիարժեք օգտագործումը:

Մյուս կողմից ազգային ինովացիոն համակարգ չունենալու հանգամանքը միայն մեկ առումով ունի առավելություն, դա բացատրվում է նրանով, որ համաշխարհային պրակտիկայում առկա է <<ուշացած բարեփոխումների էֆեկտ>> հասկացությունը, այսինքն՝ այն որ մենք դեռևս չենք կարողացել ձևավորել գործում լուրջ համակարգ ապագայում կարող ենք ձևավորել՝ հաշվի

առնելով այլ երկրների փորձը, ինչպես նաև այն հիմնախնդիրները, որոնց վերջիններս բախվել են ազգային ինովացիոն համակարգ ստեղծելու ճանապարհին: Սա էլ հենց ուշացած բարեփոխումների դրական էֆեկտը կամ ազդեցությունն է:

Այս առումով անհարժեշտություն է առաջանում նաև որոշում կայացնել, թե ինչպիսի մոդել պետք է որդեգրել ազգային ինովացիոն համակարգ ձևավորելու ճանապարհին: Այս հարցադրումը, որը բավականին պարզ և հստակ է ձևակերպվում մի շարք երկրների համար այդպես էլ անլուծելի է մնում, և այդ երկրները հայտնվում են զարգացման և բարեկեցության բարձրացման ծուղակում՝ այդպես էլ դուրս չգալով վերջինից: Դրա համար այս հիմնահարցն ունի ազգային ինովացիոն, տեխնոլոգիական, գիտակրթական, արտադրական քաղաքականությունների համադրման համատեքստ, քանի որ առանց այս համակարգաստեղծ տարրերի փոխկապակցված գործունեության ապահովել ինովացիոն գործուն համակարգի ձևավորում, ինչպես նաև առանձին ինստիտուտների լիարժեք կենսագործունեությունը և կապակցող մեխանիզմների առկայությունը անհնար է: Հնարավոր է ստեղծել առանձին անկախ գործող ինստիտուտներ, որոնք կհանդիսանան ազգային ինովացիոն համակարգի բաղկացուցիչ տարրերը, սակայն շատ ավելի մեծ ջանքեր կպահանջեն վերջիններիս միջև կապակցող մեխանիզմներ ստեղծելու և հաջորդական քայլերով առանձին փուլային անցումներով վերջնական առևտրայնացման հասնելու համար:

Փորձելով պատասխանել, թե ինչպիսի մոդել է անհրաժեշտ ընտրել ազգային ինովացիոն համակարգ ունենալու համար, նշենք, որ դրանք պայմանականորեն բաժանել ենք չորսի՝

1. Սկզբունքորեն նոր մոտեցման որդեգրում և ազգային ինովացիոն նոր համակարգի ստեղծում:

2. Որևէ երկրի ազգային ինովացիոն գործող համակարգի կրկնօրինակում:

3. Առանձին երկրների փորձից և Հայաստանի առանձնահատկություններից ելնելով խառը մոդելի մշակում:

4. Ազգային ինովացիոն համակարգի մոդելի մշակումից հրաժարվել, և տարածա-շրջանային որևէ ավելի խոշոր ինովացիոն համակարգում ենթահամակարգի դեր կատարելով սահմանափակվել:

Այժմ առավել մանրամասն ներկայացնենք նշված չորս մոդելներից յուրաքանչյուրը:

Սկզբունքորեն նոր մոտեցման որդեգրումը կամ ազգային ինովացիոն նոր համակարգի ստեղծումը բավականին բարդ է, քանի որ այդ ճանապարհով են գնացել շատ քիչ երկրներ՝ Սինգապուր, Հարավային Կորեա, Ֆինլանդիա և այլն:

Երկրորդ մոտեցման համաձայն Հայաստանից պարզապես կպահանջվի որևէ երկրի ազգային ինովացիոն գործող համակարգի կրկնօրինակում՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները: Այս մոտեցումն ավելի հավանական է, սակայն այստեղ դրվում է մեկ այլ հարց. ինչքանով մրցունակ կլինի կամ կգործի որևէ երկրի փորձի կրկնօրինակումը: Մեկ այլ հարցադրում է՝ իսկ ինչպիսի երկրի մոդել է անհրաժեշտ կրկնօրինակել՝ զարգացող երկրի, թե՛ զարգացած:

Ըստ էության երկրների զարգացման մակարդակները պետք է լինեն համեմատելի, որը և թույլ կտա համահունչ ձևով ապահովել որևէ երկրի փորձի կիրառումը կամ տվյալ երկրի ազգային ինովացիոն համակարգի կրկնօրինակումը: Սակայն այստեղ առկա է նաև այնպիսի խնդիր, որ զարգացող երկրի փորձը կիրառելով տնտեսությունը դատապարտված է մնում մեծ առաջընթաց չունենալու, այսինքն՝ ընտրված չափանիշները չեն ապահովում լուրջ առաջխաղացում, այլ պարզապես ապահովում են իր նմանների կողքին որոշակի դիրք: Այս մոտեցումը քիչ ռիսկային է, քանի որ շատ հավանական է, որ նման ինովացիոն համակարգի մոդելի տեղայնացումը կգործի: Իսկ եթե ընդունում ենք սկզբունքորեն հակառակ կամ զարգացած և առաջանցիկ աճի տեմպեր ունեցող լուրջ զարգացում և հեռանկար ապահովող ինովացիոն համակարգի ներդրում կամ նմանատիպ փորձի տեղայնացում, ապա առաջին հերթին բախվում ենք չտեղայնացման բարդությունների հետ: Բայց և այնպես ռիսկի դիմելու և նման մոտեցմամբ ու մոդելով շարժվելու պարագայում կարելի է հասնել ավելի լուրջ հաջողությունների և դուրս գալ միջակայության կարգավիճակից: Իհարկե, մրցունակությունը ենթադրում է դիրքային առավելություն, և նման մոդելի ընտրության պարագայում է միայն դա երաշխավորվում:

Երրորդ մոդելի կամ մոտեցման էությունը կայանում է առանձին երկրների փորձից և Հայաստանի առանձնահատկություններից ելնելով խառը մոդելի մշակումը: Հարկ ենք համարում նշել, որ այս տարբերակը լավագույններից մեկն է, քանի որ ապահովում է ազգային ինովացիոն համակարգի բազմաֆունկցիոնալ բնույթ և հաշվի է առնում մի շարք կարևորագույն մրցունակության գործոններ, որոնք առկա են այս կամ այն երկրներում: Նմանատիպ ճիշտ մոդելի կառուցումը կարող է ապահովել լուրջ առաջընթաց: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ միջազգային ծրագրերով ազգային ինովացիոն համակարգի մոդելի ձևավորման հարցում աջակցություն գրեթե չի ցուցաբերվում, քանի որ սա նման է սեփական մրցակցային առավելությունն ուրիշին տալուն: Այսինքն՝ նման պարագայում ակնհայտ է դառնում, որ Հայաստանը դա պետք է իրականացնի իր սեփական ուժերով: Մեկ այլ կարևորագույն խնդիր է նաև այն, որ նման համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ են նաև լուրջ գիտական պատրաստվածություն անցած կադրեր, քանի որ տիրապետել բազմաթիվ

երկրների ազգային ինովացիոն համակարգերին, պատկերացնել այդ փորձի տեղայնացման հնարավորությունները, թերությունները և առավելությունները բավականին բարդ է: Դեռ ավելին անհրաժեշտ է նաև հետազայում ունենալ թիմ այդ ստեղծված համակարգը գործարկելու, բոլոր մակարդակներում անխափան գործունեություն և արդյունքներ ապահովելու համար: Կարելի է ասել նմանատիպ խնդիրներն են հենց այն հիմնական պատճառը, որ մինչև օրս մենք չունենք գործող և մրցունակ ազգային ինովացիոն համակարգ:

Վատագույն տարբերակներից մեկը նա է, որ կարող է լինել նաև այսպիսի սցենար, որ անհրաժեշտություն առաջանա հրաժարվել ազգային ինովացիոն համակարգ ստեղծելու գաղափարից, և որևէ ավելի խոշոր տարածաշրջանային համակարգում ենթահամակարգի դեր կատարելով սահմանափակվել: Իհարկե, սա ևս հնարավոր է, սակայն այստեղ ևս առկա է գործուն լինելու հանգամանքը, այսինքն՝ ինովացիոն համակարգը պետք է այնքան ինտեգրացված լինի տարածաշրջանային համակարգերին, որ պարզապես որոշակի նախագծեր իրականացնելով, հնարավոր լինի ապահովել վերջինիս մասնակցությունը: Սա կարելի է դիտարկել նաև ազգային ինովացիոն համակարգ ունենալու պարագայում որպես ածանցյալ բաղադրիչ, սակայն մենք դիտարկեցինք վերջինս որպես առանձին զարգացման մոդել:

Այս մոդելների ընտրության հետագա տրամաբանական քայլերը կապված են տեխնոլոգիաների միջազգայնացման, ինչու չէ նաև տեխնոլոգիաների միջազգայնացման հայեցակարգ ունենալու գաղափարի հետ: Այսպես՝ պետք է նշել, որ ազգային ինովացիոն համակարգի գործառնման համար մենք բախվում ենք մեկ այլ կարևորագույն խնդրի հետ, այն է՝ ինչպես ապահովել տեխնոլոգիաների միջազգայնացում և ինտեգրացում, քանի որ առանց այս երկու բաղադրիչների մեր ազգային ինովացիոն համակարգը կունենա պարփակված բնույթ և չի կարող դուրս գալ արտաքին տեխնոլոգիական և նորամուծությունների շուկաներ: Իսկ դա նշանակում է, որ տեխնոլոգիաների փոխանցում ապահովելը կդառնա լուրջ խնդիր:

Համաշխարհային տնտեսության վերջին զարգացումները հանգեցրել են նրան, որ մի շարք երկրներ հասել են տեխնոլոգիական զարգացման սկզբունքորեն նոր մակարդակի, սակայն այս ամենի հետ մեկտեղ կան երկրներ, որոնց չի հաջողվում իրենց ուրույն տեղը գտնել տեխնոլոգիաների համաշխարհային շուկայում, որն առաջին հերթին պայմանավորված է ազգային թույլ և ոչ մրցունակ ինովացիոն համակարգ ունենալու հանգամանքով: Մյուս կողմից առկա են նաև այդ շուկաներ ներթափանցելու մի շարք արգելքեր, որոնք փոքր երկրները համաշխարհային տնտեսության մեջ ունեցած իրենց փոքր տեսակարար կշռի պատճառով չեն կարողանում լուծել: Այս հիմնահարցերի լուծման հիմքերը հարկավոր է փնտրել տեխնոլոգիաների միջազգայնացման

հայեցակարգի ձևավորման և փուլ առ փուլ այն կյանքի կոչելու գաղափարի մեջ: Այսինքն՝ ազգային ինովացիոն համակարգ ձևավորելու վերջնական փուլը պետք է իր մեջ ներառի տեխնոլոգիաների միջազգայնացման հիմնահարցը: Սկզբունքորեն շատ երկրներ իրենց տեխնոլոգիաների միջազգայնացման խնդիրը թողում են ձեռնարկությունների վրա և ձեռնարկությունները սեփական ուժերով կարողանում են լուծել այդ խնդիրը, այսինքն՝ կարգավորված հստակ պետական քաղաքականությունն ավելի շատ կրում է տարերային այլ ոչ թե համակարգված բնույթ: Բայց և այնպես մի շարք դեպքերում (օրինակ՝ Ճապոնիայում, ԱՄՆ-ում և այլն) մենք հանդիպում ենք հստակ մշակված պետական քաղաքականության, և դրա նրա արդյունքն է, որ ազգային ինովացիոն համակարգի միջոցով լուծում են ստանում այն խնդիրները, որոնք կազմակերպությունները կամ երբեմն խոշոր կորպորացիաները իրենց սեփական միջոցներով չեն կարողանում լուծել: Այդ իսկ պատճառով ունենալ տեխնոլոգիաների միջազգայնացման մշակված հայեցակարգ, դա կնշանակի ապահովել տնտեսության զարգացման համար դեպի ապագան ուղղվածություն ունեցող ռազմավարություն՝ տեխնոլոգիաների շուկաներում մասնաբաժին ունենալու առումով: Այսպես՝ Մամսունգ ընկերության համար կարելի է ասել ամբողջ պետության մասշտաբով Կորեայի կառավարությունը ստեղծում է նպաստավոր պայմաններ, գրեթե նույն կարգավիճակն ուներ մինչճգնաժամային ժամանակաշրջանում Նոկիան Ֆինլանդիայում և այլն: Այսինքն՝ այն ոլորտներում, որտեղ պետությունը նկատում է իր կազմակերպությունների հնարավոր մրցունակությունը և ներուժը պետք է աջակցի և ստեղծի լիարժեք հաջողության հասնելու համար նպաստավոր պայմաններ:

Չարկ ենք համարում նշել, որ այս ոլորտի հիմնահարցերը բազմազան են ու բազմաբովանդակ և գտնվում են մի շարք տնտեսագետների, քաղաքագետների, իրավաբանների և հանրային կառավարման մարմինների ուշադրության կենտրոնում: Այդ իսկ պատճառով նպատակահարմար ենք գտնում ներկայացնել այս ոլորտում առկա որոշ տեսաբանների մոտեցումներ, որոնք հիմք կհանդիսանան տարբեր հիմնահարցեր դուրս բերելու համար:

Դեռևս 1996թ ՏՀԶԿ-ի (OECD) Բիզնեսի և արդյունաբերության խորհրդատվական հանձնաժողովը¹ հրապարակել էր մի փաստաթուղթ, որտեղ բարձրացվում էին միջազգային տեխնոլոգիական համագործակցության բարիերների հետ կապված հիմնահարցերը և այդ գործում ձեռնարկությունների ներգրավվածությունը: Այստեղ բարձրացվում էին պատենտների վրա կատարվող ծախսերի հարցը, դրանց պաշպանությունը, ձեռքբերման համակարգերը,

¹ Barriers to International Technology Co-operation Involving Enterprises, Discussion Paper by the BIAC Committee for Technology and Industry, Paris, 1 October 1996, <http://www.biac.org/statements/tech/DP96.pdf>

ֆիսկալ բարիերները, օրենսդրական կարգավորվածության հարցերը և այլն: Խնդիրներ, որոնք իսկապես այժմ արդիական են Հայաստանի և մի շարք այլ զարգացող երկրների համար:

Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Կեիթ Եգ Մասկուսի և Ալֆոնսո Գամբարդելլայի կողմից առաջադրված միջազգային տեխնոլոգիաների տրանսֆերի նոր տնտեսագիտական ձևակերպումը, քանի որ այն համադրում է տեխնոլոգիաների տրանսֆերի կամ տեղափոխման հին ու նոր համակարգերը և հստակ կերպով ցույց են տրվում նոր մոտեցման առավելությունները, ինչպես նաև նախանշվում են այն նոր քաղաքականության առաջարկությունները, որոնք կհանգեցնեն առավել հաջողված և մրցունակ համակարգ ունենալուն: Այսինքն՝ այս երկու հեղինակները ձևակերպում են մոտեցումներ, որոնք կարելի է ընդգրկել տեխնոլոգիաների միջազգայնացման հայեցակարգի մեջ, այն է՝ առանձին խոչընդոտների բացահայտումից մինչև որոշակի երկրներում սեփական տեխնոլոգիաներով հանդես գալը և ձեռնարկությունների մակարդակում նորամուծությունների նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը և այլն²:

Յուրահատուկ միջազգայնացման, նորամուծությունների և ձեռնարկատիրության կապի մոդել են առաջարկում 4 հեղինակներ՝ Ալբերտո Օնետտին, Անտոնելլա Ջուսչելլան, Մարիան Վ Ջոնսը և Պատրիցիա Պ ՄքԴուգալլ-Քովին, որոնք իրենց հետազոտության տրամաբանությունը կառուցում են նոր տեխնոլոգիաների վրա հիմնված բիզնես մոդել ունենալու գաղափարից ելնելով³: Հետաքրքիրն այն է, որ հեղինակները ներկայացնում են բիզնեսի մոդելների սահմանման կատեգորիալ վերլուծություն, սկսած Հուրվիցի (1996թ) մինչև Կոնդե (2009թ): Ներկայացվում են նաև մի շարք կարևորագույն չափանիշներ, որոնք փոփոխության են ենթարկվել տարիներով և ժամանակագրական տեսանկյունից ձեռնարկությունները հասել են տեխնոլոգիական զարգացման նոր մակարդակի: Այսինքն՝ այն ձեռնարկությունները, որոնց զարգացման ընթացքն այս առումով եղել է դանդաղ դրանք ետ են մնացել համաշխարհային տեխնոլոգիաների շուկայում մրցունակ դիրքեր գրավելու առումով: Իսկ ինչպես գիտենք երկրի մրցունակությունը որոշվում է ձեռնարկությունների մրցունակությամբ, ինչպես նաև մրցունակ ազգային ինտ-

² The New Economics of International Technology Transfer and Intellectual Property Rights, Keith E. Maskus, Professor of Economics, University of Colorado at Boulder, Alfonso Gambardella Professor of Management, Bocconi University, Prepared for IPR Task Force Meeting, Institute for Policy Dialogue and Brooks World Poverty Institute, Manchester UK, June 22-23, 2009.
http://policydialogue.org/files/events/Maskus_New_Economics_of_ITT_and_IPRs_Paper.pdf

³ Internationalization, innovation and entrepreneurship: business models for new technology-based firms. Alberto Onetti, Antonella Zucchella, Marian V. Jones, Patricia P. McDougall-Covin, Springer Science+Business Media, LLC. 2010,
<http://www.springerlink.com/content/qw8x32242g810m23/>

վացիոն համակարգ ունենալով, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել հիմքեր նոր տեխնոլոգիաներ ստեղծող և նորամուծական համակարգ ունեցող ձեռնարկությունների զարգացման համար՝ ցուցաբերելով վերջիններիս պետական լուրջ աջակցություն:

Ուշագրավ է նաև 2003թ-ին ՄԱԿ-ի կողմից հրապարակված ծավալուն աշխատությունը, որը վերնագրված է Տեխնոլոգիաների տրանսֆերի (տեղափոխման) դերը համաշխարհային տնտեսությանը հաջողությամբ ինտեգրվելու գործում⁴: Այստեղ ներկայացվում են հարցեր, որոնք կապված են հիմնականում երեք երկրների՝ Բրազիլիայի, Հնդկաստանի և Հարավ Աֆրիկյան Հանրապետության տեխնոլոգիական տրանսֆերի հաջողված փորձի կիրառության հետ: Հարցը կայանում է նրանում, որ այս երկրների փորձն ուսումնասիրված է և՛ քանակական, և՛ որակական չափանիշների հիման վրա, և ինչպես նկատելի է դառնում հետազոտության առանձին արդյունքներից այն բավականին ուսանելի է և կիրառական, քանի որ հստակ լուծումներ են տրվում այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են պատենտավորման գործուն համակարգի ստեղծումը, տեխնոլոգիաների զարգացման համար ներդրումների իրականացումը, ինչպես նաև տեխնոլոգիաների առևտրայնացումը և դրանց տարածումը:

Տեխնոլոգիաների միջազգայնացման հայեցակարգի հիմքում կարևոր է դնել նաև այնպիսի կարևորագույն տարրեր, ինչպիսիք են քանակական ցուցանիշները, որոնք կապված են գիտության չափման, ինչպես նաև տեխնոլոգիական հետազոտությունների արդյունքների հետ: Հենկ Ֆ Մօեդի, Վոլֆգանգ Գլանզելի և Ուլրիխ Շմոչի խմբագրությամբ 2005թ-ին լույս տեսավ մի դասագիրք, որտեղ քննարկվում են քանակական գիտության և տեխնոլոգիական հետազոտությունների հարցերը⁵: Մոտ 800 էջանոց այս աշխատության մեջ տեղ են գտել այնպիսի հարցեր ինչպիսիք են՝ R&D համակարգի արտադրողականության վերլուծության էկոնոմետրիկ մոտեցումները, ազգային գիտական և տեխնոլոգիական քաղաքականության հիմնական ցուցանիշները, տեխնոլոգիական հնարավորությունների պարադիգման և դրա զարգացումը, գիտական ցանցերի ուսումնասիրությունը համահեղինակության միջոցով, միջդիսցիպլինար հետազոտությունների վերլուծությունը, ցիտման կամ հղումների ցուցանիշների վերլուծությունը և այլն: Այս հիմնահարցերը կարելի է ասել կազմում են այն մեթոդաբանական կարևորագույն հարցերի բազան,

⁴ Transfer of Technology for Successful Integration into the Global Economy, United Nations New York and Geneva 2003, 218 p. http://www.unctad.org/en/docs/iteipc20036_en.pdf

⁵ Handbook of Quantitative Science and Technology Research, The Use of Publication and Patent Statistics in Studies of S&T Systems, edited by Henk F. Moed, Wolfgang Glanzel, Ulrich Schmoch, Kluwer Academic Publishers, New York, Boston, Dordrecht, London, Moscow, ©2005 Springer Science + Business Media, Inc. 800p. <http://yunus.hacettepe.edu.tr/~tonta/courses/spring2011/bby704/Handbook%20of%20Quantitative%20Science%20and%20Technology%20Research.pdf>

առանց որոնց վերաբերյալ խոր գիտելիքների և իմացության իրագործել ազգային ինովացիոն համակարգ ձևավորելու և տեխնոլոգիական տրանսֆերի գաղափարը կամ տեխնոլոգիաների միջազգայնացման կյանքի կոչումը գրեթե անհնար է: Դա է նաև այն պատճառներից մեկը, որ այժմ համաշխարհային մասշտաբով նոր տեխնոլոգիաների միջազգայնացման ասպարեզում այդքան շատ հետազոտություններ կան արված: Այդ իսկ պատճառով պատկերացում կազմելը և դրանք սեփական երկրի շահերին ի նպաստ օգտագործելը շատ կարևոր է:

Հարկ ենք համարում նշել, որ մեծ կարևորություն է տրվում նաև տեխնոլոգիաների արտահանման, ինչու չէ նաև երկու և ավելի երկրների կողմից համատեղ արտահանման քաղաքականության մշակմանը, որը կարելի է իրագործել առանձին երկրների գիտահետազոտական կազմակերպությունների համագործակցության և համատեղ ստեղծված արդյունքների միջոցով: Քանի որ այստեղ կան մի շարք դրական կողմեր, այն է՝ փորձի փոխանակում, ներուժի հզորացում և ուժերի միավորման արդյունքում սիներգետիկ էֆեկտի ստացում, միմյանց փոխլրացում և աջակցություն:

Ելնելով այս ամենից պետք է յուրաքանչյուր երկիր ունենա հստակ գործող ազգային ինովացիոն համակարգի բաղկացուցիչ մասը կազմող ինստիտուտներ, որոնք կմշակեն տեխնոլոգիաների միջազգայնացման հայեցակարգային հիմքերը, որի մեջ ընդգրկվում են այն ինստիտուցիոնալ միջավայրը, որտեղ գործում են այդ երկրի նորամուծական և գիտահետազոտական գործունեություն իրականացնող կազմակերպությունները, օրենսդրական դաշտը, ձեռնարկությունների նախատրամադրվածությունը դեպի նորամուծությունները, դրանց համախմբված բազաների ձևավորումը և համակարգված ու նպատակաուղղված կառավարումը և այլն: Այսինքն՝ պետք է ունենալ կուռ մեթոդաբանությունից մինչև գիտական արդյունքների առևտրայնացման և համատարած կիրառման շղթայի բոլոր տարրերը, իսկ դրանց բացակայության կամ խոչընդոտների դեպքում ստեղծել համակարգի բոլոր միավորները և առանձին օղակները և թույլ չտալ շղթայի ընդհատումներ, քանի որ դրանց վերականգնումն ինչպես ցույց է տալիս պատմությունը պահանջում է բավականին երկար ժամանակահատված: Այդ իսկ պատճառով ընդլայնելով միջազգային գիտական համագործակցության շրջանակները ստեղծվում են տեխնոլոգիաների միջազգայնացման լուրջ հնարավորություններ, առանց որոնց հաղթող լինել զլորալ մրցակցության այս պայմաններում գրեթե անհնար է:

НАЦИОНАЛЬНЫЕ ИНОВАЦИОННЫЕ СИСТЕМЫ В КОНТЕКСТЕ ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ ТЕХНОЛОГИЙ

Лусине Саргсян

*Соискатель и преподаватель кафедры Экономики
Европейской региональной академии образования*

Ключевые слова: технологии, национальная инновационная система, конкурентоспособная национальная инновационная система, мировая экономика, интернационализация технологий

Невозможно представить конкурентоспособной национальной инновационной системы без интернационализации технологий. Почему мы разделяем категории "национальная инновационная система" и «конкурентоспособная национальная инновационная система»?

Проблема заключается в следующем: мировая экономика развивается так прогрессивно и конкурентоспособность технологий и разных стран растет так быстро, что формирование национальной инновационной системы является необходимым, но не достаточным условием. Это означает, что можно сформировать инновационную систему на основе некоторых механизмов и моделей, но ее конкурентоспособность может оказаться под сомнением.

Но мы считаем, что национальная инновационная система должна быть конкурентоспособной с механизмами деятельности ее институтов для интеграции с различными странами и с региональными инновационными системами.

NATIONAL INNOVATIVE SYSTEMS IN THE CONTEXT OF INTERNATIONALIZATION OF TECHNOLOGIES

Lusine Sargsyan

*Ph.D. Student and Lecturer of the Economic Department
at European Educational Regional Academy*

Keywords: technologies, national innovative system, competitive national innovative system, world economy, internationalization of technologies

It is impossible to imagine a competitive national innovative system without internationalization of technologies.

Why are we separating the categories of “national innovative system” and “competitive national innovative system”. The problem is the following: on the basis of the progressive development of the world economy, as well as the increase of the competitiveness of technologies and economies of different countries, the formation of national innovative system is a necessary, but not a satisfactory condition. It means that it is possible to form an innovative system on the basis of some mechanisms and models, but the competitiveness of the latter can be contested.

But we think that the national innovative system should be competitive with the mechanisms of activity of its institutions to create a possibility to integrate into different countries' or maybe into regional innovative systems.

ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ ԻՆՂՈՒԿՏԻՎ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆ
ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Սուրեն Օհանյան

*Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտոր,
աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Իրինա Բաբայան

*Եվրասիա միջազգային համալսարանի ուսումնամեթոդական և գիտական
աշխատանքների գծով պրոռեկտոր*

Բանալի բառեր՝ ինդուկտիվ, կառուցողականություն, նախագծային մեթոդ, դեդուկտիվ մոտիվացում, ստեղծագործական աշխատանք, բանավեճ, գործարար խաղեր, վերջնարդյունքներ

Տեսական և գործնական առումով անհրաժեշտություն է առաջացել պարտադրված, միևնույն ձևաչափով ու հաճախ նաև մեթոդներով ներկայիս ֆորմալ կրթությունը հարմարեցնել և համապատասխանեցնել հասարակության նոր՝ հատկապես **ներառական կրթության** պահանջներին: Բոլոր պարագաներում միատեսակությունից, միևնույն մեթոդներով ուսուցումից, նախապես մշակված և բոլոր դասարանների ու խմբերի համար նախատեսված ծրագրային մեթոդաբանությունից անցնել ուսուցման ձևերի բազմազանության՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դպրոցի, խմբի, աշակերտի ու հատկապես դասընթացի յուրահատկությունները և ամենուրեք ուսուցումը իրականացնել տարբերակված¹: Հանրակրթության համակարգում բազմազանության և չափորոշիչների, որպես ուսուցման կողմնորոշիչային ցուցանիշների, օգտագործման միջոցով հնարավոր է խուսափել ներկայիս աշխատատեղից, մեծացնել աշակերտի, ուսուցչի և դպրոցի պատասխանատվությունը՝ հասնել առավել արդյունավետ ուսուցում:

Այս հետևությունը հիմնավոր է, որովհետև կարծեք թե կրթության գործող համակարգը ձևավորվել է անհատականության սահմանափակման, ինքնաուսուցման համար առաջացած բարենպաստ պայմանների անտեսման, ի հայտ եկած մոտիվացման նոր և իրական հնարավորությունների չօգտագործման և այլն նպատակներով: Սա խոսում է նաև այն մասին, որ մանկավարժական համակարգը դեռևս լիարժեք պատրաստ չէ գիտատեխնիկական առաջադիմությամբ պայմանավորված ուսուցման նոր մեթոդական հնարները օգտագործելու կրթական համակարգում:

Մեր օրերում ավագ դպրոցի գլխավոր խնդիրը հանգում է յուրաքանչյուր սովորողի համար անհատական նշանակություն ունեցող ուսումնառության

¹ Ken Robinson - <http://t.co/5AAj133sgv>.

արդյունքների ստացմանը: Բոլոր սովորողների, հատկապես ավագ դպրոցի և այդ թվում հատուկ կարիքներ ունեցող անձանց, նպատակները տարբեր են, հետևաբար դրանց հասնելու ուղիները նույնպես պետք է լինեն տարբեր: Ավելին, աշակերտը բնականոն պահանջ ունի ակտիվորեն շրջակա միջավայրում կատարել բացահայտումներ, ինքնադրսևորվել և հասնել իր համար ինքնուրույնաբար ձեռք բերված արդյունքների, հաճախ էլ գտնել գործնական նշանակություն ունեցող հարցերի պատասխաններ:

Այնպես որ, ուսուցման նոր ու ավելի արդյունավետ եղանակների լայնամասշտաբ օգտագործման միջոցով հնարավոր է խուսափել վերը նշված զանազան սահմանափակումներից, հասնել ուսուցման մեթոդաբանության բովանդակային փոփոխության: Ուսուցման այդ նոր մեթոդները տարիներ շարունակ օգտագործվում են «Եվրասիա» վարժարանում. արդյունքները բարձր են և՛ բնագիտական, և՛ հումանիտար, և՛ այլ առարկաների գծով: Բոլոր դասընթացներին սովորողների մոտ շատ մեծ ոգևորվածություն է նկատվում, նույնիսկ նախկինում ուսուցման նկատմամբ անտարբեր կամ հատուկ կարիքներ ունեցող աշակերտը ցուցաբերում է բարձր մոտիվացիա:

Վարժարանի (ազգային ավագ դպրոցի) գլխավոր խնդիրը հանրակրթության երրորդ աստիճանում կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումն է և աշակերտների նախամասնագիտական ուսուցման կազմակերպումը՝ նրանց նախապատրաստելով բարձրագույն մասնագիտական կրթության: Հետևաբար, ավարտական 10-ից 12-րդ դասարանները համարվում են անցումային՝ դպրոցից-համալսարան²:

Հետևաբար այս ավարտական աստիճանում զգացվում է ուսուցման այն մեթոդների և հնարների անհրաժեշտությունը, որոնք նախատեսված են (կամ կիրառվում են) և՛ հանրակրթական, և՛ համալսարանական կրթական ծրագրերում: Այնպես որ, վարժարանային կրթական ծրագրերի առավելագույն չափով մոտեցումը բարձրագույնի առաջին կուրսի մոտ պահանջներին բոլոր առումներով պետք է հիմնավորված համարել³:

Ուսումնասիրությունները մեզ բերեցին այն համոզման, որ վարժարանային ուսուցման արդյունավետության բարձրացումը պայմանավորված է նախևառաջ որակական, մեթոդական փոփոխություններով, հատկապես փոխներգործուն ստեղծագործական-հետազոտական բազմազան մեթոդների ներդրմամբ: Ավելին, նախագծերով (անհատական կամ թիմային) ուսուցման, հարցերի միջոցով ուսումնառության, պրոբլեմային ուսուցման, իրական ժամանակում բացահայտումների, հետազոտական, քեյսային (իրավիճակային վերլուծու-

² Ken Robinson-changing education paradigms (Talk Video) www.TED.com

³ Сакович С.М.-Иновационные технологии и методы обучения в профессиональном образовании www.mai.ru/events/sfiro/articles/sec1/sakovich.doc

թյան), մտագրոհային, բանավեճային (անհատական և խմբային), համեմատական վերլուծության (հատկապես նախամասնագիտացման ուսուցման առարկաներից), գործարար խաղերի, խմբավորման-դասակարգման, նախադեպային վերլուծության և այլ ավանդական ու ժամանակակից մեթոդների նպատակային ու ամենուրեք տարբերակված օգտագործման միջոցով: Այս մեթոդներով աշակերտների ներգրավվածությունը ուսուցման գործընթացներում բովանդակայնորեն փոխում է նրանց վերաբերմունքը ուսուցման նկատմամբ, մեծանում է հետաքրքրասիրությունը և ինքնահարցադրումների շրջանակը: Յուրաքանչյուր աշակերտ իր անհատական ունակություններից և հետաքրքրության ոլորտից ելնելով կատարում է ինքնուրույն հետազոտություն, որը և՛ նախասիրական, և՛ հիմնարար գիտելիքի ստացման գործոն է հանդիսանում⁴: Խնդիրը կայանում է նրանում, որ գործող կրթական մոդելը կարծեք թե նախադրյալներ չի ստեղծում ավանդական մեթոդական հնարքներից անցում կատարել ժամանակակից մեթոդների, այն է ըստ անհրաժեշտության օգտագործել տարբերակված բազմագործոն մեթոդիկա⁵:

Վերը թվարկած մեթոդները յուրահատուկ են իրենց բնույթով և ապահովում են տարբեր վերջնարդյունքներ, որովհետև տարբեր է նաև ուսուցման արդյունքում աշակերտների կարողությունները և հմտությունները: Սակայն, այս կամ այն մեթոդով անհատականացված աշխատանքը, աշակերտի յուրահատկություններից ելնելով համարժեք մեթոդով հանձնարարությունները, բերում են միմյանց ոչ շատ տարբեր կամ հավասար վերջնարդյունքների ստացման:

Բազմագործոն մեթոդներով ուսուցումը ենթադրում է այնպիսի հնարներ, որոնց մի մասը հանրակրթական դպրոցում նոր է կիրառվում կամ էլ իրենց յուրահատկությունների պատճառով գրեթե չեն գործածվում, սակայն նոր իրողությունների պայմաններում դրանց օգտագործումը դառնում է հրատապ: Նախագծային, բանավեճի, իրավիճակային վերլուծության, հետազոտական, գործարար խաղերի ուսուցման բարձր արդյունավետություն ապահովող մեթոդները ունեն թեմատիկ կիրառման ինքնատիպություն, և ոչ միայն մեթոդական աշխատանքի միացյալ, փոխկապակցված օգտագործման բազմազանության խնդիր են առաջադրում, այլ նաև մյուս բոլոր մեթոդներով միասնական ուսումնական գործընթացների իրականացումը դարձնում են անհրաժեշտություն:

Մեթոդական բազմազանությամբ պայմանավորված տարբերակված ուսուցման խնդիրը բովանդակայնորեն նոր է և պահանջում է փոխել ուսում-

⁴ Հակոբյան Ս. Է. -Երկրաչափություն 10-12, ուսուցչի ձեռնարկ, Եր., «Տիգրան Մեծ», 2009

⁵ Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ: Եր., «Անտարես», 2004

նական գործընթացի բնույթը, նախապես տրված ծրագրերով աշխատանքներ տանել, ներկայացնել դրանց արդյունքները հաշվետվությունների ու զեկույցների ձևով, ամփոփել հետազոտությունները, վերլուծել առանձին իրավիճակներ և կատարել բացահայտումներ: Դիցուք, դասի թեման ուսուցանվում է արդեն առանձին դերախաղերով՝ մասնակից դարձնելով աշակերտներին և այս եղանակով ուսումնառությունը դառնում է բավականին հետաքրքիր ու բազմազան: Թեմատիկ յուրահատկությունները նույնպես մեթոդական առումով համարժեք պահանջ են առաջադրում և վերը նշված ու մյուս բոլոր մեթոդները հաճախ օգտագործվում են միասնաբար, կամ հաջորդաբար՝ ըստ թեմայի յուրահատկության:

Սույն հոդվածում որպես օրինակ ներկայացնենք Եվրասիա վարժարանում ներդրված ինդուկտիվ մեթոդները ու կանգ առնենք նախագծերով ուսուցման, որպես ամենաընդհանրական փոխներգործուն ստեղծագործական-հետազոտական ուղիվածություն ապահովող մեթոդի վրա՝ նկատի ունենալով այս մեթոդի շատ բարձր արդյունավետությունը, որը նաև ընկած է գրեթե մյուս բոլոր մեթոդների հիմքում:

Ուսուցման նոր մեթոդներ ասելով պետք է հասկանալ հասարակական, տնտեսական և սոցիալական փոփոխությունների անհրաժեշտությամբ պայմանավորված մեթոդների այնպիսի համալիր, որոնք բավարարում են աշակերտին կատարելու ցանկացած փնտրտուք, ճանաչողական նոր բացահայտում (հոդվածի մեկնաբանություն, հարցազրույց և նրա անցկացման նոր ձևաչափ)՝ հետաքրքրությունների շրջանակի ինքնուրույնաբար բավարարելու պահանջ, որը լիարժեք կարող է համապատասխանել նրա մտավոր զարգացմանը և կրթությանը ներկայացվող նոր պահանջներին ու խնդիրներին:

Ավանդական ներկայիս ուսուցումը դեդուկտիվ է, հաճախ սկսվում է տեսություններով և ավարտվում դրանց գործնական նշանակության վերաբերյալ բացահայտումներով: Մինչդեռ ներկայացվող այլընտրանքային մեթոդները ինդուկտիվ են, թեմաները նախ և առաջ ներկայացվում են դիտարկումներով, դեպքերի վերլուծությամբ կամ խնդիրների բացահայտումներով: Դրանք առավելապես կառուցողական մեթոդներ են և աշակերտները ավելի պատրաստակամ են ստեղծել իրականության բացահայտման իրենց տարբերակները, քան թե ընկալել ուսուցչի ներկայացրած նյութը:

Ինդուկտիվ կամ այս նոր մեթոդական բազմազանությանը բնորոշ է կառուցողականությունը.

- ուսուցումը սկսվում է աշակերտին արդեն ծանոթ բովանդակությամբ կամ փորձով,
- ներկայացվող նյութը չի նախաձեռնվում այնպիսի ձևաչափով, որ աշակերտից հարկադրաբար պահանջվի կտրուկ փոխել իր ճանաչողական

կարողությունները (նրան չհանել աշխատել կարողանալու հնարավոր գոտուց դուրս), ապահովել պարույրաձև ուսումնառություն:

- աշխատանք է տարվում աշակերտներին ետ վարժեցնել դասավանդողներից՝ գիտելիք փոխանցողի աղբյուրից ունեցած կախվածությունից և օգնել նրանց ինքնակրթվել:
- ապահովվում է փոքրաթիվ խմբերով ուսուցում՝ խրախուսելով կոլեկտիվ և համատեղ աշխատանքը:
- ուսումնառության ընթացքում ստեղծվում են այնպիսի իրավիճակներ, որպեսզի աշակերտին դրդեն ինքնուրույն աշխատանքի կամ հետազոտության, ինչը գրեթե հնարավոր չէ ավանդական կրթության պարագայում:

Աշակերտը ինքնուրույնաբար աշխատելիս իր համար բացահայտումներ է կատարում, օրինաչափություններ է պարզում, հասկանում է նյութերի, առարկաների և երևույթների հատկությունները, փոփոխությունների պատճառները: Մանկավարժին մնում է պատասխանել նոր մեթոդով այս կամ այն խնդրի քննարկման ընթացքում առաջացած հարցերին, ուղղորդել սովորողներին ուսումնական նյութի յուրացման գործընթացում սովորողի մոտ հիմնախնդրի հետազոտման մեթոդական շտկումներ կատարել, այլ ոչ թե միայն «վերնից» աշակերտին պարտադրել գիտելիք՝ հաճախ առանց խորանալու դրա մեջ, կամ էլ մատուցել նրա մտավոր ունակություններին անհամապատասխան կրթական ծառայություն:

Այսպիսով, նոր կամ ինդուկտիվ մեթոդներով ուսուցում ասելով հասկանում ենք տեսողական, հոգեբանական, մանկավարժական, կազմակերպական, կառավարման, տեղեկատվական-տեխնոլոգիական մեթոդների, մոտեցումների և միջոցների մի այնպիսի բազմազան մեթոդների ամբողջություն, որը բոլոր մակարդակներում տարբերակված կիրառելու պարագայում նպաստում է սովորողի մոտիվացման բարձրացմանը:

Այս հնարները զուգակցված կամ առանձին-առանձին օգտագործելու միջոցով հնարավոր է դառնում սովորողին և/կամ ուսումնական խմբին սովորեցնել նախագծել, նախապես պլանավորել, ուսուցման միջավայրը վերածել հիմնախնդիրների (թեկուզ պարզ կամ հասարակ) հետազոտության, կատարել այնպիսի բացահայտումներ, որոնք աշակերտին միջտ կպահեն հետազոտական դաշտում, ինչը նախապայման կհանդիսանա ուսուցման նկատմամբ նրա մոտիվացման բարձրացման համար: Մա այն ցանկալի և հաստատուն ճանապարհն է, որը ընդհանրացված կարգով նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Նկատի ունենալով ժամանակի շունչը, դպրոցի խնդիրը պետք է լինի աշակերտին անհատական կամ խմբային եղանակով սովորեցնել ճիշտ և

արդյունավետ կողմնորոշվել տեղեկատվական դաշտում, նոր աղբյուրներից օգտվելու կարողություններ ձեռք բերել, ինքնուրույնաբար գտնել և խմբավորել հետաքրքրության առարկա դարձած խնդրի լուծման վերաբերյալ նյութերը և յուրացնել որպես գիտելիք՝ իրական ուղի հարթելով ճանաչողության գործընթացի համար, կարևորելով հատկապես սովորեցնել սովորելու սկզբունքը:

Անշուշտ լուրջ դժվարություններ են առաջանում նոր ուսուցման մեթոդներով (ՆՈՒՄ) աշխատող ուսուցիչների համար: Նրանք պետք է ստեղծեն հակասական իրավիճակներ և դրանցից դուրս գալու ելքեր առաջարկեն աշակերտներին՝ օրինակներ բերելով գործնական կյանքից, կամ միննույն հարցի վերաբերյալ ներկայացնել ոչ միատեսակ կարծիքներ, որոնց քննարկումը և արդյունքների ամփոփումը ձևակերպվում է որպես աշակերտների ընդհանրացված կամ էլ ցայտուն արտահայտված եզրակացություններ: Փաստորեն, վարժարանի մանկավարժները աշակերտների մոտ առաջացնում են ուսումնական գործունեության նոր ձևեր ու դրսևորումներ, այսինքն ծրագրված կարգով օգտագործելով նաև աշակերտի ներուժը՝ նպաստում են նրա տեսական և գործնական գիտելիքի յուրացմանը: Ընդ որում, այս ընդհանրացումը նկատի ունենալով ՆՈՒՄ-ը չպետք է դիտել որպես առարկայական համակարգված ուսուցմանը փոխարինող մեթոդներ, այլ ընդհակառակը՝ դրանց հետ ներդաշնակ, կրթական համակարգում ժամանակի թելադրանքով նպատակայնորեն օգտագործվող մեթոդական նոր ու բազմակողմանի հնարքներ:

Մեկ հավելում ևս. դասական առարկայական ուսուցման և հասարակական զարգացումներով պայմանավորված փոփոխությունների միջև առաջացել է աններդաշնակություն: Ամենուրեք և ամեն տեղ օգտագործվող նոր տեխնոլոգիաները աշակերտին հարկադրաբար ստիպում են գործելու թվայնացված միջավայրում, ինչը առավել դյուրին է դարձնում աշակերտի համար տեղեկատվության հայթայթումը: Աշակերտ-թվայնացված միջավայրային կապը արտահայտվում է բարձր գրավչությամբ, առաջանում և գործում է հաճելիության և բնականոնի մոտեցված գործունեության դաշտում:

ОБУЧЕНИЕ ПОСРЕДСТВОМ ИНДУКТИВНОГО И РАЗНООБРАЗНЫХ МЕТОДОВ

Сурен Оганян

*Ректор Международного университета Евразия,
доктор географических наук, профессор*

Ирина Бабаян

*Проректор по учебно-методической и научно-исследовательской деятельности
Международного университета Евразия*

Ключевые слова: индуктивный, конструктивный подход, метод исследовательских работ (проектов), мотивация методом дедукции, творческая работа, дебаты, деловые игры, конечные результаты

С точки зрения теории и практики, в настоящее время возникла необходимость в адаптации обязательного формального обучения с одинаковыми формами и методами новой общественной реальности, в частности совместное обучение и воспитание учащихся в ограниченных возможностями здоровья. Назрел вопрос о переходе от дедуктивного метода обучения в индуктивный.

Авторы данной статьи обосновывают необходимость в использовании разнообразных методов в процессе обучения. В частности, подчеркивается важность метода исследовательских работ (проектов) как средство дифференцированного обучения, развития творческих исследовательских навыков и повышения мотивации студентов на всех уровнях образования.

TEACHING THROUGH INDUCTIVE AND VARIED METHODS (ABSTRACT)

Suren Ohanyan

*President of Eurasia International University,
Doctor of Geographical Sciences, Professor*

Irina Babayan

*Vice-President of Educational Affairs and research activities at
Eurasia International University*

Key words: inductive, constructive value, method of project, deductive motivation, creative work, debate, business-imitation games, outcomes

In terms of theory and practice, there is a need to adapt the current compulsory formal education with the same forms and methods to the new social reality, in particular integrated teaching and upbringing of learners with physical disabilities. We face an urgent need to make a transition from the deductive method to the inductive one.

The authors of the article argue in favor of variety of methods in teaching process. Specifically, the authors emphasize the project-based method which ensures differentiated instruction, development of creative research skills, as well as rise of students' motivation on different levels of education.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ /ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ԵՎ
ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Լիլիթ Պիպոյան

*«Մասնագիտական կրթության որակի ապահովման
ազգային կենտրոն» հիմնադրամի
Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հայցորդ*

Բանալի բառեր՝ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթություն, պլանավորում, մոդել

Վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (այսուհետ՝ ՄԿՈՒ) ոլորտում տեղի են ունեցել և շարունակվում են էական բարեփոխումների գործընթացներ, որոնց հիմքում ընկած են մի շարք օրենսդրական և ենթօրենսդրական փաստաթղթեր՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը (1999թ.), «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը (2005թ.), «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ռազմավարությունը» (2004թ.), Որակաորումների ազգային շրջանակը (2011թ.) և այլն: ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումներին նպաստել են նաև ՄԿՈՒ կառավարման և մեթոդական աջակցության ենթակառուցվածքների ձևավորումը, մասնավորապես՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմում ձևավորվել է նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությունը, Կրթության ազգային ինստիտուտում ձևավորվել և հաջողությամբ գործում է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը, ՀՀ տարբեր նախարարությունների, մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող արհեստագործական ուսումնարանները և քոլեջներն անցել են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության, ձևավորվել են 12 տարածաշրջանային քոլեջներ և այլն: Էական փոփոխություններ են կատարվել նաև ՄԿՈՒ ոլորտի ուսուցման բովանդակության մեջ. մշակվել և ներդրվել են կարողություններին (վերջնարդյունքներին) միտված կրթական չափորոշիչներ հանրապետությունում ուսուցանվող գրեթե բոլոր մասնագիտությունների գծով, ուսուցումը հիմնականում իրականացվում է մոդուլային եղանակով և այլն:

Միաժամանակ, ՀՀ ՄԿՈՒ համակարգում առկա են հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են բարեփոխումների բնականոն գործընթացը, մասնավորապես՝ ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում դեռևս կենսագործված չէ կրթության որակի մշակույթի ձևավորումը, շատ կրթական

գործընթացներ ընթանում են սովորույթի ուժով, ինչն էլ ազդում է ուսուցանման որակի և աշխատաշուկայում ՄԿՈՒ շրջանավարտների մրցունակության վրա: Դրանում էական ազդեցություն ունի նաև պլանավորման հստակ գործընթացների բացակայությունը կամ ձևական, ֆորմալ բնույթը շատ ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում: Հարկ է նշել, որ պլանավորումն ընկած է կազմակերպությունների զարգացման կառավարման գործունեության հիմքում, օգտագործվում է նպատակների ու խնդիրների, ինչպես նաև դրանց իրականացման որոշակիացման համար: Պլանի կատարումն ապահովվում է մարդկային և նյութական ռեսուրսներով, ուղեկցվում է կազմակերպա-կառավարման կառուցվածքների վերակառուցմամբ: Պլանավորումը հանդիսանում է ժամանակակից կառավարաբանության կենտրոնական օղակը և նրա բովանդակությունը հակիրճ կարելի է սահմանել որպես նպատակների որոշում և դրանց իրականացման ուղի: Պլանավորման գործընթացի արդյունքն է որոշակի ժամանակահատվածի համար նախատեսված պլանը, որտեղ նշված են դրա նպատակները, խնդիրները և գործողությունները, կատարման ժամկետները, սպասվելիք արդյունքներն, իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները, պատասխանատու կատարողները¹:

Ելնելով վերոգրյալից՝ մենք մեր առջև խնդիր ենք դրել մեթոդական երաշխավորություններ մշակել ՄԿՈՒ ոլորտում պլանավորման գործընթացների արդյունավետ իրականացման համար, ինչն էլ կարող է հիմք հանդիսանալ ՄԿՈՒ պլանավորման մոդելի՝ որպես ուսուցման որակի ապահովման գործիք մշակման համար: Նման երաշխավորությունների մշակումը կարևորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ Եվրամիության կողմից ՄԿՈՒ համակարգին տրամադրվող ֆինանսավորման նախապայմանների կատարման համար: Այդ խնդիրը լուծելու համար մեր կողմից հարցազրույցներ են իրականացվել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցների, ՄԿՈւ ոլորտի փորձագետների, առանձին ՄԿՈՒ հաստատությունների տնօրենների ու աշխատակիցների հետ, ուսումնասիրվել և վերլուծվել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում իրականացված ուսումնասիրությունները, ինչպես նաև առանձին գրական աղբյուրներ², որոնց ցանկը բերված է սույն աշխատանքի վերջում:

¹ Менеджмент в Профессиональном Образовании. Модуль II: Планирование. Европейский Фонд Образования. 2002. с. ix

² Менеджмент в Профессиональном Образовании. Модуль II: Планирование. Европейский Фонд Образования. 2002. с.71.; Պետրով Ն. ՄԿՈՒ արդիականացման կառավարման ձեռնարկ: ԵՄ Տարսիս-ՄԿՈՒ Հայաստան. Աջակցություն Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) միասնական համակարգի զարգացմանը, էջ 2005 – 216: Trends in VET policy in Europe 2010-12. Progress towards the Bruges communiqué. European Centre for the Development of Vocational Training, 2012. p.114:

Ստորև ներկայացվում են այն երաշխավորությունները, որոնք մեր կողմից առաջարկվում են ՄԿՈԻ համակարգի գործունեության պլանավորման մոդելի մշակման համար:

Միջազգային մոտեցումների համաձայն՝ ՄԿՈԻ ոլորտում պլաններն իրենց բովանդակությամբ կարող են լինել՝

- ՄԿՈԻ համակարգի զարգացման պլան,
- ՄԿՈՒ ուսումնական հաստատության զարգացման պլան,
- ուսումնական պլաններ,
- դասախոսական անձնակազմի որակավորման բարձրացման պլաններ և այլն:

Ըստ որոշման կայացման՝ պլանները կարող են լինել՝

- համապետական,
- մարզային,
- ուսումնական հաստատության,
- անհատական:

Ըստ ժամկետների՝ պլանները կարող են լինել՝

- երկարաժամկետ /ռազմավարական՝ 5 տարուց ավել/,
- միջնաժամկետ /մարտավարական՝ 1-5 տարվա համար/,
- կարճաժամկետ /օպերատիվ՝ մինչև 1 տարի/ պլաններ:

Կազմակերպական տեսանկյունից պլանավորման գործընթացը բաց շրջափուլ է /ցիկլ/, որին կարելի է ստորաբաժանել հաջորդական փուլերի, որոնցից յուրաքանչյուրի ընթացքում որոշվում են որոշակի մասնավոր խնդիրներ:

Պլանավորման գործընթացը կարող է կազմված լինել հետևյալ փուլերից՝

- Կազմակերպական նախապատրաստում
- Կանխատեսումային վերլուծություն
- Նպատակ/ներ/ի որոշակիացում
- Խնդրի դրվածքի սահմանում
- Գործողությունների մշակում
- Ռեսուրսային ապահովում
- Պլանի ձևակերպում և հաստատում
- Կատարման մշտադիտարկում
- Արդյունքների ամփոփում
- Նոր պլանային շրջափուլ:

Վերոգրյալ յուրաքանչյուր փուլ հանդիսանում է մեկը մյուսի տրամաբանական և օրգանական շարունակությունը:

Քննարկենք դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը:

Պլանավորման մշակման կազմակերպավերլուծական շրջանն իր մեջ ներառում է առաջին երկու՝ կազմակերպական նախապատրաստման և կանխատեսումային վերլուծության փուլերը:

Կազմակերպական նախապատրաստման փուլ

Պլանի մշակման համար որոշակիացվում են կազմակերպական պայմանները, որոնց ստեղծման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- Մշակողների կազմի որոշարկում /աշխատաքային խումբ, հանձնաժողով/
- Փաստաթղթի մշակման ժամկետների սահմանում
- Մեթոդական ապահովում
- Վարչական օժանդակություն:

Տեղեկատվության հավաք և մշակում

Պլանավորման տեղեկատվական ապահովումը հանդիսանում է նախապլանային տեղեկատվության հավաքը և համակարգումը, որի հիման վրա հետագայում ընդունվելու է պլանային որոշումը: Այդ տեղեկատվությունը հիմք է հանդիսանալու գոյություն ունեցող իրավիճակի վերլուծության, միտումների որոշման, իրական նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացահայտման համար:

Նախապլանային տեղեկատվության մեջ են ընդգրկվում հաշվառման և հաշվետվողականության տվյալները, նախորդ պլանավորման գնահատման նյութերը, դիրեկտիվ և նորմատիվ փաստաթղթերը, գիտական հրատարակումները, մեթոդական նյութերը: Անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել նաև հատուկ ուսումնասիրություններ /հարցումներ, դիտարկումներ, փորձագիտական գնահատումներ և այլն/:

ՄԿՈԻ ոլորտի զարգացման ցուցանիշների ընդհանրացման համար կարելի է օգտագործել ամփոփիչ աղյուսակ, որտեղ կարող են ընդգրկվել տվյալներ ուսումնական հաստատությունների քանակի, հանրակրթությունում և մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ու շրջանավարտների քանակի ու տոկոսային հարաբերության, ուսումնառության արդյունքների, շրջանավարտների զբաղվածության, վերապատրաստման դասընթացների կազմակերպման, բյուջետային և արտաբյուջետային ֆինանսավորման ու այլ ցուցանիշների մասին:

Արդյունքում ստացված տեղեկատվությունը թույլ կտա իրականացնել SWOT վերլուծություն՝ բացահայտելով ներքին միջավայրի ուժեղ և թույլ կողմերը մի կողմից, և արտաքին միջավայրի նպաստավոր հնարավորությունները և սպառնալիքները՝ մյուս կողմից:

Ներքին միջավայրի վերլուծությունը պետք է իրականացվի հետևյալ ցուցանիշների վերլուծության հիման վրա՝

- կրթական ծառայությունների ծավալը,
- կրթական ծառայությունների որակը,

- նյութական ապահովվածությունը,
- կադրային ապահովվածությունը,
- կառավարման գործընթացները:

Արտաքին միջավայրի վերլուծությունը պետք է իրականացվի հետևյալ ցուցանիշների վերլուծության հիման վրա՝

- սոցիալ-տնտեսական զարգացում,
- աշխատաշուկա,
- կրթական ծառայությունների շահակիցներ,
- նորմատիվաիրավական ապահովում,
- այլ պետական մարմիններ և կազմակերպություններ,
- գործընկերներ,
- պետական ֆինանսավորում:

Վերոգրյալ մտտեցումներն արտահայտված են նկար 1-ում:

Նպատակ/ներ/ի որոշակիացման փուլ

Նպատակի որոշակիացման փուլը պլանի մշակման առանցքային փուլն է: Այն չպետք է շփոթել նպատակի որոշման հետ:

Նպատակի որոշակիացումը ընդգրկում է երեք հաջորդական ենթափուլեր.

- նպատակների որոշում /ռազմավարական՝ հեռանկարային նպատակներ, միջնաժամկետ՝ կոնկրետ նպատակներ/,
- խնդրի դրվածքի իրականացում,
- գործողությունների մշակում:

Խնդրի դրվածքի իրականացումը պետք է համապատասխանի որոշակի չափանիշների, որոնք ձևակերպվում են ընդհանուր անգլերեն անվանումով՝ SMART /հինգ չափանիշների վերլուծություն/: Հայերեն դրանք թարգմանվում են հետևյալ կերպ՝

- Կոնկրետ
- Չափելի /ստուգելի վերջնարդյունքների առկայություն/
- Իրագործելի /շահագրգիռ կողմերի միջև համաձայնության առակայություն/
- Համապատասխան /որոշվում է SWOT վերլուծության արդյունքում/
- Որոշակի /Իրականացման ժամկետների որոշակիություն/:

Պլանային ցուցիչներ

Ցուցիչը պլանավորվող արդյունքների համառոտ բնութագիրն է: Ընտրելով այս կամ այն ցուցիչը և տալով նրան քանակական կամ այլ արտահայտություն՝ հնարավոր է կոնկրետ ամրապնդել դրված նպատակները և խնդիրները:

ՄԿՈԻ ոլորտում կարելի է օգտագործել քանակական ցուցիչներ, որոնք բնութագրում են ՄԿՈԻ համակարգի գործունեության ծավալային կողմը: Այդպիսի ցուցիչներ կարող են լինել ուսանողների քանակը, մասնագիտու-

թյունների թիվը, դասախոսական անձնակազմի թիվը, նյութական ռեսուրսները և այլն:

Ի տարբերություն նախորդի՝ որակական ցուցիչները որոշում են կատարված աշխատանքի արդյունավետությունը, նրա համապատասխանությունը նախանշված պահանջներին, դրանք կարող են լինել շրջանավարտների որակավորման մակարդակի, նրանց ըստ ստացած որակավորումների աշխատանքի տեղավորման, դասախոսական անձակազմի մասնագիտական մակարդակի, ուսումնառության մեթոդների և այլն ցուցանիշներ:

Ցուցիչները կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Միաժամանակ նրանք կարող են լինել բացարձակ կամ հարաբերական: Պլանային ցուցիչները պետք է համապատասխանեն հաշվառման և հաշվետվողականության ցուցանիշներին:

Պլանավորման եզրափակիչ փուլը

Պլանավորման եզրափակիչ փուլն իր մեջ ներառում է մի քանի իրար հաջորդող ենթափուլեր՝ ռեսուրսային ապահովման պլանավորում, պլանային փաստաթղթի ձևակերպում, դրա համաձայնեցում և հաստատում:

Ֆինանսական և նյութական ապահովման պլանավորումը հանդիսանում է ռազմավարական պլանների և ծրագրերի իրականացման անքակտելի բաղադրիչը: Այդ խնդրի լուծման համար նպատակահարմար է օգտագործել պլանավորման հաշվեկշռային /բալանսային/ մեթոդը: Տարբերում են հաշվեկշռի երեք հիմնական տեսակ՝

- նյութական հաշվեկշիռ,
- ֆինանսական հաշվեկշիռ,
- աշխատանքային հաշվեկշիռ:

Նյութական հաշվեկշիռն անհրաժեշտ է հաշվարկել մինչև ֆինանսական հաշվեկշռին անցնելը: Այն կարելի է կազմել աղյուսակ 1-ում բերված ձևաչափի հիման վրա.

Աղյուսակ 1. Նյութական հաշվեկշռի կազմման ձևաչափ

Առկա ռեսուրսները			Անհրաժեշտ ռեսուրսները		
h/h	Անվանումը	Քանակը	h/h	Անվանումը	քանակը
1.					
2.					
3.					
h/h	Պահանջվում են լրացուցիչ միջոցներ	Քանակը	Ստացման աղբյուրները		
			ձեռքբերում		
			վարձակալում		
			պատրաստում		
			փոխանակում		
			փոխառում		

Իր հերթին, ֆինանսական հաշվեկշիռը կարելի է կազմել աղյուսակ 2-ում բերված ձևաչափի հիման վրա.

Աղյուսակ 2. Ֆինանսական հաշվեկշռի կազմման ձևաչափ

Ենթադրվող ծախսեր			Անհրաժեշտ ծախսեր		
h/h	Անվանումը	Գումարը	h/h	Անվանումը	Գումարը
1			1		
2			2		
3			3		
4			4		
5			5		
Ընդամենը			Ընդամենը		
Ծախսերի գերազանցումը եկամուտների նկատմամբ			Եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ		
Հաշվեկշիռ՝			Հաշվեկշիռ՝		

Եթե հաշվեկշռի երկու մասերն իրարից տարբերվում են, ապա անհրաժեշտ է իրականացնել դրանց ճշգրտումը. կամ պետք է կրճատվի ծախսերի ծավալը, կամ պետք է պլանավորվի եկամուտների անհրաժեշտ ծավալ՝ միջոցների անբավարարությունը փակելու համար:

Ուսումնական հաստատության մակարդակում աշխատանքային հաշվեկշիռ է հանդիսանում ուսանողների քանակի հարաբերակցությունն ուսումնական հաստատությունում աշխատողների քանակի հետ: 'Դրա հիման վրա որոշվում է աշխատանքային հաշվեկշռի քանակի նորման, այսինքն՝ թե քանի ուսանողի քանի աշխատող պետք է հասնի: Այդ նորմայի հիման վրա պլանավորվում է հաստիքացուցակը:

Պլանավորման փաստաթղթի կազմումը

Պլանավորման փաստաթղթի որևէ համընդհանուր ձև գոյություն չունի, որը բավարարի բոլորի պահանջները: Բայց կազմելուց և հաստատվելուց հետո այս փաստաթուղթը պետք է հիմք հանդիսանա կատարողների պարտականությունների իրականացման, ինչպես նաև մշտադիտարկման և վերահսկման համար: Որքան որ հստակ է կազմված փաստաթուղթը, այնքան առավել հեշտ է այն կենսագործել:

Պլանավորման փաստաթուղթը պետք է կազմված լինի երկու բաժնից՝

- վերլուծական մասից,
- պլանի կատարման ժամանակացույցից:

Վերլուծական մասը պետք է արտահայտի կանխատեսումային վերլուծության և նպատակադրման արդյունքները: Այստեղ պետք է տեղեկատվություն լինի հետևյալի մասին.

- պլանի նշանակությունը /նպատակը/՝ ըստ բովանդակության, տեսակի, ժամկետների, այլն,
- պլանի կապը և համապատասխանությունը կրթության ոլորտի զարգացման նորմատիվային և օրենսդրական դաշտի հետ,
- ՄԿՈւ ոլորտի զարգացման բարեփոխումների հակիրճ վերլուծությունը, ինչը շաղկապված է պլանի նպատակի հետ,

- այդ վերլուծությունից բխող հիմնական հիմնախնդիրներից ձևավորվող եզրակացությունները,
- պլանի գերակա նպատակների ձևակերպումներ՝ ուղղված վերոգրյալ հիմնախնդիրների լուծմանը,
- գերակա նպատակների իրականացման համար պլանային խնդիրների ձևակերպումները,
- պլանի իրականացման մասնակիցների և գործընկերների ցուցակը:

Պլանային փաստաթղթի վերլուծական մասը պետք է հնարավորինս հակիրճ լինի, իսկ արծարծվող նյութը՝ տրամաբանական և շաղկապված:

Կարելի է երաշխավորել վերլուծական մասի հետևյալ կառուցվածքը՝

- ներածություն,
- գործնական միջավայրի վերլուծություն,
- հիմնախնդիրներ և դրանց լուծման նախադրյալներ,
- գերակա նպատակներ և խնդիրներ,
- մասնակիցներ և գործընկերներ:

Պլանի համաձայնեցում և հաստատում

Պլանի ռեսուրս-կազմակերպական ապահովման փուլի ավարտական ենթափուլը դրա համաձայնեցումն ու հաստատումն է: Պլանը համաձայնեցվում է բոլոր այն վերադաս մարմինների հետ, որոնցից կախված է պլանի իրագործումը, և այնուհետև, հաստատվում է: Դրանից հետո պլանը վերածվում է փաստաթղթի, որը ենթակա է իրականացման:

Մշտադիտարկում /մոնիթորինգ/

Պլանի հաստատումից հետո պլանային գործունեությունը դեռևս չի ավարտվում: Պլանի մշակողները պետք է նախատեսեն և պլանավորեն պլանի իրականացման մշտադիտարկման համակարգ: Այն կարող է ընդգրկել՝

- պլանի իրականացման ընթացքի պարբերաբար դիտարկումներ,
- պլանի իրականացման տարբեր փուլերի իրավիճակի գնահատում,
- պլանի բովանդակության և/կամ իրականացման մեթոդների ճշգրտում:

Պլանի իրականացման ընթացքի մշտադիտարկման համար անհրաժեշտ են կայուն և կոնկրետ ցուցանիշներ, որոնցից են պլանի նպատակները, խնդիրները, միջոցառումները, նախատեսված ռեսուրսները, կատարման ժամկետները, սպասվելիք արդյունքների ցուցանիշները:

Պլանի իրականացման ընթացքի դիտարկումների համար ներկայացվում են հետևյալ պահանջները.

- քանակական
- որակական:

Ստացված տեղեկատվությունը պետք է մշակվի և փաստաթղթավորվի՝ մշտադիտարկման հաջորդ փուլի՝ գնահատման իրակացման համար:

Գնահատումն իրականացվում է ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա: Ընդ որում գնահատումն ունի երկակի նպատակ՝

- ձեռք բերված արդյունքների համապատասխանությունը ծրագրավորվածին,
- պլանային նպատակներին հասնելու հնարավորությունը գոյություն ունեցող պայմանների դեպքում:

Առաջին գնահատումը վերաբերում է պլանի իրականացնողների աշխատանքին: Երկրորդը վերաբերում է իրավիճակի վերլուծությանը, որը ձևավորվում է պլանի իրականացման միջանկյալ փուլում՝ կախված իրականացման ժամկետների, ռեսուրսների առկայության, արտաքին և միջավայրի գործոնների և մի շարք այլ գործոնների ազդեցության տակ, և որոնցից կախված է վերջնական արդյունքերին հասնելը:

Գնահատման գործընթացն ավարտվում է՝ պլանի իրականացման ընթացքում որոշակի ճշգրտումներ ներմուծելով: Այն դեպքում, երբ գնահատման արդյունքում պարզվել է, որ պլանի առանձին միջոցառումների իրականացումն իրական չէ, ապա այդ դեպքում կարելի է առաջարկություններ ներկայացնել դրանց իրականացման դադարեցման, և որպես այլընտրանք առաջաջարկել նոր միջոցառումներ, որոնք կարող են ընդգրկվել պլանում:

Արտաքին մշտադիտարկում

Պլանի իրականացման ընթացքում բացի ներքին մշտադիտարկումից և պլանի իրականացման ճշգրտումից, որպես կանոն, պետք է իրականացվի նաև արտաքին մշտադիտարկում: Այն կարելի է իրականացնել մի քանի գործիքների՝


- հաշվետվությունների,
- ստուգումների հիման վրա:

Պլանի կատարման մշտադիտարկման և պլանային պարբերաշրջանի ավարտական փուլն է հանդիսանում արդյունքների ամփոփումը: Պլանի իրականացման գլխավոր ցուցանիշները որոշվում են պլանային նպատակներին և խնդիրներին հասնելու աստիճանի գնահատման հիման վրա, որոնք կատարվում են պլանային փաստաթղթում ամրագրված ցուցիչների բազայի վրա: Գնահատման արդյունքների հիման վրա կարելի է դատել պլանի իրականացման արդյունավետության մասին:

Ընթացիկ պլանի իրականացման արդյունքների ամփոփումը միաժամանակ հանդիսանում է նոր պարբերաշրջանի սկիզբ:

Այսպիսով, մեր կողմից առաջարկված վերոգրյալ մոտեցումները, երաշխավորությունները և առաջարկությունները կարող են հիմք ծառայել ՄԿՈՒ պլանավորման մոդելի մշակման համար, որն էլ իր հերթին կարող է ծառայել որպես ուսուցման որակի ապահովման գործիք ինչպես ՄԿՈՒ ողջ համակարգի կառավարման (մակրոմակարդակ), այնպես էլ առանձին ՄԿՈՒ հաստատությունների համար (միկրոմակարդակ):

Նկար 1. ՄԿՈԻ պլանավորման կանխատեսումային վերլուծության գործընթացի գծապատկեր



ПЛАНИРОВАНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ СИСТЕМЫ НАЧАЛЬНОГО И
СРЕДНЕГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ КАК ИНСТРУМЕНТ ОБЕСПЕЧЕНИЯ КАЧЕСТВА ОБУЧЕНИЯ

Лилит Пипоян

Специалист отдела институциональной и программной аккредитации
Фонда “Национальный центр по обеспечению качества профессионального
образования”

Соискатель Государственного экономического университета Армении

Ключевые слова: начальное и среднее профессиональное образование, планирование, модель

В наряду с осуществленными реформами в системе профессионального образования и обучения (ПОО) в Армении за последние годы, имеются также многочисленные проблемы, одной из которых является отсутствие модели планирования системы ПОО. В настоящей работе показаны основные предпосылки для разработки данной модели, приведены рекомендации и предложения по ее разработке и внедрению в систему ПОО. Предложенные подходы, предложения и рекомендации могут служить основой для планирования разработки модели планирования ПОО, которая в свою очередь, может служить в качестве инструмента по обеспечению качества обучения как для общей системы управления ПОО (макроуровень), так и для отдельных учебных заведений ПОО (микроуровень).

THE PLANNING OF THE ACTIVITIES OF THE PRIMARY AND MIDDLE
PROFESSIONAL EDUCATION SYSTEM AS A TOOL FOR THE QUALITY
ASSURANCE IN THE REPUBLIC OF ARMENIA

Lilit Pipoyan

*Specialist at the Institutional and Program Accreditation Division at
National Centre for Professional Education Quality Assurance Foundation
PhD student at the Armenian State University of Economics*

Keywords: primary and middle professional education, planning, model

Along with the reforms implemented during the last years in the Armenian VET system there are still many issues one of which is the lack of the VET system planning model. The main prerequisites as well as the relevant recommendations for the model development and adoption in the VET system are revealed in the article. The proposed approaches and recommendations can serve as a basis for the development of VET planning model, which in turn can serve as a quality assurance tool of education as in the whole VET system management (macro level) as well as for the individual VET institutions (micro level).

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՏԵՍԱ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Ժիրայր Մխիթարյան

*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետի ասպիրանտ*

Բանալի բառեր՝ սահմանադրական տնտեսագիտություն, կանոններ, մեթոդաբանական ինդիվիդուալիզմ, ռացիոնալ ընտրություն, ռուսական դպրոց

Սահմանադրական տնտեսագիտություն եզրն (constitutional economics) առաջին անգամ կիրառել է ամերիկացի տնտեսագետ Ռիչարդ Մաքքինզին (Richard McKenzie) 1982թ.¹ Վաշինգտոնում իր կողմից կազմակերպված «Հերիթիջ» հիմնադրամի համաժողովի քննարկման կենտրոնական թեման անվանելու համար: Հանրաճանաչ գիտությանը «սահմանադրական» ածականն ավելացնելով՝ նա տրամադրեց իմաստային այն ճշգրիտ համակցությունը, որն անհրաժեշտ էր, որպես հանրային ընտրության տեսության (public choice theory) ինտեգրալ, սակայն զատորոշելի մաս ձևավորված գիտության ուղղության ճանաչման և տարանջատման համար¹:

Փոխառելով Մաքքինզիի եզրը՝ մեկ այլ ամերիկացի տնտեսագետ Ջեյմս Բյուքենենը (James Buchanan) հիմնադրեց գիտության այս նոր ուղղությունը, որի գնահատականը հանդիսացավ գիտական աշխարհի ամենահեղինակավոր մրցանակը. 1986թ. նա արժանացավ Նոբելյան մրցանակի «տնտեսական և քաղաքական որոշումների կայացման տեսության սահմանադրական և պայմանագրային հիմքերի ձևավորման համար»²: Հենց այս մրցանակը դարձավ այն ազդակը, որը զարկ տվեց սահմանադրական տնտեսագիտության առավել ակտիվ զարգացմանն աշխարհում:

Ընդհանրապես, տնտեսագիտության մեջ առանցքային տեղ է զբաղեցնում ընտրության հիմնախնդիրը, ինչը հիմք է հանդիսանում անվանելու այն գիտություն ընտրության մասին: Ոչ սահմանադրական տնտեսագիտությունում վերլուծությունները կենտրոնանում են *առկա սահմանափակումների շրջանակներում ընտրության կատարման վրա*: Սահմանադրական տնտեսագիտությունն ուղղորդում է վերլուծությունը դեպի *սահմանափակումների միջև ընտրության կատարումը*³: Այդպիսով, սահմանադրական տնտեսագիտությու-

¹ Տ՛ես **Buchanan, James M.** “The Domain of Constitutional Economics,” Constitutional Political Economy, Vol. 1, No. 1, 1990, էջ 1:

² Տ՛ես Նոբելյան մրցանակի պաշտոնական կայք-էջը՝ http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1986/buchanan-facts.html:

³ Տ՛ես **Buchanan, James M.** “The Domain of Constitutional Economics,” Constitutional Political Economy, Vol. 1, No. 1, 1990, էջ 2-3:

նը ներկայացնում է քննության «ավելի բարձր» մակարդակ, քան սովորական տնտեսագիտությունը: Այն վերլուծում է սահմանափակումների ընտրությունը՝ ի հեճուկս սահմանափակումների շրջանակներում ընտրության⁴:

Իր Նոբելյան դասախոսությունում, որը կրում էր «Տնտեսական քաղաքականության սահմանադրությունը» վերնագիրը, Բյուքենենը ջանացել է հակիրճ կերպով ներկայացնել իր հիմնական մտքերը: Նա դասախոսությունը սկսում է Վիքսելին ուղղված երախտիքի խոսքով՝ նշելով, որ «եթե ոչ այդ մեծ շվեդի ազդեցությունը, ես կանգնած չէի լինի այս հարթակի վրա: Իմ գիտական կյանքի ամենավառ իրադարձություններից մեկը դարձավ Չիկագոյի Հարփերի հին գրադարանի փոշոտ արխիվներում կորսված Վիքսելի նախկինում անհայտ և չթարգմանված աշխատանքի հայտնաբերումը 1948թ.»⁵: Այնուհետև նա շարունակում է. «Վիքսելի ուղերձի մերկ իմաստը պարզ է, տարրական և չի պահանջում ապացուցում: Տնտեսագետները պետք է դադարեցնեն քաղաքական խորհուրդներ տալու փորձը, կարծես թե նրանք վարձված են «շոայլ բոնապետի» կողմից: Դրա փոխարեն նրանք պետք է կենտրոնանան պետական կառուցվածքի վրա, որի շրջանակներում ընդունվում են քաղաքական որոշումները: Ես համոզում էի տնտեսագետներին կենտրոնանալ «տնտեսական քաղաքականության սահմանադրության» վրա, որպեսզի ուսումնասիրեն այն կանոններն ու սահմանափակումները, որոնց շրջանակներում գործում են քաղաքական գործիչները:

Բյուքենենն ավարտում է իր դասախոսությունը՝ համեմատելով Վիքսելին լեգենդար սահմանադրական մտածող և ԱՄՆ առաջին նախագահներից մեկի՝ Ջեյմս Մեդիսոնի հետ: Նա ասում է. «Երկուսն էլ հերքում էին պետության՝ իր քաղաքացիների նկատմամբ ինտելեկտուալ գերակայության ցանկացած օրգանական հայեցակարգ: Երկուսն էլ փորձում էին օգտագործել գիտական վերլուծության բոլոր հնարավոր մեթոդները՝ պատասխանելու համար հասարակական կառուցվածքի հավերժ հիմնահարցին. մենք ինչպե՞ս կարող ենք ապրել միասին խաղաղության, բարեկեցության և ներդաշնակության մեջ՝ միևնույն ժամանակ պահպանելով մեր իրավունքներն ու ազատությունները, որպես ինքնուրույն անհատականություններ, որոնք կարող են և պետք է ստեղծեն սեփական արժեքներ»: Բյուքենենն ավարտեց իր դասախոսությունն

⁴ Տե՛ս **Van den Hauwe, Ludwig**. “Constitutional economics,” *The Elgar companion to law and economics*, second edition / Edited by Jurgen G. Backhaus. – Edward Elgar Publishing, 2005, էջ 223-224, 227:

⁵ Պատահական չէ, որ Բյուքենենի առաջին նախաձեռնություններից մեկն եղավ Վիքսելի աշխատության թարգմանությունն անգլերեն՝ այն ընթերցողների ավելի լայն շրջանակներին հասու դարձնելու նպատակով:

այդ հավերժ հարցով, որն ըստ էության, հանդիսանում է սահմանադրական տնտեսագիտության առարկան⁶:

Սահմանադրական կանոնների առաջացումն ու անհրաժեշտությունն ըստ Ջ. Բյուքենենի: Ինչ-որ իմաստով յուրաքանչյուր գիտական ուղղություն ենթադրում է դիտել և կարգավորել այն, ինչ ընկալվում է: Այս բնութագրումը կիրառելի է մասնավորապես հասարակական բոլոր գիտությունների նկատմամբ, որոնց հետազոտության բացառիկ օբյեկտը հասարակական փոխադեցության գործընթացում անհատի վարքագիծն է: Նախ դիտարկենք ընկալումն իր ամենացածր մակարդակում: Ենթադրաբար անհատները բավականաչափ նման են իրար. կենսաբանորեն մենք տեսնում, լսում, համտեսում, հոտառում և զգում ենք ֆիզիկական երևույթները նմանատիպ կերպով, եթե ոչ նույնական: Բոլորս դիտում ենք պատը, որպես շարժման արգելք և մեզանից ոչ ոք չի փորձում քայլել պատերի վրայով: Եթե ինչ-որ մեկը ձախողվի ընկալել պատն, ինչպես մյուսները, կդասակարգվի որպես ոչ նորմալ հիմնական ընկալական զգայարաններից առնրվագն մեկի գծով: Այնուամենայնիվ, երևույթների բարդացմանը զուգընթաց մարդիկ կարող են տարբերվել իրենց ընկալումներում՝ չնայած կենսաբանորեն նրանք շարունակում են տիրապետել նույն զգայական գործիքակազմին: Տարրական զգայական ընկալումը պետք է ուղեկցվի որոշակի մտավոր վերամշակում պահանջող երևակայական կառուցվածքներով՝ նախքան գնահատման և գործողության հիմքերի ձևավորումը:

Երևույթների բարդացմանը զուգընթաց ընկալման երևակայական տարրերը գնալով աճում են ուղղակիորեն զգայարաններից եկող տարրերի համեմատ: Պարզից բարդ այս շարժման ընթացքում մարդկանց միջև առկա ընկալումային նմանությունները գնալով նվազում են: Այն ինչը կարող է կոչվել երևույթների դիտարկման բնական ճանապարհ ինչ-որ պահից սկսում է հետզհետե անհետանալ: Այդ պահից սկսած անհատները կարող են համաձայնության գալ իրենց կողմից դիտարկվող երևույթների վերաբերյալ միայն համատեղ ընդունելի արժեքների և նորմերի շուրջ (որոնք ընտրվում են անհատների կողմից բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով) որոշակի ասոցացիայի մեջ մտնելով: Երբ առկա չէ իրականության դիտարկման բնական ճանապարհ, գնահատման և ընտրության կատարման որոշակի գործընթացն անհրաժեշտ լրացում է երևակայական քայլին, որը թույլ է տալիս ակնհայտ քառսը փոխակերպել կարգուկանոնի: Այս պնդումները կարող են հակասական թվալ առաջին հայացքից, քանի որ թվում է, թե դրանք պնդում են, որ մարդիկ

⁶ Տե՛ս **Buchanan, James M.** “The Constitution of Economic Policy,” Nobel Prize Lecture, 1986, **Баренбойм П.Д.** Соотношение доктрин Верховенства права и Правового государства как главный вопрос философии права и конституционализма. – М.: ЛУМ, 2013, **Мишин А.А.** Конституционное (государственное) право зарубежных стран: Учебник для вузов, 17-е издание. –М.: Статут, 2013:

ընտրում են, թե ինչպես են իրենք տեսնում իրականությունը: Սակայն եթե «տեսնում իրականությունը» փոխարինենք «մտածում իրականության մասին» արտահայտությամբ, այդ հակասությունը կարող է լուծում ստանալ⁷:

Չ. Բյուքենենը սահմանադրական կանոնների անհրաժեշտությունը չգիտակցող տնտեսագետներին ուղղված քննադատական խոսքով հանդես եկավ 2009թ. լույս տեսած «Տնտեսագետները հագուստներ չունեն» իր հոդվածում⁸:

Նա քննադատում է տնտեսագետներին ագրեգացված փոփոխականների վրա չափից շատ կենտրոնանալու համար, որի ընթացքում երկրորդական պլան է մղվում այն, թե ինչպես է գործում տնտեսությունը: Այս համատեքստում նա գրում է. «Միկրոտնտեսագիտությունից մակրոտնտեսագիտության քեյնսականությամբ ներշնչված անջատումը, որը տեղի ունեցավ դարակեսին, թվում էր թե մարմնավորում էր անկեղծ գիտական զարգացում: Շատ տնտեսագետների ուշադրությունը տեղաշարժվեց դեպի ագրեգացված փոփոխականների չափումը, որոնք թվում էին համարժեք մակրոտնտեսության բնութագրման համար: Համախառն արդյունքի չափերը, գործազուրկների թիվը, գների մակարդակը և այլ փոփոխականներ ներքուստ թվում էին չափման արժանի և հատկապես՝ դրանց փոփոխման տեմպերը ժամանակի ընթացքում: Մակրոտնտեսագիտական մոդելավորման ողջ համակազմը, որը սկսեց գերիշխող դառնալ անմիջապես Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներին, թվում էր, որ բացելու էր նոր հեռանկարներ ընդհանուր բարեկեցության ապահովման գործում տնտեսագետների ունեցած արտադրողական արժեքի համար:

Դժբախտաբար, տնտեսագետները, ընդհանուր առմամբ, չկարողացան հասկանալ, որ ագրեգացված փոփոխականները, որոնք կարող են չափվել թույլատրելի ճշգրտությամբ, կարող են չլինել վերահսկելի փոփոխականներ ուղղակիորեն կամ նույնիսկ անուղղակիորեն: Հիմնարար թյուրբանալումն այստեղ կայանում է «տնտեսություն» հասկացությունն ընկալելու մեջ: «Տնտեսական պրոբլեմը» տեխնիկական պրոբլեմ չէ, որը կարելի է սահմանել պարզապես, որպես սահմանափակ ռեսուրսների բաշխում օգտագործման այլընտրանքային տարբերակների միջև: Փոխարենը, տնտեսությունը կարող է լավագույնս ներկայացվել, որպես կարգ, որը բաղկացած է փոխկապված (պարզ և բարդ) փոխանակումների բազմությունից, որոնցից բխում են վերջնարդյունքներ, որոնք կարող են չափվել, բայց ոչ ընտրվել և հետևաբար նաև վերահսկվել

⁷ Տե՛ս **Buchanan, James M.** “The Domain of Constitutional Economics,” *Constitutional Political Economy*, Vol. 1, No. 1, 1990, էջ 16-17:

⁸ Տե՛ս **Buchanan, James M.** “Economists Have No Clothes,” *RMM*, Vol. 0, *Perspectives in Moral Science*, ed. by M. Baumann & B. Lahno, 2009, էջ 151-156:

որոշում ընդունողների կողմից: Տնտեսագետներն իրապես չեն հասկանում, թե ինչ են անում, քանի որ նրանք ջանում են վերահսկել ագրեգացված փոփոխականներ, որոնք վերահսկելի չեն որևէ ուղղակի իմաստով: Օրինակ, գրավածության (կամ գործազրկության) մակարդակը չի կարող հեշտությամբ տեղաշարժվել կառավարության հրամայականով: Լավագույն դեպքում փոքր կամ մակերեսային փոփոխություններ կարող են տեղի ունենալ, մինչդեռ ագրեգացված փոփոխականը, որը ձևավորվել է մեծ և բարդ տնտեսության աշխատանքի արդյունքում, համառորեն մնում է անընկալուն թյուրըմբռնված բարեփոխումային ջանքերի նկատմամբ»:

Այնուհետև Բյուքենենը հարցնում և փորձում է պատասխանել այն հարցին, թե ո՞րն է հետազոտության բացակայող ճանապարհը: Նա գրում է. «Եթե տնտեսությունն ըստ արժանվույնս ձևակերպվում է, որպես *գարգացող ու բարդ դինամիկ կարգ*, ապա ո՞րն է տնտեսագետի դերը, ով պահանջում է գիտական կարգավիճակ: *Տարրական քայլը հանդիսանում է սահմանափակումների, կանոնների հավաքածուի կամ ավելի լայն իմաստով սահմանադրության գոյության գիտակցումը*: Համատարած թյուրըմբռնումը, հատկապես ոչ տնտեսագետների շրջանում, մղում են այն պնդումին, որ «շուկան» կամ «կապիտալիզմը» կա՛մ աշխատում է, կա՛մ չի աշխատում առանց սահմանափակումների, մի պնդում, որն ակներևորեն չի կարող պաշտպանվել ոչ վերլուծական տրամաբանության, ոչ էլ փորձառական (էմպիրիկ) իրականության կողմից:

Ադամ Սմիթի ողջ ջանքերը կարելի է մեկնաբանել, որպես «օրենքներն ու ինստիտուտները» բարեփոխելուն միտված բանավեճ, որպեսզի թույլ տրվի անհատականացված անձնական շահին գեներացնել վերջնարդյունքներ, որոնք կապացուցեն իրենց օգտակարությունը բոլոր մասնակիցների, հատկապես՝ աշխատանքային դասակարգերի անդամների համար:

Իմ սեփական տեսակետը երկար ժամանակ է, ինչ պարզ է: 1986 թ. իմ Նոբելյան դասախոսությանն ես տվեցի «Տնտեսական քաղաքականության սահմանադրությունը» վերնագիրը: Տնտեսագետները պետք է դարձրած լինեին և այժմ պետք է դարձնեն ուշադրություն սահմանադրական կառուցվածքի վրա, որի շրջանակներում գործող անձիք իրականացնում են գործարքների բազմությունը, որը նկարագրում է շուկայական կարգը, որում այդ գործողությունները կարող են տեղի ունենալ սպառողներ-գնորդների, վաճառողներ-ներդրողների, գործատուներ-գործառուների, անհատներ-ձեռնարկությունների դերերում:

Ինչպե՞ս են գործում շուկաները: Եթե թողնենք միայնակ, ապա այս հարցն անհամարժեք է և անպատասխանելի: Այն պետք է փոխարինվի հետևյալ հարցով. *ինչպե՞ս են գործում շուկաները սահմանադրական ու ինստիտուցիոնալ սահմանափակումների այս կամ այն հավաքածուի ներքո*: Տնտեսագետների գիտական փորձառությունը կարող է հանգեցվել սահմանափա-

կումների այլընտրանքային հավաքածուների կանխատեսված հետևանքների ուսումնասիրմանը: Պատշաճ հարցն այն չէ, թե ինչպես կարելի է հասնել այս կամ այն վերջնարդյունքին կոլեկտիվ կամ քաղաքական հնարավոր գործողության միջոցով: Փոխարենն անհրաժեշտ է հարցնել. ինչպե՞ս կարող է գործել սահմանափակումների այս կամ այն հավաքածուն, որպեսզի թույլ տա գեներացնել մի կարգ, որը կբավարարի նախապատվելիության որոշակի չափանիշների»: Այդպիսով, Բյուքենենը խորհուրդ է տալիս կենտրոնանալ ոչ թե վերջնարդյունքների, այլ սահմանափակումների՝ սահմանադրական կանոնների վրա, որոնք կարող են հանգեցնել այդ վերջնարդյունքի ձևավորմանը:

Սահմանադրական տնտեսագիտության հիմքերի ձևավորումը Ջ. Բյուքենենի կողմից: Ջ. Բյուքենենն առանձնացրել է երկու հիմնաբարեր, որոնց վրա հենված է սահմանադրական տնտեսագիտությունը և որոնք միասին վերցրած կազմում են սահմանադրական տնտեսագիտության միջուկը: Դրանք են՝ «մեթոդաբանական ինդիվիդուալիզմը» (methodological individualism) և ռացիոնալ ընտրությունը (rational choice): Քննարկենք դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Առաջին հիմնաբարը, որի վրա հենված է սահմանադրական տնտեսագիտությունը **մեթոդաբանական ինդիվիդուալիզմն** է: Նրա էությունը կայանում է նրանում, որ ինչպիսի երևույթ էլ փորձենք բացատրել հասարակական ազդեցացված մակարդակում, մենք պետք է ցույց տանք, թե ինչպես է այն բխում անհատների գործողություններից և փոխազդեցություններից, ովքեր առանձին-առանձին կամ միասնաբար հետապնդում են իրենց շահերը՝ հիմնվելով շրջապատող աշխարհի մասին իրենց ունեցած պատկերացումների վրա⁹: Ըստ Բյուքենենի. «ինքնավար անհատը սահմանադրական տնտեսագիտության ուղղությամբ հետազոտությունների առանցքն է: Եվ չնայած որոշ մասնագետներ կցանկանան տեղայնացնել հետազոտությունն անհատների ընտրության հաշվարկներում, ոչ մի շեղում այդ սկզբնակետից չպետք է տեղի ունենա»¹⁰:

Ըստ Բյուքենենի անհատը տնտեսագիտական տեսանկյունից դիտվում է, որպես (բարիքների արժեքը) գնահատող, ընտրություն կատարող և գործող (որոշակի գործունեության մեջ ներգրավված) միավոր: Վերլուծության այս ելակետն ուշադրություն է հրավիրում անհատների ընտրության կամ որոշումների միջավայրի վրա: Դրա հետ կապված՝ ուշադրության կենտրոնում

⁹ Տ՛ե՛ս **Van den Hauwe, Ludwig**. “Public Choice, Constitutional Political Economy and Law and Economics” // Encyclopedia of Law & Economics, General Editors: Boudewijn Bouckaert and Gerrit De Geest. Publishers: Edward Elgar and the University of Ghent, 1999, էջ 609:

¹⁰ Տ՛ե՛ս **Buchanan, James M.** “The Domain of Constitutional Economics,” Constitutional Political Economy, Vol. 1, No. 1, 1990, էջ 13:

պետք է գտնվեն անհատական ընտրությունները՝ անկախ դրանց իրացման ինստիտուցիոնալ մեխանիզմի հնարավոր բարդություններից: Այս գործընթացը կիրառելի է նաև շուկայական կամ մասնավոր հատվածի հարաբերությունների նկատմամբ: Անհատները, որպես ապրանքների ու ծառայությունների գնորդներ ու վաճառողներ, ընտրություն են կատարում իրենց նախընտրությունների (իրենց օգտակարության ֆունկցիաների փոփոխականների) համաձայն: Անհատներն իրենք են հանդիսանում դրանց գնահատման աղբյուրը, իսկ տնտեսագետի առաջադրանքն է հասկանալ և բացատրել այդ անհատական նախընտրությունների իրացման գործընթացը:

XVIII դարի այն բացահայտումը, որ անհատների միջև կամավոր փոխանակության զարգացմանը նպաստող ինստիտուցիոնալ ձևաչափը տալիս է արդյունքներ, որոնք կարելի է գնահատել գիտականորեն, հիմք հանդիսացավ տնտեսագիտության, որպես անկախ գիտության առաջացման համար¹¹: Ըստ Բյուքենենի մեթոդաբանական ինդիվիդուալիզմը բնորոշում է տնտեսագիտության գրեթե բոլոր ուղղությունները՝ ընդհանրապես և սահմանադրական տնտեսագիտությունը՝ հատկապես:

Նա քննադատում է վերանձնական գնահատման աղբյուրները, ինչպիսիք են՝ բնական օրենքները, իրավացի պատճառները, պետությունը և նույնիսկ Աստված, քանի որ վերջիններս ժխտում են մեթոդաբանական ինդիվիդուալիզմը: Սակայն նա ավելացնում է նաև, որ. «անհատական ինքնավարությունը չի նշանակում, որ անհատը կատարում է ընտրություն և գործում է այլ մարդկանց միավորումներից և լայն առումով հասարակությունից անջատ: Անհատների ցանկացած միավորում ունակ է ազդելու նրա անդամների արժեքների ձևավորման վրա: Անհատի առանձնացումը հասարակությունից կոնցեպտուալ առումով անհնար է»¹²:

Մեթոդաբանական ինդիվիդուալիզմից գատ գոյություն ունի նաև **նորմատիվ ինդիվիդուալիզմ** հասկացությունը: Ընդհանրապես, սահմանադրական տնտեսագիտության հետազոտությունները հիմնականում ուղղված են ուղղորդելու նրանց, ովքեր մասնակցում են սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ քննարկումներին: Այլ կերպ ասած, սահմանադրական տնտեսագիտությունը պարունակում է սահմանադրական հարցերի հետ կապված նորմատիվ խորհրդի ներուժ և առաջարկում նորմատիվ ձևաչափ համեմատական ինստիտուցիոնալ վերլուծության իրականացման համար: Որպես նորմատիվ գիտություն, սահմանադրական տնտեսագիտությունը հիմնվում է նորմատիվ ինդիվիդուալիզմի վրա՝ մի ենթադրություն, ըստ որի

¹¹ Տ՛ես **Buchanan, James M.** “The Constitution of Economic Policy”, Nobel Prize Lecture, 1986.

¹² Տ՛ես **Buchanan, James M.** “The Domain of Constitutional Economics,” Constitutional Political Economy, Vol. 1, No. 1, 1990, էջ 13-14:

ընդգրկված անձանց գնահատականները, նրանց շահերն ու արժեքները տրամադրում են այն պատշաճ չափանիշը, որի համաձայն պետք է դատվեն կանոնների այլընտրանքային բազմությունները¹³:

Մեթոդաբանական ինդիվիդուալիզմի սկզբունքը դառնում է լիարժեք միայն **փոխանակության** (exchange) գաղափարի շնորհիվ (հիմնված հասարակական պայմանագրի տեսության վրա): Ըստ Բյուքենենի և Թալոքի փոխանակության գաղափարը կայանում է նրանում, որ երկու կամ ավելի կողմերը կամավոր կերպով մտնում են պայմանագրային հարաբերությունների մեջ միայն այն դեպքում, եթե նրանք սպասում են հայտնվել անցյալի համեմատ ավելի լավ վիճակում: Հարց է առաջանում, թե անհատներն ինչ են փոխանակում սահմանադրություն մշակելիս: Եթե առկա համակարգն անարխիան է, որտեղ կոլեկտիվորեն թելադրվող իրավունքները բացակայում են և հետևաբար առկա չեն անհատական գործունեության իրավական սահմաններ, ապա անհատները փոխանակում են անհատական գործունեության նվազեցված հնարավորությունները: Մի անհատի կողմից իր գործունեության հնարավորությունների նվազեցումը կարող է արդյունավետ լինել միայն, եթե նույն հասարակության մեջ ապրող այլ անհատներն ևս որոշեն վարվել նույն կերպ¹⁴:

Երկրորդ հիմնաքարը, որի վրա հենված է սահմանադրական տնտեսագիտությունը **ռացիոնալ ընտրության** գաղափարն է, որը կհսում են տնտեսագիտության բոլոր ճյուղերը: Շվեյցարիացի գիտնական Ռ. Շվերին իր հոդվածում մեջբերում է Ջ. Վիների հետևյալ խոսքերը. «թվում է, որ տնտեսագիտության ուսումնասիրման օբյեկտի մշտական փոփոխությունների պայմաններում, տնտեսագիտության միայն մեկ սահմանում կարող է գոյատևել՝ տնտեսագիտությունն այն է, ինչով զբաղվում են տնտեսագետները»: Այնուհետև Շվերին շարունակում է. «մենք կարող են պնդել, որ տնտեսագիտությունը, կորցնելով իր ուսումնասիրման օբյեկտը, փոխարենը ձեռք է բերել հատուկ մոտեցում, որը կարող է կիրառվել ինչպես շուկայական, այնպես էլ ոչ շուկայական հատվածի վերլուծություններում: Այդպիսին է ռացիոնալ ընտրության տեսության առաքելությունը»¹⁵:

Ռացիոնալ ընտրության սկզբունքի համաձայն ինքնավար անհատը պետք է ունակ լինի բավարար կերպով ընտրություն կատարել այլընտրանքների միջև: Սահմանադրական տնտեսագիտության համատեքստում ռացիոնալ ընտրություն կատարելու ընդունակությունն ընդլայնված է՝ ներառելով նաև

¹³ Տ՛ե՛ս **Van den Hauwe, Ludwig**. “Public Choice, Constitutional Political Economy and Law and Economics” // Encyclopedia of Law & Economics, General Editors: Boudewijn Bouckaert and Gerrit De Geest. Publishers: Edward Elgar and the University of Ghent, 1999, էջ 610:

¹⁴ Տ՛ե՛ս **Voigt, Stefan**. “Positive Constitutional Economics: A Survey,” Public Choice, Vol. 90, No. 1/4, Constitutional Political Economy, Mar., 1997, էջ 23:

¹⁵ Տ՛ե՛ս Конституционная экономика / Отв. ред. **Г.А. Гаджиев**. -М.: Юстицинформ - 2010, էջ 15-16:

սահմանափակումների միջև ընտրություն կատարելու ունակությունը, որոնց շրջանակներում կարող են տեղի ունենալ հետագա ընտրությունները:

Ռացիոնալությունը նշանակում է, որ ընտրության տարբերակները կարող են վերլուծվել՝ կարծես ունենալով այլընտրանքների կարգավորվածություն, որոնք դասավորված են որոշակի նախընտրությունների համաձայն: Այսինքն տվյալ դեպքում խոսքը գնում է օգտակարության մասին, որի համաձայն էլ անհատն այլընտրանքներին տալիս է համապատասխան կարգը: Վերլուծական մակարդակում անհրաժեշտություն չկա, որպեսզի կարգավորումը համապատասխանի ընտրության այլընտրանքների որևէ դասավորության, որը կարող է օբյեկտիվորեն չափվել ինչ-որ արտաքին դիտարկողի կողմից: Այնուամենայնիվ, անհատական ռացիոնալության թեստն ընտրություն կատարելիս պահանջում է այլընտրանքները լավի և վատի դասակարգելու նվազագույն քայլի կատարում: Տվյալ դեպքում ռացիոնալությունը նշանակում է միայն, որ անհատն ընտրում է ավելի շատ լավ այլընտրանքներ և ավելի քիչ վատ այլընտրանքներ:

Այսպիսով, ինդիվիդուալիզմի պոստուլատը թույլ է տալիս, որպեսզի անհատների շահերը կամ նախընտրությունները տարբերվեն մեկը մյուսից, իսկ ռացիոնալության պոստուլատը չի սահմանափակում այդ շահերը վերոնշյալ դասակարգման քայլից այն կողմ: «*Տնտեսական մարդ*» (homo-economicus) հասկացությունը կարող է բնութագրել անհատին, ում ընտրությունը վերլուծում է սահմանադրական տնտեսագիտությունը: Այնուամենայնիվ, այլընտրանքային սահմանադրական սահմանափակումների միջև ընտրություն կատարելիս, անհատը պետք է կատարի նաև որոշակի կանխատեսումներ այլ անձանց վարքագծի մասին: Այս իմաստով, տնտեսական մարդու պոստուլատը համարժեք է համարվում անհատի վարքագծի գնահատման համար:

Ամփոփելով Բյուքենենը գրում է. «այն քննադատները, ովքեր վկայակոչում են վերանձնական արժեքային աղբյուրներին, չեն կարող մասնակցել սահմանադրական տնտեսագիտության քննարկումներին, ինչը վերաբերում է նաև այն վատատեսներին, ովքեր հրաժարվում են կիրառել ռացիոնալ ընտրության մոդելներն անհատների՝ որպես ինքնավար գործող անձանց վարքագծի նկատմամբ... Սահմանադրական տնտեսագիտության տիրույթ կարող են մուտք գործել միայն այն գիտնականները, ովքեր դիտում են հասարակական փոխազդեցությունը, որպես բարդ հարաբերություններ ինքնավար անձանց միջև, որոնցից յուրաքանչյուրն ունակ է կայացնել ռացիոնալ որոշումներ»¹⁶:

Սահմանադրական տնտեսագիտության զարգացման գործում հաջորդ մեծ ավանդը պատկանում է իրավաբանական և տնտեսագիտական համատեղ

¹⁶ Տե՛ս **Buchanan, James M.** “The Domain of Constitutional Economics,” *Constitutional Political Economy*, Vol. 1, No. 1, 1990, էջ 14-15, 17:

մոտեցման հիմնադիր հայրերից մեկին՝ **Ռիչարդ Պոզներին** (Richard Posner): Նա մատնանշում էր սահմանադրության կարևորությունը տնտեսական զարգացման համար: Սահմանադրական տնտեսագիտության վերաբերյալ նրա արժեքավոր մտքերն ամփոփված են «Սահմանադրությունը որպես տնտեսական փաստաթուղթ» իր հոդվածում:

Պոզները մոտենում է սահմանադրական վերլուծությանը հիմնականում դատավորների տեսանկյունից, ովքեր ունեն որոշիչ ուժ սահմանադրության մեկնաբանման և իրագործման համար՝ այդպիսով փաստացիորեն ձևավորելով սահմանադրական իրավունքի մարմինը: Այդ գործընթացում տնտեսագիտության դերն ըստ նրա կայանում է «այլընտրանքային մեկնաբանությունների հետևանքների բացահայտման» օգնելու մեջ: Դա հատկապես կարևոր է տնտեսական աճի վրա սահմանադրական իրավունքի հետևանքները վերլուծելիս: Այնուամենայնիվ, Պոզները պնդում է, որ սահմանադրական իրավունքը չի կարող «ենթարկվել տնտեսական արդյունավետության հրամաններին»: Նա շարունակում է բացատրել, որ «տնտեսագիտությունը կարող է լույս սփռել այն հարցերի վրա, որոնք վերաբերում են պատշաճ իրավական մեկնաբանությանը»: Արդյունավետությունը հանուն արդյունավետության մոտեցումը չի կարող դիտարկվել, որպես կայուն հիմք սահմանադրական զարգացման համար: Հետևաբար, պետք է գտնել հավասարակշռություն տնտեսական արդյունավետության և արդարության՝ սահմանադրական իրավունքի հիմնարար հասկացության միջև: Վերջում նա նշում է, որ «սահմանադրական դեպքերի նկատմամբ տնտեսագիտական մոտեցման կիրառության սահմանները սահմանվում են Սահմանադրությամբ»:

Պոզները վերլուծում է սահմանադրության և տնտեսական աճի միջև փոխկապվածությունները: Մասնավորապես նա գրում է. «պատճառները թե ինչու են որոշ ազգեր ավելի հարուստ, քան մյուսները լավ հասկացված չեն: Պարզ է, որ երկարաժամկետ հատվածում տարբերությունները մեծապես պայմանավորված են տնտեսական աճի տեմպերի ազգային տարբերություններով, ինչը պարզապես մղում է ուսումնասիրությունը մեկ քայլ ետ՝ դեպի այդ տարբերությունների պատճառները: Մենք ընդհանրական կերպով գիտենք, որ տնտեսական աճը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ խնայողության մակարդակը, ներդրումները, տեխնոլոգիական առաջընթացը, աշխատուժի կառուցվածքային տեղաշարժերը և աշխատանքի նկատմամբ խթանների փոփոխությունը և այլն: Սակայն այս գիտելիքը կրկին ետ է մղում ուսումնասիրությունը մեկ քայլ ետ՝ թե ինչու են որոշ ազգեր ներդրում ավելի շատ, քան մյուսները և այդպես շարունակ: Այս ամենում իրավական ինստիտուտների դերն անորոշ է: Այնուամենայնիվ, բարձր հավանական է, որ տնտեսական աճը կխթանվի, եթե պետությունը պաշտպանի սեփականության

և պայմանագրային իրավունքներն անկախ դատական համակարգի միջոցով: Տնտեսական ազատության այդպիսի պաշտպանությունները կխթանեն տնտեսական ակտիվությունը և ապագային միտված ներդրումները»: Պոզները գալիս է այն եզրահանգմանը, որ «հիմնարար տնտեսական իրավունքների արդյունավետ պաշտպանությունը խթանում է տնտեսական աճը»¹⁷: Այս պնդումն էմպիրիկորեն ապացուցվել է Ամարտյա Սենի աշխատանքներում:

Նոբելյան մրցանակակիր **Ամարտյա Սենի** (Amartya Sen) մտքերը կարելի է համարել սահմանադրական տնտեսագիտության զարգացման ամենախորը և հոգևոր շարունակություններից մեկը: Ըստ նրա սահմանադրությունները հոգևոր փաստաթղթեր են՝ կենտրոնացած ներկայի վրա, սակայն ավելի շատ կողմնորոշված դեպի ապագան, որի արդյունքում որոշ մարդիկ համարում են սահմանադրական նորմերն անիրատեսական և նույնիսկ ուտոպիստական: Սահմանադրությունների հոգևորության պատճառով որոշները պնդում են, որ սահմանադրությունը նման է Աստվածաշնչին, մասնավորապես՝ Տասը Պատվիրանները: Սենը խուսափելով կրոնական լեզվից ավարտում է հավատից ազատ, սակայն հավատի վրա հիմնված տերմինաբանության փնտրտուքով՝ նկարագրելու, թե ինչպես կարող են մարդիկ մի կողմ դնել իրենց սեփական անհետաձգելի նյութական պահանջումները՝ քաղաքական և իրավական ազատություն վայելելու համար: Միաժամանակ, նրա մոտեցումը խիստ գիտական է:


Սենը իր «Զարգացումը որպես ազատություն» գրքում եկավ այն եզրահանգման, որ «անգամ ունենալով եկամուտների համեմատաբար ցածր մակարդակ, եթե երկիրը երաշխավորում է առողջապահություն և կրթություն բոլորի համար, այն կարող է հասնել նշանակալի արդյունքների կյանքի տևողության և որակի իմաստով և հետևաբար՝ տնտեսական կայունության և աճի: Նա պնդում է, որ «հանրային ռեսուրսների օգտագործումն այնպիսի նպատակներով, երբ հասարակության օգուտները հեռու են պարզ լինելուց» պետք է հանել քննարկումից: Սենը տալիս է սահմանադրության էության խորը սահմանում, որը կարող է ամբողջությամբ կիրառվել սահմանադրական տրնտեսագիտության նկատմամբ: Ըստ նրա «քաղաքական իրավունքները՝ ներառյալ արտահայտվելու և քննարկելու ազատությունները ոչ միայն առանցքային են տնտեսական պահանջումների նկատմամբ հասարակական պատասխանների առաջադրման համար, այլև ունեն կենտրոնական նշանա-

¹⁷ Տ՛ես **Posner, Richard A.** “The Constitution as an Economic Document,” 56 *George Washington Law Review* 4, 1987, էջ 27-28:

կությունն հենց տնտեսական պահանջմունքների կոնցեպտուալացման համար»¹⁸:

Շատ տեսաբաններ, սկսած **Ուինսթոն Բուշից** (Winston Bush) փորձել են պատասխանել այն հարցին, թե ինչպես է տեղի ունենում անցումն անարխիայի վիճակից սահմանադրական կարգին: Տեսականորեն դա կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (տե՛ս գծ. 1): Տեղադրենք հորիզոնական առանցքի վրա Ա անհատի օգտակարությունը, իսկ ուղղահայաց առանցքի վրա՝ Բ անհատի օգտակարությունը: Սահմանափակ հասարակության պայմաններում որոշումների կայացումը հնարավոր է ըստ միաձայնության կանոնի, երբ չեն նվաստացվում գործարքի մասնակիցներից ոչ մեկի շահերը: Այդ իսկ պատճառով մենք կտեղաշարժվենք անարխիայի Ն մակարդակից դեպի Ն', Ն'' և այլն, մինչև Կ սահմանադրական կարգի մակարդակը: Կ կետն ընկած է սպառողական հնարավորությունների (հնարավոր օգտակարությունների) կորի վրա և համապատասխանում է այս պահին ձեռք բերված սահմանին: Սակայն այսպիսի մոդելը խիստ պարզեցնում է իրականությունը, քանի որ միլիոնավոր անդամներից բաղկացած հասարակությունում Պարետո-օպտիմալ իրավիճակի հասնելը կհանգեցնի որոշումների կայացման հետ կապված ծախսերի կտրուկ աճին:

Գծապատկեր 1. Անարխիայից դեպի սահմանադրական կարգ շարժը



Ջոն Լոքի (John Locke) և **Թոմաս Ջեֆերսոնի** (Thomas Jefferson) իդեալը սահմանափակ ժողովրդավարությունն էր: Նրանք հանդես էին գալիս սահմանադրական կարգի սահմանափակման օգտին, որի ներդրումը պետք է սահմանի այն, ինչը չի կարելի անել օրենսդրին նույնիսկ պատգամավորների

¹⁸ Տ՛ե՛ս **Barenboim P., Merkulova N.** “25th Anniversary of Constitutional Economics: The Russian Model and Legal Reform in Russia” // The World Rule of Law Movement and Russian Legal Reform. – M: Justitsinform, 2007, էջ 168-170:

մեծամասնության համաձայնության դեպքում: Սահմանափակումները վերաբերում են ոչ միայն պետության գործունեությանը (այն անհատի սեփականության նկատմամբ ոտնձգության իրավունք, ոչ բնական մենաշնորհներ ստեղծելու իրավունք չունի և այլն), բայց և մարդու տնտեսական իրավունքներին, առավել ևս՝ բարոյական որակներին (ինչպիսիք են՝ ազնվությունը, պատասխանատվությունը, հավատարմությունը հասարակությանը և այլն): Մարդիկ պետք է ունենան սեփականության իրավունքի անձեռնմխելիության վերաբերյալ համոզմունք, այն ժառանգաբար փոխանցելու, պայմանագրերի կատարման վերաբերյալ երաշխիքներ և այլն: Ու. Նիսկանենը այն անվանել է «փափուկ ժողովրդավարություն»: Սակայն հարց է առաջանում, թե ինչպես ստեղծել այդ փափուկ ժողովրդավարության պահպանման և զարգացման երաշխիքներ: Գոյություն ունեն այս հիմնախնդրի լուծման մի քանի ուղիներ: Նրանցից մեկն առաջարկվել է Հայեկի կողմից:

Ֆրիդրիխ ֆոն Հայեկը (Friedrich von Hayek) սահմանադրական կարգի իր մոդելում էլնում է գոյություն ունեցող ժողովրդավարական ինստիտուտների արմատապես վերափոխման անհրաժեշտությունից: Ըստ նրա, դրանք ստեղծվել են կառավարման պահանջների և ոչ թե օրենսդրության համար: Սկզբնապես ժողովրդավարություն ասելով հասկանում էին նույնիսկ ոչ թե կառավարման բովանդակությունը, այլ միայն որոշումների ընդունման ձևը (գործընթացը): Այդ ձևն ոչինչ չէր ասում կառավարման նպատակների և դրանց հասնելու միջոցների մասին: Սակայն ժամանակի ընթացքում (նաև անգլիական ավանդույթների ազդեցությամբ) պառլամենտը ստանում է ոչ միայն բարձրագույն, այլև անսահմանափակ իշխանություն հասարակությունում: Ինչպես ասում է Հայեկը. եթե նրանք, ովքեր որոշումներ են ընդունում ցանկացած հարցի գծով, կարող են հրապարակել ցանկացած օրենք, ապա ակնհայտ է, որ իրենք անձամբ օրենքին ենթակա չեն»: Դա նշանակում է, որ հասարակությունում գերակայում է *պառլամենտական սուվերենության* սկզբունքը:

Օրենքների ընդունումը և դրանց իրագործման նկատմամբ հսկողությունը տարբեր գործառույթներ են: Եթե ընտրված մարմինն իրավունք ունենա փոփոխել օրենքները, ապա այն վաղ թե ուշ կանի ամեն հնարավորը, որպեսզի ամրապնդի և ընդլայնի իր իշխանությունը: Բնակչության որոշակի կատեգորիաներին հանրային միջոցների անվճար բաժանումը, հատուկ շահերով առանձին խմբերին ցուցաբերվող «բարեհոգությունը» դառնում է վերընտրման պայման՝ մեծամասնության հավանությունը գնելու ճանապարհով: Ամեն գնով իշխանության պահպանումը վերածվում է նպատակի, որին հասնելու համար որպես միջոց ծառայում են հանրային ծախսերը: Այս ամենի կանխարգելման համար Հայեկը գտնում է, որ ժողովրդավարական հասարակությանն անհրաժեշտ են երեք կարևոր մարմիններ. «առաջինը բացառապես սահմանա-

դրությամբ զբաղվելու համար, երկրորդը՝ արդարության կողմից մշտական կատարելագործման համար, իսկ երրորդը՝ ընթացիկ կառավարման, այսինքն՝ հանրային ռեսուրսների տիրապետման համար»:

Ի տարբերություն Հայեկի, Բյուքենենն ելնում է ոչ թե սկզբնապես սահմանադրական մարմինների ձևավորման կարևորությունից, այլ՝ սահմանադրական նորմերի և կանոնների: Այս իմաստով կորևոր նշանակություն ունի «Ազատության սահմանները» աշխատանքում Բյուքենենի կողմից պետության երկու գործառույթների տարանջատումը՝ պաշտպանող պետության և արտադրող պետության: Առաջին գործառույթը հանդիսանում է մարդկանց համաձայնության արդյունք և նրանց կողմից սահմանադրական կարգի պահպանման ինքնատիպ երաշխավոր: Հասարակությունում իրավունքների պահպանման ապահովումը նշանակում է թոնիչք անարխիայից քաղաքական կազմակերպվածության: Երկրորդը բնութագրում է պետությունը, որպես հանրային բարիքներ արտադրողի: Այս գործառույթն առաջանում է սահմանադրական իրավունքների և ազատությունների հիման վրա, որպես ինքնատիպ պայմանագիր քաղաքացիների միջև՝ ապրանքների և ծառայությունների նկատմամբ իրենց համատեղ պահանջունքների բավարարման համար: Առաջարկվում է կանոնների այնպիսի հավաքածու, որը կկանխարգելեր պետության զարգացումն ավտորիտար ճանապարհով: Այդ իսկ պատճառով տնտեսական քաղաքականության ոլորտում պետության որոշումների արդարության միակ չափանիշը դրանց համապատասխանությունն է հասարակական պայմանագրին կամ քաղաքացիական համաձայնությանը¹⁹:

Սահմանադրական տնտեսագիտության զարգացման նոր փուլ է հանդիսանում **սահմանադրական տնտեսագիտության ռուսական դպրոցի** ձևավորումը և ակտիվ զարգացումը: Ռուսական մոդելը հիմնվում է այն հենքի վրա, որ անհրաժեշտ է նեղացնել սահմանադրությամբ ամրագրված տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավունքների գործնական իրականացման և կառավարության տարեկան ու միջնաժամկետ տնտեսական քաղաքականությունների միջև առկա ճեղքվածքը: Խնդրահարույց է ունենալ բյուջետային գործընթացի իրական թափանցիկություն և առաջադրել կառավարության տնտեսական առաջնահերթություններ՝ առանց օգտագործելու սահմանադրական տնտեսագիտությունը, որպես հավասարակշռող մեխանիզմ սահմանադրական տնտեսական և սոցիալական իրավունքների և դրանց գործնական կիրառման գործիքների միջև:

Սահմանադրական տնտեսագիտության ռուսական մոդելի հիմնական բնութագրիչ գծերն են. ա) սահմանադրական տնտեսագիտությունը գործնական

¹⁹ Տ՛ե՛ս **Нуреев Р.М.** Теория общественного выбора: Курс лекций. –М.: ВШЭ, 2005, էջ 475-480, 486-487:

և տեսական կամուրջ է տնտեսագետների և իրավագետների միջև, բ) տնտեսագիտությունը և սահմանադրական իրավունքը երկուսով ունեն հավասար պահանջներ սահմանադրական տնտեսագիտական վերլուծության նկատմամբ, գ) սահմանադրական տնտեսագիտությունը հանդիսանում է հիմք հետխորհրդային և այլ անցումային երկրներում իրավական բարեփոխումների իրականացման համար, դ) սահմանադրական տնտեսագիտությունը զարգանում է երեք հիմնական ուղղություններով՝ կրթություն, սահմանադրական իրավունք և տնտեսագիտության տեսություն, տնտեսական օրենսդրության գնահատման գործնական մեթոդաբանություն, ե) սահմանադրական տնտեսագիտությունը հանդիսանում է կամուրջ իրավունքի գերակայության և տնտեսագիտության միջև²⁰:

ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ ПРОЦЕССА ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ КОНСТИТУЦИОННОЙ ЭКОНОМИКИ

Жирайр Мхитарян

*Аспирант факультета экономики и менеджмента
Ереванского государственного университета*

Ключевые слова: конституционная экономика, правила, методологический индивидуализм, рациональный выбор, российская школа.

Конституционная экономика новое научное направление, которая стала формироваться во второй половине XX века. Самый большой вклад в его развитие внес его основатель Дж. Бьюкенен, после которого конституционная экономика прошла длинный путь развития, одним из основных достижений которой является формирование российской школы конституционной экономики. Принимая во внимание текущие конституционные процессы в Армении, его формирование и развитие в стране становится объективной необходимостью.

²⁰ Տ՛ե՛ս **Barenboim P., Merkulova N.** “25th Anniversary of Constitutional Economics: The Russian Model and Legal Reform in Russia” // The World Rule of Law Movement and Russian Legal Reform. – М: Justitsinform, 2007, էջ 172-173:

THEORETICO-METHODOLOGICAL ASPECTS OF THE PROCESS OF FORMATION AND DEVELOPMENT OF CONSTITUTIONAL ECONOMICS

Zhirayr Mkhitaryan

*Ph.D. Student of the Faculty of Economics
and Management at Yerevan State University*

Keywords: constitutional economics, rules, methodological individualism, rational choice, Russian school.

Constitutional economics is a new scientific direction, the formation of which began at the second half of XX century. The biggest contribution to its development was made by James Buchanan, after whom constitutional economics passed a long path of development, one of the main achievements of which has become the foemation of the Russian school of constitutional economics. Taking into a consideration the current constitutional developments in Armenia, its formarion and development in the country becomes an objective necessity.

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ,
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՈՎ

Մեղա Նահապետյան

*Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտ*

Բանալի բառեր` սահմանադրականություն, սահմանադրականության բնութագիր, մակարդակ, տարրեր, ցուցանիշներ

Սահմանադրականության հասկացությունը, բնութագիրը. Ներկայիս անընդհատ զարգացող ու փոփոխվող աշխարհում սահմանադրականությունը հանդես է գալիս որպես պետության զարգացվածության գնահատման առանցքային չափորոշիչ:

Արդի իրավական-քաղաքական գրականության մեջ օգտագործվում են սահմանադրականության սահմանման տարաբնույթ մոտեցումներ: Իրավաբանական ուսումնասիրություններում արտահայտված առաջին մոտեցմամբ սահմանադրականությունը սահմանվում է որպես սահմանադրությամբ սահմանափակված պետական կառավարում, երկրորդ մոտեցմամբ` սահմանադրականությունը ուսմունք է սահմանադրության` որպես պետության և հասարակության և նրանց փոխհարաբերությունները սահմանող հիմնական օրենքի մասին: Ըստ սահմանադրականության քաղաքագիտական մեկնության սահմանադրականությունը կառավարման սահմանադրական մեթոդների վրա հիմնված քաղաքական համակարգ է: Ներկայումս սահմանադրականության մակարդակը ասոցացվում է, ավելին` շատ չափով կանխորոշում է պետության տնտեսական զարգացման մակարդակը: Այս առումով սահմանադրականությունը դառնում է տնտեսագիտության քննարկման խնդրո առարկա:

Նշելով սահմանադրականություն հասկացության բազմիմաստությունը` հարկ է նկատել, որ այն նախևառաջ իրավական գաղափարախոսություն է, որն ուղղված է դեսպոտիզմի կանխմանը և անձնական ազատությունների երաշխավորմանը, ինչն առաջարկում է սկզբունքների ձևավորում, որոնց պետք է համապատասխանի հասարակական իշխանության կազմակերպումը: Սահմանադրականությունը պատմականորեն որպես գաղափարախոսություն նախորդել է սահմանադրությունների ստեղծմանը: Այն չի նույնացվում սահմանադրության` որպես հիմնական օրենքի առկայության հետ:

Որպես իրավական քաղաքական ֆենոմեն սահմանադրականությունը առավել լավ բնութագրվում է այն բնորոշող սկզբունքների միջոցով` ընտրովի ներկայացուցչություն, օրենքի գերակայություն և իշխանությունների տարանջատումը: Ժամանակակից սահմանադրաիրավական գիտությունում ձևավորվել են սահմանադրականության հասկացության սահմանման երեք հիմա-

նական մոտեցումներ՝ քաղաքական, պատմափիլիսոփայական և իրավաբանական¹:

Քաղաքական ասպեկտում սահմանադրականությունը բնորոշվում է որպես կոնսենսուսի հիման վրա պետության և հասարակության միջև հատուկ բնույթի հարաբերություններ, որպես գաղափարաքաղաքական դոկտրինա և շարժում:

Պատմափիլիսոփայական ասպեկտում՝ որպես ուսմունք սահմանադրության, բնական իրավունքի, պետության պայմանագրային ծագման, պլուտոկրատիայի, տիրանիայի, դեսպոտիզմի, դեմոկրատիայի մասին:

Իրավաբանական ասպեկտում սահմանադրականությունը նեղ իմաստով հասկացվում է որպես սահմանադրական մեթոդների հիման վրա պետական իշխանության գործունեության հատուկ ռեժիմ, իսկ առավել լայն ընկալմամբ՝ քաղաքաիրավական բարդ համակարգ: Իրավաբանական ասպեկտում սահմանադրականությունը հանդիսանում է համակարգ, որի մեջ մտնում են սահմանադրական նորմերը, սահմանադրությունը, բայց ոչ որպես ինչ որ կարծրացած, ստատիկ երևույթ, այլ սահմանադրությունն իր դոկտրինալ հիմքերով, սահմանադրության կոնցեպցիան, փիլիսոփայությունը, էությունը արտահայտող իրավաքաղաքական արժեքների համակարգով, ինչպես նաև դրա կիրառման պրակտիկայով:

Սահմանադրականության իրավաքաղաքական համակարգի այլ բաղադրատարրերից բացի կարևոր նշանակություն ունեն դրա այնպիսի տարրեր, ինչպիսիք են սահմանադրական իրավագիտակցությունը, սահմանադրական իրավահարաբերությունները և սահմանադրական օրինականությունը, որի ներդրմանն էլ ուղղված է այս բարդ համակարգի գործունեությունը: Սահմանադրականության համակարգի այսպիսի տարրերի «հավաքածուն» առավել լիարժեք է արտահայտում այս սոցիալ-իրավական երևույթի էությունը:

Այսպիսով սահմանադրությունը և սահմանադրականությունը նույնական չեն: Ինչպես նշում է գերմանացի հետազոտող Վոյտը սահմանադրականությունը բազմամակարդակ համակարգ է, որն գործառնապես դուրս է գալիս սահմանադրության և ընդհանրապես իրավունքի շրջանակներից և արտահայտում է ժողովրդի մենթալիտետի և կենցաղի առանձնահատկությունները²:

Սահմանադրականությունը մշտապես զարգացող դինամիկ համակարգ է: Սահմանադրական զարգացումների պատմությունն ինքնին այլ բան չէ քան

¹ Кравченко В. В. Конституционное право Украины: Учебное пособие. -Изд. 3-е, исправл. и доп. - К.: Атика, 2004 - 512 с.

² Кравченко В. В. Конституционное право Украины: Учебное пособие. -Изд. 3-е, исправл. и доп. - К.: Атика, 2004 - 512 с

սոցիումի ինքնաճանաչման, ժամանակի մեջ հասարակական գոյի իմաստավորման ու դրա վրա խարսխված համակեցության պատմություն³:

2004 թվականին Սանտյագոյում (Չիլի) հրավիրված Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության գագաթնաժողովում քննարկումների առանցքն էր դարձել «Սահմանադրականություն՝ նոր աշխարհ, հին դոկտրինաներ» թեման: Արված կարևոր հետևություններից մեկն այն էր, որ չի կարող համապարփակ ու իդեալական սահմանադրություն լինել: Այն յուրաքանչյուր հասարակության արժեհամակարգային ընդհանրացումն է, որի հիմքում անհրաժեշտաբար պետք է դրվեն նաև միջազգային սահմանադրագիտության կողմից ճանաչման արժանացած որոշակի ընդհանուր սկզբունքներ ու մոտեցումներ⁴:

Սահմանադրությունը կոչված է երաշխավորելու հանրային կյանքի դինամիկ հավասարակշռությունը, հանդես գալու որպես կենսագոյի հիմնարար ու ժամանակի մեջ իմաստավորված արժեքներից բխող կանոնների շուրջ շարունակաբար նորոգվող հասարակական համաձայնություն: Սակայն սահմանադրական տեքստային լուծումները, դրանց բովանդակային զարգացումները դեռևս բավարար չեն: Էականն այդ լուծումների ու իրական կյանքի միջև անջրպետի հաղթահարումն է, որն այսօր դարձել է մեր պետական օրակարգի առանցքային խնդիրներից մեկը⁵:

Վերը նշվածից հետևում է, որ հասարակական հարաբերությունների «սահմանադրականացումը», ընդհանուր համաձայնությամբ համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը նախ և առաջ ելնում է տվյալ հասարակության սոցիալ-մշակութային արժեքների ողջ համակարգից, սոցիումի վարքի հոգեբանաբարոյական հիմքերից և ձևավորում է սահմանադրական մշակույթի համապատասխան մակարդակ: Ինչպես նշվում է գրականությունում «ընդհանուրը յուրաքանչյուր սահմանադրության համար հանդիսանում է դրա արժեքային ուղղվածությունը. ցանկացած սահմանադրություն ելնում է իշխանությունների կողմից որպես տվյալ քաղաքակրթության համար արժեք ճանաչվող բազային դրույթներից և այս կամ այն կերպ ամրագրում է դրանք»⁶:

Քաղաքակրթության ժամանակակից ձեռքբերումների հունում սահմանադրական մշակույթի հիմնական բնութագիրը կայանում է նրանում, որ երկրի

³ Գ. Հարությունյան- Սահմանադրական զարգացումների արժեքանական հիմնախնդիրներն արդի մարտահրավերների դիտանկյունից, <http://www.concourt.am/armenian/structure/president/articles/article-harutyunyan-2014.pdf>:

⁴ Տես նույն տեղում

⁵ Գ. Հարությունյան- Սահմանադրական զարգացումների արժեքանական հիմնախնդիրներն արդի մարտահրավերների դիտանկյունից, <http://www.concourt.am/armenian/structure/president/articles/article-harutyunyan-2014.pdf>:

⁶ Арутюнян Г. - Конституция и конституционализм в контексте конституционной культуры нового тысячелетия, <http://www.concourt.am/armenian/structure/president/articles/article-ru-2012.pdf>:

Հիմնական օրենքը պետք է ներառի քաղաքացիական հասարակության ողջ հիմնարար արժեքների համակարգը, երաշխավորի դրանց կայուն և ապահով պաշտպանությունը և վերարտադրությունը: Այդ արժեքներն իրենց հերթին ձևավորվում են դարերի ընթացքում, յուրաքանչյուր սերունդ վերախմաստավորում է դրանք և իր լրացումներով երաշխավորում հետագա զարգացումը: Հաջողությունը ուղեկցում է այն ազգություններին, որոնց մոտ այս շղթան չի ընդհատվում: Հետևաբար «սահմանադրական մշակույթը» առավել բացված կարելի է բնութագրել որպես պատմականորեն ձևավորված, կայուն, սերունդների փորձով հարստացված որոշակի արժեքային համակարգ, որն ընկած է հասարակական կենցաղի հիմքում և նպաստում է բարոյական և հոգեբանական իմաստավորման հիմքի վրա հիմնարար վարքագծի կանոնների սահմանմանը և իրագործմանը:

Սահմանադրությունը պետք է մարմնավորի հասարակության արժեքային համակարգը, հանդիսանա պետության և քաղաքացու սոցիալական վարքագծի հիմնարար արժեքների շուրջ հասարակական գիտակցված համաձայնության արդյունք: Սահմանադրականությունը ներկայանում է որպես իրական հասարակական կյանքում սահմանադրական արժեքների համակարգային և իմաստավորված առկայություն, ինչի վրա հիմնվում է ողջ իրավական համակարգը:

Սահմանադրականության մակարդակի գնահատման տեսամեթոդաբանական մոտեցումները: Սահմանադրականության բարձր մակարդակն ապահովում է անհատի, քաղաքացիական հասարակության և պետության իրավական-տնտեսական անվտանգության երաշխավորումը, որն էլ իրենից ներկայացնում է այսօրվա սահմանադրա-դեմոկրատական աշխարհակարգում դրսևորվող միտումները:

Հայտնի է, որ պետական կառավարումը դա պետական իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործունեությունն է: Պետական կառավարման տեսությունում գոյություն ունեն պետական կառավարման երեք հիմնական մոտեցում՝ իրավական, քաղաքական և կառավարչական:

Իրավական մոտեցման համաձայն՝ պետության կառավարման առանցքային արժեքներն են իրավունքի գերակայությունը, քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Պետական պաշտոնյան ենթակա է ոչ միայն իր ղեկավարությանը, այլև առաջին հերթին իրավական պետության և սահմանադրության պահանջներին:

Քաղաքական մոտեցման համաձայն՝ պետական կառավարման հիմնական խնդիրը հանդիսանում է ժողովրդի կամքի մաքսիմալ իրագործումը և դրա արտացոլումը պետական քաղաքականության մեջ (սոցիալական պետության սկզբունքներ):

Կառավարչական մոտեցման համաձայն՝ պետական կառավարման հիմնական արժեքները պետք է լինեն արդյունավետությունը և տնտեսումը (որակյալ կառավարման սկզբունքներ): Հիմնական խնդիրը այստեղ նրանում է, որ ապահովվի ցանկալի արդյունք նվազագույն ծախսերով կամ քաղվի մաքսիմալ արդյունք կատարված ծախսերից:

Պետության իրավական, սոցիալական և որակյալ կառավարման սկզբունքները հենց այն սկզբունքներն են, որոնք պետք է իմպլեմենտացվեն սահմանադրությունում: Այս սկզբունքները ընկած են սահմանադրականության գաղափարի հիմքում: Երեք մոտեցումների համար ընդհանուր խնդիր է, որպեսզի իշխանությունների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունները համապատասխանեն ձևավորված սկզբունքներին՝ իրավունքի գերակայության (իրավական մոտեցում), ժողովրդի կամքի իրագործման (քաղաքական մոտեցում) և սոցիալ-տնտեսական արդյունքի ստացման (կառավարչական մոտեցում):

Եթե ֆորմալ առումով, որպես նպատակ-իդեալ սահմանադրականությունը ամրագրված է սահմանադրությունում որպես ռազմավարական հայեցակարգ, ապա որպես առաջնային, կոնկրետ և էֆեկտիվ ծրագրի վեկտոր, որը հաշվի է առնում սոցիալ-քաղաքական կյանքի փաստացի վիճակը, սահմանադրականությունը դրված է պետության սահմանադրաիրավական քաղաքականությունում և կոչված է բազմասպեկտ կյանքի կոչման: Ակրնհայտ է, որ ցանկացած ծրագրի արդյունավետ իրականացում պահանջում է համակարգային հսկողություն դրա իրականացման ամբողջ գործընթացում, ինչպես ժամանակին անհրաժեշտության դեպքում արդյունքների ուղղման, այնպես էլ՝ իրական կյանքի անընդհատ փոփոխվող պայմաններում իրագործման մոտեցումների հնարավոր կատարելագործման նպատակով: Հենց այս նպատակի համար է կարևորվում սահմանադրական էվոլյուցիայի գնահատումը:

Եթե սահմանադրականությունը դիտենք որպես պետական գաղափարախոսություն անընդհատ հետևողականորեն կատարելագործվող անհատ-հասարակություն-պետություն համակարգի ստրատեգիական նախագիծ, ապա սահմանադրականության էվոլյուցիայի հսկողությունը կարելի է իրականացնել երկու ուղղությամբ՝ արտահայտելով գործընթացը որպես պրոցեսուալ շղթայի ալգորիթմ, դիտարկելով սահմանադրականությունը որպես պրոցես համակարգում կամ համակարգի յուրաքանչյուր տարրի վերլուծության օգնությամբ⁷:

⁷ Самородова-Богацкая Л. - Конституционно-правовая политика России: приоритетные направления, оценка эволютивности конституционализма с помощью моделей системного и пунктуального анализа, международный журнал прикладных и фундаментальных исследований No11, 2014г:

Հաշվի առնելով վերոնշյալը ժամանակակից սահմանադրականության կայացման և զարգացման գործընթացի դինամիկան կարող է ներկայացվել դասական ալգորիթմի տեսքով

- իրավական տեսություն (դոկտրինա)
- գիտական կանխատեսում
- օրենսդրություն
- հայցվող արդյունքներին օրենսդրության համապատասխանության ստուգումը պրակտիկայում
- օրենսդրության ուղղում (հետադարձ կապի սկզբունք)
- սոցիալական հավանություն
- կայուն իրավական մշակույթի ձևավորում բոլոր մակարդակներում (քաղաքացիական հասարակություն)
- իրավական մշակույթի ամրագրում, որպես հասարակական հավանության արդյունք
- որակապես ավելի բարձր իրավագիտակցության մոտեցում
- հայցվող նպատակի իրագործում

Այսպիսով՝ սահմանադրականությունը բնութագրվում է ինչպես ալգորիթմը կազմող բոլոր տարրերի համակցության որակի, այնպես էլ՝ դրա առանձին տարրերի էվոյուցիայով: Կախված նրանից թե պրոցեսուալ շրջափայի որ տարրն է ավելի ուժեղ կամ հակառակը, որ տարրն է պահանջում երկարատև ջանքեր դրա արդյունավետ իրականացման համար, կարելի է ալգորիթմի տարր առ տարր վերլուծությամբ գնահատել ոչ միայն սահմանադրականության «հատուկությունը» տվյալ երկրում, տվյալ ժամանակաշրջանում, այլև դասակարգել այն զարգացման միտումներին համապատասխան:

Սահմանադրականության մակարդակի համակարգային գնահատումը ըստ Ի.Ա. Կրավեցի ներառում է գնահատման իրականացման չորս եզր՝ գաղափարատեսական, նորմատիվ-իրավական, ինստիտուցիոնալ-ֆունկցիոնալ, դատամեկնաբանական: Որոշ գիտնականներ գտնում են, որ այս մոդելը պետք է լրացվի հինգերորդ եզրով, որը ներկայացնում է անհատի և հասարակության իրավական մշակույթի մակարդակը: Հինգ եզր ներառող համակարգային վերլուծությունը իր կոմպակտության շնորհիվ իդեալականորեն համապատասխանում է սահմանադրականության կայացման և զարգացման ընդհանուր պատկերի վերլուծության համար՝ թույլ տալով հեշտությամբ գնահատել յուրաքանչյուր եզրի նաև ամբողջ համակարգի զարգացման ներդաշնակությունը և հավասարակշռությունը:

Եզրերից յուրաքանչյուրի անկատարությունը հանգեցնում է ամբողջական համակարգի թերարժեքության:

Գաղափարատեսական իրավական բազայի բացակայությունը բացառում է սահմանադրականության՝ որպես ամբողջական համակարգի ֆունկցիոնալ նորմատիվ-իրավական, ինստիտուցիոնալ, դատամեկնաբանական և իրավա-մշակութային փոխադարձաբանական և փոխկապակցված բաղադրիչների ստեղծումը: Այդպիսի իրավիճակը նպաստում է համակարգում բազմաթիվ *անհարթությունների*, որը թույլ չի տալիս հասնել համաձայնեցման և արդյունավետության:

Նորմատիվ-իրավական բազայի ցածր որակի դեպքում պետությունը անպայմանորեն կբախվի իրավական անկայունության:

Ինստիտուցիո-ֆունկցիոնալ եզրի անհարթությունը անհնարին է դարձնում ինչպես նոր պրոգրեսիվ, այնպես էլ արդեն տարածված, պրակտիկայում փորձված նորմատիվ դրույթների համաձայնեցված, ռացիոնալ, կոորդինացված և բազմամակարդակ իրականացումը պրակտիկայում, բարդեցնում է արդեն գոյություն ունեցող սահմանադրական իրավական ասպեկտների շտկումը և թարմեցումը, բավարար մակարդակի կատարելության և հարթության բացակայության հետևանքով բերում է գաղափարատեսական, նորմատիվ իրավական, դատամեկնաբանական, իրավամշակութային ոլորտներում համակարգի ոչ ադեկվատ պատասխան ռեակցիայի ընդունվող իրավական փոփոխությունների նկատմամբ:

Սահմանադրական համակարգի դատամեկնաբանական շեմի անկատարությունը վտանգավոր է դառնում երկրում տնտեսաքաղաքական և սոցիալ-քաղաքական ուժերի փոփոխման հետևանքով քաղաքական-կոնյուկտուրային իրավական դրույթ-մեկնաբանությունների օրինականացմամբ: Իր պաշտոնական իրավակիրառ բյուրոյի ուժով սահմանադրականության դատամեկնաբանական եզրը հանդիսանում է ամբողջ համակարգի քաղաքական ադեկվատության (համարժեքության) աստիճանի ցուցիչ, «ձևականորեն այդպես չկոչվող, բայց իրական քաղաքական իշխանությունը», ինչպես 18-րդ դարում իրավագիտորեն նշել է Մոնտեսքյոն իր աշխատություններում⁸:

Սահմանադրականության հասունության օպերատիվ գնահատականը տրվում է Կոնգուիտովայի չափանիշներով⁹: Գիտնականի կողմից առաջին տեղում են դասվում հետևյալ պայմանները

- մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովումը

⁸ Самородова-Богацкая Л. - Конституционно-правовая политика России: приоритетные направления, оценка эволютивности конституционализма с помощью моделей системного и пунктуального анализа, международный журнал прикладных и фундаментальных исследований №11, 2014г.

⁹ Самородова-Богацкая Л. - Конституционно-правовая политика России: приоритетные направления, оценка эволютивности конституционализма с помощью моделей системного и пунктуального анализа, международный журнал прикладных и фундаментальных исследований №11, 2014г.

- անկախ դատավարություն և ժողովրդի ու օրենքի առջև պատասխանատու պետական իշխանություն
Որպես սահմանադրականության երկրորդ էջերն գիտնականը նշում է
- ազատ ընտրություններ
- օրենսդիր և գործադիր իշխանությունների զսպումների և հակակշիռների համակարգ
- սեփական միտքն արտահայտելու ազատություն ՁԼՄ-ներում:
Սահմանադրականության մակարդակի բացահայտման և կայունության գնահատման նպատակով Գ. Հարությունյանի կողմից առաջարկվում է ինդիկատորների համակարգ հետևյալ մակարդակներում
- հասարակության սոցիալական ցուցանիշներ
- հասարակության դեմոկրատական արժեքների իրականացման ցուցանիշներ
- սահմանադրության, մարդու իրավունքների և ազատությունների իրավական պահպանման ցուցանիշներ¹⁰:

Համեմատական վերլուծություն երկրների կտրվածքով: Սահմանադրականության երկարատև և բովանդակ պատմություն ունեցող արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի առավել կարևոր էտապների գիտական վերլուծությունը մեծ դեր է խաղում իրավական պետության, դրա կառավարման ձևերի, պետական կառուցվածքի և քաղաքական ռեժիմի էվոլյուցիայի ըմբռման գործում: Այդ իսկ պատճառով արտասահմանյան երկրների սահմանադրականության գաղափարի, էության և պատմության ուսումնասիրությունը հանդիսանում է ժամանակակից իրավական-պատմական գիտության կարևորագույն խնդիրներից մեկը:

Փաստորեն սահմանադրականության գաղափարի մարմնացումը սկսվում է 18-րդ դարի երկրորդ կեսից, որը կապված էր ԱՄՆ-ում և Ֆրանսիայում սահմանադրության ընդունմամբ:

Համաշխարհային հանրությունը սահմանադրականության համակարգի ձևավորման հարուստ փորձ ունի, սակայն այս ամենով հանդերձ յուրաքանչյուր պետություն առանձնանում է իր յուրահատկությամբ, որոնք թելադրում են սահմանադրականության սեփական մոդելի ստեղծման անհրաժեշտություն և հնարավորություն:

Այսպես ամերիկյան գիտնականները սահմանադրականության ցուցանիշներին են դասում դրա հենումը ժողովրդի սուվերենիտետի, սահմանադրության որպես գերագույն իրավունքի ճանաչման, այլ ոչ թե քաղաքական ծրագրային փաստաթղթի, սահմանադրությամբ նախանշվող ներկայացուց-

¹⁰ Арутюнян Г. - Конституция и конституционализм в контексте конституционной культуры нового тысячелетия, <http://www.concourt.am/armenian/structure/president/articles/article-ru-2012.pdf>

չական կառավարման, իրավաբանորեն երաշխավորվող իրավունքի գերակայության, դեմոկրատական սկզբունքների հիման վրա պետության կառավարման, ինչպես նաև իշխանության սահմանափակման, զսպումների և հակակշիռների համակարգի միջոցով իշխանությունների տարանջատման, սահմանադրական վերահսկողության ինստիտուտի առկայության, սահմանադրության կոշտ և այլ իրավական ակտերի նկատմամբ գերակա դերի, պետության կողմից մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների երաշխավորման և պաշտպանության վրա¹¹:

Ի տարբերություն ամերիկյան սահմանադրականության ֆրանսիականում նկատվում է ֆրանսիական փոփոխականություն ի հակադրումն ԱՄՆ-ի որտեղ 1787թ.-ից գործում է մեկ սահմանադրություն: Ֆրանսիական պատմության մեջ 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների դեկլարացիայի հաստատմամբ կուտակված է հարուստ փորձ: Ֆրանսիային հայտնի է 17 սահմանադրական համակարգ¹²:

Գերմանական սահմանադրականության հիմքն են հանդիսանում՝ ժողովրդի մեծամասնության կամքի ձևավորումը (այն չպետք է զսպվի և պետք է իրականացվի ազատորոն, իսկ փոքրամասնությունը պետք է հնարավորություն ունենա ստեղծել քաղաքական ընդդիմություն և դառնալու մեծամասնություն) սահմանադրական միջոցները իշխանության կենտրոնացման և չարաշահման կանխման համար (այս նպատակով սահմանադրությամբ նախատեսվում են ինստիտուցիոնալ երաշխիքներ՝ իշխանությունների տարանջատում, ֆեդերալիզմ, տեղական ինքնակառավարման մարմինների անկախություն), հիմնական օրենքի նորմերի գերակա իրավունքի ստատուսը, սահմանադրական դատական հսկողության իրականացումը, մարդու իրավունքների հարգումը և այլն¹³:

Ժամանակակից ռուսական սահմանադրական իրավունքի գիտության ներկայացուցիչների կարծիքով սահմանադրականությունը մեկնաբանվում է որպես բարդ երևույթ, որը ներառում է ա) սահմանադրական գաղափարներ և կատեգորիաներ, որոնք արտացոլում են հասարակության առաջնային հիմնական արժեքները, բ) քաղաքացիների և բնակչության մասսայական սահմանադրական գիտակցությունը, գ) սահմանադրական նորմերի, ակտերի և ինստիտուտների՝ որպես վերը նշված երկու էլեմենտների մարմանավորում,

¹¹ Henkin L. New Birth of Constitutionalism: Genetis Influence and Genetis Defects. – Cordozo Law Review, 1991. – P. 40-41.

¹² Жакке Ж.-П. Конституционное право и политические институты: Учеб. пособие / Пер. с франц. – М., 2002. – С. 214:

¹³ Шевчук С. Основы конституционализма в юриспруденции. – Харків, 2002. – С. 142-143.

դ) սահմանադրական կարգ՝ որպես սահմանադրական նորմերի իրականացման պրոցես և վիճակ¹⁴:

Տեսականորեն և պրակտիկորեն սահմանադրականության հայրենիքը հանդիսանում է Անգլիան, որը մինչ օրս չունի գրված սահմանադրություն, և սահմանադրականությունը այստեղ ձևավորվել և հաստատվել է իրական իմաստով:

2014 թվականի նոյեմբերին Ալժիրում հրավիրված «Սահմանադրական զարգացումներն Աֆրիկայում» խորհրդածոլովում առաջ քաշված սկզբունքային եզրահանգումներից էին՝

1. սահմանադրությունները չեն կարող լինել ունիֆիկացված, դրանք սոցիալ-մշակութային ընդգրկում ունեցող երեւույթ են,
2. անիմաստ է առաջ տանել Աֆրիկայի համար միասնականացված սահմանադրություն ունենալու գաղափարը,
3. առանց սահմանադրական զարգացումների երկրի ապագան մշուշոտ է,
4. բարեփոխումների գերագույն խնդիրը երկրի կայունության ապահովումն է,
5. բարքերի փոփոխությունը պետք է սկսել օրենքների փոփոխությունից,
6. անցումային հասարակարգերում զարգացման երաշխիքը հասարակական համաձայնության ձեռքբերումն է,
7. սահմանադրությունը պետք է կայուն լինի, բայց ոչ ստատիկ կայուն,
8. սահմանադրությունն արժեք ունի, եթե իրական կյանքում գոյություն ունի,
9. աֆրիկյան երկրների ամենամեծ խնդիրը ոչ թե սահմանադրությունների բացակայությունն է, այլ սահմանադրականության ճգնաժամը¹⁵:

ХАРАКТЕРИСТИКА КОНСТИТУЦИОНАЛИЗМА. СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПО СТРАНАМ

Седа Нагапетян

Аспирант Экономического факультета Ереванского государственного университета

Ключевие слова: конституционализм, характеристика конституционализма, уровень, показатели, элементы.

В сегодняшнем непрерывно развивающемся и меняющемся мире конституционность выступает в качестве ключевого критерия для оценки состояния развития государства.

Высокий уровень конституционализма гарантирует правовую экономическую безопасность индивидуума, гражданского общества и государства, которая и представляет собой смысл и тенденции сегодняшнего конституционно-

¹⁴ Тихомиров Ю.А. Конституция в правовой системе: взаимовлияние и противоречия // Конституция как фактор социальных изменений: Сборник докладов. – М., 1999. – С. 88:

¹⁵ Գ. Հարությունյան - Սահմանադրական զարգացումների արժեքանական հիմնախնդիրներն արդի մարտահրավերների դիտանկյունից, <http://www.concourt.am/armenian/structure/president/articles/article-harutyunyan-2014.pdf>:

демократического мира. Сегодня уровень конституционализма ассоциируется и более того прогнозирует уровень экономического развития государства. И поэтому конституционализм становится предметом исследования экономики.

Научный анализ этапов эволюции конституционного права тех зарубежных стран, которые имеют длительную и содержательную историю конституционализма, играет важную роль в понимании эволюции правового государства, формы его правления, государственного устройства и политического режима; он также способствует уяснению особенностей политических систем конкретных стран. Поэтому изучение идей и сущности конституционализма в зарубежных странах и особенностей его истории является одной из важнейших задач современной историко-правовой науки.

CHARACTERISTIC OF CONSTITUTIONALISM. COMPARATIVE ANALYSIS

Seda Nahapetyan

PhD candidate of Faculty of Economics of Yerevan State University

Keywords: constitutionalism, characteristic of constitutionalism, level, indicators, elements.

In today's constantly evolving and changing world constitutionalism acts as a key criterion for assessing the development of country.

The high level of constitutionalism guarantees legal and economic security of the individual, civil society and the country, which represents the meaning and trends of today's constitutional and democratic world. Today, the level of constitutionalism associated and furthermore predicts the level of economic development of the country. And so constitutionalism becomes the subject of study of the economy.

Scientific analysis of the stages of evolution of the constitutional law of those foreign countries that have a long and meaningful history of constitutionalism, plays an important role in understanding the evolution of state of law, its form of government, the state apparatus and the political regime; He also contributes to the elucidation of the features of political systems of individual countries. Therefore, the study of ideas and the essence of constitutionalism in foreign countries, and especially its history is one of the most important problems of modern historical and legal science.

ԲԱԺԻՆ 2. ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լիլիթ Տոնոյան

Ռուս-Հայկական (Մշակոնական) համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ավագ, դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

Բանալի բառեր՝ **պարտապան, պարտատեր, հարկադրված սնանկություն, կամավոր սնանկություն, ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, վճարային պարտավորություններ**

Սնանկության գործով մասնակիցների կազմում առաջին հերթին հանդես է գալիս պարտապանը: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի երկրորդ հոդվածի առաջին մասի համաձայն սնանկության վարույթի պարտապան կարող է լինել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ¹:

Ինչպես երևում է վերոգրյալից, սնանկության մասին օրենքը նախատեսում է պարտապան- մասնակիցների բավականին լայն շրջանակ՝ «ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ»: Սակայն ընդհանուր կանոնից գոյություն ունեն բացառություններ: Այսպես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սնանկության վարույթի պարտապան չեն կարող լինել Հայաստանի Հանրապետությունը, համայնքը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, բանկը, վարկային կազմակերպությունը, ներդրումային ընկերությունը, ներդրումային ֆոնդի կառավարիչը և ապահովագրական ընկերությունը²:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28 հոդվածի առաջին մասի համաձայն «Քաղաքացին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերը, դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե նա ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները»: Նույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով սահմանվում են, որ քաղաքացուն սնանկ ճանաչելու հիմքերը, կարգը, պարտատերերի պահանջների բավարարման կարգն ու դադարման հիմքերը սահմանվում են սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով:

¹ Տես՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքը, ընդունված 25 դեկտեմբերի 2006թ.,

² Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության հարաբերությունները կարգավորվում են Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին ՀՀ օրենքով, ընդունված 2001թվականի նոյեմբերի 6-ին

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում չի տրվում քաղաքացու՝ այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ սնանկության հասկացությունը և օգտագործվում է «ի վիճակի չէ» արտահայտությունը, որն ըստ էության չի համապատասխանում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի երրորդ հոդվածի բովանդակությանը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի երրորդ հոդվածի համաձայն պարտապանը՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձը, դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ կամավոր սնանկության դիմումի հիման վրա:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի երրորդ հոդվածի համաձայն պարտապան-քաղաքացին դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել

1. հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների վաթսուներկա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է /փաստացի անվճարունակություն/,
2. կամավոր սնանկության դիմումի հիման վրա սեփական նախաձեռնությամբ, եթե պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ ֆիզիկական անձի դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ:

Համաձայն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի երրորդ հոդվածի՝ ՀՀ օրենսգրքերի, օրենքների, ՀՀ նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, նախարարությունների և գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, առանձին իրավաբանական անձանց ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1000 դրամը: Նշանակում է, «օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը» հավասար է մեկ միլիոն ՀՀ դրամի, որը կարող է փոփոխվել ՀՀ նվազագույն աշխատավարձի հաշվարկային չափը փոփոխվելու դեպքում³:

Այսպիսով, քաղաքացին կարող է սնանկ ճանաչվել ոչ թե այն դեպքում, երբ նա ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները, այլ սնանկ ճանաչելու օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Ուստի, մեր կարծիքով անհրաժեշտ է խմբագրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28 հոդվածի առաջին մասի բովանդակությունը և սահմանել.

³ Տես «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք, ընդունված 2003թվականի դեկտեմբերի 17-ին

«Քաղաքացին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերը, դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել պարտապանին սնանկ ճանաչելու օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում»:

Ֆիզիկական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ սնանկության գործընթացն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք սահմանվում են «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 11-րդ գլխով: Ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու մասին դիմումը նրա բնակության վայրի դատարան կարող է ներկայացնել տվյալ ֆիզիկական անձը /նրա ներկայացուցիչը/ կամ պարտատերը: Ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ ֆիզիկական անձանց սնանկության գործերի վարումն իրականացվում է ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավորի կողմից միանձնյա:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի երրորդ հոդվածի երկրորդ մասի մեկնաբանությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պարտապան ֆիզիկական անձի նախաձեռնությամբ կամավոր սնանկության մասին դիմում ներկայացնելու դեպքում պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով պետք է գերազանցեն պարտապանի ակտիվների արժեքը՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ: Իսկ պարտատերերի կողմից ֆիզիկական անձի սնանկության դիմում ներկայացնելու դեպքում բավարար է, որպեսզի պարտապանը թույլ տված լինի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների վաթսուևօրյա կամ ավելի ժամկետով կետանց:

Այսպիսով, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի երրորդ հոդվածի երկրորդ մասի առաջին կետի համաձայն պարտապան ֆիզիկական անձը կարող է սնանկ ճանաչվել, եթե նա թույլ է տվել կետանց /խախտել է իր պարտավորությունը/, այլ ոչ եթե նա անկարող է վճարել /անվճարունակ է/:

Մեր կարծիքով, «Մնանկության մասին» ՀՀ օրենքով հստակ պետք է տարանջատվեն ֆիզիկական անձ-քաղաքացու և ֆիզիկական անձ-անհատ ձեռնարկատիրոջը սնանկ ճանաչելու հիմքերը՝ քաղաքացու սնանկ ճանաչման համար կարևորելով նրա անվճարունակությունը և ոչ թե տվյալ պարտավորության խախտումը:

Ռուսաստանի Դաշնության «Անվճարունակության /սնանկության/ մասին» օրենքի երրորդ հոդվածի առաջին մասով առանձին սահմանվում են քաղաքացու սնանկության հատկանիշները, իսկ միևնույն հոդվածի երկրորդ մասով՝ իրավաբանական անձի սնանկության հատկանիշները⁴:

⁴ Стн Федеральный закон от 26.10.2002 г. N 127-ФЗ "О несостоятельности (банкротстве)"

Նշված հոդվածի առաջին մասի համաձայն քաղաքացին համարվում է անկարող բավարարել պարտատերերի պահանջները դրամական պարտավորությունների գծով և /կամ/ կատարել պարտադիր վճարումների գծով պարտականությունը, եթե համապատասխան պարտավորությունները և/ կամ/ պարտականությունը չի կատարվել նրա կողմից երեք ամսվա ընթացքում այն օրվանից, երբ պետք է կատարվեին, և եթե պարտավորությունների գումարը գերազանցում է նրան պատկանող գույքի արժեքը:

«Անվճարունակության /սնանկության/ մասին» ՌԴ օրենքի 33-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն արբիտրաժային դատարանի կողմից քաղաքացուն սնանկ ճանաչելու մասին դիմումն ընդունվում է, եթե նրա նկատմամբ պահանջներն ընդհանուր պակաս չեն տաս հազար ռուբլուց և դրանք չեն կատարվել երեք ամսվա ընթացքում այն օրվանից, երբ պետք է կատարվեին: Ի տարբերություն դրա, ԱՄՆ-ի օրենսդրությունն ընդհանրապես ժամկետը չի սահմանում որպես սնանկության հատկանիշ:

Դրա փոխարեն որպես սնանկության չափանիշ է սահմանվում պարտքի չափը, բայց դիմողը պարտավոր է ապացուցել, որ պարտապանը ժամանակին չի կատարել իր պարտավորությունները:

Անգլիայում սնանկությունը ֆիզիկական անձի պարտքերի մարմանն ուղղված օրինական գործընթաց է: Սնանկության գործընթացը հիմնվում է երկու հիմնական սկզբունքի վրա

- պարտապանը ֆինանսական կայունացման հնարավորություն է ստանում ի հաշիվ պարտքերի վերացման,
- պարտապանի գույքն անցնում է սնանկության կազմակերպչի կառավարմանը և բաշխվում է պարտատերերի միջև⁵:

Ընդ որում, պարտապանի կողմից սնանկության դիմում ներկայացնելու համար բավարար է միայն մեկ հիմք՝ պարտքի վճարման անկարողությունը:

Պարտատերերի կողմից սնանկության դիմում ներկայացնելու համար նախատեսվում են ավելի խիստ պահանջներ՝ պարտքը պետք է 750 ֆունտից ավել լինի, ապահովված պետք է չլինի և չպետք է վիճարկվի պարտապանի կողմից, ինչպես նաև անհրաժեշտ է ապացուցել պարտապանի վճարման անկարողությունը⁶:

Պետք է նշել, որ Ռուսաստանի Դաշնությունում ներկայումս բուն քննարկումներ են ընթանում ֆիզիկական անձանց սնանկության մասին օրենքի նախագծի շուրջ, որն առաջին ընթերցմամբ ընդունվել է ՌԴ պետդոմայի կողմից: Նշված նախագիծը վերաբերում է քաղաքացիական օրենս-

⁵ Stu. Несостоятельность в России, Англии, Франции, Германии, В.В. Степанов, Москва, 1999 год, էջ 32

⁶ Stu Банкротство физических лиц в Англии, Андрей Смоленко, <http://blog.liga.net/user/smolenko/article>

դրությանը, միաժամանակ ներառում է քաղաքացիական դատավարական իրավունքի հիմքեր⁷:

Ֆիզիկական անձանց սնանկության մասին ՌԴ օրենքի նախագծով սահմանվում է, որ արբիտրաժային դատարան կարող է սնանկության դիմում ներկայացնել և պարտապան քաղաքացին, և պարտատերը: Ընդ որում նրա ժամկետանց պահանջների ընդհանուր գումարը պակաս պետք է չլինի հիսուն հազար ռուբլուց: 2013 թվականի վերջին և 2014 թվականի սկզբին մի շարք քննարկումներ են կատարվել նշված նախագծի շուրջ, և առաջարկ է ներկայացվել գումարի չափը հիսուն հազար ռուբլուց մեծացնել և հասցնել մինչև երեք հարյուր հազար ռուբլու:

Միաժամանակ ռուս իրավագետները կողմ են արտահայտվում այն առաջարկին, որ անհրաժեշտ է իրարից տարանջատել քաղաքացու և անհատ ձեռնարկատիրոջ սնանկության գործընթացները:

Ըստ ՀՀ օրենսդրության ֆիզիկական անձի սնանկության գործընթացն ունի մի շարք առանձնահատկություններ:

Առաջին հերթին դա վերաբերում է նրան, որ մրցութային զանգվածի մեջ չի կարող ներառնվել քաղաքացու այն գույքը, որի վրա օրենքով չի կարող բռնագանձում տարածվել /«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի առաջին մաս/:

Երկրորդ, ֆիզիկական անձի միջնորդությամբ նրա գույքը կամ դրա մի մասը դատարանը կարող է ազատել արգելանքից և հանել մրցութային զանգվածից՝ երրորդ անձանց կողմից երաշխավորությամբ կամ պարտավորությունների կատարման այլ ապահովում ներկայացնելու դեպքում /երաշխիք, գրավ և այլն/:

Երրորդ, ֆիզիկական անձի, այդ թվում նաև անհատ ձեռնարկատիրոջ ֆինանսական առողջացման ծրագիր կարող է ներկայացնել միայն պարտապանը: Ֆիզիկական անձի առողջացման ծրագրի առավելագույն ժամկետը չի կարող չորս տարուց ավել լինել: Ընդ որում, ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատերերի կողմից չի քվեարկվում և վերջիններս կարող են միայն վիճարկել, եթե այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, կամ ծրագրի ժամկետը պակաս է երեք տարուց:

Չորրորդ, ֆիզիկական անձի դիմումով դատարանը կարող է մինչև մեկ ամիս ժամկետով հետաձգել սնանկության գործի քննությունը՝ պարտատերերի հետ վերջնահաշվարկներ կատարելու կամ հաշտության համաձայնություն կնքելու նպատակով: Նշված ժամկետում պարտատերերի պահանջները

⁷ Տե՛ս <http://www.garant.ru/news>

չբավարարելու կամ հաշտության համաձայնություն չկնքելու դեպքում դատարանը վճիռ է կայացնում ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու մասին:

Ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու պահից.

- քաղաքացու պարտավորությունների կատարման ժամկետները համարվում են վրա հասած,
- դադարում են տուժանքների /տուգանքների, տույժերի/ և տոկոսների հաշվարկումը,
- դադարում են բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները:

Ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու մասին վճռի օրինական ուժի մտնելուց հետո ֆիզիկական անձն ազատվում է բոլոր դրամական պարտավորությունների կատարումից, բացառությամբ

- ալիմենտների վճարումից,
- կյանքին և առողջությանը, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման պարտավորություններից,
- սնանկ ճանաչելու պահին նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմիններից թաքցրած պարտավորությունների վճարումներից,
- սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած իննսուն օրվա ընթացքում ստանձնած և 100.000 դրամը գերազանցող պարտավորություններից
- ուսման վարկավորման գումարը վերադարձնելու պարտավորությունից,
- սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի պահանջներից գույք թաքցրած լինելու դեպքում՝ թաքցված գույքի արժեքի չափով:

Սնանկ ճանաչված ֆիզիկական անձի գույքի վաճառքն իրականացվում է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով⁸:

ՀՀ սնանկության մասին օրենսդրությունը սահմանափակում է ֆիզիկական անձի կրկնակի սնանկությունը: Այսպես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի առաջին մասի համաձայն ֆիզիկական անձի սնանկության մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում նույն ֆիզիկական անձը չի կարող կամավոր սնանկության դիմում ներկայացնել, իսկ նման դիմում ներկայացնելու դեպքում դիմումի ընդունումը ենթակա է մերժման:

Նշված հոդվածի բովանդակությունից բխում է, որ ֆիզիկական անձի սնանկության մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում նույն ֆիզիկական անձը կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, ինչը մեր կարծիքով հակասում «Սնանկ-

⁸ Տես «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք, ընդունված 2003թվականի հոկտեմբերի 8-ին

կության մասին» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի, ինչպես նաև ֆիզիկական անձի սնանկության ինստիտուտի ողջ էությանը:

Ֆիզիկական անձի կրկնակի սնանկության վերաբերյալ սահմանափակում նախատեսվում է նաև ՌԴ «Անվճարունակության /սնանկության/ մասին» օրենքի 213 հոդվածով: Մասնավորապես, նշված հոդվածի առաջին մասով սահմանվում է, որ քաղաքացուն սնանկ ճանաչելուց հետո հինգ տարվա ընթացքում նրա դիմումով չի կարող սնանկության գործ հարուցվել: Միաժամանակ 213 հոդվածի երկրորդ մասը լրացնում է առաջին մասը՝ սահմանելով, որ պարտատերերի հետ հաշվարկների կատարումից հետո հինգ տարվա ընթացքում պարտատիրոջ դիմումով քաղաքացուն կրկնակի սնանկ ճանաչելու դեպքում այդ քաղաքացին չի ազատվում պարտատերերի պահանջների հետագա կատարումից:

Մեր կարծիքով, ֆիզիկական անձի սնանկության մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում նույն ֆիզիկական անձը չի կարող կրկնակի սնանկ ճանաչվել ոչ հարկատիրված և ոչ էլ կամավոր սնանկության դիմումի հիման վրա, իսկ նոր առաջացած պարտավորությունների կատարման համար քաղաքացու դեմ կարող են ներկայացվել հայցային պահանջներ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքով չեն սահմանազատվում ֆիզիկական անձ-քաղաքացու և ֆիզիկական անձ-անհատ ձեռնարկատիրոջ սնանկության գործընթացները:

Անհատ ձեռնարկատիրոջ սնանկության հատկանիշներն են՝

1. սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների վաթսուօրյա կամ ավելի ժամկետով կետանց /փաստացի անվճարունակություն/,
2. պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ:

Միաժամանակ անհատ ձեռնարկատիրոջ սնանկությունը ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, «Սնանկության մա-սին» ՀՀ օրենքի հարյուր հոդվածի առաջին մասով սահմանվում է, որ անհատ ձեռնարկատիրոջ սնանկության վարույթում իրենց պահանջները կարող են ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված պարտավորություններով պարտատերերը, ինչպես նաև անձնական բնույթի այլ պահանջներով պարտատերերը:

Անհատ ձեռնարկատիրոջ սնանկության առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ սնանկ ճանաչվելուց հետո այդ մասին տեղե-

կատվություն է տրամադրվում հարկային մարմին, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պետական գրանցման համար կառավարիչը դիմում է ներկայացնում պետական ռեգիստրի գործակալություն, ինչպես նաև վերացվում են նրան տրված բոլոր լիցենզիաները:

Ֆիզիկական անձանց սնանկության իրավական հետևանքների նկատմամբ տարբեր երկրների օրենսդիրների կողմից առկա են տարբեր մոտեցումներ:

Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում դրանք բավականին մեղմ են⁹: Ըստ «Անվճարունակության /սնանկության/ մասին» ՌԴ օրենքի 216 հոդվածի երկրորդ մասի սնանկ ճանաչված անհատ ձեռնարկատերը սնանկ ճանաչվելու պահից մեկ տարվա ընթացքում չի կարող գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր:

Գերմանիայում սնանկության մասին օրենքը գործում է 1994 թվից: Ֆիզիկական անձանց սնանկության հարաբերությունները արտացոլված են նշված օրենքի առաջին մասում: Ինչ վերաբերում է սնանկության իրավական հետևանքներին, ապա ըստ Գերմանիայի սնանկության մասին օրենսդրության՝ ֆիզիկական անձի սնանկությունից հետո վեց տարվա ընթացքում իրականացվում է պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն: Այդ նպատակով դատարանի կողմից ընդգրկվում է անկախ գնահատող, որն ամեն տարի ուսումնասիրում է պարտապանի ֆինանսական վիճակը: Եթե գնահատողը գալիս է այն եզրակացության, որ պարտապանի ֆինանսական վիճակն անփոփոխ է, ապա պարտապանին տրվում է ևս մեկ տարվա տարեկետում: Եթե վեցերորդ տարվա վերջում պարտապանի վճարունակությունը չի վերականգնվում, գործն ավարտվում է և անձին տրվում է ֆիզիկական անձի սնանկության կարգավիճակ: Այդ պահից մյուս բոլոր գումարային պահանջները վերացվում են¹⁰:

Ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության քաղաքացու և անհատ ձեռնարկատիրոջ սնանկ ճանաչման իրավական հետևանքները մինևույն են՝ տվյալ ֆիզիկական անձը չի կարող լինել առևտրային կազմակերպության հիմնադիր կամ կոոպերատիվի անդամ, ինչպես նաև գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր:

Տարբերությունը կայանում է նրանում, որ քաղաքացու սնանկության դեպքում նշված սահմանափակումների վերաբերյալ ժամկետի հոսքը սկսում է նրան սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից հինգ տարվա ընթացքում, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ սնանկու-

⁹ Ств Балдин К. В., Белугина В. В., Галдицкая С. Н., Передеряев И.И. Банкротство предприятия: анализ, учет и прогнозирование. М., 2007, էջ 107

¹⁰ Ств Ирина Навара-Себастьян, Банкротство физического лица, или в Германии человек-это звучит..., ежемесячный информационный журнал Neue Zeiten, 25.05.2014.

թյան հետևանքով նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից հինգ տարվա ընթացքում:

Այսպիսով, ֆիզիկական անձի սնանկությունը բարդ գործընթաց է, որի դեպքում հաշվի է առնվում ինչպես մարդկային գործոնը, այնպես էլ կոնկրետ անհատի անվճարունակությունը պետության կամ այլ պարտատերերի հետ անձնական ֆինանսական հարաբերություններում: Ուստի, ֆիզիկական անձի սնանկության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը պետք է հստակ կարգավորի ֆիզիկական անձի սնանկության հատկանիշները, սրնանկ ճանաչման ողջ գործընթացը, ինչպես նաև իրավական հետևանքները:

ОСОБЕННОСТИ БАНКРОТСТВА ГРАЖДАНИНА И ИНДИВИДУАЛЬНОГО ПРЕДПРИНИМАТЕЛЯ В РА

Лилит Тоноян

старший преподаватель кафедры гражданского права и гражданского процессуального права Института права и политики Российско-Армянского (Славянского) университета, кандидат юридических наук

Ключевые слова: должник, кредитор, принудительное банкротство, добровольное банкротство, физическое лицо, индивидуальный предприниматель, денежные обязательства.

Статья посвящена правовому регулированию банкротства физического лица, в том числе индивидуального предпринимателя в законодательстве РА и иностранных государств. Изучив законодательную базу разных стран института банкротства физического лица, представлены подходы законодателей некоторых стран о признаках банкротства, об особенностях признания банкротства гражданина и о правовых последствиях.

В статье представлены также особенности оснований признания банкротом индивидуального предпринимателя и правовых последствий в соответствии с законом Республики Армения «О банкротстве».

Автор приходит к выводу, что, несмотря на то обстоятельство, что в РА действуют соответствующие законы регулирующие данную сферу, в них существуют некоторые противоречия и отдельные статьи нуждаются в корректировке.

FEATURES OF BANKRUPTCY OF THE INDIVIDUALS AND PRIVATE ENTREPRENEURS IN RA

Lilit Tonoyan

*Lecturer of Faculty of Law at Department of Civil Law and Civil Trial Law
at Russian-Armenian University, PhD in Law*

Keywords: debtor, creditor, involuntary bankruptcy, voluntary bankruptcy, individual person, individual entrepreneur, payment obligations.

The article is about the legal regulation of the bankruptcy of the individual person, including private entrepreneur in the Republic of Armenia and foreign countries. Studying the legislation of different countries, the author has mentioned the signs, characteristics and the legal implications of the bankruptcy of the individuals.

The author has also presented the features of legal implications and the reasons based on which will be recognized the bankruptcy of the debtor and private entrepreneur according to the law on the bankruptcy of the Republic of Armenia. The author concludes that in spite of the fact that there are laws regulating this sphere, there are many discrepancies and some articles

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ РЫНКА ЦЕННЫХ БУМАГ РА

Ани Степанян

Преподаватель юридической кафедры Международного университета Евразия, кандидат юридических наук

Ключевые слова: государственное регулирование, рынок ценных бумаг, государство, механизмы, ценные бумаги, участники

Переход к рыночной экономике был обусловлен определенными экономическими и финансовыми потрясениями, которые привели к взлетам и падениям также рынка ценных бумаг. Любой стране, для ее дальнейшего успешного развития необходимы инвестиции, для привлечения которых одним из прибыльных является рынок ценных бумаг. Особенностью привлечения финансовых средств с помощью ценных бумаг является то, что, как правило, они могут свободно обращаться на рынке. Поэтому инвестор, который вложил свои средства в какой-либо проект путем приобретения ценных бумаг, может вернуть их, продав бумаги. В то же время его действия не затрагивают и не нарушают самого процесса производства, так как деньги не изымаются из организации, которая продолжает функционировать. Возможность свободной купли-продажи позволяет самому инвестору определять время, на которое он желает разместить свои средства в тот или иной проект¹. Этот вопрос особенно актуален тем, что еще с 90-х годов в стране имели место определенные рыночные реформы. И с этой точки зрения необходимо разобраться в системе регулирования рынка ценных бумаг.

Рынок ценных бумаг как составная часть финансово-кредитной системы является объектом государственного регулирования. Целью государственного регулирования рынка является создание такой системы, которая должна способствовать притоку инвестиций в экономику, создавать равные возможности для реализации прав всем участникам рынка и не допускать ущемления интересов одних участников рынка за счет других. Государственное регулирование фондового рынка осуществляется соответствующими государственными органами в соответствии с нормативно-правовыми актами, в которых определены основные направления и рычаги регулирования².

Реализация механизмов государственно-правового воздействия на отношения, складывающиеся на фондовом рынке, является, по сути, главным инс-

¹ См.: Батяева Т.А., Столяров И.И. Рынок ценных бумаг. Учебное пособие. - М., ИНФРА-М, 2010, 8с.

² См.: Лялин В.А., Воробьев П.В. Рынок ценных бумаг. – М., ПРОСПЕКТ, 2006, 17с.

трументом государственной политики на рынке ценных бумаг. Рынок ценных бумаг - один из наиболее регламентированных рынков в мире. Сложность отношений на рынке, его масштабность, присущий рынку риск, интересы безопасности его участников обуславливают необходимость принятия детальных стандартов и правил работы на нем, а также привлечения к вопросам регулирования различных государственных органов и саморегулируемых организаций. Совпадение по многим позициям интересов участников рынка ценных бумаг и государства позволяет использовать саморегулирование как метод оперативного решения возникающих проблем. Накоплен большой опыт государственного регулирования рынка ценных бумаг. В мировой практике существуют три основные модели его регулирования: *путем прямого правительственного контроля* (Ирландия, Нидерланды, Португалия); *путем контроля с помощью финансово-банковских органов* (ФРГ, Бельгия, Дания); *через специально созданные учреждения* (США, Франция, Италия, Испания, Великобритания)³.

Существуют также две концепции регулирования рынка ценных бумаг⁴:

- 1) Регулирование рынка преимущественно сосредоточивается в государственных органах, лишь небольшая часть полномочий по надзору, контролю, установлению правил передается государством так называемым саморегулирующимся организациям;
- 2) Максимально возможный объем полномочий передается саморегулирующимся организациям, значительное место в контроле занимают не жесткие предписания, а переговорный процесс, индивидуальные согласования с участниками рынка ценных бумаг, при том что государство сохраняет за собой основные контрольные позиции, возможность в любой момент вмешаться в процесс саморегулирования.

В некоторых странах с банковской моделью рынка (наиболее яркие примеры - Германия, Австрия, Бельгия) основную ответственность за фондовый рынок несут центральный банк и орган банковского надзора (если он отделен от центрального банка). Уникальной в этом отношении является Швейцария, где нет единого государственного органа, осуществляющего централизованное регулирование рынка ценных бумаг (эта функция разделена по регионам).⁵

Регулирование рынка ценных бумаг - это процесс регулирования деятельности всех его участников, а именно: эмитентов, инвесторов, профессиональных участников фондового рынка и регулирование всех видов сделок между ними со стороны уполномоченных на это организаций. Регулирование рынка

³ См.: Хозяйственное (предпринимательское) право. Учебник. Отв.ред. Булатецкий Ю.Е., Машкин Н.А. - М., НОРМА, 2008, 578с.

⁴ См.: там же 580с./ Financial Systems and Development. Washington, 1989, P. 57.

⁵ См.: там же.

ценных бумаг можно разделить на внутреннее и внешнее. *Внутреннее* регулирование означает подчиненность деятельности данной организации ее собственным нормативным документам, таким как устав организации, внутренние правила и другие нормативные документы, которые определяют правила деятельности данной организации и ее сотрудников. *Внешнее* регулирование представляет собой подчиненность деятельности данной организации нормативным актам государства, различных организаций, имеющих на это право, международным нормам и соглашениям⁶.

К основным государственным органам, регулирующим рынок ценных бумаг в Республике Армения (далее РА), относятся: *Правительство* (это полномочие вытекает из п. 3 и 4 ст. 89 Конституции⁷ РА, устанавливающих, что Правительство управляет государственной собственностью и осуществляет финансово-экономическую, кредитную и налоговую единую государственную политику); *министерство финансов* (Отдел Казначейский депозитарий аппарата министерства финансов РА осуществляет непосредственную продажу выпущенных государственных краткосрочных облигаций и сберегательных купонных облигаций, осуществляя их учет и обслуживание. Сберегательные купонные облигации выпускаются на основании Постановления Правительства номер 1606 от 19.10.2006г. «Об утверждении условий выпуска государственных (казначейских) сберегательных купонных облигаций Республики Армения, порядка размещения и обслуживания погашения государственных (казначейских) сберегательных купонных облигаций Республики Армения»⁸);⁹ *Центральный банк* (далее ЦБ) (осуществляет непосредственный контроль на рынке ценных бумаг) и т.д..

Необходимость государственного регулирования рынка ценных бумаг обусловлена недостаточным вниманием государства к нему, недооценка необходимости развития соответствующей инфраструктуры и т.д. В регулировании деятельности рынка ценных бумаг особое внимание должно быть уделено государственному контролю как одной из функций государственного регулирования.

⁶ См.: Батяева Т.А., Столяров И.И. Рынок ценных бумаг. Учебное пособие. – М., ИНФРА-М, 2010, 277с.

⁷ См.: Конституция Республики Армения от 27.11.2005 (ВВС РА 2005.12.05/Специальный выпуск) / www.arlis.am

⁸ См.: Постановление Правительства Республики Армения номер 1606 «Об утверждении условий выпуска государственных (казначейских) сберегательных купонных облигаций Республики Армения, порядка размещения и обслуживания погашения государственных (казначейских) сберегательных купонных облигаций Республики Армения» от от 19.10.2006г. (ВВС РА 2006.12.06/62(517)) / www.arlis.am

⁹ См.: www.minfin.am

Рынок ценных бумаг является одним из наиболее регламентированных в рыночной экономике. Сложность отношений на рынке, его масштабность, присущие ему повышенные риски, интересы безопасности его участников (субъектов) обуславливают необходимость принятия детальных стандартов и правил работы на рынке, а также привлечения к вопросам регулирования различных государственных органов власти.

Регулирование рынка ценных бумаг представляет собой определенное упорядочение работы участников рынка ценных бумаг и заключение сделок на основе установленных правил и требований. Развитие рынка ценных бумаг имеет два направления регулирования: регулирование со стороны государства (государственное регулирование) и регулирование со стороны самих участников рынка (саморегулирование). Государственное регулирование строится на соблюдении следующих принципов: общественной полезности, гласности и открытости, доверия, саморегулирования, гарантии прав участников. Регулирование деятельности на рынке ценных бумаг это совокупность конкретных способов и приемов по определенному упорядочению работы субъектов рынка ценных бумаг и заключению сделок на основе установленных правил и требований.

С точки зрения теории гражданского права армянский рынок ценных бумаг регулируется посредством совокупности общеобязательных правовых актов, издаваемых органами государственной власти в установленной законодательством РА форме. К таким актам относится в первую очередь Конституция РА, которой не должны противоречить остальные нормативно-правовые акты. В Конституции установлены полномочия РА, органов государственной власти, которые могут в свою очередь принимать самостоятельно свои законодательные акты. К таким актам относится Гражданский кодекс РА¹⁰ (далее ГК РА), в котором установлены общие положения о ценных бумагах, а также основные особенности перехода прав по ценным бумагам и т.д. Гражданско-правовые отношения, связанные с рынком ценных бумаг регулируются также законами и подзаконными актами, которые не должны противоречить ГК РА. Однако базовым актом, непосредственно и разносторонне регулирующим отношения, связанные с ценными бумагами и рынком ценных бумаг, является закон РА «О рынке ценных бумаг» (далее Закон РА о РЦБ)¹¹. В нем установлены положения о видах профессиональной деятельности на рынке

¹⁰ См.: Гражданский кодекс Республики Армения от 05.05.1998г. (ОВ РА 1998.08.10/17(50)) / www.arlis.am

¹¹ См.: Закон РА «О рынке ценных бумаг» от 11.10.2007 (ОВ РА 2007.10.31/53(577)) / www.arlis.am

ценных бумаг, регулировании деятельности участников рынка ценных бумаг, об особенностях эмиссии и обращения ценных бумаг и т.д.

В Законе РА о РЦБ были учитаны опыт и практика функционирования рынка ценных бумаг за прошедшие годы, который особо подчеркивает роль надзора за ним. В Законе РА о РЦБ довольно четко определен порядок деятельности профессиональных участников рынка ценных бумаг, установлен порядок и условия осуществления сделок на рынке ценных бумаг, их виды, информационное обслуживание рынка ценных бумаг, в нем также регулируются отношения, возникающие при эмиссии и обращении ценных бумаг независимо от типа эмитента и т.д.

Отдельный интерес представляет собой также закон РА «Об акционерных обществах»¹², однако законодательство о государственном регулировании рынка ценных бумаг вышеуказанными нормативными актами не ограничивается: существует множество иных актов законодательства или подзаконных актов, а также инструкции, положения, разрабатываемыми самими участниками рынка ценных бумаг.

В зависимости от того, является ли деятельность на рынка ценных бумаг основной для субъекта, выделяют профессиональных и непрофессиональных участников рынка ценных бумаг. Профессиональные участники рынка ценных бумаг, как правило, имеют разрешение (лицензию) на осуществление определенного вида деятельности рынка ценных бумаг. Лицензирование является одной из форм осуществления государственного регулирования на рынке. Это процедура, связанная с предоставлением лицензий, продлением, возобновлением срока действия лицензий, приостановлением и прекращением действия лицензий. Лицензированию посвящена глава 4 Законе РА о РЦБ, согласно которому все виды профессиональной деятельности на рынке ценных бумаг, указанные в Законе РА о РЦБ, осуществляются на основании специального разрешения - лицензии, выдаваемой ЦБ РА. ЦБ РА лицензирует деятельность профессиональных участников рынка ценных бумаг двумя видами лицензий: лицензией профессионального участника рынка ценных бумаг и лицензией на осуществление депозитарной деятельности. Согласно п. 1 ст. 175 Закона РА о РЦБ Центральный депозитарий - это акционерное общество, которое в порядке, установленном законом, нормативно-правовыми актами ЦБ и собственными правилами осуществляет функции централизованного хранителя, централизованного реестродержателя и оператора расчетной системы ценных бумаг.

¹² См.: Закон РА «Об акционерных обществах» от 25.09.2002 (ОБ РА 2001.11.06/34(166) / www.arlis.am

В Законе РА о РЦБ установлены также полномочия ЦБ РА как органа, осуществляющего контроль (государственное регулирование) рынка. В частности, согласно п. 2 ст. 206 Закона РА о РЦБ, ЦБ РА в рамках своих полномочий контролирует лиц, указывающих инвестиционные услуги на территории РА, лиц, осуществляющих публичное предложение ценных бумаг на территории РА, подотчетных эмитентов, лиц, являющихся оператором регулируемого рынка, Центральный депозитарий, а также их директоров и иных руководителей, лиц, действующих в их составе или от их имени на основании профессиональной квалификации, лиц, имеющих значимое участие, а также лиц, прямо или косвенно привлеченных в крупных сделках, совершаемых на рынке ценных бумаг.

На рынке ценных бумаг регулирование государством осуществляется также косвенным образом через систему налогообложения (ставки налогов, льготы и освобождение от налогов), денежную политику (процентные ставки, минимальный размер заработной платы и др.), государственные капиталы (государственный бюджет, внебюджетные фонды финансовых ресурсов и др.), государственную собственность и ресурсы (государственные предприятия, природные ресурсы и земли).

В системе государственного регулирования рынка ценных бумаг ЦБ занимает особое место не только на стадии формирования профессиональных участников (участвуя в непосредственном контроле над ними), но и в процессе осуществления самой деятельности. Это имеет как положительные, так и отрицательные последствия (чрезмерный контроль может привести к злоупотреблениям), однако без соответствующего механизма государственного регулирования приведет ко многим неблагоприятным последствиям.

Непосредственное государственное регулирование на рынке ценных бумаг осуществляет ЦБ РА, полномочия которого установлены в Законе РА «О центральном банке Республики Армения»¹³.

Ценные бумаги являются наиболее эффективным способом получения дохода, в то же время важным инструментом для осуществления инвестиционной деятельности.

В условиях нынешних рыночных отношений большое значение имеет регулирование фондового рынка, который стал возрождаться относительно недавно. Хотя законодательная база, регулирующая отношения субъектов по операциям с ценными бумагами разработана, однако недостаточна для ее успешного развития. Для повышения собственной надежности и улучшения

¹³ См.: Закон РА «О Центральном банке Республики Армения» от 30.06.1996 (ВНС РА 1996/12) / www.arlis.am

репутации в глазах потребителей субъектам рынка важны изменения законодательной базы, однако государственное регулирование рынка ценных бумаг должно заключаться не только в усовершенствовании законодательной базы, но и в установлении обязательных требований к деятельности эмитентов и инвесторов, в контроле за соблюдением вышеуказанных требований на РЦБ.

ՀՀ ԱՐԺԵՐՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Անի Ստեփանյան

*Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի
դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու*

Բանալի բառեր՝ պետական կարգավորում, արժեթղթերի շուկա, պետություն, մեխանիզմներ, արժեթղթեր, մասնակիցներ:

Հոդվածում վերլուծվում են արժեթղթերի շուկայի պետական կարգավորման որոշ հարցեր վերջին մի քանի տարիների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների լույսի ներքո: Արժեթղթերի շուկան, լինելով պետության արյունատար համակարգը, տարբեր ժամանակներում իր վրա է զգացել տարբեր պատմական, քաղաքական ի այլ գործոնների ազդեցությունը: Երկար ժամանակ պետական կարգավորման հստակ մեխանիզմների բացակայությունը, շուկայում նորանոր մասնակիցների ի հայտ գալը, կնքված ապօրինի գործարքների արդյունքում սպառողների իրավունքների և օրինական շահերի խախտումը արժեթղթերի շուկայի հստակ պետական կարգավորման անհրաժեշտություն առաջացրեց:

STATE REGULATION OF SECURITIES MARKET OF RA

Ani Stepanyan

Lecturer of Law Department at Eurasia International University,
PhD in Law

Keywords: state regulation, security market, state, mechanisms, securities, participants.

The article examines some of the issues of state regulation of the securities market in the light of changes in the past few years. Securities market, as the circulatory system of the State, at different times, felt the impact of various historical, political and other factors. For a long time the lack of clear mechanisms of state regulation, the entry of new participants, violation of rights and legal interests of consumers as a result of illegal transactions spawned the need to clearly state regulation of the securities market.

**«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

Նունե Զումարյան

*Եվրասիա միջազգային համալսարանի Միջազգային կապերի և
հետազոտությունների կենտրոնի ղեկավար, իրավաբանական ամբիոնի
վարիչի տեղակալ*

Բանալի բառեր՝ ընդհանրական կոմպետենցիա, մասնագիտական կոմպետենցիա, ուսումնառության արդյունքներ, մասնագիտության կրթական ծրագիր:

Արդիական նշանակությունը և ներդրման անհրաժեշտությունը: Մրընթաց զարգացող և հարափոփոխ ժամանակակից աշխարհը նոր մարտահրավերներ է նետում մարդկությանը, ինչը պայմանավորված է նորագույն տեխնոլոգիաների զարգացմամբ, տեղեկատվական ոլորտի և տիեզերքի ուսումնասիրությունների ընդլայնմամբ, սինթեզի միջոցով ջերմամիջուկային էներգիային տիրապետելու իրական հնարավորություններով, կենսաբանության բնագավառում իրականացվող գիտական հայտնագործություններով և այլ զարգացումներով: Այս պայմաններում էապես մեծանում է տեսական գիտելիքի և մարդկային գործունեության տարբեր բնագավառներում դրա կիրառման դերը: Տեղեկատվությունը և գիտելիքը դառնում են տնտեսության զարգացման հիմնական աղբյուրները: Պետությունների գոյատևման կարևոր պայման է դառնում նորարարական, մրցունակ տնտեսության ստեղծումը:

Ներկայումս Հայաստանը, ինչպես և աշխարհի պետությունների մեծամասնությունը ներգրավված է ժամանակակից ետինդուստրիալ հասարակության զարգացման, գիտության և գիտելիքի դերի ու նշանակության վերաիմաստավորման օբյեկտիվ գործընթացին, որն ուղղորդվում է ընդհանուր, այդ թվում՝ մասնագիտական կրթության մեթոդաբանության փոփոխմամբ:

Համաձայն մարդկային կապիտալի տեսության, մրցունակ տնտեսության կառուցման կարևորագույն գործոնը կրթությունն է, որտեղ հասարակական զարգացման կարևորագույն սկզբունք է դառնում ցկյանս ուսումնառելու սկզբունքը (life long learning): Դրա նպատակը՝ արագ փոփոխվող շուկայական պայմաններում մրցունակ, պատասխանատու, ճկուն, փոփոխություններին հարմարվող, արդյունավետ աշխատող, ստեղծագործ, ինքնազարգացման պահանջ և ընդունակություններ ունեցող մարդու, մասնագետի և քաղաքացու

ձևավորումն է¹: Մարդու, ով կկարողանա ազատորեն տիրապետել իր մասնագիտությանն ու կողմնորոշվել գործունեության հարակից ոլորտներում, նրան, ով պատրաստ է մշտական մասնագիտական աճի, սոցիալական և մասնագիտական շարժունության, հարմարվելու և աշխատելու բազմամշակութային աշխատանքային միջավայրում, ինչպես նաև բավարարելու համապատասխան ոլորտում կրթություն ստանալու սեփական պահանջները: Արդյունքում՝ ուսումնառողի մոտ ձևավորվում են կարողություններ, որոնք օգնում են նրան ոչ միայն տիրապետել նոր մասնագիտական գիտելիքներին, այլև ազատորեն հարմարվել ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններին, հանդես գալ որպես ձեռներեց և նոր աշխատատեղեր ստեղծող:

Հասարակական կյանքի տարբեր բնագավառներում իրականացվող վերափոխումները պահանջում են նաև նոր մոտեցումներ իրավունքի, իրավական պետության և քաղաքացիական հասարակության զարգացման, իրավական մշակույթի բարձրացման, հետևաբար նաև հասարակությունում իրավաբանի տեղի և դերի վերագնահատման վերաբերյալ: Իրավաբանի մասնագիտությունն ունի մեծ սոցիալական դեր: Իրավաբանները պաշտպանում են անձի շահերը, նրա իրավունքները, ազատությունը, սեփականությունը, հասարակության և պետության շահերը հանցավոր և այլ հակաիրավական ոտնձգություններից: Նրանք կոչված են պայքարել արդարության, մարդասիրության, օրինականության, իրավակարգի պահպանման համար: Իրավաբանը ժամանակակից աշխարհում մասնագետ է, ով ընդունակ է սոցիալական հակամարտությունները լուծել իրավունքի տեսանկյունից, այսինքն՝ արդարացի, բանականության հիման վրա: Իրավաբանները ոչ միայն մասնակցում են իրավունքի իրացման գործին, այլև իրենց ներդրումն ունեն օրենսդրության զարգացման, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման կատարելագործման, իրավակարգի ամրապնդման գործում: Իրավաբանները մշակում և համապատասխան մարմիններին են ներկայացնում առաջարկություններ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ, մասնակցում են իրավաստեղծ մարմինների աշխատանքներին, պատրաստում են օրենքների և այլ նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր, եզրակացություններ են տալիս նորմատիվ ակտերի նախագծերի վերաբերյալ: Իրավաբանական գիտելիքի, իրավաբանական փորձի արժեքը, ձեռնարկության գործունեության տարբեր գործընթացներում իրավական աջակցության անհրաժեշտությունը ազատական շուկայական հարաբերությունների, տարբեր վերազգային կազմակերպությունների հետ համագործակցելու պայմաններում գիտակցվում է նաև բիզնեսի

¹ Есенина Екатерина Юрьевна Развитие и формирование современной понятийно-терминологической системы профессионального образования России// Автореферат на соискание ученой степени доктора педагогических наук, М., 2013, стр.4.

կողմից: Ասպիտով՝ մեծանում է իրավաբանի պատասխանատվությունը ժամանակակից հասարակությունում և դրա հետ մեկտեղ բարձրանում է իրավաբան-մասնագետի մասնագիտական պատրաստման տեխնոլոգիաների կարևորությունը:

Սակայն՝ այս բարեփոխումները առանձին պետություններում ընթացող, տեղային բնույթ կրող միջոցառումներ չեն, քանզի դինամիկ զարգացող աշխարհում գիտական առաջընթացին զուգահեռ ընթանում են նաև համաշխարհայնացման (գլոբալիզացման) և ինտեգրացման գործընթացներ, որոնք նույնպես իրենց ազդեցությունն են թողնում կրթության ոլորտի վրա: Այդ զարգացումների ուղղակի արդյունքներից է Բոլոնիայի գործընթացը, որի հիմնական նպատակներից է բարձրագույն կրթության համադրելիությունը և ազգային համակարգերի ներդաշնակեցումը²: Միասնական Եվրոպան՝ ապահովելով ապրանքների, ծառայությունների, աշխատուժի և կապիտալի ազատ տեղաշարժը, առաջացնում է բարձրագույն կրթության բնագավառում որակավորումների համեմատման անհրաժեշտություն, առանց որի անհնարին է դառնում բարձրակարգ կադրերի շարժունությունը: Այս պայմաններում բարձրանում է տարբեր բուհերի կրթական ծրագրերի վերաբերյալ վստահելի և օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու պահանջարկը: Գործատուները՝ ինչպես Եվրոպայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս պահանջում են ճշգրիտ տեղեկատվություն շրջանավարտի կողմից ստացած որակավորումների վերաբերյալ³: Կրթության համակարգը դառնում է «բարձր մտավոր և ստեղծագործական ունակություններով օժտված, միջազգային մակարդակում մրցունակ գիտության և բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրերի պատրաստման պատասխանատուն և երաշխավորը»⁴:

Փոխվում է գիտելիք փոխանցողի՝ մասնագիտական ուսումնական հաստատության դերակատարությունը: ՄՈՒՀ-ն այլևս չի կարողանում սահմանափակվել ուսումնառողներին միայն տեսական գիտելիքներ փոխանցելով, նա պարտավորվում է վերջիններիս մոտ ձևավորել և զարգացնել այնպիսի գործնական կարողություններ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են անձին՝ աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան՝ որպես մրցունակ մասնագետ և աշխատող: Աշխատանքի անցնելիս շրջանավարտը պետք է կարողանա գործատուին ներկայացնել ոչ միայն այն, թե ինչ է սովոր-

² Եվրոպայի կրթության նախարարների համատեղ հռչակագիր /Բոլոնիա, 19-ը հունիսի 1999 թ./

³ Reference Points for the Design and Delivery of Degree Programmes in Law. Authors: Gorylev Alexander, N.I. Lobachevsky State University of Nizhni Novgorod (Russia), Dronova Yulia, Tver State University (Russia), Karapetyants Irina, Moscow State University of Railway Engineering, (Russia), Khurchak Nikolay, Astrakhan State University (Russia), Krayushkina Svetlana, Lev Tolstoy Tula State Pedagogical University (Russia). University of Deusto. Bilbao, 2013, p. 12.

⁴ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թ.թ. ծրագիր, էջ 29:

րել, այլև այն՝ թե ինչ է կարողանում անել: Դրա համար, մասնագիտական ուսումնական հաստատությունը պետք է վերանայի իր ավանդական նպատակները, գործառույթներն ու պարտականությունները⁵ և համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերը կառուցի այնպես, որպեսզի հասկանալի և չափելի լինեն այն արդյունքները, որոնց ուսումնառողը հասնելու է ուսումնառության գործընթացի ավարտին:

Հիմնարար հասկացությունների և եզրույթների պարզաբանումը (հասկացական ապարատ): Այսպիսով՝ մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման, ինչպես նաև գործող կրթական ծրագրերի կատարելագործման համար կարևոր նշանակություն ունի «ուսումնառության արդյունքներ» եզրույթը: Արևմտյան Եվրոպայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Հարավային Աֆրիկայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների պրատիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ուսումնառության արդյունքներ» եզրույթի վերաբերյալ իմաստային առումով սկզբունքային տարբերություններ չկան: «Ուսումնառության արդյունքներ» հասկացության ընդհանրական մոտեցումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ «ապացույցներ այն մասին, թե ինչ գիտի, ինչ է հասկանում և ինչ է ընդունակ անել ուսումնառուն ուսումնառության գործընթացն ավարտելիս»⁶: Սովորաբար դրանք սահմանվում են գիտելիքի, հմտությունների և կարողությունների տեսքով⁷:

Նմանապիսի մոտեցում է որդեգրել նաև Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտում կրեդիտային համակարգով ուսումնառության օրինակելի կարգի 3-րդ կետի 2-րդ հասկացությունը սահմանում է, որ «ուսումնառության արդյունքները նկարագրում են, թե ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել ուսանողն ուսումնառության գործընթացը կամ մեկ առանձին մոդուլը

⁵ Reflections on and outlook for Higher Education in Latin America. Final Report – Tuning Latin America Project 2004-2007. Edited by Pablo Beneitone, Cesar Esquetini, Julia Gonzalez, Maida Marty Maleta, Gabriela Siufi, Robert Wagenaar, 2007, University of Deusto, University of Groningen, p.30.

⁶ A Tuning Guide to Formulating Degree Programme Profiles Including Programme Competences and Programme Learning Outcomes. Editors: Jenneke Lokhoff and Bas Wegewijs (Nuffic), Katja Durkin (UK NARIC), Robert Wagenaar, Julia González, Ann Katherine Isaacs, Luigi F. Donà dalle Rose and Mary Gobbi (TUNING):, Bilbao, Groningen and The Hague, 2010, p. 55. Նաև՝ United Kingdom Bologna Seminar 1-2 July 2004, Heriot-Watt University (Edinburgh Conference Centre) Edinburgh, Scotland. Using learning outcomes. *A consideration of the nature, role, application and implications for European education of employing 'learning outcomes' at the local, national and international levels.* Stephen Adam, University of Westminster, June 2004, p. 5. Նաև՝ Skills, Not Just Diplomas. Managing Education for Results in Eastern Europe and Central Asia. Lars Sondergaard and Mamta Murthi with Dina Abu-Ghaida, Christian Bodewig, and Jan Rutkowski. The World Bank, Washington, D.C., 2012, p.49. Նաև <http://www.unideusto.org/tuningeu/tuning-methodology.html>, մուտք 03.12.2014:

⁷ Մորախովսկի Դ., ՄԱԶՕ ՄԿՈՒ ծրագիր: Առաջարկություններ և գործողությունների ծրագիր Հայաստանի մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում կրեդիտային համակարգի ներդրման վերաբերյալ: Սեպտեմբեր, 2010թ., էջ 5,

ավարտելիս, որոնք էլ սահմանվում են հետևյալ եզրույթներով՝ գիտելիք, հմտություններ և կարողություններ»:

Ուսումնառության արդյունքները ցույց են տալիս, թե ինչպիսի և ինչ մակարդակի կոմպետենցիաներ է զարգացրել ուսումնառողը ուսումնառության ընթացքում: Հետևաբար, կոմպետենցիաների ձևակերպումը մասնագիտության կրթական ծրագրում ունի սկզբունքային նշանակություն: Սակայն՝ մասնագիտական գրականությունում «կոմպետենցիաներ» և «ուսումնառության արդյունքներ» եզրույթների հարաբերակցության վերաբերյալ առկա է բանավեճ և որոշակի շփոթություն: «Կոմպետենցիաները» կիրառվում են ուսումնառության արդյունքների հետ մի քանի ձևերով, այստեղից էլ առաջանում են խնդիրներ: «Կոմպետենցիաները» կարող են ընդհանուր առմամբ վերաբերել ընդունակություններին, արհեստավարժությանը, կարողություններին, հմտություններին, հասկանալուն և այլն: «Կոմպետենտ» է համարվում այն անձը, ով ունի բավարար հմտություններ, գիտելիքներ և կարողություններ: Ոմանք էլ՝ «կոմպետենցիան» նեղ տեսանկյունից են դիտարկում և հավասարեցնում են այն հմտություններին, որոնք ձեռք են բերվում ուսուցման ընթացքում: Լայն իմաստով «կոմպետենցիան» նաև ենթադրում է գիտելիքի ստեղծումը և փոխանցումը, կապը հասարակության և կրթության միջև, կրթական համակարգի առաքելությունն ու արժեքային համակարգը, ուսուցիչների դասավանդման և գնահատման պրակտիկան, ուսանողների ակտիվությունն ու հանձնարարությունների կատարումը:

Համաշխարհային բանկը իր «Հմտություններ և ոչ միայն դիպլոմ» գրքում նշում է, որ կոմպետենցիան դա գիտելիքները, հմտությունները, անձնական, սոցիալական և մեթոդաբանական ունակությունները աշխատանքային կամ ուսումնական իրավիճակներում, ինչպես նաև մասնագիտական և անձնական զարգացման համար օգտագործելու ապացուցված կարողությունն է⁸:

Թյունինգ ծրագրի շրջանակներում կոմպետենցիաները և հմտությունները ընկալվում են որպես

- «գիտենալ» և «հասկանալ» (ակադեմիական բնագավառի տեսական գիտելիք, գիտենալու և հասկանալու կարողություն),
- «գիտենալ ինչպես գործել» (որոշակի իրավիճակներում գիտելիքի գործնական և օպերատիվ կիրառում),

⁸ Skills, Not Just Diplomas. Managing Education for Results in Eastern Europe and Central Asia. Lars Sondergaard and Mamta Murthi with Dina Abu-Ghaida, Christian Bodewig, and Jan Rutkowski. The World Bank, Washington, D.C., 2012, p.49.

- «գիտենալ, թե ինչպես պետք է լինի» (արժեքները՝ որպես ընկալման ուղի և այլ անձանց հետ ապրելու անբաժանելի տարր, նաև արժեքները՝ սոցիալական համատեքստում)⁹:

Այսպիսով՝ կոմպետենցիան իրենից ներկայացնում է գիտելիքի և իմացության, ճանաչողական և մետաճանաչողական, միջանձնային, մտավոր և գործնական հմտությունների, ինչպես նաև բարոյական արժեքների դինամիկ համակցություն, որը պետք է ստանա և զարգացնի ուսումնառողը համապատասխան կրթական մակարդակում (բակալավրի, մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի) կրթական ծրագրի իրականացման ընթացքում: Այլ կերպ ասած, դրանք այն անհրաժեշտ որակավորումներն են¹⁰, որոնք ձեռք են բերվում ուսումնառության ընթացքում և անհրաժեշտ են անձին աշխատաշուկայում համապատասխան մասնագիտական ոլորտում որպես մասնագետ հանդես գալու համար: Ընդ որում ձևավորվում են ոչ միայն մասնագիտական, այլև մասնագիտական գործունեության ընթացքում անհրաժեշտ ընդհանրական կոմպետենցիաներ: Որքանով են դրանք ձևավորվել ուսումնառողի մոտ հնարավոր է պարզել ուսումնառության արդյունքների միջոցով, որոնք, լինելով հստակ ձևակերպված, հասանելի և չափելի՝ հնարավորություն կտան գնահատել այն ամենը ինչ ձեռք է բերել ուսումնառողը ուսումնառության ավարտին: Հետևաբար, ուսումնառության արդյունքները ձևակերպելու և դրանց միջոցով շրջանավարտին գնահատելու համար անհրաժեշտ է նախ և առաջ բացահայտել և սահմանել համապատասխան կրթական ծրագրի կոմպետենցիաները:

⁹ United Kingdom Bologna Seminar 1-2 July 2004, Heriot-Watt University (Edinburgh Conference Centre) Edinburgh, Scotland. Using learning outcomes. A consideration of the nature, role, application and implications for European education of employing 'learning outcomes' at the local, national and international levels. Stephen Adam, University of Westminster, June 2004, p. 6.

¹⁰ Հայաստանի Հանրապետության զբաղմունքների դասակարգչի առաջին մասում որակավորումը սահմանվում է որպես գործունեության տվյալ տեսակի շրջանակում որոշակի ինդիքներ և պարտականություններ կատարելու աշխատողի ընդունակություն (կարողություն) (Տես՝ Հայաստանի Հանրապետության զբաղմունքների դասակարգիչ: Հավելված N 3 ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 141-Ն որոշման: Մաս 1. Նախաբան, էջ 3: <http://www.armstat.info/file/doc/99475708.pdf>, մուտք 07.11.2014): Ըստ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի որակավորում նշանակում է պատրաստականության մակարդակը, որն է գործի՝ աշխատանքի պիտանի լինելու աստիճանը (Տես՝ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան հատոր չորրորդ 3-Ֆ, Հայկական ՄՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1980, էջ 116): Օժեգովի բառարանում квалификация բառը նույնպես նշվում է որպես որն է տեսակի աշխատանքի պիտանի լինելու աստիճան, պատրաստվածության մակարդակ (Տես՝ Ожегов С. И. Шведова Н. Ю. Толковый словарь русского языка. – Изд. 4-е, доп. – М.: ИТИ Технологии, 2006): Նմանատիպ մեկնաբանում է պարունակվում նաև Оруфторդի բառարանում, որտեղ որակավորում (qualification) նշանակում է նաև հմտություն կամ փորձի տեսակ, որն անհրաժեշտ է կոնկրետ աշխատանքի կամ գործունեության համար (Տես՝ Oxford advances Genie – էլեկտրոնային բառարան):

Կոմպետենցիաների մշակման մեթոդները: Հաշվի առնելով կոմպետենցիաների կարևորությունը մասնագիտական կրթությունն ստանալու և իրավունքի ոլորտում որպես մասնագետ աշխատելու համար, վերջիններիս մշակումն ու ձևակերպումը անհրաժեշտ է իրականացնել խոր և բազմակողմանի ուսումնասիրությունների հիման վրա, ինչը հնարավորություն կտա հաշվի առնել հասարակությունում տեղի ունեցող զարգացումներն ու աշխատաշուկայի պահանջները: Առհասարակ կոմպետենցիաների մշակումն ընդգրկում է ինչպես ներպետական գործընթացների և միջազգային փորձի ուսումնասիրությունը, այնպես էլ խորհրդատվությունները փորձագետների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում՝ հարցումները¹¹: Հետևաբար, համապատասխան մասնագիտության ոլորտում ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների մշակման ընթացքում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը՝

1. Հայկական աշխատաշուկայի և ՀՀ-ում գործունեության համապատասխան բնագավառներում հաստատված մասնագիտական տիպօրինակների (ստանդարտների) վերլուծություն:
2. Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների վերլուծություն (Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը):
3. Բակալավրիատի և մագիստրատուրայի բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների վերլուծություն:
4. Գործունեության համապատասխան բնագավառում առկա միջազգային մասնագիտական չափանիշների վերլուծություն:
5. Եվրոպական կրթական տարածաշրջանում ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման փորձի ուսումնասիրություն և տեղայնացում:
6. Խորհրդատվություններ հայկական և միջազգային փորձագետների հետ:
7. Տարբեր առարկայական խմբերի կողմից առաջադրված ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների սկզբնական ցուցակների կազմում:
8. Գործատուների, ուսանողների, դասախոսների և շրջանավարտների շրջանում հարցումների իրականացում ըստ ձևավորված ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների:

Հարցման արդյունքների վերլուծության հիման վրա ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների վերջնական ցանկի կազմում, առավել կարևոր կոմպետենցիաների (միջուկի) առանձնացում¹²:

¹¹ Օրինակ՝ թյունինգի մեթոդաբանությունը:

¹² Գրականության մեջ դրանց անվանում են մետակոմպետենցիաներ:

Գործընթացների ներկա վիճակը և միջազգային փորձի ուսումնասիրությունը: 2005թ. մայիսի 19-ին ՀՀ կրթության և գիտության նախարարը ստորագրեց Բոլոնիայի անդամ երկրների կրթության նախարարների Բերգենի Կոմյունիկեն և Հայաստանը պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին: Գործընթացին համապատասխան ՀՀ կառավարության 2011 թ.-ի մարտի 3-ի N332-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը (Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումները և դրանց համապատասխան ընդհանրական բնութագրերը), իսկ վարչապետի կողմից տրվեց հանձնարարական մինչև 2013թ-ի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ընդհանրական բնութագրերին համապատասխան՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների, հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների բնութագրերը՝ մասնագիտությունների կրթական չափորոշիչները համապատասխանեցնելով դրանց: Մշակվեցին մի շարք մասնագիտությունների կրթական չափորոշիչներ: Մակայն՝ այդ չափորոշիչները սահմանվեցին առանց մասնագիտությունների և կրթական աստիճանների համապատասխան որակավորումների բնութագրերը մշակելու: Արդյունքում, օրինակ՝ 080200 «Կառավարում» և 080100 «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությունների բակալավրի կրթական չափորոշիչների մասնագիտության որակավորման և շրջանավարտի պատրաստման մակարդակին ներկայացվող պահանջները ամբողջությամբ նույնացվեցին, իսկ շրջանավարտին վերաբերող պահանջները ներկայացվեցին ըստ կրթամասերի (ա/հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում, բ/բնագիտության և մաթեմատիկայի բնագավառում, գ/մասնագիտական գործունեության բնագավառում): Այսինքն՝ պահանջները ձևակերպվեցին ոչ թե մասնագիտական առանձնահատկությունների և աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրությունների հիման վրա, այլ հարմարեցվեցին դասավանդվող առարկաներին:

Ինչ վերաբերում է «Իրավագիտություն» մասնագիտությանը, ապա Հայաստանի Հանրապետությունում «իրավագիտության բակալավր»-ի բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատվել է 2004թ. հուլիսի 12-ին, «իրավագիտության մագիստրոս»-ի պետական կրթական չափորոշիչը՝ 2005թ. նոյեմբերի 30-ին և մինչ օրս չեն վերանայվել: Այնուամենայնիվ, իրավաբանական կրթության որակը կարելի էր վերականգնել Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրում¹³, իսկ 2014թվականին ՀՀ նախա-

¹³ Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը

գահի հանձնարարականով Արդարադատության նախարարը ստեղծել է միջգերատեսչական հանձնաժողով՝ մշակելու իրավաբանական կրթության որակի չափորոշիչներ, որոնց պետք է համապատասխանեն նման կրթություն առաջարկող ուսումնական հաստատությունները: Այս քայլերը վկայում են, որ առկա է «իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի վերանայման, վերաիմաստավորման և ուսումնառության վերջնարդյունքների սահմանման անհրաժեշտություն, որի իրականացման առաջին ու ամենակարևոր քայլը ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների ձևավորումն է: Կոմպետենցիաների նախնական ցանկը կազմելու նպատակով իրականացվել են հետևյալ քայլերը.

1. Հայկական աշխատաշուկայի և իրավունքի բնագավառում հաստատված մասնագիտական տիպորինակների վերլուծություն և համադրում Հ Հ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) հետ:
2. Բակլավալրի և մագիստրատուրայի բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների վերլուծություն (2004թ. և 2005թ.):
3. Միջազգային մասնագիտական տիպորինակների վերլուծություն, ընդհանուր և մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման փորձի ուսումնասիրություն և տեղայնացում՝
 - Դուբլինյան նկարագրիչներ.
 - Թյունինգի ընդհանրական կոմպետենցիաներ.
 - Թյունինգի «Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի մշակման և իրականացման կողմնորոշիչներ.
 - Թյունինգ Լատինական Ամերիկա (մասնագիտական կոմպետենցիաներ՝ իրավագիտություն).
 - Թյունինգ Ռուսաստան և ՌԴ բարձրագույն կրթության «Իրավագիտություն» մասնագիտության պետական կրթական չափորոշիչ.
 - Մեծ Բրիտանիայի որակի ապահովման գործակալության չափանիշներ (Իրավունք).

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության պահանջներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկի «Իրավագիտություն» մասնագիտությունն ընդգրկված է 4-րդ «Գործարարություն, վարչարարություն և իրավունք» բաժնում, որտեղ նշվում են նաև Հաշվապահական հաշվառում և հարկում, Ֆինանսներ, Կառավարում, Շուկայագիտու-

հաստատելու մասին ՀՀ նախագահի կարգադրություն, ընդունվել է 2012 թվականի հունիսի 30-ին, էջ 6:

թյուն /մարքեթինգ/ և Ագրոբիզնես մասնագիտությունները¹⁴: Ըստ Ռուսաստանի Դաշնության մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների դասակարգչի իրավագիտությունը փիլիսոփայության, պատմության, մշակութաբանության և այլ մասնագիտությունների հետ մեկտեղ մտնում է երրորդ «Հումանիտար գիտություններ» խմբի մեջ¹⁵: Այսինքն՝ իրավունքը ընկալվում է որպես փիլիսոփայական կատեգորիա: Կրթության միջազգային ստանդարտների դասակարգումը (2011)¹⁶ իրավագիտությունը դասում է «Հասարակական գիտություններ, բիզնես և իրավունք» խմբին, որի մեջ են մտնում նաև տնտեսագիտությունը, քաղաքագիտությունը, սոցիոլոգիան, արխիվային գիտությունները, կառավարումը և այլն: Ինչպես տեսնում ենք իրավունքի ընկալումը մեր երկրում մոտեցվել է միջազգային տիպորինակին:

Իրավաբանական կրթությունը թույլ է տալիս աշխատել տարբեր ոլորտներում՝ պետական և մասնավոր հատվածներում: Բարձրագույն իրավաբանական կրթությունը որպես մասնագիտական գործունեություն իրականացնելու պարտադիր պայման նշված է մի շարք նորմատիվ-իրավական ակտերում, օրինակ՝ Դատական օրենսգրքում, Դատախազության մասին, Փաստաբանության մասին, Նոտարիատի մասին և այլ օրենքներում: Բացի այդ, տարբեր ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում աշխատում են իրավաբաններ, իրավախորհրդատուներ, որոնք համաձայն պաշտոնի անձնագրի կամ աշխատանքի նկարագրի պետք է ունենան մասնագիտական իրավաբանական կրթություն¹⁷:

Աշխատաշուկայի և մասնագիտական տիպորինակների վերլուծության նպատակով ուսումնասիրվել է ՀՀ Ջրադմունքների դասակարգիչը (ՀԴ 2009), որտեղ պարզաբանվում են զբաղմունքների խմբերը, դրանցում ներառված զբաղմունքների վերաբերյալ պարզաբանումները՝ մասնավորապես տվյալ զբաղմունքով զբաղված աշխատողների պարտականությունների և այդ աշխատողներին ներկայացվող կրթության նվազագույն պահանջների ընդհանրական

¹⁴ Ցանկ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների, ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման հավելված:

¹⁵ «ОК 009-2003. Общероссийский классификатор специальностей по образованию» (утв. Постановлением Госстандарта РФ от 30.09.2003 N 276-ст) (дата введения 01.01.2004) (ред. от 31.03.2010)

¹⁶ Международная стандартная классификация образования (2011 г.) // http://www.uis.unesco.org/Education/Documents/UNESCO_GC_36C-19_ISCED_RU.pdf, մուտք 01.12.2014:

¹⁷ Օրինակ՝ Համայնքային ծառայության պաշտոնի անձնագիր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական ապահովության բաժնի պետի// <http://www.gyumricity.am/Responsibilitis.htm>, մուտք 11.12.2014:

նկարագիրը¹⁸: Այս ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել առկա աշխատատեղերի վերաբերյալ, վերլուծել մասնագիտական կրթության բնագավառի ցուցանիշները և կանխատեսել հնարավոր զարգացումները:

Ըստ դասակարգչի հիմնական խումբ 1-ի, այն է՝ «Ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր, դատական և տեղական ինքնակառավարման մարմինների» մասնագիտական զբաղմունքների հիմնական պարտականություններից են օրենքներ և այլ իրավական ակտեր մշակելը, ընդունելը, հրապարակելը, փոփոխելը, լրացնելը, գործողությունը դադարեցնելը. իրավական ակտի կիրառմամբ պայմանավորված հարցերի վերաբերյալ խորհրդատվություն, պարզաբանումներ և մեկնաբանություններ տրամադրելը. դրանց կիրառման հսկողությունը և վերահսկողությունը:

Բացի այդ, հիմնական խումբ 2-ը, որը վերաբերվում է բարձր որակավորման մասնագետների, նշում է, որ իրավունքի բնագավառի մասնագետներն իրավաբանական գիտությունների ոլորտում կատարում են հետազոտություններ՝ նպաստելով իրավական համակարգի զարգացմանը, օրենսդրության և իրավունքի իրացման բարելավմանը. իրականացնում են օրինականության իրազեկման աշխատանքներ՝ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաձանաչ նորմերը ամրապնդելու ուղղությամբ. ներկայացնում են վստահորդի (ֆիզիկական կամ իրավաբանական անձանց) շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական միավորումներում և այլ կազմակերպություններում, դատարաններում, հետաքննության կամ նախաքննության մարմիններում, վարում են դատական գործընթացներ. աջակցում են հասարակության մեջ իրավունքի գերակայության գաղափարի հաստատմանը և իրավական գիտելիքների տարածմանը¹⁹:

Այս խմբի մասնագիտություններից են՝ փաստաբան, մեղադրող, իրավաբան, դատախազ, դատապաշտպան. իրավաբան՝ քաղաքացիական իրավունքի, անշարժ գույքին առնչվող գործարքների, դատական գործընթացի մասնակից, քրեական իրավունքի. դատական նիստի նախագահ, դատավոր, դատարանի անդամ, դատավոր՝ առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի, վճռաբեկ դատարանի, վարչական դատարանի, գործակալ իրավաբանական ուսումնասիրությունների, իրավաբանական ուսումնասիրու-

¹⁸ Հայաստանի Հանրապետության դասակարգիչ: ՀԳ – 2009: Հայաստանի Հանրապետության զբաղմունքների դասակարգիչ: Հավելված N 3 ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 141-Ն որոշման: Մաս 1. Նախաբան, էջ 2: <http://www.armstat.info/file/doc/99475708.pdf>, մուտք 07.11.2014:

¹⁹ Մոյն ուսումնասիրությունը չի անդրադառնում համապատասխան մարմինների և պաշտանատար անձանց օրենսդրությամբ սահմանված լիազորությունների վերլուծությանը:

թյունների համակարգող, իրավաբանական աշխատանքների գործակալ, իրավաբանական աշխատանքների համակարգող, նոտար քննիչ, ապահովագրական հայցերի հավատարմատար, օրինագծերի կազմման մասնագետ, իրավախորհրդատու՝ իրավաբան (բացի փաստաբաններից և դատավորներից) և փաստաբան²⁰: Վերջիններիս հիմնական պարտականությունների կատարման համար պահանջվում են մասնագիտական գիտելիքների բարձր մակարդակ և փորձ:

Նմանապիտ մոտեցում է դրսևորում Զբաղմունքների միջազգային դասակարգիչը²¹ և Ռուսաստանի Դաշնության զբաղմունքների դասակարգիչը²²:

Թյունինգի «Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի մշակման և իրականացման կողմնորոշիչները նշում են, որ ժամանակակից աշխատաշուկայում իրավաբանը կարող է կատարել ցանկացած աշխատանք: Նրանք լավ կառավարիչներ են, տարբեր կարգի գործակալներ, նոբելյան մրցանակակիրներ, սցենարիստներ, օգնականներ: Սակայն ավանդական, պետության կողմից իրավական ամրագրում ստացած զբաղմունքներն են՝ դատավոր, փաստաբան, հանրային պաշտպան, իրավախորհրդատու¹⁶²³:

Միացյալ Նահանգներում իրավաբանների կեսից ավելին ներգրավված է մասնավոր ոլորտի պրակտիկ աշխատանքներում՝ անհատականից մինչև խոշոր ընկերություններ: Մյուսներն աշխատում են հասարակական ոլորտում, կառավարությունում, դատարաններում, բիզնեսում և կրթական ոլորտում: Իրավագիտությունը նաև գիտական կարիերայի դաշտ է, որը պահանջում է մշտական մտավոր ներգրավվածություն և բարձր որակավորում²⁴:

Այսպիսով՝ պետությունների ներպետական օրենսդրության առանձնահատկություններից և իրավական համակարգերից անկախ իրավաբան-մասնագետներն ունեն աշխատանքի լայն հնարավորություններ տարբեր բնագավառներում և բոլոր երկրների համար էլ ընդունելի է, որ իրավաբան-մասնագետը գործունեություն է իրականացնում իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապաշտպան, փորձագիտական-խորհրդատվական, կազմակերպական-կառավարչական, գիտահետազոտական և մանկավարժական բնագավառներում: Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի իրավաբանին անհրաժեշտ կոմպետենցիաների մշակման համար, քանի որ նրա գիտելիքները, կարողու-

²⁰ Նույն տեղում՝ Մաս 4. Զբաղմունքների կառուցվածքային անվանումներն ըստ ստորին խմբերի, էջ 60-61: <http://www.armstat.info/file/doc/99475703.pdf>, մուտք 11.11.2014:

²¹ http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/---bl/documents/publication/wcms_172572.pdf, մուտք 23.11.2014:

²² <http://www.tatstat.ru/method/classifier/OKZ-TIZ.pdf>, մուտք 23.11.2014:

²³ Reference Points for the Design and Delivery of Degree Programmes in Law, p. 215.

http://www.unideusto.org/tuningeu/images/stories/Summary_of_outcomes_TN/Law_reference_points.pdf, մուտք մուտք 01.12.2014:

²⁴ <http://ocs.yale.edu/content/law>, մուտք 12.11.2014:

թյունները և հմտությունները պետք է պայմանավորված լինեն իր կողմից կատարվող աշխատանքների բնույթով:

ՀՀ աշխատաշուկայի ուսումնասիրությունների մյուս միջոցն էր վերջին տարվա ընթացքում տարբեր գործատուների կողմից տրված թափուր աշխատատեղերի հայտարարությունները՝ կապված իրավաբանի մասնագիտության հետ: Այսպես, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կազմակերպարավական վարչության ավագ մասնագետի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն իրավաբանական կրթություն, լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, գրական հայերենի պատշաճ իմացություն և առնվազն մեկ օտար լեզվի իմացություն²⁵:

«ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ն իրավաբանի թափուր աշխատատեղի համար սահմանել է ինչպես մասնագիտական պահանջներ (օրինակ՝ հայցադիմումների, վճարման կարգադրությունների, հայցադիմումների պատասխանների կազմում, դատարաններում Ընկերության շահերի ներկայացում, պայմանագրերի նախագծերի մշակում, վերանայում և այլն), այնպես էլ՝ MS Office, հայերեն լեզվի գերազանց, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն, արդյունավետ բանակցելու և հաղորդակցվելու, թիմում աշխատելու հմտություններ, վերլուծելու ունակություն, ստեղծագործական մտածելակերպ, մտքերը գրագետ ու հստակ արտահայտելու ունակություն²⁶:

Կումպետենցիաների պահանջը նշվում է նաև պաշտոնների անձնագրերում: Օրինակ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական ապահովության բաժնի պետի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրում նշվում են բարձրագույն մասնագիտական կրթությունը, լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացությունը, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակությունները, ռուսերեն (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի տիրապետումը²⁷:

ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը նշում է, որ «ապագա դատավորի ընտրության չափանիշների հարցում հատուկ նշանակություն ունեն ոչ միայն նրա նեղ

²⁵ http://www.court.am/?l=lo&id=10&item_id=3360, մուտք 01.12.2014:

²⁶ <http://www.insurance.am/insurance/job/2887-reso-iravaban.html>, մուտք 13.08.2014:

²⁷ Համայնքային ծառայության պաշտոնի անձնագիր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական ապահովության բաժնի պետի <http://www.gyumricity.am/Responsibilitis.htm>, մուտք 8.12.2014:

մասնագիտական-իրավաբանական պատրաստվածության բարձր մակարդակը, այլև որոշակի ոչ մասնագիտական որակների, այսպես կոչված «արժանիքների, բարոյահոգեբանական, անձնական հատկանիշների» կարևորությունը: Վերջիններս, բացի մասնագիտական իրավաբանական գիտելիքներից, ներառում են նաև բնավորությունը, դատողությունը, հաղորդակցման հմտությունները, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման հմտությունները, դատական ակտեր կայացնելու արդյունավետությունը և այլն»²⁸: Հիմնվելով ռազմավարական ծրագրի պահանջների վրա ՀՀ դատական օրենսգրքի 96.2 հոդվածը սահմանեց դատավորների գործունեության գնահատման որակական չափանիշները, որոնք ներառեցին՝

1. **դատական ակտերի պատճառաբանման կարողությունը** (դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող պահանջները պահպանելը, դատական ակտի հստակությունը, գրավոր խոսքի մատչելիությունը, վերլուծական հմտությունները, դատական ակտի եզրափակիչ մասի որոշակիությունը).
2. **մասնագիտական կարողությունները** (դատավարության մասնակիցների նկատմամբ անկողմնակալ վերաբերմունքը, ինքնատիրապետումը պահպանելու կարողությունը, դատական նիստը վարելու հմտությունները).
3. **կազմակերպչական հմտությունները** (արդարադատության արդյունավետությանն ուղղված նպատակներ սահմանելու և դրանց հասնելու համար մարդկային ու նյութական ռեսուրսները կազմակերպելու ունակությունը, գործընկեր դատավորների և դատական ծառայողների հետ հարաբերությունների պատշաճ մակարդակն ապահովելու ունակությունը):

Նույն օրենսգրքի 115.2 հոդվածն էլ սահմանում է, որ որակաորման գրավոր քննության համար նախատեսված թեստերն ուղղված են, բացի ակադեմիական գիտելիքներից, նաև հավակնորդի վերլուծական կարողությունների, բարդ տեքստերի համակարգված, արագ ըմբռնման կարողությունների ստուգմանը, իսկ հոգեբանական թեստերը՝ պատասխանատվության զգացման, ունկնդրելու կարողության, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների ստուգմանը:

Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այսօրվա աշխատաշուկան համապատասխան մասնագետներից պահանջում է, ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլև կարողություններ և հմտություններ, ինչպիսիք են օրինակ՝ գիտելիքները գործնականում կիրառելը, իրավական խնդիրների լու-

²⁸ ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին, ընդունվել է 2012 թվականի հունիսի 30-ին, էջ 6-7:

ծումը, համակարգային և քննադատական մտածողությունը, բարոյականությունը, պատասխանատվությունը, թիմային աշխատանքը, հաղորդակցումը, օտար լեզուների իմացությունը և այլն: Թվարկաված պահանջները համահունչ և համադրելի են նաև ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ընդհանրական բնութագրերի հետ²⁹:

Քննարկվող թեմայի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում առկա փաստաթղթերից են նաև 2004թ. հուլիսի 12-ի «Իրավագիտության բակալավր»-ի և 2005թ. նոյեմբերի 30-ի «Իրավագիտության մագիստրոս»-ի բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները: Բակալավրի կրթական չափորոշիչը 1.2 կետում շրջանավարտի որակավորման բնութագրի մեջ նշում է, թե ինչի պետք է ունակ լինի շրջանավարտը, այն է՝

- մեկնաբանել և կիրառել օրենքները, այլ նորմատիվ իրավական ակտերը.
- պահպանել պետական մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց գործունեության օրենսդրական ապահովվածությունը.
- իրավաբանորեն ճիշտ որակել փաստերը և հանգամանքները.
- մշակել իրավական փաստաթղթեր, իրականացնել նորմատիվ ակտերի փորձաքննություն, տալ որակյալ իրավաբանական եզրակացություններ և խորհրդատվություն.
- ընդունել օրենքին համապատասխանող իրավական որոշումներ և կատարել այլ իրավաբանական գործողություններ.
- բացահայտել և հավաստել իրավախախտումները, սահմանել մեղավորների պատասխանատվության և պատժի միջոցները, խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ.
- պարբերաբար բարձրացնել մասնագիտական որակավորումը, ուսումնասիրել օրենսդրությունը և կիրառման պրակտիկան, ինքնուրույն ուսումնասիրել մասնագիտական գրականությունը:
Նույն կետը նաև նշում է, որ իրավագիտության բակալավրը պետք է՝
- լինի քաղաքականապես հասուն, ցուցաբերի հասարակական ակտիվություն, օժտված լինի մասնագիտական էթիկայով, իրավական և հոգեբանական մշակույթով, խորին հարգանք տածի դեպի օրենքը և իրավական պետության սոցիալական արժեքները, հարգի քաղաքացիների պատիվն ու արժանապատվությունը.
- ունենա բարձր բարոյական գիտակցություն, մարդասիրություն, պարտքի և պատասխանատվության զգացում մարդկանց ճակատագրերի և հանձնա-

²⁹ Հարկ է նշել, որ ՀՀ ՈԱԾ-ը գտնվում է վերանայման փուլում և ուսումնասիրությունների ընթացքում դիտարկվել է նաև փոփոխությունների նախագիծը: Այստեղ առաջ եկող միակ հարցն այն է, թե տվյալ որակավորումը որ մակարդակում (բակալավր, մագիստրատուրա) և ինչ չափով է ձեռքբերվում:

րարված գործի նկատմամբ, սկզբունքայնություն և անկախություն անհատի իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի պահպանության, սոցիալական պաշտպանության գործում, անհրաժեշտ կամք և համատարություն ընդունված իրավական որոշումների կատարման գործում, անհանդուրժողականություն մասնագիտական գործունեության ընթացքում օրենքների խախտումների նկատմամբ.

- գիտակցի սեփական մասնագիտության էությունը և սոցիալական նշանակությունը, հստակ պատկերացնի իրավական երևույթների էությունը, բնույթը և փոխգործողությունը, տիրապետի սեփական մասնագիտական գործունեության ոլորտի դասընթացների հիմնախնդիրները և նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ իրավունքի իրացման նպատակով:

Այնուհետև՝ 7.1 կետը՝ անդրադառնալով բակալավրի մասնագիտական պատրաստվածության պահանջներին, նշում է, որ բակալավրը պետք է կարողանա լուծել կետ 1.2-ին համապատասխանող խնդիրները, ինչպես նաև իրականացնել մասնագիտական գործունեության համապատասխան ոլորտներում իրավական նորմերի իրացման համար նշանակություն ունեցող նորմատիվ և փաստական տեղեկատվության հավաքում, վերլուծել մասնագիտական գործունեության օբյեկտ հանդիսացող իրավաբանական նորմերը և իրավական հարաբերությունները, վերլուծել դատական և վարչական պրակտիկան, պաշտոնեական պարտականությունների շրջանակներում հիմնավորել և ընդունել որոշումներ, ինչպես նաև կատարել իրավական նորմերի իրացման հետ կապված գործողություններ, կազմել համապատասխան իրավաբանական փաստաթղթեր, ապահովել իրավունքի կիրառման ակտերի կենսագործումը, օժանդակել օրինականության և իրավակարգի ապահովմանը, մասնագիտական գործունեության ոլորտում իրականացնել իրավական քարոզչություն և դաստիարակություն:

Բակալավրը նաև պետք է՝

- լինի բարձր մշակույթի մարդ, յուրացրած համաշխարհային քաղաքակրթության հիմնական նվաճումները.
- տիրապետի հիմնարար իրավական գիտելիքների ողջ համալիրին, կողմնորոշվի ազգային և համաշխարհային նորմատիվ իրավական նյութերում.
- յուրացնի համեմատական իրավագիտության նյութերը.
- լինի իսկական վերլուծության մասնագիտական, համափիլիսոփայական, բարոյական, քաղաքական և հոգեբանական տեսանկյուններից.
- լինի բազմակողմանի պատրաստված, իմանա կյանքի օրենքները, մարդկային հարաբերությունները.

- տիրապետի ընդհանուր հումանիտար և հատուկ իրավական դասընթացների ողջ համակարգին՝ մասնագիտական որոշումներ ընդունելու համար:

Իրավագիտության մագիստրոսի պետական կրթական չափորոշիչը սահմանում է, որ մագիստրոսի մասնագիտական պատրաստվածության ընդհանուր պահանջները համապատասխանում են բակալավրի մասնագիտական պատրաստման ընդհանուր պահանջներին (Իրավագիտության բակալավրի պատրաստման բարձրագույն պետական կրթական չափորոշիչ, կետ 7.1.) և ավելացնում է գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեությանը վերաբերող պահանջներ:

Ինչպես տեսնում ենք բակալավրի իրավաբան-շրջանավարտին ներկայացվող պահանջները շարադրված են միևնույն փաստաթղթի տարբեր բաժիններում, հստակեցված չեն ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաները, ուսումնառության արդյունքները, բացակայում են այնպիսի կարևոր կոմպետենցիաների ձևավորման պահանջը ինչպիսիք են՝ թիմային աշխատանքը, հաղորդակցումը, համակարգչի, տեղեկատվական տեխնոլոգիաների, օտար լեզուների իմացությունը և այլն: Չեն տարանջատվում գիտելիքի և կարողությունների ձեռք բերման մակարդակներն ըստ կրթական աստիճանների՝ սահմանափակվելով միայն մագիստրոսի աստիճանում գիտահետազոտական և գիտամանկավարժական ունակությունների սահմանումով: Բակալավրին ներկայացվում են ավելի մեծ ծավալով պահանջներ, քան մագիստրոսին: Որոշ դրույթներ կրում են դեկլարատիվ բնույթ և հասկանալի չէ դրանց ձևավորման և առավել ևս գնահատման հնարավորությունները (օրինակ՝ «լինի բարձր մշակույթի մարդ՝ յուրացրած համաշխարհային քաղաքակրթության հիմնական նվաճումները», «իմանա կյանքի օրենքները»): Նման մոտեցումը դժվարեցնում է շրջանավարտին ներկայացվող պահանջների հստակեցումը և ուսումնառության արդյունքների սահմանումն ու գնահատումը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է վերանայել և հստակեցնել «Իրավագիտություն» մասնագիտության ուսումնառության ընթացքում ձևավորվող կոմպետենցիաները, որոնց մշակման և նախնական ցանկի կազմման հանար անհրաժեշտ է հաշվի առնել այլ երկրներում իրականացվող նմանատիպ գործընթացների փորձը:

Եվրոպական կրթական համակարգում ընդհանրական կոմպետենցիաները սահմանվել են Թյունինգ ծրագրի³⁰, ինչպես նաև Որակի միացյալ նախաձեռ-

³⁰ Ա.Ս.Բուդաղյան, Ս.Բ.Կարաբեկյան, Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույց - Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն. - Եր., «Թասկ» ՍՊԸ, 2010, էջ 18-19:

նության (Joint Quality Initiative) կողմից մշակված Դուբլինյան նկարագրիչների³¹ միջոցով:

Ընդհանրական կոմպետենցիաների կարևորությունն ընդգծված է նաև մասնագիտական կրթական ծրագրերում: Օրինակ՝ Թյունինգի «Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի մշակման և իրականացման կողմնորոշիչները եվրոպական երկրների համար առանձնացնում է 10 ընդհանրական կոմպետենցիաներ՝ պրոբլեմների լուծում՝ վերլուծելու և սինթեզելու կարողությամբ, գիտելիքները գործնականում կիրառելու, որոշման բարոյական հետևանքները հասկանալու, մասնագետների և ոչ մասնագետների հետ մայրենի լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցվելու, տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործելու, սովորելու, սովորածի ինքնագնահատման և այլոց կողմից արված քննադատությունը հաշվի առնելու, առաջադրանք ստանալու, թիմում ներդրում ունենալու և աշխատելու, միջազգային միջավայրում համագործակցելու, գիտական և մասնագիտական արդյունավետ հետազոտություններ անցկացնելու կարողություններ³²:

«Թյունինգ Ռուսաստան» ծրագիրը իրավաբանի համար կարևոր ընդհանրական կոմպետենցիաների մեջ նշում է մասնագիտության իմացությունն ու ընկալումը, հասարակության բազմազանության և բազմամշակույթայնության ընկալումն ու հարգումը, գրավոր և բանավոր հաղորդակցումը օտար լեզուներով, հիմնախնդիրները բացահայտելու, ձևակերպելու և լուծելու կարողությունը, վերացական մտածողությունը, վերլուծելու և սենթեզելու կարողությունը, տարբեր աղբյուրներից տեղեկատվություն հայթայթելու, վերամշակելու և վերլուծելու կարողությունը³³:

Մեծ Բրիտանիայի որակի ապահովման գործակալության չափանիշներում ևս կարևորվում են հիմնախնդիրները լուծելու, վերլուծելու և սինթեզելու, տարբեր աղբյուրներներից տեղեկատվություն ստանալու և կիրառելու, հաղորդակցվելու կարողությունները, ինքնուրույնությունը, գրագիտությունը³⁴:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցությունը առանձնացնում է հիմնախնդիրներ լուծելու, իրավական գնահատական տալու, իրավաբանական

³¹ Introducing The Bologna Qualifications Framework, p. 5.

http://www.nfqnetwork.ie/fileupload/Image/Bologna_web.pdf, մուտք 23.10.2014:

³² Reference Points for the Design and Delivery of Degree Programmes in Law, p. 216-217.

http://www.unideusto.org/tuningeu/images/stories/Summary_of_outcomes_TN/Law_reference_points.pdf, մուտք 23.11.2014:

³³ Ключевые ориентиры для разработки и реализации образовательных программ в предметной области «Юриспруденция». Под редакцией Дюкарев Иван Анатольевич, Университет Деусто (Испания), Караваева Евгения Владимировна, Ассоциация классических университетов, России (Россия), Ковтун Елена Николаевна, Московский государственный университет имени М.В. Ломоносова (Россия). Университет Деусто, Бильбао. 2013, стр. 45 (ՌԴ-ում տվյալ ուսումնասիրությունն իրականացվել է «Իրավագիտություն» մասնագիտության համար 2010-2011թթ. ընթացքում մագիստրատուրայի և բակալավրի մասնագիտության պետական կրթական չափորոշիչների ընդունումից հետո:):

³⁴ Law. The Quality Assurance Agency for Higher Education 2007. P. 14.

<http://www.qaa.ac.uk/en/Publications/Documents/Subject-benchmark-statement-law.pdf>, մուտք 23.12.2014:

գրականության, փաստաթղթերի և փաստերի վերլուծության, հաղորդակցման, խորհրդատվություն տրամադրելու, բանակցություններ վարելու կարողությունները, դատական վեճերի հետ կապված ընթացակարգերի, վեճերի լուծման այլընտրանքային միջոցների իմացությունը, իրավաբանական աշխատանքների կազմակերպումը և կառավարումը, բարոյական բնույթի խնդիրների բացահայտումը և լուծումը³⁵: Այս համակարգի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այստեղ նեղ մասնագիտացումը զուգորդվում է ուսումնառության գործընթացի գործնական ուժեղ ուղղվածությամբ՝ կոնկրետ գործերի վերլուծություն (նախադեպերի վերլուծություն), ուսումնական դատավարություններ (դատախաղեր), աշխատանք փաստաթղթերի հետ (կազմում և այլն): Ամերիկյան իրավաբանական կրթությունն ունի որոշակի գիտամասնագիտական և գործնական նշանակություն, քանի որ Հայաստանը (ինչպես և եվրոպական պետությունների մեծամասնությունը) պատկանում է ռոմանագերմանական իրավական համակարգին, որը հիմնվում է օրենքների (օրենսգրքերի) վրա: Այս համակարգում դատավորի դերը օրենսդրության մեկնաբանման մեջ է: ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ երկրներում գործում է ընդհանուր իրավունքի անգլոսաքսոնական համակարգը, որի հիմքում ընկած է դատական նախադեպը: Այստեղ դատավորը գործի քննության ժամանակ հիմնվում է նախկինում նմանատիպ գործերով կայացրած որոշումների փորձի վրա: Իրավաբանական կրթության անգլոսաքսոնական համակարգը ուսանողին տրամադրում է ընդհանուր գիտելիքներ իրավունքի վերաբերյալ՝ զարգացնելով տրամաբանորեն մտածելու կարողությունը: Ուսանողին պարտադիր չէ հասկանալ իրավաբանական բոլոր նրբությունները, առավել կարևոր է ունակ լինել վերլուծելու ցանկացած իրավիճակ և հասկանալ օրենքի կիրառումը կոնկրետ դեպքում³⁶: Եթե մեր կրթական համակարգում դասախոսություններն ու դասագրքերն իրենց բովանդակությամբ հիմնականում սահմանափակվում են օրենքների զուտ ֆորմալ նկարագրումով, գործող օրենսդրության ոչ քննադատական շարադրանքով կամ գործող դատական պրակտիկան ուղղակի փաստելով, ապա ամերիկյան համակարգում թե՛ ուսուցումը, թե՛ դասագրքերի կազմումը զուգորդվում է գործող օրենսդրության, դատական նախադեպերի շարադրմամբ և դրանց առանձին դրույթների քննադատական, ստեղծագործական վերլուծությամբ, դասախոսությունների նյութերը շարա-

³⁵ Legal Education and Professional Development: An Educational Continuum (“MacCrate Report”), published by the American Bar Association. 1992, p. 141-221. <http://www.americanbar.org/aba.html>. 12.11.2014:

³⁶ Ի տարբերություն անգլոսաքսոնական իրավական համակարգում գործող կրթական համակարգի, ֆրանսիական իրավաբանական կրթությունը երկար ժամանակ մեծ տեղ է հատկացրել տեսական իմացությանը չհաղորդակցվելով պրակտիկայի հետ. «Իրավաբանական կրթության նպատակն է ուսանողին պալ տեսության օդով շնչելու հնարավորություն չիջնելով պրակտիկայի մակարդակի»: Степ Осаке К. Сравнительное правоведение: схематический комментарий. М., Юрист, 2008, стр. 225.

դրվում են գուտ վերլուծությունների ձևով, ինչն էլ իր հերթին նպաստում է համապատասխան կոմպետենցիաների ձևավորմանը: Բացի այդ, իրավաբանը ԱՄՆ-ում պետք է կարողանա ոչ միայն դրսևորել օրենսդրության իմացություն և զբաղվել իրավակիրառ պրակտիկայով, այլև հասարակությունում առաջ տանել իրավաբանական գիտելիքները՝ իրավական մշակույթի և կրթության զարգացման, քաղաքացիների մոտ սահմանադրական ժողովրդավարության պայմաններում օրինականության և արդարության նկատմամբ վստահությունն ամրապնդելու նպատակով: Իրավաբանական կրթության շրջանակներում մշակվող կրթական ծրագրերը պետք է ընդգծեն այն կոմպետենցիաների կարևորությունը, որոնք ապահովում են իրավաբանի սոցիալական պատասխանատվության բարձր մակարդակը՝ ներառելով համագործակցությունը իրավական օգնություն տրամադրելու հարցում, որն անհրաժեշտ է ցանկացած տեսակի օրինական իրավունքների պաշտպանության համար³⁷: Հայաստանում շուկայի ազատականացման, իրավական պետության, քաղաքացիական հասարակության զարգացման պայմաններում իրավաբանների պատրաստման հարցում նմանատիպ մոտեցումն ունի մեծ ճանաչողական և գործնական նշանակություն:

Վերը նշված երկրների մասնագիտական կրթական ծրագրերում կարևոր տեղ են զբաղեցնում նաև մասնագիտական կոմպետենցիաները: Այսպես՝ եվրոպական երկրների շրջանակներում մշակված թյունինգի «Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի մշակման և իրականացման կողմնորոշիչները, Թյունինգ Լատինական Ամերիկան, Մեծ Բրիտանիայի որակի ապահովման գործակալության չափանիշները որպես առաջնային և կարևոր կոմպետենցիա են նշում մասնագիտական գիտելիքները, ընդ որում նրանք առանձնացնում են ինչպես բակալավրի հիմնարար մասնագիտական գիտելիքները, այնպես էլ մագիստրանտի՝ հիմնական ուսումնական ծրագրի շրջանակներից դուրս եկող իրավական սկզբունքների ու արժեքների լայն շրջանակի և համապատասխան մասնագիտացման ոլորտի խոր իմացությունը:

Բոլոր փաստաթղթերը առանձնացնում են նաև՝ իրավաբանական տերմինաբանության և տեխնիկայի տիրապետումը, մասնագիտական գործունեության ընթացքում նորմատիվ իրավական ակտեր կիրառելը, նյութական և ընթացակարգային իրավունքի նորմեր իրացնելը, իրավական փաստաթղթերն ինքնուրույն մշակելը, փաստերն ու հանգամանքները իրավաբանորեն ճիշտ որակելը, հիմնավորված իրավական որոշումներ ընդունելը և գործող

³⁷ Ключевые ориентиры для разработки и реализации образовательных программ в предметной области «Юриспруденция». Под редакцией: Дюкарев Иван Анатольевич, Университет Деусто (Испания), Караваева Евгения Владимировна, Ассоциация классических университетов, России (Россия), Ковтун Елена Николаевна, Московский государственный университет имени М.В. Ломоносова (Россия). Университет Деусто, Бильбао. 2013, стр. 21-22.

օրենսդրության պահանջներին համապատասխան իրավական գործողություններ կատարելը, ազգային օրենսդրությունը, ինչպես նաև վերազգային և միջազգային իրավական սկզբունքներն ու նորմերը վերլուծելն ու մեկնաբանելը, իրավաբանական գործունեության կոնկրետ բնագավառներում որակյալ իրավաբանական եզրակացություն կազմելը և խորհրդատվություն տրամադրելը, մասնագիտական գործունեության ընթացքում ժամանակակից գիտահետազոտական մեթոդները և մեթոդաբանությունը կիրառելը, միջառարկայական համագործակցություն իրականացնելը և այլ մասնագիտական բնագավառների ներկայացուցիչների հետ թիմում որպես փորձագետ աշխատելը:

Թյունինգի եվրոպական և Լատինական Ամերիկայի ծրագրերը կանոքում են նաև իրավունքի գերակայության ապահովումը, անձի իրավունքների ու ազատությունների հարգումը, իրավունքի փիլիսոփայական և տեսական հիմունքների ընկալումը և դրանք գործնականում կիրառելու կարողությունը, քաղաքական, սոցիալական, տնտեսական, պատմական, անհատական և հոգեբանական երևույթների ընկալումը և դրանց հաշվի առնելու կարևորությունը օրենքների ստեղծման, մեկնաբանման և կիրառման ժամանակ:

Բոլոր չափորոշիչներում կոմպետենցիաները առանձնացվում են ըստ կրթական աստիճանների (բակալավր, մագիստրատուրա, ասպիրանտուրա) և նշվում է, թե որ աստիճանում ինչ չափով դրանք տեպք է զարգացվեն: Այսպես՝ Թյունինգի եվրոպական նախագծում «քաղաքական, սոցիալական, տնտեսական, պատմական, անհատական և հոգեբանական երևույթների ընկալումը և դրանց հաշվի առնելու կարևորությունը օրենքների ստեղծման, մեկնաբանման և կիրառման ժամանակ» կոմպետենցիայի ձևավորումը բակալավրի աստիճանում դիտարկվում է որպես հիմնարար, մագիստրատուրայում՝ բարձր, ասպիրանտուրայում՝ խորացված մակարդակի ունակություն:

Այսպիսով՝ տարբեր երկրներում իրավաբանական կրթության համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրների մեծամասնության կրթական համակարգերում առկա են շատ ընդհանրություններ բովանդակային առումով: Եվրոպական և Ամերիկյան մայրցամաքներում «Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրերը հիմնվում են կոմպետենցիաների վրա, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբի՝ ընդհանրական և մասնագիտական, իսկ նրանց ձևավորման մակարդակը պայմանավորված է կրթական աստիճանով (բակալավր, մագիստրատուրա, ասպիրանտուրա): Բացի այդ, ներկայացված բոլոր ծրագրերը ձգտում են սերտացնել իրավաբանական կրթության ոլորտում տեսության և պրակտիկայի միջև կապը, ուժեղացնել կրթության գործնական ուղղվածությունը: Այս ծրագրերում առաջադրված և՛ ընդհանրական, և՛ մասնագիտական կոմպետենցիաները համադրելի են հայաստանյան աշխատաշուկայի կողմից շրջանավարտին ներկայացվող

պահանջներին, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս համադրելի դարձնել ուսումնառության ընթացքում ձևավորվող կոմպետենցիաները:

Այսպես՝ գործնականում աշխատելու համար շրջանավարտը պետք է ունենա որոշակի անձնակամ և մասնագիտական հմտություններ ու հատկանիշներ, իրավունքի գերակայության, արդարության, մարդասիրության, օրինականության, իրավակարգի պահպանման համար՝ համակարգված իրավական գիտելիքներ և դատողություններ, իսկ ժամանակակից թիմային միջավայրում աշխատելու համար՝ միջանձնային հաղորդակցման հմտություններ:

Ինժեներական կրթության բնագավառում մշակված CDIO միջազգային ծրագիրը նշում է, որ ուսումնառության գործնական ուղղվածությունը ուժեղացնելու, հիմնախնդիրների վրա հիմնված և նախագծային ուսուցում ներդնելու, սոցիալապես պատասխանատու և նորարարությունների պատրաստ մասնագետ պատրաստելու համար ինժեներական կրթական ծրագրի յուրացման հիմքում պետք է դրվի պլանավորում-նախագծում-իրականացում-գործադրում մոդելը³⁸: Մոդելը քննարկվում է կայուն զարգացման տեսանկյունից, որը բնութագրվում է որպես «զարգացում, որի դեպքում ներկա խնդիրները լուծվում են առանց վնասելու ապագա սերունդների շահերը»: Ամերիկյան իրավաբանների ընկերակցությունը այս կոնցեպցիան դիտարկեց տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի պատասխանատվության տեսանկյունից՝ պարզ դարձնելով, որ կայուն զարգացումը զուտ բնապահպանական խնդիր չէ³⁹: Առաջադրված մոդելի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ասել, որ բանաձևը ընդունելի և համադրելի կարող է լինել իրավաբանական կրթության համար: Իրավաբան-մասնագետի պատրաստման գործում այն կարելի է ներկայացնել իրավաստեղծ - իրավակիրառ - իրավապաշտպան - փորձագիտական-խորհրդատվական - կազմակերպական-կառավարչական գործունեության մոդելի տեսքով, որտեղ կոմպետենցիաների և ուսումնառության արդյունքների հստակեցման դեպքում կարելի է ապահովել կրթական ծրագրերի նորացում և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններ ունեցող շրջանավարտի պատրաստում:

Հետագա զարգացումները: Իրականացված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հստակեցնել Հայաստանում իրավաբան-մասնագետի պատրաստման համար անհրաժեշտ ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների նախնական ցանկը և ըստ դրա իրականացնել

³⁸ Edward F. Crawley, Johan Malmqvist, Sören Östlund, Doris R. Brodeur, Rethinking Engineering Education. The CDIO Approach. Springer. 2007, p. 8-9.

³⁹ http://www.americanbar.org/groups/environment_energy_resources/public_service/model_law.html, մուսոյ 22.11.2014:

հարցումներ շահակիցների՝ գործատուների, ուսանողների, դասախոսների և շրջանավարտների շրջանում: Այդ հարցումները կօգնեն՝

- հանրապետությունում նախաձեռնել ընդհանուր քննարկումներ կոմպետենցիաների վերաբերյալ, որոնք հիմնված կլինեն բոլոր շահագրգիռ կողմերի հետ իրականացված խորհրդատվությունների վրա.
- ստանալ անհրաժեշտ և իրական տեղեկատվություն առկա բազմատեսակ կոմպետենցիաների, սոցիալական պահանջմունքների, մասնագիտական գործունեության տեսակների, ինչպես նաև Հայաստանում կոմպետենցիաների համակարգի զարգացման միտումների վերլուծության համար.
- ծավալել քննարկումներ երեք տարբեր մակարդակներում՝ ինստիտուցիոնալ, առարկայական, ընդհանրական ոլորտներում և նախանշել յուրաքանչյուր մակարդակում իրականացվող քննարկումների առանձնահատկությունները.
- սահմանել մասնագիտական բնագավառի առավել կարևորներ կոմպետենցիաները, որոնք անհրաժեշտ է զարգացնել տվյալ բնագավառում, անկախ մասնագիտացումից.
- համեմատել ստացված տվյալները այլ երկրներում իրականացված հարցումների արդյունքների հետ՝ ընդհանուր, տարածաշրջանային և/կամ առարկայական առանձնահատկությունները բացահայտելու նպատակով.
- սահմանել ձևակերպված կոմպետենցիաների հիման վրա «Իրավագիտություն» մասնագիտության բնագավառում համապատասխան կրթական մակարդակի ուսումնառության արդյունքները:

Ստորև ներկայացվում է հարցումների համար նախապատրաստած ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների նախնական հարցա-
շարը, որում միջազգային փորձը համադրվել և տեղայնացվել է հայկական
աշխատաշուկայի պահանջներին⁴⁰:

h/h	Ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաներ	Բակլավը ⁴¹ 1, 2, 3, 4	Մագիստրատուրա 1, 2, 3, 4
1. Մասնագիտական գիտելիքներ			
1.1.	Իրավական հիմնարար սկզբունքների և արժեքների, իրավական համակարգի առանցքային տարրերի և հասկացությունների, ներառյալ եվրոպական և միջազգային չափանիշների (այդ թվում՝ ինստիտուտների և րնթացակարգերի) իմացություն		
1.2.	Մասնագիտացման համապատասխան ոլորտի կարգավորմանը վերաբերող արդիական, գործնական և տեսական գիտելիքներ, ոլորտում առկա տեսությունների, գիտաճյուղերի, ազգային, տարածաշրջանային և միջազգային-իրավական ակտերի և սկզբունքների խոր իմացություն		
1.3.	Այլ		
2. Մասնագիտական և անհատական հմտություններ և հատկանիշներ			
2.1. Իրավական հիմնավորում և խնդիրների լուծում			
2.1.1.	Իրավական խնդիրների (կոնֆլիկտների) բացահայտում և ձևակերպում		
2.1.2.	Վերլուծություն և սինթեզ		
2.1.3.	Փաստարկների կառուցում և գնահատում		
2.1.4.	Վերլուծություն անորոշության պայմաններում		
2.1.5.	Խնդրի (կոնֆլիկտի) լուծման տակտիկայի մշակում		
2.1.6.	Լուծումների առաջադրում		
2.1.7.	Այլ		
2.2. Փորձարկում, հետազոտություն և գիտելիքների ձեռքբերում			
2.2.1.	Հիպոթեզի առաջադրում		
2.2.2.	Տեղեկատվության որոմուն (էլեկտրոնային և տպագիր)		
2.2.3.	Ժամանակակից գիտական մեթոդաբանության հիմունքների և մեթոդների իմացություն		
2.2.4.	Փորձնական հետազոտություն		
2.2.5.	Հիպոթեզի ստուգում և պաշտպանություն		
2.2.6.	Այլ		
2.3. Համակարգային մտածողություն			
2.3.1.	Մասնագիտական խնդիրներ լուծելիս սոցիալական, հումանիտար և տնտեսական գիտությունների հիմնական դրույթների և մեթոդների օգտագործում		
2.3.2.	Առաջնահերթությունների տեղաբաշխում և հիմնական գործոնների առանձնացում		
2.3.3.	Փոխզիջումներ, գնահատականներ և զսպումներ հարցերի լուծման մեջ		
2.3.4.	Այլ		
2.4. Դիբորոշում, մտածողություն և ճանաչում			
2.4.1.	Նախաձեռնողականություն, անորոշության պայմաններում որոշում կայացնելու պատրաստակամություն		
2.4.2.	Հաստատակամություն և ճկունություն		
2.4.3.	Ստեղծագործական մտածողություն		
2.4.4.	Քննադատական մտածողություն		
2.4.5.	Ինքնագիտակցում, ինքնաճանաչում, գիտելիքի ինտեգրում		
2.4.6.	Ցկյանս ուսումնառություն		
2.4.7.	Պլանավորում, ժամանակի և ռեսուրսների կառավարում		
2.4.8.	Այլ		
2.5. Բարոյականություն, արդարություն և պատասխանատվություն			
2.5.1.	Բարոյական արժեքներ և սոցիալական պատասխանատվություն		
2.5.2.	Բարձր իրավագիտակցություն, իրավական մտածողություն, իրավական մշակույթ		

⁴⁰ Հարցաշարը քննարկվել է Եվրասիա միջազգային համալսարանի իրավաբանական ամբիոնի նիստում:

⁴¹ Պատասխանները թվարկվում են ըստ կարևորության 1-4 սանդղակով, որտեղ 1-ը՝ կարևոր չէ, 2-ը՝ որոշ չափով կարևոր է, 3-ը՝ կարևոր է, 4-ը՝ խիստ կարևոր է:

2.5.3.	Կայացրած որոշումների բարոյական հետևանքների գիտակցում		
2.5.4.	Իրավաբանի էթիկայի կանոնների պահպանում		
2.5.5.	Կարիերայի ակտիվ պլանավորում		
2.5.6.	Այլ		
3. Միջանձնային հարաբերություններ. Թիմային աշխատանք և հաղորդակցում			
3.1. Թիմային աշխատանք			
3.1.1.	Արդյունավետ թիմի ձևավորում		
3.1.2.	Թիմի կառավարում		
3.1.3.	Թիմային աճ և զարգացում		
3.1.4.	Առաջնորդություն		
3.1.5.	Համագործակցում միջառարկայական թիմում		
3.1.6.	Աշխատանք միջազգային միջավայրում		
3.1.7.	Այլ		
3.2. Հաղորդակցում			
3.2.1.	Հաղորդակցման ռազմավարություն (իրավիճակի վերլուծություն, հաղորդակցման ռազմավարության ընտրություն)		
3.2.2.	Հաղորդակցման կառուցվածք (տրամաբանված հիմնավորումներ, ապացույցներ, կապը գաղափարների միջև, հստակ և պարզ շարադրանք)		
3.2.3.	Տրամաբանված, փաստարկված, պարզ գրավոր և բանավոր խոսք		
3.2.4.	Իրավաբանական տերմինաբանությանը և իրավաբանական տեխնիկային տիրապետում		
3.2.5.	Մայրեմի լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցում փորձագետների և ոչ-փորձագետների հետ		
3.2.6.	Էլեկտրոնային/մուլտիմեդիա կապերի միջոցով հաղորդակցում		
3.2.7.	Տեղեկատվություն ստալու, պահպանելու, մշակելու հիմնական մեթոդների, ձևերի և միջոցների տիրապետում		
3.2.8.	Համակարգչային հմտություններ		
3.2.9.	Հարցում անել, լսել, երկխոսություն վարել		
3.2.10.	Բանակցություններ վարել, փոխզիջումների հասնել, կոֆլիկտների լուծում		
3.2.11.	Դիրքորոշման պաշտպանում		
3.2.12.	Տրաբեր կապերի և համագործակցության հաստատում		
3.2.13.	Այլ		
3.3. Հաղորդակցում օտար լեզուներով			
3.3.1.	Մասնագիտական գործունեության տարածաշրջանների լեզուների իմացություն և հաղորդակցում		
3.3.2.	Այլ օտար լեզուների իրացություն և հաղորդակցում		
3.3.3.	Այլ		
4. Պլանավորում, նախագծում, իրականացում և գործադրում հասարակության, շրջակա միջավայրի, տնտեսության համատեքստում			
4.1. Սոցիալական և միջավայրային համատեքստ			
4.1.1.	Իրավաբանի դերն ու պատասխանատվությունը		
4.1.2.	Իրավունքի գերակայության ապահովում, անձի պատվի ու արժանապատվության հարգում, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանություն		
4.1.3.	Իրավաբանական առարկաների դասավանդում		
4.1.4.	Ուսումնառողների ինքնուրույն աշխատանքի ղեկավարում		
4.1.5.	Այլ		
4.2. Նախաձեռնողականություն և գործարարություն			
4.2.1.	Պարբեր ձեռնարկատիրական մշակույթների ընկալում		
4.2.2.	Ձեռնարկության առաքելության, նպատակների, խնդիրների, ռազմավարության ընկալում		
4.2.3.	Ձեռնարկության գործունեության ուրվագծի վերլուծություն, առաջարկությունների և դիրքորոշումների մշակում		
4.2.4.	Ձեռնարկության ներքին փաստաշրջանառության վերլուծություն		
4.2.5.	Այլ		
4.3. Իրավաստեղծ գործունեություն			
4.3.1.	Մասնագիտական գործունեության ոլորտին համապատասխան նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակում		
4.3.2.	Մասնագիտական գործունեության ոլորտին համապատասխան նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն		
4.3.3.	Իրավական փաստաթղթերի մշակում		
4.3.4.	Այլ		

4.4. Իրավակիրառ գործունեություն			
4.4.1.	Մասնագիտական գործունեության ընթացքում նորմատիվ իրավական ակտերի կիրառում, նյութական և ընթացակարգային իրավունքի նորմերը իրացում		
4.4.2.	Փաստերի ու հանգամանքների իրավաբանորեն ճիշտ որակում		
4.4.3.	Հիմնավորված իրավական որոշումների ընդունում և գործող օրենսդրության պահանջներին համապատասխան իրավական գործողությունների կատարում		
4.4.4.	Մասնագիտական գործունեության արդյունքները իրավական և այլ փաստաթղթերում ճիշտ և ամբողջությամբ արտահայտում		
4.4.5.	Օրենսդրության և նախադեպերի կիրառում		
4.4.6.	Իրավախորհրդատվությունների միջոցով իրավաբանական օգնության տրամադրում		
4.4.7.	Այլ		
4.5. Իրավապաշտպան գործունեություն			
4.5.1.	Օրինականության և իրավակարգի, անձի, հասարակության, պետության անվտանգության ապահովմանն ուղղված պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարում		
4.5.2.	Հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելում, դրանց իրականացմանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտում, վերացում և դրանց որակում		
4.5.3.	Այլ		
4.6. Փորձագիտական-խորհրդատվական գործունեություն			
4.6.1.	Ազգային օրենսդրության, ինչպես նաև վերագային և միջազգային իրավական սկզբունքների ու նորմերի վերլուծություն և մեկնաբանում		
4.6.2.	Իրավաբանական գործունեության կոնկրետ բնագավառներում որակյալ իրավաբանական եզրակացության կազմում		
4.6.3.	Ֆիզիկական և իրավաբանական անձանց օրինական իրավունքները պաշտպանելու նպատակով իրավաբանական խորհրդատվության և ծառայությունների տրամադրում		
4.6.4.	Դատական և վարչական պրակտիկայի վերլուծություն		
4.6.5.	Վեճերի լուծման այլընտրանքային միջոցների իմացությունը		
4.6.6.	Այլ		
4.7. Կազմակերպական-կառավարչական գործունեություն/առաջնորդություն			
4.7.1.	Սեփական գործի, աշխատատեղի նախաձեռնում, ստեղծում և ղեկավարում		
4.7.2.	Իրավաբանական աշխատանքների կազմակերպումը և կառավարումը		
4.7.3.	Նախագծերի պլանավորում և կառավարում		
4.7.4.	Այլ		

**КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОЛОЖЕНИЯ ФОРМИРОВАНИЯ КОМПЕТЕНЦИЙ
ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ПРОГРАММЫ В ПРЕДМЕТНОЙ ОБЛАСТИ
«ЮРИСПРУДЕНЦИЯ»**

Нуне Джомардян

*Руководитель Центра международных связей и исследований
международного университета Евразия, заместитель заведующего юридической
кафедры*

Ключевые слова: Общие компетенции, предметные компетенции, результаты обучения, образовательная программа предметной области.

Данная статья обосновывает принципиальное значение и методологию разработки общих и предметных компетенций. На основе изучения существующих внутригосударственных процессов и сравнительного исследования международного опыта предлагается первичный список общих и предметных компетенций, с помощью которого можно будет провести анкетирование среди заинтересованных групп.

**CONCEPTUAL PROVISIONS ON LAW DEGREE PROGRAM DEVELOPMENT
COMPETENCES**

Nune Jomardyan

*Head of International Relations and Research Center,
Deputy Head of Law Department at Eurasia International University*

Keywords: generic competences, specific competences, learning outcomes, degree program

The fundamental meaning and development methodology of generic and professional competences in the subject curriculum are explained in this article. Considering the state of various processes in the country and dwelling upon the comparative analysis of international experience, a provisional list of generic and professional competences in law is proposed and promoted for subsequent surveys among those in the stakeholder domain.

**ԱՆՉԱՓԱՀԱՍ ԻՐԱՎԱԽԱԽՏՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արուսյակ Խաչատրյան

Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս

Բանալի բառեր՝ հանցագործություն, անչափահաս, դեռահաս, վարք, հոգեբանական օտարում, սոցիալական խումբ

Մանկությունից չափահասություն կատարվող անցումային տարիքը անվանում են դեռահասության կամ անչափահաս տարիք: Դեռահասությունը ընդգրկում է 11-12-ից մինչ 14-15 տարեկանը: Այս տարիքը ընդունված է անվանել ճգնաժամային, դժվար տարիք, քանի որ չափահասությունից անցումը կարարվում է դժվարություններով, կոնֆլիկտներով ու հակասություններով: Դեռահասությունը լինելով անցումային տարիք, իր մեջ պարունակում է ինչպես մանկության տարիքին բնորոշ, այնպես էլ չափահասությանը բնորոշ հոգեբանական առանձնահատկություններ: Հանցագործության բավականին մեծ տոկոս են կազմում անչափահասների կողմից կատարվող հանցագործությունները: Բնավ այս հանգամանքը նորույթ չէ մեր հասարակության մեջ: Սակայն հասարակությանը այսօր կա հետաքրքրող մեկ այլ հանգամանք. Հասարակությունը ցանկանում է կանխել հանցագործությունները և այս հանգամանքը հաշվի առնելով, անհրաժեշտ է առավել լավ ուսումնասիրել անչափահասների հոգեբանությունը և ժամանակին ճիշտ դաստիարակել երեխաներին: Անաչահասները հաճախ հանցագործություն են կատարում ուղղակիորեն՝ ցանկանալով ընդգծել իրենց քաջությունը, ճարպկությունը, բարձրացնել հեղինակությունը, ինչ-որ մի սոցիալական խմբում: Երբեմն անչափահասները ցանկանում են ուղղակի բավարարել իրենց բացասական պահանջմունքները /հետաքրքրասիրությունից դրդված փորձել թմրանյութ, ծխախոտ, օգտագործել զենք, զբաղվել սեքսով, որն հանգեցնում է նրանց կողմից կատարվող բռնաբարություններին/: Բացի դրանից անչափահասի պահանջների մեջ մտնում է նաև ազատության, ինքնուրույնության և ինքնահաստատման ցանկությունը¹:

Ավելի հաճախ հանցագործություն կատարում են դժվար դեռահասները և նաև մանկավարժորեն բաց թողնված անչափահասները: Այս տիպին բնորոշ անչափահասների մոտ թույլ է զարգացած իմացական հետաքրքրությունները, ինտելեկտուալ ոլորտը, հասարակական հետաքրքրությունները, նրանց մտքերը շատ հաճախ դեֆորմացված են:

Անչափահասների վրա մեծ ազդեցություն են թողնում և հասակակիցները և տարիքով մեծ մարդիկ, որոնք ունեն ասոցիալ վարք: Այսպիսի անչափա-

¹ Ս. Արզումանյան, Է. Գրին <<Իրավաբանական հոգեբանություն>>, Երրևան, 2004, էջ 195-200:

հասաների անձի կառուցվածքի մեջ գերակշռում են բացասական մի շարք հատկանիշներ՝ նրանք ծուլ են, ներշնչվող, պատասխանատվության զգացում չունեն, հակում են կուրորեն ընդօրինակելու, ագրեսիվ են, կռվարար...: Դժվար անչափահասները հաճախ մեծանում են անբարենպաստ ընտանիքներում, երբ երկու ծնողներն էլ առկա են, սակայն առկա է ծնող-երեխա հոգեբանական օտարուր: Ծնող-երեխա կապը տարբեր պատճառներով կարող է խզվել՝ հանգեցնելով ծնողից երեխայի հոգեբանական օտարացմանը: Հետազոտությունները ցույց են տվել, որ օտարված երեխայի մեջ սկսում են ձևավորվել բնավորության մի շարք բացասական գծեր՝ կամակորություն, եսամոլություն, երկերեսանիություն, դաժանություն... հանցածին վարքի դիքորոշումներ: Օտարացման պատճառ կարող են դառնալ երեխայի նկատմամբ սիրո, հոգատարության, խնամքի պակասը²:

Հոգեբանական օտարումը զարգանում է մի քանի փուլերով՝ առաջին շրջանը դա գաղտնի շրջանն է, երբ գիտակցական ոլորտում օտարացումը բացակայում է, երկրորդ շրջանում ծնողի նկատմամբ ձևավորվում է բացասական հուզական վերաբերմունք, երրորդ փուլում սկսվում են ծնողի և երեխայի միջև բացահայտ կոնֆլիկտներ և վեջում երեխան ցզում է մերժված, չհասկացված, ինքնամիտփի և վարքը դառնում է հաճախ հակաիրավական:

Վերջին շրջանում անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների ութսուն տոկոսը³ կազմում են գողությունները որոնք նրանց կողմից գուտ պահանջմունքների բավարարման ձև է. քաղցրավենիք, ալկոհոլ, սպորտային պարագաներ, հեռախոսներ; Վերջին շրջանում մեծ տոկոս է կազմում մեքենաների գողությունը:

Բռնաբարությունները կազմում են վեցից – ութ տոկոս են կազմում: Նրանց կողմից կատարվող գողությունները շատ հաճախ կատարվում են բնակության վայրի, դպրոցի, աշխատավայրի մոտ և հիմնականում ժամը քսաներկուսից հետո:

Անչափահասների կողմից կատարվող խուլիգանությունները հիմնականում կատարվում են ոչ սթափ և կրում են խմբակային բնույթ, որն էլ կատարվում է երկու կամ երեք հոգու կողմից: Հոգեբանների և իրավաբանների կողմից առավել պետք է ուշադրություն դարձվի փոքրիկ իրավախախտումների վրա, որոնք շատ չեն բացահայտվում կամ էլ առանձնահատուկ ուշադրության չեն արժանանում: Դա կարող է դրսևորվել անչափահասի կողմից տանից իրեր գողանալով, ալկոհոլի օգտագործումով, աղջիկների կողմից Արտասահմանյան քրեաբանության մեջ իրավախախտ դեռահասների վարքը անվանում են դելինկվենտվարք/լատ. delinquens-սխալ արարք կատարող: Դելինկվենտ վարքը

² <<Հոգին>> հոգեբանական տարեգիրք-Երևան 1994թ., էջ 64-65:

³ www.lawzakon.ru/podroskovie-pravonarusheniya.html

ոչ էական իրավախախտումների, սխալ արարքների համակարգ է և դնիանտ կամ շեղվող վարքի տարատեսակ:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ այն անձինք, որոնք անչափահասության շրջանում կատարում են հանցագործություններ, միայն 10 տոկոսն է, որ հետագայում դառնում են օրինապահ, պրոֆեսիոնալ հանցագործների 53%-ը իրենց առաջին հանցագործությունները կատարել են 14-16 տարեկան հասակում, 39%-ը-17-18տարեկանում:

Ամերիկյան վերջին ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ առավել մեծ տոկոս են կազմում սևամորթների կողմից կատարվող հանցագործությունները, որոնք հիմնականում հանդիսանում են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ և այս հանգամանքը պետք է անհանգստացնի թե հասարակությանը, և թե օրենսդիրին⁴:

Ոստիկանության ներքո գոյություն ունի անչափահասների գործերով ծառայություն, որն էլ իր պարտականությունները հիմնականում իրականացնում է՝ <գրանցելով ռիսկային երեխաներին>:

Գրանցված երեխաների անունները պահվում են ոստիկանության ցուցակներում առնվազն մեկ տարի, բայց ոչ ավելի, քան նրանց չափահասության տարիքին հասնելը:

Կրթության նախարարության ենթակայության տակ կան երկու հատուկ դպրոցներ՝ հանրապետական թիվ 1 հատուկ համալիրը Վարդաշենում, և Երևանի թիվ 18 հատուկ դպրոցը Նուբարաշենում, որտեղ սովորում են անչափահաս իրավախախտներ և ռիսկային երեխաներ, մեկ ուղղիչ հիմնարկ դատապարտված անչափահասների համար և դատարանի դատավճռին սպասող մեկ կենտրոն, որը գտնվում է արդարադատության նախարարության ենթակայության տակ⁵:

Հայաստանում իրականացված մոնիտորինգի տվյալներով անչափահաս ամբաստանյալների, վկաների և տուժողների հարցաքննությունների ժամանակ բացակայում են հոգեբան մասնագետները կամ մանկավարժները: Ելնելով անչափահասի մի շարք հոգեբանական առանձնահատկություններից, անհրաժեշտ է մասնագիտացնել անչափահասների գործերը քննող դատավորներին, դատախազներին, քննիչներին, ոստիկանության աշխատակիցներին և փաստաբաններին: Անհրաժեշտ է նրանց զինել տարիքային հոգեբանությանը առնչվող գիտելիքներով, հնարավորինս տեսանելի դարձնել անչափահասի նկատմամբ վերաբերմունքը, որը պետք է հստակ տարանջատվի չափահաս ամբաստանյալների նկատմամբ վերաբերմունքից: Ցանկալի է լինել ավելի

⁴ www.cyberleninka.ru

⁵ Անչափահասների գործերով դատավարությունների դիտարկում (ԵԱՀԿ), Երևան, 2011, էջ 15-16:

նրբանկատ, հուսանիստ, միևնույն ժամանակ՝ կիրառելով օրենսդրության սահմանները:

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ ПРАВОНАРУШИТЕЛЕЙ.

Арусяк Хачатрян

*Преподаватель юридической кафедры Международного университета
Евразия*

Ключевые слова: преступление, несовершеннолетний, подросток, поведение, психологическая отчуждение, социальная группа.

Подросток охватывает 11-12 до 14-15 лет. Этот возраст называют критическим. Трудный возраст из-за трудностей при переходе к взрослой жизни, конфликты и противоречия. Преступление совершенным среди несовершеннолетних, довольно большой процент преступности. Это не является новой для нашего общества. Но сегодня есть общественный интерес, который является еще одним фактором. Общество хочет, чтобы предотвратить преступления в этом обстоятельстве, необходимо изучить психологию несовершеннолетних. Несовершеннолетние часто совершают преступления непосредственно, желая подчеркнуть свою храбрость, ловкость, повысить престиж какой-либо социальной группы.

Psychological Features Characteristic of Juvenile Offenders.

Arusyak Khachatryan

Lecturer of Law Department at Eurasia International University

Keywords: crime, minor, teenager, behavior, psychological alienation, social group.

Teen covers 11-12 till 14-15 years of age. This age is called critical, difficult years since the transition to adulthood execution the difficulties, conflicts and contradictions. Crime is a fairly large percentage of juvenile delinquency. Not in this case is not new to our society. But today there is a public interest is another factor. The public wants to prevent crimes in this circumstance, it is necessary to study the psychology of minors. Minors often commit a crime directly, wanting to emphasize their courage, agility, increase the prestige of some social group.

ԲԱԺԻՆ 3.

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԼԵԶՎԻ ՍՈՑԻԱԼ-ՇԵՐՏԱՅԻՆ ԵՎ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Կարեն Վեյյան

*Եվրասիա միջազգային համալսարանի օտար լեզուների և
գրականության ամբիոնի վարիչ, քանասիրական
գիտությունների թեկնածու, դոցենտ*

Բանալի բառեր՝ սոցիալական խավեր, հաղորդակցական իրավիճակ, սոցիոլեզվական փոփոխակներ, տարբերակ, սոցիալ-շերտային տարբերակայնություն, իրադրային տարբերակայնություն, սոցիալ-շերտային-իրադրային փոփոխակ

Ինչպես հայտնի է, ցանկացած լեզու համասեռ չէ իր գործառական դրսևորումներում, և լեզվական միավորները հաճախ տարբեր ձևեր են ստանձնում թե՛ տարբեր սոցիալական խավերի ներկայացուցիչների խոսքում, թե՛ տարբեր հաղորդակցական իրավիճակներում: Որպես կանոն՝ սոցիոլեզվաբանական ուսումնասիրությունների խնդրո առարկա է լեզվական միավորների տարատեսակների գործառական բաշխումը տարբեր սոցիալական խավերի ներկայացուցիչների խոսքում, այլ կերպ ասած՝ “...թե ինչպես են լեզվի տարատեսակները և գործածվող կաղապարները հարաբերակցվում այդպիսի սոցիալական կատեգորիաների հետ, ինչպիսիք են խավը, սեռը և տարիքը”¹:

Այն լեզվական միավորները, որոնք ունեն գործառական տարատեսակներ, համարվում են **սոցիոլեզվական փոփոխակներ** (sociolinguistic variable, социолингвистическая переменная), որոնք մեկնակետ են և “...հիմնական գործիքսոցիոլեզվաբանական ուսումնասիրություններում”²: Յուրաքանչյուր սոցիոլեզվական փոփոխակ բանավոր խոսքում իրացվում է տարբերակներով (variant), որոնք “բաշխվում” են հասարակության մեջ՝ կախված նրանից, թե “ով լեզվի որ տարատեսակն է գործածում, ում հետ և երբ է խոսում և ինչ նպատակով”³: Լեզվի այս սոցիալական տարբերակայնությունը իրացվում է երկու հիմնական հարթություններում՝ *սոցիալ-շերտային* և *իրադրային*:

Ցանկացած **հասարակության շերտային տարբերակայնությունը**, ինչպես հայտնի է, սերտորեն կապված է տվյալ հասարակության սոցիալական կառուցվածքի հետ՝ տարբեր մասնագիտական, տարիքային խմբերի և հատկա-

¹ Coulmas F. The Handbook of Sociolinguistics, Blackwell Publishing, 1997

² Coulmas F. The Handbook of Sociolinguistics, Blackwell Publishing, 1997

³ Fishman J. Language in social change. Stanford University Press, 1972.

պես խավերի հետ: *Լեզվի* սոցիալ-շերտային տարբերակայնություն ասելով՝ պետք է հասկանալ լեզվի սոցիալական տարբերակումը, այն է՝ տարբեր սոցիալական խավերի և խմբերի խոսքի առանձնահատկությունները: Այսպես, օրինակ՝ ենթադրվում է, որ լեզվի տարբեր հարթություններում՝ հնչյունաբանության, բառապաշարի, շարահյուսության, բարձր խավի ներկայացուցիչները ավելի հաճախ են գործածում գրական ձևեր, քան ցածր խավի ներկայացուցիչները:

Եթե լեզվի սոցիալ-շերտային տարբերակայնությունը իր արտահայտումն է գտնում տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների խոսքում, ապա լեզվի **իրադրային** տարբերակայնությունը երևան է գալիս տարբեր հաղորդակցական իրավիճակներում: Այսպես, օրինակ՝ հաղորդակցական իրավիճակը կարող է լինել պաշտոնական հանդիսավոր իրադարձություն, կիսապաշտոնական կամ սովորական առօրյա հաղորդակցություն: Ներկայացնենք շարադրածը գծապատկերի տեսքով.

Սոցիալ-շերտային տարբերակայնություն	Իրադրային տարբերակայնություն
Բարձր սոցիալական շերտ (խավ)	Պաշտոնական հանդիսավոր իրավիճակ
Միջին սոցիալական շերտ (խավ)	Կիսապաշտոնական իրավիճակ
Ցածր սոցիալական շերտ (խավ)	Ոչ պաշտոնական առօրյա իրավիճակ


Նշենք, որ պարբերաբար կրկնվող իրադրություններում ձևավորվում են “...նույնատիպ բառապաշար, առոգանության և շարահյուսական առանձնահատկություններ, որոնք գործածվում են նման իրավիճակներում”⁴: Սոցիալ-լեզվաբանական հետազոտության համար պետք է հաշվի առնել թե՛ հասարակության շերտային տարբերակայնությունը թե՛ իրադրային տարբերակայնությունը՝ առավել օբյեկտիվ տվյալներ ստանալու նպատակով և հնարավորինս խորը ներթափանցելու լեզվական երևույթների էությանմեջ: Մեր հետազոտության շրջանակներում մենք հաշվի ենք առնում նախևառաջ հասարակության շերտային տարբերակայնությունը: Ինչ վերաբերում է իրադրային տարբերակայնությանը, նշենք, որ բոլոր խավերի ներկայացուցիչների խոսքը ուսումնասիրում ենք միևնույն իրավիճակում, այն է՝ կիսապաշտոնական իրադրության մեջ՝ հարցազրույցի ձևով: Նման մոտեցման պարագայում՝ հաղորդակցական միևնույն իրադրության պայմաններում, կարծում ենք, հնա-

⁴ Ferguson Ch. Papers on language and society. Stanford University Press, 1994., p. 20

րավոր է ստանալ առավել օբյեկտիվ տվյալներ, քանզի հարցազրույցի դեպքում բոլոր խավերի ներկայացուցիչները հայտնվում են հավասար հաղորդակցական պայմաններում, ինչը օբյեկտիվ նախադրյալ է ճշգրիտ տվյալներ ստանալու և եզրահանգումներ անելու համար:

Ինչպես արդեն նշել ենք, լեզվի սոցիալական տարբերակայնության վերլուծության հիմնական միավոր սոցիոլեզվական փոփոխակները, որոնք սոցիալ-շերտային և իրավիճակային տարբերակայնության խոսքային հարաբերակներով կամ տարբերակներով մեկ ամբողջություն են կազմում: Սոցիալ-շերտային փոփոխակները համաչափ են հասարակության սոցիալական կառուցվածքին և սահմանվում են սոցիալական չափման մեջ և բնորոշվում են հասարակության տարբեր սոցիալական խմբերին հատուկ քանակական և որակական ցուցիչներով, որոնք մնում են անփոփոպ տարբեր հաղորդակցական իրավիճակներում:

Իրադրային փոփոխակները, ի տարբերություն սոցիալ-շերտային փոփոխակների, ի հայտ են գալիս իրավիճակային համատեքստում: Այսպես, օրինակ՝ հայերենում դիմելաձևի որպես սոցիոլեզվական փոփոխակի, իրադրային տարբերակայնության տարբերակներն են «դու» և «Դուք» անձնական դերանունները, իսպաներենում՝ *tu* և *Ud*. դերանունները՝ եզակի թվի դեպքում: Անգլերենում որպես իրադրային տարբերակայնության սոցիոլեզվական փոփոխակ կարող է ծառայել ապառնիության արտահայտչաձևը. ոչ պաշտոնական, առօրյա-կենցաղային իրադրություններում, որպես կանոն, գործածվում են *“am gonna”*, *“gonna”* օժանդակիչները, մինչդեռ կիսապաշտոնական և պաշտոնական իրադրություններում ավելի հաճախ գործածվում են *will*, *am going to* օժանդակիչները: Ներկայացնենք շարադրածը գծապատկերի տեսքով.



Սոցիոլեզվաբանության մեջ առանձնացնում են փոփոխակի ևս մեկ տեսակ՝ **սոցիալ-շերտային-իրադրային**: Փորձենք բերել օրինակներ ասածը հստակեցնելու համար: Այսպես, օրինակ՝ հայերենում **է** օժանդակ բայը

դրստորում է տարբերակայնությունն թե՛ տարբեր իրադրություններում (պաշտոնական, առօրյա-կենցաղային, մտերմիկ), թե՛ կախված լեզվակիրի հասարակական դիրքից: Կախված իրադրությունից կամ լեզվակիրի հասարակական դիրքից՝ **է** սոցիոլեզվական փոփոխակը կարող է արտասանվել **է** կամ **ա** (օրինակ. գալիս **է** կամ գալիս **ա**: Բերենք համանման օրինակներ անգլերենում: Այսպես, օրինակ՝ անգլերենում ապառնի գործողության արտահայտչամիջոցը՝ **be going to** արտահայտությունը՝ կախված իրավիճակից և լեզվակիրի սոցիալական կարգավիճակից, իրացվում է *be going to*, *be gonna*, *gonna* տարբերակներով, որոնք հանդես են գալիս սոցիալ-շերտային-իրադրային տարբերակներ: *To be going to* ձևը հիմնականում գործածվում է կիսապաշտոնական իրադրություններում, և մմիևնույն ժամանակ միջին և բարձր խավի ներկայացուցիչների խոսքում և ոչ պաշտոնական իրադրություններում: Ամփոփենք ասածը գծապատկերով.

Սոցիոլեզվական փոփոխակներ

սոցիալ-շերտային փոփոխակներ	իրադրային փոփոխակներ	սոցիալ-շերտային- իրադրային
-------------------------------	-------------------------	-------------------------------

Այսպիսով՝ կարծում ենք, որ ի տարբերություն լեզվաբանության մեջ հաստատված այն կարծիքի, որ լեզվում գոյություն ունեն տարբերակայնության երկու տարատեսակ, մենք գտնում ենք, որ լեզվի ցանկացած երևույթ առավել խորը իմանալու համար անհրաժեշտ է սինթեզել երեք տարատեսակ՝ սոցիալ-շերտային, իրադրային և սոցիալ-շերտային-իրադրային:

К ВОПРОСУ О СОЦИАЛЬНОМ И СИТУАТИВНОМ ВАРЬИРОВАНИИ ЯЗЫКА

Карен Велян

*Заведующий кафедрой иностранных языков и литературы международного
университета Евразия, кандидат филологических наук, доцент*

Ключевые слова: социальные классы, коммуникативная ситуация, социолингвистические переменные, вариант, социальное варьирование, ситуативное варьирование, социально-ситуативное варьирование

Данная статья посвящена проблеме варьирования лингвистических единиц в устной речи. В частности, описываются два типа варьирования языковых единиц: социальное и ситуативное. Социальное варьирование наблюдается в речи представителей разных социальных классов. Ситуативное варьирование наблюдается в разных коммуникативных ситуациях: официальные, полуофициальные и неофициальные. Помимо данных двух типов варьирования, можно выделить и социально-ситуативное, в основе которого лежат как социальные, так и ситуативные проявления.

ON THE STUDY OF SOCIAL AND SITUATIONAL VARIATION OF LANGUAGE

Karen Velyan

*Head of Department of Foreign Languages and Literature at Eurasia International
University, Ph.D in Philology, Associate Professor*

Key words: social classes, communicative situation, sociolinguistic variables, variant, social variation, situational variation, social-situational variation

The present article is related to the problem of variation of linguistic units in speech. The article is focused on two basic types of variation of language units: social-class and situational. Specifically, linguistic variables have variants which are used by different native speakers of different socio-economic status. On the other hand, linguistic variables have different variants which are used in different registers – formal, semi-formal, and informal. Still, a third type of linguistic variable can be pointed out – social-situational. The latter can have different realizations based on both social and situational features.

ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵԳՆԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄ «ՎԵՐՆԱԳԻՐ-ՍՏԵՂՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ
(Ջ. ՕՐՎԵԼԻ “ANIMAL FARM” ՎԵՊԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Իրինա Մխիթարյան

*Եվրասիա միջազգային համալսարանի օտար լեզուների և գրականության
ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու*

Բանալի բառեր՝ անձնավորում, հեգնանք, հեղինակային վերաբերմունք, վերնագիր-սեղծագործություն:

Հեգնանքը, լինելով ամենակարևոր ոճական հնարներից մեկը, ուսումնասիրվել և քննարկվել է հազարավոր տարիներ լեզվաբանների, փիլիսոփաների և ճարտասանների կողմից, որոնք բացահայտել են թե ինչպես է հեգնական խոսքը փոխանցում գործարանական նշանակություն: Ըստ Լ. Վ. Բրեևայի, հեգնանքի էֆեկտը ցնցող անհամաչափության մեջ է «ինչ է ասվում և ինչ է ի նկատի առնվում»¹:

Մեկ այլ հետքերի դրույթ է առաջ քաշել Ի.Գալպերինը կապված լեզվական հեգնանքի բնույթի հետ: Վերջինս գտնում է, որ հեգնանքը սովորաբար կիրառվում է բացասական իմաստ արտահայտելու նպատակով, և անկախ այն ամենից թե այն դրական իմաստով է կիրառված բառարանում թե ոչ, այդ համատեքստում կամ տրված իրավիճակում կրում է բացասական նշանակություն²:

Այսպես, հայտնի լեզվաբան Ն. Պոտոցկայան պնդում է, որ հեգնանքը, լինելով քսաներորդ դարում խոսքի արժեքավորման ամենատարածված ձևերից մեկը, գեղարվեստական գրականության մեջ կարող է արտահայտվել ինչպես ստեղծագործության սյուժեի շրջանակներում, այնպես էլ տարբեր կառուցվածքային ու ոճական հնարների օգնությամբ³:

Վերջին տասնամյակներում իրականացված բանասիրական մի շարք ուսումնասիրությունների լույսի ներքո՝ երգիծականի քննությունը կարելի է իրականացնել նոր սկզբունքներով՝ հենվելով, մասնավորապես, լեզվաբանական եղանակավորման գաղափարի վրա: Եղանակավորման հիմնախնդիրը ժամանակին հանգամանակից վերլուծության է ենթարկվել Վ.Վ.Վինոգրադովի,

¹ Бреева Л. Синтаксические средства создания иронии // Романо-германская филология. Изд-во Саратов. ун-та, Вып.1. Саратов., 2000. Вып.1, сс.130-132.

² Galperin I. Stylistics. Higher School, M., 1977, 332p.

³ Потоцкая Н. П. Стилистика современного французского языка. М., 1974, сс.23-56

ապա նրա մի շարք հետևորդների կողմից⁴, որոնք հիմնավորել են լեզվաբանական այդ երևույթի էության ըմբռնման կարևորությունը բանասիրական ուսումնասիրությունների համակողմանի իրականացման համար:

Վ.Վ.Վինոգրադովը եղանակավորումը սահմանել է որպես խոսողի կողմից իրականության նկատմամբ ունեցած վերաբերմունքի դրսևորում՝ արտահայտված քերականական միջոցներով⁵: Հայտնի է, որ եղանակավորումը լինում է երկու տեսակ՝ օբյեկտիվ, որը ենթադրում է խոսողի կողմից իր իսկ ասույթի վերաբերյալ գնահատումը հավաստիության առումով, և սուբյեկտիվ, որն արտահայտում է խոսողի հուզական զգացմունքային վերաբերմունքն իր կողմից արտաբերված լեզվական միավորների նկատմամբ⁶:

Այս երկուսից մեզ առավելապես հետաքրքրում է սուբյեկտիվ եղանակավորումը, որովհետև վերջինս, ինչպես իրավացիորեն նկատում է Ս.Բ.Պոխոնյան, թույլ է տալիս նորովի բնորոշել հեզնանքը՝ այն դիտարկելով որպես թաքնված, նեգատիվ բնույթ ունեցող սուբյեկտիվ արժեքային եղանակավորման իրականացում⁷: Սա տեղի է ունենում այն դեպքում, երբ խոսողը ոչ բացահայտ ձևով իր հեզնական հուզական-զգացմունքային վերաբերմունքն է արտահայտում հաղորդվածի բովանդակության նկատմամբ:

Հեզնական եղանակավորումն արտահայտվում է շարահյուսական տարբեր հնարներով, որոնցից առավելապես մեզ համար նշանակալից է անձնավորումը, քանի որ այն օժտված է հեզնական ուշագրավ իմաստային նրբերանգներ արտահայտելու ունակություններով:

Այս հոդվածում մենք նպատակադրված ենք ուսումնասիրել անձնավորում դարձույթը՝ հեղինակային հեզնական վերաբերմունքի տեսանկյունից: Ընտրված ստեղծագործությունն "Animal Farm" վեպը օժտված է զգալի հեզնական ուժով և հեղինակի սուր քննադատությամբ, որն ակներև կերպով պատկերում է Ջ.Օրվելի միտումները և սուր երգիծական վերաբերմունքն իշխող ստալինյան կարգերի դեմ: Ստեղծագործությունում գրեթե յուրաքանչյուր երևույթ կրում է խորհրդանշական գործառույթ, որն էլ իր հերթին արտացոլում է հեղինակային հեզնանքն ու ծաղրը՝ թե՛ արտակա և թե՛ ներակա: Այս վեպն այլաբանություն է, որի միջոցով Օրվելն ընդգծում է հեղափոխության հոգեբանական ճնշումը և մի կարգի փոխարինումը մյուսով: Այս վեպի միջոցով Օրվելը քննադատում է այն մարդկանց, որոնք ամուր չեն կառչում այն ամենին

⁴ Банару В.И. Оценка, модальность, прагматика//Языковое общение: Единицы и регулятивы.

Калинин, 1987, сс. 14-18; Горделий З. Д. Параметры описания текстовой модальности // Сб. науч.

тр. МГПИИЯ. Вып. 356.М., Вып. 356, 1990, сс. 86-93

⁵ Виноградов В. О категории модальности и модальных словах в русском языке. // Исследования по русской грамматике. М., Наука. 1975, сс. 53-87

⁶ Шведова Н. Грамматика современного русского языка. М., Наука, 1980, 768 с.

⁷ Походня С.Языковые виды и средства реализации иронии. Наукова думка, Киев, 1989, с.128.

ինչին նրանք հավատում են, այլ, կուրորեն հետևելով հեղափոխականներին, անտեսում են վերջիններիս ապագայի գալիք գործողությունների չարիքներն ու դժվարությունները:

Ստեղծագործության առաջին գլխում անդադար քարոզվում է այն գաղափարախոսությունը՝ թե մարդը կենդանիների թշնամին է, սակայն հաջորդ գլուխներում մենք նկատում ենք լուրջ փոփոխություն: Խոզերը փորձում են երկու ոտքի վրա քայլել, խաղաթուղթ խաղալ սովորական մարդկանց հետ, պարել, քնել մահճակալի մեջ, հագնվել և այլն: Ահա, այստեղ անհնար է անտեսել հեղինակի սուր հեզնանքը և ընդգծված ծաղրը մարդկության կեղծ կարգախոսների և հայտարարությունների վերաբերյալ, որոնք իրենց վառ արտահայտումն են գտնում անձնավորում հնարի միջոցով:

It was a pig walking on his two legs. A little awkwardly, as though not quite used to supporting his considerable bulk in that position, but with perfect balance, he was strolling across the yard. (p.113)

The company had been enjoying a game of cards, and had broken off for a moment, evidently in order to drink a toast. A large jug was circulating, and the mugs were being refilled with beer. There were shoutings, bangings on the table, sharp suspicious glances, furious denials. The source of the trouble appeared to be that Napoleon and Mr. Pilkington had each played an ace of spades simultaneously. (p.120)

There, round the long table, sat half a dozen farmers and half a dozen of the more eminent pigs, Napoleon himself occupying the seat of honour at the head of the table. The pigs appeared completely at ease in their chairs. (p.116)

Napoleon (the pig) was now never spoken simply as “Napoleon”. He was always referred to in formal style as “our Leader, Comrade Napoleon”, and the pigs liked to invent for him such titles as Father of All Animals, Terror of Mankind, Protector of the Sheepfold, Ducklings` Friend, and the like. (p. 80)

After that it did not seem strange when next day the pigs who were supervising the work of the farm all carried whips in their trotters. It did not seem strange to learn that the pigs had bought themselves a wireless set, were arranging to install a telephone. It did not seem strange when Napoleon was seen strolling in the farmhouse garden with a pipe in his mouth no, not even when the pigs took Mr. Jones`s clothes out of the wardrobes and put them on. (p. 115)

Վերը նշված հատվածներն ամբողջովին արտահայտված են անձնավորման հնարի միջոցով և առավելագույնս են ընդգծում հեղինակի հեզնական վերաբերմունքն իշխող իրավիճակի հանդեպ:

Օրինակ՝ խոզերը սկսում են իշխել և ստեղծում են ուտոպիա, մինչդեռ այլ կենդանիները տառապում են թշնամությունից: Խոզերը սկսում են նմանվել մարդկանց, իսկ մարդիկ՝ խոզերի:

Ինչպես նկատում ենք, անձնավորման միջոցով մարմնավորված հեզնական պատկերները համատեքստը դարձնում են առավել շոշափելի և

կոնկրետ: «Ստեղծագործություն - վերնագիր» կապը երևում է հենց համատեքստից, որտեղ բացահայտ կերպով նկատվում է մարդկանց փոխարեն ագարակը ղեկավարող խոզերի առավելությունը, վերջիններիս ունակությունները և հնարավորությունները, այսինքն՝ նախկինում այսպես կոչված “Manor Farm”-ը անցնում է ամբողջովին կենդանիների ձեռքը՝ անվանափոխվելով “Animal Farm”-ի: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ հեղինակը պատահական չի ընտրել ստեղծագործության այս վերնագիրը. նա այս ընտրությամբ վեպին հաղորդել է հեզնական մեծ լիցք և վարպետորեն վերարտադրել «վերնագիր - ստեղծագործություն» փոխհարաբերությունը:

**ПЕРСОНИФИКАЦИЯ В РОМАНЕ ДЖ. ОРВЕЛА
“ANIMAL FARM” КАК ПРОЯВЛЕНИЕ ИРОНИЧЕСКОГО
ОТНОШЕНИЯ АВТОРА С ТОЧКИ ЗРЕНИЯ
ВЗАИМОТНОШЕНИЯ "ЗАГОЛОВОК- ПРОИЗВЕДЕНИЕ"**

Ирина Мхитарян

*Преподаватель кафедры иностранных языков и литературы
международного университета Евразия, кандидат филологических наук*

Ключевые слова: персонификация, ирония, авторское отношение, заголовок-произведение.

Целью настоящей статьи является исследование и выявление связи "заголовок- произведение" с точки зрения авторского субъективного отношения, где персонификация выступает как проявление авторской иронии. Роман Дж. Орвела “Animal Farm” воочью представляет тенденции автора и острое сатирическое отношение против сосподствующей несправедливости. В произведении почти каждое явление носит в себе символическое действие, что в свою очередь отражает авторскую иронию и насмешку, как ингерентно так и адгерентно.

**PERSONIFICATION IN G. ORWEL`S "ANIMAL FARM" NOVEL AS
MANIFESTATION OF AUTHOR`S IRONY IN "TITLE- TEXT" CORRELATION**

Irina Mkhitaryan

*Lecturer of Foreign Languages and Literature Department
at Eurasia International University, PhD in Philology*

Key Words: personification, irony, author`s modality, title-text correlation.

The main purpose of this article is to analyze and underline "title-text" correlation from the author`s subjective point of view, in which personification highlights author`s irony. "Animal farm" novel depicts author`s intentions and sharp criticism towards available injustice. Any phenomenon in the novel carries a symbolic value, that`s why author`s irony and satire are obviously noticeable.

DELIBERATIVE DEMOCRACY IN ENGLISH LANGUAGE EDUCATION

Anna Petrosyan

*teacher of Yerevan High school after H. Galstyan № 83,
president of the methodical unification*

Key words: higher education, dialogue, deliberation, deliberative democracy, educational program, educational policy

The evaluation of educational policies unavoidably assumes some stance toward stakeholder participation and, along with this, some stance toward democratic decision making. The deliberative democratic approach to evaluation is grounded in deliberative democratic theory, which adopts a relatively strong stance toward stakeholder participation.

Deliberative democratic theory emphasizes developing political practices and institutions that mitigate power imbalances among citizens so as to permit their free and equal participation. A necessary feature of practices and institutions that satisfy this idea is that the procedures are designed to engage participants in genuine deliberation, motivated by the goal of fostering the common good, rather than engaging them in strategic bargaining, motivated by the goal of maximizing their perceived self-interests^{1,2}.

The article aims to contribute to the important discussion about the role of deliberative democracy in English - language education. Deliberative democracy primarily involves democratic participation, inclusive dialogue, public reasoning and deliberation, and collaborative social and political decision-making. I examine both using pedagogy that engages deliberative democracy in process, ipso facto attractive teaching, and advancing deliberative democracy as a valuable goal in English - language education. I focus on it and coursework directly related to it rather than other subfields within education (such as educational psychology or educational administration) because I believe the training of future teachers will have the most direct impact on their practice of democracy in the classroom and thereby the perpetuation of a healthy democracy.

I begin by looking at current changes in society that have reshaped student goals, educational responsibility, and the main concern of democracy within higher education. I emphasize these changes to issue a call for a radical obligation to deliberative democracy both in practice and in theory, as a means and an end. In this section, I expand on the designation of deliberative democracy and the skills necessary to fulfilling it as they relate to the goals of English - language education. I

¹ Cohen, J. Deliberation and democratic legitimacy. In J. Bohman & W. Rehg (Eds.), *Deliberative democracy, essays on reason and politics*. Cambridge, MA: MIT Press, 1999, pp. 67-91.

² Rawls, J.. The idea of public reason. In J. Bohman & W. Rehg (Eds.), *Deliberative democracy, essays on reason and politics*, Cambridge, MA: MIT Press, 1999, pp. 93-141.

close by turning to exemplary programs in English - language education and showcasing some smaller steps toward incorporating democratic practices and assignments, including forms of social justice and service learning initiatives, into various schools of education. Finally, I expand on those ideas in order to invite other institutions to join these efforts and to point toward hopeful avenues for progress.

Recent changes in American life as well as changes within the field of education in particular have made teaching the arts of deliberative democracy in teacher education programs even more important. In 2004, many professors of education and practicing teachers turned to President Bush for a guiding vision of democracy in education. Unfortunately, his address to the educational community in Phi Delta Kappan, entitled "The Essential Work of Democracy," only mentioned democracy once in its opening and never referred to it again. Instead, he touted the success of No Child Left Behind for making schools a safe place that leads the world in a technology driven economy³. These comments are quite aggravating to many teachers who have struggled to reclaim the democratic voice that has been stripped from them in current accountability policy making and in the climate of educational standardization⁴.

Over the past century, colleges of education and public Kindergarten-12th grade schools have upheld a tenuous and changing commitment to democracy. Many contemporary colleges of education trace their roots to normal colleges established at the end of the nineteenth century. Normal colleges were the first widespread centers for teaching training. Most adopted nurturing models of student-centered teaching influenced by the European philosophies of Johann Heinrich Pestalozzi, Johann Friedrich Herbart, and Friedrich Froebel. These philosophies were made rigorous and incorporated into mass teacher training through American educational theorist and superintendent Horace Mann. It was also Mann who made the first major push toward democracy in English - language education by explicitly calling for future teachers to cultivate the abilities of consensus building, universal communication, community participation, and moral and civic virtues in youth so that future generations of active citizens could be ensured.

Competing notions of good education further emphasized the structural components of democracy by rigorously schooling children in the history of American rights and civic responsibilities. The work of John Dewey, the most significant educational philosopher in American history, valued the structural knowledge of government and civic virtues, but emphasized the cultural components of living democracy well. Dewey promoted community-based learning where knowledge comes about through working together to solve social problems. This process often entails self-reflection and changing one's own habits to meet the

³ Bush, George W. "The Essential Work of Democracy." *Phi Delta Kappan* 86, 2004, no. 2., pp. 114-121.

⁴ Stitzlein, Sarah, Walter Feinberg, Jennifer Greene and Luis Miron, "The Illinois Project for Democratic Accountability," *Educational Studies*, 42, 2007, no. 2., pp. 139-155.

demands of living communally. As we will see, Dewey's longstanding ideas of democracy are closely aligned with deliberative democracy.

Notions of deliberative democracy were first made significantly explicit in colleges of education following the publication of Gutmann and Thompson's book *Democracy and Disagreement* in 1996. This book generated excitement and interest in more theoretical circles of English - language education (primarily the Philosophy of Education Society, where clarifications, applications, and criticisms have been regularly voiced over the last decade) and worked its way into the scholarship of the American Educational Research Association president Lorraine McDonnell.

The work of Jurgen Habermas sustained some theoretical intrigue in English - language education and within the American Educational Studies Association, but also has only played out in limited ways in colleges of education. Unfortunately, few proposals for application have made their way into college classrooms, perhaps in part because more practice-oriented scholars have not sufficiently differentiated deliberative democracy from more generalist calls for "democratic education," nor have they put the notion into practice-application language. It seems then that professors of education have failed to fulfill the promise Gutman and Thompson see in schools as the most important institution for making democracy deliberative, outside of government⁵.

Nonetheless, some hope lies in the superb collection of essays by leading scholars (John Goodlad, Walter Feinberg, Henry Giroux, and others) in democratic education which appeared in the most recent issue of *The Journal of Educational Controversy* entitled "Schooling as if Democracy Matters."⁶ This collection considers recent changes to democracy, explores the place of democracy in the education of teachers, and envisions a laboratory model of democratic education. It offers the kinds of insight necessary for initiating larger conversations about both theoretical and practical applications of deliberative democracy in English - language education.

The process and goal of deliberative democracy in English - language education programs may help professors, community members, and K-12 schools deal with the recent changes in U.S. culture and in education in particular. Recent studies, such as the 2006 work of Michael McDevitt, confirm the effectiveness of deliberative education approaches for enhancing community-based learning, confidence in self-expression, knowledge of political issues, ability to validate opinions, civility between people with different views, and political conviction⁷. English - language education programs that adopt deliberative democracy as their guiding framework are likely to instill civic knowledge and virtues. These will not only serve the current world

⁵ Gutmann, A., & Thompson, D. *Democracy and disagreement*. Cambridge, MA: Belknap Press, 1996, pp. 359.

⁶ Kasprisin, Lorraine. "Schooling as if Democracy Matters." *Journal of Educational Controversy* 3, 2008, no. 1.

⁷ McDevitt, Michael and Spiro Kiouisis. "Deliberative Learning: An Evaluative Approach to Interactive Civic Education." *Communication Education* 55, 2006, no. 3., pp. 247-264.

through producing active, informed and engaged citizens, but also will lead to a generation of teachers who cultivate the same characteristics in the children of America.

This challenges schools to prepare students for citizenship in a deliberative democracy, to develop their capacity to understand different perspectives, to communicate their understandings, and to engage in the give-and-take of moral argument with the goal of working toward making mutually justifiable decisions⁸.

Overt discussions of democracy within universities that house English - language education programs are also changing. It was only about a decade ago that nearly five hundred university presidents called for more emphasis on the values and skills of democracy. Aligned with that appeal, many mission statements for colleges of education once highlighted the importance of developing democratic citizens. I surveyed the mission statements of many of the top ranked education programs and in almost all cases no longer found reference to democracy or citizenship. Instead, there is a new emphasis on highly-qualified teachers with precise abilities to apply content knowledge through scientifically based teaching approaches. At the extreme end, most threatening to democracy, are education programs housed at places like the University of Phoenix. Note how their executive chairman John Sperling describes the aim of the university: "This is a corporation, not a social entity. Coming here is not a rite of passage. We are not trying to develop [students'] value systems or go in for that 'expand their minds' bullshit"⁹.

As disheartening as statements like this might be for the development of democratic ways of living and self-reflection, there are aspects of this comment that relate to the changing spirit of students as well. While situations vary based on location and type of university, colleges of education are, for the most part, being populated by larger numbers of students who are increasingly individualistic and out for their own gain /. Some engage in community service, for example, but often for their own rewards as a resume enhancer, rather than to truly engage in a public effort. Relatedly, students increasingly see college as a pathway to a high paying career and therefore only want the barebones of what is going to get them a good job, rather than civics learning which they don't see as related or important. In this light, it could be argued that colleges now are serving less of a public role and more of a satisfaction of private desires. Increasingly, students believe that college classes should be about "hard" and scholarly material, rather than moral or civic learning, programs. The status of both of these, however, is limited as larger and larger numbers of students are older students who commute to campus and are therefore not present for much of the civically-enriching life offered at many universities.

⁸ Gutmann, A., & Thompson, D. *Democracy and disagreement*. Cambridge, MA: Belknap Press, 1996.

⁹ Hasseler, Terri. "Fomenting Dissent on Campus," *Academe* 92, 2006, n. 3.

As anecdotally reported by many professors of education, English - language education majors seem to be especially driven by the practical. They want to know exactly what they can do in their future classrooms when it comes to teaching content. Some professors convey that their students see talking about democracy as neither helpful nor applicable. It seems that only when issues of democracy are directly tied to specific problems or issues that teachers will definitely and regularly confront in their teaching that they will engage in such areas¹⁰. Students' disinterest in learning about or through democracy is further exacerbated by the fact that they are seldom asked about their capacity to teach democratic skills during job interviews, unless they are becoming social studies teachers. Even those education programs who do manage to teach democratically and appease student demands for practical application by teaching content through deliberative democracy are still met with the complaint that this approach takes much longer than traditional content delivery methods and would not be practical for future teachers who must teach under the time constraints of No Child Left Behind.

Finally, the accrediting agencies that oversee colleges of education have also relinquished their emphases on the skills of democracy. The National Council for Accreditation of English - language education (NCATE), the largest accreditor of English - language education programs, does state that teachers should have training in the liberal arts and sciences to provide a "basis for the educator's shared values, understandings, and responsibilities in a democracy." They also urge colleges of education to collaborate with other schools, develop learning communities, and have governance structures between the colleges and their faculty-aspects seemingly aligned with democracy. Yet despite these claims, there is no explicit mention of or connection to democracy or citizenship in its standards for English - language education graduates or in the criteria it uses for determining good English - language education graduates. English - language education Accreditation Council (TEAC), NCATE's largest and more progressively-perceived competitor also does not mention the need to cultivate democracy or citizenship in the English - language education programs it accredits.

Envisioning all of the ways that universities connect with deliberative democracy is far broader than the scope of this paper. Nonetheless, I want to highlight a few suggestions as complements to the efforts I recommend within English - language education programs. Some universities express a democratic commitment through offering centers on campus, such as the New England Center for Civic Life at Franklin Pierce College. Other universities host ongoing discussions about democracy through speakers, thought-provoking papers, and films, such as the University of New Hampshire's 2007-2008 University Dialogue on Democracy.

¹⁰ Apple, Michael W. "Teacher Education in a Democratic Society: Learning and Teaching the Practices of Democratic Participation." In *Handbook of Research on Teacher Education*, edited by Marilyn Cochran-Smith, Sharn Feiman-Nemser, D. John McIntyre, and Keely E. Demers. New York: Routledge, 2008, pp. 64-72.

Still others are slowly incorporating these themes through particular coursework that gets students out and participating in the community. Spellman College and several others do this through their Urban Education courses. More classes that allow students a hands-on opportunity to see and experience community work, paired with classroom discussion and debate are excellent ways to gradually introduce the deliberative democracy perspective into a college of education.

Finally, colleges may consider joining forces with large national initiatives. One noteworthy example is Project 540, which has allowed over 140,000 high school students to define and deliberate their own topics of interest since 2002¹¹.

**ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՁ**

Աննա Պետրոսյան

*Երևանի Հ. Գալստյանի անվ. № 83 ավագ դպրոցի անգլերենի
ուսուցչուհի,
մեթոդ-միավորման նախագահ*

Բանալի բառեր՝ բարձրագույն կրթություն, երկխոսություն, քննարկում, խորհրդակցական ժողովրդավարություն, կրթական ծրագիր, կրթական քաղաքականություն:

Ժողովրդավարական ուսուցումն շրջանակներում կարևորվում են անձի՝ կրթական քաղաքականություն վարելու իրավունքները ու հնարավորությունները՝ միաժամանակ սահմանափակելով դրանց ընտրությունը: Դրա շնորհիվ դասավանդողին թույլատրվում և պարտադրվում է կիրառել ուսումնական այնպիսի ծրագրեր և մեթոդներ, որոնք վերջինիս նպաստում են ժողովրդավարական բանավեճի համար մտավոր և հուզական նախադրյալների առաջացմանը, իսկ ուսանողներին՝ ճանաչելու իրենց ընդհանուր շահերը և վերանայելու որոշակի հետաքրքրություններ՝ այլոց շահերը հասկանալու համար:

¹¹ Robertson, Emily. "Teacher Education in a Democratic Society: Learning and Teaching the Practices of Democratic Participation." In Handbook of Research on Teacher Education, edited by Marilyn Cochran-Smith, Sharn Feiman-Nemser, D. John McIntyre, and Keely E. Demers, New York: Routledge, 2008, pp. 27-44.

СОВЕЩАТЕЛЬНАЯ ДЕМОКРАТИЯ В ОБРАЗОВАНИИ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Анна Петросян

учитель английского языка Ереванской высшей школы имени А.
Галстяна № 83, председатель совета учебно-методического объединения.

Ключевые слова: высшее образование, диалог, обсуждение, совещательная демократия, образовательная программа, образовательная политика.

Демократическое образование признает важность расширения прав и возможностей граждан сделать образовательной политики и ограничивает выбор, который они делают среди политики. Это обязывает и разрешает учителям использовать учебные программы и методы, которые поддерживают интеллектуальные и эмоциональные предпосылки для демократического обсуждения, а студентам - признавать свои общие интересы и пересмотреть отдельные интересы в отношении понимания интересов прочих лиц.

О ПАРАЛЛЕЛИЗМЕ РУССКИХ И АРМЯНСКИХ ЭТИКЕТНЫХ ФОРМУЛ

Алла Руденко

Преподаватель Международного университета Евразия

Ключевые слова: этикетные формулы, этикетная рамка, национально специфические этикетные фразы и выражения, этикетная структура дискурса

В последнее десятилетие возрос интерес к проблемам изучения речевого этикета как одной из важнейших составляющих коммуникативного процесса. Сегодня в мире резко возросла роль коммуникации. Специалисты в сфере межличностной коммуникации А.Я. Хачикян, А.Э.Бекларян в своей статье “Культура общения и речевой этикет как главные составляющие межличностного общения” считают, что “проблема межэтнического взаимодействия не решается успешно потому, что каждый человек воспринимает другие культуры сквозь призму собственной культуры”¹.

Владение формулами речевого этикета помогает взаимопониманию между людьми, установлению правильных взаимоотношений, налаживанию партнерских связей, способствует сотрудничеству между представителями разных народов и носителями разных культур. Владение языком данного народа, знакомство с его культурным наследием, знание речевых формул и умение владеть ими делает человека духовно богатым и помогает межличностному общению. Духовное и материальное развитие общества способствует развитию языка, в котором отражается исторический опыт народа, его восприятие окружающей действительности и отношение к ней.

“Каждый народ имеет свои коммуникативные потребности и соответствующие языковые средства, собственные традиции общения, свою систему языковых и речевых предпочтений”, – считают А.Я. Хачикян и А.Э.Бекларян².

Этикетные речевые формулы подтверждают свою универсальность, позволяют выявить особенности национального менталитета. В языке отражаются национальный колорит, мышление и индивидуальность народа.

Самый общий принцип применения знаков этикета – это вежливость, доброжелательность³.

В.В. Карасик отмечает: «Речевой этикет как норма представляет собой преломление культурных ценностей общества в правилах хорошего тона»⁴. “Правила хорошего тона” – это путь к взаимопониманию, к решению коммуникативных задач, к сотрудничеству.

В настоящей статье предпринята попытка определить общие и специфические особенности национального речевого этикета армянского и русского языков. Прежде всего – выявить общие для этих языков роль и место этикета в структуре дискурса.

¹ А.Я.Хачикян, А.Э. Бекларян. Культура общения и речевой этикет как главные составляющие межличностного общения. // Русский язык в Армении. – 2013. – №3, стр. 3

² А.Я.Хачикян, А.Э. Бекларян. Там же, стр. 6

³ Е.В. Гольдин. Речь и этикет. – М.: Просвещение, 1983, стр.70

⁴ В.И.Карасик. Язык социального статуса.-М. : Ин-т языкознания АН СССР,1991г.

Сопоставление формул речевого этикета русского и армянского языков способствует успешности речевой коммуникации и повышению культуры межнационального общения. Определение общности этикетных единиц может быть использовано в преподавании современного русского языка и РКИ, в сопоставительной типологии русского и армянского языков. Целесообразно ввести в систему профессиональной подготовки будущих юристов, менеджеров, экономистов обучение речевому этикету.

Сопоставление речевых формул обоих языков будет способствовать их высокому профессиональному уровню, компетентности, умению правильно строить общение не только с преподавателями, но и с будущими коллегами, сотрудниками и подчиненными. При сопоставлении речевых формул, национально специфических этикетных фраз и выражений обоих языков лучше воспринимается язык, повышается культурный уровень, осмысливаются особенности и богатства языков, углубляются социокультурные знания.

В ходе работы в учебной аудитории мы постоянно сталкиваемся с тем досадным обстоятельством, что учащиеся и студенты не владеют нормами речевого этикета. Отсутствие соответствующих социокультурных знаний и умений негативно отражается на общении, мешает правильно строить взаимоотношения. Возникла необходимость знакомить их с формулами и обучать навыкам речевого этикета, сравнивать формулы вежливости изучаемого и родного языка, проводить параллели.

Овладевая правилами и формулами речевого этикета, студенты учатся правильно корректно строить свои отношения с преподавателями и однокурсниками, а участвуя в дебатах, овладевают навыками корректного спора, привыкают выслушивать оппонента, корректно возражать, толерантно относиться к мнению других.

Исследователи говорят о необходимости обучения речевому этикету, выработке умений и навыков использования этикетных средств в профессиональном общении. Это касается таких областей деятельности, как юриспруденция, менеджмент, журналистика.

По мнению Л.В. Меликян, изучение этикетных формул желательно проводить в аспекте исследования генеалогического родства языков и культур, языковых и поведенческих универсалий, характеризующих язык и культуру этнических групп. Этикетные формулы содержат информацию национального, лингвистического, культурного, социального, возрастного характера⁵.

У этикета и речи есть общие единицы, некоторые из которых общие и также употребимы в обоих языках. Среди них можно выделить такие, как «Спасибо» – «Շնորհակալություն», «Շնորհակալ եմ», "Пожалуйста" – «Խնդրե՛մ», "Будьте здоровы" – «Առողջություն», "Добрый вечер" – «Բարի երեկո», "Доброе утро!" – «Բարի լույս», "Добрый день!" – «Բարի օր» и подобные.

Этикетной рамкой дискурса и ее основными элементами являются обращения, приветствия и прощания, что организует общение, задает и проявляет характер взаимоотношений между коммуникантами, способствует успешному установлению и размыканию контакта.

⁵ Л.В.Меликян.О некоторых вопросах изучения речевого и неречевого этикета. этикета // Լրագրի հասարակական գիտություններ. – 2004. –N1. – С. 38-39.

Каждый язык обладает своим фондом этикетных формул⁶. “Ярче всего национальная специфика отражается в приветствиях”⁷. Они являются выражением национальной самобытности. С этой точки зрения интересны следующие тематические группы формул: приветствия, прощания, извинения, просьбы, благодарности, согласия или несогласия, сожаления/сочувствия, прощания, которые являются самыми употребляемыми и необходимыми в межличностной коммуникации. Формулы приветствия играют большую роль в общении. Здороваясь со знакомыми, мы подтверждаем этим свое знакомство и выражаем желание продолжать его.

Приветствие – один из самых важных знаков речевого этикета. С его помощью устанавливается контакт общающихся, определяются отношения между людьми⁸.

С целью привлечения внимания собеседника чаще всего в обоих языках используются следующие формы, которые являются общепринятыми формами при обращении к незнакомому человеку по какому-либо вопросу. В русском языке основное приветствие – *здравствуйте*, которое эквивалентно *բարևի՛ /ձեզ/, բարևի՛, բարի լը՛լի, բարի տա՛վըն՛* в армянском языке.

В армянском языке, в отличие от русского языка, мало употребимо обращение к незнакомым в форме множественного числа на “Вы” (*Բարևի՛ ձեզ*). Чаще употребляется обращение на “ты” – *բարևի՛*. В случаях официальных, торжественных, особенно при обращении к большой аудитории, говорят: *Приветствую вас – Ողջուն՛իւ՛ եւ՛ ձեզ* или *Позвольте (разрешите) вас приветствовать! – «Թը՛լի տվե՛ք ձեզ ողջունե՛լ», «Ողջը՛նիւ, «Բար՛ւ ձեզ», «Հարգանքնե՛րի ըստ», «Հարգանքնե՛րի և հա՛վաքնե՛րի ըր»:*

Все формулы вежливости (*Здравствуйте! Пожалуйста! Спасибо!* и др.) – это самостоятельные специальные этикетные средства, потому что каждая формула образует целое этикетное высказывание.

Формулы речевого этикета, используемые при прощании, содержат не только оттенок вежливости, но и некоторой доброжелательности и национального благородства: «*До скорой встречи*», «*До свидания*», «*До встречи*», «*До завтра*», «*До вечера*», «*Всего хорошего*», «*Всего доброго*» («*Ցուտընընի՛ն*», «*Հաջողընընի՛ն*», «*Միտի՛ր բարևի՛*», «*Գնա՛ր բարևի՛*», «*Մի՛նչ վա՛ղըր*», «*Մի՛նչ հանդիպու՛նի՛ն*», «*Առա՛ջով*»)

Главным средством привлечения внимания в обоих языках является обращение (вокатив). Один из самых известных российских исследователей русского речевого этикета Н.И. Формановская характеризует этот первоэлемент следующим образом: “Обращение – это множество, объединенное аппелятивно-вокативной функцией”⁹.

“В русском языке в роли обращений выступают личные местоимения. Их немного, но их вес в речевом этикете достаточно велик”¹⁰.

Русский антропоним включает три компонента официальных имен: имя, отчество и фамилию, а в армянском официальное именование человека, как известно, состоит из двух частей: фамилии и имени. В армянском языке не принято

⁶ Гольдин Е.В. Речь и этикет. – М.: Просвещение, 1983, стр.70

⁷ А.Я.Хачикян, А.Э. Бекларян. Там же

⁸ Гольдин Е.В. Речь и этикет. Там же, стр.70.

⁹ Формановская Н.И. Речевой этикет в русском общении. Теория и практика. – М.: ВК, 2009, стр. 44

¹⁰ Гольдин Е.В. Речь и этикет. Там же, стр.70.

именовать знакомых, незнакомых, людей старшего возраста по имени и отчеству, так как это не свойственно данному языку, видимо, ввиду исторически сложившихся традиций и особенностей развития языка. В этом заключается отличительная особенность обращений армянского языка. Отметим в связи с этим, что обращение по имени-отчеству, сохранившееся в ряде стран на постсоветском пространстве как следствие взаимовлияния языков в советскую эпоху, иногда употребляется и в армяноязычной среде в официальной обстановке.

Как известно, в качестве обращения в русском языке допускаются полное имя, сокращенное имя, отчество, фамилия, имя+отчество, названия профессий, должности, звания, клички и прозвища и т.д. В армянском языке в роли обращения выступают имя, фамилия + имя, уменьшительное имя (*Арамик*), сокращенное (*Саро, Каро, Само*), фамилия + название профессии (варпет), фамилия + названия профессии/должности/звания, (товарищ) + фамилия (которое в последнее время вытеснено обращением *սիրով*), термины родства *փեսա, խնամի, քույր*.

Наименование человека по профессии или употребление обращения “*Սիրովն*” (мастер) указывает на неформальное обращение, но оно имеет оттенок уважительного отношения и положительной оценки компетентности мастера, знатока своего дела. Обращения типа *փեսա, խնամի, քույր* имеют фамильярный оттенок, употребляются в дружеской, семейной, непринужденной обстановке, с указанием на близкие отношения и взаимное расположение людей друг к другу, подчеркивается близость неформальных отношений. Подобные формулы обращений (“сват”, “сватья”, “кум”, “кума”) имеются и в русском языке, но употребляются не так часто и больше в сельской среде, ограничены стилем (ср.: сказочное “кумушка”).

В.П. Проницев в своей статье “Синтаксис обращения” говорит о том, что “обращения в контактоустанавливающей функции могут быть осложнены экспрессивно-оценочными и стилистическими оттенками”. Одни из формул содержат простую информацию об авторе и адресанте, другие экспрессивно отражают социальные отношения между адресантом и адресатом, складывающиеся под мощным влиянием народной разговорной речи и стилистических тенденций европейски- галантного жанра¹¹. (6: 40)

Неофициальными наименованиями в русском языке являются многочисленные уменьшительно-ласкательные формы имени, кличка и прозвище. Форма уменьшительно-ласкательного обращения одинаково часто встречается в обоих языках при обращении родственников, старших к младшим, матери к ребенку. В обращениях в современном армянском языке также используется уменьшительное имя, псевдоним и прозвище.

В каждом языке возникают свои способы сокращения имен и свой набор уменьшительно-ласкательных средств.

Вокативы русского и армянского языков по своим основным моделям совпадают. Вокативная функция в обоих языках выполняется с одинаковой целью: для привлечения внимания, установления и поддержания контакта или уточнения направленности речи. Различаются обращения к незнакомому человеку и обращения к знакомому человеку. В русском языке при обращении к незнакомому

¹¹ В.П. Проницев. Синтаксис обращения. Изд. Ленинградского университета, 1971, стр. 40

человеку используются лексемы *молодой человек, девушка, мужчина, женщина* и местоимение *вы*.

В армянском языке система обращений к незнакомому зависит от возраста, пола и социального статуса. Распространенными и общеупотребимыми являются *երիտաշիւ ըն, օրին ըն, մայրի՛ն, պարն՛ն, տիկին՛ն, հորեղբայր, մորաքոն յր, քենի՛, հայրի՛ն, եղբայր* и местоимения *դու՛ք, դու՛*. Обращения *հորեղբայր, մորաքոն յր, մորաքոն յր* используются для выражения уважительного отношения к старшим по возрасту, однако они употребимы в неформальной обстановке. Как отмечалось выше, армянскому языку не свойственно обращение на “вы”, эта формула редко употребляется при обращении к старшему по возрасту, ее заменяет обращение на “ты”. В неофициальной обстановке употребляются вышеуказанные обращения, но они имеют непринужденный, неофициальный оттенок. В деловой и официальной обстановке они не употребимы и не служат целям налаживания контакта, нарушая общие этикетные правила.

В русском языке этим формулам соответствуют обращения *дядя, тетя, товарищ, гражданин, гражданка, друг, приятель, бабушка, дедушка, сынок*.

При обращении к молодым людям в обоих языках используются как стилистически нейтральные обращения, так и непринужденно-фамильярные.

Вежливая форма обращения и извинения за причиненное беспокойство в обоих языках звучит одинаково подчеркнуто вежливо и выражается в следующих фразах:

Простите, извините (за беспокойство) - *Ներեցէ՛ք, ներեցէ՛ք անհանգստութիւն համար*

Скажите, пожалуйста, - *Ասացէ՛ք, խնդրէ՛ւ:*

Извините, вы не скажете, ...; - *Ներեցէ՛ք, դուք չէ՛ք ասի, ...;*

Извините, вы не могли бы сказать; разрешите обратиться - *Դուք կարո՞ղ եք ասի: Դու չէ՛ր ասէ՛ր կամ թու՛յն ասէ՛ր:*

Для выражения извинения и просьбы употребляются следующие формулы речевого этикета, некоторые из которых могут быть обращены к людям знакомым, другие же служат для обращения к малознакомым, вышестоящим: *извините; простите, пожалуйста, прошу прощения, приношу свои извинения, разрешите извиниться перед вами, позвольте принести свои извинения, позвольте попросить у Вас прощения*. – *Ներեցէ՛ք, խնդրու՛մ եմ, ներեղութիւնս ն եմ խնդրու՛մ:*

Принеси(те), дай(те), пожалуйста, если Вам нетрудно, дайте, пожалуйста, если Вас не затруднит, сделайте одолжение, не откажите в любезности, не сочтите за труд, не могу ли я попросить Вас, Вам нетрудно, Вас не затруднит. – *Եթէ դժվար չէ, կարո՞ղ եմ Ձեզ դիմէ՛լ, Թու՛յն ասէ՛ք, կարո՞ղ եմ արդո՞ք դիմէ՛լ, կարե՛լի՛ է, հնարավոր է, ինչպէ՛ս եք կարծու՛մ, ասացէ՛ք խնդրէ՛ւ, կարո՞ղ եմ Ձեզ խնդրէ՛լ:*

Формулы согласия, несогласия также имеют оттенок вежливости, выражают желание быть корректным, не обидеть собеседника: *Я вполне с Вами согласен, я полностью согласен с Вами, я не могу с Вами согласиться, позвольте с Вами не согласиться*. – *Ես համաճախ ծ չեմ, թու՛յն ասէ՛ք չհամաճախելէ՛լ, թու՛յն ասէ՛ք անարկէ՛լ, դուք ինձ չհամաճախեցի՛ք, թու՛յն ասէ՛ք հրաժարելէ՛լ, ինձ թվու՛մ է, որ Ձեզ մոտեցու՛մը ճիշտ չէ:*

В русском языке есть такие вводные слова, которые можно считать специальным приемом речи. Например, такие вводные слова, как *видите ли, знаете*

ли, понимаете ли, поверьте, представьте, которым в армянском языке эквиваленты следующие этикетные знаки: *Գիտ'եք իրարն թ, հիշատակի՛ր եք, հիշատակե՛ք, պիտիկերացրե՛ք*. Имеют ли они отношение к этикету?

Вводное слово помогает ориентировать речь на собеседника, приближает говорящего к собеседнику. По мнению Н. Формановской, в этом и заключается этикетное значение вводного слова, это одно из правил вежливой речи – ориентация ее на партнера.

В статье Л.В. Меликян “О некоторых вопросах изучения речевого и неречевого этикета” говорится о том, что понятие речевого этикета непосредственным образом связано с культурным фоном языка¹². (5)

При рассмотрении формул речевого этикета в русском и армянском языках выявилось много общего, касающиеся этикетной структуры дискурса. Общим для этикетной структуры дискурса русского и армянского языков является состав входящих в нее компонентов. Этикетная рамка (приветствия и прощания) и этикетные вкрапления в обоих языках одинаковы по своей природе. Этикетный каркас армяноязычного и русскоязычного дискурса состоит преимущественно из неспециализированных этикетных средств, используемых говорящим и слушающим. Различия национальных этикетных традиций связаны прежде всего с наличием национально специфических этикетных фраз и выражений, входящих в этикетную структуру дискурса, а также с различными нормами и правилами использования одних и тех же этикетных средств в разных языках.

Анализ русскоязычного и армяноязычного материала заставляет предполагать, что при всех национальных различиях существует общечеловеческая универсальность речевого этикета в его функциях и структуре. Знание особенностей национальных этикетных традиций способствует лучшему взаимопониманию при межнациональном общении, что делает речевой этикет одним из самых значимых компонентов обучения иностранному языку.

¹² Л.В.Меликян.Там же.

ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԷՏԻԿԵՏԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ
ԶՈՒԳԱՀԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ալլա Ռուդենկո

Եվրասիա Միջազգային համալսարանի դասախոս

Բանալի բառեր՝ էտիկետային արտահայտություններ; էտիկետային սահմանումներ; նմանություններ ու առանձնահատկություններ, ազգային յուրահատկություններ

Տվյալ հոդվածում շոշափվել են էտիկետային արտահայտությունները հայերեն և ռուսերեն լեզուներում, նշվել են նրանց նմանություններն ու առանձնահատկությունները: Հոդվածում խոսվում է այն մասին, որ չնայած տվյալ լեզուները ունեն նույն էտիկետային սահմանումները, նրանք տարբերվում են իրենց ազգային յուրահատկություններով: Երկու լեզուների էտիկետային սահմանումների հիմքում ընկած է քաղաքավարության արտահայտումը: Ռուսաց լեզվի ուսուցանման ընթացքում, տվյալ լեզվի առանձնահատկությունների ավելի դյուրին ընկալման համար անհրաժեշտ է ուսուցանել վերջինիս էտիկետային սահմանումները:

Այս հոդվածի նպատակն է սևեռել թե դպրոցում և թե բուհում դասավանդող անձնակազմի ուշադրությունը ոչ միայն լեզվի կառուցվածքի վրա, այլև լեզվին տիրապետելու համար դասաժամեր հատկացնել ինչպես լեզվի առանձնահատկությունների, այնպես էլ այն կիրառելու էտիկետային սահմանումների ուսուցմանը:

ABOUT PARALLELISM IN RUSSIAN AND ARMENIAN ETIQUETTE
DEFINITIONS

Alla Rudenko

Lecturer at Eurasia International University

Key words: etiquette expressions, etiquette definitions, similarities and differences, national singularities

In this article etiquette expressions in Armenian and Russian languages are reviewed, the similarities and differences are mentioned. In the article is discussed that despite the fact that these two languages have got the same etiquette definitions, they differ due to the national singularities. The basis of the etiquette definitions in both languages is the expression of courtesy. While teaching Russian language it is important to teach etiquette definitions, in order to make the language perception easier. The aim of this article is to concentrate the attention of the staff in the schools and universities not only on the language structure but also to allocate subject hours for the language singularities and also for etiquette definitions teaching.

FRANGLAIS.ԱՆԳԼՈՒ-ԱՄԵՐԻԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

Միրա Կարապետյան

*Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի և
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս*

Բանալի բառեր՝ լեզվաբանություն, անգլո-ամերիկյան փոխառություններ

Արդի ժամանակաշրջանում ֆրանսերեն լեզուն ապրում է լեզվաբանական մի երևույթ, երբ անգլերեն լեզուն ազդում է նրա շարահյուսության, բառապաշարի և քերականության վրա: Նախկինում լինելով միջազգային լեզու, այսօր ֆրանսերենն իր տեղը զիջում է անգլերենին: Ֆրանսախոսները օգտագործում են բազմաթիվ անգլերեն բառեր և արտահայտություններ, որոնք հաճախ սխալ անգլերեն են: Չնայած բազմաթիվ միությունների ներդրած ջանքերին՝ պաշտպանելու Սոլիերի լեզուն, Շեքսպիրի լեզուն շարունակում է ներգործել ֆրանսերենի վրա: Ի թիվս այլ լեզվաբանական քննարկումների, այսօր ֆրանգլեի թեման ևս շատ վիճահարույց է: Հարցը, որ հաճախ բարձրացվում է թե՛ լեզվաբանների, և թե՛ ֆրանսախոսների կողմից այն է, թե, արդյո՞ք, անգլերենի գերակայության պայմաններում ֆրանսերենը կանգնած չէ անհետացման վտանգի առաջ:

Այս խնդիրը հասկանալու համար անդրադառնանք ֆրանսերեն լեզվի պատմությանը և անգլերենի հետ նրա փոխհարաբերությանը: 1539թ. օգոստոսին Ֆրանսուա I թագավորը ստորագրում է Վիլլե-Կոտրեի հրամանագիրը, որով ֆրանսերենի գործածությունը պարտադիր է դառնում բոլոր պաշտոնական գրությունների համար: Այս հրամանագրի շնորհիվ ֆրանսերենը դառնում է ազնվականների և հյուսիսային Եվրոպայի դիվանագիտության լեզուն, և 17-18-րդ դարերում բոլոր կարևորագույն պայմանագրերը լատիներենի փոխարեն գրվում են ֆրանսերենով¹:

Ֆրանսերեն լեզվի հզորացումը շարունակվում է գաղութացման դարաշրջանում, հատկապես III Հանրապետության ժամանակ: Ֆրանսիան շարունակում է մնալ գերհզոր երկիր աշխարհի քաղաքական ասպարեզում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ֆրանսիայում, Շառլ դը Գոլի ղեկավարման տարիներին ի հայտ են գալիս հակա-ամերիկյան տրամադրություններ, իսկ Ֆրանսիայի փոխհարաբերությունները Մեծ Բրիտանիայի հետ հետո էին լավագույնը լինելուց:

60-ական թվականներին անգլերենի լեզվաբանական և մշակութային ներթափանցումը այնքան էլ նկատելի չէր, սակայն այդ գործընթացն արդեն

¹ Académie Française, Le français aujourd'hui, 2012. (www.academie-francaise.fr/...francaise/le-francais-a..)

սկսվել էր և հատկապես երիտասարդ ֆրանսիացիների միջավայրում: Լիցեն-
յում սովորողները դիմում էին իրենց ամերիկացի և անգլիացի ուսուցիչներին՝
թարգմանելու և բացատրելու Բիչ Բոյզի երգերի բառերը, հետաքրքրվում էին
Բիթլզով: Բացի այդ, այդ տասնամյակներին Ֆրանսիայում աճում էին անգ-
լիական և ամերիկյան ապրանքները: Օրինակ, ամերիկյան Procter & Gamble
ձեռնարկությունն արտադրում էր լայն սպառման ապրանքներ, դեղամիջոցներ,
օժանելիք, դիմահարդարման պարագաներ: Իսկ սրընթաց զարգացող IBM և
BULL տեխնոլոգիական ձեռնարկությունները անգլիական էին: Չնայած տիկին
դը Գոլի գործադրած ջանքերին՝ կանխելու անգլիաբանությունը, անգլերեն նոր
բառերը, բայց անգլո-ամերիկյան մշակույթը շարունակում էր մեծ տարածում
ստանալ մայրաքաղաքում: Խոսելով այս մասին, Պերնիեն նշում է, որ «ԱՄՆ-ի
սոցիալ-տնտեսական գերազանցությունը ու դրանով պայմանավորված «մշա-
կութային» հզոր գերիշխանությունը, մի քանի տասնամյակների ընթացքում
անգլերենը դարձրել է հաղորդակցության համաշխարհային լեզու»²:

Ֆրանսիական Ակադեմիայի տվյալներով, XX դարում անգլերենը սկսում է
սպառնալիք դառնալ ֆրանսերենի համար: Բազմաթիվ լեզվաբաններ են
ուսումնասիրել երկու լեզուների միջև գոյություն ունեցող փոխհարաբերու-
թյունները: Սակայն հարկ է նշել, որ դժվար է ուսումնասիրել այս երևույթը և
ստույգ ասել, թե ինչպես է անգլերենն ազդում ֆրանսերենի վրա, քանի որ
գոյություն չունեն խոր ուսումնասիրություններ և որևէ համապարփակ մեթոդ:
Էլ ավելի դժվար է գտնել անաչառ ուսումնասիրություններ, քանի որ դրանք
հաճախ բացասական երանգ ունեն և դեմ են անգլերեն բառերի գործածությանը:
Որոշ ակադեմիկոսներ այն ներկայացնում են, որպես անգլերեն լեզվի «հար-
ձակում» ֆրանսերեն լեզվի վրա, պատճառաբանելով, որ անգլերենը ներգոր-
ծում է ֆրանսերենի և՛ հնչյունաբանության, և՛ ուղղագրության, և՛ ձևաբանու-
թյան ու շարահյուսության վրա: Ավելին, անգլերենը ներգործում է նաև
ֆրանսերեն լեզվի կառուցվածքի վրա, որտեղ նկատվում են «կրավորական
կառուցվածքների հաճախականության ավելացում և նախդիրների սղում կամ
փոփոխություն: Որոշ ֆրանկոֆոնների կարծիքով՝ այս լեզվաբանական վա-
րակը կարող է անգամ ոչնչացնել ազգային ինքնության հիմքն ու համընդ-
հանուր արժեքը:

Սակայն շատ կարևոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ անգ-
լախոսները հաճախ չեն հասկանում ֆրանսիացիների գործածած անգլերեն
բառերն ու արտահայտությունները: Վերջիններս հաճախ են անգլերեն բառեր
փոխառում իրենց առօրյա խոսակցության մեջ՝ նորաձև երևալու կամ
ուշադրություն գրավելու համար, առանց գիտակցելու, որ դրանք ճիշտ չեն
կիրառում:

² Pergnier, M., Les anglicismes, Paris, P.U.F, 1989, www.vlrom.be/pdf/982anglicisme.pdf

Մորիս Պերնիեն³ ընդգծում է երկու կարևոր պատճառ այս կամ այն անգլերեն բառը կամ արտահայտությունը փոխառելու համար:

Առաջին՝ գործաբանական /պրագմատիկ/, երբ ֆրանսերենում չկա տվյալ առարկան կամ երևույթն արտահայտող բառը: Դա հատկապես լավ երևում է գործարարության և տեխնոլոգիաների ոլորտներում, քանի որ ամենահզոր ընկերությունները անգլիախոս երկրներից են: Բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել տեխնոլոգիաների բառապաշարի մեջ (ինչպես օրինակ *DVD*) և բիզնեսի ոլորտում (*marketing*):

Երկրորդ՝ տարբերակիչ, որի դեպքում անգլերեն բառը իմաստային տարբերակում է մտցնում, օրինակ՝ *faire du shopping* նույնը չէ, ինչ *faire des courses* կամ *faire du lèche-vitrine*:

Ցավոք, տնտեսական ճգնաժամի պատճառով, Արտաքին Գործերի նախարարությունը կրճատում է ֆրանսիական լիցեյներին և «Alliances Françaises» ասոցիացիաներին հատկացվող սուբսիդիաներն ամողջ աշխարհում:

1984 թվականին հիմնված «Actions pour promouvoir le français des affaires» (APFA) ընկերակցությունը հավաքագրում է անգլիաբանություններին փոխարինող բոլորովին նոր կամ արդեն գոյություն ունեցող բառեր գործարարության և տեխնոլոգիաների ոլորտներում, քանի որ հենց այս ոլորտներն են ավելի շատ կրում անգլերենի ազդեցությունը: Օրինակ, նրա կողմից ստեղծված *la page d'accueil-ը* փոխարինելու է գալիս *home page*-ին, իսկ *de point-ը՝ high tech* -ին:

1975 թվականին ընդունվեց մի օրենք, որի նպատակն էր պաշտպանել ֆրանսերենը անգլո-ամերիկյան ազդեցությունից և վերացնել երկլեզվության բոլոր ձևերը: Հետագայում, օրենքով վերացվեցին շրջաններում գործածվող բարբառները և փոքրամասնությունների լեզուները, որոնք սակայն շարունակում են գոյատևել առ այսօր, ինչպես օրինակ Բրիտանիայի կամ ֆրանսիական այլ շրջանների ճանապարհների երկլեզու պաստառները:

Գիտակցելով, որ ընդունված օրենքը չի գործում այնպես, ինչպես մտահղացվել էր, մշակույթի նախարար Ժակ Թուրոն մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի ընդունվի 1994 թվականի Թուրոնի օրենքը: Ներկայացված օրենքը բուռն վիճաբանությունների առիթ դարձավ: Սահմանադրական խորհուրդը որոշեց, որ օրենքի երկու հոդվածները դեմ են մարդու և քաղաքացու իրավունքների հոչակագրին: Այնուամենայնիվ, օրենքն ընդունվեց 1994թ. Օգոստոսի 4-ին, որի առաջին հոդվածը փաստում է, որ «Ֆրանսերեն լեզուն անձի և Ֆրանսիայի ժառանգության հիմնարար տարրն է: Նա ուսուցման, աշխատանքի, պետական ծառայությունների ու փոխանակումների լեզուն է: Այն միակ

³ Pergnier, M., Les anglicismes, Paris, P.U.F, 1989, www.vlrom.be/pdf/982anglicisme.pdf

ընդունելի կապն է այն պետությունների համար, որոնք ֆրանկոֆոնիայի ընկերակցության մաս են կազմում»⁴:

«Les hommes de paroles» գրքի հեղինակ Ժան-Ժաք Թուման⁵ անդրադարձել է Թուրքի օրենքին՝ ընդգծելով, որ այս օրենսդրությունը կարող է պատճառ դառնալ ֆրանսերենի գործածության նվազմանը: «Ֆրանսերենի գործածությունը Ֆրանսիայում» ծայրահեղ նացիոնալիստական օրենքը (հաստատված Սենատի կողմից, առաջին ընթերցմամբ, 1994 թվականի ապրիլի 14-ին) անառարկելի փորձ է մաքրագործելու, և ֆրանսերեն լեզուն դարձնելու գործածության մենաշնորհի՝ հակասության մեջ մտնելով բազմակարծության և բազմամշակութային մոդելի հետ, որն հիմնված է կոնսենսուսայ արժեքների ռեյաստիվիզմի վրա: Դեմ է «բազմակեզվությանը», Եվրոպայում ընդունելի այս բանաձևին, որը միակն է ապահովելու համար Ֆրանսիայի մասնակցությունը միջազգային տեխնոլոգիական և գիտական մեծ կոնֆերանսներին»:

Ներկայումս Ֆրանսիայում հրատարակվում են գրքեր, որոնք օգնում են ֆրանսախոսներին՝ կիրառելու մաքուր ֆրանսերեն բառեր և արտահայտություններ: Դանցից մեկը Իվ Լառոշ Կլերի «Évitez le franglais, parlez français!»⁶ գիրքն է: Գրքի նախաբանի հեղինակ, լրագրող, ֆրանսիական հեռուստատեսության մշակութային հաղորդումների հաղորդավար Բերնար Պիվոյի կարծիքով, այս գիրքը «...առաջին ֆրանգլե-ֆրանսերեն բառարանն է: Սա իրադարձություն է, որովհետև նրա հեղինակը՝ Իվ Լառոշ-Կլերը, օգտակար գործ է կատարել, առաջարկելով յուրաքանչյուր անգլո-ամերիկանիզմի համար մեկ կամ մի քանի ֆրանսերեն համարժեքներ...»:

Շարունակելով միտքը, Պիվոն նշում է, որ չի կարելի դեն նետել բոլոր անգլիաբանությունները: Նույն տեսակետին է նաև ֆրանսիացի լեզվաբան Պերնիեն, որի կարծիքով, երբեմն, «հատկապես գիտական, տեխնիկական կամ հասարակական նորամուծությունների մեջ անգլիաբանությունները արդարացված են, սակայն շատ ավելի կարևոր է իմանալ, որ ֆրանսերենն արագորեն զարգացում է ապրում»⁷: «... հրաժարվել բոլոր հաշվառված բառերից, ըստ Իվ Լառոշ-Կլերի, անմիտ կլիներ: Համաձայնել բոլորի հետ անխտիր, ընդգրկելով անգամ անօգուտ, վերամբարձ բառերը, կլիներ անխոհեմ և ծիծաղելի: Այս գրքի արժանիքներից մեկն այն է, որ ստիպում է մեզ գիտակցել սոցիալական մի երևույթ, որը խոսում է լեզվի ընթացքի խտտորման մասին»⁸:

⁴ Toubon, J., Loi n° 94-665 du 4 août 1994 relative à l'emploi de la langue française ... Modifié par Loi n°96-597 du 2 juillet 1996 – article. www.legifrance.gouv.fr/affichTexte.do?cidTexte..

⁵ Thomas, J.-J., Les hommes de paroles, Ed. Freeman G. Henry. The French Literature, Series 22. Amsterdam/New York, 1995.

⁶ Laroche-Claire, Y., Évitez le franglais, parlez français. Albin Michel, 2004 books.google.com/.../Évitez_le_franglais_parlez_fr...

⁷ Pergnier, M., Les anglicismes, Paris, P.U.F, 1989. www.vlrom.be/pdf/982anglicisme.pdf

⁸ Laroche-Claire, Y., Évitez le franglais, parlez français. Albin Michel, 2004.

Ահա մի քանի օրինակ, որոնք տեղ են գտել այս ֆրանզլե-ֆրանսերեն բառարանում և հաճախ են գործածվում ֆրանսախոսների կողմից . "*déstresser*": "[se] décontracter", "[se] détendre"; "*tag*": "graffitis"; "*truster*": "monopoliser", "s'approprier"; "*megastore*": "grand magasin", "grande galerie"; "*must*": "indispensable", "immanquable"; "*sponsoriser*": "financer", "patronner" .

Նույն ձևով, Ֆրանսիական Ակադեմիայի կայքը (*le site-web*) ամեն ամիս տպագրում է մի հոդված «Dire, ne pas dire» վերնագրով, նշելով այն բառերն ու արտահայտությունները, որոնք շատ հաճախ են կիրառվում ֆրանսախոսների շրջանում, բայց որոնք սխալ են: Այս ցանկում ընդգրկված են նաև հաճախակի գործածվող անգլիաբանություններ: 2012թ. նոյեմբերի հրատարակությունը կենտրոնանում է իմաստային փոխառությունների վրա, որոնցից են՝ "*produit*", "*dédié*", "*gérer*", "*opportunité*", "*évident*", "*recupérer*", "*structure*", "*à travers*" բառերը: Նպատակ ունենալով պահպանել դրանք, բառարանը ներկայացնում է անգլերենի ազդեցությամբ պայմանավորված բոլոր այս բառերի գործնական կիրառությունները, և նրանց ստույգ և ճշգրիտ իմաստները (Ֆրանսիական Ակադեմիա, 2012)⁹:

Ակնհայտ է, որ ֆրանսերենը զարգանում է, բայց նա միակը չէ; այս երևույթը նկատելի է բոլոր լեզուներում, այդ թվում նաև անգլերենում: «Լեզուները փոխազդեցության մեջ են, և նրանց կառուցվածքային համակարգերը զգալի փոփոխության են ենթարկվում, իսկ անգլերենը ազդում է ոչ միայն ֆրանսերենի, այլև գերմաներենի վրա, որի մեջ այսօր տեղի ունեցող շարահյուսական փոփոխությունները պայմանավորված են անգլերենի ներկայությամբ»¹⁰:

2002 թվականի գովազդների ուսումնասիրությանը նվիրված մի զեկույցում ասվում է, որ հեղինակները, Թուրոնի օրենքին անդամակցելու նպատակով, հարկադրված են եղել ֆրանսերեն թարգմանություններ փնտրել հետևյալ անգլերեն բառերի համար՝ "*lubricants*", "*very good boy*", "*roots*", "*aquadrink*", "*the fashion album*", "*the best of electromusic*", "*feat*", "*kid*", "*houseboat bonus track*", "*employee self service*", "*web design*", "*software*", "*stock options*", "*only be*", "*a group company*", "*you tell your friends about*", "*vision command*" և այլն: Նշվում է, որ բոլոր այս բառերն ու արտահայտությունները հեշտությամբ կարող են արտահայտվել ֆրանսերենով: Այս ուսումնասիրության մեջ հիշատակված չեն բառեր, որոնք փոխառված են այլ լեզուներից, այն կենտրոնանում է միայն անգլերենի վրա: Սակայն կան այլ ուսումնասիրություններ, որոնք հաստատում են, որ նմանատիպ երևույթ գոյություն ունի եվրոպական այլ երկրներում: 2001թվականին

⁹ Académie Française, Le français aujourd'hui, 2012. (www.academie-francaise.fr/...francaise/le-francais-a..)

¹⁰ McLaughlin, M., Congrès Mondial de Linguistique Française - CMLF 2010. www.mairimclaughlin.com/.../cmlf2010.

հրատարակված Oxford University Press-ի ուսումնասիրությունը եվրոպական քսաներկու լեզուների վերաբերյալ փաստում է, որ անգլերենից ամենամեծ ազդեցություն կրում է գերմաներենը, հետո ֆրանսերենը և իսպաներենը: Այնուհանդերձ, Ֆրանսիան ավելի շատ է հակադարձում անգլերենի «հարձակմանը», քան մյուս երկրները:

Ֆրանսիական Սահմանադրության երկրորդ հոդվածի համաձայն՝ «Ֆրանսիական Հանրապետության լեզուն ֆրանսերենն է»: Օրենքի վեցերորդ հոդվածի համաձայն, Ֆրանսիայում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները, ցուցադրությունները և խորհրդակցությունները պետք է անցկացվեն ֆրանսերեն լեզվով, եթե այդ իրադարձությունները բացառապես օտարների կամ օտարերկրյա առևտրի համար չեն: Չնայած այս օրենքի վիճարկելիությանը, հարցումները փաստում են, որ ֆրանսիացիների մեծամասնությունը պաշտպանում է օրենսդրությունը: Այս օրենքը նախատեսում է պատասխանատվություն և տույժեր բոլոր նրանց համար, ովքեր չեն ենթարկվի օրենքին: Օրինակ, 2000 թվականին 80 դատավճիռ է կայացվել՝ յուրաքանչյուրի համար գանձելով միջին հաշվով 500 եվրո տուգանք: Պիեռ Տրեսկազը իր «Ֆրանգլեն քսան տարի անց»¹¹ գրքում գրում է, որ գոյություն ունեն որոշ անգլո-ամերիկանիզմներ, որոնք ֆրանսերեն բառարանների մեջ մուտք են գործել դեռևս 1945 թվականից, իսկ 1949-ից 1960 թվականների միջև ընկած ժամանակահատվածում նորաբանությունների գրեթե 2,5%-ը անգլո-ամերիկյան են: Պիկոնը թեև ընդունում է անգլերենի ազդեցությունը ֆրանսերենի վրա, բայց հավատում է նաև ֆրանսերեն լեզվի և նրա մշակույթի ճկունությանը և առաձգականությանը:

Ըստ ֆրանսիացի գրող Գուրմոնի, «լեզուն գեղեցիկ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ մաքուր է»¹²: Եթե բազմաթիվ անգլերեն բառեր և արտահայտություններ են հայտնվում ֆրանսերեն լեզվի մեջ, ապա կարելի է արձանագրել, որ այն մաքուր չէ: Մակայն անառարկելի փաստ է, որ լեզուները պետք է զարգացում ապրեն հասարակության հետ և խուսափեն լեզվաբանական մահից, ճահճացումից: Ֆրանսերենը դարեր ի վեր փոխառություններ է կատարել նաև այլ լեզուներից, ինչպես օրինակ՝ իտալերենից և արաբերենից, և շարունակում է համարվել գեղեցիկ լեզու:

Մրցակցելու համար այլ հզոր պետությունների հետ, Ֆրանսիայի լեզուն պետք է լինի ժամանակակից և զարգանա ժամանակի հետ համընթաց: Արդի ժամանակաշրջանում, գլոբալացման պատճառով, լեզվաբանական այս երևույթն ավելի արագ է տեղի ունենում, քան մյուսները, սակայն շատ կարևոր է գիտակցել, որ մյուս լեզուների հետ միասին ֆրանսերենը ապրում է

¹¹ Trescases, P., *Le français vingt ans après*, Guérin, 1982, p.150.

¹² *McLaughlin, M.*, *Congrès Mondial de Linguistique Française - CMLF 2010*.
www.mairimclaughlin.com/.../cmlf2010.

լեզվաբանական էվոլյուցիա: Հնարավոր է, որ XXII-րդ դարում ֆրանսերենը լինի «հարձակողական» լեզու և «սպառնալիք» լինի ուրիշ լեզուների համար: Ով գիտի: Ֆրանսախոսները հպարտանում են իրենց լեզվով ու մշակույթով և պատրաստ են այն պաշտպանել՝ ընդունելով նաև զարգացումները: Այնուհանդերձ, մենք վստահ ենք, որ ֆրանսերենը կշարունակի մնալ աշխարհի ամենագեղեցիկ լեզուներից մեկը:

ФРАНГЛЕ - АНГЛО-АМЕРИКАНСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ ВО ФРАНЦУЗСКОМ ЯЗЫКЕ

Мира Карапетян

Преподаватель Иджеванского филиала Ереванского государственного
университета и Международного университета Евразия

Ключевые слова: лингвистика, англо-американские заимствования.

В статье обсуждается явление под названием “Франгле”, которое было распространено в последние годы во Франции. Речь идет об языковых заимствованиях из английского языка, что очень беспокоит французских лингвистов. Они стараются найти эффективные пути решения проблемы для сокращения английских заимствований, найти равноценные эквиваленты и распространить их.

FRANGLAIS (ALSO FREGLISH) - MODERN ANGLO-AMERICAN BORROWINGS IN THE FRENCH LANGUAGE

Myra Karapetyan

Lecturer at Yerevan State University Ijevan Branch and
Eurasia International University

Key words: linguistics, Anglo-American Borrowings.

The present article touches upon a linguistic phenomenon having been discussed in the recent years known as “Frangle”. The matter is on anglicisms which is of great concern for the French as its usage is increasing in the French language. The French are trying to find some solutions to increase the penetration of Anglo-American borrowings into their language by finding their French equivalents and promoting to their wide usage.

ԼՌՌԻԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԳԻՍՏ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ
ԱՍՍՅԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԲԱՌԱԽՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Տաթևիկ Գասպարյան

*Եվրասիա միջազգային համալսարանի օտար լեզուների և գրականության
ամբիոնի դասախոս, Երևանի պետական լեզվաբանական համալսարանի
հայտնող*

Բանալի բառեր՝ լռություն, հանգիստ, բառախմաստային տարբերակ, իմաստային կողմնորոշիչ

Լռությունը բոլոր ազգերի ու մշակույթների կարևորագույն և ունիվերսալ երևույթներից մեկն է: Եվրոպական լեզուներում լռություն արտահայտող բառային միավորները առաջացել են լատիներեն «silentium» բառից, որն իր առաջին իմաստով նշանակում է «լռություն», երկրորդ իմաստով՝ «անդորր», իսկ երրորդ իմաստով՝ «հանգիստ»¹: Շնորհիվ իր բազմակողմանիության՝ լռությունը հանդիսանում է մի շարք գիտությունների ուսումնասիրության առարկա, ինչպես օրինակ՝ փիլիսոփայության, աստվածաբանության, հոգեբանության, ազգագրության, այդ թվում նաև՝ լեզվաբանության: Լեզվաբանների հետաքրքրությունը այս երևույթի նկատմամբ, նախ և առաջ, պայմանավորված է լեզվաբանության մեջ գուտ լեզվաբանական հաղորդակցության շրջանակներից դուրս գալու ընդհանուր միտումով, որը ձևավորվում է ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային բաղադրիչներից: Լռություն և հանգիստ հասկացությունների միջև կապը կարելի է գտնել նույնիսկ հին հունարենում, որտեղ հին հունարեն *հանգիստ* բառը *ή ήσυχία* (hesychia) բառը թարգմանվում է նաև *լռություն, անդորր*²: Այս փաստը հուշում է այն մասին, որ ներքին լռությունն այն անհրաժեշտ պայմանն է, առանց որի անհնար է հանգիստը: Միայն ներքին լռության դեպքում, երբ դադարում ես հուզվել կամ անհանգստանալ տարբեր խնդիրների, տազնապների, կրքերի շուրջ, դու կարող ես հասնել լիակատար հանգստի վիճակի³:

Ակնհայտ է լռություն և հանգիստ հասկացությունների միջև կապը, սակայն սույն հոդվածի նպատակն է ներկայացնել միայն լռություն արտահայտող այն բայերի ստորակարգային վերլուծությունը, որտեղ լռությունն արտահայտված է խոսքի բացակայությամբ, ընդհատմամբ, ճշմարտությունը չասելու ձևով, որոնք նույնպես կարող են մեկնաբանվել որպես լռություն:

Սա պայմանավորված է նաև այն փաստով, որ հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ լռություն արտահայտող բայերի մեծամասնու-

¹ Дворецкий И.Х. Латинско-русский словарь, М.: Русский язык, 1976, стр. 930

² <http://foma.ru/pokoj-molchanie.html>

³ նույն տեղում

թյունը սահմանվում են ասացական բայերի օգնությամբ, այսինքն՝ նրանց բացասական կողմնորոշիչներով, որոնց ուսումնասիրությունը տալիս է լռություն արտահայտող բայերի շատ ավելի հստակ պատկեր:

Քանի որ «silence» բառն է հանդիսանում տվյալ բառախմաստային խմբի գլխավոր նույնացուցիչը, նախ վերլուծենք «silence» բառի իմաստները կամ բառախմաստային տարբերակները ըստ Oxford Advanced Learner's Dictionary of Current English բառարանի (OALD)⁴, որոնք հաշվի առնելով և որոնց վրա հիմնվելով էլ կատարվել է լռություն բառախմաստային խմբի դասակարգումը, այդ բառախմաստային խմբում ընդգրկված բայերի իմաստային կառուցվածքի ու նրանց բառային բաղադրիչները կազմող կառուցվածքների տարբերակումը և նրանց միջև եղած կապերի վերլուծությունը:

Silence (n) – 1. a complete lack of noise or sound:

E.g. *Their footsteps echoed in the silence*⁵.

*I need absolute silence when I'm working*⁶.

Այսպիսով տեսնում ենք, որ լռությունը բառարանային իր առաջին նշանակությամբ ձայնի կամ աղմուկի կատարյալ բացակայությունն է

Silence (n) – 2. a situation when nobody is speaking:

E.g. *I got used to his long silences*⁷.

*They finished their meal in total silence*⁸.

Այս օրինակներում լռությունն մի իրավիճակ է, երբ ոչ ոք չի խոսում, այսինքն խոսքի բացակայությունն է:

Silence (n) – 3. a situation in which somebody refuses to talk about sth or to answer questions:

E.g. *She broke her public silence in a TV interview*⁹.

*The company's silence on the subject has been taken as an admission of guilt*¹⁰

Իր երրորդ նշանակությամբ լռությունն ընկալվում է որպես խոսելու կամ հարցերին պատասխանելուց հրաժարում:

Silence (n) – 4. a situation in which people do not communicate with each other by letter or telephone:

E.g. *The phone call came after months of silence*¹¹.

Չորրորդ իմաստով լռություն է համարվում այն իրավիճակը, երբ մարդիկ չեն հաղորդակցվում միմյանց հետ (նամակով կամ հեռախոսով):

Այսպիսով, silence բառի բառարանային իմաստներից պարզ է դառնում, որ լռությունն իր առաջին իմաստով ձայնի կամ աղմուկի բացակայությունն է, իսկ

⁴ Oxford Advanced Learner's Dictionary of Current English, 2006

⁵ OALD, p. 1367

⁶ OALD, p. 1367

⁷ OALD, p. 1367

⁸ OALD, p. 1367

⁹ OALD, p. 1368

¹⁰ OALD, p. 1368

¹¹ OALD, p. 1368

մյուս երեք իմաստներով՝ խոսքի բացակայություն, իհարկե տարբեր կերպ արտահայտված: Մա իր արտացոլումն է գտել նաև վերոնշյալ բառարանում արտացոլված լռություն արտահայտող բայերի բառաիմաստային տարբերակներում: Բայերը, որոնց բառաիմաստային տարբերակը ներառում է ձայնի կամ աղմուկի բացակայություն, բավականին սակավաթիվ են, իսկ այն բայերը, որոնց բառաիմաստային տարբերակներում լռությունն արտահայտված է խոսքի բացակայությամբ, ընդհատումով, ճշմարտությունը թաքցնելով, լռություն բառաիմաստային խմբի գերակշիռ մասն են կազմում, այդ իսկ պատճառով այդ խմբերն ավելի խիտ ու բազմաքանակ են:

Առաջին խմբում ընդգրկված են բառաիմաստային տարբերակներ, որտեղ առկա է «դադարել խոսել» իմույթը: Օրինակ՝

pause (v) - 1. to stop talking or doing sth for a short time before continuing:

E.g. *Anita paused for a moment, then said: 'All right'*¹².

stumble (v) - 3. to make a mistake or mistakes and stop while you are speaking, reading to sb or playing music:

E.g. *In her nervousness she stumbled over her words*¹³.

Pause բայը իր առաջին և stumble բայը իր երրորդ իմաստներում պարունակում են «to stop talking» և «stop while you are speaking» կողմնորոշիչները, որոնք թույլ են տալիս վերջիններիս դասել տվյալ խմբին:

Հաջորդ ենթախմբում ընդգրկված են բառային միավորներ, որոնցում նույնպես խոսքն ընդհատվում է, այսինքն խոսողը դադարում է խոսել, լռում է, սակայն քանի որ նրան ընդհատում են: Ահա այդ օրինակներից մի քանիսը՝

interject (v) - 1. to interrupt what sb is saying with your opinion or remark:

E.g. *'You're wrong,' interjected Susan*¹⁴.

interpolate (v) - 1. to make a remark that interrupts a conversation:

E.g. *'But why?' he interpolated*¹⁵.

Վերոնշյալ օրինակներում «to interrupt what sb is saying» և «interrupts a conversation» կողմնորոշիչներում նշվում է, որ մեկի խոսքը կամ կարծիք հայտնելն ընդհատվում է մեկ ուրիշի խոսքով, այսինքն երկրորդ զրուցակիցը իր խոսքով լռեցնում է առաջին խոսողին և հենց այս կողմնորոշիչների օգնությամբ էլ interject ու interpolate բառային միավորներն իրենց առաջին իմաստներով ընդգրկված են սույն ենթախմբում:

Մակայն օրինակ disconnect բայի դեպքում այդ տարբերակիչ հատկանիշը չի առանձնացվում:

¹² OALD, p. 1069

¹³ OALD, p. 1471

¹⁴ OALD, p. 780

¹⁵ OALD, p. 781

disconnect (v) - 4 [VN] [usually passive] to break the contact between two people who are talking on the telephone:

E.g. *We were suddenly disconnected* ¹⁶.

Disconnect բայի չորրորդ բառաիմաստային տարբերակում խոսակցությունը նույնպես ընդհատվում է, սակայն այստեղ այն չի ընդհատվում մեկ ուրիշի խոսքով, այսինքն չի նշվում թե ով կամ ինչի միջոցով է դա արվում, ինչն առկա էր նախորդ օրինակներում: Հենց այս տարբերակիչ հատկանիշն էլ առանձնացնում է disconnect բայը իր չորրորդ նշանակությամբ և կազմում առանձին ենթախումբ:

Ուսումնասիրության ընթացքում առանձնացվել է նաև մի ենթախումբ, որում ներառված բայերի բառարանային նշանակության մեջ առկա է «to refuse to speak» իմակը: Այդ բայերի օրինակ են հանդիսանում «to clam», «to sulk» և մի քանի այլ բայեր:

clam (v) - 1. (informal) to refuse to speak, especially when sb asks you about sth¹⁷

sulk (v) - 1. (disapproving) to look angry and refuse to speak or smile because you want people to know that you are upset about sth:

E.g. *He went off to sulk in his room* ¹⁸.

'Refuse to speak' կողմնորոշիչը, որը սահմանում է ուսումնասիրվող «to clam» և «to sulk» բայերի իմաստները, նշում է խոսելուց հրաժարվելը, այսինքն լուռ մնալը և թույլ է տալիս տվյալ բայերը դասել այս ենթախմբին:

Հետաքրքիր է նաև այն, որ առանձնացվել են մի քանի բառաիմաստային տարբերակներ, որոնցում լրությունը կամ անհրաժեշտ տեղեկություն չհայտնելը ներկայացված է ճշմարտությունը չասելու և գլխավոր թեման շրջանցելու ձևով: Վերլուծենք հետևյալ օրինակները՝

shroud (v) - 2. to hide information or keep it secret or misterious:

E.g. *His family background is shrouded in mystery* ¹⁹.

evade (v) - 3. to avoid dealing with or talikng about sth:

E.g. *Come on, don't you think that you're evading the issue?* ²⁰

to evade answering a question ²¹

equivocate (v) - 2. (formal) to talk about sth in a way that is deliberately not clear in order to avoid or hide the truth²²

«Avoid the truth», «hide the truth» և «to avoid talking about sth» կողմնորոշիչները արտահայտում են լրություն՝ ճշմարտությունից խուսափելու կամ

¹⁶ OALD, p. 415

¹⁷ OALD, p. 256

¹⁸ OALD, p. 1481

¹⁹ OALD, p. 1360

²⁰ OALD, p. 500

²¹ OALD, p. 500

²² OALD, p. 493

ճշմարտությունը թաքցնելու միջոցով: Հենց այս կողմնորոշիչների օգնությամբ էլ evade և equivocate բառային միավորներն ընդգրկվել են այս ենթախմբում:

Առանձին ենթախումբ է կազմում նաև skirt բառը իր երկրորդ իմաստով, որտեղ նշվում է ճշմարտությունից խուսափելու, լուռ մնալու պատճառը:

Skirt (v) - 2. (around/round sth) to avoid talking about a subject, especially because it is difficult or embarrassing:

E.g. *He carefully skirted the issue of where they would live*²³.

*She tactfully skirted around the subject of money*²⁴.

Skirt բառը իր երկրորդ իմաստում պարունակում է «to avoid talking about sth» կողմնորոշիչը, որն առկա է նաև վերոնշյալ խմբում, հուշում է, որ այստեղ նույնպես խոսքը գնում է ճշմարտությունը թաքցնելու մասին: Մակայն, այստեղ առկա է նաև because կողմնորոշիչը, որի օգնությամբ բացատրվում է լռության պատճառը, և որն էլ թույլ է տալիս skirt բառի երկրորդ բառահմաստային տարբերակը ընդգրկել մեկ առանձին խմբում:

Հաջորդ ենթախմբում զետեղված բայերն արտահայտում են լռությունը խոսելուց ու հարցերին պատասխանելուց հրաժարվելու ձևով: Այսպես,

stonewall (v) - 1. (*especially in politics*) to delay a discussion or decision by refusing to answer questions or by talking a lot²⁵

ostracize (v) - 1. (formal) to refuse to let sb be a member of a social group; to refuse to meet or to talk to sb²⁶

Այս օրինակներում առկա “refusing to answer questions” ու “refuse to talk to sb” կողմնորոշիչները, որոնք ներկայացնում են stonewall և ostracize բայերը, ցույց են տալիս պատասխանելուց կամ ընդհանրապես խոսելուց հրաժարվելը և թույլ են տալիս ընդգրկել այդ բայերը սույն ենթախմբում:

Այստեղ նույնպես առանձնացել է մեկ այլ բայախումբ, որտեղ ընդգրկված բայերի բառարանային նշանակության մեջ նշվում է նաև խոսելուց հրաժարվելու հապաղելու պատճառը:

sulk (v) - 1. (*disapproving*) to look angry and refuse to speak or smile because you want people to know that you are upset about sth:

E.g. *He went off to sulk in his room*²⁷.

hesitate (v) - 1. to be slow to speak or act because you feel uncertain or nervous:

E.g. *She hesitated before replying*²⁸.

Այս օրինակում “refuse to speak” և “to be slow to act” կողմնորոշիչը նշում է խոսելուց հրաժարվելը, միևնույն ժամանակ էլ because կողմնորոշիչն ընդգծում

²³ OALD, p. 1379

²⁴ OALD, p. 1379

²⁵ OALD, p. 1456

²⁶ OALD, p. 1032

²⁷ OALD, p. 1481

²⁸ OALD, p. 700

է լռության պատճառը և առանձնացնում *sulk* ու *hesitate* բայերը վերոնշյալ ենթախմբի բայերից՝ զետեղելով դրանք առանձին ենթախմբում:

Հաջորդ ենթախմբի բայերի մոտ լռությունն արտահայտվում է պատասխանից խուսափելու միջոցով: Այդ բայերից են՝

fudge (v) – 1. (on sth) to avoid giving clear and accurate information, or a clear answer:

E.g. *I asked how long he was staying, but he fudged the answer* ²⁹.

Politicians are often clever at fudging the issue ³⁰.

sidestep (v) – 1. to avoid answering a question or dealing with a problem:

E.g. *Did you noticed how she sidestepped the question?* ³¹

tergiversate (v) – 1. (formal) to make statements that deliberately hide the truth or that avoid answering a question directly ³²

Այս օրինակներում “to avoid giving clear and accurate information, or a clear answer” և “to avoid answering a question” կողմնորոշիչները արտահայտում են լռություն՝ ճշմարտությունը թաքցնելու, հարցերին պատասխանելուց խուսափելու միջոցով: Հենց այս կողմնորոշիչների օգնությամբ էլ *fudge*, *sidestep* և *tergiversate* բառային միավորներն ընդգրկվել են այս ենթախմբում:

Այս ենթախմբում առկա է մի բառաիմաստային տարբերակ, որտեղ նշվում է պատասխանելուց խուսափելու նպատակը: Այսպես,

stall (v) – 2. (on/ over sth) to try to avoid doing sth or answering questions so that you have more time:

E.g. *They are still stalling on the deal. “What do you mean?” she asked, stalling for a moment* ³³.

Stall բայի երկրորդ բառարանային իմաստի մեջ առկա “to avoid doing sth or answering questions” կողմնորոշիչը ցույց է տալիս հարցերին պատասխանելուց խուսափելով լռելը, իսկ “so that” կողմնորոշիչը նշում է այդ լռության նպատակը: Եվ հենց այդ տարբերակիչ հատկանիշի միջոցով էլ *stall* բայը իր երկրորդ բառաիմաստային տարբերակով առանձնանում և կազմում է առանձին ենթախմբում:

Առանձնացվել է նաև մի ենթախումբ, որտեղ լուռ մնալու՝ խոսել չկարողանալու պատճառը ուժեղ զգացմունքներն են:

choke (v) – 3. to be unable to speak normally especially because of strong emotion; to make sb feel too emotional to speak normally:

E.g. *His voice was choking with rage* ³⁴.

²⁹ OALD, p. 602

³⁰ OALD, p. 602

³¹ OALD, p. 1364

³² OALD, p. 1526

³³ OALD, p. 1436

³⁴ OALD, p. 248

*Despair choked her words*³⁵.

«Unable to speak» կողմնորոշիչը, որն առկա է վերը նշված օրինակում, ցույց է տալիս խոսել չկարողանալը, լուռ մնալը: Սակայն choke բայի երրորդ բառային միավորն ունի նաև կարգազատիչ իմակ, որը նշում է խոսել չկարողանալու պատճառը. այն է՝ «because of strong emotion»: Հենց այդ տարբերակիչ իմակի օգնությամբ էլ բացատրվում է լռության պատճառը և որի միջոցով էլ choke բայը իր երրորդ բառային միավորով ընդգրկվել է այս ենթախմբում:

Օրինակից պարզ էր, որ այս ենթախմբում ընդգրկված է ընդամենը մեկ բայ, սակայն, դրան հակառակ, բավականին բազմաթիվ է այն ենթախմբերը, որտեղ ընդգրկված բայերի բառարանային նշանակության մեջ *լռություն* արտահայտող կողմնորոշիչները հանդես են գալիս որպես ոչ հիմնական: Այսպես,

dumbfound (v) - 1. to surprise or shock sb so much that they are unable to speak:

E.g. *His reply dumbfounded me*³⁶.

floor (v) - 1. to surprise or shock sb so that they are not sure what to say or do³⁷

flummox (v) – 1. [usually passive] (not used in the progressive tenses) to confuse sb so that they do not know what to say or do³⁸

Մեջբերված օրինակներում կարգազատիչ իմակ են հանդիսանում to surprise, to shock, to confuse կողմնորոշիչները, որոնք հուշում են, որ dumbfound, floor և flummox բայերը զարմանք և շփոթմունք արտահայտող բայեր են, որոնց բառաիմաստային տարբերակներում առկա է այդ շփոթմունքին ու զարմանքին հաջորդող լռության կողմնորոշիչներ: Դրանք են՝ «so much that they are unable to speak», «so that they are not sure what to say», «so that they do not know what to say» բառային միավորները, որոնց միջոցով էլ վերը դիտարկված բայերն ընդգրկվել են այս ենթախմբում:

Առանձնացվել է նաև մի ենթախմբ, որտեղ ընդգրկված բառային միավորների օգնությամբ է՛լ ավելի է ընդգծվում *լռություն* հասկացության կարևորությունը, երբ շատ բան կարելի է ասել, ցույց տալ կամ պատմել լուռ, առանց խոսքի: Օրինակ՝

mime (v) – 1. to act, tell a story, etc. by moving your body and face but without speaking:

E.g. *Each player has to mime the title of a movie, play or book*³⁹.

He mimed climbing a mountain.

mouth (v) - 1. to move your lips as if you were saying sth, but without making a sound:

³⁵ OALD, p. 248

³⁶ OALD, p. 455

³⁷ OALD, p. 569

³⁸ OALD, p. 572

³⁹ OALD, p. 932

E.g. *He mouthed a few obscenities at us and then moved off*⁴⁰.

gesticulate (v) – 1. to move your hands and arms about in order to attract attention or make sb understand what you are saying:

E.g. *He gesticulated widely at the clock*⁴¹.

indicate (v) - 5. to represent information without using words:

E.g. *The results are indicated in Table 2*⁴².

Վերոնշյալ օրինակներում առկա «to act, to tell a story, etc. by moving your body and face», «to move your lips as if you were saying sth», «to move your hands and arms about» բառային տարբերակները, որոնք կարգային են, վկայում են այն մասին, որ դրանք շարժում ցույց տվող բայեր են: Սակայն, տվյալ բառախմաստային տարբերակների մեջ պարունակվում են նաև ' without speaking', 'without making a sound' ու 'without using words' կողմնորոշիչները, որոնք տվյալ օրինակներում կարգազատիչ են և որոնց միջոցով էլ mime (1), mouth (1), gesticulate (1) և indicate (5) բառային միավորները մտնում են սույն խմբի մեջ: Չնայած gesticulate բայի բառարանային նշանակության մեջ կոնկրետ լռության կողմնորոշիչ չկա, սակայն հստակ երևում է, որ այն նույն նշանակությունն ունի, ինչ մնացած երեք բայերը: Հարկ է նաև նշել, որ այստեղ լռությունն հասկացույթն արտահայտող կողմնորոշիչները հանդիսանում են տարբերակիչ (ոչ հիմնական) իմակներ:

Որոշ բայերի բառախմաստային տարբերակներում կարևորվում է լռության դերը, որի ներքո է միայն հնարավոր այդ գործողության իրականացումը: Դիտարկենք հետևյալ օրինակները՝

read (v) - 2. to go through written or printed words, etc. in silence or speaking them to other people:

E/g. *I'm going to bed and read*⁴³.

meditate (v) - 1. to think deeply, usually in silence, especially for religious reason or in order to make your mind calm⁴⁴

Նետևյալ օրինակներում «in silence» կողմնորոշիչը հստակ ցույց է տալիս, որ այդ բայերի համար լռության գործոնը չափազանց կարևոր է, և որ առանց այդ կարևոր հանգամանքի read և meditate բայերով արտահայտված գործողությունները կլինեին ոչ լիարժեք: Իսկ meditate բայի առաջին բառախմաստային տարբերակում առկա է նաև in order to make your mind calm կողմնորոշիչը, որի միջոցով շատ պարզ երևում է լռության ու հանգստի սերտ կապը:

⁴⁰ OALD, p. 959

⁴¹ OALD, p. 623

⁴² OALD, p. 759

⁴³ OALD, p. 1207

⁴⁴ OALD, p. 917

Ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են նաև բառախմաստային տարբերակներ, որտեղ առկա կողմնորոշիչները ցույց են տալիս հարկադրված լռություն, երբ անձը լռում է, չի արտահայտում կարծիք ոչ իր կամքով, այլ երբ ստիպում են: Դրանք հիմնականում բայեր են, որոնք պահանջում են խնդիր-լրացումներ, առանց որոնց խոսքի իմաստը ոչ ամբողջական է: Օրինակ՝

silence (v) - 1. to make sb/sth stop speaking or making a noise:

E.g. *She silenced him with a glare* ⁴⁵.

hush (v) - 2. to make sb/sth become quieter; to make sb stop talking, crying, etc⁴⁶.

shackle (v) - 2. to prevent sb from behaving or speaking as they want ⁴⁷

Տվյալ բայերի բառարանային նշանակության մեջ պարունակվող «to make sb/sth stop speaking or making a noise», «to make sb/sth become quieter» և «to prevent sb from speaking» կողմնորոշիչների ներկայությունը թույլ է տալիս silence, hush և shackle բայերը դասել խնդրառական բայերի խմբին, քանի որ «sb/sth» դերանուններն արդեն վկայում են այն մասին, որ բայերի գործողությունն ուղղված է իմաստաբանական օբյեկտի վրա: Իսկ «stop speaking or making a noise», «stop talking» կողմնորոշիչները թույլ են տալիս silence, hush, shackle բառախմաստային տարբերակները ներառել այս ենթախմբում:

Առանձնացվել է մի ենթախումբ, որտեղ նշվում է լռեցնելու միջոցը: Օրինակ՝ sequester (v) - 2. to keep a jury together in a place, in order to prevent them from talking to other people about a court case, or learning about it in the newspapers, on television, etc ⁴⁸.

gag (v) - 1. to put a piece of cloth in or over sb's mouth to prevent them from speaking or shouting:

E.g. *The hostages were bound and gagged* ⁴⁹.

Այս օրինակներում նշվում է լռության միջոցները, որոնք տարբեր են. Sequester բայի դեպքում դա երդվյալ ատենակալներին մի վայրում պահելն է (to keep a jury together in a place), gag բայի դեպքում դա բերանում մտցրած շորի կտորն է (to put a piece of cloth in or over sb's mouth), իսկ «prevent them from talking to» և «prevent them from speaking or shouting» իմակաների միջոցով վերոնշյալ բառային միավորները մտնում են այս ենթախմբում:

Իսկ, օրինակ, shush բայի բառարանային նշանակության մեջ նշվում է լռեցնելու ձևը:

shush (v) - 1. to tell sb to be quiet, especially by saying 'shush', or by putting your finger against your lips:

⁴⁵ OALD, p. 1368

⁴⁶ OALD, p. 733

⁴⁷ OALD, p. 1340

⁴⁸ OALD, p. 1333

⁴⁹ OALD, p. 610

E.g. *Lyn shushed the children.*¹⁷

«To tell sb to be quiet» կողմնորոշիչը ցույց է տալիս լռություն պարտադրելը, իսկ «by saying ‘shush’» կամ «by putting your finger against your lips» իմակները, այն ձևը, որի միջոցով խոսողը դա հասցնում է հասցեատիրոջը:

Վերոհիշյալ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ լռություն արտահայտող ասացական բայերը, որոնք նշում են խոսքի բացակայությունը, ճշմարտություն թաքցնելը, պատասխանելուց հրաժարվելը կամ խուսափելը, առանց խոսքի ինչ-որ տեղեկություն հայտնելը և դրանց ձևերն ու պատճառները, շատ բազմազան ու հետաքրքիր են ու իրենց կարևոր և ուրույն տեղն են զբաղեցնում լռություն արտահայտող այլ բայերի շարքում:

SEMANTIC PECULIARITIES OF VERBS DENOTING SILENCE AND QUIETNESS IN ENGLISH

Гаспарян Татевик

*Преподаватель кафедры иностранных языков и литературы
международного университета Евразия,*

соискатель Ереванского государственного лингвистического университета

Ключевые слова: Молчание, Покой, Лексико-семантический вариант, семантический конкретизатор

В силу своей универсальности молчание изучается целым рядом научных дисциплин, среди которых философия, теология, психология, теория коммуникации, семиотика, этнография, культурология, лингвистика. Интерес лингвистов к данному феномену объясняется прежде всего общей тенденцией в языкознании к выходу за рамки число лингвистического общения, которое складывается как из вербальных компонентов, так и из невербальных.

В данной статье основываясь на материале, отобранном из словаря «Oxford Advanced Learner’s Dictionary» рассматривается механизм выражения компонента молчания в глаголах ЛСГ говорения, а также определяет соответствующие группы и подгруппы глаголов говорения, имеющих в своем значении данный семантический компонент.

¹⁷ OALD, p. 1361

СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ГЛАГОЛОВ ВЫРАЖАЮЩИЕ
МОЛЧАНИЕ И ПОКОЙ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Tatevik Gasparyan

Lecturer of Foreign Languages and Literature Department

at Eurasia International University,

PhD student at Yerevan State Linguistic University

Key Words: Silence, Serenity, Lexico-semantic Varian, Semantic Specifier.

By virtue of its versatility silence is studied by a number of sciences including philosophy, theology, psychology, communication theory, semiotics, ethnography, culturalogy, linguistics. The interest of linguists to this phenomenon is primarily due to the general tendency in linguistics to go beyond the purely linguistic framework, which is composed of both verbal and non-verbal components.

The aim of this article is to study the mechanism of expressing the component of silence in lexico-semantic groups of verbs of speaking based on the material selected from the «Oxford Advanced Learner's Dictionary», as well as to define the relevant groups and subgroups of verbs of speaking with this semantic component in their definitions.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
ԲԱԺԻՆ 1. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	
Աշոտ Մարկոսյան, Աննա Մարգարյան Պետական գույքի կառավարման արդի հիմնահարցերը	6
Հայկ Սարգսյան, Ռուբեն Գևորգյան, Նարինե Քոչինյան, Սոնա Մարգարյան, Անդրանիկ Բաղդասարյան, Լենա Հովհաննիսյան Բնական ռեսուրսների արժեչափման և օգտագործման հիմնախնդիրները ՀՀ տնտեսությունում	29
Աշոտ Մարդոյան Հանքարդյունաբերության օրենսդրական դաշտը Հայաստանի Հանրապետությունում	49
Աշոտ Մարդոյան Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման հեռանկարները	57
Աշոտ Մարկոսյան, Արտաշես Եղիազարով Հայաստանի Հանրապետությունում շինարարության զարգացման արդի հիմնախնդիրները	66
Աշոտ Մարկոսյան, Սենիկ Ջուլիակյան Հայաստանի Հանրապետությունում հիդրոէներգետիկայի համակարգի զարգացման արդի հիմնախնդիրները	81
Нарине Мелкумян Становление рынка пластиковых карт в Армении	98
Անի Կյուրեղյան Մարքեթինգի զարգացման փուլերը: Ներդրմարքեթինգի կիրառությունը ՀՀ-ում	105
Արաքսյա Թառլամազյան Հայաստանի Հանրապետությունում լիզինգի զարգացման խոչընդոտները և դրանց վերացման ուղիները	114

Գրիգոր Ժամակոչյան

Ապրանքային և սպասարկման նշանների իրավական պահպանության միջազգային կոնվենցիաները և ՀՀ օրենսդրական դաշտը 126

Լիդա Աղաջանյան

Լոգիստիկայի ներդրման նախադրյալները և ինդիքները Հայաստանի Հանրապետությունում 134

Լիլյա Ավետիսյան

Ֆակտորինգի զարգացման միտումները ԵՄ և ԱՊՀ երկրներում 140

Հովհաննես Երիցյան

Վերազգային կորպորացիաների գործունեությունը ՀՀ-ում 153

Անուշ Պետրոսյան

Կրկնակի հարկման կարգավորման բարելավման ուղիները ներդրումային ծրագրերում 166

Մերի Մուրադյան, Գևորգ Գրիգորյան

Հարկաբյուջետային քաղաքականության դերը տնտեսության պետական կարգավորման գործում 174

Հասմիկ Ասլանյան

Աշխատանքային հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում 183

Գայանե Թովմասյան

Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման ներդրումային հիմնահարցերը ՀՀ-ում 189

Գայանե Թովմասյան

Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման միջազգային փորձը 201

Վեներա Ոսկանյան

Բժշկական ապահովագրության համակարգերի ներդրումը որպես սոցիալական պաշտպանության մեխանիզմ 215

Արա Սադոյան

Քաղաքի ներդրումային գրավչությունը և գնահատման մեթոդները 224

Արա Սադոյան

Երևան քաղաքի ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդաբանությունը և գնահատումը 233

Վարդուհի Գաբրիելյան

Պետությունը և ապապետականացումը 238

Աստղիկ Մարտիրոսյան	
Պետական գույքի մասնավորեցման և օտարման օրենսդրական հիմքերի կատարելագործումը	252
Սևակ Թորգոմյան	
Անշարժ գույքի շուկայի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում	256
Լուսինե Սարգսյան	
Ինչպիսին կարող է լինել ազգային ինովացիոն համակարգը՝ տեխնոլոգիաների միջազգայնացման համատեքստում	264
Սուրեն Օհանյան, Իրինա Բարսյան	
Ուսուցում՝ ինդուկտիվ և բազմազան մեթոդաբանություն	274
Լիլիթ Պիպոյան	
Հայաստանի Հանրապետության նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության համակարգի գործունեության պլանավորումը որպես ուսուցման որակի ապահովման գործիք	281
Ժիրայր Մխիթարյան	
Սահմանադրական տնտեսագիտության ձևավորման և զարգացման ընթացքի տեսա-մեթոդաբանական առումները	292
Մեղա Նահապետյան	
Սահմանադրականության բնութագիրը. Համեմատական վերլուծություն երկրների կտրվածքով	308
ԲԱԺԻՆ 2.	
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ	
Լիլիթ Տոնոյան	
Քաղաքացու և անհատ ձեռնարկատիրոջ սնանկության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում	319
Ани Степанян	
Некоторые вопросы государственного регулирования рынка ценных бумаг РА	329
Նունե Ջումարյան	
«Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի կոմպլեքսիաների ձևավորման գործընթացի հայեցակարգային դրույթները	336
Արուսյակ Խաչատրյան	
Անչափահաս իրավախախտների բնորոշ հոգեբանական առանձնահատկությունները	363

ԲԱԺԻՆ 3.

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Կարեն Վեյան

Լեզվի սոցիալ-շերտային և իրադրային
տարբերակայնության ուսումնասիրության շուրջ 367

Իրինա Մխիթարյան

Անձնավորումը որպես հեղինակի հեզնական վերաբերմունքի
դրսևորում «վերնագիր-ստեղծագործություն» փոխհարաբերության
տեսանկյունից (Ջ. Օրվելի “Animal Farm” վեպի հիման վրա) 372

Anna Petrosyan

Deliberative democracy in English language education 376

Алла Руденко

О параллелизме русских и армянских этикетных формул 383

Միրա Կարապետյան

Franglais.անգլո-ամերիկյան փոխառություններ
Ժամանակակից ֆրանսերենում 380

Տաթևիկ Գասպարյան

Լռություն և հանգիստ արտահայտող ասացական բայերի
բառախմաստային առանձնահատկություններն անգլերենում 397

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Գիտաժողովի նյութերի ժողովածու

Համակարգչային չափաբերման, էջադրման,
ձևավորման աշխատանքները՝ Տաթև Ավագյանի

Տպագրությունը՝ «Ռիզոգրաֆ» եղանակով
Թուղթը՝ Օֆսեթ
Չափսը՝ 60 x 84¹/₈
Տառատեսակ՝ Sylfaen
Տպաքանակ՝ 250
Գինը՝ պայմանագրային

ISBN 978-9939-866-00-0

Եվրասիա միջազգային համալսարան
ՀՀ, 0014, Երևան Ազատության 24/2
Հեռ.՝ (+374 10) 299088
Էլ.փոստ՝ info@eiu.am
Էլ.կայք՝ www.eiu.am